



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ



ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻՑ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ  
ՊՈՂՈՍ ԽԱՇԱՏՐՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 2002

ԴՏՅ 342(479.25)  
ԳՄԴ 67  
Ո - 772

**Հրատարակված է պետական պատվերով**

**Թարգմանվել և հրատարակման է նախապատրաստվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի որոշմամբ:**

**Ներածական խոսքը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ:**

**Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների թեկնածու ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

Ո - 772 Որոգայթ փառաց. - Եր.: Հայաստան, 2002թ., 298 էջ:

«Որոգայթ փառաց»-ը հայ իրավական և քաղաքական մտքի բարձր արտահայտությունն է 18-րդ դ. վերջին երեսնամյակում, աշխարհում առաջին Սահմանադրությունը, որն ազդարարում է անձի ազատությունը և օրենքի գերակայությունը՝ ժողովրդավարության և լուսավորության դիրքերից: Աշխարհաբար թարգմանությամբ հրատարակվում է առաջին անգամ:

Ո 1201000000 2002թ  
701(01)2002

Ի 342(479.25)

ISBN-5-540-01746-3

**ԵՐԿՈՒ ԽՈՍԹ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքի կենտրոնն առաջին անգամ նախաձեռնեց «Որոգայթ փառաց»-ի ժամանակակից գրական հայերենով թարգմանությունն ու հրատարակումը՝ հետագայում նաև օտար լեզուներով միջազգային լայն հասարակայնությանը ներկայացնելու մտադրությամբ:

Շահամիրյանների այս աշխատությունը հասարակական-իրավական մտքի պատմության եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, տեսական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց բացի, միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք են:

Անդրադառնալով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման, սոցիալական պաշտպանվածության, սահմանադրական արդարադատության և բազմաթիվ այլ սահմանադրական սկզբունքների, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգ՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ և համաշխարհային հասարակական մտքի ձեռքբերումները, այլև պետական նոր մտածողության սկիզբ դնելով:

«Որոգայթ փառացը» իրավաճանաչողական և գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացնում է նաև Հովհաննես Օձնեցու, Հովհաննես Սարկավազի, Դավիթ, Ալավկաորդու, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի և հայ հասարակական-իրավական մտքի էլի շատ ու շատ երախտավորների քեղմնավոր գործունեության արդյունքները:

«Իրավունքի և արդարադատության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ

ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը - սա է «Որոգայթ փառացի» հեղինակների մեծագույն պատգամը:

Համոզված ենք, որ սահմանադրականության զարգացման հիմնահարցերով զբաղվող գիտնականների, պետական ու քաղաքական գործիչների նորանոր սերունդներ պետականագիտական բազում կնճռոտ հարցերի պատասխանը փնտրելիս՝ շարունակաբար անդրադառնալու են «Որոգայթ փառաց»-ին՝ որպես ժողովրդավարական, իրավական. սոցիալական պետության ելակետային սկզբունքներ առաջադրող ու յուրատեսակ լուծումներ պարունակող անանց արժեք:

**ԳՎԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**


**ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի  
խորհրդի նախագահ, իրավագիտության դոկտոր**

**ԳԻՐՔ,**

որ կոչվում է  
**ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ՝**

կալանքի ենթարկելու համար ամեն  
անկարգ գործ,  
շարադրված Հակոբ Շահամիրյանց  
Նորջուղայեցու կողմից՝  
հօգուտ հայ ազգի,

Վաղարշապատում՝ սրբազան տեր  
Սիմեոն Ամենայն հայոց կաթողիկոսի  
հայրապետության և Թիֆլիսում՝  
օգոստափայլ տեր Հերակլիոս  
Երկրորդի թագավորության օրոք,  
մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773  
թվականին և հայոց թվականության  
ՌՄԻԲ տարում, [տպագրված]  
Հնդկաստանում, Մադրաս  
մայրաքաղաքում,  
նույն Հակոբ Շահամիրյանցի  
տպարանում:





## ՆԱԽԵՐԳԱՆՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՏՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՂԻԴ

Աստծուն ճարտարախոսությամբ գովաբանող Դավիթ մարգարեն ասում է. «Ինձ, որ քո ծառան եմ, բարությանը ընդունիր, որպեսզի ամբարտավանները չչարչարեն ինձ»:<sup>1</sup> Այդպես իմ հույսն էլ Տիրոջ վրա է, իսկ իմ աչքը՝ համայն բարեպաշտ ընթերցողների, որպեսզի տկարիս օգնական լինելով, թիկունք դառնալով բարեմիտ որսացողիս՝ պինդ պահեն որոգայթի լարը, և անկարգ մարդիկ իրենց սայթաքելու և կալանավորվելու պատճառով չչարչարեն ինձ:

Ու ես՝ իմ ազգն ու Հայոց աշխարհը կատարելապես սիրողս, այս գրքով խոնարհաբար ձեզ ընծա եմ բերում խնձոր անվանված միրգը՝ գույնով կարմիր, տեսքով գեղեցիկ, հոտով անուշ և համով քաղցր՝<sup>2</sup> ի ճաշակունն ամենայն բարեպաշտ անձանց և ողջամիտ հայ ազգի: Այն թույլ է տալիս և խրատում բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքում բնականորեն առողջ կազմվածք և մաքուր խառնվածք ունեն, սիրով ընդունել իրեն: Եվ կալանավորում է նրանց, որոնք բորբոքված մաղձի, արյան տենդի, հարափոփոխ ցնորքների, կասկածամտության ու բալդամի՝ սառնության պատճառով ծուլորեն անկարգ գործողություններով են տարված, մաքրելով՝ նրանց տալիս է առողջարար կյանք՝ ի շահ հոգու և մարմնի, սանձահարում նրանց վարքը՝ հուսալով պարզել նրանց հավիտենական կյանք: Այն իմ կամայականությունից ու մտքից և իմ այգու պտղից չէ, այլ այն այգիների իրավունքի և արդարության ծառի պտղաբերունից, որոնք հին ժամանակից սկսած համբերությամբ տնկել են քրիստոնյա տիեզերական և արդար կառավարությունների բարեպաշտ թագավորները:<sup>4</sup>

Ուրեմն ճաշակեցեք և տեսեք, եթե քաղցր ու առողջարար է՝, սիրով ստացեք իմ լավագույն ընծան ու ձեզ համար սովորություն դարձրեք լսել, տեսնել, ճաշակել և ապա վկայել ու հաստատել այն գիտակցությամբ, որ ձեր ուխտադրությամբ հավատարիմ պիտի մնաք նրան և կատարող լինեք ըստ Տիրոջ ասած խոսքի, թե՛ Թող ձեր այոն՝ այո և ոչը ոչ լինի:<sup>6</sup> Իսկ եթե մեղքի և կամ տարաբախտ ժամանակի կամ էլ ռամիկ մակարդակի ուսման պատճառով իմ գեղեցիկ ընծան տգեղ

երևա ձեր աչքին, իսկ իմ խոսքերը ծանր թվան ձեր ականջներին, ապա ես կպաղատեմ մեր նախահայր և Աստծու սիրելի Նոյին ու նրա՝ որդիներից, հատկապես իմ ջոջ պապ Հաբեթին, Հայկին ու նրանց սերունդներից՝ Արամին, Տիգրանին և մեր Փրկչի առաջին հավատացյալ Աբգարին՝ Արշամի որդուն՝ ու մյուսներին, որ նրանք, իբրև Արարատյան աշխարհի ժառանգորդ, բարեխոս լինեն մեր Տիրոջն ու Արարչին, որպեսզի շնորհ տա մեր հոգուն և ձեր կամապաշտ սրտերն ուղղի դեպի իմաստուն ցանկությունները, բարեհաճ դարձնի ձեր սրտերը դեպի ամեն իրավունք ու արդարություն:



Եվ ինչպես որ ոչ ոք, որ մարդկային բնություն ունի, չի կարող խաբել Աստծուն և ոչ էլ նրա սրբերին, այդպես էլ ես չեմ համարձակվում խոստանալ որևէ բան և հատուցում խնդրել Տիրոջից հետագայում մեր՝ բարի գործելու համար, բայց բանական հոգու և մտքի ձգտման վերաբերյալ կասեմ, որ անշարելիորեն փոփոխվող մեր բնության համար հարկավոր է մի անբեկանելի որոգայթ՝ կազմված իրավամբ ու արդարությամբ, որպեսզի այն մեր մեջ միշտ պատրաստ գտնվի կալանքի առնելու նրանց, որոնք ինչ պատճառով էլ որ լինի՝ եթե կամենան ուխտազանց լինելով չարիք գործել, իսկույն սանձվի [տվյալ] անձը՝ իր բոլոր զգայարաններով անշարժ պահվելով, այնպես որ չարագործի ձեռքը չարություն կատարելու համար շարժման մեջ չգտնվի, մինչև որ հատուցի իր չարագործության վարձը, բուժվի իր չարության ախտից և ապա ազատ արձակման արժանանա: Կալանավորությունն էլ նշավակության միջոց պետք է լինի մեր հետագա զանցառուների՝ նկատմամբ: Ահա թե ինչու հավատում եմք այդ ճշմարիտ միջոցին, որը կարող է մեզ հաստատուն պահել մեր բարի ուխտադրության մեջ, ուրեմն և հնարավորություն է տալիս մեզ, որ հույսն առ մեր Արարիչը պահելով՝ խոստանանք միշտ հավատարիմ մնալ մեր արդար օրենքներին ու այդ հավատին<sup>10</sup>:

Աղաչում եմ ձեզ, Աստծու բոլոր սրբեր, կասկած մի՛ ունենաք օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու նկատմամբ, այլ առանց խտրության բարեխոս եղեք առ տեր Աստված, որ ների իշխանների, ժողովրդի և մեր նախնյաց մեղքերն ու հանցանքները: Աղաչեցեք, որ իր սուրբ շնորհն ու իմաստությունը թափի հայ ազգի հոգու<sup>11</sup> վրա, որպեսզի ի վիճակի լինենք հավատարիմ մնալ մեր իրավունքին ու արդար օրենքներին և ազատորեն պաշտենք նրա ամենասուրբ անունը, բարեվայելուչ կառավարենք մեր ազգն ու աշխարհը, և այդպիսով դադարի գրկվածների, կողոպտվածների, գերյալների ու թշվառացածների ծայ-

նը մեր Աստծու ականջից, և փոխարենը մեր աշխարհից ու ազգից բարձրանա օրհնության, գոհության ու փառաբանության ձայնը և խնկարկության անուշ բույրը դեպի աթոռը մեր Արարչի՝ ի պարծանք մեր սուրբ բարեխոսների և ի խաղաղություն մեր աշխարհի ու հոգևոր ու մարմնավոր մեր բարօր կացության՝ այստեղ և հանդերձյալ կյանքում: Ամեն:

**Ավարտվեց Մադրասում, օգոստոս ամսի 15-ին,  
մեր Տեր և Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:**

**Ձեր նվաստ սպասավոր Հակոբ՝  
որդի Շահամիր Շահամիրյանցի<sup>12</sup>:**




Շահամիր Շահամիրյան  
(գործ՝ անհայտ նկարչի, 1790թ., Լոնդոն)





Շահամիրի որդի Չակոբ Շահամիրյան  
(գործ՝ անհայտ նկարչի)



## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝

Ես՝ շարադրողս, որ հայոց փոքրավորներից մեկն եմ և ձեր խոնարհ սպասավորը, նախապես խոստովանում եմ Աստծու և մարդկանց առաջ, որ անձնական ցանկություն չունեմ ո՛չ իշխանության և ո՛չ էլ հարստության ու փառքի, այլ միմիայն կատարյալ սիրով կապված եմ իմ սեփական ազգի ու մեր երկրի հետ: Բայց ժամանակի տարուբերումն ինձ նետեց օտար աշխարհի, ուր ես ինձ գտա այլազգի քրիստոնյա իշխանավորների կառավարության ներքո: Աշխարհիս մեջ բազում երկրների և այլևայլ ազգերից յուրաքանչյուրի՝ իրենց երկրներով հանդերձ ունեցած արժանավորությանը ուշք դարձնելով կամ ընթերցմամբ [ծանոթանալով], համեմատելով երկիր երկրի, մարդ մարդու, օդեղանակ օդեղանակի<sup>2</sup>, բույս բույսի հետ՝ ես գտա, որ արևի ներքո եղած երկրներից լավագույնը, ամենաքաղցրն ու պատվականագույնը Արարատյան երկիրն է: Կարելի է ասել, որ Տերն Արարատյան երկիրը բարձրաբերձ Մասիս լեռով թագավոր կարգեց համայն երկրների և համայն լեռների վրա: Ինչպես որ եղեմական դրախտը նախամայր բնակավայրը եղավ մեր նախահայր Ադամի, այդպես էլ Այրարատը Մասիսի հետ երկրորդ մայր բնակավայրը դարձավ մեր երկրորդ հայր Նոյի:

Ուրեմն առանց պատճառի չէր, որ համայն բարձրաբերձ լեռների Արարիչն ու Տերը հաճեցավ միակ արդար ու սիրելի մարդուն՝ մեր նախահայր Նոյին իջեցնել Մասիս լեռան վրա և իր օրհնությունը տալ Նախիջևան գավառին ու Արարատի երկրին<sup>3</sup>:

Առանց պատճառի չէր, որ առաջին արիությունն ու քաջությունը կամապաշտ ինքնակալության դեմ ցույց տվեց մեր նախնին՝ քաջագանգուր, հաստաբազուկ և զորությամբ հզոր Չայկը, որը մեր Տուրուբերան աշխարհի սահմաններում, Սիմ լեռան ստորոտում, Չայոց ձոր կոչված վայրում, այն տեղում, որ անվանվեց Գերեզման, գոռոզության

բարձրությունից ու զարշելի հպարտությունից խոնարհեցրեց և երկիր տապալեց ամբարտավան Բելին:

Առանց պատճառի չէր, որ վարդապետների քարոզխոսությունները և մարգարեների կանխասացությունները [չլսած], հրաշքների ականատես չեղած և աննշան ծանոթություն իսկ չունեցած՝ Արշամի որդի Աբգարոս հայոց թագավորն Արարատյան երկրում հավատաց Բանի մարդեղություն Քրիստոսին՝ կենդանի Աստուծու Որդի Յիսուս Նազովրեցուն<sup>4</sup>:

Առանց պատճառի չէր, որ եզակիորեն բացառիկ ու անճառելի հրաշքը կատարվեց Արարատյան երկրում: Քանզի սուրբ Գրիգորիոս Պալ-հավունու հայրը՝ Անակը, այնքան սիրեց աշխարհայինը, որ պարսից թագավոր Արտաշիրի մի սնուտի պարզևի խոստումով տարված՝ դավաճան դարձավ իր ազգականի հանդեպ, մինչև որ սպանեց հայոց խոսրով թագավորին, ինչ է թե փառքի արժանանա պարսից թագավորից: Բայց նրա առաքինի որդին, հակառակ հոր ցանկության, գարշելի համարելով երկրային ամեն փառք, իրեն մտցրեց խոնարհության անուշահոտ բուրաստանը և հանձն առավ այնքան տանջալի չարչարանքներ, որպիսիք ինքը միայն կրեց երկրի վրա և արեգակի ներքո: Տասնհինգ տարվա խոշտանգումներից հետո կենդանի մնաց՝ հակառակ մարմնական հարվածների, մինչև որ շնորհների արժանացավ Տիրոջից, քանզի Քրիստոսի նորընծա հայոց Տրդատես թագավորին, ազնվագարն իշխաններով և անթիվ ժողովրդով հանդերձ, մկրտեց Եփրատ գետում<sup>5</sup>, որը ոռոգում է Այրարատից մինչև Օվկիանոս<sup>6</sup>:

Թող փոքր գարնամք չթվա, որ մինչև այսօր մոտ չորս հարյուր տարվա մի ժամանակամիջոց է, ինչ Հայոց երկրից ու ազգից վերացել է թագավորությունը<sup>7</sup> և փոխարինվել հպատակությամբ անօրենների ձեռքի տակ, որոնք գերեվարում են մեր որդիներին ու դուստրերին, կողպատում մեր ողջ պերճանքն ու ստացվածքը՝ ընչաքաղցորեն ծանր հարկի տակ դնելով և մեզ հասցնելով մինչև հետին թշվառության: Սակայն մեր գովելի ազգը, իր բնության դեմ այդ ամեն կատարվածն իր վրա կրելով, կատարելապես պահել է իր հավատն առ Տեր Աստված: Դավանում է սուրբ եկեղեցու բոլոր խորհուրդները, որոնք ավանդվեցին մեր Փրկիչ Քրիստոսից, ինչպես որ մինչև այսօր Այրարատում մեզ վրա ընծյուղ է արձակում Հայաստանյայց մեր սուրբ եկեղեցին, որով և հույս ենք տածում Տիրոջը, որ մեզ հավիտյան պահպանի նույն կատարյալ սիրով ու հավատով:

Ըստ ազգի ավանդության ամեն կարգի և ըստ Սուրբ Գրոց վկայության, որի համաձայն այն համոզմունքն ունենք, թե ամեն բան հաստատվում է երկու կամ երեք վկաներով<sup>8</sup>, ահա պատվարժան ընթերցողներիդ առաջ են դնում վերոհիշյալ հինգ զորեղագույն և հավաստի վկայությունները<sup>9</sup>, որոնք ձեր մտքում կարող են հաստատել հատկա-

պես մեր ամենազոր Արարչի շնորհը, սերը և ողորմածությունը Արարատի երկրի հանդեպ, որ և այս վկայություններից ոչ մեկը արևի տակ արար աշխարհում երբեք չերևաց: Այս վկայություններով ամեն ոք կարող է համոզվել, որ Արարատյան երկիրը և այնտեղ բնակվողներն ամենասուրբ Երրորդությանը և Միաստվածությանը պաշտող իրենց ժառանգներով ունեն հատկապես իրենց պահպանիչը, փրկիչն ու փարատիչը՝ ըստ Տիրոջ ասած այն խոսքի, թե ում տունը, որ ինքն է շինում՝ շինողների չարչարանքը զուր չի անցնի<sup>10</sup>:

Նաև անդրադառնամ և պատմեմ ձեզ հատկապես հայ ազգի պատվականության և բարեսրտության մասին: Նախ՝ ըստ մարդու բնական բնության ամենքին սիրելի է Հաբեթի ազգը, քանզի ցանկալի մի տղա էր, այսինքն՝ Սեթ և Քամ նախահայրերի մեջ կրտսերն էր: Եթե երեք էլ լինեք, Հաբեթն իր ժառանգորդների՝ Թորգոմի, Հայկի, Տիգրանի, Արմենի<sup>11</sup> և մյուս հաջորդների հետ արժանի էր պատվի: Գովաբանելով ասեմ, որ քաղցրաբարո այս ազգը ի սկզբանե մինչև օրս հյուրընկալության այնքան ամուր սովորույթ ունի, որ դա ինձ ստիպում է հավատալ, որ աշխարհում այդ շնորհը մեր Տեր Արարչից հատկապես ավանդվեց միմիայն հայերին, որպեսզի մարդկությունը ճանաչի առանձնապես սրանց որդեգրությունը<sup>12</sup>, ըստ Տիրոջ ասած խոսքի, թե՛ ինձ մոտ եկողին դուրս չեմ անի<sup>13</sup>:

Այս պատվական պատանի Հաբեթը՝ Նոյի որդին, մեր նախնին, իր սերունդներով թագավորեց իր տան՝ Արարատյան սեփական ժառանգության և հայ ժողովրդի վրա ավելի քան երկու հազար տարի, մինչև Վահանի որդի Վահեսի<sup>14</sup> թագավորության ժամանակը: Բայց ինչպես հատուկ է մարդկային բնությանը, հետևելով իր ցանկություններին ու հաճույքին՝ ազատ զգալ իրեն իր մտածումների մեջ, թող ձեր կամքը լինի, թագավորությունից նրա զրկվելու մասին ինչպես այժմ հաճելի է՝ ձեր մտքներում մտածեք, սակայն այդ բանը տեղի ունեցավ այսպես. քանզի այս Վահեսը, ընդդիմանալով Ալեքսանդր Մակեդոնացուն, սպանվում է նրա կողմից: Ահա այդ ժամանակ էլ դադարում է թագավորությունը Հաբեթյան Հայկի ու Արամի ցեղից, որ տեղեց մոտ երկու հազար տարի<sup>15</sup>: Եվ մեզ մոտ է գալիս Արշակի եղբայր Վաղարշակ Պառլավունին՝ խոստանալով հայրական գթությամբ առաջնորդել մեզ: Նույն սովորությունն ու բարությունը, որոնց մասին ասացի վերևում, հարկադրեցին հայերին ըստ իրենց բնորոշ հյուրընկալության սիրով ընդունել Վաղարշակին, որն իր հաջորդներով Հայոց տանը թագավորեց ավել կամ պակաս՝ հինգ հարյուր տարի, մինչև Երրորդ Արտաշեսի թագավորության ժամանակը: Այնուհետև Արշակունյաց ցեղից հայոց թագավորությունը դադարեց, և ապա մեզ մոտ հանդես եկավ Աշոտը՝ Սմբատ Բագրատունու որդին: Հայերը միևնույն հյուրընկալությամբ ու



սիրով ընդունեցին Աշոտ Բագրատունուն, որն իր հաջորդներով հայերի վրա թագավորեց ավել կամ պակաս՝ երեք հարյուր հիսուն տարի, մինչև Գագիկ Երկրորդի թագավորության ժամանակը: Այդուհետև հայոց թագավորությունը Բագրատունյաց ցեղից և Արարատյան տնից դադարում է: Բայց նրանք ներկայումս մեզնից այնպես անճանաչ չեն, ինչպես Յաբթյան կամ Վաղարշակյան ցեղն ու սերունդը: Քանզի Բագրատունիների տոհմից մինչև այժմ Վրաց տան վրա կա թագավորական շառավիղ, որին Տերը թող հաստատուն պահի:

Այնուհետև հզորանում է հայոց քաջ իշխան Ռուբենը՝ նույն Բագրատունիների ցեղից, որը տիրում է մեր աշխարհին և իր սերունդներով թագավորում Յայոց տան վրա, Կիլիկյան աշխարհում, ավել կամ պակաս՝ երկու հարյուր քսան տարի, մինչև Լևոն Վեցերորդի թագավորության ժամանակը, որից հետո, այսինքն՝ 1381 թ., Յայոց տնից թագավորությունը դադարում է մինչև օրս<sup>16</sup>:

Թող նաև ձեզ հայտնի լինի, որ սկսած մեր նախահոր՝ Յաբթի սերունդներից, Արարատյան տան հայոց առաջին թագավոր, Այրարատ երկրի երեսին տապանից առաջինն իջած Նոյի որդի Յաբթի որդի Գամիրի որդի Թիրասի որդի Թորգոմի որդի Յայկից մինչև վերջին թագավոր Լևոն Վեցերորդը, մարգպանների հետ միասին, հաշվվում են մոտ հարյուր քսանչորս անձ՝ թե Յայկի, թե Վաղարշակի, թե Բագրատի և թե Ռուբինյանց ցեղերից և մնացած զանազան մարգպանների տոհմերից<sup>17</sup>: Այդ ընթացքում մեր աշխարհում հանդես եկան նաև հավատարիմ ու հաղթող հայ բազում իշխաններ, նշանավոր դեմքեր, ինչպես Գնունիները, Արծրունիները, Մամիկոնյանները, Օրբելյանները և շատ ու շատ ուրիշներ, որոնց մասին ի մասնավորի ձեզ պատմում է Մովսես Խորենացի անկեղծ պատմիչը<sup>18</sup>: Սրանք ամենքն էլ Յայոց տան վրա իրենց իշխանական գործերում ջանադրությամբ առաջ ընթացան այն չափով, որքանով նրանց իմացությունն ու կարողությունը կարող էին խոստանալ նրանց, այնպես որ այժմ կարող ենք խոստովանել, որ նրանցից շատերը երախտիք ու վաստակ ունեն Յայոց տան նկատմամբ՝ շնորհիվ իրենց բարեգործությունների, իսկ շատերն էլ իրենց անստության պատճառով թուլացան ու կործանվեցին և պատճառ դարձան Յայոց տանը հասցված բազում վնասների:

Դե ուրեմն էլ նենք ու մտնենք սիրո և խաղաղության հարկը, բայց ոչ մեր մարմնի ու իշխանական մարդկանց կողմնակալ ցանկության մղումով, այլ նրա կամքով, որին մարդու բնական բնությունը խոստովանում է արդարությունը, և ըստ սովորության ողջ աշխարհի և բոլոր խոհեն մարդկանց, որոնք հակառակորդների մեջ կաննում են խաղաղություն հաստատել: Այդպես էլ մենք պարտավոր ենք ներել մեր նախնիների՝ թագավորների և իշխանների բարերարությունն ու չարագործու-

թյունը, և որևէ մեկը թող չգովաբանի նախնիների երախտիքն ու վաստակը Յայոց աշխարհի ու ժողովրդի նկատմամբ, և որևէ մեկն էլ թող չարհամարիի մեր նախնի իշխանների վնասակար ու հոռի ծուլությունը, քանզի նրանք ամենքն էլ, ըստ իրենց անձի կարողության, ինչ որ ի վիճակի եղան կատարել՝ չզլացան կատարել: Իսկ ինչ որ եղել է՝ անցել է, և դա էր մեզ ընկած բաժինն արևի ներքո: Եվ ուրեմն իրավունքն ու արդարությունը պահանջում են, որ պատվելով ու պահպանելով՝ մենք միշտ վեր պահենք պատվարժան Յայկի անունը, որ սկիզբը եղավ և իր անունով հռչակեց մեզ, քանզի աշխարհը նրանով ճանաչեց հայոց ազգին, անվանվեցինք հայեր, իսկ նրա սերունդներով էլ օտար ազգերից անվանվեցինք արմենյաններ:

Մեր մեջ պատվի արժանի են նաև Վաղարշակ Արշակունին, Աշոտ Բագրատունին և Ռուբինյանները՝ իրենց ողջ սերունդներով, քանի որ պահպանեցին հայոց ազգին՝ պահելով մեր Յայկ նախնու պատիվը, թագավորելով Արարատի տան վրա ավել կամ պակաս՝ մոտ երեք հազար տարի: Եվ որովհետև այժմ չորս հարյուր տարի է, ինչ վերոհիշյալ իշխանների սերունդներից ոչ ոք հանդես չեկավ ի խնդիր հայոց ազգի և Արարատյան տան, որ ամայի դառնալով այլազգիների իշխանության տակ՝ կա և հարատևում է մինչև օրս, ուրեմն հայ ազգի համար լավ կլինի, որ այժմյան հեռատեսությամբ իր միտքը տարածի անցյալ ժամանակի հանցանքների վրա և գիտակցի այն անհուն վնասը, որ եկավ Յայոց աշխարհի ու ազգի վրա ինքնակալ թագավորության և ինքնակալ իշխանության պատճառով և կամայական արարքների հետևանքով: Իսկ եթե երբեմն էլ բարի մարդկանց թագավորության վիճակի հանդիպեցինք, մեր օգուտն ավելին չեղավ, քան թե գոյություն ունենալ և լինել նրանց ծառա, նաև ժամանակ առ ժամանակ, մարդու փոփոխական բնության համեմատ, նրանցից սաստիկ նեղության ենթարկվեցինք, և կամ ընդհակառակն՝ եթե չար ու անմիտ մարդկանց թագավորության վիճակ հանդիպեց, նրանք մեզ խոնարհեցրին պատվից ու ազատության երջանկությունից մինչև նվաստություն: Միայն այդ հանցագործությամբ իսկ ոչ միայն սաստիկ նվաստացրին մեզ, այլև գերի դարձրին մեզ այլազգիներին, նախատինք՝ մարդկանց և արհամարհանք՝ մեզ տեսնողների առաջ: Եվ ինչպես որ այսօր մեր ազգից թագավորությամբ ոչ ոք իշխող չկա մեզ վրա, ուրեմն և թող մեզ համար ցանկալի և ընդունելի չլինի, որ այսուհետև հայոց ազգի մեջ կրկին հանդես գա թագավոր կամ իշխան և կամ զորագլուխ, ոչ մի ոք՝ ինքնակալ իշխանությամբ, որովհետև աշխարհում, բացի մեր Փրկիչ Քրիստոսից, չի ծնվել մի մարդ, որ մեղք չգործի:

Այսպիսով, մեզ և մեր երկրի համար չափազանց լավ կլինի, եթե հայ ազգը ամենքը միասին ազատորեն, իրենց բնական բնությամբ թագա-

վորեն սեփական տանը՝ վերացնելով խեթ ու նախանձ և ժխտություն, որպեսզի մեկը մեծավոր և մյուսը փոքրավոր չլինի, ամենքն էլ իրենց ծննդյան ժամին հավասարապես թագավորական պատիվ ստանան և իրենց կյանքի բոլոր օրերին սեփական երկրի վրա ընդմիշտ թագավոր մնան: Ես քաջ գիտեմ, որ սույն ընթերցողը իմ ասած խոսքերից պիտի զարհուրի, թե ողջ ազգը ինչպես կարող է մի երկրի վրա թագավոր լինել: Այդպես մտածողներին ես հարց կտայի. «Իսկ ինչպե՞ս կարող է միմիայն մի մարդ թագավոր լինել ամբողջ ազգի և ազատ ժողովրդի վրա. չէ՞ որ ինքն իր մեջ ոչինչ ավելի չունի, քան մի սովորական մարդու զորությունը»: Եթե մեր ցանկությունն է ապրել և լինել ազատ, ինչպես Արարիչն Աստված ի սկզբանե ստեղծեց մեզ, ուրեմն որևէ մեկը թող չհամարձակվի իր ուզած ձևով ու քմահաճությամբ իշխել մեզ վրա, եթե օրինավոր կերպով չի կարող հատուցել մեզ ըստ մեր կատարածի արժանիքի, որ ամեն ոք առանց սրտնեղության հասնի պատվի կամ պատժի՝ նայած իր գործի արժանավորությանը: Քանզի այդպիսի թագավորություն մեզ շնորհվեց մեր Տեր Արարչից արարչագործության սկզբից, մեր նախահայր Ադամի ժամանակից, երբ մեր Արարիչն իր ամենակարող զորությամբ երկրի վրա և արեգակի ներքո ստեղծված ամեն ինչ մեզ՝ մարդու բանական բնությանը ենթարկեց, մեր բնության վրա ինքը թագավորեց ըստ օրենքի, այսինքն՝ որ [մարդը] բոլոր ծառերի պտուղներից ուտի, բացի չարի պտղից: Միայն այդ օրենքը թագավոր եղավ մեզ վրա, դրա համար էլ մեր բնությունն ազատության այդ բարձրագույն իշխանությունից ոչ մի այլ պատճառով չէր, որ իջավ ի ծառայություն մահվան, եթե ոչ մեր ձեռքի անօրեն արարքից: Դրանով խախտեցինք Տիրոջ օրենքը և, ցանուցի լինելով, երկրի երեսին ընկանք ծառայության լծի ներքո, հանձն առանք ընդունել մահ և իջնել հողի մեջ, որից ելանք, մեր ձեռքի արարքի համար հատուցում տալ հանդերձյալ կյանքում՝ հավիտենից հավիտյան:

Արդ, ահա ձեզ ներկայացնեմ ընդհանուրի թագավորության առանձնահատկությունները: Եթե կամենում եք ազատ լինել, հավասար կերպով թագավորել ձեր երկրում, ազատորեն տեր լինել ձեր ստացվածքին, պատվի արժանանալ ձեր առաքինության համար, սրբել անօրինության կեղտերը և մաքրել ձեր խղճմտանքը, անհրաժեշտ է, որ ձեզ համար շինեք իմաստության տներ, ըստ Սողոմոնի խոսքի՝ ձեզ համար կանգնեցնեք սյուներ<sup>19</sup>՝ խորհրդականներով և ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից: Ինչ որ դուք կազմեք, այն էլ պիտի իշխի ու թագավորի ձեր գործերի վրա, որպեսզի որևէ մեկը ճանապարհ

չգտնի անօրինություն կատարելու, իսկ օրինախախտն էլ՝ զանգատվելու իր պատժի համար. չէ՞ որ իր կատարածի վճիռը ինքն է կտրել՝ ըստ իր կամքի ու ցանկության, ինքն անձամբ ազատորեն թագավոր լինելով՝ օրենքներ է սահմանել և հրաման տվել թագավորելու իր վրա, ինքն իրեն պարտավորեցրել, հնազանդ դարձրել իր օրենքներին՝ համբերելով և ընդունելով իր գործերի հատուցումը՝ թե՛ պատիվ և թե՛ պատիժ՝ ըստ իր օրենքների:

Ինչպես սովորությունն է, ամեն մի նորագյուտ բան ով որ կամենում է ցույց տալ որևէ մեկին, հատկապես հասարակ ժողովրդին, պետք է դիմի երկու եղանակի. մեկ՝ որ անհրաժեշտ է պարզամիտներին ցույց տալ՝ աչքին տեսանելի դարձնելով, և մյուսը՝ որ խոհական մարդկանց համար հարկավոր է ճշմարիտ ու անկեղծ բացատրություն տալ: Նույն կերպ էլ ես սկսեցի այս գրքով աչքին տեսանելի և ճշմարիտ խոսքով ցույց տալ ոչ թե իմ մտքի գիտությունից կամ ինձնից գոյացած ցանկությանմբ ինչ-որ նոր ու զարմանալի բաներ, եթե ոչ այն, ինչ որ իմ կյանքի ընթացքում իմ իսկ աչքերով տեսա զանազան ազգերի մեջ<sup>20</sup>՝ ամեն կարգի դժվարությունների հեշտ հաղթահարումը բարի գործելակերպ ունեցող նրանց կառավարությունների կողմից. ազատությունը պահպանելու հնարավորությունը և անճողապրելի որոգայթը՝ բոլոր վատթար մարդկանց համար, որպեսզի հարկադրված լինեն մտնելու օգտաշատ գործունեության լծի տակ: Իբրև ոտքի կոխան՝ [այն] ընծայում եմ իմ բարեպաշտ ազգին, թեպետ տխուր բան եմ ասելու ձեզ, որ ես կրթության շնորհի չարժանացա դպրոցական ուսումնառությամբ և ոչ էլ ժամանակ ունեցա ընթերցելու ամբողջ հայոց պատմությունը, այլ այնքան, որքան որ լսեցի օտարների պատմություններից, այնքան, որքան առաքինի Մովսես Խորենացին մեզ համար իրեն հիշատակ թողեց:

Սաստիկ այրվում է սիրտս և սիրտը բոլոր ազգասեր մարդկանց՝ նայելով իմ ազգի մեծությանը, բուրաստանի նմանվող Հայոց աշխարհի առատությանը՝ ամենայն բարիքներով և հարկավոր բաներով լի, առողջակազմ որդեծնությամբ, հավատին հաստատուն և իրենց սեփական աշխարհի հետ սիրով կապված մարդկանցով: Ինձ բարի թվաց շարադրել այս գրքույկը՝ իբրև օրինակ այն բանի, որ իմ կյանքի ընթացքում իմ իսկ աչքերով տեսա, նաև ընթացքը ազատ մարդկանց իշխանության, որոնք իրենց կառավարությունն արեգակի ներքո ուղղում են դեպի երջանկություն: Սակայն այն հանդգնությունը չունեմ, թե իբր իմ ցանկությունն է, որ աշխարհն ընդունի իմ ասածները, քավ լիցի, այլ թող այս գիրքը տեսնողներին՝ միայն լույս և խոհական մարդկանց զգուշացնող լինի, միմիայն մի փոքրիկ նախօրինակ, որպեսզի իմ ազգն իր միտքը բերի դուռն ազատության, ճարն անճարի, հնարն անհնարի և այլն, նայելով սրան՝ հեշտ ու բարվոք ճանապարհ գտնի

դեպի ազատություն: Չեմ երկբայում, թե իմ ազգի մեջ չգտնվի ճարտար և իմաստուն որևէ մարդ, որ եթե ձգտի իր մտքով դեպի ազատության ճանապարհը՝ չկարողանա սրանից հազարապատիկ ավելի գերազանց շարադրել:

Սրա ընթերցողից իմ խնդրանքը միմիայն այն է, որ այս գիրքը ձեռք բերելով՝ նախ թող երեք անգամ ընթերցի սկզբից մինչև վերջ, երկրորդ՝ եթե պատահի այնպես, որ ընթերցողը ծնված և սնված լինի աշխարհի այն կողմում, որը բարբարոս ցեղերի հսկողության տակ լինի, աղաչում եմ նրան, որ փնտրի ու գտնի ազատ քրիստոնյաների կառավարության ներքո բնակվող, աշխարհ տեսած որևէ մեկին, իր բերանով հարցուփորձ անի այստեղ հանդիպող ամեն մի տարակուսելի կետի շուրջ ու նրա օժանդակությամբ գտնի բացատրությունը և օգտակար իմաստը իմ գրած յուրաքանչյուր հոդվածի:

Ու ես հույս եմ տածում Տիրոջը, որ այս կարգադրությունը դրդապատճառ է դառնալու՝ իմաստուններին արթնացնելու անտարբերությունից և հորդորելու, որ իրենց խելքով ու իմաստությամբ կազմեն արդար օրենքներով ճանփա ընթացող գերազանց կառք՝ ներդաշնակ մեր բանական բնությանը, և գիտուն ծառային, որը գիտակցում է իր տիրոջ կամքը, այսինքն՝ իր օրենքները, կառավար կարգեն նրա վրա, որպեսզի այն իր ճանապարհին ընդմիշտ ոյուրին անցնի, և նրանով իմ ազգի բոլոր մարդիկ լինեն ու մնան ազատ, թագավոր, իշխան ու տեր իրենց ստացվածքի նկատմամբ, ամենքս էլ միաբան ու ազատորեն փառաբանենք մեր Արարիչ Աստծուն այժմ և միշտ հավիտյան:

Անոթն ընտրության<sup>21</sup> սուրբ Պողոս առաքյալը մեզ մատնացույց է անում բնական իրավունքն ու արդարությունը՝ ասելով, որ ամեն ոք, ինչ էլ որ խոսի, պետք է Սուրբ Գրքից վկայություն ունենա՝ նաև համաձայն մեր Տեր Փրկչի ասածի՝ ամեն բան հաստատվում է երկու կամ երեք վկայով<sup>22</sup>:

Նախ ձեզ՝ ընթերցողներիդ և բոլոր ի Տեր հավատացյալներին Հին և Նոր կտակարաններով վստահաբար ընդունելի է մեր ամենակարող Աստծու արարչագործությունը: Այնտեղ Մովսես գերագույն մարգարեն գրել է, որ բոլոր արարածների Արարիչը՝ անսկիզբ և անվախճան մեր միակ Աստված, թեպետ հողից ստեղծեց մարդու մարմնական բնությունը, բայց աստվածային շնչով փչեց մեզ՝ շնորհելով բանական հոգի, որով կենդանացանք: Բարձրագույն իշխանություն տվեց մեր նախահայր Ադամին, որ թագավորի երկրի վրա եղած բնական բոլոր անբան կենդանիներին, զորություն ու բանականություն պարգևեց նրա հոգուն, որպեսզի կարողանա իմաստությամբ կառավարել իրեն հնազանդվածների: Նաև մի բարձրագույն նշան թողեց մեր մեջ՝ սահմանելով բարի օրենքներ, այսինքն՝ Ադամին պատվիրան թողեց, որ պահպանի Տիրոջ

հրամանները. նրանցով ճանաչի բոլոր արարածներին, որ մյուս արարածներից ոչ մեկը չկարողանա հրամայել մարդկային բնությանը, բացի միայն անսկիզբ և Արարիչ Աստծուց, և կամ մարդկային բնության վրա ուրիշ ոչ մի պարտականություն չդրվեց, բացի հնազանդվելուց և իր Տիրոջ՝ Արարչի պատվիրանը պահելուց: Եվ այդ պատվիրանն ինքն իրենից ներկայացնում է Արարչի և ամենակարող Տիրոջ շնորհ, քանզի ոչ խիստ, ոչ խոշոր և ոչ էլ դժվարին պահանջ է, այլ ընդամենը՝ չուտել բարու և չարի գիտության ծառի պտղից, որ սաստիկ նվաստացնում է մեր կյանքը մինչև ի մահ, ինչպես որ ինքը՝ մեր Արարիչն ասաց. «Եթե ուտես, մահով կմեռնես»<sup>23</sup>: Ինչպես որ նա է միայն մեր Արարիչն Աստված, ուրեմն նա միայն կարող է հրամայող լինել մեր հոգու և մարմնի զորության վրա, բացի նրանից՝ ուրիշ ոչ ոք, և մենք ուրիշ ոչ ոքի առաջ պարտավոր չենք խոնարհվել, բացի նրանից: Եվ ոչ միայն մենք, նաև երկնային և երկրային զորությունները պարտավոր են հնազանդվել միմիայն նրան: Այդ օրենքի հետ կապված էլ օրհնություն շնորհեց մեր նախահայր Ադամին ու երկրի վրա եղած բոլոր արարածներին, այն է՝ աճել և բազմանալ և լցնել երկիրը<sup>24</sup>: Պետք չէ, որ ես Աստվածաշունչ գրքից ձեզ բաներ ասեմ, որովհետև չեմ կամենում ձեզ համար քարոզ կարդալ, և դուք էլ հարկավորություն չունեք իմձնից վարդապետություն լսելու:

Բայց ինչպես հավատացած ենք, եթե մարդկային բնությունը չմեղանչեր և չխախտեր Տիրոջ պատվիրանը, ապա մեր նախնի Ադամը չէր զրկվի բարձրագույն պատվից և չէր արտաքսվի փափկության դրախտից, ոչ էլ Տիրոջից հրաման դուրս կգար երկրի վրա՝ բացելու ջրերի սահանքները և մարդկանց ջնջելու երկրի երեսից, ուրեմն և ոչ մի մարդ մահով չէր մեռնի: Ահա առաջին վճիռը Տիրոջ բերանից մեր բնության վերաբերմամբ, որ ասաց. «Եթե դոժես միակ պատվիրանը՝ ուտելով բարու և չարի գիտության պտուղը, մահով պիտի մեռնես»<sup>25</sup>: Այս եղավ միակ պատճառը և արդար դատապարտումը, որ մեր բնությունը բարձրությունից իջեցրեց դեպի խոնարհություն, տիրությունից դեպի հնազանդություն, անմահությունից դեպի կյանքի վախճան՝ մեր հանդուգն արարքի համար իբրև հատուցում սպասելով հանդերձյալ կյանքում ընդունելու դատաստան և հավիտենական վճիռ: Այսքանը թող բավական լինի բարեմիտ ընթերցողներին, որպեսզի իրենց մտքում ամուր պահեն, որ պատվիրաններն արժանի են պահպանվելու, քանզի դա հնարավորություն է տալիս ընդունելու երկրի վրա հայտնված երջանկությունը, ինչպես որ Տերն էլ մարդուն ստեղծեց բանական ու փառավոր և հնազանդ միայն իր ամենակարող Տեր Աստծուն ու Արարչին:

Պետք չէ, որ մենք մեր մտքում հիշաչար լինենք, իբր թե Աստված բարկություն հանդես բերեց մարդու բնության դեմ, իբր քանի որ

չպահեցինք Աստու պատվիրանը, Տերն արտաքսեց մեզ դրախտից կամ էլ մեր դեմ չարություն պահելով՝ թույլ տվեց ծովին, որ իշխի երկրի վրա և երկրի երեսից ջնջի մեր բնությունը: Քավ լիցի: Ինչպես սուրբ Դավիթ մարգարեն է գրում դրան հակառակ, Տերը ոչ թե ըստ մեր մեղքերի և ոչ էլ ըստ մեր անօրենությունների հատուցեց մեզ,<sup>26</sup> այլ ինչ որ մեզ վրա եկավ՝ արդար դատաստանով կատարեց, որովհետև եթե մեր Տերն ու Արարիչը մեզ այնքան միայն սիրեր, ինչքան մենք ենք սիրում մեր որդիներին ու դուստրերին, մենք առավել խիստ դատաստանի էինք ենթարկվելու: Քանզի չկա մի հայր, որ իր որդուն ժառանգություն տա մոտ հարյուր արծաթի քանքար<sup>27</sup> և դրանից միայն մի լուման արգելի իր որդուն, որ չմոտենա լումային, իսկ այդ որդին այնքան անբարո գտնվի, որ ոչ միայն չբավականանա հարյուր քանքարով, այլև համարձակվի ու մտովի ջանա, հանդգնություն հանդես բերի հոր հրամանի դեմ՝ ձեռնամուխ լինելով ստանալու միակ լուման, ու հատկապես ստանա, այդպիսով թունավոր լումայով ոտնատակ տված կլինի իր հոր պատվիրանը և իր հանդգնությամբ ապականած իր ողջ բնությունը: Վերահասու եղիր, ընթերցող, նրա հոր բարկությանը, որ որդու հանդգնությունն է հարուցում իր նկատմամբ: Որքան էլ նրա հայրը գթածաբար եթե ներել կամենա, սակայն ոչ հոր միտքը, ոչ արդարությունն ու իրավունքը, ոչ էլ արեգակի ներքո ողջ մարդկային բնությունը չեն դադարի ասելուց, որ այդ որդին բնությամբ չար է: Եվ նրա կյանքի ամբողջ ընթացքում ոչ ոք նրա աղոթքը չի ընդունի, ոչ ոք նրան հավատ չի ընծայի: Կամենում եմ ասել, թե ով որ խախտում է պատվիրանը, որն ինքը կամովին հանձն էր առել պահպանել, նրա մեջ բարություն չկա, և նա ինքը չար է: Այդ մտքի վերաբերմամբ է ասում Դավիթ մարգարեն, թե մարդ պատվի էր արժանացել, բայց չզիտակցեց, հավասարվեց անբան անասուններին ու մանավեց նրանց<sup>28</sup>: Արդարև այդպես է. ով որ անկարգությամբ և պատվիրանազանցությամբ է վարում իր կյանքը, ինքն իրեն դատապարտում է, ըստ էության հրաժարվում է բանականության պատվից, ինքն իրեն մտցնում անբանների մեջ ու նմանվում նրանց:

Նաև մեր Արարիչը՝ ամենագետ ու ինքնիշխան Աստված, ներելով մեր մեղքերն ու հանդգնությունը, ոչ թե աչառությամբ, այլ իրավամբ ու արդարությամբ մեզ ժամանակ շնորհեց զղջալու համար, որովհետև հողից ստեղծելով մեզ՝ նա գիտեր, որ մենք հող ենք, քաջ գիտեր, որ մեր բնությունը ջջանաց հակամարտել և հակադրվել մեր Տեր Արարչի հրամանին, եթե ոչ սխալմունքով խաբվեց, թե միգուցե հասնի առավել երջանկության, որին հարաժամ ձգտում է մարդու բնությունը: Բայց նրա արարքը խիստ հակառակին հանգեց. պատճառ դարձավ կորցնելու այն փառքը, որ նախօրոք պատրաստված էր իր համար: Նման

զերցանկությունը միշտ էլ նկատելի է մեր բնության մեջ, և ամեն ժամ ու ժամանակ մարդ մտքով ձգտում է օրավուր առավելանալ ամեն բանում: Ինչպես ալիքն է բարձրանում ու իջնում, նմանապես և մեր բնությունը մանկությունից բարձրանում է մինչև երիտասարդություն և երիտասարդությունից իջնում մինչև ծերություն, սակայն մեր բնությունն արեգակի ներքո և երկրի վրա եղել ու նույնն է մնում ինչպես երեկ, այնպես էլ այսօր և մինչև մեր Արարիչ Տեր Աստու սահմանած ժամանակը:

Երկրի վրա չի ծնվել մի մարդ, որ միշտ հավատարիմ ու հաստատուն մնար որևէ բանի, գործի կամ մտքի: Ընթերցողը դյուրավ կարող է միտքը բերել միայն իր կյանքի ընթացքը երկրի վրա [և համոզվել], թե մանկությունից մինչև պատանություն, պատանությունից մինչև երիտասարդություն և երիտասարդությունից մինչև ալևորություն ու ծերություն որքան տարբեր փոփոխություններ է նկատել իր բնության մեջ: Ոչ ոք չի կարող ժխտել, որ այն, ինչ մեզ համար այսօր լավ է, ախորժելի, շահավետ և խրախճալի, վաղը կարող է համարվել վատ, անախորժ, վնասակար ու կասկածելի: Դա բարությունից կամ չարությունից չէ այն առարկայի, որին ձգտում է մեր միտքը, եթե ոչ մեր իսկ բնության ու տարերքի արդյունք, որ տարբեր պատճառներով օրավուր առաջանում է մեր խառնվածքի ու բնության մեջ, երբեմն՝ սննդից, երբեմն՝ հարստությունից, երբեմն՝ սնտի պատահմունքներից, երբեմն էլ փոփոխական հաջողություններից ու ձախորդություններից, ինչպես ոմանք են ասում՝ բախտից: Այդ ամենը հաստատված կան մեր բնության մեջ, բայց այդ անչափելի ու փոփոխական բնության մեջ ունենք անշփոթ կերպով միավորված բանական հոգի, որն ընդունել ենք Արարիչ Տիրոջ փշմամբ: Թե այն ինչպիսին է, որտեղից է բխել, ուն կերպարանքով, ինչպես է բնակվում մեր մեջ և վերջում ինչ է լինելու, թողնում եմ, որ այդ մասին ընթերցեք մեր սրբերից ավանդված սուրբ գրքերում:

Բայց որովհետև աշխարհում արեգակի ներքո մեր կյանքի տարիների ժամանակը, ըստ մարգարեի ասածի, յոթանասուն տարի է,<sup>29</sup> և մեր այժմյան նկատումով էլ նույնը թվացող մեր բնությունն էլ այնքան փոփոխական, որ ոչ ոք իր մտքում չի կարող պնդել, թե ինչպես պիտի ապրի ու մնա, որ բարվոք կարողանա վարել իր կյանքը ի շահ իր հոգու և մարմնի: Թեպետ Տիրոջ բերանը խոսեց երկրի վրա մարդու բնության մասին, թե երկնքում ձեզ համար գանձեր գանձեցեք, որտեղ ոչ գողը կմոտենա, և ոչ էլ ցեցը կապականի,<sup>30</sup> բայց նաև քանքարաթաքույցի առակի մեջ ասաց, թե ով քչի մեջ հավատարիմ է, հավատարիմ կարող է լինել և շատի մեջ,<sup>31</sup> նաև թե՝ աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան թե լուսո որդիները:<sup>32</sup> Այդ բանն ասված է հնարագետ մարդու՝ տնտեսի մասին: Ժողովողը ևս գրում է՝ ասելով, թե «Ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ընդունայն է»<sup>33</sup>: Արդ, ունայն է, թե



արժանավոր և կամ թե հարկավոր՝ ընթերցողը ինչպես կամենում ես՝ ընդունիր: Սակայն ամեն մի մարդկային բնության համար ավելի բարի ու գերազանց կլինի, եթե գիտակցի, որ անչափ անհրաժեշտ է ջանալ ու պահպանել պատիվը մեր հոգու գորության, որ մեզ ավանդվեց մեր Տիրոջ և Արարչի փշմամբ: որպեսզի մեր կյանքը վարենք իբրև բանական և արժանապատիվ մարդ: Ոչ տղայական բորբոքված բնությամբ և գազանային բարքով, ոչ էլ ծերությունից սասանված բնությամբ՝ ինչպես ծուլացած, այլ միջին տարիքին հատուկ հասուն բնությամբ և հոգու բանական գորությամբ, իբրև կատարյալ մարդ, մենք պետք է մեզ համար ընտրենք վարք, կարգ ու օրենք՝ մեր կյանքի ընթացքի համար և մեր փոփոխական բնությունը լծորդենք անշարժ օրենքին, որպեսզի եթե ըստ մեր բնության խառնվածքի կյանքում ժամանակ առ ժամանակ մեր միտքը հակույն հանդես բերի դեպի անբան անասունների հատուկ արարքները, մեր օրենքի շղթաներն ու կապանքները կապկպեն ու սաստեն մեր բնությունը և օրենքով դատապարտեն, որ ամենքս էլ արժանավայել կերպով հաստատուն մնանք մեր կարգ ու սահմանին և օրենքին. ինչ որ ընտրել ենք մեր բնության հասուն շրջանում: Դրանով պիտի արդարանա դատավորը, դրանով պիտի մեղավորն ընդունի իր պատիժը՝ իր ձեռքով կատարած հանցավոր արարքի համար. դրանով պիտի հայտնի դառնան բարին ու չարը, դրանով պիտի յուրաքանչյուր մարդկային բնություն ճանաչի իր պարտականությունները, համախոհ կերպով հնազանդվի իրենց օրենքին, և ուղիղ ընթանա իրավունքի ու արդարության կառքը, իսկ կառավարն էլ հաստատուն մնա՝ առանց տեղիք տալու բամբասանքների և այլն:

Խոհեմ եղեք, բարեկամներ: Այսօր հայոց ազգը գրեթե ամբողջապես գտնվում է ուրիշ ազգերի ծառայության լծի տակ, այնպես որ մեզնից ոչ ոք ոչ գորություն և ոչ էլ իրավունք ունի համարձակվելու պարծենալ եղբոր կամ դրացու և կամ ողջ ժողովրդի առաջ: Մեզնից ոչ ոք այսօր ինքնակալ տեր չի հանդիսանում, որ ինքնակալությունից զրկվելու և օրենքի լծի տակ մտնելու պատճառով նրա հոգին խռովվի, իսկ խռովության հետևանքով միաբանվի հունաց և պարսից հետ ու հարված հասցնի մեր աշխարհին, ինչպես բազմիցս տեղի ունեցավ նախկինում: Մեզնից ոչ ոք չմնաց ազնվական արյամբ (գուցեև այդպիսին գտնվի, բայց անծանոթ է մեզ), ոչ իշխան՝ սեփականությամբ և կամ ոչ էլ զավառապետ՝ իր ժառանգական ստացվածքով, այլ բոլորս էլ միաբան ու միախոհ մշակ դարձանք ուրիշ ազգերի՝ մեր հողի վրա չարչարվելով որպես անբան անասուն: Ահա թե ինչու հասարակաց բարօրության համար այժմ ինչ կարգ ու սահման որ հաստատվի, ոչ ոքի չի նեղելու, ոչ ոքի որևէ պակասություն չի պատճառելու, և ոչ ոք օրենքների կարգի հողվածներում իր կյանքին ու պատվին հակառակ

որևէ բան չի գտնելու, եթե ոչ շահավետություն և աստվածապաշտության՝ ազատություն՝ համաձայն Տիրոջ հրամանի ու խոսքի, որ ասաց. «Քանի դեռ ժամանակը ձեր ձեռքին է, բարի գործեր կատարեցեք»:<sup>34</sup>

Թեպետ մեզ խղճալի է թվում անցած ժամանակի մեր երջանկությունը Հայկի, Տիգրանի, Արմենի<sup>35</sup> և մեր մյուս բարերարների օրոք, որոնք կամապաշտ վարքով ընթացան, երբ չզգուշացանք մեր փոփոխական բնության առաջն առնել, - բայց գոհություն ու փառք մատուցելով Տիրոջը՝ անցած ժամանակներում ինքնազուլիս, անծնիշխան և կամապաշտորեն հրամայող մեր տերերի վերաբերմամբ պիտի ասենք, որ միայն այդքան վնասներով մենք փրկվեցինք, և իրենք էլ մեռան ու թաղվեցին գերեզմանում: Բայց նրանք, որ ամբարշտացան ու անիրավ դարձան և, գոռոզությամբ ու ինքնահաճությամբ վարելով իրենց իշխանությունը Հայոց աշխարհում՝ զրկելով, կողոպտելով ու լլկելով, կատարելապես անասնական բնությամբ շարժվեցին ու անցկացրին իրենց կյանքի ժամանակը, մինչև որ իրենք կորան, կորցրին մեր փառքը և հայոց ազգի սերունդներին մատնեցին գերության, իսկ երկիրը ժառանգություն թողին ուրիշ ազգերի: Մի՞թե անմեղ Գնելի կամ երախտաշատ Մուշեղի և բազում ուրիշների՝ անարդարացի թափված արյունից ու սպանությունից կարող է լռել հողը: Մեր կողմից այնքան անիրավություններ կատարվեցին, մինչև որ հողը շաղախվեց արդարների ու անմեղների արյամբ, և երկնքի դռները ձանձրացան տնանկների ու զրկվածների անարատ արյան ու աղաչանքների բախումից, մինչև որ Տիրոջ բարկությունը բարձրացավ մեզ վրա, և մեր երկրից վերացավ նրա խնամքը: Դատապարտվեց երկիրը, ընկավ ինքնակալ իշխանությունն ու կորստյան մատնվեց, իշխանները ցրվեցին, և մինչև այսօր մնացին անմեղ գառները՝ գիշատիչ գայլերի բերանում: Բայց մեր հույսը Տիրոջ վրա է, որ մնացորդ գառներն ըստ սահմանված օրենքի մեր ընկած նախնիների տեղը պիտի լցնեն բարեպաշտ սերունդներով:

Արդ, քեզ եմ հարցնում, ընթերցող, ասա ինձ, բարեկամ, թե կամենում ես կրկին ընդունել նման սարսափելի տերությունը, որի շահավետությունը բարձրացավ միմիայն մինչև գարշապարը, բայց վնասը մինչև գլուխը հասավ: Ուրեմն թող այնպես չլինի, որ մենք հիմարի պես կրկին փորձող դառնանք հավաստի տեսնված բանի և փորձված իրերի, այլ ջանանք մեր խղճմտանքով ձերբազատվել մեր իշխաններից, հանդերձյալ կյանքում, ահեղ դատավորի ատյանի առաջ, պատասխան դարձնենք նրանց՝ իրենց ամբարշտության և կամայական արարքների համար: Համայն ժողովրդին ազատենք անիրավ մարդու հպատակությունից ու ձեռքից և մեկ կամապաշտ ու ինքնազուլիս բարբարոսի կամայականությունից, որին հավաստի ճանաչում ենք մեր բնությամբ, որ մերթ ուրախ է, մերթ՝ տխուր, մերթ՝ զայրացած և մերթ՝ գթած, մերթ՝

աղաչական և մերթ՝ հրամայող և այլն: Մեր սանձը չտանք մի այդպիսի ինքնագլուխ բնության ձեռքը, որ ճգմի մեր ծնունդները՝<sup>36</sup> ըստ իր կամեցողության ու հաճույքի: Ուրեմն արհացեք և խոհեմության գոտին կապեք ձեր մեջքին, ամրապնդելով ձեր միտքը՝ ամուր մնացեք հաստատուն վեմի վրա և օրենքի հարկի ներքո, որպեսզի մեզանից ոչ ոք մեր գլխին հանդես չգա որպես ինքնակալ իշխան և տեր մեր աշխարհի, այլ հակառակ դրան՝ ընդհանուր ազգով դուք ամենքդ եղեք համահավասար իշխան, տեր և ժառանգ ձեր աշխարհի, հնազանդ միմիայն ձեր օրենքին, այն որ դուք ընտրեցիք, և ձեզ հաճո թվաց, եղավ ձեր բնությանը համապատասխան, և որն իր սկզբով, ընթացքով և վերջով ամբողջապես բարություն է բերում ընդհանուրին:

Եթե ես շարունակեմ բան ասել անցած ժամանակի և ինքնակալ իշխանության պատճառով մեզ հասած վնասի մասին, հարկ կլինի ինձ որոնումներ կատարել բազում պատմական գրվածքներում, իմ ասածն էլ ձեր ականջում կհնչի իբրև լրատվություն անցյալ ժամանակից, իսկ ասողն էլ կթվա մի պարզամիտ պառավ կին: Սակայն իմ ցանկությունը չէ ձեզ պատմել անցյալի գործերը և ոչ էլ ձեր սրտերը բորբոքել՝ գութ կամ վրեժխնդրություն հանդես բերելու մեր բարի կամ չար նախնիների նկատմամբ: Ինչպես երբ շատ տկար մարդիկ գանգատվում են իրենց ցավերից, և դարմանող ու դեղերի շնորհիվ փարատող որևէ աննշան բժիշկ կգտնվի, ես ևս չեմ սպասում, որ տկարության վերաբերյալ իմ գանգատն անտարբերության կարծանանա դարմանող բժիշկների կողմից, նաև թող ընթերցողներիդ միտքը հակված չլինի կարծելու, թե տկարացած իմ ողջ ազգի մեջ ես՝ նվաստս միայն գտնվեցի բժշկության հնարավորությունը մատնացույց անող: Քավ լիցի: Ոչ միայն խոստովանում, այլև երդվում եմ ձեր առաջ, որ իմ մտքում այն տպավորությունն ունեն, որ մեր ազգի մեջ չի պակասում իմաստուն բժիշկ՝ բարեպաշտ հոգով և կատարյալ սիրով կապված իր ազգի և Հայոց աշխարհի հետ, ունակ ճանաչելու մեր տկարության դեղը: Սակայն բազում պատճառներով չտեսա մեկին, որ բանար իր բերանը և մեր ազգին հայտնի դարձներ մեր հիվանդության ու տկարության դեղը, եթե ոչ տխրադեմ, հոգոց հանելով, պարզելով իրենց պատվական սիրտը՝ մինչև այսօր նրանք կան ու այդպիսին էլ մնում են: Ես ինքս էլ ժամանակ առ ժամանակ այդպես վարվեցի՝ զանազան պատճառներով երկմտելով բանալ բերանս, երբեմն ծերունիների անոթանքից, բռնավորների երկյուղից և հասարակ ժողովրդի վրեժխնդրությունից լուռ մնացի մինչև այսօր: Բայց որովհետև տեսնում եմ, որ մեր կյանքի ժամանակը յոթանասուն տարուց չի ավելանալու, ու՜<sup>37</sup> իմ կյանքի ընթացքում հարուստ փորձառություն ձեռք բերի, շատ բաներ տեսա իմ աչքով, երբեմն էլ իրերի իմաստի մեջ թափանցեցի, խիստ երկմտանքով վերահասու եղա

և միտքս ամրապնդեցի փորձառությամբ, նաև ժամանակի ծառայությունից օգտվելով՝ իմ պատանությունն արբունքի հասակի հասցրի և հիմա, որ ինձ գտա ազատ և փորձառու նման խորհուրդներում, չկամեցա թույլ տալ, որ ինձ հետ իմ ամուր դամբարանում թաղեն այն, ինչը, հավատացած եմ, օգտակար կարող է լինել իմ ազգին ու աշխարհին:<sup>38</sup> Դրա համար էլ, իմ նախահայրերից խոնարհաբար ներողություն խնդրելով, առաջ եկա ու սրա մեջ դրի այն, որ իմ մտքում բարի թվաց իմ ազգի և աշխարհի համար, որպեսզի ժամանակ առ ժամանակ երևա իմ ազգի ընթերցողների աչքի առաջ, և առավել իմաստունները, լրացնելով իմ գրածի պակասությունները, եթե ախորժելի լինի նրանց ցանկություններին ու հաճույքին՝ ջանան գործածել:

Հաստատելով իմ ասածները՝ վկայություն բերեմ Սուրբ Գրքից, ինչպես Պողոս առաքյալն է մեզ սովորեցնում, թե բոլոր խոսքերի համար Սուրբ Գրքի վկայությունները պետք է լինեն:<sup>39</sup> Նախ՝ Տերն իր բերանով խոսեց իմաստության մասին՝ ասելով, թե երբ որևէ մարդ տուն է շինում, պետք է հիմքը դնի վեմի վրա, և հեղեղած ջրերն այն չեն կարողանա քանդել<sup>40</sup>. նաև իմաստնացած Սողոմոնն է գրում, թե իմաստությունն իրեն տուն կառուցեց և նրա մեջ կանգնեցրեց յոթ սյուն:<sup>41</sup> Այս երկու վկայությունները բավական են համոզելու ընթերցողների միտքը, որ տունը, այսինքն՝ ազգերի կառավարության համար բոլոր կարգադրությունները, պետք է հիմքով դնել հաստատուն վեմի, այսինքն՝ անխախտ, անշարժ, աներկմիտ, չավելացող ու չպակասող օրենքների վրա և նրա մեջ կանգնեցնել սյուներ՝ խորհրդականների կարգով: Ինչպես որ տունը, բնակարանը և ապարանքն են զարդարվում ու փայլում գեղեցիկ սյուներով, նմանապես և տերության ու կառավարության տունը հաստատուն կլինի և գեղեցկափայլ կմնա օրենքներով, կարգադրությամբ և օրենսգետ խորհրդականներով:

Ցույց տամ ես ձեզ մոլոր ճանապարհը և անկարելիի հնարը, թե ինչպես կարող է մեր դժվարինը հնարավորի վերածվել: Նախ ուշադրություն դարձնենք այն բանին, որ մեր բնությունը սահմանված ու կազմված է չորս հակառակորդ և անմիաբանելի տարրերից: Ինչպես է, որ նրանք կան ու մնում են համահավասար, միմյանց նկատմամբ հակառակ տարրերը շարժվում են՝ կենդանի պահպանվելով և խաղաղությամբ՝ շնորհիվ իրենց անխախտելի սահմանի: Նմանապես և հայոց ազգը, մեծից մինչև փոքրերը, բոլորով, իբրև մի կայուն հոտ, պիտի լինեն համահավասար՝ շնորհիվ իրենց անխախտելի օրենքների: Քանզի ամենքը միասին պիտի ներկայանան իբրև մի կամք, մի խորհուրդ, մի ներգործություն, մի պատիվ և մի պատիժ, ամենքն էլ միմյանցից գոհ, ոչ մի գանգատ որևէ մեկից, որովհետև ոչ ոք չի լինելու, որ պարծենա, թե ինքը մեծ է, ոչ ոք չի լինելու, որ թարշամի ու նվազի, թե ինքը

կրտսեր է և պիտի մեծանա ու առավել դառնա:

Ամեն մի բարեգործություն փառավորում է բարեգործություն կատարողին՝ արժանիորեն շահ բերելով նրա ընդհանուր ազգին, և թող օրենքով չքանա ու կորչի ամեն մի չարագործ՝ ըստ իր ձեռքի կատարած արարքի արժանավորության, առ ի հարգանս ընդհանուր ազգի: Դուք՝ հայոց ողջ ազգդ, հիանալիորեն, շատ հեշտությամբ կարող եք ձեր աշխարհը կառուցել իբրև ձեր հավասարապատկան տուն: Նաև իբրև հաստատուն հիմք՝ կղնեք ձեր անխախտելի օրենքները, իբրև կարգադրիչ սյուներ՝ անչափ արդարամիտ ձեր խորհրդակիցներին, գլխներիդ կրելով ձեր տան առաստաղը՝ իբրև նշան ձեր կատարյալ հնազանդությանը ձեր օրենքներին, որպեսզի դուք ամենքդ, յուրաքանչյուրդ ըստ ձեր անձի, ձեր տունը գտնեք, ձեր հիմքը, սյուները և առաստաղը, ձեր տանուտերին, ձեր դատախազ<sup>42</sup> սպասավորին ու դատավորին, նաև ձեր տնից պտուղ հավաքողին և ձեր տան ու որդիների վրա, ինչպես և ձեր տան կարիքների համար ծախսարարին՝ միախոհ կերպով փառաբանելով ազատն Արարիչ Աստծուն և ամենայն բարիքներ պարզևող մեր Տիրոջը, որն արժանի դարձրեց մեզ ժառանգելու այսքան բարելի աշխարհը, այսինքն՝ Արարտյան երկիրը, Տիրոջից ընդունելու այնքան բարություն, հատկապես սեր, շնորհներ, օրհնություն և այլն, ինչպես ասացինք սկզբում, որին տիեզերատարած աշխարհում մարդկային բնությամբ ոչ մի ազգ չի արժանացել:

Նաև մի փոքր ավանդություն ձեզ հիշեցնելով՝ ուզում եմ արթնացնել ձեր ատելությունը իրավունքի ու ազատության համար մեր բնության հանդես բերած անզգամության վերաբերմամբ: Համբերությամբ լսեք ինձ, իմ ընթերցողներ և բարեկամներ: Քանզի յուրաքանչյուր մարդկային բնություն, լինի այն հավատացյալների թե անհավատի, կարող է խոստովանել, որ մեր բնությունն արարած է, ունի սկիզբ և ժամանակ, որ սահմանվեց անսկիզբ, անժամանակ և անվախճան մեր միակ Արարչից ու Աստծուց՝ թե ժամանակով, թե՛ գորությամբ և թե՛ արժանավորությամբ ու բոլոր չափ ու կարգով: Մարդկային այդ բնությունը չպետք է մտովի ձգտի և ոչ էլ իրեն սխալանքով համոզի, թե իր մեջ ավելի մեծ բան կա, քան թե այն, ինչ իր Արարչից ստացավ ի սկզբանե՝ իր Տիրոջ արարչագործության ժամանակ: Քանզի մեր Արարիչ Տերը մեզ չտվեց ավելի գորություն (բացի բանական հոգու գորությունից), քան բոլոր կենդանիների մորը՝ չորս տարրերին և կամ երկրի վրա շրջող գորավոր լուսատուներին, ու նրանցից ամենակրտսերն իսկ բնությամբ ավելի գորավոր է, քան թե մեր բնական բնությունը, որովհետև Տիրոջ բոլոր ստեղծածներն ավելի գորեղ են, քան թե մարդու բնությունը, ընթանում են՝ պահպանելով իրենց Տիրոջ պատվիրանները, գործում ու շարժվում են ըստ այն սահմանի, որ կարգեց նրանց

Տերը: Հետևապես մենք՝ արարածների մեջ փոքրավորներս, պարտավոր ենք միշտ մնալ ըստ մեր Արարիչ Տիրոջ պատվիրանի, ինչպես որ Տերն էլ մեզ հրամայեց:

Ես չեմ ուրանում, որ Տերը հրաման տվեց, որպեսզի երկրի վրա եղած բոլոր բնական կենդանիները հնազանդվեն մեր նախահայր Ադամին: Նաև մեր նույն նախնի Ադամը բանական բնությամբ մեր Տիրոջից ու Արարչից իշխանություն ստացավ իշխելու միմիայն երկրի վրա եղած բնական բնությամբ կենդանիներին, բայց ոչ թե բանական բնությամբ մարդուն: Ուզում եմ ասել, որ ինչպես Ադամը հրաման չստացավ իշխելու մարդու բանական բնությանը, նմանապես և չկարողացավ իշխել իր բնությանը, որովհետև եթե նա Տիրոջից իշխանություն ստացած լիներ իշխելու բանական բնությանը, ինչպես որ ստացավ բնական բնությունների վերաբերմամբ, շատ լավ կարող էր իր բնությունը ամուր պահելով՝ չխախտել Տիրոջ պատվիրանը: Սրանով ընթերցողների միտքը կարող է համոզվել, որ արարածների [գոյության] սկզբից ոչ ոք չստացավ իշխանություն, որ իշխի մեր բանական հոգուն և բանական բնությանը, եթե ոչ անսկիզբ ու անեղ մեր միակ Արարիչն Աստված, որպեսզի աշխարհը և երկնքի ու երկրի բոլոր արարածներն իմանան, որ միայն նա ինքն է՝ Արարիչը, Տերն ու Աստված համայն արարածների:

Ուրեմն, ինչպես վերևում ասացինք, հերիք է մեր միտքը սխալաբար ձգտի ավելիին, քան մեր կարողությունն է, ավելիին, քան թե այն, որ ի վերուստ մեզ տրվել է: Թող ոչ ոք իր մտքում ձգտում չունենա, որ թագավոր դառնա մարդու բանական բնության վրա, ինչ որ մեծ մեղք է, որովհետև մարդու բանական բնության վրա թագավորելը միմիայն Աստծու գործն է. ինչպես, երբ կամ որքան ժամանակով՝ միմիայն միակ Աստծուն է իմանալի: Թող ոչ մի մարդ անզգամորեն չձգտի ու չկամենա աստվածանալ, այսինքն՝ թագավորել մեր բանական բնության վրա: Խոստովանում եմ ես, խոստովանում եմ բոլոր մարդկային բնությունները, որ նա չի կարող հասնել իր սրտի սխալ ցանկությանը, եթե ոչ դրան հակառակ՝ կավերի իր հոգին ու մարմինը՝ իր անկարգ ընթացքով զանց առնելով իր Տիրոջ պատվիրանը, պատճառ դառնալով երկրի երեսին բորբոքելու ողջ մարդկային բնությունը և իր արարքների համար ստանալով կրկնակի հատուցում, երբեմն՝ սով, երբեմն՝ սրածություն, երբեմն՝ ջրիեղեղ, երկրաշարժ ու մահ տարածան և այլն, ինչպես Աստվածաշունչ գիրքն է մեզ պատմում անցյալ ժամանակ մեր մեղքերի համար ստացած պատժի մասին:

Թեպետ մեր աչքերի տեսողությամբ և ականջների լսողությամբ տեսել ենք ու լսել, որ երկրի երեսին շատերն են թագավորել բազում ժողովուրդների վրա, բայց դրանց մեջ զանազանակերպ թագավորու-

թյուններ ու իշխանություններ են եղել: Իմ խոսքն այն թագավորի մասին է, որը և իր թագավորությունը բնությունից դուրս են, արդյունք բարբարոսաբար բորբոքված նրա ամբարիշտ մտքի: Քանզի անհրաժեշտ է այդ փքված թագավորին, որը բռնակալի խելքով իրեն թագավոր է վստահում մարդու բանական բնության վրա, օժտված լինել անմահությամբ և ունակ՝ հավիտենական կյանք ու վախճան տալու բանական բնությամբ իր ժողովրդին: Բայց արարածների սկզբից մինչև այսօր արեգակի ներքո այդպիսի զորությամբ ոչ մի մարդ երևան չի եկել, և ոչ ոք այդպիսին լինել չի կարող, բացի երկնքի և երկրի թագավոր Արարիչ Աստծուց, որ ունի անմահություն և բնակվում է անմատչելի լույսի մեջ: Այս մասին էր, որ Տերն իր բերանով խոսեց մեզ ուղղած իր պատվիրանով՝ ասելով. «Նրա գլխի մի մազն անգամ չես կարող սպիտակ կամ սև դարձնել»:<sup>43</sup> Եթե մի մազն իսկ սպիտակ կամ սև չի կարող դարձնել, ուրեմն ինչպես կարող է տեր կամ թագավոր և կամ իշխան լինել նրանց, որոնց ամեն բանում նմանվում է անթերի ու անպակաս: Ինչպես ինքը, այնպես էլ ինքնակալ ու բարբարոս թագավորի ժողովուրդն իրենց բանական բնությամբ չեն կարող մնալ ազատ, եթե ոչ ամենքն էլ կդառնան օրինազանց և կխախտեն Տիրոջ պատվիրանը (նույն կերպ, ինչպես մեր նախնի Ադամը, որը, գրկվելով իր փառքից ու ազատությունից, ընկավ չարչարանքի ու ծառայության լծի տակ՝ հավասարվելով անբան անասուններին և նմանվելով նրանց):

Նաև ամեն մի ինքնակալ ու անձնիշխան թագավոր բարբարոսաբար գործող թագավորությամբ նախ ինքն իրեն է դրել ծառայության լծի ներքո, քանի որ իր մտքում այն համոզմունքին է եղել, թե ինքն ավելի զորություն ունի, քան այն, որ ստացել է իր Տեր Արարչից: Սակայն նա իր իշխանությամբ չգտավ ավելի զորություն, քան թե մի պարզամիտ հովվի ծառայության մեջ, որն իշխում է իր ոչխարներին՝ իբրև բնական կենդանիների: Ոչ ինքը գիտակցեց իր գործն ու ծառայությունը և ոչ էլ ժողովուրդը՝ իր պատիվն ու ազատությունը: Ինչպես և տեսնում ենք այժրով, որ այդպիսի թագավորը շարժվում է բնական բնությամբ, այսինքն՝ սիրելով, ատելով, բարկանալով, քաղցելով, հագնելով, տկարանալով, մահվամբ մեռնելով, ինչպես ամեն մի մարդկային բնություն և ինչպես նրան հնազանդված բոլոր ժողովուրդները: Նաև հնազանդված ժողովուրդները նույնն են, ինչ և իրենց թագավորը, որովհետև ամենքն էլ համահավասար խաբված են: Յետևապես նա բանական բնությամբ մարդու համար թագավոր չէ, եթե ոչ հովվով՝ անբան կենդանիների վրա:

Իսկ նրանք էլ, որ օրենքով են թագավորում իրենց ժողովրդի վրա և օրենքի կարգով էլ թագավորական պատվի են արժանացել՝ ժողովրդից կոչվելով իրենց թագավոր, սրանք՝ այս բարեպաշտ թագավորներն

էլ, պահպանելով կառավարելու կարգը, ժողովրդին թույլ տվեցին դիմելու թագավորի անվանակոչությանը, բայց իրենք շատ լավ գիտակցեցին, որ իրենց ժողովուրդների գլուխներից մի մազ անգամ չեն կարող սև դարձնել կամ սպիտակ, ճանաչեցին իրենց որպես իշխան իրենց երկրի վրա, որ ըստ օրենքի իշխանություն ունենան իրենց ժողովուրդների ձեռքով կատարված բոլոր գործերի նկատմամբ, որովհետև բոլոր մարդկանց ձեռքի գործերն այդ իշխանի կամ թագավորի ձեռքով են արժանանում իրենց վարձատրությանը՝ ըստ օրենքի:

Ահա այդ և բազում նման պատճառներով թույլ մի՛ տվեք, որ ինքն-իշխան որևէ մեկը բարբարոսաբար թագավոր դառնա հայ ժողովրդի, մեր Չայաստան երկրի և աղավանակենցաղ ու գառան վարք ունեցող հայոց ազգի վրա, ոչ էլ մեր բանական բնության վրա, բացի մեր Տեր Արարչից: Թող ինքը՝ միմիայն Արարիչն Աստված մեր, մեզնից պաշտվի թագավորական փառքով, քանզի ինքն է միայն թագավոր երկնքի և երկրի, բոլոր բանական արարածների ու բնական կենդանիների հոգիների ու մարմինների, և նրա թագավորությունը թող վախճան չունենա:

Ձեզ համար ասածս հաստատող վկայություն կարող են լինել անցյալ ժամանակներում մեր և այլոց ինքնակալ թագավորների անցուդարձն ու արարքները, նաև վախճանը նրանց իշխանությունների, որ այժմ աներևույթ են մեզնից: Արդ, ու՞ր է թագավորությունը Նաբուգոդոնոսոր արքայի և կամ Փարավոնի, Դարիոսի<sup>44</sup> և այլ բազում թագավորների, որոնց դամբարաններն ու գերեզմանի տեղը ներկայումս չեն երևում: Ուրեմն դուք՝ ընթերցողներդ, պիտի հավատաք, որ ոչ երկաթն է փոխարկվում արծաթի բաղադրության, և ոչ էլ ոսկին՝ աղամանդի բաղադրության, այլ ամեն բաղադրություն արժանի է մնալու անփոփոխ, ինչպես ավանդվել է իր ստեղծողից: Ոչ ոք ի զորու չէ ավելանալու կամ ոչ էլ պակասելու, քան իր կարողությունն է, որ արարածների սկզբից նրան տրվեց իրենից՝ Արարչից: Ու թեպետ ժամանակ առ ժամանակ ամբարիշտի պես բարձրանում ու մեծանում է, ինչպես Լիբանանի մայրիները, սակայն աճապարանքով ընկնում է ու կորչում, ըպտ մարգարեի խոսքի, որ ասաց, թե՝ Անցա, բայց չտեսա, հարցրի, բայց նրա տեղը չգտա:<sup>45</sup> Այդպիսի ինքնիշխան ու ինքնակալ մարդկանց շատ թագավորություններ անցան մեր աշխարհով ու մեր ազգի գլխով, սակայն վերջում մեզ թողին որք և այրի, պարտապան իրենց կամայական ու անօրեն գործերի համար և նրանց մեկ անօրեն պարտքի դիմաց հատուցող մեր հարյուրապատիկ ծառայությամբ: Ուրեմն կրկին չխաբվեք և տեղի չտանք մեր անօրեն հովիվներին, նորից անօրենության որոնք չցանենք մեր աշխարհում, որ ավերի մեր ազատության ցորենի արտը և վերջում մեր սերունդներին դատապարտի ստրկության լծի, ինչպես հիմա ենք դատապարտված, այլ անհրաժեշտ է, չափազանց

անհրաժեշտ, որ ազատության ոգով արիանանք, մեջքներին կապենք օրենքի ու արդարության գոտին, մեզ համար ընտրենք բարի, քաղցրահամ, դյուրամարս ու անխախտելի օրենքներ, ինչ որ հրամայվեց մեր Տեր Արարչի կողմից՝ հրաժարվել ամեն տեսակ պտղից, որ տկարացնում է ճաշակողի մարմինն ու հոգին, միահամուռ ընդունենք, հաստատուն ու ամուր մնանք պահպանելու մեր օրենքները, որոնք Սուրբ Հոգու ներգործությամբ և մեր բանական հոգու վրա ճառագունով կընտրենք և հավանություն կտանք մեր բանական բնությամբ և ըստ կամքի ու ցանկության հայ բոլոր տղամարդկանց՝ թե եկեղեցական հովվապետների և թե ընդհանուր ժողովրդի, հրաժարվելով ծառի ամեն մի անօրեն ու չար պտղից, որի վերաբերյալ մեր օրենքներում հրամայված կլինի չուտել: Ինչ կանոն և օրենք որ ընդունելի կլինի և կհաստատվի հայոց մեջ, նույն կանոնն էլ թող Հայաստան աշխարհում հայոց թագավոր լինի: Դրանով ամենքն էլ ընդհանուրով թագավոր և տեր կլինեն իրենց աշխարհի ու ժողովրդի վրա, որովհետև այդ կանոններն ստեղծել, հաստատել և ընդունել են բոլորով՝ ըստ օրենքի ամենքին հատուցելու համար իրենց կատարած գործերի վարձը, որպեսզի բոլորն էլ ստանան ամեն տեսակ հարկեր, մաքսեր,<sup>46</sup> պատիվներ՝ հնազանդության համար և պատիժ՝ համաձայն օրենքի, իսկ մեր օրենքի պաշտոնատարները լինեն Հայոց աշխարհի և հասարակ ժողովրդի սպասավոր՝ ըստ Տիրոջ խոսքի, որ ասաց. «Եվ ձեր մեջ ով որ մեծ լինի, թող նա դառնա սպասավոր»:<sup>47</sup> Տիրոջ բերանի ամեն մի խոսք օրհնված է: Ուրեմն փառավորենք Տիրոջ խոսքը մեր բնության վերաբերյալ, նաև մեծարենք մեր այն պաշտոնյաներին, որոնք հավատարմորեն կսպասավորեն մեզ՝ ըստ մեր օրենքի, հույս տածենք մեր Տեր Արարչին, որ ինքը հանդերձյալ աշխարհում վարձահատույց լինի նրանց հավիտենական կյանքով և այլն:

Նաև ձեզ ցույց տամ մի քանի օրինակ, որոնք ձեր մտքում կհաստատեն իմ ասածները մեր ազատության վերաբերյալ, և որ մեզ անհրաժեշտ է ունենալ անխախտելի օրենքներ: Ընթերցողներիդ մտքի մեջ հաստատուն կերպով կդրոշմվի, որ ոչ մի գործ երբեք չի կարող ընթանալ իր ուղիղ ճանապարհով, եթե ըստ օրենքի չլինի: Ահա նայեք ձեր աչքերով և խորամուխ եղեք մտքով. որևէ մարդ, որ կամենում է տուն կառուցել, ընդունված է, որ սկսի հիմքից՝ հիմքը դնելով երկրի հաստատության վրա. ով որ կամենում է սերմ ցանել, ցորենի, գարու և այլ արտեր, սովորություն է, որ նախ և առաջ պետք է վարի արտը, մանրացնի խոշոր հողը, ցանելուց հետո ըստ սահմանված կարգի՝ ջրի և այլն. որևէ մարդ, որ կամենում է զգեստավորվել՝ ծածկելու համար մերկությունը, սովորություն է, որ նախ՝ հագնի պարեգոտ, իսկ նրա վրայից՝ նաև ուրիշ-ուրիշ զգեստներ. որևէ մարդ, որ կամենում է ուսանել

դարբնություն, նախ՝ պետք է սովորի փուքս փչել, հետո՝ հարվածել մուրճով և այլն. որևէ պատանի, որ կամենում է իրեն նվիրել ուսումնառության, ընդունված է, որ մինչև այլ բաներին անցնելը նախապես սկսի ճանաչել այբուբենի տառերը. այն մարդը, որը ցանկանում է ընդունել քահանայության կարգ, սովորություն է, որ հնազանդվի վարդապետին, աշակերտի իր ուսուցչին և ստանա իր աստիճանն ու կարգը. որևէ մարդ, որ իրեն նվիրում է զինվորության, սովորություն է, որ սովորի զենք շարժել, ծանոթ լինի զինվորության օրենքներին ու կարգերին և ծառայության նպատակին:

Վերջապես, եթե ասելու լինեն, սրանց նման շատ օրինակներ կարող են բերել ձեզ, ինչպես որ հավատացած են, որ ոչ մի գործ չի կարող սկսվել մարմնի շարժմամբ, մինչև որ մեր մտքի մեջ նախապես չտպավորվի, թե որն է մեր գործելու ցանկությունը, նաև մեր ձեռքի ոչ մի գործ ավարտի հասնել չի կարող, եթե չկատարվի ըստ կարգի և ընդունված սահմանի: Այսպիսով, արեգակի ներքո, երկրի երեսին կամ ծովում, չկա ոչ մի բան, ինչ էլ ուզում է լինի, որ շարժվի, մինչև որ չունենա սահմաններ և օրենքներ: Խելամիտ եղիր, ընթերցող. նայիր աչքերով և ըմբռնիր բանականությամբ ու հոգու զորությամբ այն սահմանը, որ հորինված է մեր Տեր Արարչից և միակ ճարտարապետից: Թեպետ ոչ ոք չիմացավ նրա կամքը, և ոչ ոք նրան խորհրդակից չեղավ, այլ ինքը՝ միակ կատարյալ և անսխալական, ամենափառ և ամենագոր Աստված համայնից քաջ գիտակցեց, որ իր ստեղծագործության մեջ անհրաժեշտ է սահման. նա իր ստեղծածներին դեպի գործ ընթանալու սահման կարգեց, որ անանց է:

Այդպես քեզ ևս հարկավոր է նայել ու ճանաչել մեկի զանազանությունը մյուսից, նաև չորս տարրերից ամեն մեկի հակառակությունը մյուսին, ինչպես է, որ ըստ սահմանի այդ անհաշտելի հակառակորդները հարմարվում և ընթանում են գործողությամբ, և նրանց գործողությունից ծնունդ են առնում բազում սահմաններ, այն է՝ անուշաբույր գարունը, պտղավետ ամառը, ճարպաբեր աշունը և պարարտացնող ձմեռը: Սրանք ամենքը, միմյանց հակառակ լինելով, հնազանդ իրենց Արարչի օրենքին, ողորմածությամբ մեր Արարչի՝ ցուցադրում են մեզ ամբողջ աշխարհը, իրենք հաստատուն մնալով և ենթարկվելով իրենց Տիրոջ օրենքներին՝ արեգակի ներքո, երկրի վրա և ծովում պահպանում են բոլոր ծնունդներին՝ հնազանդ սրանց օրենքներին, այսինքն՝ ծնվել, մանուկ դառնալ, պատանության հասնել, ծերանալ, նվազել և դադարել գոյություն ունենալուց: Դրանով փառավորվում են բոլոր ծնունդները՝ թե բանական, թե անբան բնությունները, և համայն փառքն այդ, պաշտամունքով ու փառաբանությամբ հանդերձ, վերընծայում իրենց Արարչին: Այդպիսով, մեր Տեր Արարչի՝ նմանօրինակ բա-

զում պատվիրաններն ու սահմաններն են, որ ուղեկցել են նրանից ստեղծվածներին ինչպես երեկ, այնպես էլ այսօր ու մինչև անկետ ժամանակը, որ միայն Արարիչը գիտե, ինքը, որ մեր բնությամբ անքննելի ու անճառելի է, բայց [հայտնի է] Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությամբ, որին հավատում ենք:

Ուրեմն, բարեկամներս, նայեք մեր խառնակները ընթացքին և անկանոն վարքին, որ առաջներում տեղ գտան մեր մեջ, մեր սեփական աշխարհում. Վաղարշակը բռնեց Հայկի տեղը, Բագրատը՝ Վաղարշակի տեղը, Ռուբենը՝ Բագրատի տեղը,<sup>48</sup> մինչև որ անկարգության հետևանքով այսօր բնականորեն բոլորի տեղն էլ մնաց դատարկ: Այս անկարգությունը, սկզբից մինչև ավերման վերջը, տևեց ավել կամ պակաս՝ մոտ երկու հազար տարի ժամանակ: Բայց լսեք ինձ, բարեկամներ. Տերը թող չկամենա, և թող հակառակ չլինի չորս պատվական տարրերին, որ այդ չորս տարրերի մեջ հանկարծ անզսպություն մտնի, ինչպես մեր [մարդկային] բնության մեջ է մտել: Եթե արևն առաջանա ու մտնի օդի սահմանը, իսկ ծովն էլ՝ հողի սահմանը, իսկույն կողորդա տիեզերքը, կավերվի աշխարհը, կորստյան կմատնվեն բոլոր կենդանական բնությունները, այն էլ մեկ ակնթարթում: Հետևապես երկնային և երկրային արարածների հաստատուն լինելն ու մնալը կախված է յուրաքանչյուրի սահմանից՝ թե հրո ճառագայթն իր ջերմությամբ, որ անճառելի է ու անհասկանալի մեր մտքին, կամ օվկիանոս ծովը, որ մի ժամանակ շարժվել է երկրի երեսին, կամ էլ հեզաբարո մեր մայր հողը, որը ծնեց զանազան ցեղի բնական կենդանիներ, և կամ քաջընթաց ու անկարգ հողմը, որը բուրում է ու աճեցնում բոլոր բնությունները, - իրենց արարման սկզբից մինչև այսօր իրենց Տեր Արարչի պատվիրանին միշտ հնազանդ մնացին և շնորհների արժանացան Տիրոջ կողմից, այսինքն՝ իրենց տեղերում հաստատուն մնալով մինչև այսօր և մինչև այն ժամանակը, որ սկզբից ավանդվեց նրանց մնալ, բայց միայն մեր փոփոխական բնությունն էր, որ մեղանչեց և խախտեց օրենքը, հեռացվեց իր տեղից ու բնակությունից, զրկվեց փառքից ու կյանքի ազատությունից, ենթարկվեց մահվան ժառայությանը և այլն: Կամենում են ասել, թե որքա՞ն սաստիկ է մեր անզսպությունը և որքա՞ն ամբարտավան մեր միտքը, որ չկամեցանք մեր գործությունը չափել երկնային հրեշտակների գործությամբ ու երկրի պատվանդանով, այսինքն՝ երկրի հաստատությամբ, և չմտածեցինք թե անօրինությամբ ինչպես կարող է մեր բնությունն առավելանալ, և կամ մեր փառքն ավելի բարձր, զորեղ ու կարևորելի լինել, եթե դա մեզ չեն կամեցել տնօրինել: Թեպետ ես չգիտեմ և չեմ ասում, թե ինչպես մեր բնությունը մեղանչեց, և իմ շարադրանքն էլ այդ գաղափարի շուրջ չէ, եթե ոչ ձեզ համար հայտնի ու ընդունելի դարձնելու՝ իբրև հավաստի ու անկասկածելի, որ արեգա-

կի ներքո չի եղել ու չի կարող լինել ոչինչ, եթե իր ընթացքի մեջ չունի օրենք՝ այս կամ այն ճանապարհի ու գործողության համար:

Եվ ամեն մի գործ, որ հակառակ է օրենքին ու սահմանին, միակ պատճառն է այդ գործի ոչնչացման, ինչպես ասվեց վերևում: Ինձ այնպես է թվում, որ անկարգության պատճառով բազմիցս այնքան շատ վնաս ու ավերածություն է հասցվել հայոց ազգին, աշխարհին ու բնակիչներին, որ վնասի որչափությունը ոչ ոք չի կարող գրչի շարադրանքով ներկայացնել: Չնայած այդ մասին բազում վկայություններ ունեմ հայոց և այլ ազգերի պատմությունից, բայց չեմ ցանկանում ընթերցողիդ ականջը ծանծրացնել, որովհետև ընթերցողդ ինքդ եթե կամենաս հաստատ մնալ քո հավատին, որին հավատում ես, երկու կամ երեք վկայությունը բավական կլինի քեզ մտքով համոզվելու իմ ասածի մեջ: Բայց ոչ ես, ոչ ընթերցողդ և կամ ոչ մեկը հայոց ազգից իր մտքում չի ուզենա վերհիշել այն նախատիքն ու ամոթանքը, որ կրել ենք նախկինում և ներկայումս, ոչ էլ այն, որ կրելու ենք ապագայում, եթե, ով գիտե, մեր վարքը շարունակի մնալ նույնը, և ընթանաք ու գործենք անկարգությամբ ու անօրինությամբ, ինչպես առաջներում: Քանզի անցյալ բազում հանցանքների հիմքի վրա է, որ կանխորոշվում է ապագան: Հատկապես այժմ պարզորեն նկատելի է, որ մեր անկարգության պատճառով մեր աշխարհի հարևանները չորս կողմից հրամայեցին մեզ, ինչ որ կամեցան, իսկ մենք, չգիտակցելով ու չճանաչելով մեր ազատության պատիվը, եղանք որպես փոստակայանի պատրաստի ձի.<sup>49</sup> ով որ ցանկացավ՝ հեծավ մեզ վրա և վարեց՝ ուր որ ինքը կամեցավ:

Մեր անկարգության պատճառով մի ժամանակ էլ մեր դրացիները մեզ դարձրին ոնց որ որսորդի շուն. հավատալով նրանց հորդորներին՝ մենք արդարացի համարեցինք հանդես գալ Հունաց երկրից դեպի հարավ ու արևմուտք՝ խածատելու մեր թշնամիներին ու դրացիներին: Իսկ երբ եկավ մեզնից խոցվածների վրեժխնդրության ժամանակը, նրանք մեզ վրա հարձակվեցին, խածատվածները ցիրուցան արին մեզ: Մեզ հորդորողներն այդ ժամանակ լքեցին մեզ, ոչ մի կողմից օգնական չեղան, բայց երբ մենք ցանկացանք շահել նրանց բարեհաճությունը, խոստացան մեզ համար աղոթել, և երբ մենք դանդաղեցինք շահել նրանց կամքը, հրաժարվեցին մեզնից և ստաբանությամբ նզովեցին ու նախատեցին մեզ՝ իբր մենք վատ քրիստոնյաներ ենք և անհնազանդ նրանց անտանելի հրամաններին, ինչով որ նրանց գրքերը լեփ-լեցուն ենք տեսնում: Այն ամենը, ինչի համար որ նրանք մեղադրում են մեզ, բոլորովին սուտ են, անհամապատասխան Հայաստան երկրին, ազգին և եկեղեցուն, այնպես որ մեր դեմ ներկայացված նրանց մեղադրանքները մեր մեջ ոչ ոք էլ արդարացի չհամարեց: Մեր հեզության պատճառով էր, որ ինչ կամեցան՝ ասացին:

Բայց այժմ, բարեկամներ, եկեք հեռատես լինենք. այսքան անկարգորեն վարելով մեր կյանքը՝ առիթ ենք տվել մեր գլխին եկած այդքան անոթանքի: Ինչպե՞ս, ինչի՞ շնորհիվ և ի՞նչ պտուղ կարող ես արժանի լինել ակնկալելու և ստանալու՝ իբրև արդյունք նման անկարգ վարքի: Եվ ի՞նչ երկյուղ կարող է արգելք լինել մեր սրտերին և մեզ համար ընդունելի դարձնել. որ մենք մեր կյանքի ընթացքում ապրենք այսքան նախատինքի ու անոթահարության մեջ, մինչդեռ շատ լավ գիտենք, որ երկրի երեսին չի ծնվել ոչ մի մարդկային էակ, որ ի վիճակի լինի մեզ պարզելու անմահ կյանք և կամ մեր կյանքին՝ հավիտենական վախճան:

Որևէ գազանից, բարբարոսից կամ արյունարբուից սպառնացող ողջ սարսափը իր չարությամբ չի կարող մեր նկատմամբ ավելին լինել, քան որ բնական մահն է մեր գոյության հանդեպ: Իսկ այդ մահը ոչ ոք չի տվել մեր կյանքին ու բնական բնությանը, եթե ոչ մեր բանական հոգու անօրեն արարքը: Մենք նախ իմացանք ու ճանաչեցինք այդ մահը և ապա կամովին հանձն առանք, անօրեն գործերով ճաշակեցինք օրենքների դեմ հանդգնության պտուղը և մեր արարքների համար իբրև վարձատրություն ստացանք մահը: Եվ արդ, մեզմից ոչ ոք չի կարող փրկվել այդ մահից, իսկ դու այդ մահվան երկյուղից - ոչ ում ես ազատությունը և հնազանդվում անօրեններից. բայց չէ՞ որ մանրագույն մի կարիճ կամ մի պիղծ օձ և կամ մի չնչին դեղկ<sup>50</sup> կամ էլ անմարս մի սառն կերակուր կարող է այդ հասարակ մահը հասցնել քո կյանքին, ուրեմն և ամեն մի թունավոր կենդանի կարող է քո թագավորը լինել: Ոչ այդպես, այլ մեզ անհրաժեշտ է մեռնել ազատ և մեզ համար նախապատրաստել հավիտենական կյանք, քան թե անկարգ և ծառայական վիճակով ապրել ու մարմնով կենդանի մնալ կյանքում և հանդերձյալ ժամանակի համար նախապատրաստել վախճան հավիտենական:

Անասունները ևս իրենց կյանքում չեն հանդուրժում, որ ինքնագուրվա և կամայական իշխանությամբ որևէ մեկը հրամայի իրենց: Հատկապես որքա՞ն անոթանք կլինի մեր բանական բնությանը, եթե հնազանդվենք մի մարդու, որ մեր նմանությունը և մեր բնությունն ունի, բայց իշխանաբար կհրամայի մեզ: Գուցե թե քեզ վրա ընդունես բռի հրամանը մի պոռնիկ կնոջ, որը քո բնության գարշելի ցանկության ու ողջախոհության սոսկալի պատճառ դառնա, կամ թե ինքնակալի կամքին ենթարկվես մի գինեվաճառից, որը քո արբեցության մոլեգնած ցանկության պատճառ դառնա: Սակայն բանական հոգու զորությամբ գիտակցելով քո մոլությունը՝ դու պարտավոր ես զղջալ, որովհետև արածդ չար և ավերիչ է քո պատվական ազատության համար: Քեզ անհրաժեշտ է, որ քո սրտի ցանկությունը և արբեցությունը կատարելուց հետո մարդու բանական զորությամբ լրջանաս ու զղջաս և քեզ համար անսասան

սահման դնես՝ ուղղվելու համար քո վատթար հանցանքներից, որովհետև քո որդին կամ քո որդիների որդիները գուցե թե հակում հանդես բերեն նույն բանի նկատմամբ, ինչպես դու՝ նախկինում: Թող այնպես չլինի, որ [նրանցից մեկնումեկը] սանձարձակորեն տարվի անօրեն գործերով, ապա թե ոչ օրենքի շղթայով կկապվեն նրա սրտի ցանկությունն ու արբեցության մոլուցքը, որպեսզի նա հաստատուն մնա և արժանի լինի իր պատվին, որ շնորհեց նրան Տերը և համայն արարածների Արարիչը, կարգադրեց մեր կյանքի ընթացքը, որ հայորդիները կարգ ու սահմանով ընթանան և առաջադիմեն, Հայաստանում հանդես գան իմաստուն այրեր՝ իրենց կյանքում ունենալով անխախտելի սահմաններ: Այդ ժամանակ մեզանում օրըստօրե կարող են ծնվել շնորհալի և ազատ այրեր, որոնք կգիտակցեն բարին և կամ չարը և կզգուշանան իրենց ազգի ու աշխարհի համար (եթե իրենց դրացիներից ոչ ավելի, բայցև ոչ պակաս):

Ուրիշ ազգերը, ծանոթանալով մեր ազատությանն ու կարգուկանոնին, կխցանեն ծաղրաբանությամբ մեր դեմ ուղղված իրենց բերանները և հարթ ճանապարհ չեն գտնի իբրև արաբական գայլեր հայոց անմեղ ոչխարների և գառների մեջ մտցնելու իրենց նենգ ու անհանգստացնող մարդկանց, ինչպես անցյալ ժամանակներում, այնպես էլ ներկայումս, երբ, կարող են ասել, Հայաստանի համար վնասն առավել մեծ եղավ Հայաստանյայց դավանությունը հայազգի ուրացողների և այլոց դավանություններն ընդունողների, քան թե հատկապես մեր թշնամիների ու բարբարոս բռնավորների պատճառով: Քանի որ իմ շարադրանքն այդ տեսակ մարդկանց հասցեին գանգատվելու և նրանց պատմության համար չէ, ուրեմն ինձ անհրաժեշտ չէ խոսել առանձնապես հայոց մեջ ուրացողների՝ թե ի պատիվ Հռոմի՝ եկեղեցականների և թե ի պատիվ պարսից և օսմանցոց՝ հասարակ ժողովրդի կատարածի մասին, այնպես որ մի ժամանակ մեր անկարգության պատճառով առիթ տվեցինք աղմուկի ու խռովությունների, ծախսեցինք մեր անքանակ արծաթը, կորցրինք մեր կյանքի ժամանակը՝ մեր սերն ու ընտանեկցությունը փոխարինելով միմյանց հետ հակառակությամբ և իրարանցումով<sup>51</sup>: Այդ ամենը և դրանց նման անթիվ վնասակարությունները կարելի է զսպել կարգուկանոնի միջոցով և արգելափակել մեզ հասնող վնասի ճանապարհը՝ ըստ մեր օրենքների, մնալ երջանիկ ու փառավոր, ինչպես ի սկզբանե մեզ ստեղծեց Տերը:

Անհրաժեշտ է, որ ցույց տամ իմ արտահայտած մտքի հավաստիությունը, այսինքն՝ հարկավոր է, որ ձեզ ապացուցեն օրենքների ու սահմանների բարությունը: Ուզում եմ ասել, թե քանի որ երկնքում և երկրի երեսին ոչ ոք չկա ավելի զորեղ ու մեծագույն, բացի մեր միակ Աստված Տեր Արարիչից, նա որ միայն ինքը ստեղծեց մեզ և մեր հոգուն զորու-

թյուն տվեց, որպեսզի միայն իրեն ճանաչենք Աստված, ուրեմն մենք էլ միայն նրան պետք է պաշտենք: Իսկ եթե նրան հաճելի թվաց յոթ օրվա ժամանակամիջոցում իրագործել մեր բնության ստեղծումը՝ անխախտելի կարգ ու սահմանով, որպեսզի շարունակ մնա և ընթանա ու գործի օրենքով ու սահմանով մինչև իր կետ-սահմանը, - ապա որքան անհրաժեշտ է մեզ, ու պարտականություն կա մեզ վրա, որ մեր համահավասար բնությունները, ճանաչելով մեր բնության փոփոխումը և ժամանակի անկայունությունը, երկրի երեսին ունենան անխախտելի օրենքներ: Մեզ անհրաժեշտ է, խիստ անհրաժեշտ, նախ և առաջ մեր բնության համար ընտրել ճիշտ ժամանակը, երբ մենք կունենանք մաքուր սիրտ և խոնարհ հոգի, միմյանց նկատմամբ գթացող կլինենք ու ներողամիտ՝ ժամանակի ընթացքում մեր գլխին ու մեր աշխարհին հասած անարդար դիպվածների հանդեպ, ոչ մարմնական ցանկությամբ և ոչ էլ հատկապես անծնական շահավետությամբ, ոչ սիրուց և ոչ էլ ատելությունից բխող կողմնակալությամբ, ոչ բարեկամի և ոչ թշնամիներից մեկի կամ մյուսի կողմը բռնելով, այլ անխախտ հայացքով, այնպես որ հաշվի չառնենք ոչ ոքի՝ ոչ հայր, ոչ որդի, ոչ մայր, ոչ քույր, ոչ հարուստ և ոչ տնանկ, ոչ տեր և ոչ ծառա, ոչ բարեկամ և ոչ թշնամի, եթե ոչ անաչառ խոստովանությամբ մեր միտքը իբրև ոտքի կոխան վերընծայելով մեր Տեր Արարչի սրբությանը, քանզի մենք նրա ձեռքի արդյունքն ենք՝ մայր հողից, նաև նվազեցնելով մեր բնական բնության անասնական գոռոզությունը՝ արիությամբ ընդունենք հեզությունն ու խոնարհությունը մեր բանական հոգու, որ մեր Արարչի փշմամբ ստացանք, սիրով, միաբանությամբ ու համահավասար ամենքս իջնենք ու մոտենանք՝ ընտրելու համար ամենաբարի օրենքներ ու անխախտելի սահմաններ: Նույն ժամին իսկ մեր մտքում պիտի ընդունենք, որ բոլորս էլ, մեզնից յուրաքանչյուր անձ, ազատորեն թագավոր լինելով, իր մատները կրնի իր բանի, գործի, ստացվածքի, իր կյանքի և կարգ ու սահմանի վրա՝ անխախտելի ու հաստատուն օրենքով անքակտելի վճիռ արձակելով<sup>52</sup> իր նկատմամբ, և մեր այդ օրենքը պիտի թագավորի հայ ազգի և Հայաստան աշխարհի վրա:

Այդ անխախտելի օրենքը մեր աշխարհը կլցնի մարդկանցով, կերջանկացնի մեզ, մեր իշխաններին կազատի խղճմտանքից ու դատաստանից, կփակի վայրահաչողների<sup>53</sup> բերանը, մեզ կազատի ենթարկվածությունից, կզսպի մեր վարքը հպարտությունից ու ինքնահավանությունից և մեզ կնդի բարի գործեր կատարելու: Դրանով նա մեզ կպարտավորեցնի խուսափել չար գործերից, որոնց համար ըստ մեր օրենքի ընդունելու ենք պատիժ ու նախատինք: Նրանով ամենքը կճանաչեն իրենց ձեռքով կատարածի արդյունքը, կամովին կհատուցենք միմյանց մեր պարտքերը՝ հարկեր, մաքսեր, պատիվներ, հնազանդու-

թյուն և այլն: Պետք չէ, որ ես մեկ առ մեկ բացատրեմ այդքան երջանկության պատճառը՝ անխախտելի օրենք ընդունելու շնորհիվ, բացի նրանից, որ մեր հանդեպ և կամ մեր աշխարհի երեսին մեր ձեռքի արարքով ինչ էլ դուրս գա կամ ծնվի, նրա հատուցման մասին կարելի է գրված գտնել մեր օրենքում, որ ընդունել է մեր ազգը: Այդպիսով, ամեն ոք, ինչ էլ կամենա, ազատորեն կարող է գործել՝ թե բարի, թե չար, և պարտավոր է ըստ օրենքի ընդունել իր ձեռքով կատարածի վարձատրությունը՝ պատիվ կամ պատիժ: Նրանով է զսպվում մեր բնությունը և ընթանում դեպի բարի գործ՝ գիտակցելով մեր վճիռը, որ իրենով է կայացել իր նկատմամբ՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման:<sup>54</sup> Դրա համար էլ իր ձեռքն անզգամորեն չի խփի [ուրիշի] աչքին կամ ատամին, որովհետև շատ լավ գիտե, թե իր անպատկառ վարմունքի արդյունքը կամ իր լկտի շարժման վարձն ինչ է:

Բնականաբար գիտեմ, որ այս գրքի ընթերցողը, հասնելով սույն հողվածին, իր մտքում ճիգ կարող է թափել իմանալու, թե մի թե լայնատարած մի երկրի երեսին [ապրող] մի ողջ ազգ կարող է միախումբ հավաքվել՝ լսելու իրավունքի մասին, կազմելու օրենքներ, ընդունելու կամ հակադրվելու կարգադրությունների, և կամ ընդունելուց հետո ո՞վ է լինելու, որ այդ ամենին կիրառություն պիտի տա գործի մեջ: Այդպիսի մտածության կապակցությամբ ուզում եմ փարատել քո մտքի տարակուսանքը: Եղբայր, եթե մտախոհությամբ ընթերցես այստեղ գրված օրենքի ամեն մի հոդված, ապա այն քեզ ցույց կտա ամեն ճանապարհ՝ իր դյուրին և հեշտ ընթացքով: Ինչպես որ մի կալից, որտեղ գտնվում է բյուրավոր քիլաներով<sup>55</sup> ցորեն, կարելի է վերցնել մի բուռ, և երբ նայես նրա տեսքին, քեզ ցույց կտա այդ ամբողջ կալի ցորենի որակն ու արժեքը, այդպես էլ մեր երկրի երեսին ապրող յուրաքանչյուր տասը հազար տուն բնակչից հրավիրելով ու կանչելով միայն երկու մարդու, որոնք ընտրված ու ընդունված լինեն տասը հազար տնից, այդ երկու հոգին, լինելով և մնալով իբրև տեղակալ և փոխանորդ մեկ տասը հազար տների, կկատարեն իրենց առաքած այդ բյուրավոր անձանց գործը:<sup>56</sup> Այդ կերպ համայն Հայոց աշխարհին հարկավոր չէ, որ ամենքի փոխարեն հավաքի ավելին, քան ոչ ավել և ոչ պակաս հինգ հարյուր մարդու. սրանցով կարող է մեր ամբողջ աշխարհի համար ընդունելի օրենքներ ընտրել և հաստատել:

Իսկ այն մասին, որ մտածեցիր, թե ո՞վ է, որ կարող է կիրառել օրենքները մեր նկատմամբ, [կասեմ՝] նա, որին մեր օրենքը հրամայում է և շնորհում պաշտոնավարության հրաման, որ օրենքով կարգվի ու մնա որպես մեր ողջ ազգի սպասավոր և ջատագով մեր օրենքների: Այդ մարդը պարտավոր է լինել հայոց սպասավոր, ինչպես Տերն է ասում, թե՛ Ո՛վ որ ձեր մեջ մեծն է, նա է սպասավոր,<sup>57</sup> կրտսեր պաշտոնատար՝



ծառայելու համար ամենքին: Նա պետք է լինի հայոց ազգի բերանը և շարժվի այն գործի ու պաշտոնի մեջ, որ ավանդել է նրան Հայոց տունն իր ծերակույտի կողմից՝ համաձայն օրենքի: Նա ևս ըստ օրինաց պիտի ընդունի իր ձեռքի գործի պտուղը, ինչպես ես և դու՝ ընթերցողդ: Նա չի կարող ոչ մի բանով առավելություն ունենալ, քան հայոց փոքրավորներից որևէ մեկը: Նրա առավելությունը ոչ մի բան չէ, եթե ոչ իր պաշտոնով հավատարմորեն ծառայելը հանուն իր ազգի: Նա սիրելի ու պատվելի է մեզ համար՝ իր հավատարմաբար ծառայելով: Իր պաշտոնավարության ողջ ժամանակաընթացքում նա միշտ պետք է մնա աներկյուղ և առանց ապավեն լինելու որևէ մեկին, քանզի ոչ ոք իր կամքով ի գորու չէ որևէ մեկի գլխից մի մազ անգամ վերցնել իրեն, ապա թե ոչ համաձայն օրենքի նա կտա կատարողների ձեռքի գործերի հատուցումը՝ թե պատիվ և թե պատիժ համապատասխան մեր դատաստանի վճռի և օրենքի:

Ձեզ ցույց տամ նաև մի օրինակ, որով ձեր աչքերով կարող եք տեսնել, որ ամեն գործի մեջ անխախտելի օրենքն ու սահմանն ավելի արժեքավոր են, քան թանկագին գոհարեղենը, քաջամարտիկների բազկի զորությունը կամ բազմաքանակ գանձերը: Մեծ զորություն է նրանից բխում, մինչև իսկ մեռածներին հարություն է տալիս և կենդանացնում, թույլտես ոչ Տեր Արարիչ Աստծու զորությամբ, այլ օրենքով ու սահմանով՝ հաստատված մեր բանական հոգու միջոցով: Նայեք ժամացույցի [պատրաստման] արհեստին. մետաղներից ստեղծելով նրա տարբեր տեսակի մասերը և օրինաչափ կերպով հավաքելով՝ նրանց տալիս է շարժման կենդանություն՝ օր ու գիշեր ցույց տալու մեզ հավաստի ժամը: Օրենքի համաձայն ենք դիտում նաև ջրաղացը. տալով նրան չափավոր կերակուր՝ ջուր, նա կենդանանում է շարժմամբ և աշխատանքով ծառայում մեզ: Այդպիսով մխիթարվում ենք նրա ծառայությամբ և լիանում հացով: Նաև կարգ ու սահմանով<sup>58</sup> ենք որսում ձկներին՝ իրենց սուր ընթացքի պահին, դուրս հանում նրանց խոր ծովից, մի բան, որ վաղեմի ժամանակներում և առաջներում մեր կյանքում անհնարին էր: Կարգ ու սահմանով է, որ օդային բարձունքից ցած ենք բերում թռչուններին և որոգայթով որսում նրանց, որ այժմ է մեզ համար դյուրին դարձել և որ առաջ անհնարին էր: Կարգ ու սահմանով ենք առյուծին մտցնում որոգայթի մեջ, մինչդեռ որոգայթ ստեղծողը մի վայրկյան անգամ չի կարող կանգնել իր արգելափակած առյուծի առաջ, սակայն կարգ ու սահմանով սանձում է նրա հպարտությունը:

Արդ, մի հասարակ ճշմարտությամբ ուզում են ընթերցողիդ մտքում հաստատել կասկած հարուցող մի այլ բան, որ եթե արեգակի ներքո՝ թե երկրի երեսին և թե խոր ծովում, անբան բնությունները բանական հոգու զորություն ունենային, որ ճանաչեին մեր անօրեն գործերը, մեր

բնությունից ազատության վերացումը, մեր բնության ընկնելը ծառայության տակ՝ իբրև լծկան, և իրենց հետ հավասարվելն ու իրենց նմանվելը, նաև եթե իմանային, որ մենք արիությամբ չենք պահում մեր ազատության պատիվը և ոչ էլ մեր բանական հոգու զորության պատիվը, - ես չէի կասկածի, որ նրանք իրենց սրտից իսկույն կվանեին երկյուղը և կըմբոստանային մեզ հնազանդվել: Նրանք կիշխեին մեզ վրա, ինչպես որ անցյալ ժամանակներում մեզ վրա իշխեցին կամապաշտ իշխանները: Ասածիս վկայությունն այն է, որ տեսնում ենք ներկայումս, թե ինչպես որոշ զազաններ իշխում են մեզ վրա և գիշատում մեր միջից նրանց, ովքեր չպահպանելով իրենց ազատության պատիվը, իրենց չվարժեցնելով զենք ու ասպարով՝ շարժվում են անասունների և անբանների վարքով ու հոշոտվում նրանցից: Հետևապես, եթե օրենքն ու սահմանը նույնիսկ այնքան էլ արժանավորություն չունեն մարդու պատվի համար, ապա թերևս մեզ հարկավոր է օրենք ու սահման ունենալ մեր անձը դժոխակ գազաններից և գիշատիչ գայլերից պաշտպանելու համար, որպեսզի այնպես չլինի, որ զուր տեղը բզկտվենք որևէ անզուսպ գազանից:

Ինչպես բազմիցս ասացի, նույն մտքին էլ մնում են և հավաստում ձեր մտքում, որ մեզ ավելի լավ է մեռնել և իջնել գերեզմանի խորքը, քան թե անօրեն կյանքով միշտ մնալ նախատիքի մեջ: Անօրինակությամբ և անկանոն կյանք վարելը մարդու համար ավելի վնասակար է, քան թե խորին դժոխքի պատիժը, որովհետև ոչ ինքը, ոչ ընտանիքը, ոչ բարեկամները և ոչ էլ դրացիներն ու մյուսները չեն կարող խաղաղ մնալ: Հանապազ գիշեր ու զօր բարի ու չար գործերի մեջ հալածվածի վիճակում են լինելու ոչ միայն փոքրն ու կրտսերը և աղքատն ու տկարը, այլ նաև շատ մեծահարուստը և նրան համախոհ ազդեցիկը, որոնք թափառական կյանքով պիտի տանուլ տան իրենց կյանքի ժամանակը՝ մեռնելով որպես անասուն և անբան: Ինչպես որ անօրինական վարքով այս աշխարհում պիտի կորչեն, նույն կերպ էլ հանդերձյալ կյանքում երերուն ընթացքով պիտի հայտնվեն տանջանքների մեջ, որովհետև հանդերձյալ կյանքում ոչ մեկը չի լինելու, որ լսի նրանց բողոքները, թեպետ, բնականաբար, արդար պատճառ պիտի գտնեն բողոքելու՝ ասելով. «Այսպես ու այսպես՝ իշխանները մեր աշխարհի, որտեղ մենք մարմնով ապրեցինք, մեզ կարգ ու սահման չձորհեցին՝ վարելու համար մեր կյանքը, և մենք չիմացանք, թե ինչպես պետք էր զսպել մեր կյանքը, հետևապես մեր անօրեն կյանքի համար մենք մեղք չենք կրում» և այլն:

Իսկ մենք, ճանաչելով մեր Տեր Արարչի արդարությունը և նրա անաչառ դատաստանը, չենք կասկածում, որ խղճալի ժողովրդին անօգնական չի թողնի՝ առանց որևէ մխիթարության ու դատաստան

կտրելու, եթե ոչ նրանց կմխիթարի ու կփրկի կորստից, մինչդեռ նրանց իշխաններին վրեժխնդրության համար կուղարկի խորին դժոխք, որովհետև գիտեին իրենց Տիրոջ կամքը, բայց չկատարեցին:

Սակայն ես չեմ ցանկանում ձեր սրտերում դժոխային երկյուղ մտցնելով՝ նրանով հարկադրել ձեզ ընդունելու օրենքներ ու կանոններ, այլ ձեզ հատկապես ցույց կտամ օրինազուրկ վարքի վնասը և օգուտը կանոնի ու սահմանի, որը մեզ դարձնում է մարդ՝ հոր որդեգիրը լինելու պատվին արժանի, և որով մեր բանակայությունը տարբերվում է անասունի բնությունից ու իրեն գիտակցում ըստ Տիրոջ խոսքի, այսինքն՝ այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լուսո որդիները:<sup>59</sup>

Նայեք, բարեկամներ. մեր Փրկիչը՝ ամենաբարի Քրիստոսը, իմացավ մեր կամքն ու գործը և բնությունը: Նա ամեն մարդու չէ, որ ավելի իմաստուն համարեց, այլ այս աշխարհի որդիներին: Ուրեմն դա է զանազանությունը որդու և մարդու, որոնք պահպանելով իրենց ազատության պատիվը և իրենց փոփոխական բնությանը կարգադրելու հնարը՝ արժանանում են որդեգիր լինելու շնորհին, ինչպես որ երկրորդ անգամ ասաց. «Նրանց իշխանություն տվեցի՝ լինելու Աստծու որդիներ»:<sup>60</sup> Դու տես. եթե ձեր մեջ, ըստ մեր սովորության, որևէ ռամիկ հայր վատթար բան է նկատում իր որդու գործերի մեջ, ապա նրան զրկում է իր որդեգիրը լինելուց: Ուրեմն որքա՞ն ավելի բարություն է մեզ հարկավոր, որ մեր կյանքը զսպենք օրենքով ու ազատությամբ, որպեսզի արժանի դառնանք Տիրոջ պաշտամունքին և ընդունենք նրա հրամանը՝ Աստծու որդի լինել: Բայց մի սպասիր, բարեկամ, քեզ համար աղոթելու տեղ գտնել Տիրոջ՝ այնքան անարատ ատյանի առաջ, եթե չգիտես Տիրոջ օրենքները և քո կյանքը վարելու օրենքները, չես ճանաչում բարին ու չարը և ոչ էլ քո ձեռքի գործի վարձատրությունը ըստ սուրբ Պողոսի ասածի՝ պատիվ ըստ արժանավորության:<sup>61</sup>

Ուրեմն մեզ անհրաժեշտ է ջանք թափել ընտրելու լավագույն օրենքներ ու սահմաններ՝ մեր կյանքի համար, որ ժամանակով այնքան կարճ է երկրի երեսին, եթե հետևենք մարգարեի ասածին՝ [ընդամենը] ութսուն տարի,<sup>62</sup> կամ ժամանակի բերումով՝ ինչքան որ գոյություն ունենանք մարմնով, որպես մարդ արժանի գտնենք մեզ պատվի, նաև արժանի մեր Արարչի որդեգիրը լինելու փառքին՝ պահելով պատիվը մեր հոգու զորության, որն ավանդված է մեզ ամենապայծառ ու պատվական մեր Տեր Արարչից: Քանզի նա է մեզ արժանի դարձրել պատվի և այնքան սիրել մեզ, որ ոչ միայն Բանի հրամանով մեզ ստեղծեց, ինչպես մյուս արարածներին, այլև լուսափայլ, մաքրագարդ ու անճառելի իր շնչով մեր հոգուն զորություն ու բանակայություն հաղորդեց, ու այն ժամանակից բանական ու իմաստուն զորությունը կա

ու պիտի մնա մեր հոգու և մարմնի մեջ մինչև իր կետ-սահմանը:

Յետևապես ոչ միայն հարկավոր է, այլև մենք պարտավոր ենք մեր հոգու մեծաշնորհ այդ զորությունը պահպանել ազատ ու անարատ, իբրև տեր և թագավոր մեր մարմնի աշխարհում, որպեսզի չլինի թե ծուլությամբ ու անզուլությամբ կաղին տալով թողնենք, որ մեր զորությունն ու ազատությունն ընկնեն ծառայության տակ: Իսկ մեր ազատության ու բանակայության շնորհը կարիք չունի ոչ գանձերի, ոչ ոսկու, ոչ արծաթի և կամ ոչ էլ թանկագին քարերի, որովհետև սրանք բոլորը պատճառ են հանդիսանում անօրենների անիրավություն գործելու, վատթարների շողոքոթության, ստախոսների՝ կաշառքով արդարանալու, անարժանների պաշտոն ձեռք բերելու, կույս աղջիկների հետ ծերերի ամուսնանալու, այլ մեր բանական բնության ազատությունը միշտ կփայլի բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների մեջ,<sup>63</sup> այնպես որ մի հովիվ, որն ընդդիմանում է գայլերին և իր կյանքը դնում՝ պաշտպանելու համար ոչխարներին, երբևիցե ավելի կատարյալ, ազատ ու պատվարժան մարդ կարող է համարվել, քան որևէ վախկոտ, հոռի և ծուլ մի իշխան, որ պատճառ է դարձել իր ժողովրդի ցիրուցան լինելու:

Նաև բոլոր օրենքներն ու սահմանները, որոնք ներդաշնակ են բանական բնությանը, կարգված են հոգու բանական զորությամբ, քաղցր են մարդկային բնության ճաշակի համար, և երբ այդ մասին ընթերցեք օրենքների շարքում, չեմ կասկածում, որ հաճելի են լինելու ձեր ցանկություններին, ոչ միայն ընդունելի պիտի լինեն ընթերցողներիդ համար, այլև հավատում եմ, որ դուք պիտի փայփայեք և ձեր կրծքի ու սրտի վրա պահեք այդ օրենքները: Ինչպես որ մեր բնությունից առաջ եկած ամեն մի անօրինություն ծնվում է ժամանակի տարուբերումից ու մեր անմիտ գործողությունից, և մեր մեջ<sup>63</sup> անօրինության ծնվելուց հետո այն առիթ է տալիս մեղքերի ու հանդուժելի դարձնում, որ անօրինությունը մտնի մեր մեջ, այդպես մեզ համար սովորություն է դառնում անօրինություններն ընդունել իբրև օրենքներ, այսինքն՝ թեպետ ամեն մի մարդկային բնություն սովորաբար խոստովանում է արդարությունը՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, բայց ժամանակի փոփոխականության, իմ անբարտապանության կամ իմ տաքարյուն բնավորության պատճառով գուցե այնպես պատահի, որ ես ջարդեմ իմ հարևանի ատամը, և այդ ժամանակ ինձ համար դժվար լինի ընդունել ու վճիռ արձակել իմ ձեռքի արարքի վերաբերյալ՝ իմ ատամով հատուցելու հարևանիս ջարդված ատամի փոխարեն, եթե [մեր] աշխարհում գոյություն չունենա անխախտելի օրենք, ու ես գուցե խույս տամ ատամ ջարդելու համար իմ մեղքի պարտքը հատուցելուց, ահա օրենքից միայն իմ՝ մեկ անձի փրկությամբ ընդհանուր անօրինականություն է մուտք գործելու, որովհետև վաղն էլ դու ես փորելու քո եղբոր աչքը,

մյուսը հափշտակելու է հարևանի ունեցվածքը, մի երրորդը բռնաբարելու է կույս աղջկա պատիվը և այլն, ըստ մարգարեի խոսքի, թե մեղքի պատճառ դառնալով այն մարդու համար, որ անօրինություն է գործում՝ «- այդպիսով ոչնչացվելու են օրենքներն ու սահմանները, ինչպես որ այժմ են ոչնչացված, և երկիրը նեխում է գարշելի անօրինականությունից, բնակիչները՝ թարշանում, ազատությունը՝ ստորացվում, և անամոթ այլազգիներն են իշխում մեզ վրա: Անկարգության պատճառով ոչ միայն թշվառանում ենք, այլև երկրի երեսին ազգովի ամոթահար ենք լինում, մեղապարտ դառնում մեր Տեր Արարչի հանդեպ՝ սպասելով պատժի կատարմանը գեհեմում:

Վերահասու եղեք անցյալ ժամանակի և մեր ապրած այժմյան ժամանակի մեջ կատարված հանցանքներին, ինքնագլուխ իշխանների և կամապաշտ հրամայողների գործերին. թեպետ նրանք չդադարեցին զգուշանալ իրենց անձը պատասպարելու ամուր ու պարսպված բերդերում և ամրափակ դարպասներով պալատներում՝ հավատարիմ սպասավորների ու պահակների հսկողության ներքո, որքան իրենց կարողությունն էր ներում՝ զգուշորեն պաշտպանվելով և մտովի ձգտելով իրենց ապահով դարձնել, բայց կարող ենք անցյալ ժամանակի պատմությունն ընթերցել, նաև դուք՝ ընթերցողներդ, ձեր աչքերի տեսողությամբ և ականջների լսողությամբ բազմիցս հանդիպել եք, ու ես էլ՝ ձեր մեջ փոքրավորս, կարդացել, լսել ու շատ եմ տեսել, որ ինքնագլուխ իշխանը և կամայական դատավորն իրենց հնազանդվողների համար միշտ էլ ահարկու և սարսափելի են եղել, և ժողովուրդը նրանց կամքն ու հրամանը կատարել է նրանցից ունեցած երկյուղի պատճառով: Այդպիսի բազում իշխաններ թե նախկինում և թե այժմ ինչպես քրիստոնյաների, այնպես էլ հեթանոսների մեջ ճաշակել են մահվան դառնությունը՝ ոմանք թունավորվելով, ոմանք քնի մեջ խեղդամահ արվելով, ոմանք որսատեղում սրով խողխողվելով,<sup>65</sup> ոմանք էլ հանկարծակի սպանվելով որևէ անարժան մարդու ձեռքով: Այդ ամենը եղել են և կարող են լինել ընդհանուր ժողովրդի ցանկություններին հակառակ՝ միայն մեկ ինքնակալի կամքը կատարելու պատճառով: Սակայն այդ իշխողի իշխանությանը ենթակա ժողովուրդները, որոնք լռում ու հնազանդվում են նրան, նրա արարքներն ընդունում են ոչ թե իրենց հոժար կամքով և ոչ էլ օրենքով ու սահմանով, այլ վախից:

Բայց ինչպես աշխարհիս և մարդկային բնության կարգն է, արեգակի ներքո, երկրի երեսին ինչ էլ կա՝ վախ, քաջություն, սեր, թշնամություն և ամեն բան, հավիտենական չի կարող լինել, այլ միշտ թուլանում է ու վերանում, ապա նորից ծնվում՝ ըստ այս աշխարհի և մեր բնության սովորության ու փոփոխականության: Այդպես էլ եթե ինքնակալ տերերին հնազանդվողները երկյուղի պատճառով շարունակեն

մնալ հնազանդության մեջ, ապա հպատակի գիտակցության մեջ օրավուր թուլանալու է իրենց իշխանից ունեցած նրանց վախը, և օրավուր ամրանալու է հնազանդվողների սիրտը, մինչև որ ծայրահեղ հուսահատության են դիմելու, ինչպես վերևում ասացինք, նենգորեն վրեժ լուծելով, որ մեծ մեղք է. մեկը քաջաբար իր ձեռքն է երկարելու սպանելու համար, մյուսն անհոգ կերպով մահվան դեղ է տալու, մեկ ուրիշն ահաբեկված փախչելով՝ ապստամբ է դառնալու և այլն: Այսպիսի գործողությունների պատճառով բորբոքվելու է մեր բնության խաղաղությունը, վրեժխնդրության համար ոտքի են ելնելու տգետները, գահ է կործանվելու, իշխանական աթոռ՝ խորտակվելու, այլանդակ ու զազանաբարո մարդիկ ժամանակ են գտնելու իրենց սրտի չար ցանկությունն իրագործելու, անասնաբար փառավորված են զգալու իրենց անօրեն շարժման համար՝ չնայելով և չմտածելով, որ կամայական արարքներով իրագործված անօրինությունն ու չարությունը ոչ թե ավելացնում են իրենց անօրինական արարքների վարձը, այլ միմիայն կատարում են իրենց բնության հինգ զգայարանների ցանկությունը: Բայց նույն բանը շատ ավելի դյուրությամբ ու հեշտությամբ կարելի է կատարել օրենքով և իրեն երկրի երեսին գիտակցել իբրև պատվավոր մարդ՝ հանդերձյալ աշխարհում արժանի հավիտենական կյանքի, քան թե անօրինությամբ իրեն նման դարձնել անբան անասունին՝ նախատինք հարուցելով իր բանական բնության կոչման նկատմամբ, դատապարտելով իրեն և, որպես իր անօրեն գործի վարձ, վճիռ կտրելով իրեն դժոխքի կրակի մեջ:

Ուրեմն մեզ համար որքա՞ն բարություն կարող է բերել և որքա՞ն անհրաժեշտ է մեզ ընդունել օրենք, այն, ինչ հաճելի կլինի մեզ բոլորիս: Նույն օրենքով ու սահմանով մեր կողմից պետք է հրաման արձակվի մեր ազգի ու մեր Տիրոջ հավատարիմ ծառայի ձեռքով, քանզի նա ինքը պիտի լինի ինչպես անմեղ գառ, պահապան սուրը ձեռքին, իսկ նրա առաջ՝ կրակը, որպեսզի այրելով մաքրի օրինախախտներին և սրով կոտորի արդարությանն ընդդիմադիր թշնամուն՝ համաձայն մեր օրենքի, և մեր աշխարհի բոլոր բնակիչներն էլ ընդունեն ու հանձն առնեն իրենց ձեռքի կատարած գործի վարձը՝ թե պատվով կյանք և թե մահ ու նախատինք՝ իրենց անօրեն գործի դիմաց, բայց ոչ թե կամայական իշխան մարդու և ոչ էլ սպանողի հրամանով, այլ միմիայն իր իսկ ձեռքի կտրած վճռով՝ ըստ իր օրենքների, որովհետև դրանցով պիտի բոլոր իշխանները փրկվեն դավաճանությունից,<sup>66</sup> և դրանք ամրափակ պիտի մնան համայն ժողովրդի կրծքի խորքում ու սրտում՝ պահպանվելով կատարյալ սիրով ու հավատարմությամբ:

Գուցե այս [գրքի] ընթերցողը, ով էլ որ նա լինի, չկամենա իր մտքում տարբերել լավն ու վատը, բարին ու չարը և ինքն իրեն հարց տա, թե

օրենքների բարի լինելը հապա ինչու չգիտակցեցին համայն եվրոպայի իշխողները և կամ ազգերի վրա միահեծան թագավորություն ունեցող մյուս իշխողները: Դրա վերաբերյալ կասեմ, որ նրանք մտածել են այդ մասին, ամենքն էլ հարածան գովաբանել են հռոմեացիների օրենքները, որոնց աշխարհի պատմությունը գրողները ցույց են տալիս նրանց երջանիկ ժամանակը, քանի դեռ իրենց իշխանությունը վարում էին ըստ անխախտելի օրենքների՝ ավելի քան վեց հարյուր տարի: Նրանց ազգի մասին կանխագուշակողներն այնտեղ պատմում են Հռոմուլոս և Ռեմուս<sup>67</sup> երկու եղբայրների մասին, որոնք քառասուն հավատարիմ ընկերներով քաջագործության անցան՝ առաջնորդվելով օրենքներով, և այնքան երջանկացան, մինչև որ իրենց օրենքը տեր և թագավոր համարեցին աշխարհի չորս բաժիններից երեքում: Իսկ այնուհետև նրանց մոտ հաստատվեց ժառանգավոր կայսրությունը, որտեղ սկզբում նրանց օրենքը հանձնառու չէր իշխանությունը ժառանգաբար տալու որևէ մեկին, բացի նրանից, որն ընտրությամբ արժանի գտնվեր դրան, սակայն պայմանով, որ վերջվի իշխանությունը նրանից, եթե նրա ձեռքով անօրինություններ կատարվեին: Նրանց մեջ իշխանության ժառանգական սովորությունը մուտք գործելուց հետո նրանք օրավոր թուլացան ու ետ մնացին: Սակայն ընդունիր, որ ներկա ժամանակս եվրոպացիների իշխանության մեջ դեռևս առկա են անխախտելի օրենքով առաջնորդվելու բազում սովորություններ, որոնք նրանց թագավորները չեն համարձակվում փոխել և միշտ հաշվի են առնում իրենց ծերակույտի կարծիքը, այն, ինչ հրապարակվում է նրանց խորհրդարանի ու ծերակույտի կողմից: Ամենքից շատ ավելի [աչքի է ընկնում] մեծբրիտանական ժողովուրդը, որը յուրաքանչյուր անձի ազատությունը և ամեն մեկի՝ իր ունեցվածքին տեր լինելը համարում է թագավորի շնորհը:<sup>68</sup>

Քանի որ իմ շարադրանքը հասավ մինչև այստեղ, երբ հիշատակվեց հռոմեացիների ազգը, անհրաժեշտ են համարում համառոտ խոսքով հիշեցնելով՝ ընթերցողի ուշադրությանը տրամադրել հռոմեացիների մեծագործությունից մի դրվագ, որի համար ամբողջ աշխարհը գովաբանեց նրանց գործերը: Իսկ նրանց գործերը նրանց երջանիկ ժամանակներում այնքան գերազանց ու բազմազան են եղել, որ ոչ ես և ոչ էլ գրչի մարդկանցից որևէ մեկը չի կարող պատմել, բացի նրանց պատմությունն ընթերցելուց: Մեզ չափազանց անհրաժեշտ է ջանալ, եթե հնարավոր է, հռոմեացիների պատմությունը սկզբից մինչև նրանց թուլացումը թարգմանել հայերեն լեզվով, ինչպես իրենց լեզուներով ունեն եվրոպական բոլոր ազգերը, և ով որ հայոց մեջ այդ թարգմանության և բարի ավանդության լույսընծայման պատճառ դառնա, նրա հիշատակը մեր մեջ միշտ հարգանքով կմնա:

Այդ ազգը, որը հիշատակվում է որպես հռոմեացիներ, իրեն նախնի ունեցավ երկու երիտասարդ եղբայրների, որոնցից ավագի անունը Հռոմ էր, իսկ կրտսերինը՝ Յուլիոս:<sup>69</sup> Այս Հռոմն ու Յուլիոսը բնավորությամբ ու հոգով եղան զվարթ և քաջասիրտ, հատկապես խելոք՝ իրենց ամեն մի գործի մեջ: Սրանք իրենց շուրջը հավաքեցին քառասուն տղամարդկանց՝ հոգով, մտքով ու կամքով մման իրենց, անձնվիրաբար միմյանց հետ կապվեցին հավատարիմ սիրով և անխախտելի բարեկամությամբ, անխախտելի օրենքով իրենց մեջ սահման հաստատեցին, որ իրենցից ոչ ոք մեծ և կամ փոքր չհամարվի, այլ լինեն համահավասար եղբայրներ՝ տքնող իրենց ազատության և պատվի համար, և այդ գործն էլ համարեցին արդար՝ երկրի երեսին և այլն: Այդ քառասուն հոգին ասպարեզ դուրս եկան և սկսեցին ավազակային գործունեություն՝ ուրիշների՝ ունեցվածքը կողոպտելով ոչ թե ազահությունից և իրենց հարստության համար, այլ հարկավորության, իրենց կյանքի կարիքների համար ծախսելու նպատակով: Իսկ ավարն էլ, ինչ որ ձեռք էր բերվում, հավասարապես ծախսելով իրենց ընդհանուր կարիքների համար, մնացորդը բարվոք պահպանում և հասցնում էին սեփական տերերին, վերադարձնում նրանց: Նման բարի ավազակությունը նրանց հռչակը տարածեց երկրի երեսին. բազում վաճառականներ և ինչք ու գավառի տերեր, տեսնելով նրանց հաստատուն պայմանադրությունն ու դաշինքը, ուխտն ու խոստումը պահելը, քանզի նրանցից ոչ ոք չէր կարող խախտել իրենց խոստումը, սահմանն ու դաշինքը, կամավոր կերպով մտան այդ հռոմեացիների համայնքի մեջ՝ խոստանալով նրանց վճարել ոմանք՝ հարկ, ոմանք՝ մաքս, ոմանք էլ՝ հաս, նրանցից արժանանալով պահպանության դաշինքի: Եվ նրանց դաշինքն այնքան հաստատուն եղավ, պայմանն՝ այնքան անկասկածելի և պահպանությունն էլ այնքան ապահով, որ բազմիցս հռոմեացի այս կամ այն գորավարը խեղդամահ արվեցին մի հավ հափշտակելու պատճառով, երբեմն էլ պատճառը մի կաղամբ եղավ, որ կողոպուտի առնվեց՝ հակառակ նրանց դաշնադրության ու սահմանի: Դրա համար էլ, նրանց բարի օրենքների ու սահմանների համբավն օրավոր բարձրանալով, աշխարհի չորս կողմից երիտասարդների բազմություն հավաքվեց նրանց շուրջը: Սրանք, իրենց շուրթերով կարգ ու սահմանի քաղցրության ճաշակն առնելով, օրեցօր ամրապնդեցին իրենց օրենքներն ու սահմանները՝ համապատասխան մարդու բնական բնության, մինչև իսկ հաճեցան այնքան կին առևանգել, որքան նրանց բնությունը հարկավոր էր գտնում ամուսնանալու համար: Նաև խելամտորեն իրենց մեջ սահման դրեցին իրենց հետ ամուսնացած կանանց լիուլի ազատություն տալ: Կանանց պատիվն ավելի բարձրացրին, քան բոլոր իշխաններինը: Նրանց կանայք փառավորությամբ էին անցկացնում

իրենց կյանքը բանակի մեջ: Այդ ճանապարհով նրանք իրենց մեջ հասան կանանց առատության, քանզի կանացի բնությունը միշտ էլ փառասեր է: Ամուսնացան, ծնունդ տվեցին որդիների ու դուստրերի և իմաստությամբ սահման կարգեցին իրենց որդիներին ու դուստրերին զարգացնելու համար:

Մանուկների դաստիարակության համար [ընդունված] այդ լավագույն սահմաններից մեկն այսպիսին էր. հինգ տարին լրացած մանուկը, երբ արևը ծագեր, քնի մահճից վեր կենալով՝ պարտավոր էր առնել իր զենքն ու ասպարը, դուրս գալ տնից՝ գոտին մեջքին կապած, ամբողջ տեսքով զինավառված, ինչպես զինվոր՝ պատրաստի պետք է ներկայանար այն տեղը, ուր, իբրև դպրատուն, հռոմեացիների որդիներն էին հավաքվում, և նրանց վարպետը երկու ժամ տևողությամբ մարզում ու կրթում էր նրանց զինվորական գործի մեջ, այնուհետև արծակում իրենց տները հրամենքի<sup>70</sup> համար: Նաև նրանց մեջ ընդունված կարգ է եղել, որ եթե որևէ մանուկ զենք գործածելու մասին իր վարպետից ստացած դասը չի կարողացել սերտել, չի ամրապնդել իր մտքում այն, ինչ ավանդել է նրա վարպետը, և իր նետով չի կարողացել հարվածել վարժության նշանակետին, այդպիսի մանուկների վերաբերյալ նրանք իրենց օրենքի համաձայն անխախտելի վճիռ են արծակել: Բոլոր մանուկները, ավարտելով իրենց գործը, վերադարձել և ուրախությամբ մտել են իրենց տները՝ ընդունելով առավոտյան հրամենքը, իսկ նա, ով չէր կարողացել ավարտել իր պարապմունքը և խոցել նշանակետը, տխուր ու ամոթխած շարունակել է մնալ ուսումնարանում, վարժաիրապարակում, չարչարվելով ու ջանալով այնքան, որ փոխանակ մեկ անգամ խոցելու՝ իր նշանակետը խոցել է երկու անգամ, և ապա նոր թույլ են տվել նրան վերադառնալ տուն ու ստանալ հրամենքը: Իսկ եթե նա չի խոցել նշանակետը, պարտավոր է եղել մինչև վեց ժամ տևողությամբ սոված մնալ վարժաիրապարակում՝ լիներ նա ռամիկ թե նշանավոր մարդու որդի:

Քանի որ նրանք մեծ իմաստությամբ, սահմանով ու անխախտելի օրենքներով անցկացրին իրենց ժամանակները, համայն աշխարհի մարդիկ ցանկացան մտնել նրանց պաշտպանության ներքո և իբրև ժողովուրդ ենթարկվել նրանց: Այդպիսով բազմացան նրանք, դարձան ազգ՝ անվանվելով հռոմեացիներ: Տեր դարձան նահանգների ու գավառների, գործունեություն ծավալեցին, ստեղծեցին ժերակույտի տուն և տան անունը դրեցին Կամպիթոլ<sup>71</sup>, որտեղից, այսինքն՝ ժերակույտի տնից էր ելնում ամեն մի հրաման՝ ըստ օրենքի, և կիրառության մեջ մտցվում պաշտոնատարի ձեռքով, իսկ վերջինիս պաշտոնը շնորհում էին ժերակուտականները: Այդ պաշտոնատարը թեև իշխում էր բոլոր զորքերին ու զինվորական զնդերին, պատերազմ էր մղում և ավարա-

ռություններ կատարում հռոմեացիների համար, բայց այն ժամանակ, երբ նրա կատարած գործերում օրենքին հակառակ որևէ սխալ կամ արարք նկատվեր, այն նույն րոպեին, երբ ծերակույտից հրաման արձակվեր պաշտոնատարին, որ իր իրավունքները զինվորներով ու զենքով հանդերձ հանձնի ուրիշին, որ որոշված կլիներ խորհրդարանի ու ժերակույտի կողմից, և ներկայանա ժերակույտի կանչով, ինչպես սրընթաց կայծակ՝ միանգամից օրենքին համապատասխան կկատարեր ժերակույտի հրամանը:

Նաև օրենք ունեին, որ պաշտոնատարների պաշտոնները շնորհում էին ժամանակավոր, երբեմն՝ որևէ հողագործի: Եթե արժանի լիներ, նա ևս ստանում էր նախարարության պաշտոն և անցնում գործի: Իր գործը կատարում էր մեծ իմաստությամբ, որպեսզի երջանկացներ թե իրեն և թե իր ողջ ազգին, այնքան անկեղծորեն և առանց ընչաքաղցության, կատարյալ նվիրումով ու սիրով, որ երեք տարի ժամանակով վարելով նախարարի ու սպարապետի իր գործը, իր պաշտոնավարության ժամանակը լրանալուց հետո խորհրդարանում ժերակույտի ատյանին էր վերադարձնում իր նախարարական պաշտոնի վերաբերյալ հրովարտակը՝ որոշ դեպքերում շնորհակալության արժանանալով Յոռմի ողջ տնից՝ իր պաշտոնական գործունեությունը հաջողությամբ կատարելու համար, ինքն էլ ձեռնունայն էր մնում հարստությունից, շարունակում էր լինել նույն հողագործը, ինչպես առաջ, առանց ստորացուցիչ համարելու՝ անցնում էր հողագործի իր աշխատանքին՝ տեղիք չտալով բամբասանքի ու ծաղրի:

Արդ, ով ընթերցողներ, ուշադրություն դարձրեք իր գործի ու պաշտոնի հանդեպ ունեցած հավատարմությանը. մի ժամանակ հրամայեց երկու հարյուր քառասուն հազարանոց զորքին, վճարեց նրանց և ամբողջ բանակի ռոճիկը, կարիքների ու անհրաժեշտության ծախսը և երբեք մտքով չանցկացրեց հինգ լումա ավելի վերցնել այն ռոճիկից, որ ժերակույտի կողմից սահմանված էր իր համար. ամեն ինչ, ինչ որ ստացավ իր իշխանության ժամանակ, սրտաբաց զինվորի առատաձեռնությամբ ծախսեց, ինչպես պատշաճում էր սպարապետի իր պաշտոնին: Քանի դեռ սպարապետ էր, իր համակ գործությամբ նմանվեց ու եղավ քաջ, խոնարհ ու ամենաբարի, ինչպես վայել էր նրա պատվին ու պաշտոնին: Իր բարձր պաշտոնավարության ընթացքն ավարտելուց հետո չտխրեց և ոչ էլ անարգանք համարեց անցնելու հողագործի ծառայության ու պարտականության: Քիչ սպարապետների մասին չէ, որ շատերն ականատեսի հանգամանքով վկայեցին, թե խելամտորեն կառավարելու, հաղթության, քաջության ու բարի գործունեության համար նրանք հաղթահանդեսների ժամանակ քայլում էին հաղթականորեն՝ շրջապատված հռոմեական ժերակուտականներով: Բայց և տեսել են,

թե ինչպես միևնույն մարդը, իր սպարապետության ընթացքն ավարտելուց հետո, գութանը ձեռքին, իր եզներին է հրամայել, գութանը հողի սիրտը խրել՝<sup>72</sup> եռանդուն կերպով վարելով այնքան զվարթ սրտով, որքան սպարապետ ժամանակն էր՝ սուրը ձեռքին:

Այս և նման անգնահատելի ու բարի բազում գործերին լիովին սկիզբ դրեց, իրականացրեց ու կատարման հասցրեց միմիայն նրանց բարի օրենքը, օրենք, որը նրանք պահեցին անխախտելի, բարձրացան, բազմացան և պատվի արժանացան գահակալներից ու մեծամեծ ազգերից, մինչև իսկ ողջ աշխարհի մարդիկ ցանկացան ժողովուրդ դառնալ նրանց, և դա շնորհիվ միմիայն նրանց օրենքի, որը համապատասխանում էր մարդու բնական բնությանը, այնպես որ Հռոմում ոչ մի մարդ ոչ իր կամքով, արյամբ և բնությամբ և կամ ոչ էլ իր գործությամբ ու իշխանությամբ իրավունք չունեին ասելու, անելու և հարկադրելու, եթե ոչ միայն ըստ օրենքի: Այդ օրենքը կյանքի կոչվեց բոլոր հռոմեացիների սրտով, բերանով ու ձեռքով, այնպես որ ամեն ինչ իրենք ստեղծեցին ու իրենք հաստատեցին, և յուրաքանչյուր ոք ու ամենքը միասին հավանեցին ու հնազանդվեցին նրան, իսկ դրա արդյունքը՝ թե պատիվ, թե պատիժ, թե վարձ, թե տուգանք և այլն, հավասարապես վերաբերում էր բոլորին: Իրենք իրենց նկատմամբ վճիռ հատեցին ըստ օրենքի, կարիքը չունեցան ոչ իշխանի շնորհի, ոչ կարողություն ունեցողների օգնության, ոչ առատասիրտ մարդու ողորմածության և այլն, եթե ոչ լիովին հարկ զգացին, գոհացան ու բավարարվեցին այն օրենքներով, որոնք իրենց [մարդկային] բնության հանդարտ ժամանակը խոնարհ ու մաքուր սրտով իրենց մեջ ընտրեցին ու ընդունեցին: Եվ նրանց միջից վերացան նախանձը, սնափառությունը, մեծամտությունը, գոռոզությունը, նեղսրտությունը և այլն, որովհետև այն ամենը, ինչ եկել կամ գալու էր իրենց վրա, իրենք էին որոշել և հանձն առել, որ կայանա ըստ իրենց ձեռքի արարքի:

Այդպես երկար ժամանակ շարունակեցին ապրել երջանիկ՝ բազմաթիվ բարի ավանդներ թողնելով աշխարհում, ինչպես որ այժմ մենք ենք ցանկանում և ամբողջ ուժով փափագում, որ հռոմեացիների հոգու զորությունը (բացի հեթանոսական հավատից) իջնի հայ հոգու վրա, ու եթե մենք կարողանանք ձեռք բերել հռոմեացիների խորհուրդներից ու գործերից իմաստության մի մասնիկ, որ մեզ համար հաստատենք օրենքներ, ինչպես հռոմեացիք հաստատեցին՝ իրենց համար, ես չեմ երկբայում, որ մենք կգտնենք նույնպիսի երջանկություն, ինչպիսին գտան հռոմեացիք:

Դա մեծ իրադարձություն էր, հաստատուն վկայություն և ակնառու օրինակ հռոմեացիների գործունեության մեջ այն մասին, որ քանի դեռ սիրով ու հավատարմությամբ արիացած ու գոտեպնդված՝ նրանք ան-

շեղ ու հավատարիմ մնացին իրենց օրենքներին, աննշան վիճակից աճեցին, բազմացան և իրենց օրենքների շնորհիվ երջանկացան, գովաբանության արժանացան համայն աշխարհից, և սարսափը նրանց քաջությունից մտավ միահեծան իշխանների ու կամայականորեն գործողների սիրտը, մինչև որ սրանք խոնարհվեցին, հնազանդվեցին և հարկատու դարձան նրանց: Ինչպես որ նրանց սկիզբը գողությամբ և ավազակությամբ եղավ, այդպես էլ հետո, երբ ոտքի կանգնեցին և իրենց մեջ բարի սահմաններ հաստատեցին, դարձան աշխարհի լույսը, այնպես որ շատերը նրանց արդարությունից սովորեցին բարի գործեր ու շահավետ արհեստներ: Նրանց միջից դուրս եկան հատկապես բազմաթիվ առաքինի մարդիկ: Թեպետ նրանց աստվածաշատությունը հեթանոսական էր, բայց նրանք մեծապես զարդարվեցին բնական արդարությամբ, մինչև որ ըստ աշխարհային սովորության և մարդու բնության՝ հղիացան, պարարտացան ու հարստացան, թողին իրենց բանական հոգու զորության միտքն ու խորհուրդը և հետևեցին սնոտի աշխարհի անցավոր փառքին, հանդուրժեցին և ամենաբարի, առաքինի ու գործունյա կայսրերի պատճառով իրենց մեջ մուծեցին կայսրության ժառանգականություն: Հռոմի խորհրդարանի ծերակուտականները, իբր թե երախտագետ լինելու, իրենց երախտավորների երախտիքը ճանաչելու և ամենաբարի կայսրերի որդիներին կայսրության փառքի ժառանգությունից չզրկելու համար, թույլ տվեցին, որ կայսեր պաշտոնը մտնի ժառանգականության կարգը: Դրանով նրանց լույսի մեջ մուտք գործեց մի մեծ խավար, նրանց բարության մեջ՝ չարը, նրանց միաբանության մեջ՝ ճեղքվածք, նրանց համահավասարության մեջ՝ քարածոություն, դար ու փոս, այսինքն՝ վերին և ստորին: Այնժամ մեկն սկսեց փառավորվել կայսրությամբ, մյուսը՝ ծերակուտականի աստիճանով և այլն, մինչև որ գրգռեցին իրենց համահավասար միաբանությունը, բացին օրենքի փականքը, որով այն հիմքից ամրափակված էր և զսպում էր ամեն մի անհատի սրտի բնական ցանկությունները, թույլ տվեցին, որ կայսեր բնությունը վարվի այնպես, ինչպես իր կամքն է ուզում<sup>73</sup>: Դրանով ամբարշտությունը մտավ նրանց մեջ, այնքան որ նրանց կայսրերից մեկը, որի անունը Ներոն էր, իր սանձարձակ հրամանով բացեց իր մոր և ծնողի որովայնը, որպեսզի տեսնի երեխա ժամանակվա իր բնակության տեղը, և դրանով վրա հասավ հռոմեացիների կայսր Ներոնի մոր կյանքի վախճանը:

Ուրեմն ուշադրություն դարձրու ժամանակի, բանի ու գործի տարբերությանը. քանի դեռ այդ հռոմեացիները կախում ունեին օրենքից, ոչ ոք չէր համարձակվում խոժոռ դեմքով նայել կնոջ երեսին, ուր մնաց թե հակառակվել, ընդդիմանալ, նեղություն տալ նրան և այլն: Բան է, եթե գտնվեր մեկը, որ բարկությամբ դիմեր որևէ կնոջ, ապա նրան ըստ

օրենքի կպատժեին: Իսկ ա՞յժմ. միահեծան իշխանությամբ ամենաբարի օրենքներից ետ մնալու պատճառով այդքան տարբերություն առաջացավ՝ հակառակ արդար օրենքների, ազատության ու խաղաղության, մինչև իսկ Յոննուս կայսեր մոր որովայնը հերձվեց և դրա համար ամբաստանող<sup>74</sup> չգտնվեց:

Յետևապես հենց միայն այդ անցքը կարող է ձեզ համար հիմք դառնալ հանդուժելու, որ ոչ մեզ մոտ և ոչ էլ մեր աշխարհում թող ոչ լինի և ոչ էլ հանդես գա որևէ մեկը, ով իր արարքներով ինքնազուլխ ու կամայական մարդ լինելով՝ չպատժվի ըստ օրենքի, և թող մեր օրենքները լինեն մեր տերն ու թագավորը, մեր օրենքներից դուրս ուրիշ ոչ ոքի չընդունենք գերադաս, բացի միայն Արարիչ Աստուծուց, փոխ տանք և հատուցում ընդունենք ոչ ավելի և ոչ պակաս, քան այդ մեզ հրամայում է մեր օրենքը, այն, ինչ որ մենք ենք ընտրել, ինչով մենք մեր ձեռքի կատարած գործերի վերաբերյալ վճիռ ենք կայացրել: Թող ոչ ոք չծիծաղի մեր պատվի ու պատժի վրա, թե ինքն է մեզ հասցրել չարը կամ բարին: Քավ լիցի, թող ազատ մնանք ամենքի շնորհավորանքներից ու նախատիքներից. ինչին որ արժանի է մեր ձեռքով կատարվածը, թող այն էլ ընդունենք իբրև վարձ՝ համաձայն օրենքի, ինչին որ մենք արժանի դարձրինք մեզ, թող այն էլ ի կատար ածենք մեր նկատմամբ՝ մեր սպասավորի ձեռքով ու մեր օրենքի հրամանով, թող հանձն առնենք հանգիստ հոգով և այլն:

Քանի որ մեր խոսքը հասավ մինչև Յոննի կայսր չար Ներոնին, անհրաժեշտ եմ համարում պատմել նրա մասին եղած գրույցներից մեկը, այն է՝ ոմն պառավ կին մտնում է մի վարպետ փիլիսոփա հոր մոտ, գանգատվելով Ներոնի չարագործությունից՝ նրան պատմում է կայսր Ներոնի՝ իր բնական տեղը տեսնելու նպատակով դշխուհի մոր որովայնը հերձելու մասին: Խոր տրտմությամբ ներկայացնում է Ներոնի չարագործությունը: Այս վարպետը<sup>75</sup>, պառավի ամբողջ պատմությունը համբերությամբ լսելուց հետո, հանգիստ պատասխանում է պառավին, ինչպես իր բնական բնությունն էր թելադրում: Ասում է. «Ինձ այնպես է թվում, որ Ներոնին իր մոր նկատմամբ գործած արարքով՝ նրա որովայնը հերձելով, ավելի բարի կարող ենք համարել, քան թե Ներոնի մոր չար գործը, որն աշխարհում ծնունդ տվեց Ներոնին՝ իբրև Յոննի կայսեր. քանզի եթե Ներոնը պատռեց իր մոր որովայնը, և այդ արարքի կատարումը միայն իր մոր կյանքի վախճանը եղավ այս աշխարհում, ապա նրա ամենաչար մայրը, նրան աշխարհ բերելով իբրև մարդ, ապականեց իր որդի Ներոնի կյանքն ու պատիվը՝ ծնելով այնպիսի չարագույն որդի, որի անձը, կյանքը, հոգին և մարմինը պղծել տվեց աշխարհում՝ նրա հոգու համար գեհեճում նախապատրաստելով մշտնջենական անշեջ հուր՝ իբրև աշխարհում նախատիքը հռոմեացի-

ների»): Մեր բնական բնության և ժամանակի սովորությունների փոփոխականության պատճառով այդքան ծայրահեղ զանազանություն ենք նկատում. նույն հռոմեացիները, իրենց կայսրերի ու ծերակույտի ժամանակ անխախտելի օրենքներով ղեկավարվելով, իրենց օրենքի մեջ մի հողված գրանցեցին՝ բավարարել հղի կանանց սրտի ամեն մի ցանկություն, որպեսզի չլինի թե նրանց սրտի փափագը [չկատարվելու] պատճառով հանկարծ երեխա վիժեն, իսկ դրան հակառակ Յոննի նույն կայսր Ներոնը իր միահեծան տերության ժամանակ ոչ միայն օրենքից դուրս, այլև իր գազանաբարո ցանկությամբ, նաև բոլոր կենդանիների բնությանը հակառակ արտառոց արարքով պատռեց մոր որովայնը՝ կատարելով իր սրտի և սամձարծակ կամքի գարշ ցանկությունը:

Որովհետև մեր բնությունը երբեմն ձգտում է բարի գործի, երբեմն էլ՝ չար գործերի, ուրեմն մեզ անհրաժեշտ է, չափազանց անհրաժեշտ, որ մեր բնությանը թույլ չտանք, ոչ էլ որևէ մեկի ձեռքին զորություն տանք, որ կամայական մտադրությամբ և անձնիշխան գործունեությամբ իշխի մեզ վրա, եթե ոչ մեր բարի օրենքներով, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա կատարել ամենայն բարիք և ոչ մի չար բան: Քանզի այդպես պիտի փրկենք մեզ ծնող մայրերի որովայնը հերձվելուց և վերստին արյունահեղությունից նրանց, որոնց արյունն են հեղել անքանակ չարագործությամբ, ու նրանով է շաղախված հողը: Մեր տղամարդկանց ու կանանց փրկենք նախատիքից, մեր դուստրերին՝ լլկումից, մեր ազարակները՝ կողոպտումից, մեր ստացվածքը՝ ավարառությունից, մեր ազատությունը՝ ստրկությունից, մեր հոգին ու մարմինը՝ խղճմտանքին դեմ գնալուց և հանդերձյալ աշխարհում՝ պատժից և այլն:

Նաև ընթերցողիդ խնդրում եմ ներել ինձ, որ մի վկայություն էլ բերեմ՝ հաստատելու համար իմ միտքը բարի օրենքների գերազանցության մասին: Թեպետ դրան վերաբերող շատ վկայություններ ունեմ, բայց չեմ ուզում երկարացնել իմ խոսքը: Ինչպես մեր՝ քրիստոնյաներիս սովորությունն է երկու կամ երեք վկաներով հաստատել ամեն բան<sup>76</sup>, նույն կերպ էլ դու, ընթերցող, սրանով խորամուխ եղիր մեր փոփոխական բնության արարքների զանազանության մեջ: Յայոց Աբգար թագավորը, ըստ իր մտադրության բարության, իր հոգու և մարմնի փրկության ու մխիթարության համար աշխարհում նախընտրեց փրկագործությունը, իսկ հանդերձյալ ժամանակի համար՝ հավիտենական կյանքը, առանց աչքով տեսնելու հավատաց մեր Փրկիչ, ամենաբարի Յիսուս Քրիստոս Նազովրեցուն, նրա աշակերտի ձեռքով ընտանիքի, իշխանների ու անթիվ ժողովրդի հետ մկրտվեց Քրիստոսի հավատով և հոգով ու մարմնով արժանացավ շնորհների: Սակայն նրա քրոջ որդին՝

հայոց Սանատրուկ թագավորը, սպանեց Քրիստոսի սուրբ առաքյալ Թադեոսին՝ աստվածանվեր այն նույն մարդուն, որ մկրտեց և բժշկեց նրա քեռուն՝ ոչ միայն հավիտենական կյանքով լուսավորելով քեռու հոգին, այլև փրկելով բորոտության ախտից:<sup>77</sup> Արդ, մտքով խորամուխ եղիր նրա երախտիքը փոխհատուցելու մեջ և տես մեր բնության ներգործության այդքան զանազանությունը ոչ մեկդարյա և ոչ էլ ավելի հեռավոր ժամանակամիջոցի ընթացքում, այլ մոտավարապես հորից մինչև որդի ժամանակի մեջ. հայրը հավատաց, դավանեց ու բժշկության շնորհի արժանացավ, քրոջ որդին զայրույթով սպանեց քեռու բժշկողին և նրա աշխարհին փրկություն տվողին, դատապարտեց իրեն և իր ժողովրդին մատնեց մեղսապարտության: Քանզի մեր բնությունն իր խորհուրդների մեջ այնքան փոփոխական է և այնքան անհաստատ, ինչպես տեսանք՝ զանազան ու հակառակ են միմյանց կամքը Աբգարոս հոր և կամքը քեռորդի Սանատրուկի, ինչպես որ լույսը՝ խավարին:

Հետևապես մեզ հարկավոր է ոչ ուտել, ոչ խմել և ոչ էլ քնել, այլ նախ և առաջ մեր մեջ ընտրել բարի օրենքներ և մեր բնությունը անխախտելի շղթայով ու կապանքներով հնազանդեցնել մեր օրենքներին, այնպես որ երբեք ոչ մի մարդ ազատ չլինի գործելու չար և կամայական արարքներ, որ եթե չար արարքի նշույլ ի հայտ գա որևէ մեկի կողմից, ով էլ որ նա լինի՝ իսկույն պատժվի ըստ մեր օրենքի, որպեսզի նրանով միշտ երջանիկ խաղաղության մեջ մնանք երկրի վրա և երկնքում:

Ես չեմ տարակուսում, թե երկրի երեսին գտնվի որևէ մարդ, որ ազատ լինի իր կյանքի ընթացքում՝ մանկությունից մինչև ծերություն իրեն հանդիպած զանազան փոփոխություններից, որոնք արտահայտվում են իր բնության մեջ, ատած չլինի իր սիրելիին, գարշաճ չզգացած՝ իր ցանկության նկատմամբ, չզղջացած՝ իր արարմունքների և չփոշմանած՝ իր սխալի համար և այլն, ինչպիսին եղել են՝ քո միտքը գցողս, և դու՝ քո մտքի մեջ ընկալող ընթերցողդ:

Ուրեմն ի՞նչ պետք է անել այսքան զազանաբարո մեր բնությանը, որ իր մեջ գրկած ունի մեր հոգու ամենապատվական բանական զորությունը և մեր մարմնի բոլոր զգայարաններով, գլխից սկսած մինչև ոտները, բնական բնությամբ ձգտում է այս աշխարհի սնուտի սովորությանը: Իսկ մեր մարմնի այդ անդամների շարժման պատճառը, որը բորբոքում և մեր միտքը մղում է գործողության, չորս բաղադրիչներն են, այսինքն՝ մաղձը, բլղամը, արյունը և քամին:<sup>78</sup> Սրանք բոլորը իրենց զորությունը հնչեցնում են ծայրագույն չորս տարրերի միջոցով: Ինչպես որ նրանք երբեմն ելնում հարձակվում են միմյանց վրա՝ հողմով, մրրիկով, կայծակով ու փայլակով, անհաշիվ անձրևով ու կարկուտով, որով առանձին դեպքերում պատճառ են դառնում իրենց տարրերից

կազմված առարկաների, այսինքն՝ աշխարհի երկրաշարժի, լեռների զահավիժման, բնակավայրերի կործանման, այդպես էլ մասնավոր աշխարհը, այսինքն՝ մարդու մեր բնությունն է: Մերթ արյան ջերմությունից, մերթ մաղձի թեթությունից, մերթ էլ բլղամի սառնությունից և այլն ժամանակ առ ժամանակ մեր կյանքի ընթացքում մեր բնությունը երկրի երեսին՝ փոխարկվում է տղայությունից երիտասարդության, երիտասարդությունից՝ կատարյալ հասակի, իսկ նրանից էլ ծերության և այլն:

Նաև դրանից ավելի հաճախ ժամանակի բերումով մեր բնությունը շարժվում, օրավուր փոփոխվում և մեզ անվերջ չարչարանքի մեջ է պահում կերակուրների, սրտի ցանկության, թշվառությունների, աղքատության կամ հպարտության ու հարստության և այլ պատճառներով. ես տուն եմ շինում, իմ որդին քանդում է՝ տեղը տնկելով այգի, իմ թոռը քանդում և տեղը շինում է շտեմարան. մեկը սիրում և իր շուրջն է հավաքում բարեկամներ, մյուսը նախատում ու ցրում է. մեկը գթում, ողորմում ու դարմանում է, մյուսը՝ բարկանալով խոցում ու վիրավորում. մեկը ջանք է թափում և բարեկամին միջնորդ դարձնում՝ ձեռք բերելու համար երիվար, մյուսը նույն երիվարը ձրի բաշխում է ուրիշներին. մեկն իրեն պահում է պարկեշտության մեջ և դառնում կրոնավոր, մյուսը՝ դեղ ընդունում, որ ստամոքսին զորություն տա հաճախ ուտելու: Դրանց նման ուրիշ բազում փոփոխություններ էլ են դրսևորվում մեր բնության մեջ, և դա այնքան բնական բան է, որ այս [գրքի] բոլոր ընթերցողներդ ասածիս մասին լավ ծանոթություն ու վկայություն ունեք՝ յուրաքանչյուրդ ձեր անձի ու բնության օրինակով:

Ուրեմն ինչպե՞ս վարվենք այդպիսի անամոթ բնության հետ, ինչպե՞ս կարող ենք բոլորս կառավարվել այդ նույն բնության կողմից, որն ինքնին միևնույն փոփոխական բնությո՞ւն ունի: Այն, ինչ այսօր գեղեցիկ է երևում, վաղը թվում է տգեղ, այն ինչ քաղցած ժամանակ քաղցր է երևում, հազենալուց հետո թվում է անհամ: Ուրեմն մեկը, որ մեր բնության կողմից ընկալվում է որպես բարի խորհուրդներին հավատարիմ մնացող, և նրան իրավունք ես տալիս, որ դատի մեղավորիս, բայց ինքն էլ մեղսունակ է, ինչպես ես, ինչպես դու և ինչպես հանցավորը, հապա ինչպես կարող է ինչ-որ մեկին դատել իրավամբ ու արդարությամբ: Ընդհակառակը, նույն դատավորը, անձնիշխանության կամ իր մեղքի պատճառով, ազատ կարծակի իր հանցագործներին, որով դատավորն ու դատախազը միասին կզլորվեն, ըստ Տիրոջ ասած խոսքի, թե՝ Կույրը կույրին առաջնորդելով՝ երկուսն էլ կզլորվեն խորխորատը:<sup>79</sup>

Ուրեմն խելամիտ եղեք, ընթերցողներ, և լսեք իմ խոսքերը: Քանզի ոչ միայն ասում եմ, նաև ձեր մտքում հաստատում եմ, որ մեզ համար չափազանց ամոթալի է, որ մեր մարմնի մեջ ունենալով բանական հո-



գու բարձրագույն զորություն և երկրի վրա ազատ կյանք, այնպես որ ոչ ոք արեգակի ներքո չի կարող մեզմից վերցնել մեր հոգու զորությունը և ոչ էլ կյանքով ու վախճանով իշխել մեր բանականության վրա, բացի մեր Տիրոջից ու Արարչից, - ահա մենք, ունենալով հոգու զորություն՝ մեր ձեռքի գործերով պահելու մեր բնության պատիվը, և թագավորելով անբան կենդանիների վրա, մեզ համար մեր բնական բնության վրա թագավոր ընտրենք ոչ թե իշխելու միմյանց, այլ սիրելու մեր ընկերներին և հնազանդվելու մեր ամենաբարի օրենքներին, որ մեզ համար կընտրենք մենք իբրև բուրրովին բարի [օրենքներ] և կընդունենք մեր կյանքը վարել ըստ մեր սահմանի ու օրենքի:

Միայն այդ օրենքը կլինի մեզ թագավոր, որ կարգելի մեր ընթացքը չար գործերից՝ մեր պատժող օրենքների միջոցով, և լայնարձակորեն թույլ կտա մեր բնությանը գործելու բարին՝ խոստանալով ավելին, քան մեր անդամների կարողությունը և հոգու զորությունն է: Դրանով կասասանվի մեր փոփոխական բնության չարագործությունը, և օրենքով կվարենք մեր կյանքը երկրի երեսին, պատվով ու ազատությամբ և ամենայն դյուրությամբ՝ մեզ գանձեր գանձելով հավիտենական կյանքի համար՝ հանդերձյալ աշխարհում: Դրանով կարժանանանք որդեգրության մեր Հայր Արարչից, որի ձեռքի ստեղծածն ենք: Քանզի մեզ վրա պարտականություն կա, որ մեր ձեռքի գործն արժանի դառնա մեր Արարչի պատվին:

Բայց մեր մտքում այդ ամենին ձգտելով և մեր հոգու զորությամբ ճանաչելով, երկրի երեսին բազում օրինակներ տեսնելով ուրիշ ազատ ազգերի մեջ, [գիտակցեցինք], որ դյուրին է ու հնարավոր զսպել մեր այս փոփոխական բնությունը, որպեսզի կարողանանք մեզ ու մեր պատվական ազգը երջանիկ դարձնել, արժանի լինենք մեր Արարիչ հոր որդեգրությանը, - բայց չարեցինք: Եվ արդ, եթե դեռ էլի չենք կամենում կատարել, ուրեմն մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել այս անոթանքից, երբ մեր երջանկության հնարն ու ճարը գիտենք, բայց չենք անում, և կամ ինչպե՞ս կարող ենք փրկվել բյուր գանահարության բաժակն ըմպելուց, որում համոզված էինք, և, բնականաբար, ամբողջ արդարությունն էլ դա է պահանջում. չէ՞ որ եթե ծառան, իմանալով իր տիրոջ կանքը՝ չի կատարում, բազում ծեծ է ուտում:

Թեպետ ինձ այնպես է թվում, որ անցյալում, երկար ժամանակների ընթացքում, շարունակ մնացինք անկարգ վարքով՝ ծառայաբար հնազանդվելով միահեծան հրամայողներին, ոչ միայն անքանակ ծեծ կերանք, նաև գերվեցինք, կողոպտվեցինք, լլկվեցինք ու թշվառացանք, մինչև որ ցրվեցինք, ցանուցիր եղանք երկրի երեսին, թողնելով համայն աշխարհի գորովագութ մորը և մեր ծնողին՝ Նախիջևան աշխարհը, հազիվ բնակության տեղ գտանք օտար աշխարհում: Բայց այն տեղը,

որ գտանք, արժանի չէ, որ անգամ մեր աշխարհի արջերը ցանկանան բնակվել՝ թե՛ աղտաղտուկ օդի, արևի ջերմության ու տապի, սննդի պակասության, մարմնի կազմվածքի տկարանալու և բազում այլ պատճառներով: Նաև մեր պանդուխտների մեջ շատերի հետ պատահեց, որ օտար աշխարհում գերեզմանի տեղ չգտան իրենց ննջեցյալի դիակը թաղելու:

Այդքան ծեծ կերանք մենք այն պատճառով, որ իմանալով մեր ազատությունը պահպանելու հնարը՝ չպահպանեցինք, մեզ համար սովորություն դարձրինք ամեն տեսակ անկարգ գործերն ու արաքները և մեր բերանով իսկ մենք մեզ դատապարտելով՝ ասացինք, թե այդ ամենը, որ եկավ մեզ վրա, մեր մեղքերի համար էր: Հիրավի, մեր բոլոր պակասություններն ու նեղությունները՝ անտերությունը, թշվառությունը, պանդխտությունը, գերությունը, աղքատությունը և այլն, բոլորը գալիս են մեր մեղքերի պատճառով: Բայց մեզ պետք է ճանաչել, թե որ մեղքն է, որ ըստ մեր այժմյան կարծիքի չենք համարում ծայրահեղ մեղք: Ասենք՝ քաղցածր կերավ և կշտացավ, մերկը հագնվեց, գեղեցիկը սիրեց և այլն. մարդկային բնություն ունեցող ոչ ոք չի կարող ինքն իրեն զսպել այդպիսի բնական մեղքերից: Ոչ ուտողը, ոչ հագնվողը և ոչ էլ ամուսնացողը չեն կարող զրկվել Տիրոջ բարիքներից և կորցնել իրենց ազատության պատիվը:

Մեր բոլոր մեղքերից ամենածայրահեղ ու սաստկագույն մեղքը ծուլությունն է, որով և գոյանում են համայն մահացու մեղքերը:<sup>60</sup> Մեր մարմնական կազմվածքի առողջ ժամանակը, այսինքն առանց նախանձի ու անկողմնակալության, առանց անձնական հատուկ շահավետության միտումի, սրտի ողջ անաչառությամբ, բնական հոգու զորության ընտրությամբ հանուն ընդհանուրի բարօրության և իբրև բարի դեղ մեր փոփոխական բնության ցավի համար՝ մենք չջանացինք, չընտրեցինք ու չհաստատեցինք կարգեր ու օրենքներ, որոնք մեր կյանքի համար ոչ թե դժվարություն, նեղություն ու պակասություն են այս աշխարհում, ոչ էլ վնաս են մեր հոգուն՝ հանդերձյալ կյանքում, եթե ոչ հանգստավետ, քաղցրահամ ու հաճելի են մեզ ամենքիս՝ համեմատության [օրինակ դարձնելու] համար մեր Հայոց աշխարհն ու ազգը իբրև գեղեցկություն՝ տեսնողների համար, սրբություն՝ ընդհանուրին, իշխանական շուք ու հովանավորություն, մեղմ ու հանգստավետ կյանք՝ որպես թե մանուկն իր մոր որովայնում ապրելիս: Այդպես պիտի վերանա մեզմից ամոթանքը:

Թեպետ ինձ համար տխուր է հիշեցնել անօրեններից մեր ազգին հասցված գարշելի նախատիմքը, որ հարածամ կրում ենք մեր ուսերին, չեն ուզում հիշեցնել այն ամենը, ինչ ես գիտեմ, եթե ոչ միայն ընթերցողի միտքն են ուզում գցել, որ գուցե դու հանդիպես անօրենների

հովանու տակ բնակվող մարդու, վերահասու եղիր, թե ինչ բառով են կանչում հայոց ազգին՝ փոխանակ անհաղթելի թորգոնացիների անվան:<sup>81</sup> Ու մենք՝ հայերս, քաջ Հայկի որդիներս, Նախիջևան աշխարհի օրհնյալ ծնունդներս, ջրհեղեղի խեղդամահից ընդհանուր մարդկային բնության և ընդհանուր աշխարհի փրկության պատճառ դարձածներս, փոխանակ հատկապես պատվի արժանանալու, հատկապես մարդկության համար՝ նախատինք և ժողովուրդների համար արհամարհանք եղանք՝ մեր անկարգության պատճառով:

Ուրեմն պատշաճ չէ, որ հավիտյան շարունակենք մնալ այսպես, քանզի մարդկային միևնույն բնությունն ունենք, ինչպես այժմյան բոլոր երջանիկ ազգերը արեգակի ներքո, նաև մեզ վրա ենք կրում Տիրոջ հատուկ շնորհն ու ողորմությունը. չէ որ մեզ տվեց Աշխարհն Արարատյան՝ պարարտ ամեն տեսակ գոյացություններով՝ թե մարդու ծնունդով, թե անասունով, թե պտղով, ցորենով, գինով, ձեթով, բոլոր տեսակի սողուններով ու թռչուններով, առավելագույն, քան աշխարհի բոլոր կողմերը: Մեզ համար չկա ուրիշ պատճառ կամ թերություն, որ մեզ նախատինք ու անոթ բերի, եթե ոչ մեր անկարգության մեկ ու միայնակ պատճառը, որ գոյանում է մեր ծուլությունից: Թեպետ ես չեմ երդվում, որովհետև [երգվելը] մեղք է,<sup>82</sup> բայց իմ մտքում համոզված եմ, որ մինչև չհաստատվի կարգ ու օրենք, կարգ ու կանոն, ծուլությունը մեզմից չի վերանա և թույլ չի տա փայլելու մեր ազգին: Եվ մեզանում ծնունդ առած ամեն մեծարժեք բանի գեղեցկությունը չի երևա, մինչև չստեղծվի օրենք ու սահման:

Խորամիտ եղիր, ընթերցող. քո ոսկին,<sup>83</sup> եթե գաղափար չունես հորինելու գեղեցկատես ու փայլվիլուն աշտանակներ, քեզ համար կա ու կմնա նման երկաթի խոփի, որով վարում ես հողը: Եվ ամեն թանկագին բան գուցե այդպես ոչինչ թվա քո մտքում: Մի՞թե մեր Արարիչն Աստված ամեն օր արարչագործուն է և կամ մեկին իմաստուն է ստեղծել, մյուսին՝ տգետ: Քավ լիցի: Մարդկային բնությունները երկրի երեսին բնականից համահավասար են ծնվում, բայց ով որ հաղորդակցվում է կրթությանը, իմաստուն վարպետից<sup>84</sup> արվեստներ և գիտություններ է սովորում, վերջինս նրան հաղորդում է ուսում, նրա բնությունը դարձնում իմաստուն, ծանոթացնում ու ճանաչել է տալիս բարին, չարը, արժանավորն ու անարժանը և երկրի վրա նրանից ստեղծում պանծալի աշտանակ: Եվ դա միևնույն բնությունն է, որը ես պահեցի անկարգությանը ու անօրինականությանը, ինչպես այն ոսկին, որ երկաթի պես խոր թաղում ես հողի մեջ:<sup>85</sup> Իսկ հակառակը բոլոր բարությունների պատճառ բարի կարգադրությունն է, այն, ինչ դու տեսնելու ես գրքուկիս մեջ, կանոնների փոքր շարքում: Համբերությամբ շարադրված նրա յուրաքանչյուր հոդվածն ընթերցելով՝ փորձառության համար օրենք-

ների այդ ամբողջ հատորը նախ դիր քո ուսին և համարիր, թե այդ ամենը կատարվելու է քո նկատմամբ, ամեն ինչ, որ սրա մեջ գրանցված է իբրև վարձ քո ձեռքերի արարքների, քեզ է հատուցվելու: Այնժամ քեզ հայտնի կդառնա, որ այն ամենը, ինչ այդ կանոններում կգտնես, ամբողջովին բարի կարող է լինել և քո կամքին՝ հաճելի, ըստ Տիրոջ ասած խոսքի, թե ինչ որ քեզ չար է թվում, քո ընկերոջ նկատմամբ մի՛ անիր:<sup>86</sup> Եթե դու բնությամբ բարի ես՝ օրենքն էլ քեզ բարի կթվա, և դու կարող ես հավատալ, որ բոլոր բարի մարդկանց էլ թվալու է բարի:

Նաև ինձ անհրաժեշտ է ասել հետևյալը, որ այստեղ գրանցված նույն կանոնները երբեմն բոլորովին չար են թվում չարագործ մարդուն, նրանց, որոնք անառակությամբ, գոռոզությամբ ու ամբարտավանությամբ բազմիցս արդար արյուն են թափել՝ իրենք խույս տալով և փրկվելով մահապատժից: Այդպիսի չար ու վատթար մարդկանց շատ ծանր է գալիս հատուցում տալու ակն ընդ ական և ատամն ընդ ատամն: Իսկ եթե մեր ձեռքի բարի կամ չար արարքները չեն փոխհատուցվում, ապա երկիրը կշաղախվի անօրինությամբ, քայլ առ քայլ կկործանվեն բնակավայրերը, և արդյունքը կլինի այն վիճակը, որի պայմաններում ներկայումս գտնվում ենք մենք: Ուրեմն նրանք, ովքեր ազնվագույն և բարեմիտ մարդիկ են, մինչև հույս չունենան ստանալու իրենց ձեռքով կատարած գործերի պտուղը, ինչպես՝ս կարող են գործունեություն ծավալել, աշխատել և գործել բարի: Նույն կերպ էլ եթե չարագործ որևէ մեկը երկյուղ չունի օրենքից՝ իր չարությամբ ենթարկվելու պատժի, ինչպես՝ս կարող է զսպել իր զգայարանները և ետ կանգնել մեղսագործությունից:

Ինչպես վերևում ասացինք, թե մեր բնությունը շարունակ անընթեռնելի ու փոփոխական է, ուրեմն հարկավոր է, միշտ հարկավոր է մեզ ունենալ կանոններ, ենթարկվել օրենքներին և այս սնոտի աշխարհում այս փոփոխական ու շարժուն բնությամբ մեր կյանքը վարել ըստ այն կերպ ու կանոնի, որ կընտրենք մենք մեր հոգու և մարմնի բարության համար:

Բնականաբար մարդու բնության սովորությունն է ջանք թափել, չարչարվել ու տանջվել ձեռք բերելու այն, որից զուրկ է ինքը, նաև մոռանալ, հրաժարվել ու անտեսել այն, ինչ հարածամ իր ձեռքին ունի, և կամ [երես դարձնել] նրանից, որ իր համար պատրաստի կա: Ու մենք մեր կյանքի ժամանակն ենք վատնում, մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ՝ բոլորն իրենց կյանքի ժամանակն են ծախսում, որպեսզի կարողանան ապահով դարձնել իրենց անձն ու ստացվածքը, ինչպես իշխաններն՝ ամրոցի<sup>87</sup> շնորհիվ, իսկ հասարակ ժողովուրդը՝ պարսպապատ տներում և բնակատեղերի բարվոճ պահպանումով:

Ահավասիկ ես չեմ համարձակվում ձեզ տալ, այլ իմ մատով ցույց եմ

տալիս տեղը դռան բանալիների, որոնք ապահովություն են ձեր անձերի ու ստացվածքի, հարստության ու բոլոր պատվական իրեղենների, ինչ ներկայումս դուք չունեք, վաղուց դրանցից զրկված եք: Ահա բանալիները ձեր Արարատյան երկրորդ դրախտի դռան՝ ձեր օրենքները, կարգերն ու կանոնները, որոնք կծանոթացնեն ձեզ, թե ինչ է բարի կամ չար գործը, ինչ է հարկավոր կատարել կամ հրաժարվել, ինչ գործի ձեռնամուխ լինել: Դրանով պիտի հաստատվի ձեր սիրտն այն հավատի մեջ, որ ունեք՝ ամուր պահելու համար ձեր օրենքները, ու դուք այդ օրենքներով ոչ միայն ապահովություն եք շահելու ձեր անձանց ու ստացվածքի համար, այլև ձեր կյանքի ժամանակն ազատորեն ձեզ է մնալու, որը կարող եք ծախսել ու նույն ժամանակի ընթացքում ուսանել արհեստ, իմաստություն ու համճար, որոնք երջանկություն կպարգևեն ձեր ազգին և օգնություն՝ ձեր իշխաններին,<sup>88</sup> կառատանան հասերի, մաքսերի, հարկերի և այլ պտուղները, ու ձեզ չի սպառնա հարկապահանջությունը, ինչպես այժմ: Դրանով ամենքդ էլ ձեր գործունեության մեջ միշտ կմնաք ազատ, ձեր սրտից կվերանա չար մարդկանց վնասարարության երկյուղը, և ամեն ոք կկարողանա ազատորեն մտածել, ասել ու հավատալ, որ իր ամբողջ ստացվածքը հավաստի իրենն է, ոչ ոք չի կարող մոտենալ նրան, մի մազ անգամ ձեր գլխից չի պակասի, ոչ ոք չի կարող իր ձեռքը երկարել ձեր մի ձվին, ամենքդ էլ կմնաք տերը ձեր ունեցվածքի, մտքով համոզված, թե՛ ունեմ. այն, ինչ որ ունեմ՝ իմն է:<sup>89</sup> Դրանով կկարողանանք բաժանել ձեր կյանքի ժամանակը, երբեմն՝ գործի համար, երբեմն՝ աշխատանքի,<sup>90</sup> երբեմն՝ աղոթքի, երբեմն՝ խրախճանքի, երբեմն՝ ուսման և այլն: Դրանով մեր հայրենիքում կարժևորվի մարդը մեր մեջ, մեկն իբրև հեզ ու խոնարհ՝ քահանայության համար, մեկը քաջ և աներկյուղ՝ զինվորության համար, մեկը ջանադիր ու աշխատող՝ հողագործության համար, մեկն արհեստավարժ զանազան արհեստների ու գիտությունների մեջ՝ իմաստության համար, որպեսզի այդպիսով մենք մեր մեջ կարողանանք գոհացում տալ մեր բոլոր պահանջներին ու կարիքներին, մենք մեզ ընդունենք որպես պատվի արժանի մարդ:

Օրենքով առաջնորդվելը մեզ արժանի կդարձնի մեր Արարչի որդեգրությանը, որպեսզի մեր երկրի երեսին Տիրոջ ստեղծած ամեն մի արարած հնազանդվի իշխանությանն ու պատվին մեր հոգու զորության, որը մեր Տեր Արարչից հատկապես շնորհվեց մեզ, և մենք արժանի լինենք նրանց թագավորելու փառքին՝ մենք էլ մեր օրենքներով հնազանդվելով միայն մեր թագավոր և Արարիչ Աստծուն, որ իշխանություն ունի մեր հոգու, մարմնի ու կյանքի վրա: Թագավորությամբ ու իշխանությամբ նա պիտի միայն փառավորվի մեր բնության ու բնական հոգու վրա, որովհետև նա ստեղծեց մեզ, և ոչ թե մենք եղանք,

մենք միմիայն նրան ենք հնազանդ և ոչխարն ենք նրա արտոյի: Իսկ մեր հոգու զորության հնազանդությունը Տիրոջ հանդեպ ոչ մեր կամքից է բխում, ոչ մեր սրտերի նոր ցանկությունից, ոչ մեր փոփոխական բնությունից և ոչ էլ ժամանակի տարուբերումից, եթե ոչ հենց սկզբից, երբ արարածոց Արարիչը շունչ փչեց մեր բնության մեջ:

Թեպետ մենք չգիտակցեցինք և չպահպանեցինք մեր Արարչի պատվիրանը, անկարգ դարձանք, անօրինեցինք ու մեր Արարիչ Տիրոջ կանոնը խախտելով՝ ստորացանք և նմանվեցինք անբաններին, սակայն ինչպես հավատացած ենք մեր Տեր Հիսուսի բարձրագույն բարի խոստմանը, որ ասաց, թե՛ Ինձ մոտ եկողին դուրս չեմ անի,<sup>91</sup> չնայած վաղուց զրկված ենք մեր բանական հոգու զորության փառքից, բայց դեռևս մահվան չենք մատնված, հաստատուն է մեր սրտերում նրա այն վկայությունը, որով մենք Տիրոջ կողմից խրատվեցինք մեր անկարգության ու մեղքի մեջ, բնականաբար նաև գիտենք, որ ոչ մի խրատող չի կամենա բարձիթողի անել իր խրատածներին, ըստ Տիրոջ ասած խոսքի, թե՛ Ուն որ Տերը խրատում է, նրան սիրում է:<sup>92</sup> Հաստատելու համար իմ միտքը ասեմ, որ վաղուցիտես այդքան ժամանակ անկարգ ընթացքով և Տիրոջ պատվիրանի դեմ հանդգնությամբ թեև մենք մեր արարքներով զրկվել ենք ազատության ու անմահության պատվից, սակայն մեր Տերն ու Արարիչը մեր բնությունից չի վերցրել մեր բանական հոգու զորությունը, որն ինքը հատկապես շնորհեց մեզ: Ուրեմն նրա սուրբ բերանից ժամանակ ու խոստում է տրված չարաքսելու մեզ, նմանապես և մեր ամենագետ Արարիչը մեր բնության մեջ դեռևս պահպանում է մեր բանական հոգու զորությունը և խոստանում է ընդունել մեզ: Նա ինքը, զաղտնապես լինելով, լավ գիտեր, որ մենք ի վիճակի ենք լինելու արթնանալ ծուլության հեղձուցիչ քնից և մեր հոգու զորությամբ հիշելու, որ մեր Տեր Արարչի փչմամբ բանական հոգու տուն ենք: Թեև մենք հող ենք, բայց այդ հողի մեջ գտնվում է ամենապատվական զորությունը մեր բանական հոգու, որն ավելի արժե, քան բոլոր ակնեղենները երկրի մայր հողի ընդերքում: Վերադառնալու ենք այն մտքին, որ մեր Արարչի ձեռքով ենք ստեղծվել և նրանից ընդունել հոգու զորություն՝ երկրի երեսին իշխելու համայն կենդանիներին, նա է մեզ օրինոք ազատ ստեղծել, որ եթե մենք կամենայինք՝ խմեինք մեր ձեռքի գործերի [հատուցման] բաժակը, իսկ մեր ձեռքերը թաթախվեցին անօրենության մեջ, ու մեր կամքին ընդունելի դարձավ թշվառ կերպով ճաշակել մահը, որից նեղվում ենք այժմ: Սակայն կանխապես քաջ գիտեինք, որ նեղվելու էինք, բայց որքան էլ մեղք գործեցինք թե սխալանքով, թե խաբեությամբ և թե ազահությամբ, սակայն չկորցրեցինք մեր հոգու բանական զորությունը՝ մտածելով մեր սխալների և մեր Արարչի արդարության մասին:

Հետևապես մենք պետք է սկերես ու անոթխած դեմքով դառնանք դեպի մեր Արարչի դուռը, որն այսքան համբերատար եղավ մեր հանդեպ վաղ ժամանակներից սկսած, որպեսզի գլորվելուց ելնենք և ոտքի կանգնենք մենք՝ անտեսելով ամեն մի հույս որևէ մեկից, և ուխտենք, որ այսուհետև երբեք հույս չենք դնի ուրիշի վրա՝ ոչ արյունակցի անկեղծության, ոչ պետության ու զորավոր գնդերի, ոչ էլ երկրային որևէ արարածի վրա, այլ միմիայն հույս կապելով մեր Տիրոջ և Արարչի՝ մեկ և աննման համայնից Աստծու հետ, դառնանք ու ընթանանք միայն դեպի նա և համարձակ ծայրով կանչենք ու ասենք անառակ որդու պես.<sup>93</sup> «Հայր, մեղանչեցինք, մինչև որ անօրինեցինք և ընկանք ու թշվառացանք: Լսիր մեզ, Տեր, և նայիր մեր հոգու պատվական գորության բնակատեղիին, որ հող է, իսկ դու համարում ես բարի, քանզի դու ստեղծեցիր: Բայց մենք գիտակցեցինք և քո առաջ խոստովանում ենք արդարությունը, որ մեղք գործեցինք և ետ ենք կանգնում մեր անօրեն գործերից: Ընդունիր մեզ, Տեր, ըստ քո սիրելի որդու առակի և մտցրու քո հացալից տան գավիթը, որ իսպառ չկորչենք սովից ու մեր անկարգությունից: Եվ այժմ խոստանում ենք քեզ, Տեր, որ կպահպանենք քո պատվիրանը, այսինքն՝ կիրառարվենք ամենայն չար գործերից ու ոչ մի մարդու կատարած չար արարքների համար մեզնից ոչ մեկին չենք ների, մեր միջից կվերացնենք չարը՝ որպես քո թշնամու, և պատվի կարժանացնենք բարի մարդկանց ոչ ըստ նրանց բնության արժանավորության, այլ ըստ նրանց ձեռքի գործերի արժանիքի՝ իբրև քո սիրելիների: Իսկ դու, Տեր, այս հողեղեն անոթների մեջ պահպանիր մեր բանական հոգու գորությունը, որ լինենք համեմատ քո սիրելի Որդու ասած խոսքին, թե՛ Այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լուսո որդիները<sup>94</sup>, և վերստին չենք հավատա այլևայլ բանսարկուների խոսքերին, բացի քեզնից, Տեր: Նաև թույլ չենք տա մեր փոփոխական բնությանը շարժվելու ըստ իր բնական սովորության, ինչպես նախկինում, այլ՝ քո կամքի ու պատվիրանների համաձայն:

Ահա հուսալով քեզ միայն՝ մեր Արարչիդ, հրաժարվելով մեր տղայական, երիտասարդական և ծերունական մտքից, կամքից ու սրտի ցանկությունից, հավատալով, որ մեր հողեղեն բնության ցանկությունն ունայն է, արիությամբ մեր մեջքը գոտեպնդած՝ մեր բանական հոգու գորությամբ քո օգնականությամբ անցնում ենք գործի՝ մեզ և մեր փոփոխական բնության համար հորինելու որոգայթ՝ ամրապինդ շղթաներով օրինոք կապված<sup>95</sup> բարի կարգադրության օրենքներ, մեր բանական հոգու գորությամբ մեր այս փոփոխական հողաբունը մտցնելով մեր ամենաբարի որոգայթի մեջ, որ կազմված է քո շնորհի գորությամբ, որպեսզի միշտ անշարժ մնա բարի գործերի հանդեպ, և մեր հոգու գորությունը փրկվի այս աղմկալի բնության թշվառությունից, պահ-

պանվի մեր ազատության պատիվը, և մեր [հայրենի] երկրի երեսին մարդկանցից վերանա նախատինքը, մեր խղճմտանքը փրկված լինի ամեն մի գործի նկատմամբ, որպեսզի, Տեր, մեր հոգին ու մարմինն արդարացած գտնենք հանդերձյալ կյանքում՝ քո դատաստանի առաջ»:

Չնայած վերևում բազմիցս հիշեցինք իմ անձի անկատարությունը դպրության և շարադրելու գործի մեջ, այժմ ևս նույնը հիշեցնելով՝ ասեմ, որ ես՝ հայ ազգի մեջ փոքրավորս, թեպետ պատիվ եմ համարում ինձ դիտել որպես հայ փոքրավորներից և հաբեթյան որդիներից մեկը, բայց ինձ համար տրտմալի է տեսնել իմ անկարողությունը, որ կատարելապես չեմ տիրապետում ոչ հայերեն լեզվի բառաբանին, ոչ էլ գրելու և խոսելու արվեստի շնորհքին, բայց իմ սրտում իմ սեփական աշխարհի ու ազգի նկատմամբ մի մեծ նախանձախնդրություն կա, որը միայն կառո է լրացնել իմ արհեստի պակասությունը: Դրա համար էլ ընթերցողից բարեհաճություն հայցելով՝ հույս ունեմ, որ ներողամիտ կլինի իմ ռամկական շարադրանքի նկատմամբ, քանզի չնայած ես չկարողացա խոսքիս ճաճանչը քաղցրաբանությամբ ծառել ձեր՝ լսողներիդ ականջին և ինձ բամբասանք կատարողի տեղ դրեցի, այնպես որ ամեն աշակերտած դպիր կարող է իմ շարադրությունը ծաղրի առնել, բայց միևնույն ժամանակ ինձ վրա վերցրի թե՛ ծաղր և թե՛ ամեն նախատական բան, որ մեր ուսունմավարժ մարդկանց կողմից կարող են ի հայտ գալ, բավական կլինեն ինձ նրանց սրտերում բարի նախանձի սերմեր սերմանելու, որովհետև ինձ հնարավոր չեղավ մեր ուսուցիչներից ու դպիրներից ոչ մեկին իրապես լուծընկեր դարձնելու հանուն այսպիսի գործերի նախանձախնդրության: Գուցե սա հարուցի նրանց սրտի [բարի] նախանձը, որ պատճառ դառնան լրացնելու իմ գործի մեջ առաջացած պակասը՝ փառավորելով հայոց ազգն ու պատիվը: Երանելի է այն մարդը, որը կամ նախանձախնդիր լինելով և կամ հատկապես սիրուց դրդված՝ հանդես կգա ու կշարադրի այն ամենը, ինչ որ կա այստեղ, և կամ սրա նման բարի բաները, որոնք անծանոթ են ինձ: Երանի նաև նրանց, ովքեր կապրեն այն ոսկեզօծ ժամանակի մեջ, երբ կտեսնեն բարի նախանձ՝ հարուցված իմ այս խորհրդածության վերաբերմամբ, և երանի այն ժամանակին, երբ գրագետներն ու գրողները, ինձ մեղադրելով, կհիշեցնեն իմ գրածի թերությունը՝ պատճառ դնելով իմ մեղքերը, թե այդպիսի բարձրագույն գործ ինչպես կարող էր գլուխ բերել վաճառական մարդը, որն իր կյանքի ժամանակն անց է կացրել միշտ վտարանդի, կարծես սարդոստայնում:<sup>96</sup> Եվ թող փառավորվի իմ այդ ոսկեբերան դպիրը քաղցրաբերան, որովհետև հայ ազգի մեջ ճոխությամբ ու բնական իրավունքով հաստատելու է օրենքը, որպեսզի իմ ազգը փրկվի ծառայական վիճակից ու ինքնագլուխ հրամայող-

ներից և մտնի իր սեփական Հայոց աշխարհը, այն է՝ Հայաստան, ու ըստ օրենքի վայելի իր կյանքը: Դա միայն կլինի իմ մխիթարությունը և իմ չարչարանաց վարձը: Ու միաբան կփառավորենք մեր Տեր Արարչին՝ Զորը, Որդուն և Սուրբ Հոգուն, մեր միակ Աստծուն այժմ և միշտ և հավիտյան:

Ինչպես ընդունված է ամեն մի գործի համար, նախ պետք է ճանաչել անունները, չափերն ու կշիռները, այդպես էլ մեզ հարկավոր է, որ տրվեն այն անվանումների բացատրությունները, որոնք ես կոչել եմ ռանկական ձևով: Դա նշանակում է, որ մինչև չտրվի մեր ոսկրանդամների բառանվանումը, ոչ ոք չի կարող խոսել մեր անձից ու բնությունից: Ասենք՝ «Խորտակվեց բազուկը Մանասեի»։ մինչև ծանոթություն չունենանք անվանումների մասին, չենք կարող իմանալ, թե ինչ անդամ է<sup>97</sup> բազուկը: Եվ կամ՝ «Կայսեր կողմից երեք տաղանդ շնորհվեց Բարսեղ Սարաշեցուն»։ մինչև ծանոթություն չունենանք, թե որքան է տաղանդը, չենք կարող իմանալ շնորհաբաշխության չափը: Նաև՝ «Վարդան ստրատելատն<sup>98</sup> իր զորքով մեկ օրում ընթացավ վեց ասպարեզ»։ Եթե պատկերացում չունենանք ասպարեզի որչափության մասին, չենք կարող որոշել ստրատելատի ընթացքը, և այլն:

Դրանց<sup>99</sup> նման ամեն բան էլ, ասենք, ստորագրված տարբեր ուժի թղթեր՝ թե օրինության և թե պահպանության նամակ, թե հրամանի, շնորհների ու պաշտոնավարության հրովարտակ և կամ ժողովրդի մեջ հասարակ կարգով ընդունված պարտքի, երաշխավորության, դաշինքի, ստացվածքի թուղթ և այլն, նաև պալատների, խորհրդարանի, դատաստանի, բանտի անվանումներ, իշխանների, գավառապետների, նախարարների, սպարապետների, զորագլուխների ու կուսակալների անուններ, ինչպես և զենքերի ու զինվորական զործին առնչվող անվանումներ,<sup>100</sup> - սրանց և համանման շատ անունների, որոնք ամենքն էլ հին ժամանակներից սկսած վաղուց հայկական բառով գոյություն ունեն, այժմ իմ անձեռնհասության պատճառով ես անգիտակ եմ, բոլորին էլ համարյա անծանոթ: Բայց այն գործը, որին ձեռնամուխ եմ լինում ես՝ անվանելով իրերի անունները, ինչպե՞ս կարելի է ցույց տալ և ներկայացնել, եթե չեմ տալիս գործի անունը, առարկայի չափը և իրի կշիռը: Ու ես թեպետ անծանոթ եմ այդպիսի իրանվանումներին, սակայն, ինչպես վերևում ասացի, իմ նախանձախնդրությունը, իշխելով իմ պակասավորության ու անկարողության վրա, ինձ թույլ չի տալիս, որ վերևում հիշված իմ անկատարության պատճառով աշխատանքս թերավարտ թողնեմ, հակառակը՝ հատկապես իմ սիրո դրդամբ ես որոշեցի իմ մտքում, որ ավելի լավ է նոր անուններ անվանակոչեմ, նոր չափեր ու նոր կշիռներ՝ ոչ թե այն մտադրությամբ, որ հայոց սեփական լեզվից ու սովորույթներից վերանան [եղած] անվանումները, Աստված

մի արասցե, այլ որպեսզի այս նոր անվանումներով իմ խոսքը հնարավորություն տա անհրաժեշտ տեղում<sup>101</sup> լսողների ականջներում վերարթնացնելու նշանակությունը և արտահայտելու օրենքների հողվածների գործառնությունը, մինչև որ Տիրոջ ողորմածությամբ հանդես կգա իսկական գիտնական կամ ուսյալ դպիր՝ քաջատեղյակ արտաքին գրոց<sup>102</sup> և պատմությունների, հմուտ հայոց բառաբանին և բոլոր իրանվանումներին, որոնք այժմ իմ կողմից կարծես կորստյան են մատնված, նա կդնի յուրաքանչյուր առարկայի հավաստի անունը համապատասխան տեղում, կգտնի բոլոր առարկաների, չափերի, կշիռների ու անձանց անունները՝ միասնաբար<sup>103</sup> և միահավասար [ընդունված] հայոց մեջ, որպեսզի միասնորեն ճանաչեն չափ ու կշիռ որքանությունը, պաշտոնատարների անվանումները և այլն, և չլինի այնպես, ինչպես այսօր մեր մեջ, երբ ամեն մի գավառում ըստ իրենց սովորության միևնույն առարկային<sup>104</sup> տալիս են զանազան անվանումներ, այնպես որ ամեն մի գավառաբարբառում իրերի անվանումները մյուսներից խիստ տարբեր են և դժվարություններ են հարուցում ամենքի մտքում. օրինակ՝ մեր իշխանավորների անուններն այժմ ոմանք մելիք են կոչում, ոմանք՝ ցրվոր, ոմանք՝ ռեխս, ոմանք՝ քյոխվա, ոմանք՝ քալանթար,<sup>105</sup> մեր չափերի անվանումները ոմանք քիլա [են կոչում], ոմանք՝ գիրի, ոմանք՝ թաղար, ոմանք՝ թիլանի,<sup>106</sup> կշիռների անվանումները ոմանք իստիլ [են կոչում], ոմանք՝ լիտր, ոմանք՝ խարվար,<sup>107</sup> երկրաչափական անվանումները ոմանք Ֆարսաղ [են կոչում], ոմանք՝ մանգիլ, ոմանք՝ ասպարեզ, ոմանք՝ աղաջ<sup>108</sup> և այլն:

Դրանց և դրանց նմանների հավաստի ու անթերի [անվանումները] կան հայոց լեզվում՝ անծանոթ ոչ միայն ինձ: Իմ կյանքի ընթացքում մեր միջից չգտա նաև որևէ մեկին, որ օժտված լիներ այդ շնորհով, որ դաս տար ինձ՝ անկարողիս: Բայց ես չեմ երկբայում, որ մեր մեջ կան բազում տքնասերներ և ընթերցողներ՝ հմուտ հայոց բարբառներին: Ով էլ նա լինի, որ հանդես գա և մեր բառերով ներկայացնի չափ ու կշիռ բոլոր անվանումները և բացահայտի՝ իր ազգին դյուրընկալելի լինելու համար, նրա հիշատակը պատվով կնշվի մեր մեջ: Սակայն այդ բանի մասին այսքան հիշատակելուս պատճառը միայն իմ անկարողությունը դարձավ, ու իմ սրտի ցանկությունն ավելի զորեղ գտնվելով, քան իմ անկարողությունը՝ համարձակվեցի այսքան հնարավորություններով առաջ տանել իմ գործը, և ով որ հանդես գա և մաքրի սրա մեջ գրված իմ խառնիխուռն ու ջարդուխուրդ անվանումները հայոց հավաստի խոսվածքով, պարտավոր կդարձնի ինձ, ու ամենքն էլ նրա երախտիքը հավիտյան չեն մոռանա<sup>109</sup>:

Նաև հարկավոր եմ համարում ինձ բարեկամ ընթերցողներիդ ասել և համոզիչ դարձնել ձեր մտքում, որ երկրի երեսին ամեն մի բանի հաս-

տատությունը կարող է լինել հավիտյան, այնպես որ այն ինքնին բոլոր դիտողների աչքին նկատելի է ինչպես տեսարան, մինչդեռ ոչ մի բան, որ երկրի երեսին մարդկային բնության խնամակալության տակ է՝ ոչ կարգ, ոչ կանոն, ոչ հրաման, ոչ հնազանդություն, ոչ սեր, ոչ թշնամություն, ոչ պատիվ, ոչ նախատինք, ոչ կյանք, ոչ վախճան, չի մնացել և չի կարող մնալ հաստատուն, եթե չընթանա մարդու բնական բնության ճանապարհով, կարգով ու համեմատ՝ բանական հոգու զորության ընտրողությամբ:

Եթե այս [գրքի] ընթերցողն այնպիսի պատանի լինի, որ իր մտքում կարողանա գլխի ընկնել, թե այդ ինչպես է, որ երբեմն կայսեր կամ թագավորների հրամանը, անտեսելով մեր բնության հետ համապատասխանությունը, փայլակի պես արծակվում է մեր բնության դեմ և ի կատար ածվում նրա նկատմամբ, ապա ես համառոտ խոսքով կբերեմ մի օրինակ՝ հաստատելու համար վերևում իմ ասածը: Ասենք՝ կայսրը հրամայում է ինձ թևեր առնել և օդ սլանալ, կամ թե խողովակ հագնել և ինձ մտցնել ծով ու օվկիանոսի խորքը, կամ թե իմ աչքերը բացել արեգակի ճառագայթին հանդիման և զննել, թե ինչ կա նրա մեջ, կամ թե քառասուն տարի չուտել և որովայնը չմաքրել, նաև այսպիսի ուրիշ բաներ՝ ընդդեմ բնական բնության պահանջի:

Խելամիտ եղիր, ընթերցող, եթե վերևում փոքրիկ օրինակներով հիշածս՝ կայսեր հանդեպ քո սիրո, երկյուղի կամ հնազանդության պատճառով դու անձամբ կկարողանաս ի կատար ածել, բայց որքան ես գիտեմ ոչ դու, նմանապես և մարդկային բնությամբ ոչ մի մարդ չի կարող կատարել այն, որ ընդդեմ է մեր բնական բնությանը, ոչ թե կայսեր հրամանի դեմ հանդգնության կամ ապստամբության պատճառով, այլ միմիայն այն պատճառով, որ ընդդեմ է մեր բնությանը: Ամեն հրաման, պատվիրան, օրենք և այլն, ինչ որ հակառակ է մեր բնությանը, չի կարող մեր մեջ պահպանվել և իր տեղում հաստատվել, հակառակ դեպքում այն՝ ընդդեմ բնության տրված հրամանը, միայնակ պատճառ կդառնա քանդելու, ավերելու մեր շինվածքը, աղտեղելու մեր մաքրությունը, լծի տակ դնելու մեր ազատությունը, անարգելու մեր պատիվը և այլն:

Յետևաբար, ինչպես որ ես իմ մտքում համոզված եմ, թե ամեն բան, ինչ ես կամենում եմ, որ միշտ հաստատուն մնա, եթե այն կարող է մեր կյանքի համար՝ այս աշխարհում ամենայն բարության և հանդերձյալ ժամանակում՝ իմ բնության համար հավիտենական հանգստության նախապայման դառնալ, նույն կերպ էլ ընթերցողներիդ մտքում հաստատելով և ճշմարիտ վկայություններով ցույց տալով՝ այնուհետև ցանկանում եմ, որ դուք ևս այդ մտքին հաստատուն մնաք, սրանից հետո ձեր մտքի մեջ խորհեք այդ արագաշարժ, փոփոխական ու ան-

հաստատ բնության մասին, որը ոչ համբերում է, ոչ ընդունում և ոչ էլ իր վրա կրում այն ամենը, ինչ որ իրեն ընդդեմ է, ու ինքը ոչ մի ժամ կամ ոչ էլ մի օր չի կարող միևնույն բնությամբ անփոփոխ մնալ: Ուրեմն ուրիշ ճար ու հնար չի գտնվում փրկելու նրան փոփոխականությունից ու զանազան փորձություններից և երջանիկ ու արժանի դարձնելու պատվի, բացի մեր բանական հոգու զորությամբ անխախտելի սահմաններ և ամենաբարի օրենքներ ընտրելուց՝ համեմատ մեր բնական բնությանը և բանական հոգու զորությամբ, ինչպես վերևում բազմիցս ասացինք, որպեսզի նա կամովին ընդունի և ընդունելով միշտ մնա հաստատուն, և դրանով վերանա մեր բնության փոփոխականության վնասը ու մեզ դարձնի պատվի արժանի մարդ, մեր կողմից փառաբանվի արդարությունը:

Եվ ինչպես որ մարդու բնությունն ազատորեն միշտ գործում է այն ամենը, ինչ որ իր սրտից անցնում է, ըստ իր փոփոխական կամքի՝ երբեմն ցանկանալով, երբեմն ընթանալով և երբեմն էլ ի կատար ածելով, այդպես էլ նույն փոփոխական կամքի մի հատկանիշն էլ հետևյալն է, որ մարդկային բնությամբ ոչ մի ծնունդ գերծ չէ հավատալուց, թե ինքը իբր առաջին մարդն է, կարևորը, իմաստունը, հարուստը, զորեղը, գիտունը և բոլոր արհեստներով լիաբար օժտվածը, մտածում է, որ իր մեջ ոչ մի թերություն չկա: Բնության այս հատկանիշը մեր մեջ ի հայտ է գալիս մոր որովայնից ծնվելու ժամին: Թեպետ ծնվելուց առաջ անծանոթ է մարդուն<sup>10</sup>, բայց մոր որովայնում նրա շարժվելուց երևում է նրա ինքնական ոգին,<sup>11</sup> որ շարժվում է՝ ինչպես և երբ որ ինքը կամենա, իսկ ծնունդից հետո նրա մանկությունը վկայում է ինքնիշխանություն հաստատելու մասին, քանզի խաղում է և շարժվում, տխրում և ուրախ լինում, ըստ իր կամքի ու հաճույքի [անում] ամեն բան, ինչ ինքը կամենում է: Թեպետ երկրի երեսին ամեն բանից անտեղյակ լինելով՝ նա տակավին խաբվում է իր ծնողից ու դայակից, բայց ոչ ամեն ժամանակ, այլ իր կյանքի մանկության ողջ տարիների ընթացքում հավատարիմ է մնում իր այն մտքերին, թե ամեն բան, ինչ որ ինքն է կատարում, ուրիշ ոչ ոք չի կարող կատարել, նմանապես և ամեն բան, որ ուրիշների կողմից է կատարվել և ավելի առաջ իրեն անծանոթ է եղել, չնայած կատարվածն իր համար ախորժելի է, սակայն միշտ նրա նախանձն է հարուցում, թե ինչու ինքը նրանից ավելի լավ բան չարեց: Ու շատ անգամ այդ նախանձը պատճառ դարձավ բազում գործերի՝ թե՛ բարի և թե՛ չար, ինչպես որ ամեն բանի վարպետ երկաթագործներն օրեցօր ավելի լավն են պատրաստում, քան նախկինը: Ասածիս հաստատունը կլինի թեկուզ միայն ընթերցողիդ ընթերցումը, որով կկարողանաս համեմատել իմ ասածը քո մտքի, կամքի ու բնության հետ, որովհետև ես երբեք չեմ երկբայում, որ ամեն բան, ինչ որ վերևում

հիշվեց, համանման ես գտնելու քո բնությանը:

Յետևաբար թող զարմանք չթվա և ոչ էլ ընթերցողիդ կամքին հակառակ, որ ես այստեղ աղաչում եմ սույն [գրքի] բոլոր ընթերցողներին և ունկնդիրներին չարնախանձ չլինել իմ գրածի նկատմամբ և անարժան չհամարել ինձ՝ նման բարեգործությանն այն պատճառաբանությամբ, թե հապա ինչու ինքը՝ ընթերցողը, ավելի վաղ չգրեց, այլ՝ ես, որ փոքրավոր մի մարդ եմ իրենց մեջ: Թեպետ ճանաչում եմ իմ բնական բնությունը, ինչպես վերևում պատմեցի, բայց ես չեմ կարող խոյս տալ մարդկային բնությունից, ուրանալ իմ բնության ներգործությունը և ընդհանրապես բնականը, այլ արդարությունն եմ խոստովանում Աստծու և ձեր առաջ, որ իմ փոփոխական բնության ներգործությունն այս նտածությանը չշաղախվեց ինչ-որ ցանկությամբ, որպեսզի ինձ կարծեմ իմաստուն, պարագլուխ ու գիտուն կամ իմ գործը ներկայացնեմ այնպես, թե ուրիշ ոչ ոք չի կարող անել: Աստված մի արասցե: Յակառակը, այնքան համարձակվեցի, մինչև որ իմ մտքում համոզվեցի, որ իմ եղբայրները՝ հայորդիները, իրենց մտքում մոռացել են հնարը փրկելու իրենց անձը այլազգիների հպատակությունից, վաղուց լծի տակ ընկած լինելու հետևանքով՝ թերևս նրանք սովոր են դարձել ծառայական կյանքին, - իսկ երկարատև ժամանակով ամեն մի սովորույթ կարող է վերածվել մարդու բնավորության. - ու ինձ թվում է, որ ես իրավունք ունեմ և պատճառ՝ դիմելու այսպիսի համարձակության:

Քանզի ավելի քան չորս հարյուր տարի ժամանակով մենք՝ հայոց ազգս, հպատակի կյանք վարեցինք, և անտերունչ լինելու հետևանքով խափանվեցին մեր կրթարանները և ուսումնարանները, ու մեր լեզուն խառնակվեց այլազգիների բառապաշարով՝ արգելակելով մեր պատմության իմացումն ու ընթերցումը: Այդ պատճառով հայ մանուկների մեջ այժմ հազիվ են պատահում ընթերցողներ և ընթերցման սեր ունեցողներ: Եվ եթե հազվադեպ են ընթերցողները, ուրեմն և խիստ սակավ են հմտավարժ կարդացողները, որոնք էլ չեն կարողանում հասկանալ իրենց ընթերցածը: Եվ դա այն պատճառով, որ մեզ վրա այլազգիների իշխելով՝ հայ ազգի լեզուն խառնակվել է զանազան լեզուներով՝ մերթ օսմանցիների, մերթ պարսից բառերով, ու նրանք, որոնք խոսում են հայերեն, խառնում ու շփոթում են այլազգիների տարբեր լեզուների հետ: Եվ արդյունքը հիշեցնում է մեր բնության սովորույթը. գեղեցկագույն ծաղիկը, որ փափագելով պոկում ենք իր թփից, մոտեցնելով մեր քթին՝ եթե չենք զգում անուշ բույր, միանգամից դեն ենք նետում: Այդպես էլ կյանքի համանման պարագայում, գտնելով մեր թագավորների և քաջ զորավարների մասին պատմագրքեր, ընթերցելով ու չհասկանալով՝ մի կողմ ենք նետում գիրքը: Նման պատճառներով փտեցին գրքերը, կորան պատմությունները, հայոց ազգին անծանոթ մնացին իր

ազգի [անցյալ] երջանկությունն ու ազատությունը և այլն: Ինչպես շատերի բերանից լսեցինք, հարյուր հայ մարդու մեջ հազիվ մեկ մարդ գտնվի, որ որևէ մեկի բերանից լսած լինի, թե հայոց ազգը ժամանակին տեր ու թագավոր էր Յայաստան երկրում:

Տարաբախտությամբ<sup>112</sup> գրկվելով մեր ամեն բարիքից՝ այսօր էլ մենք այդպես մնացել ենք ոտքի վրա: Ինչպես տեսնում ենք, մի ամբողջ ազգ սասանված վիճակում է, որը խիստ սպառնական է ինձ և բոլոր գիտակցողների համար, ես. որ ինձ չտեսա որևէ պաշտոնում՝ ոչ եկեղեցական և ոչ էլ զինվորական, ոչ էլ Յայոց երկրի երեսին՝ բնակության մեջ: Ինչպես որ մեզանից շատերը ինձնից առաջ և ավելի վաղ, քան իմ նախնիքը, պանդխտելով Յայաստանից, հոգոց հանելով մեռան օտար աշխարհում, հայոց որդիներին ու ժառանգներին թաղեցին օտար հողի կրծքում և այլազգիների տարածքներում, - մի բան, որ նույնպես մեր անօրինության հետևանքներից մեկն է, - այդպես էլ այժմ ինձ կարելի է տեսնել նույն ճանապարհի վրա: Ահա թե ինչու չկարողացավ լռել իմ բերանը, և չկասեց<sup>113</sup> իմ գրիչը, այնպես որ ինձ մտովի հասու գտա այնքան, որ համարձակվեցի և իմ գործի ժամանակից նպատակիս համար ծախսել կարողացա ու շարադրեցի այստեղ: Բայց իմ աչքի լույսը և սրտիս սիրելին կարող է լինել իմ աշխատությանը նախանձախնդիր այն մարդը, որն իր բարինախանձ սրտով հանդես կբերի սեր ու զութ և իմաստությամբ կշարադրի այն ամենը, ինչը որ հնար կարող է լինել ծառայական վիճակից փրկելու հայ ազգին և մեզ երջանիկ ու արժանի կդարձնի մեր նախահայրեր Յայկի, Արամի, Տիգրանի և մյուսների ժառանգորդը լինելու:

Նաև անհրաժեշտ է ձեր մտքում հիշեցնել, որ ոչ ոք իրավասու չէ ընդհանուրի համար միայն իր ցանկությամբ ընդունելու որևէ բարի գործ կամ բարերարություն, նաև մտածելու, որ ինքն այն միայնակ կարող է կատարել և ավարտի հասցնել: Ինչպես մարգարեն է ասում, բազմաց ձայնն ընդունելի է որպես Աստծու ձայն<sup>114</sup>, նմանապես և ըստ տեր Պողոսի խոսքի՝ ամեն բան հաստատվել կարող է երկու կամ երեք վկաներով:<sup>115</sup> Դրանցով և հոգու բանական զորությամբ հասու ենք դառնում, որ եթե ամեն մի մարդ միայնակ կարող է կատարել որևէ բարություն, ապա դրանից ավելի բարձր ու լավ մակարդակով այն կարող է կատարվել երկուսի կողմից կամ բազում մարդկանց օգնությամբ: Նաև բազմաթիվ մարդկանց օժանդակության շնորհիվ աշխատանքի ծանրությունը չի մնա միայն կատարողի թիկունքին այլ ինչպես որ մեկ բեռան ծանրությունը, բաժանելով շատերի բռերի վրա, դառնում է թեթևագույն՝ իբրև մի բուռ, այդպես էլ ամեն բարի գործ կամ բարության հասնելու հնար պահանջում է, որ բոլոր բարեգործները, ինչպես սիրահարվածներ, առաջ մղվեն՝ յուրաքանչյուրն իր գործով, կամ ամեն մեկն իր

ընկերոջն օգնական լինի թե խորհրդով և թե խոսքով կամ գործով, որպեսզի իրենց ծայները հնչեցնել կարողանան որպես Աստուծո ծայն և շնորհների արժանանան Տիրոջից՝ ըստ նրա տված անկասկածելի խոստման, թե՛ Որտեղ որ իմ անունով միաբանվածներ լինեն, այնտեղ և ես կլինեմ նրանց մեջ։<sup>16</sup> Ահա թե ինչու գործի համար ամեն կարգի օգնականություն է հարկավոր, և բազում օգնականներ այժմ իրենց ձեռքին իշխանություն ունեն հրամայելու, իսկ նրանց հպատակներն էլ հաստատապես հնազանդ են նրանց, որովհետև ինչ հրաման որ նրանցից դուրս գա՝ սիրով ընդունելու են:

Իսկ կրկնելով ասեմ, որ մեզանից ոչ մեկին՝ ոչ հրամայողներին, ոչ հանդգող-քաջալերողներին, ոչ աշխատողներին, ոչ լսողներին, ոչ հնազանդվողներին չեմ ցանկանում, որ մարդու բնությանն անհարիր կամ աստվածապաշտության կարգի որևէ կողմին հակադիր և հատկապես ժողովրդի ինչքին ու ստացվածքին ի վնաս որևէ հրաման դուրս գա, այլ լիովին լինի հոգուտ ընդհանուրի բարօրության և հասարակ ժողովրդի հոգու և մարմնի:

Եթե դու՝ իմ գործն ընթերցող, գուցե կամենաս հարց տալ, թե ինչ օգնություն խնդրեմ որևէ մեկից և կամ որևէ մեկից ինչ օգնություն կարող է լինել, երբ [հայրենի] երկիրը սարսափահար վիճակում է, ազգը՝ ցրված, և այլազգիները, մեր ողջ ունեցվածքը կողոպտելով, հետին թշվառության են հասցրել մեզ, երբ ներկայիս հայ խղճալի ժողովրդի զավակները հազիվ են հագեցնում իրենց որովայնի քաղցը և ծածկում մերկ մարմինները և այլն, ապա այդպես մտածողներին կասեմ, որ այդ բանը և այդ կացությունն են միայն պատճառ շտապ գործի անցնելու և թշվառությունների ճարը տեսնելու, որովհետև տկարների համար ամեն դեղամիջոց, որ հարկավոր է ընդունել դեղագործից, մենք պարտավոր ենք ստանալ մեռնելուց առաջ, քանզի մեր մահվանից հետո մեր հիվանդությանը որևէ դարմանում չի կարող օգնել: Այդ պատճառով էլ, քանի դեռ կենդանի ենք, պատշաճ չէ ժամանակով հապաղել: Ես չեմ անտեսում թշվառությունն իմ ազգի, որն այսօր չափազանց ողորմելի է, բայց գոհ եմ Աստուծուց, որ դեռևս այնքան թվառ չէ՝ հոգեվարքի մեջ կամ մերժիմահ վիճակում, դեռ հույս ունենք առողջանալու և երջանիկ կյանք ձեռք բերելու: Թեպետ մենք տեսնում ենք մեր ազգի տկարության ախտը, որը մահացուցիչ է, բայց ավելի նվազ չգտնվեց հայոց ազգի ամրության տարերքը, այսինքն՝ հույսը և հավատը, տկարացած՝ երկարածիգ ժամանակի մեջ նա մշտապես անհողող մնաց, և այժմ, երբ մենք գիտենք մեր ազգի բժշկության միջոցը, անհրաժեշտ է, որ անհապաղ խմենք առողջարար բաժակը և մեր վերքերի վրա դնենք բալասանի ձեթը, որպեսզի փրկվենք ստրկության լծից:

Եվ արդ, բոլոր ընթերցողներիդ վերհիշել տալով տեղեկությունը նախահայրերի մասին՝ ասեմ, որ մենք, իբրև մարդ փառքի մեջ լինելով, իմացանք այն ուղին, որ առաջնորդել կարող էր մեզ կյանքում, նաև շատերից լսեցինք և մեր աչքով տեսանք այն միջոցը, որ հնարագործում է երկիրը և իր ժողովրդին փրկում սրի բերանից ու նեղիչներից, և ես էլ՝ ձեր փոքրավորներից մեկը, այժմ հատկապես ասացի ձեզ, ու դուք լսեցիք: Ուրեմն թող լսի դիտապետը,<sup>17</sup> որը Տիրոջից պատվիրան է ստացել պահապան լինելու ժողովրդին, թող լսեն ծերերը, որոնք Տիրոջ պատվիրանի երրորդ կետով շնորհների ու պատվի արժանացան, որ իրենցից բոլոր ծնվածները պիտի պատվեն հորը,<sup>18</sup> և թող լսեն կանայք, որոնք խնամակալ կարգվեցին Տիրոջից, որպեսզի ամուսինները սիրեն կանանց, և թող լսեն մարդկային բնությամբ բոլոր ծնունդները հայոց ազգից՝ հատկապես մեր Տեր Արարչի շնորհների համար, որ ստացան իրենց երկրորդ դրախտ տունը Մասիս լեռան ստորոտում, և ջրհեղեղի տապանից երկրորդ անգամ սերեցին թե՛ մարդկային և թե՛ անասնական բոլոր բնությունների սերունդներին ու արժանի դարձան մատուցելու մեր Տեր Արարչին հաճո իրենց զոհաբերությունը և ընդունելու իրենց մեղքերի քավության ու թողության շնորհները Նախիջևան օրհնյալ աշխարհի երեսին:

Տիրոջ այսքան շնորհների ու բարերարության համար եթե դուք ուշք չեք դարձնում իմ խոսքերին և չեք մտածում ձեր պարտականության մասին, որ պարտավորվեցիք ձեր Տեր Արարչին՝ վերոհիշյալ շնորհների դիմաց, ուրեմն ըստ Տիրոջ հայտարարության, - իսկ մենք երբեք կասկած չունենք նրա բերանի խոսքի նկատմամբ, - կարծում ենք՝ հայոց ազգի անմեղ մանուկների արյունը ձեր ձեռքով պետք է հատուցվի: Ես բարվոք գիտեմ, որ ժողովրդի բոլոր դիտապետները, որդիներին ծնող հայրերը և ամուսնացած այրերի տիկինները՝ իրենց մտքում իմ հիշեցնելուց ավելի լավ են գիտակցում այն պարտականությունը, որ դրված է իրենց, ձեզ և մեզ վրա: Սակայն այլ բան է գիտակցելը և այլ՝ ջանալն ու գործի անցնելը: Հետևապես տեղի մի՛ տվեք բազում ծեծի ենթարկվելու այն պատճառով, որ գիտեք ձեր Տիրոջ կամքը, բայց չեք կատարում, իսկ ձեր անելիքը, որ անհրաժեշտ է կատարել, մի՛ ծուլանաք կատարել, քանզի դժվարին չէ և ոչ էլ անհնարին, ոչ աստվածապաշտության հավատին է հակառակ և ոչ էլ դառնահամ է հոգու վայելչության համար, ոչ ավերածություն է բերում տներին ու շինություններին և ոչ էլ ոսկու, արծաթի և ձեր ողջ ունեցվածքի կորուստ է, այլ բոլորովին մեղմ ու դյուրին է և հատուցում է ձեր պարտքերի, որ հանձն առաք: Այդ նշանակում է՝



- Դիտապետները**<sup>119</sup> { Դիտապետներ, հրամայեցեք Յայաստան երկրի երեսին ապրող մարդկային բնությանը բոլոր ծնունդներին՝ թե արու և թե էգ, հմտանալ տառն ու բառն ընթերցելու արվեստին և խոսել հայ լեզվով.
- Յայրերը** { Յայրողիների հայրեր, ձեր որդիներին հոժարությամբ տվեք հայերեն ընթերցման, ապա վարժեցրեք զինվորական զենք ու արվեստին և սովորեցրեք նրանց հնագանդվելու օրենքին.
- Տիկիները** { Տիկիներ, ձեր և ձեր դուստրերի սրտերը հաճեցրեք՝ ամուսնացնելով ձեր դուստրերին քաջ մարդկանց ու հաղթող զինվորների հետ և ամուսնաբանքի դատապարտեցեք ձեր ամուսիններին, եթե նրանք աշխատանքի ու ծառայության անցնեն օտար ազգերի մոտ:

Եթե ձեր կողմից այսքան օգնություն լինի, ապա այն բավական կլինի հիմք դառնալու, որ Յայաստան աշխարհի երեսին երջանկությամբ փայլի հայ ազգը: Այնժամ խրախճանք կլինի հայոց մեջ, երևան կզան ոսկեբերան ճարտասաններ, քաջազանգուր առաջամարտիկներ և տիկիներ՝ բարձր պատվի արժանացած շնորհիվ իրենց որդիների արդարության՝ ոմանց անաչառ դատավորությամբ, ոմանց անհաղթելի զինվորությամբ,<sup>120</sup> ոմանց ուշիմությամբ ու հնարագիտությամբ, իրենց եղբայրներին ու մարդկանց հավատարիմ լինելով: Այնժամ կծագի առաքինության ու մաքրության փայլակը, և մեր ազգի մեջ ու Յայոց երկրի երեսին անշեջ հրով կայրվի մոլության ու չարության ախտը, հայրենի երկիրը կփայլի իր բնակիչներով ու առաքինի գործերով,<sup>121</sup> և օրհնյալ կլինի այդ ժամանակը:

Ինձ շատ ցանկալի կլիներ, եթե ինչ խորհուրդ ու հնար որ իմ մտքով անցնում էր, կարողանայի հասցնել իմ ողջ ազգի ականջին և նշածս բոլոր միջոցները հատկապես իմ լեզվով հաղորդեի ձեր լսելիքին՝ իմ շարադրած կարգադրության յուրաքանչյուր հոդվածին իրավունք տալով սրտահաճություն առաջ բերելու ամենքի սրտերում: Բայց որովհետև ոչ ինձ և ոչ էլ մարդու բնությամբ որևէ մեկի համար հնարավոր չէ, որ մարդու բերանը կարողանա ունակ լինել խոսելու մի ողջ ազգի ականջին, ուրեմն ես նախ՝ ազատություն և համարձակություն խնդրելով ձեզնից, այնուհետև առաջանում եմ շարադրելու այստեղ իմ մտքի արդյունքը՝ իմ ազգի բերան ծանրությունը թեթևացնելու հնարը և իբրև հիմք և հաստատություն՝ կազմելու մեր տունն ու բնակությունը, որ վա-

ղուց խիստ ավերված է, որ խախտված ու քայքայված է մեր նախկին ինքնագուլիս իշխանների խեղաթյուրման, անկարգ վարքով շեղվելու և արարմունքների պատճառով:

Եվ այսպես, պատրաստելով սա իբրև մի ծանր կացին՝ խորտակելու համար ստրկության լուծը և բնականորեն ազատագրելու ամեն մարդկային բնություն, ստեղծելով մի հնարագետ որոգայթ, որպեսզի դեպի ինքը քարշ տալով՝ կալանավորի բոլոր ծուլը, հոռի և վատթար մարդկանց, ես հավատում եմ, որ իմ շարադրությունն ընդունելի կլինի ընթերցողներիդ ականջին և կհամապատասխանի ձեր կամքին ու հաճությանը: Եվ այն ամենը, ինչ որ ես մտքիս մեջ ունեն վերևում ասված ծանրության համար հնար գտնելու, ահա այդ բոլորը, ինչ անհրաժեշտ է, շարադրում եմ այստեղ, բայց յուրաքանչյուր հոդվածի և նրա պատճառի մասին բացատրությունը գտնելու եք գրքիս երկրորդ հատորում, որ պարզորոշ կարող է ներկայանալ ձեր հայեցողյանը և ամեն մի ուշիմ մարդու մտքում հավաստել ասածիս բարությունը և իմ ազգի սրտում ցանկած սերմի բերքի քաղցրությունը, քանզի բոլոր խելամիտները շատ լավ կարող են գիտակցել, թե հայոց ողջ ազգն ինչ բերք կարող է քաղել այստեղ ցանվածից:

Կրկնելով հիշեցնում եմ մեր դիտապետների օգնության անհրաժեշտության մասին, որովհետև անչափ հարկավոր է, որ նրանք խստիվ կարգադրությամբ իրենց ժողովրդին պարտավորեցնեն յուրացնելու հայոց գրի ու լեզվի ընթերցումը, որպեսզի ամենքն էլ հմտավարժ լինեն ընթերցելու այս և արժանավոր մյուս բոլոր գրքերը: Ընթերցելու շնորհիվ իմ խորհուրդը կմտնի նրանց սիրտը, իսկ իմ հնարամիջոցը՝ նրանց միտքը, հույս տալով նրանց հետամուտ լինել փրկվելու դժնդակ ստրկությունից, որ գարշ ու աղտեղի է, քան բոլոր գարշատեսությունները,<sup>122</sup> և երկրի երեսին անմխիթար պատիժ է մարդու բնության նկատմամբ: Թեպետ տխուր է ինձ համար, որովհետև այժմ իմ ժամանակը չի բավարարում, որ այստեղ երկարորեն ու մանրամասն հիմնավորումով իմ ազգին բացատրություն տամ այն ամենի մասին, ինչ ունեն իմ մտքում այդ գաղափարի վերաբերմամբ, բայց աշխարհիկ ասացվածքի համեմատ՝ մեկն ավելի լավ է, քան ոչինչ չանելը, նաև մեծ հույս ունեն, որ Տերն արժանի կդարձնի և իմ կյանքին ժամանակ կշնորհի, որ այստեղ գրածներիս բոլորի բացատրությունը գրեմ երկրորդ հատոր գրքույկում, մանրամասն նկարագրությամբ այդ օրենքների մեջ գրի առնեմ իմ գրած ամեն մի հոդվածի հիմնավորումը և բացատրեմ ուրիշ շատ բաներ, որոնք անհրաժեշտ են հասարակաց բարօրության համար:<sup>123</sup> Կարճառոտ գրելու իմ թերության պատճառը հատկապես այն է, որ իմ վիճակն ինձ չէր խոստանում տևականորեն միշտ երկար ծանրանալ և իմ ժամանակը ծախսել միայն այս գործի վրա, որովհետև Տի-

րոջ շնորհիվ ես դարձա որդու և դուստրերի հայր,<sup>124</sup> բնակվելով օտար աշխարհում, չունենալով ոչ պաշտոն և ոչ էլ տարեկան ռոճիկ որևէ մեկից, հակառակը՝ ինձ անհրաժեշտ համարեցի հավաքել իմ ձեռքի գործի ու վաստակի պտուղը, որ նրանով բավարարեմ իմ և իմ ընտանիքի կարիքները: Գոհություն եմ հայտնում Տիրոջը, որ Աստծու բարությունն իմ հանդեպ երբեք չպակասեց, և նրանից եմ ակնկալում, որ մեր կյանքում հավիտյան կբավարարի մեր սրտի ու կարիքների ամեն փափագ: Իսկ այնքանը, որ հնարավոր գտա իմ ժամանակից ծախսելու այս նպատակով, չխնայեցի: Այդ ընթացքում իմ կարողությունն ու ժամանակը չներեցին անելու ավելին, քան այս է: Իմ այդ թերության համար ձեզնից հուսամ, որ ինձ ներող կլինեք:

Համայն հայերին ուղղված իմ խորհրդատվությունն ավարտի հասցնելուց հետո դառնամ և ասեմ հատկապես իմ հայրերին ու եղբայրներին, որ այն ամենը, ինչ վերևում ընդհանուրի համար ասացի, անհարժեշտ է, որ բոլորը՝ ամեն մեկն իր անձի նկատմամբ և իր տունը կարգուկանոնով կառավարելու հարցում պահպանեն կառավարելու օրենքն ու կարգը՝ հանուն իրենց ընտանիքների բարեկենցաղ կացության, որ ախորժելի է, քանզի ամեն մի փոքր տուն, ընտանիքի անդամներով ու սպասավորներով, եթե կարգադրությամբ է կառավարվում, այդ տունը խաղաղ ու հաստատուն կլինի, բնակիչներով՝ միմյանց սիրելի և սրտով՝ մխիթարող, նրանք երջանիկ պատվի կարժանանան, իսկ նրանց խղճմտանքն էլ մաքուր կլինի: Այդ մասնավոր ընտանիքի կառավարումը մի փոքրիկ ընտանիքի մեջ բնակության օրինակով իմ անձի վրա փորձել եմ և ոչ միայն ասում, այլև երդվելով հաստատում եմ ձեր մտքում, որ կարգով ու օրենքով տուն կառավարելուց, մանուկներ մեծացնելուց և սպասավոր ու աղախիններ պահելուց իմ կյանքի ողջ օրերի ընթացքում միշտ մնացի մխիթարված ու առանց կասկածանքի, սիրելի եղա իմ տանը բնակվող բոլոր մարդկանց սրտին, ոչ այնպես, ինչպես բազմիցս իմ աչքով տեսա և իմ ականջով լսեցի, որ որդիները ցանկացան հոր կյանքի վախճանը, որպեսզի ժառանգության իրավունքի ժամանակ ձեռք բերեն, ոչ էլ ընտանիքում գալթակողություն [նկատեցի] ամեն կարգի իրերի նկատմամբ, թե՛ սա իմն է, իսկ դա՛ քոնը, և կամ՝ քոնը շատ է, իմը՝ քիչ, բոլորն էլ ըստ կարգի ճանաչեցին այն ամենը՝ թե ունեցվածք, թե պատիվ և թե նախատինք, ինչ իրենցն է՝ թե հարկ և թե պատիվ, թե պատիժ և կամ պարգև: Քանի որ մի ռամիկ անձի միջոցով մի ամբողջ տուն կամ ընտանիք, առաջնորդվելով կանոնով ու կարգադրությամբ, կարող է վարել վայելուչ կյանք, ապա որքա՛ն ավելի լավ կարող է անել այդ մի ողջ ընդհանուր ազգ՝ ուշիմ մարդկանցով և միմյանց օգնական լինելով: Ի վերջո, այն, ինչ որ ես տեսա ուրիշ ազգերի մեջ, և այն քաղցրությունը, որ ես ճաշակեցի իմ տնից ու ընտանիքից,

հայտնեցի ձեզ, իսկ իմ ասածներին ի լրացում բարեսիրտ բնավորության տեր անձինք ամենքն էլ կարող եմ պատմել բազմապատիկ բարիքների հնարավորությունների մասին, որ ժամանակի կարծության պատճառով ես չկարողացա մանրամասնորեն գրել՝ ցույց տալով, թե որքա՛ն բարություն կա օրենքներով ու կարգադրությամբ կառավարելու մեջ:

Իսկ այժմ ավարտի եմ հասցնում ասելիքս և անցնում օրենքների շարադրմանը՝ հուսալով Տիրոջից, որ իմ հոգուն զորություն կտա, որպեսզի նրանք ևս շարադրեն մարդու բնությանը ներդաշն, ըստ մեր բանական հոգու հաճության:<sup>125</sup> Եվ Տերն ինքն է միայն օգնական իմ խոսքին և իմ ազգի միտքն առաջ մղող՝ ընթանալու համար ի գործ, ողջ լինելով Տիրոջով:

Երկու պատճառով էր, որ չէի կամենում հիշեցնել շարադրողիս անունը. նախ՝ որպեսզի տգետները չհայիոյեն, երկրորդ՝ որպեսզի իմաստուններն էլ չփառաբանեն: Բայց այն հանգամանքը, որ ոչ մի շարադրություն չի կարող լինել, մինչև որ չլինի որևէ շարադրող, այդ բանի համար էլ այս [գրքի] շարադրողս, ինչպես որ սկզբնավորության մեջ, հարկադրված եղա բացատրություն տալ: Թորգոմի ազգից հայորդիների մեջ փոքրավորներից մեկն եմ, Նախիջևանի գավառից, որ աշխարհի հյուսիսային կողմից 42-րդ աստիճանի վրա է,<sup>126</sup> բարձրագահ Մասիս լեռան ստորոտում, իսկ այժմ, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում, գտնվում եմ Կորմանդել օվկիանոսի ափին, նավահանգիստ Մադրաս մայրաքաղաքում:<sup>127</sup>

Նաև<sup>128</sup> ամենքիդ սրտերն ուրախացնելու, հավատը հաստատուն դարձնելու և սիրով քաջալերելու համար անհրաժեշտ եմ համարում ձեր մտքում փոքր-ինչ հիշեցնել [բաներ], որպեսզի արիանաք սասանումից, որին վաղ ժամանակից ենթակա եք դարձել, սակայն իմ վկայություններով ձեզ չեմ հեռացնում դեպի անցյալ ժամանակներն ու դարերը, այլ ներկայացնում եմ մեր կյանքի ժամանակ տեղի ունեցած անցքերը: Նախ և առաջ անդրադառնամ վրաց քաջ ազգին: Սկզբից մինչև հայոց թագավորության խոնարհվելը վրացիները մերթ թագավորությամբ և մերթ էլ հպատակ իշխանությամբ [պահպանեցին] Վրաց փոքր աշխարհը, որ համեմատելի է ոչ ավել, քան հայոց տասնհինգ նահանգներից երկուսի հետ, իրենց ազգի մեջ պահեցին ազատության պատիվը: Թեպետ ժամանակ առ ժամանակ նեղվեցին անօրեն բռնավորներից, մանավանդ բարբարոսներից կողոպտվեցին ու գերվեցին այնքան, որ երբեմն էլ իրենց փոքրիկ բնաշխարհը մի մասով ամայի գտան, բայց երբեք չսասանվեցին և չթուլացրին իրենց բանական հոգու զորությունը, արիացան և իրենց անձը գոհաբերեցին՝ պահպանելու համար իրենց ազատությունը, և պահեցին մինչև այսօր՝ շրջա-

պատված թշնամիներով, առանց որևէ մեկի օգնության:<sup>129</sup>

Աֆղանական ազգից, Ղանդահարի Միրվեհիս իշխանը, պարսից ազգի երջանիկ ժամանակը, երբ Սեֆյան դինաստիայի ժառանգական թագավորությունն էր, Ղանդահարից ելավ տասներկու հազար աղքատ զորքով, որի մեջ շատերը բոբիկ ուղքերով էին և թթամբած ծիերով, եկավ Սպահան քաղաքում կայմեջ արավ ութսուն հազարանոց պարսից զրահավոր զորքը, փակեց քաղաքի դարպասները և սննդի մուտքը, մինչև որ բյուրավոր մարդիկ սովամահ եղան, ու վերջում թագավորական քաղաքը հանձնվեց:<sup>130</sup> Իսկ երբ Պարսից աշխարհն ամբողջովին աֆղանների ձեռքին էր, Նադրդուլի գդակագործն<sup>131</sup> ապստամբեց հոր դեմ, սպանեց հորեղբորը, իրեն Շահթամազի պաշտոնին կարգեց, աֆղաններին քշեց Պարսից աշխարհից, ազատագրեց երկրի այն բաժինը, որին տիրել էին օսմանցիները, Պարսկաստանից դուրս գալով՝ մտավ Յնդկաստան, հաղթեց իրեն ընդդիմացողներին, անչափ հարստություն ձեռք բերեց և արիության համբավ, մինչև իսկ անվանվեց կայսր, այսինքն՝ շահնշահ, ընդամենը միայն քսան տարվա ժամանակամիջոցում:<sup>132</sup>

Բակտրիացիների ազգից Քարիմխանը, որը սկզբում զորությամբ ավելին չէր, քան Աղվանքի մելիք Յովսեփը, տիրապետեց պարսից ողջ Արաղ-Ատրպատական աշխարհին և հանգիստ ընթացքով վարեց իր կյանքը՝ որպես թագավոր բնական մահով հասնելով կենաց վախճանի:<sup>133</sup> Յեյդրայի անունով ոմն զինվոր, անձամբ քաջ, ջանք թափեց, մաքառեց, մինչև որ տեր դարձավ Մանսուր անվանված մի լայնատարած երկրի: Չորացավ զինվորներով, հարստացավ ունեցվածքով, փառավորվեց իշխանի փառքով՝ տեր դառնալով երկրի ու ժողովուրդների:<sup>134</sup>

Եվ ներկայումս խում ենք մի նոր բռնկման մասին, թե Վաշինգտոն անունով ոմն իմաստուն, բրիտանական ազգից, ծնված մեծբրիտանացիների հսկողության տակ գտնվող Ամերիկայում, ընդդիմանալով տերերին և բազմաքանակ զորք հավաքելով Ամերիկայի հասարակ ժողովրդից՝ ջանում է ու չարչարվում ձեռք բերել ազատություն և չենթարկվել որևէ մեկին: Թեպետ դեռ չի երևում, թե վերջը ինչ է լինելու, բայց ամերիկացիների սրտի ցանկությունը բնական է մարդու բնությանը, քանզի երկրի երեսին մարդուն տրված բարիքների մեջ ավելի քաղցր ոչինչ չկա, քան ազատությունը:<sup>135</sup>

Վերևում հիշված թե ազատությունները, թե տիրապետությունները և թե թագավորությունները բոլորն էլ փոքրից և աղքատությունից են սկսվել, բացի վրացիներից, որը ժառանգությամբ է հասել և արիությանը պահպանվել: Ուրեմն մի ամբողջ ազգի համար անհնարին չէ և ոչ էլ խիստ դժվարին իրենց փառքն ու ազատությունը զարդարել օրենքով ու կարգադրությամբ, ջանալ ազատություն ձեռք բերելու բռնա-

կալներից, իրենց հայրենիքն ազատագրել բռնակալների լծից: Թող իմ խորհուրդը մեր բռնակալների մտքում թշնամական և անիրավացի չթվա, քանզի մեր Կարգադրության առաջին հոդվածը հիշեցնում<sup>136</sup> է, որ մենք տերն ենք լինելու միմիայն մեր հայրենիքի և թույլ չենք տալու, որ ուրիշների երկրից մի քայլաչափ իսկ ավելանա՝ մեզ և մեզնից էլ պակասի ուրիշների համար: Յետևապես ջանալ և չարչարանք թափել ստանալու համար այն, որ հայոց սեփական ժառանգությունն է, անարդարություն չէ, այլ արդարություն:

Ավարտելով խոսքս, իմ գրածն իր բոլոր մասերով թողնելով խելացի և իմաստուն մարդկանց ժրաջան աշխատասիրությանը, որպեսզի սրանից ավելին՝ իմ ասածի պակասությունները նրանք լրացնեն, անցնում եմ Կարգադրության սահմաններին, որոնք հաստատուն հիմք են մեր ազգի փրկության համար և միջոց՝ բարվոք կառավարելու հայոց ազգն ու աշխարհը:



## ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԳ

### ՆՇԱՎԱԿ

*Կարգադրություն հայոց՝ Հայաստանյայց աշխարհի կառավարման համար*

#### ՔԼՈՒԽ 1

**Տ**անաչեցինք ու մեր ճանաչածը հաստատեցինք, որ մեր Աղվանից աշխարհից, որտեղից արևն է ծագում, և Ալանաց դռնից<sup>2</sup> դեպի հարավի կողմը, մինչև մեր Կորճկահայք աշխարհը՝<sup>3</sup> Տավրոս լեռան ստորոտում, այնտեղից էլ դեպի արևմուտք, մինչև Մեծ Անտիոքը՝ Միջերկրական ծովի ափին, այնուհետև այստեղից հյուսիս, մինչև Մամեստիա,<sup>4</sup> և այդտեղից դեպի արևմուտք, մինչև Կիլիկիա ու մեր Երրորդ Յայք աշխարհը, Կիլիկիայից էլ դեպի հյուսիս, մինչև Լեոպոնտոս՝<sup>5</sup> Սև ծովի ափին, ապա այդտեղից դեպի արևելահյուսիս, մինչև մեր Տայք աշխարհը, իսկ Տայքից էլ դեպի արևելք, մինչև մեր Աղվանք աշխարհը և Ալանաց դուռը, - դարձյալ՝ արևմտյան կողմից, Միջերկրականի ծովափի Մեծ Անտիոքից դեպի արևելք, այնտեղ, ուր ավարտվում է Տավրոս լեռը, մինչև Կասպից ծովի ափը, Գիլանի սահմանը, իսկ հարավային կողմից՝ Տավրոս լեռան ստորոտից դեպի հյուսիս, այն [տարածքը], որ ընկած է Սուլթանիայի արևելյան կողմում, մինչև Ալանաց դուռ, և այն, որ հարավային կողմից Փոքր Աղբակից տարածվում է մինչև մեր Տայք աշխարհը, նաև այն, որ արևմտյան կողմում Մեծ Անտիոքից դեպի արևմտահյուսիս մինչև Լեոպոնտոս և Լեոպոնտոսից էլ արևելահյուսիս է, մինչև մեր Տայք աշխարհը, իսկ Տայքից էլ դեպի արևելք՝ մինչև Ալանաց դուռ, մինչև Կասպից ծովի ափը, - այս ամբողջ աշխարհի տարածքը լեռ ու բլուրներով, անտառներով, ծովերով, լճակներով, գետերով, աղբյուրներով, քաղաքներով, գավառներով, դաշտերով, գյուղերով, տներով, բնակչությամբ և այն ամենով, որ

կա երկրի երեսին կամ ծովի խորքում կամ էլ գետերի ու աղբյուրների հոսանքի մեջ, թե՛ մարդկային էակ լինի և թե՛ անասուն, կենդանիների, գազանների, սողունների, թռչունների հետ, ամբողջ երկիրը բոլոր կենդանիների և ծառերի բերք ու բարիքով պիտի լինի ու մնա անուճով Յայաստան երկիր, իսկ այնտեղ բնակվողներն իրենց մարդկային վիճակով՝ հայեր: Յայոց երկրի երեսին կամ ծովի խորքում եղած ամեն անասուն ու կենդանի բոլորը միասին ժառանգությունը պիտի լինեն հայ ազգի: Մի քայլաչափ իսկ չպիտի ավելանա կամ մի քայլաչափ պակասի երկրից: Այդտեղ մինչև հավիտյան պիտի պահպանվի Յայոց տուճը՝ Յայաստանյայց օրենքով:

#### ՔԼՈՒԽ 2

Յայաստան երկրում ծնված ամեն մարդկային բնություն պատիվ ունի իրեն անվանելու հայ. ինչ ազգի և դավանության էլ նա պատկանի՝ պարտավոր է խոսել և կարդալ հայաբառ և հայատառ:

#### ՔԼՈՒԽ 3

Յուրաքանչյուր մարդկային բնություն թե՛ հայ, և թե՛ այլ ազգից՝ ծնված Յայաստան աշխարհում և կամ օտար երկրից պանդխտած Յայաստան, թե՛ արական և թե՛ իգական սեռին պատկանող, ամենքն էլ ապրելու են համահավասար ու ազատ են լինելու իրենց բոլոր գործերում. ոչ ոք ոչ մեկի վրա իշխելու իրավունք չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապատասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Յայոց օրենքի:

#### ՔԼՈՒԽ 4

Մեզ համար պատվելի է Յայաստանյայց սուրբ եկեղեցու աստվածապաշտության կարգը, որը մեզ է ավանդվել մեր սուրբ առաքյալների Թադեոսի և Բարդուղիմեոսի կողմից՝ մինչև այսօր շառավիղվող հաջորդությամբ. նրա ավանդն է մեզ՝ Յայոց հայրապետության ծայրագույն աթոռը՝ լուսակառույց Սուրբ Էջմիածին եկեղեցին Վաղարշապատում՝ գլխավորությամբ Յայոց մաքրագարդ Յայրապետի:

#### ՔԼՈՒԽ 5

Յայոց երկրի երեսին բնակվող ամեն մի մարդկային բնություն ներկայումս իր Աստծուն պաշտելու ինչ սովորություն որ ունի՝ նույն կերպ էլ շարունակելու է հավատարիմ մնալ իր աստվածապաշտության հավատքին. նրան արգելելու իրավունք ոչ ոք չունի, ով էլ որ նա լինի:

#### ՔԼՈՒԽ 6

Որ հայը որ ուրանա քրիստոնեական իր հավատքը, որով մկրտված ու կնքված լինի Յայաստանյայց եկեղեցում և կոչված քրիստոնյա,

մահվան է դատապարտվելու, իսկ նրա ունեցվածքն ըստ օրենքի անպակաս ու անթերի ժառանգություն է մնալու նրա քրիստոնյա հաջորդներին:

**ԳԼՈՒԽ 7**

Հայաստան աշխարհը պետք է չափվի, և ոչ մի առանձին անձ չի կարող ստանալ մի քայլաչափ, մինչև որ Հայոց տնից հողի զննման փաստաթղթով նրան տրված չլինի համապատասխան չափերով՝ լայնությամբ ու երկարությամբ և այլն:

**ԳԼՈՒԽ 8**

Ամեն մարդկային, բնություն, մկրտված և ի Քրիստոս հավատացյալ հայ ազգից ու ժողովրդից, կարող է հող զնել իր ժառանգության համար և վաճառել իր հողը նույն ազգությամբ ու դավանությամբ որևէ մարդու՝ այն գիտակցությամբ, որ ամեն բանի համար, ինչ որ գոյանա հողի բերքից, Հայոց տանը պետք է վճարել հարկ, մաքս, հաս, բաժ<sup>6</sup> և այլն՝ ըստ Հայոց օրենքի:

**ԳԼՈՒԽ 9**

Անհավատ՝ ամեն մարդկային բնություն, ծնված Հայոց երկրի երեսին և կամ թե օտար աշխարհում ծնված ու Հայաստան պանդխտած, կարող է վարձով ժամանակավոր ձեռք բերել հող, տուն և բնակություն. նրան չի խոստացվում ոչ ժառանգություն զնելու և ոչ էլ այն վաճառելու իրավունք, բայց նա կարող է ունենալ վարձու հող, տուն՝ հատուցելով իր բնակության տան վարձը տան տիրոջը, նաև հարկ, մաքս, հաս և այլն՝ Հայոց տանը:

**ԳԼՈՒԽ 10**

Հայոց երկրի երեսին ամեն մարդկային բնություն՝ թե ի Քրիստոս հավատացյալ և թե անհավատ, ազատորեն միշտ տեր և թագավոր է մնալու իր ունեցվածքի նկատմամբ՝ միայն հնազանդվելով Հայոց օրենքին և ըստ օրենքի հարկ, մաքս, հաս և այլն հատուցելով Հայոց տանը:

**ԳԼՈՒԽ 11**

Երկիրն առատորեն վճարելու է Հայոց Հայրապետի Սուրբ Աթոռի իշխանությանը, նաև վանքերից յուրաքանչյուրին ու ապաշխարողներին,<sup>8</sup> որպեսզի ազատորեն վայելեն՝ կախում չունենալով մաքսից, հարկից ու հասից, որպեսզի չպակասեն մեր կրոնավորների կերակուրն ու զգեստը, նրանք երբեք ինչ-ինչ բաների կարիք չզգան ու իրենց ժամանակը չծախսեն իրենց անձնական պետքերը հոգալու համար, այլ միշտ մնան իրենց աստիճանին պատշաճ և մեզ համար հա-

րաժամ բարեխոս լինեն Տիրոջ մոտ, որպեսզի ների մեր սխալներն ու հանցանքները:

**ԳԼՈՒԽ 12**

Ամենայն Հայոց ծայրագույն Հայրապետը բոլոր եպիսկոպոսներով հանդերձ իրենց միջից ընտրելու են մի արքեպիսկոպոսի և իրենց փոխանորդության թուղթն են տալու նրան՝ Հայոց տանը երեք տարի ժամանակով [զբաղեցնելու] տանուտերության պաշտոն. և նա ունենալու է երկու ծայն:

**Օրինակ փոխանորդության Հայոց Հայրապետի**

**ԳԼՈՒԽ 13**

Հիսուս Քրիստոսի ծառա և Հայաստանյայց ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցու ամենայն Հայոց ծայրագույն Հայրապետ Մարտիրոս Քահանայապետը բոլոր եպիսկոպոսների հետ միաբան ընտրեցինք մեր եղբայրակից, Աղծնիքի արքեպիսկոպոս տեր Սեդրեստրոսին և երեք տարի ժամանակով նրան տվեցինք մեր փոխանորդության իշխանությունը, որպեսզի փառավոր տանուտերերի հետ փառք ու պատվով բազմի Հայոց տան բարձր ու բարեկարգ գահին, ազատորեն պաշտոն տա՝ ընդունի Կարգադրության օրենքներ և Հայոց օրենքի համաձայն հրաման արձակի՝ ուղղված Հայաստանյայց երկրի երեսին ամենայն մարդկային բնության, իսկ ամեն հրաման, ինչ որ Հայոց տան բարձր ու բարեկարգ գահից և մեր փոխանորդ, արքեպիսկոպոս տեր Սեդրեստոսի կողմից ստորագրված լինի, մեզ համար ընդունելի պիտի լինի և մեզնից դիտվի որպես անթերի ու աներկբայելի կամք ու հրաման:

Գրվեց սրբակառույց Սուրբ աթոռ Էջմիածնում, այսինչ օրը, դեկտեմբեր ամսի 10-ին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

- |  |                                 |    |
|--|---------------------------------|----|
| Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:                          | Մարտիրոս Հայրապետ ամենայն Հայոց | }○ |
|  | Սիմեոն արքեպիսկոպոս Փայտակարանի | }○ |
| Սիմեոն արքեպիսկոպոս Վասպուրականի, գրագիր Սուրբ աթոռ Էջմիածնի <sup>10</sup> | Բաղրամ արքեպիսկոպոս Արարատյան   | }○ |
|  | Մարտիրոս արքեպիսկոպոս Ուտիքի    | }○ |

Կարապետ արքեպիսկոպոս  
Կորճկահայքի, աթոռակալ  
Սուրբ Էջմիածնի

- |   |   |                                       |   |   |
|---|---|---------------------------------------|---|---|
| } | ○ | Վարդանես արքեպիսկոպոս<br>Տուրուբերանի | } | ○ |
|   |   | Մանուել արքեպիսկոպոս<br>Երկրորդ Հայքի | } | ○ |
|   |   | Շմավոն արքեպիսկոպոս<br>Գուգարքի       | } | ○ |

**ԳԼՈՒԽ 14**

Հայոց աշխարհի յուրաքանչյուր գավառից, որ ունենա մինչև տասներկու հազար տուն,<sup>11</sup> բոլորի կամքի ու հաճության համաձայն տղամարդկանց միջից ամեն գյուղից պետք է ընտրել ծնունդով Հայաստանից հեզ ու խոնարհ մի մարդ՝ Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությամբ ի Քրիստոս հավատացյալ հայ ազգից: Այս ընտրությամբ քանի մարդ որ գավառից ընտրված լինի՝ նրանց վրա վիճակ պետք է զգեն, որ ջոկվեն միայն երկու մարդ: Որ երկու տղամարդկանց որ ընկնի վիճակը՝ ողջ գյուղերի բոլոր գյուղապետները միաբան ստորագրելով՝ փոխանորդության թուղթ պետք է տան այդ երկու տղամարդ անծանց՝ երեք տարի ժամանակով, որպեսզի այդ երկու ընտրված մարդիկ իշխանությամբ ու տանուտերությամբ նստեն Հայոց տան աթոռին, փոխանորդը լինեն բոլոր տասներկու հազար տան, իսկ սրանք Հայոց տնից իրենց փոխանորդների ստորագրությամբ հրաման տեսնելու դեպքում հնազանդվելով՝ պետք է կատարման հասցեն Հայոց տան բոլոր հրամանները: Փոխանորդները յուրաքանչյուր տնից տարեկան պետք է ստանան կես արծաթի դահեկան՝ տների կարողությամբ համապատասխան, որպեսզի այդ վեց հազար դահեկանը հատուցում լինի երկու փոխանորդների ծախս ու կարիքի, այնպես որ նրանք ապահով լինեն ծախսերից՝ իրենց փոխանորդության ժամանակը պահելով ազատ՝ ի խորհուրդ և ի գործ իրենց ժողովրդի բարօրության:

Երեք տարվա ժամկետը լրանալուց հետո ժողովրդի կամքն է՝ եթե կամենան, կարող են հաստատել նույն մարդկանց, որ երեք տարով կրկին մնան փոխանորդ, կամ կարող են նրանցից վերցնել պաշտոնը և տալ ուրիշ ոմանց՝ վերևում սահմանված կարգի օրինակով: Իսկ այս ընտրությունը պետք է սկսվի դեկտեմբեր ամսին և ընտրվածներին հաստատի, որպեսզի հունվարի առաջին օրը նրանց ներկայացնեն Հայոց տուն, այնպես որ պաշտոնի անցնեն տարվա սկզբին, այսինքն՝ հունվարի 6-ին:

Այս կարգով հավաքելով փոխանորդներին, քանի մարդ որ լինի հայոց ազգից՝ յուրաքանչյուր երկու փոխանորդից մեկը հավասարի

կարգով պետք է ընտրվի Հայոց տան տանուտեր, իսկ մյուսը՝ պաշտոնատար Հայոց տնից:

**Օրինակ տասներկու հազար տների փոխանորդությունների**

**ԳԼՈՒԽ 15**

Թող հայտնի լինի բոլորին, որ մենք՝ Վասպուրական աշխարհի գյուղերի ներքոստորագրյալ բոլոր քյոխվաներս, ծերակուտականների և գավառապետ իշխանավորների հետ Հայոց օրենքով մեր միջից ընտրեցինք երկու մարդու, այն է՝ Հեղվարդ գյուղից՝ տիար Մանասեին և Կարփի գյուղից՝ տիար Բրաբիոնին, մեր կամքով ու համաձայնությամբ երեք տարի ժամանակով մեր փոխանորդության իրավասությունը<sup>12</sup> սովեցինք տիարք Մանասեին և Բրաբիոնին, որպեսզի սրանից մեկը մյուս փառավոր տանուտերերի հետ փառք ու պատվով բազմի Հայոց տան բարձր ու բարեկարգ գահին, ազատորեն պաշտոն տա,<sup>13</sup> ընդունի Կարգադրության օրենքներ և տանուտերերի հետ միասին Հայոց օրենքի համաձայն հրաման արձակի՝ [ուղղված] Հայաստանյայց երկրի երեսին ամենայն մարդկային բնության, իսկ ամեն հրաման, ինչ որ Հայոց տան բարձր ու բարեկարգ գահից և մեր փոխանորդների կողմից հաստատված հրապարակվի, մեզ համար ընդունելի պիտի լինի և մեզնից դիտվի որպես կամք ու հրաման, ու մենք ողջ ժողովրդով անքերի ու առանց պատրվակ բերելու պիտի ի կատար ածենք հրամայվածը:

- |  |   |   |   |   |
|--|---|---|---|---|
| Վկայում ենք, որ ստորագրեցին,<br>կնքեցին և հանձնեցին: | } | Դանիել իշխան Խոշար<br>քաղաքի                | } | ○ |
| Բաղդամ Մարաշեցի                                      | } | Մանասե գավառապետ<br>Բզնունյաց <sup>14</sup> | } | ○ |
| Միքայել Մեղրեցի                                      | } | Գրիգոր քյոխվա Ուտիքի                        | } | ○ |
| Սարգիս Հեղվարդեցի                                    | } |   |   | ○ |

**ԳԼՈՒԽ 16**

Հայոց տանուտերերից և հայոց հայրապետության եպիսկոպոս փոխանորդից է ընտրվում, ընդունվում ու հաստատվում Հայոց կարգադրության օրենքը. այն, ինչ որ վերևում են ասել, և ինչ որ ստորև են ասելու՝ համաձայն սրա է ընդունելի դառնում՝ ըստ հայոց ողջ ազգի կամքի ու հաճության, սրանով են բոլոր հայերը հանդես գալիս որպես մի հոտ ու մի կամք, և սրա օրենքներն են նրանց վրա հովիվ:

ՉԼՈՒԽ 17

Օրենքի որևէ հոդված ընտրելիս եթե որևիցե մեկը հակառակվի իր ընկերոջ կամքին՝ վիճելով, հակաճառելով կամ հավաստի համարելով ու արդարացնելով, ապա հակառակվողը պետք է պարտավորություն ստանձնի ժողովի օրը մինչև երեք անգամ ազատորեն ընդդիմանալ և պատճառաբանել իր միտքը, իսկ չորրորդ անգամ [կայացած] ժողովում պիտի հաշվեն տանուտերերի թիվը՝ «այո» կողմը և «ոչ» կողմը. որ կողմի կամեցողների թիվը որ շատ լինի, նույնիսկ միայն մեկ բերանով ավելի, քան թե մյուսը, պետք է հաստատեն ավել մարդկանց կամքը, իսկ ավելի պակասներն առանց անարգանքի ու նախանձի պետք է համաձայնեն ու միաբան ընդունեն արդարությունը և նույնը հաստատեն օրենքի մեջ: Միայն Հայոց Հայրապետը և կամ նրա եպիսկոպոս փոխանորդը, նաև հայոց նախարարը հաշվվում են երկուական ձայն՝ իբրև երկուական անձի կամք, և ունեն երկուական մարդու պատիվ ու զորություն, քանզի նրանց կամքը հաշվվում է երկուական, այսինքն՝ կամքերի թվով թե Հայրապետը, թե նախարարը հաշվվում են երկու կամք՝ Հայրապետինը, երկու՝ նախարարինը, մնացած տանուտերերից յուրաքանչյուրինը՝ մեկական:

ՉԼՈՒԽ 18

Թե նախարարի, թե դատավորի և թե խորհրդակցի իշխանության ամեն պաշտոն, զինվորության, դպրության, զրազրության և առհասարակ կառավարության ամեն կարգ տրվում է Հայոց տան և տանուտերերի կողմից, տվյալ պաշտոնը վարելու իշխանության վերաբերյալ պաշտոնական հրամանը<sup>15</sup> ևս Հայոց տան և տանուտերերի կողմից է տրվում՝ համաձայն օրենքի:

ՉԼՈՒԽ 19

Հայոց ողջ աշխարհից որքան փոխանորդ որ լինի՝ նրանց կեսը, այսինքն՝ երկու մարդուց մեկը, մտնելու է տանուտերական կարգի մեջ, իսկ մյուս մեկն անցնելու է իշխանության պաշտոնի:

ՉԼՈՒԽ 20

Բոլոր փոխանորդների միջից նախարարի պաշտոնի համար<sup>16</sup> Հայոց տան կողմից ընտրվելու է մի մարդ՝ պատվի ու զավառի տեր, բուն հայ ազգից, Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրան տրվելու է նախարարի պաշտոնի հրաման՝ ըստ օրինակի նմանության<sup>17</sup>:

ՉԼՈՒԽ 21

Բոլոր փոխանորդների միջից հայոց նախարարի խորհրդակիցներ

լինելու համար<sup>18</sup> : Հայոց տան կողմից ընտրվելու են տասներկու մարդ՝ բուն հայ ազգից, պատվի և զավառի տեր, Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից նրանց տրվելու է իրենց կյանքի տարիների ողջ ժամանակաընթացքում երկրորդ, երրորդ աստիճանից մինչև տասներեքերորդ աստիճանի խորհրդակից լինելու պաշտոնի հրաման, իսկ նրանց պաշտոնավարության հրամանը պիտի լինի ըստ օրենքի, ինչպես օրինակն է:<sup>19</sup>

ՉԼՈՒԽ 22

Բոլոր փոխանորդների միջից բարձրագույն դատավորությամբ<sup>20</sup> համար Հայոց տան կողմից ընտրվելու են քսանհինգ մարդ՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ հեզ ու բարեպաշտ մարդիկ, և Հայոց տնից երեք տարվա ժամանակով նրանց տրվելու է մեկ մարդուն՝ գլխավոր դատավորի, իսկ քսանչորս մարդուն՝ դատավոր լինելու պաշտոնավարության հրաման: Հրամանը՝ ըստ օրինակի նմանության:<sup>22</sup>

ՉԼՈՒԽ 23

Բոլոր փոխանորդների միջից Հայոց տան կողմից ընտրվելու են երեսունվեց մարդ՝ բուն հայ ազգից, Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, դպրության և հռետորական արվեստի մեջ կրթված ու հմուտ օրենքին, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրանց տրվելու է պաշտոնավարության հրաման՝

18 պաշտոն՝ Հայոց տանը,

12 պաշտոն՝ բարձրագույն դատաստանի պալատում,

6 պաշտոն՝ նախարարի գաղտնի խորհրդարանում:

Նրանց պաշտոնի հրամանը՝ ըստ օրինակի:<sup>23</sup>

ՉԼՈՒԽ 24

Բոլոր փոխանորդների միջից սպարապետության համար Հայոց տան կողմից ընտրվելու են ինը մարդ՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ: Դրանցից երեքը համարվելու են առաջին, երկրորդ և երրորդ սպարապետ՝ անվանվելով կարմիր սպարապետ, կապույտ սպարապետ և դեղին սպարապետ,<sup>24</sup> այնպես որ երեք անձերից յուրաքանչյուրինը համարվի միևնույն [կարգի] պաշտոն, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրանց տրվելու է պաշտոնավարության հրաման՝ ըստ օրինակի նմանության:<sup>25</sup>

ՉԼՈՒԽ 25

Բոլոր փոխանորդների միջից ասպետության համար Հայոց տնից

ընտրվելու են ինը մարդ՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ: [Շարունակությունը] նույնը, ինչպես 24-րդ հոդվածում է: Հրամանը՝ ինչպես օրինակը:<sup>26</sup>

#### ԳԼՈՒԽ 26

Բոլոր փոխանորդների միջից հրաձգության զորագլխության համար Հայոց տան կողմից ընտրվելու են ինը մարդ՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ: [Շարունակությունը] նույնը, ինչ 24-րդ հոդվածում է: Հրամանը՝ ինչպես օրինակը:<sup>27</sup>

#### ԳԼՈՒԽ 27

Բոլոր փոխանորդների միջից ներքոհիշյալ պաշտոնների համար Հայոց տան կողմից ընտրվելու են քսանյոթ մարդ՝ բուն հայ ազգից ու Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից երեք տարի ժամանակով յուրաքանչյուրին տրվելու է պաշտոնավարության հրաման՝ համաձայն օրինակների:<sup>28</sup>

3 մարդ պետության լրտեսի պաշտոնի համար՝

առաջին, երկրորդ և երրորդ,

3 մարդ գինապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ վառողապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ կառապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ վրանապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ կերակրապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ գանձապետության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ երկրաչափության պաշտոնի համար, ինչպես վերևինը,

3 մարդ տկարների և աղքատների պետի պաշտոնի համար, ինչպես վերևինը:

#### ԳԼՈՒԽ 28

Բոլոր փոխանորդների միջից քաղաքներում կառավարելու բարձրագույն իշխանության համար Հայոց տան կողմից ընտրվելու են վաթսուներեք մարդ՝ բուն հայ ազգից ու Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրանց տրվելու է պաշտոնավարության հրաման՝ ըստ օրինակի նմանությամբ:<sup>29</sup>

#### ԳԼՈՒԽ 29

Բոլոր փոխանորդների միջից գլխավոր դատավորության համար Հայոց տան կողմից ընտրվելու են վաթսուներեք մարդ՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից նրանց տրվելու է գլխավոր դատավորի պաշտոնավարության հրաման՝ երեք

տարի ժամանակով յուրաքանչյուր քաղաքում բազմելու աթոռին և դատելու ժողովրդին՝ ըստ Հայաստանյայց օրենքի: Նրանց հրամանը՝ ըստ օրինակի նմանությամբ:<sup>30</sup>

#### ԳԼՈՒԽ 30

Բոլոր փոխանորդների միջից հազարապետության համար Հայոց տան կողմից ընտրվելու են իննսուներեք մարդ՝ բուն հայ ազգից ու Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից ըստ օրինակի նմանությամբ<sup>31</sup> նրանց տրվելու է պաշտոնավարության հրաման՝ հազարապետ լինելու իրենց կյանքի ողջ ընթացքում:

#### ԳԼՈՒԽ 31

Հայոց տան մեջ, տանուտերերի ատյանի առաջ, հարկերի, մաքսերի, հասերի, բաժերի, տոկոսների<sup>32</sup> և այլնի հետ կապված՝ դյուրության, թեթևության ու հեշտության, հասարակ ժողովրդի բարօրության պաշտպանության համար բոլոր փոխանորդների միջից Հայոց տան կողմից ընտրվելու են երեք մարդ՝ բուն հայ ազգից ու Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրանց տրվելու է պաշտոնավարության հրաման՝ ըստ օրինակի նմանությամբ:<sup>33</sup>

#### ԳԼՈՒԽ 32

Բոլոր փոխանորդների միջից ռոճկահատուցման պաշտոնավարողների նկատմամբ աչալուրջ լինելու նպատակով Հայոց տան կողմից ընտրվելու են երեք մարդ, և նրանց տրվելու է ռոճկապետության պաշտոնի հրաման՝ ըստ օրինակի նմանությամբ:<sup>34</sup>

#### ԳԼՈՒԽ 33

Ամեն մի բարձրագույն պաշտոն, հատկապես տանուտերերի, նախարարի, դատավորի, իշխանի, սպարապետի, ասպետի՝ խորհրդակիցներով, դպիրներով, ատենաբաններով և բոլոր կարգի զորագլուխներով հանդերձ, որևէ մեկը չի կարող ստանալ, բացի նրանցից, որոնք բուն հայ ազգից են, Հայաստանյայց սեփական ծնունդ, մկրտված ի Քրիստոս՝ Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությամբ:

#### ԳԼՈՒԽ 34

Ամեն մի պաշտոնյա մինչև իր պաշտոնի հրամանն ստանալը պարտավոր է երդվել Սուրբ Կտակարանի վրա ու խոստովանել իր՝ բուն հայ ազգից և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ քրիստոնյա լինելը՝ խոստանալով նաև, որ ինքը միշտ հավատարիմ է մնալու Հայոց



տանը և ջատագովն է լինելու Հայաստանյայց կարգադրության օրենքի:

**ԳԼՈՒԽ 35**

Բոլոր փոխանորդների մեջ, թե եկեղեցական, թե աշխարհական, քանի հոգի որ լինեն, նրանց վրա վիճակ են գցելու Հայաստանյայց հայր անունով՝ միայն մեկ [տեղի համար], և վիճակն ում որ ելնի՝ բոլոր փոխանորդներն այդ մարդուն երեք օր ժամանակով տալու են իշխանության հրաման՝ Հայաստանյայց հայր պատվավոր կոչմամբ, որպեսզի նա իրավասություն ունենա երեք անձանց երգվեցնելու և նրանց տալու տանուտերության իշխանություն, եթե նրանց ձեռքին փոխանորդության թուղթ լինի հայ ազգից ու աշխարհից:

**Հայոց բոլոր տեղակալներից ու փոխանորդներից հրամանի օրինակ՝ ուղղված Հայաստանյայց հորը**

**ԳԼՈՒԽ 36**

Ամենակարող Աստծու շնորհոք և ամենայն հայ ազգի փոխանորդությամբ, մենք՝ ներքոստորագրյալներս, բոլոր հայերի անունից մեր բանական հոգու զորությամբ և ազատությամբ վիճակ գցեցինք, և Սուրբ Հոգու շնորհով վիճակը ելավ Մաղաքիայի անունով՝ իբրև Հայոց տան իշխանության ծնող, և միահամուռ ընդունեցինք ու իրավասություն տվեցինք Հայաստանյայց հայր տիար Մաղաքիային՝ երեք օր ժամանակով լինելու և մնալու հայրական խնամք տանող ու ծնող իշխանության, միմիայն երեք անձանց իշխանության պաշտոն տվող: Եվ դու իրավասու ես Սուրբ Կտակարանի վրա երգվեցնելու նույն պաշտոնատարներին: Քո առաջ երգվողը դիտվելու է որպես մեր առաջ երգվող, պաշտոնի քո հրամանը համարվելու է իբրև հրաման Հայոց բարձր գահից ու բարեկարգ տնից և մեզ՝ տեղակալներիս ու փոխանորդներիս համար միահամուռ ընդունելի:

Գրվեց հայոց միաբան տեղակալների կողմից, Հայաստանյայց երկրի երեսին, դեկտեմբեր ամսի 25-ին, մեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

- |   |                            |    |
|---|----------------------------|----|
| Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին: | Սանուել փոխանորդ Նախիջևանի | }○ |
| Մ. . . . Դ  | Չաքարիա փոխանորդ Տայքի     | }○ |
| Ա. . . . Դ  |                            |    |
| Կ. . . . Վ  | Եղիազար փոխանորդ Սղվանից   | }○ |

**ԳԼՈՒԽ 37**

Հարկավոր է, որ երգվողը երգվի իշխանի ատյանի և մեկ գրագրի առաջ՝ իր աջ ձեռքը դնելով Սուրբ Կտակարանի վրա, իսկ ձախ ձեռքը՝ իր կրծքի վրա և իր բերանով պարզ խոսքով խոստովանի այն, ինչով որ երգվելու է, խոստանա այն, ինչ կատարելու է: Հետո պետք է խոնարհվի, համբուրի Կտակարանը և ստորագրի թուղթը, որի վրա շարադրված են լինելու իր բերանով [ասված] երգման խոսքերը: Այդպես է լինելու երգման կատարումը:

**Հայրապետի և կամ նրա փոխանորդի երգման օրինակ**

**ԳԼՈՒԽ 38**

Ես՝ Սեղբեստրոսս, Աստծու շնորհով Աղձնիքի արքեպիսկոպոս, Աստծու առաջ և ձեր առաջ, ո՛վ եղբայրներ, խոստովանում եմ և երգվում այս Սուրբ Կտակարանի վրա, որ բուն հայ ազգի ծնունդ եմ, Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությամբ ի Ք, հստոս հավատացյալ, Աստծու շնորհով արքեպիսկոպոս Աղձնիքի, փոխանորդ ծայրագույն Հայրապետի և ամենայն հայոց իմ եղբայրակից եպիսկոպոսների, Աստծու և ձեր առաջ խոստանում եմ, որ միշտ հաստատուն պիտի մնամ այս հավատիս ու իմ ազգի հանդեպ սիրուն և իմ կյանքի բոլոր օրերին հնազանդ՝ Հայոց տան Կարգադրության օրենքին:

Վկայում ենք, որ երգվեց ու ստորագրեց: Սեղբեստրոս արքեպիսկոպոս }○

- Շնավուն իշխան
- Մաղաքիա գրագիր

**Տանուտերերի երգման օրինակ**

**ԳԼՈՒԽ 39**

Ես՝ Միքայելս Սեղրի գյուղից, Աստծու և ձեր առաջ, ո՛վ եղբայրներ, խոստովանում եմ և երգվում այս Սուրբ Կտակարանի վրա, որ բուն հայ ազգի ծնունդ եմ, Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությամբ ի Քրիստոս հավատացյալ և փոխանորդ Նախիջևան աշխարհի հայերի: Եղբայրներ, խոստանում եմ Աստծու և ձեր առաջ, որ միշտ հաստատուն պիտի մնամ այս հավատիս ու իմ ազգի հանդեպ սիրուն և իմ կյանքի բոլոր օրերին հնազանդ՝ Հայոց տան Կարգադրության օրենքին:

Վկայում ենք, որ երդվեց ու ստորագրեց:  
 Շնավոն իշխան   
 Մաղաքիա գրագիր

Միքայել Սեդրեցի

**Չայոց տնից առաջին պաշտոնատարի հրամանի օրինակը, որ պետք է արձակվի Չայաստանյայց հայրախնամ հոր կողմից**

**ԳԼՈՒԽ 40**

Տեսնելով սրբազան տեր, Ամենայն Չայոց Չայրապետ Մարտիրոսի և սրբակրոն եպիսկոպոսների օրհնության և տեղակալության պաշտոնաթուղթը քո փոխանորդության ընդունելի լինելու մասին, որով նրանք քեզ իշխանություն են տալիս իրենց տեղակալության պաշտոնում, ապա և մեր ատյանի առաջ Սուրբ Կտակարանի վրա քեզ երդվեցնելով՝ մենք մտովի համոզվեցինք քո հավատարիմ լինելու մեջ և այդպիսի արժանավորության համար քեզ՝ սրբակրոն տեր Սեդրեստրոս Աղծնյաց արքեպիսկոպոսիդ, երեք տարի ժամանակով տվեցինք Չայոց տան առաջին տանուտերության պաշտոնը, որպեսզի դու՝ տեր Սեդրեստրոս Աղծնյաց արքեպիսկոպոսդ, նստես Չայոց բարձր գահի և բարեկարգ տան առաջին աստիճանի երկրորդ աթոռին՝ իրավասություն ունենալով տանուտերերի հետ միասին ամեն կարգի պաշտոնի հրամաններով բոլոր պաշտոնատարներին տալու իշխանություն, որպեսզի յուրաքանչյուրը գործի անցնի ըստ Չայաստանյայց օրենքի. իրավասություն ունեն տանուտերերով հանդերձ ըստ օրենքի Չայաստան երկրի երեսին հրամայելու ամենայն մարդկային բնության, նաև դու պատվի ես արժանացել ունենալու երկու ձայն:

Գրվեց Չայոց բարձր գահի և բարեկարգ տան պալատում, դեկտեմբեր ամսի 20-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեց, կնքեց և հանձնեց: }  
 Միքայել իշխան  Ամենայն հայոց իշխանությամբ՝ առաջին պաշտոնի այս հրամանն՝ ստորագրեց հայրախնամ Մաղաքիան }  
 Մանուել գրագիր

**Երկրորդ տանուտերության պաշտոնի հրամանի օրինակ**

**ԳԼՈՒԽ 41**

Տեսնելով Աղվանից աշխարհի ժողովրդի ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը ձեզ՝ Վրթանեսիդ Կաղնի գյուղից և Արիստակեսիդ Արզնկան գյուղից՝ ըստ Չայոց կարգադրության օրենքի մենք ձեր միջից կաղնեցի Վրթանեսիդ՝ Չայոց տան մեր հավատարիմ եղբայրակցիդ քո երդման ու արժանավորության հիման վրա ընդունեցինք ու քեզ Չայոց տան մեջ երեք տարի ժամանակով տանուտերության պաշտոնի շնորհման հրաման տվեցինք,<sup>35</sup> որ դու՝ Կաղնեցի տիար Վրթանեսդ, Չայոց բարձրագահ և բարեկարգ տան մեջ նստես տանուտերության երրորդ աթոռին՝ իրավասություն ունենալով տանուտերերի հետ միասին ամեն կարգի պաշտոնաթղթերով բոլոր պաշտոնատարներին տալու իշխանություն, որպեսզի յուրաքանչյուրը գործի անցնի. իրավասություն ունես տանուտերերով հանդերձ ըստ Չայաստանյայց օրենքի Չայաստան երկրի երեսին հրամայելու ամենայն մարդկային բնության:

Գրվեց Չայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, դեկտեմբեր ամսի 20-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին: }  
 Միքայել իշխան  Ամենայն հայոց իշխանությամբ՝ հայրախնամ Մաղաքիա }  
 Մանուել գրագիր  Սեդրեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր հայոց }  
 Մանուել գրագիր

**Երրորդ տանուտերության պաշտոնի հրամանի օրինակ**

**ԳԼՈՒԽ 42**

Տեսնելով Տուրուբերան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը ձեզ՝ Գալստանիդ Կաղզվան Գյուղից և Մարտիրոսիդ Մալաշկերտ գյուղից, ըստ Չայոց կարգադրության օրենքի մենք ձեր միջից կաղզվանցի Գալստանիդ՝ Չայոց տան մեր հավատարիմ եղբայրակցիդ քո երդման ու արժանավորության հիման վրա ընդունեցինք ու քեզ Չայոց տան մեջ երեք տարի ժամանակով տանուտերության պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ կաղզվանցի տիար Գալստանդ, Չայոց բարձրագահ և բարեկարգ տան մեջ նստես տանուտերության չորրորդ աթոռին՝ իրավասություն ունե-

նալով տանուտերերի հետ միասին ամեն կարգի պաշտոնաթղթերով բոլոր պաշտոնատարներին տալու իշխանություն, որպեսզի յուրաքանչյուրը գործի անցնի. իրավասություն ունեն տանուտերերով հանդերձ ըստ Հայաստանյայց օրենքի Հայաստան երկրի երեսին հրամայելու ամենայն մարդկային բնության:

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, դեկտեմբեր ամսի 20-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Ամենայն հայոց իշխանությամբ՝ հայրախնամ Մաղաքիա	} ○
Միքայել իշխան	○	Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր հայոց	} ○
Մանուել գրագիր	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր հայոց	} ○

### Պարզաբանություն հայոց միաբանության մասին

ԳԼՈՒԽ 43

Ըստ օրենքի տասնչորսերորդ հոդվածի՝ հայոց ողջ ազգը յուրաքանչյուր տասներկու հազար տնից երկուական փոխանորդով է ներկայանում, և ըստ օրենքի տասնիններորդ հոդվածի՝ յուրաքանչյուր երկու փոխանորդից մեկը [լինում է] տանուտերության իշխան, և օրենքի երեսունհինգերորդ հոդվածով բոլոր տանուտերերի միջից վիճակահանությամբ Հայաստանյայց տան համար ընտրվում է ամենայն հայոց մի հայրախնամ մարդ և իշխանության ծնող, և օրենքի 40, 41, 42-րդ հոդվածներով նրան տրվում է իրավասություն՝ բոլոր հայերի սրտով երեք տանուտեր հաստատելու, քանզի իրենց՝ իշխանների իշխանությունը երևան պիտի գա համաձայն հայոց բոլոր անձերից յուրաքանչյուրի, յուրաքանչյուրն իր բանական բնությամբ անձնիշխան է, իրենք են իրենց վրա կարգել իշխան ոչ նրա համար, որ ժողովրդի վրա նրանք իշխեն ըստ իրենց կամքի ու հաճության, այլ լինեն պաշտոնավարող իշխան՝ գործադրելու համար Հայոց կարգադրության օրենքը: Այդ երեք նորաբողբոջ իշխանները, իրենց սեփական հայ ազգից ընդունելով բանական իշխանության կարգ և տանուտերության պատիվ, իրավասու են Հայաստանյայց հայրախնամության հրամանը ետ վերցնել հայրախնամ տիար Մաղաքիայից, պատվով արձակել նրան, որպեսզի նա շարունակի մնալ իր փոխանորդության պաշտոնում: Երեք նորաբողբոջ տանուտերերը նաև իրավասություն ունեն պաշտոնի

հրաման տալու հայոց բոլոր փոխանորդներին, նրանցից երկու հոգուց մեկին՝ տանուտերության պաշտոն, ինչպես տասնիններորդ օրենքում է: Միևնույն ժամանակ այդ երեք տանուտերերը հայոց բոլոր տանուտերերի հետ միասին իրավասու են ընդունել օրենքներ և ամեն կարգի պաշտոնի իշխանություն տալ՝ ըստ տասնվեցերորդ և տասնութերորդ օրենքների:

### Հայաստանյայց հայրախնամի պաշտոնի հրամանը վերադարձնելու օրինակ

ԳԼՈՒԽ 44

Երկրպագում են մեր միակ Արարիչ Աստծուն և փառաբանում բարձրագահ և բարեկարգ Հայոց տունը, հայտնում են ձեզ՝ իմ հայրերին և եղբայրներին, որ գորությամբ իմ պաշտոնի, որն ստացել են իմ տերերից ու իշխաններից և իմ պատվելի ընդհանուր հայ ազգից, ահա կատարեցի ինձ վրա դրված ձեր հրամանը, իմ ձեռքով իմ իշխանության ժամանակի սահմանում տանուտերության իշխանություն շնորհեցի առաջին՝ սրբակրոն տեր Սեղբեստրոս Աղձնյաց արքեպիսկոպոսին՝ Ամենայն Հայոց սրբազան Հայրապետի տեղակալին, երկրորդ՝ տիար Վրթանես Կաղնեցուն՝ Աղվանից հայոց փոխանորդին, երրորդ՝ տիար Գալստան Կաղվանցուն՝ Տուրուբերանի հայոց փոխանորդին: Իսկ այժմ ձեր պատվական ատյանի առաջ վերադարձնում, վայր են դնում իմ պաշտոնի հրամանը և ձեզնից շնորհ ակնկալում, որ ինձ խաղաղությամբ կարծակեք:

Եվ տանուտերերն իրենց գրագրի բերանով միահամուռ նրան պաշտոնից արձակում են տալիս՝ ասելով՝ գնա՛ խաղաղությամբ: Այնուհետև հայրախնամի ձեռքից ընդունելով հրամանը և նրա վրա շարադրելով այն ամենը, ինչ որ հայրախնամի բերանով [ասված է] վերևում, հայրախնամի կողմից ստորագրված՝ պիտի պահեն Հայոց տանը:

### Հինգերորդ, և մինչև քանիերորդ որ լինի, տանուտերության պաշտոնի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 45

Տեսնելով Պարսկահայք աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը՝ ձեզ՝ Ստեփանոսիդ Դավրեժից և Պողոսիդ Մարաղայից, ըստ Հայոց կարգադրության օրենքի, մենք ձեր միջից դավրեժի Ստեփանոսիդ՝ Հայոց տան մեր եղբայրակցիդ ու հավատարմիդ՝ քո երդման ու արժանավորության հիման վրա քեզ Հայոց տան մեջ երեք տարի ժամանակով տանուտերության պաշտոնի շնորհ-

ման հրաման տվեցինք, որ դու՝ դավրեժցի տիար Ստեփանոս, Հայոց բարձրագահ և բարեկարգ տան մեջ մատեն տանուտերության հինգերորդ աթոռին՝ իրավասություն ունենալով տանուտերերի հետ միասին ամեն կարգի պաշտոնի հրամաններով բոլոր պաշտոնատարներին տալու իշխանություն, որպեսզի յուրաքանչյուրը զործի անցնի. իրավասություն ունես տանուտերերով հանդերձ ըստ Հայաստանյայց օրենքի Հայաստան երկրի երեսին հրամայելու ամենայն մարդկային բնության:

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, դեկտեմբեր ամսի 25-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

- |   |   |   |    |
|---|---|---|----|
| Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին: |   | Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր | }○ |
| Միքայել իշխան                                     | ○ | Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր          | }○ |
| Մանուել գրագիր                                    | ○ | Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր       | }○ |

**ԳԼՈՒԽ 46**

Ըստ օրենքի սահմանման՝ Հայոց տնից մինչև հարյուրապետի իշխանության պաշտոնը [ներառյալ], բացի նախարարության [պաշտոնից], կարող է տրվել երեք տանուտերերի ձեռքով՝ մեկ գրագրի հետ միասին:

**ԳԼՈՒԽ 47**

Նախարարության, բարձրագույն դատավորության, ասպետության և սպարապետության պաշտոնները պետք է նշանակվեն Հայոց տնից՝ բոլոր տանուտերերի հրամանով, բոլոր տանուտերերի ու մեկ գրագրի կողմից ստորագրված և Հայոց տան կնիքով կնքված:

**ԳԼՈՒԽ 48**

Հայոց տան կնիքը պետք է պահպանվի քսակի մեջ՝ բերանը կնքված յոթ նախարարի կնիքով, ու դրանցից մեկը պետք է լինի արքեպիսկոպոսի կնիքը. մշտապես պիտի մնա մի փակ տուփի մեջ, բանալիները՝ գրագրի ձեռքին, իսկ տուփը մնա Հայոց տանը: Որ ժամին որ հարկավոր լինի կնքել որևէ թուղթ՝ գրագիրը պետք է հանի տուփից, և յոթ նախարարները պիտի ստուգեն իրենցից յուրաքանչյուրի կնիքի անաղարտությունը. եթե կողպեքն անխաթար գտնեն՝ հրաման պիտի

տան գրագրին, որ բացի և հանի Հայոց տան կնիքը, կնքեն՝ ինչ որ անհրաժեշտ է կնքել, նորից ամուր փակեն, և յոթ տանուտերերը կնքեն ու հանձնեն գրագրին, ինչպես վերևում ասացինք: Ամեն անգամ Հայոց տան կնիքն այդպես պետք է գործածվի:

**ԳԼՈՒԽ 49**

Բոլոր տանուտերերի՝ հրամանով հաստատելն ավարտվելուց հետո այնժամ հայոց տանուտերերի և մնացած փոխանորդների միջից, որոնք մնում էին իշխանության պաշտոնի համար, այսինքն՝ հայոց բոլոր փոխանորդների միջից, ընտրվելու են տասներեք մարդ՝ որոշակիորեն բուն հայ ազգից և ծնունդով հայաստանցի, Հայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությանը ի Քրիստոս հավատացյալ հեզ և խելամիտ մարդիկ, պատիվ վայելող և հայոց ազգն ու աշխարհը սիրող, զարդարված առաքինությանը ու քաջիմաստությանը և այլն, սրանց վրա վիճակահանություն է կատարվելու՝ մեկ համարից մինչև տասներեքերորդը. ում որ դուրս գա թիվ առաջին վիճակը, նա լինելու է նախարար, և ում որ ելնի երկրորդ վիճակը, նա լինելու է երկրորդ խորհրդակից, [այդպես] մինչև վերջ՝ տասներեքերորդ վիճակը, [որ լինելու է] վերջին խորհրդակից: Եվ Հայոց տունը ըստ Հայաստանյայց օրենքի նրանց պետք է պատվի պաշտոնի հրամանով, նախարարին՝ երեք տարի ժամանակով, իսկ խորհրդակիցներին՝ իրենց ողջ կյանքի ժամանակաընթացքում:

**ԳԼՈՒԽ 50**

Եթե նախարարության վիճակն ընկնի որևէ տանուտերի, որ նահանգի փոխանորդներից էլ որ նա լինի՝ պետք է վերադարձնի իր տանուտերության հրամանը, իր փոխարեն տանուտերության պաշտոնը տա իր ընկերոջը, որն իշխանության պաշտոնի էր սպասում, իսկ նախարարը պետք է զբաղեցնի իշխանության պաշտոնը, և համայն երկրից տանուտերերն էլ պետք է լրիվ լինեն:

**Նախարարության պաշտոնի հրամանի օրինակ**

**ԳԼՈՒԽ 51**

Տեսնելով Արարատյան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու փոխանորդության թուղթը քեզ՝ պատվելի տիար Սմբատիդ Արտաշատ գավառից, քո երդման ու արժանավորության հիման վրա համոզվեցինք քո հավատարմության մեջ և ամենակարող Աստծու շնորհով ու մեր տանուտերերի ընտրողությամբ՝ համայն հայերի կողմից ընդունելությամբ, նաև նրանով հատկապես, որ Հոգին Սուրբ Աստծու կամքով նախարարության պաշտոնի համար վիճակը քո անունով ելավ, - մենք

հաստատեցինք և մեզ համար ընդունելի համարեցինք, որ Հայոց երկրի երեսին դու արժանի ես նախարարության պաշտոնի: Մենք՝ Հայաստանյայց տանուտերերս և հայոց ողջ ազգի փոխանորդներս, որ թե եկեղեցականներից ենք և թե հասարակ ժողովրդից, թեպետ անձամբ բազմաթիվ ենք, բայց միաբան ենք մի կամքով, մի խորհրդով և մի գործով, համահավասար իբրև մի անձ՝ ընդունեցինք ու քեզ՝ պատվելի Ամբատ Արտաշատցուդ երեք տարի ժամանակով համայն հայության և ողջ Հայաստան երկրի վրա նախարարության պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որպեսզի մեր Տիրոջ ողորմածությամբ մեր պատվելի Ամբատդ դառնաս ու նախարարության պաշտոնի իշխան մնաս, իշխես<sup>37</sup> Հայաստան աշխարհի ու մարդկային բնության վրա՝ հիմք ընդունելով յուրաքանչյուրի կատարած ձեռքի գործը՝ համաձայն Հայաստանյայց օրենքի և Հայոց տան հրամանի:

Ըստ նմանության մեր Տեր Փրկիչ Քրիստոսի խոսքի՝ քեզ իշխանություն տվեցինք,<sup>38</sup> որպեսզի դու տերը լինես համայն հայերի՝ քեզ պատրաստ պահելով ծառայելու ամենայն հայոց, և ընդդեմ թշնամիների ու հակառակորդների՝ Հայոց օրենքի ու ազգի պաշտպան լինելով՝ իշխանություն ունես կատարելու ամեն բարի գործ, իսկ Հայոց օրենքի դեմ՝ ոչ մի գործ, նաև քո թույլտվությամբ ուրիշները ևս ոչ մի բան չեն գործելու, և այլոց՝ ընդդեմ օրենքի գործողներին ոչ մի ներում չի լինելու: Հայոց օրենքի լուծը քո պարանոցին դրեցինք,<sup>39</sup> քանզի քաղցր է, և ըստ օրենքի ընթանալը՝ թեթև: Բայց խելամիտ եղիր և քո կրծքի խորքում, սրտիդ մեջ, պահպանիր Հայոց օրենքի յուրաքանչյուր հոդված, քանզի քո կյանքն ու քո կյանքի փառքը կախված են Հայոց օրենքից. քո պատճառով Հայոց օրենքի մի փոքր հոդվածի խախտումից իսկ կփշրվեն քո մարմնի ոսկորները:

Քեզ իշխանություն տվեցինք շահ բերելու համար հայոց համայն ժողովրդին և վնաս չտալու որևէ մեկին, ըստ Հայոց օրենքի իշխելու բոլորի ձեռքի կատարած գործերի վրա, բայց քո բնական բնության մեջ շղթայով կապեցինք ինքնազլուխ կամքդ ու կամայական արարմունքդ, որովհետև ընդդեմ օրինաց իրավասու չես որևէ մեկին անվանելու կաղ կամ հիմար:<sup>40</sup>

Քեզ իշխանություն տվեցինք բերանով [արտահայտիչը] լինելու ամենայն հայոց, բայց և ամուր փակեցինք քո բերանը, որ Հայոց օրենքի դեմ ոչ մի խոսք չխոսես:

Քեզ իշխանություն տվեցինք պատերազմելու ընդդեմ թշնամիների, բայց խաղաղություն վարելու հայոց բարեկամների հետ, ինչպես Հայոց տունն է հրամայում:

Քեզ իշխանություն տվեցինք կյանք պարգևելու մահապարտներին, մեկ տարվա մեջ՝ մինչև յոթ մարդու, եթե դա ի մասնավորի հակառակ

չլինի Հայոց տան կամքին, բայց դու իշխանություն չունես որևէ մեկի գլխից մազ իսկ վերցնելու՝ հակառակ Հայոց օրենքի:<sup>41</sup>

Քեզ դիտապետի իշխանություն տվեցինք, որ դու Հայոց տասս ահազանգ տասս թշնամիների մոտենալու, հայոց ազգի ու աշխարհի դեմ վնասարարության ու անարգանքի մասին, ուրեմն զգուշացիր, որ թշնամին չավերի Հայոց աշխարհը ու չնեղի ժողովրդին, որովհետև նրանց վնասի համար քեզնից են պահանջելու:

Քեզ իշխանություն տվեցինք, հրամայելու հայոց համայն զորքերին ու զորապետներին՝ համաձայն օրենքի, նաև իշխանություն ունես խոսքով [դատապարտելու] և շղթայի զարկելու քո հրամանի դեմ մեղանչած զինվորներին ու զորապետներին՝ հանձն առնելով քո կալանավորելու գործի ողջ վնասը, եթե կալանավորն ազատվի իր կապանքներից՝ դատաստանական ատյանում անպարտ համարվելով:

Այսպես մենք քո ձեռքով ըստ Հայոց օրենքի կատարվելիք բոլոր գործերի սպասումով քեզ՝ հարգարժան արտաշատցի տիար Ամբատիդ պատվեցինք որպես մեր տեր և մեր նախարար, մեր առաջին պաշտոնատար և մեր հավատարիմ սպասավոր, մենք, որ քեզ հետ միաբան հայոց սպասավորներ ենք, որպեսզի հաստատուն մնաս և Հայոց օրենքով իշխես քո և մեր ձեռքի գործերի վրա, ինչպես և Հայաստանյայց երկրի երեսին ամենայն մարդկային բնության վրա, բացի բարձրագահ և բարեկարգ Հայոց տնից, քանզի մարդկային բնությամբ ոչ մի ծնունդ իրավասություն չունի իշխելու Հայոց տան վրա:

Աստծու շնորհը, Հայոց օրենքի պահպանումը և հայոց ողջ ազգի ու ժողովրդի անկեղծ սերը թող գա ու բնակվի քո մեջ: Ամեն:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Սեդրեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	}○
Միքայել իշխան	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	}○
Մանուել գրագիր	○	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	}○

ԳԼՈՒԽ 52

Իսկ եթե այժմ և կամ հետագայում, ժամանակներ անց, մեր նախնի Հայկի սերնդից կամ էլ մեր հարազատ Վաղարշակի ու Բագրատի սերունդներից հայտնվի մի ոմն (կամ ոմանք) և անձամբ հավակնի Հայաստանյայց նահապետի [պաշտոնին], կամ թե որդեգրողի ժառանգությամբ ու երդմամբ խոստանա պաշտել Աստծուն՝ ըստ Հայաստանյայց

եկեղեցու ավանդության կարգի, հնազանդվել օրենքներին, որ հրապարակվում են Հայոց տնից ու տանուտերերից, նաև իր վրա պարտականություն վերցնի ըստ Հայաստանյայց օրենքի հատուցել իր ձեռքով կատարած գործերի վնասը՝ իր կյանքի բոլոր օրերի ընթացքում միշտ մնալով նույն դիտավորությամբ, ինչ նշված է 51-րդ գլխում, նախարարի մասին օրենքում, ապա այդ դեպքում մեր պարտքն է սիրով ընդունել նրան և մեծարել փառք ու պատվով, տալ նրան նախարարության պաշտոնի հրաման՝ ըստ օրենքի 51-րդ հոդվածի՝ այն հավելումով, որ նա մշտապես նախարարության պաշտոնի ժառանգակալ է մնալու իր կյանքի բոլոր օրերի ընթացքում: Իսկ կամ մահվան և կամ ինչ-որ մեղքի մեջ ընկնելու հետևանքով նրա բացակայության դեպքում նրա ավագ ժառանգն է իր նախորդի փոխարեն ընդմիշտ գրավելու պաշտոնը:

**ԳԼՈՒԽ 53**

Եթե այնպես պատահի, որ Հայաստանյայց նախարարությունը լինի ժառանգական, ապա պետք է որդեցորդի լինի՝ ըստ մարդու ծննդաբանության կարգի, լինի արու թե էգ, բացի խելագարից:

**ԳԼՈՒԽ 54**

Եթե այնպես պատահի, որ Հայաստանյայց նախարարությունը լինի ժառանգական, այդ դեպքում պետք է վերանա խորհրդակիցների՝ իրենց կյանքի ողջ օրերի ընթացքում գաղտնի խորհրդարանում լինելու ժամկետի իրավագործությունը, և նրանց իրավագործություն է տրվելու միայն երեք տարի ժամանակով: Իսկ ժամկետը լրանալուց հետո կամ մահվան պատճառով և կամ մեղքի հետևանքով բացակայողի տեղը Հայոց տնից պետք է ընտրվի ուրիշ մեկը և հրամանով հաստատվի երեք տարի ժամանակով:

**ԳԼՈՒԽ 55**

Այն օրից սկսած, երբ որևէ մեկը Հայոց տան հրամանով պատվի արժանանա որպես նախարարության ժառանգակալ, երեսնօրյա ժամանակամիջոցում նույն մարդու ցեղից պետք է նրա համար ընտրվի տեղակալ, բայց ոչ մեկ ուրիշը, եթե նա ունի անդրամիկ կամ ավագ որդի, իսկ եթե ոչ՝ կարելի է ընտրել նրա արյունակցին, սակայն այն նկատառումով, որ եթե ժամանակներ անց [ժառանգակալին] որդի ծնվի, սա պետք է դառնա ժառանգ, որպեսզի մեր նախարարի տեղը թափուր չմնա:

**ԳԼՈՒԽ 56**

Եթե այնպես պատահի, որ Հայաստանյայց նախարարությունը լինի ժառանգական, մեր նախարարի որդիները կարող են անցնել իշխա-

նության պաշտոնի. այնպես՝ ավագ որդին՝ հոր տեղակալի, այսինքն՝ նախարարության պաշտոնի,<sup>42</sup> երկրորդ, երրորդ և չորրորդ որդիները կարող են ստանալ երկրորդ սպարապետության, երկրորդ ասպետության և երկրորդ հրածգապետության<sup>43</sup> պաշտոնները՝ յուրաքանչյուրն իր կյանքի ողջ ընթացքում հնազանդ իր գլխավորին: Այս ժառանգները երբեք առաջին պաշտոն չպիտի ստանան՝ ոչ սպարապետության, ոչ ասպետության և ոչ էլ հրածգապետության: Այս ժառանգները պարտավոր են հատուցում տալ իրենց ձեռքի կատարած վնասի համար՝ համաձայն Հայոց օրենքի:

**ԳԼՈՒԽ 57**

Եթե այնպես պատահի, որ Հայաստանյայց նախարարությունը լինի ժառանգական, ապա նախարարն ու իր երեք որդիներն իրենց պաշտոնավարձն են ունենալու ըստ օրենքի գլուխ 278-րդ հոդվածի, մնացածները՝ տեղակալ ժառանգը և մյուս որդիները, բացառությամբ երեք պաշտոնյա որդիների, նախարարի դուստրերով և տիրուհով հանդերձ Հայոց տնից ռոճիկ են ստանալու ըստ այսմ.

ժառանգ որդին ամեն մի ամիսը՝ . . . . . 2000 դահեկան,  
մնացած որդիները ամեն մի ամիսը՝ . . . . . 1000-ական  
դահեկան,  
նախարարի տիրուհին ամեն մի ամիսը՝ . . . . . 1000 դահեկան,  
նախարարի դուստրերին, քանի  
դուստր որ լինի, մինչև ամուսնանալու  
ժամը, ամեն մի<sup>44</sup> դստերը մեկ ամիսը՝ . . . . . 500 դահեկան:

**Նախարարի գաղտնի խորհրդարանում խորհրդակցի պաշտոնի հրամանի օրինակ**

**ԳԼՈՒԽ 58**

Տեսնելով Հայոց Գուգարաց աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ տիար Հարությունիդ Լոռե քաղաքից և քո երդման հիման վրա հավաստիանալով քո հավատի մեջ՝ քեզ տվեցինք իշխանության պաշտոնի շնորհման հրաման՝ երկրորդ խորհրդակցի պաշտոն հայոց պատվական նախարարի գաղտնի խորհրդարանում՝ համայն խորհրդում հիշեցնելով անխախտելի Հայոց օրենքը, քանզի ամեն մի գործ, որ հրապարակելու է հայոց նախարարի գաղտնի խորհրդարանից, պետք է անթերի համապատասխանեցվի Հայաստանյայց օրենքին: Քեզ՝ Հարությունիդ նաև իրավասություն

տվեցինք քո կյանքի ողջ օրերի ընթացքում մշտապես մնալու խորհրդի իշխանության աթոռին, եթե քեզ [այնտեղից] չիջեցնեն քո ձեռքի կատարած գործն ու քո բնական մահը: Սրտիդ մեջ հաստատու և պահպանիր քո հնազանդությունը Հայոց օրենքին ու տանը, քո մտածումը որևէ բանի կամ գործի շուրջ թող երբեք հակառակ չլինի Հայոց օրենքին:

(Այսպես նաև [հրամաններ՝] ուղղված երրորդ և չորրորդ, մինչև տասներեքերորդ խորհրդակիցներին):

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	} ○
Միքայել իշխան	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	} ○
Մանուել գրագիր	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	} ○

### Դատավարության պետի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 59

Տեսնելով Կիլիկյան հայոց ժողովրդից քո արժանավորության ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Մաղաքիայիդ Մալաշկերտից և հանձնվելով, որ հավատարիմ ես մնալու քո երդմանը, երեք տարի ժամանակով քեզ տվեցինք գերագույն դատավորի պաշտոնի շնորհման հրաման, որպեսզի խորհրդակիցներով հանդերձ պալատում բազմես դատաստանական աթոռին՝ ըստ Հայաստանյայց օրենքի դատելու Հայոց երկրի երեսին [ապրող] մարդկային բնությամբ բոլոր մեղավորներին: Քեզ իշխանություն տվեցինք վճիռ կայացնելիս ունենալ երկու ձայն, իսկ քո խորհրդակիցներին՝ մեկական ձայն, և մեր Կարգադրության օրենքով արգելք դրեցինք քո աչքին ու ձեռքին, որպեսզի մարդու երես տեսնելով՝ չողորմես կամ քո սիրտը չխստացնես գանգատվողի ու ամբաստանյալի<sup>45</sup> նկատմամբ և մի լուրմա կաշառք իսկ չընդունես իրավունքի ու արդարության համար, այլ բանական հոգու զորությամբ ունկնդիր լինես գանգատվողների ու ամբաստանյալների խոսքերին, ով էլ որ նրանք լինեն, և իրավունքը պահպանես ու արդարությամբ վճիռ կայացնես ձեռքի գործերի ու արարքների նկատմամբ՝ համապատասխան յուրաքանչյուրի կատարած գործի, ըստ Հայաստանյայց օրենքի:

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	} ○
Միքայել իշխան	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	} ○
Մանուել գրագիր	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	} ○

### Դպրության ատենաբանների հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 60

Տեսնելով Կորճկահայք աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Արիստակեսիդ Արզնկան գյուղից, քեզ հավատարիմ համարեցինք Հայոց տանը, քեզ երեք տարի ժամանակով ատենաբանի պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որպեսզի դու՝ Արիստակեսդ, Հայոց տան ատյանի առաջ, դատաստանի պալատում և գաղտնի խորհրդարանում, որտեղ էլ որ վիճակվի, միշտ անհողդողդ մնաս և ազատորեն պաշտպանես Հայաստանյայց օրենքն ու կարգուկանոնը: Թող չլռի քո լեզուն, և չահաբեկվի քո սիրտը, ազատորեն բացվի քո բերանը և ատյանի առաջ արտահայտի Հայաստանյայց օրենքի իրավունքն ու արդարությունը:

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, հունվարի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	} ○
Միքայել իշխան	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	} ○
Մանուել գրագիր	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	} ○

**Գլխավոր քաղաքներում դատավորության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 61

Տեսնելով Բզունյաց գավառի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Միքայել Գնունուդ, նաև քո երդմամբ հայոց տանուտերերի ատյանի առաջ՝ սրտանց համոզվեցինք Յայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ, քեզ երեք տարի ժամանակով դատավորի պաշտոն տվեցինք հայոց Այրարատ աշխարհի Երևան քաղաքում, որպեսզի դու՝ օրենսգետ Միքայել Գնունիդ, բազմես դատավորապետի աթոռին և խորհրդակից դատավորների հետ ըստ Հայաստանյայց օրենքի դատես Երևան քաղաքի վիճակում բնակվող ամենայն մարդկային բնության: Քեզ հրաման տվեցինք, որ բուն հայ ազգից և Երևան քաղաքի վիճակում բնակվողների միջից ութ լավ օրենսգետների քեզ համար խորհրդատու և եղբայրակից դատավոր ընդունես ու Երևանի գինվորական խոհեմազարդ իշխանի և նրա խորհրդակցի ընտրությամբ ու ստորագրված պաշտոնի հրամանով՝ երեք տարի դատես ժողովրդին: Քեզ իրավասություն տվեցինք, որ իշխանության պաշտոն շնորհես դպիրների ու գրագիրների՝ Երևանի դատաստանական ատյանում լինելու դպրության և գրագրության պաշտոններում, վեց դպիր և երեք գրագիր՝ ամենքն էլ ըստ Հայաստանյայց ավանդության ի Քրիստոս հավատացյալ բուն ազգից: Քեզ իշխանություն տվեցինք վճիռ կայացնելիս ունենալ երկու ծայն և Յայոց կարգադրության օրենքով արգելք դրեցինք քո աչքին ու ձեռքին, որ չնայես զանգատվողի և դատախազի երեսին ու արժանավորությանը, և քո ձեռքը կաշառք չընդունի իրավունքի համար, հաստատուն մնաս դատաստանական աթոռին՝ սիրահոժար դատելու Երևանի վիճակի ժողովրդին՝ ըստ Հայաստանյայց օրենքի, հավատարիմ՝ Յայոց տանը:

Գրվեց Յայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	}○
Միքայել իշխան	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	}○
Մանուել գրագիր	○	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	}○

**Սպարապետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 62

Տեսնելով Վասպուրական աշխարհի ժողովրդից ընդունելությունը և նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ տիար Սիմեոնիդ Աղձնի գյուղից, նաև քո երդվելը հայոց տանուտերերի ատյանի առաջ՝ մեր մտքում համոզվեցինք քո հավատարիմ լինելու մեջ և քեզ երեք տարի ժամանակով շնորհեցինք հայոց զորքերի սպարապետության պաշտոնը, որպեսզի դու՝ աղձնեցի իմաստուն Սիմեոնդ, հաստատուն մնաս իբրև սպարապետ և հրամանատարություն անես զորագնդերին, զորավարներին և բոլոր մարտական ուժերին, ինչ որ հանձնարարի քեզ հայոց նախարարը, ջանաս ի գործ՝ ըստ Հայաստանյայց օրենքի, ինչ հրաման որ քեզ տա հայոց պատվարժան նախարարը, բացի Յայոց տան վրա իշխելուց: Քեզ իշխանություն շնորհեցինք՝ խոսքով [դատապարտելու] և շղթայի զարկելու քո հրամանի դեմ հանդգնող գինվորներին ու զորապետներին՝ այն գիտակցությամբ, որ նրանցից յուրաքանչյուրի կալանավորության վնասը պիտի հատուցես, եթե կալանավորն անպարտ դուրս գա դատաստանի ատյանից: Քեզ իշխանություն տվեցինք հաստատուն պահելու Հայաստանյայց օրենքի ամեն մի հողված քեզ հանձնված բոլոր գինվորների վերաբերմամբ՝ համաձայն յուրաքանչյուրի ձեռքի գործերի արժանիքների՝ ըստ օրենքի դատաստան ու վճիռ կայացնելով:

Գրվեց Յայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	}○
Միքայել իշխան	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	}○
Մանուել գրագիր	○	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	}○

**Ասպետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 63

Տեսնելով Փայտակարան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Մանասեիդ Տուրուբերանից և քո երդմամբ համոզվելով հավատարիմ լինելուդ մեջ, քեզ՝ տիար Մա-



նասերի, երեք տարի ժամանակով իշխանություն տվեցինք և հայոց ողջ այրուծիի ասպետության պաշտոնի շնորհման հրաման, որ դու՝ քաջ Մանասեղ, հրամանատարություն անես այրուծիին, որը քեզ է հանձնված հայոց իմաստուն սպարապետից: Քեզ իշխանություն տվեցինք գործի անցնելու ըստ հայոց սպարապետի հրամանի և Յայաստանյայց օրենքի: Քեզ իշխանություն տվեցինք՝ խոսքով [դատապարտելու] և շղթայի զարկելու քեզ հանձնված այրուծիի ամեն մի զորավարի, որը քո դեմ հանցանք կգործի, սակայն այն գիտակցությամբ, որ պարտավոր ես հատուցել նրանց, եթե կալանավորը դատաստանի ատյանում անպարտ դուրս գա: Քեզ իշխանություն տվեցինք կարգադրելու, որ ապահովեն թամբով և այրուծիի զինվորներին անհրաժեշտ ամեն ինչով, որը թեթևացնում է զինվորի չարչարանքը և սրընթաց դարձնում նրա ձին: Իշխանություն տվեցինք հարձակվելու թշնամու և այն երկրի վրա, որ կիրամայի քեզ իմաստուն սպարապետը, բացի Յայոց տնից: Յրամայում ենք քեզ, որ աչալուրջ պահես զինվորներին՝ ամեն շաբաթ օր նրանց ականջին բարբառելով Յայաստանյայց օրենքը, որպեսզի օրենքի բոլոր կետերը ամուր մնան նրանց մտքում:

Գրվեց Յայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, դեկտեմբեր ամսի 20-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Ս. տ. <input type="radio"/>
Միքայել իշխան <input type="radio"/>	Վ. տ. <input type="radio"/>
Մանուել գրագիր <input type="radio"/>	Գ. տ. <input type="radio"/>

### Յրածգային զորագլխության հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 64

Տեսնելով Գուգարաց աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդմամբ մեր մտքում համոզվելով, որ Մարտիրոսը հավատարիմ ես Յայոց տանը, քեզ երեք տարի ժամանակով հրածգային զենքի [պետի] պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Մարտիրոսը Բամբակաձորից, իշխան լինես բոլոր հրածգային զենքերին, որոնք պատկանում են Յայոց տանը: Քեզ իշխանություն տվեցինք որոնել և ձգտել թեթևացնելու զենքի ծանրությունը և հետևելու, որ զործողության համար ամեն մի հրածգային զենք հեշտ առաջ շարժեն, ամեն ծանրության թնդանոթները համեմատել իրենց կլուի<sup>45</sup> և սմբայի հետ, նախազգուշացնել կառա-

պետ իշխանին, որ կառքեր ստեղծելիս զգուշավորություն հանդես բերի, որպեսզի հնարի թեթևընթաց և դիմացկուն [կառքեր]: Քեզ իշխանություն տվեցինք, որ զգուշանաս և որոնումներ կատարես բոլոր քաղաքներում ու ամրոցներում. եթե հրածգային զենքի ինչ-ինչ պակասություն նկատվի, ըստ Յայոց օրենքի՝ ինչքան որ պետք է լինի, խրատ տաս զինապետին, որ պակասը լրացնի, և մեզ էլ հայտնես: Քեզ իշխանություն տվեցինք, որ ջանք թափես Յայոց աշխարհում գտնելու երկաթ հալող արհեստավորներ և Յայոց տան ծախսով ստեղծելու երկաթ թնդանոթ ու կլու: Պատվիրում ենք քեզ ջանալ և կարգադրել բոլոր թվանք և փստոլ շինողներին, որ մեր երկրի երեսին արհեստավորները թվանք ու փստոլ պատրաստելիս բոլորը երկարությամբ միակերպ [անեն]՝ թե կլուի մեծությունը, թե սմբան, թե չախմախը և այլն, որպեսզի որևէ անգամ զենքի փչանալու դեպքում մյուսը կարելի լինի մտցնել նրա տեղը: Քեզ հրաման տվեցինք կարգ սահմանել բոլոր հրածիզ զինվորների մեջ հրազենները տեղից տեղ տանելու համահավասար կերպով և միմյանց համեմատ, իսկ ամեն օր առավոտ ծեգին, ժամը վեցից մինչև առավոտյան ժամը ութը, միևնույն կարգով մարզելու, պրթելու հրածգային զենքի զինվորներին, բացի կիրակի օրվանից, [երբ] բոլորն ազատ են լինելու զինավարժությունից:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Ս. տ. <input type="radio"/>
Միքայել իշխան <input type="radio"/>	Վ. տ. <input type="radio"/>
Մանուել գրագիր <input type="radio"/>	Գ. տ. <input type="radio"/>

### Լրտեսապետի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 65

Տեսնելով Բարձրահայք աշխարհի Արտաշատ գավառի<sup>47</sup> ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և հայոց տանուտերերի ատյանի առաջ քո երդմամբ սրտանց համոզվելով Յայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ՝ խորամիտ Պետրոսիդ հայոց Բարձրահայք աշխարհի սահմաններում, Նախիջևան քաղաքում և նրա շրջակա տարածքում, երեք տարի ժամանակով շնորհեցինք լրտեսապետի պաշտոն, որ խորամիտ Պետրոսը հաստատուն մնաս իբրև լրտեսության պետ: Քեզ իշխանություն տվեցինք, որ Յայոց տան ծախսով խաղաղության ժամանակ՝ տասներկու, իսկ պատերազմի ժամանակ երեսունվեց խելամիտ ծառայողներ վերցնես՝ լռելյայն շրջեց-

Ունենալով նրանց հայաստանյայց երկրի երեսին և օտար աշխարհում՝ հայոց թշնամիների կամ դրացիների երկրում, ամենայն զգուշավորությամբ ձեռք բերելով ամեն տեսակ տեղեկություններ, ինչ կարգի էլ որ նրանք լինեն, յուրաքանչյուր շաբաթ երեք օրինակից մանրամասնորեն գրառելով թղթի վրա՝ մեկը հանձնես Նախիջևան քաղաքի իշխանին, երկուսից մեկը շնորհ անես հայոց տան պալատին, իսկ մյուսը՝ հայոց նախարարի խորհրդարանին: Եվ թող հայոց տան կարգադրությամբ արգելք դրվի քո ձեռքին ու բերանին, որպեսզի լռելյայն և գաղտնի ամեն բան, ինչ լուր էլ այն լինի, չխոսվի ու չգրվի որևէ մեկին, բացի երեք պալատներից, ինչպես քեզ հրամայեցինք վերևում: Ջանք պիտի թափես և հավատարմորեն հոգատար լինես հայոց տան հանդեպ:

Գրվեց բարձրագահ պալատում... և այլն:

- Վկայում ենք, որ ստորագրեցին,  Ա. տ.
- կնքեցին և հանձնեցին:  Վ. տ.
- Միքայել իշխան  Գ. տ.
- Մանուել գրագիր

### Զինապետության հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 66

Տեսնելով Ուտիք աշխարհից ընդունելությունը, նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում համոզվելով, որ տիար Սեղբեստրոսը հավատարիմ էս հայոց տանը, քեզ երեք տարի ժամանակով Անի քաղաքում զինապետության պաշտոն շնորհեցինք, որ դու՝ ջանասեր Սեղբեստրոսը, հաստատուն մնաս իբրև զենքի պահպանության պետ, որպեսզի ինչ երկաթի զենք որ դու ստացել էս քեզնից առաջ զինապահ եղած ջանասեր Սկրտչից, քո ժամանակ ստացվածների հետ պահես մաքուր ու ամարատ յուղով սրբված՝ փչացածներն ամրացնելով և կապելով անհրաժեշտ քարով, փալասխայով,<sup>48</sup> բազմեթով<sup>49</sup> և չախմախով: Քեզ իշխանություն շնորհեցինք իմաց տալու Անի քաղաքի իշխանին, եթե թվանքի զենքը պակասի վաթսուն հազարից, և նրանցից ստանալու պակասորդը, որպեսզի լիովին լրացվի վաթսուն հազարների պակասորդը՝ վաթսուն հազար թվանք, վաթսուն հազար դաբանչա, սուսեր պատրաստ պահելով անհրաժեշտ ժամանակի համար: Քեզ հրաման տվեցինք հնազանդվել և որքան պետք է և ում ձեռքը որ պետք է՝ զենք հանձնել, ինչպես հրամայի քեզ Անիի իշխանը՝ ստանալով նրանից ստացագիր,<sup>50</sup> իսկ երբ վերադարձնեն, և ընդունես, երբեք զինարանում ավելի պակաս զենք չպիտի լինի, քան

քսանչորս հազար թվանք, տասներկու հազար դաբանչա և վաթսուն հազար սուսեր: Ապա եթե պակաս հայտնաբերվի՝ պիտի իմաց տաս Անի քաղաքի իշխանին և ստիպես, որ լրացնի պակասը: Նաև քեզ հրաման տվեցինք զենքի պահպանության ծախսն ստանալ Անիի իշխանի ձեռքից՝ նրան տալով ստացագիր ծախսի որքանության մասին, ամենայն ուժով ու հավատարմորեն պահպանել ողջ զենքը, որպեսզի միշտ մաքուր ու պատրաստ մնա գործածության համար:

Գրվեց պալատում... և այլն:

- Վկայում ենք, որ ստորագրեցին,  Ա. տ.
- կնքեցին և հանձնեցին:  Վ. տ.
- Միքայել իշխան  Գ. տ.
- Մանուել գրագիր

### Վառողապետության հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 67

Տեսնելով Արցախ աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում համոզվելով հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով վառողապետի պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Պետրոսը Բերդածորից, իշխես վառող պատրաստող բոլոր արհեստավորների վրա, խնամքով կատարելության հասցնես ավելի լավ ու մաքուր վառող և հնարավորություններ փնտրես, որ այն երկար դիմանա, արագորեն չփչանա: Վառող պատրաստելիս այնպես չլինի, որ մի տեղը զորեղ<sup>51</sup> լինի, մյուս տեղը՝ մեղմ, այլ համահավասար զորություն ունենա: Ամբողջ հայաստան աշխարհը պարտավոր է երկու տեսակ վառող պատրաստել, մեկը խոշոր՝ թնդանոթի համար, մյուսը մանր՝ հուր տալու համար,<sup>52</sup> բայց զորությամբ այդ երկու տեսակը [միմյանցից] ավել կամ պակաս չպիտի լինեն: Քեզ իշխանություն տվեցինք որոնել ու ձեռք բերել արհեստավորներ և հայոց տան ծախսով հայտնաբերել ամեն ինչ, ինչ որ անհրաժեշտ գտնվի վառողի առավել լավ լինելու և դիմացկունության համար, որպեսզի պատրույգն<sup>53</sup> անշիջանելի մնա թե՛ տապ եղանակին և թե՛ ցոլ ու անձրև տեղալու ժամանակ: Ամբողջ ուժով պիտի ջանաս ու հետամուտ լինես քո գբադմունքին, որպեսզի վառողն ապահով մնա թե՛ քաղաքներում, թե՛ դաշտում և թե՛ զորախմբերում:

Գրվեց.... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:  
Մ. ի.       ○  
Մ. գ.       ○

Ս. տ.   ○  
Վ. տ.   ○  
Գ. տ.   ○

**Կառապետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 68

Տեսնելով Սյունյաց աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ, նաև քո երդման հիման վրա մեր մտքում համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով ընդհանուր կառապետության պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Պողոսոս Երնջակից, իշխես կառք պատրաստող բոլոր արհեստավորների վրա, կատարելության հասցնես ամեն կարգի կառք, ինչ ստեղծվում է Հայաստան երկրի երեսին, այնպես որ նրանք միասնական լինեն թե տեսքով, թե երկարությամբ, թե բարձրությամբ, թե հաստությամբ՝ համապատասխան յուրաքանչյուր աստիճանի, այսինքն՝ կառքը, որ իր վրա կրելու է երկու լիպրանոց<sup>54</sup> թնդանոթ, և այդ աստիճանի բոլոր կառքերը պետք է միևնույն տեսքի լինեն, նմանապես և չորս լիպրանոցը և վեց լիպրանոցը, մինչև քառասուներկու լիպրանոցը՝ յուրաքանչյուրը համապատասխան երկարությամբ, լայնությամբ, հաստությամբ: Օրինակ վերցրու տիար հրաձգային զինապետից և հրամայիր արհեստավորներին, որ իրենց մտքում ամուր պահեն ըստ կարգի և յուրաքանչյուր թնդանոթի ժանրությանը համապատասխան պատրաստելու պահանջը, նույն կերպ՝ նաև վառող բեռնելու կառքերը, որ իրենց վրա ունենալու են ամրափակ սնդուկներ, ինչպես նաև այն կառքերը, որոնք անհրաժեշտ է բեռնել կլուղով և սննդով: Կառքերի բոլոր մասերը պետք է չափով չափվեն և բոլոր տեղերում պատրաստվեն կառքերի յուրաքանչյուր աստիճանին համապատասխան, որպեսզի եթե քաղաքի ամրոցներում կամ բանակի մեջ որևէ կառքի սարվածքի մասը ջարդվի, մյուս կառքից նրա տեղը դնելիս տարբերություն չլինի: Քեզ իշխանություն տվեցինք վրեժխնդիր լինել կառագործ արհեստավոր մարդկանցից, եթե նրանց պատրաստած կառքերի մեջ ցորենի մի հատիկի մեծությամբ իսկ տարբերություն նկատես կամ պակաս: Քեզ պատգամում ենք՝ որոնի՛ր մեր բնաշխարհի անտառներում ու դաշտերում պինդ ու թեթև և կառքերի ու սանդուղքների համար հարմար ինչ ծառափայտ որ կա՝ երկար ժամանակով գործածելու նպատակով և այլն:

Գրվեց Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատում, այսինչ օրը, ղեկտեմբեր ամսի քսանին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:  
Մ. ի.       ○  
Մ. գ.       ○

Ս. տ.   ○  
Վ. տ.   ○  
Գ. տ.   ○

**Վրանապետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 69

Տեսնելով Փայտակարան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ, նաև քո երդման հիման վրա մեր մտքում համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով համայն վրանապետության պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Թադևոսոս Վարդանակերտից, իշխես վրանակար բոլոր դերձակների և ամեն կարգի վրանների արհեստավորների վրա և բարեխղճությամբ կատարելության հասցնես ամեն տեսակ վրաններ, որ բնակության համար պատրաստվում են Հայաստան աշխարհի երեսին՝ թե մեկ մարդու, թե վեց մարդու և թե քսանչորս մարդու հաշվով: Բոլոր վրաններն ըստ այդ չորս տեսակի են պատրաստվելու, բարձրությունը, լայնությունը և երկարությունը համապատասխան ըստ չորս աստիճանի վրաններից յուրաքանչյուրի, ինչպես նաև սյուները, սյուների գլխանոցները, չվանի հաստությունը համահավասար պետք է լինեն միմյանց, վրանի ներսը՝ սպիտակ, որևէ կտավով, որ շահավետ լինի, իսկ դրսի երեսը՝ կարմիր: Քեզ իշխանություն տվեցինք վրեժխնդիր լինել վրանակար արհեստավորներից, եթե որևէ մեկը ձևով և տեսքով ավել կամ պակաս անի, քան չորս աստիճանի վրաններն են (բացառությամբ բարձր իշխանավորների, որոնց համար գուցե բեհեզից լինի և լայնատարած): Քեզ պատգամում ենք, որ զգուշավոր լինես, ինչ լավ կտավ որ վրանի կամ չվանի համար ընտրես, երկար ժամանակ դիմանա և շատ թեթև լինի տեղից տեղ ման ածելու համար, նաև ապահով՝ արևի տապից կամ անձրևի թացությունից՝ թե կտավատի կտավը, թե բամբակի, ինչ որ բուսնում է Հայոց երկրի երեսին և Հայաստանյայց ժողովրդի ձեռքի աշխատանքն է:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:  
Մ. ի.       ○  
Մ. գ.       ○

Ս. տ.   ○  
Վ. տ.   ○  
Գ. տ.   ○

**Կերակրապետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 70

Տեսնելով հայոց Պարսկահայք աշխարհի ժողովրդից ընդունելու-  
թյունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման  
վրա մեր մտքում համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու  
մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով կերակրապետի պաշտոնի շնորհ-  
ման հրաման տվեցինք, որ դու՝ Բարդուղիմեոսդ Թրակիայից, Հայաս-  
տանյայց երկրի երեսին իշխանություն ունենաս ողջ սննդի նկատմամբ՝  
քաջալերելով, որ երկրի երեսին համայն դաշտերը վարեն ու ցանեն,  
որպեսզի մի քայլաչափ իսկ պարապ չմնա: Իսկ ով որ որևէ պատճառով  
թերանա վար ու ցանքի մեջ՝ պետք է իմաց տաս տվյալ նահանգի  
իշխանին, որ թիկունք դառնա նրան և նրա ցանքն ավարտի հասցնի:  
Եթե ծայրահեղ խոչընդոտի հանդիպես, ապա դիմիր մեզ: Ամեն տեսակ  
պտուղը, ցորենը, գինին, ձեթը և սնունդը, ինչն օրենքով Հայոց տան  
բաժինն է, սրտացավությամբ հավաքիր Հայոց տան շտեմարանում,  
հինը հանիր և հանձնիր նույն նահանգի իշխանին, որ նա վաճառելով՝  
նրա արժեքը մուծի հայոց գանձարան: Քեզ՝ տիար Բարդուղիմեոսիդ  
պատվիրում ենք զգույշ լինել, որպեսզի մեր աշխարհի բնակիչների  
տարեկան սնունդը պահպանվի անաղարտ՝ չոր ու մաքուր, որ նահան-  
գում էլ որ լինի՝ պահեստի մեջ մնա ապահով: Նաև իրավասություն ու-  
նես Հայոց տնից պահանջելու աշխարհագիր [անցկացնել], որպեսզի  
իմանաս հայ ժողովրդի քանակը, ողջ ժողովրդի վրա տարեկան սննդի  
հաշիվ անես և ամեն մի անձի համար շտեմարաններում ունենաս  
սնունդ, մեկ անձի համար՝ երեք բեռ ցորեն: Նույն հաշվով էլ բոլոր գա-  
վառներից պետք է հավաքել, անհրաժեշտ տեղերում անձերի քանա-  
կությանը համահավասար, համեմատ յուրաքանչյուր տեղի ժողովրդի՝  
ապահով պահպանել ամուր պարիսպների մեջ, երկու տարվա սնունդ  
էլ՝ քաղաքներում, գավառակենտրոններում և գյուղերում, այնպես որ  
ամբողջը միասին լինի երեք տարվա սնունդ: Եթե դրանից ավել կամ  
պակաս լինի, պետք է մեզ իմաց տալ: Նույն կերպ էլ հարդ, գարի, կորեկ  
և այլն պետք է նկատի ունենալ անասունների համար: Այն նահանգի  
կամ գավառի դաշտում, որտեղ քո իշխանության ժամանակ ծնունդ  
առնի նորագյուտ բույս և բարգավաճի, դա քո պատիվն է բարձրացնե-  
լու Հայոց տան մեջ:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:

Մ. ի.      ○  
Մ. գ.      ○

Ս. տ.    ○  
Վ. տ.    ○  
Գ. տ.    ○

**Գանձապետության հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 71

Տեսնելով Կորճկահայքի [ժողովրդից] ընդունելությունն ու նրանց  
փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում  
համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տա-  
րի ժամանակով գանձապետության պաշտոնի շնորհման հրաման  
տվեցինք, որ դու՝ տիար Փիլիպոսդ Փոքր Աղբակից, լինես գանձապե-  
տության իշխան, որպեսզի այս կամ այն նահանգից և քաղաքից որևէ  
իշխանի կամ պաշտոնյայի կողմից ինչ գանձ էլ քեզ հանձնվի, ստանաս  
և ստացված դրամի որքանության մասին թուղթ տաս նրանց: Քեզնից  
ստացված ինչ թուղթ, որ գտնվի որևէ մեկի ձեռքին գանձի որքանու-  
թյան մասին, այդ նույն թուղթը մեզ համար ընդունելի պիտի լինի իբրև  
[հաստատումն] եղածի որքանության մասին և իբրև մեր ստացածը:  
Քեզ պատվիրում ենք, որ Հայոց տան գանձը պահելով քաղաքամրոց-  
ներում՝ ամեն ամիս հաշվետու լինես Հայոց տան պալատին և սպասես  
մեր հրամանին:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:

Մ. ի.      ○  
Մ. գ.      ○

Ս. տ.    ○  
Վ. տ.    ○  
Գ. տ.    ○

**Երկրաչափի հրամանի օրինակ**

ԳԼՈՒԽ 72

Տեսնելով Վասպուրական աշխարհի ժողովրդից ընդունելությունն  
ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր  
մտքում համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ  
երեք տարի ժամանակով երկրաչափի պաշտոնի շնորհման հրաման  
տվեցինք, որ [դու՝] տիար Ստեփանոսդ Գողթնից, Հայաստանյայց երկ-  
րի երեսին չափելու իրավասություն ունենաս: Քեզ իշխանություն տվե-  
ցինք չափելու և բաժանելու յուրաքանչյուր նահանգ նահանգից, գա-  
վառ՝ գավառից, հաստատելու քաղաքների, վանքերի բաժիններն ըստ  
օրենքի և Հայոց տնից շնորհված թույլտվության ու խոստումների, ինչ-  
պես և թղթի վրա բացորոշելու Հայաստանյայց ողջ երկիրն իր սահ-  
մանների մեջ՝ լեռներով, անտառներով, լճակներով, գետերով, աղբ-  
յուրներով և այլն: Քեզ իշխանություն տվեցինք արգելելու ամեն մեկին,  
ով էլ որ նա լինի, եթե կամենա տուն կառուցել, ու նրա ցանկությունը

հակառակ լինելով հայոց սովորությանը՝ բակերի [ու տների] շարքից դուրս լինի,<sup>56</sup> մոտ գտնվի այլևայլ անրոցների ու բերդերի և կամ անբողջապես անրոցի սահմանում լինի: Դու նաև պարտավոր ես ամեն մի մեծ քաղաքի մերձակայքում, քաղցր ջրի ակունքի մոտ, միշտ պահել լայնարձակ մի դաշտ, որպեսզի այնտեղ կայան առնեն 60 հազար զինվորներ: Եվ թող ոչ ոք իրավունք չունենա այնտեղ շինելու տուն և տնկելու այգի: Քեզ իշխանություն տվեցինք Յայոց տան ծախսով բացել ավելի կարճընթաց ճանապարհներ, վերացնել բլուրները, եթե շահավետ լինի՝ անցկացնել ջուր մի տեղից դեպի մյուսը: Քեզ պատգամում ենք ջանք թափել և հոգատար լինել երկրի նկատմամբ, եթե պետք է՝ տնկել անտառ և կամ հատել, անել ամեն ինչ, որ նախապայման է և անհրաժեշտ մեր հայրենիքի լիության համար:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Ս. տ. <input type="radio"/>
	Վ. տ. <input type="radio"/>
Մ. ի. <input type="radio"/>	Գ. տ. <input type="radio"/>
Մ. գ. <input type="radio"/>	

### Տկարաց պետի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 73

Տեսնելով Արարատյան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում համոզվելով Յայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով տկարաց պետի պաշտոնի շնորհման թուղթ տվեցինք, որ դու՝ տիար Յովհաննեսդ Դվինից, իշխես համայն տկարաց տան վրա, որը պահպանվում է Յայոց տան կողմից: Քեզ իշխանություն տվեցինք Յայոց տան ծախսով բոլոր մեծ քաղաքների մոտ հիմնելու լայնարձակ տուն՝ տկարների և վիրավորների<sup>56</sup> բնակեցման համար: Պատգամում ենք զգուշություն հանդես բերել և գտնել բժիշկներ՝ տկարներին դարմանելու համար, նաև որոնումներ կատարել մեր երկրի երեսին, ծաղկանց հովիտներում, [հավաքել] անտառի ծառերի կեղևը և խտտերի արմատներ ոչ միայն բժշկության ու դեղորայքի համար, այլև ի հայտ բերելու նրանց գաղտնի շնորհները, որ այժմ մեր մեջ անծանոթ են. գուցե երևան գան զանազան ծաղիկներ, սերմեր, կեղև ու արմտիք, որոնք անհրաժեշտ կլինեն թե մեր ժողովրդին և թե ուրիշ շատերին ու վաճառելու նպատակով կարող են տարվել օտար երկիր: Քեզ իշխանություն տվեցինք ամբողջ կարողությամբ զգուշանալ, որ հայ ազգի մարմնի և մեր աշխարհի մեջ չմտնի բորոտությունը, այդպի-

սի ախտավորներին հեռացրու հիվանդների միջից, մեր նահանգներից, քաղաքներից ու բոլոր բնակավայրերից, բնակեցրու առանձին բնակության վայրերում, անմարդաբնակ լեռների վրա, դարմանիք նրանց, մինչև որ վերջնականապես բուժվեն, և ապա նրանց թույլ տուր, որ ազատ շրջեն մեր երկրում: Նաև քեզ պատվիրան ենք տալիս, որ եթե հայ ազգի հասարակ խավից տնանկ ու աղքատ մարդիկ հանդիպեն, նրանց խնամքի ծախսը հատուցվի Յայոց տան կողմից: Դու իրավասություն ունես Յայոց տան ծախսով պահելու ամեն մի քաղաքի բոլոր հիվանդներին՝ մաքուր զգեստներով ու չափավոր սննդով, ամեն մի նահանգի քաղաքի իշխանի գիտությամբ:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Ս. տ. <input type="radio"/>
	Վ. տ. <input type="radio"/>
Մ. ի. <input type="radio"/>	Գ. տ. <input type="radio"/>
Մ. գ. <input type="radio"/>	

### Յագարապետության հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 74

Տեսնելով Տայք աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Մկրտիչ Ազուլեցուդ և հայոց տանուտների ատյանի առաջ քո երդմամբ սրտանց համոզվելով Յայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով զորագնդի վրա իշխանություն շնորհեցինք՝ հագարապետի պաշտոնը, որ դու՝ քաջ հագարապետ Մկրտիչդ Ազուլիսից, հաստատուն մնաս որպես հագարապետ և հրամայող լինես հագար զինվորաց գնդին, նրանց, որոնք քեզ կհանձնվեն հայոց քաջիմաստ սպարապետի կողմից, և ջանաս դեպի գործ՝ ըստ Յայաստանյայց օրենքի, ուր որ կհրամայի քեզ հայոց քաջիմաստ սպարապետը, բացի Յայոց տան վրա իշխելուց: Քեզ իշխանություն շնորհեցինք՝ հրամանով դատապարտելու և շղթայի զարկելու քո զինվորներին, եթե այնտեղ, որտեղ դու գտնվում ես, չլինի քեզնից ավելի բարձրաստիճան զորագլուխ, սակայն այն գիտակցությամբ, որ զինվորի կալանավորության վնասը պիտի հատուցես, եթե նա դատաստանի ատյանի առաջ անպարտ ճանաչվի: Քեզ իշխանություն տվեցինք քեզ հանձնված յուրաքանչյուր զինվորի նկատմամբ անսասան պահել օրենքի ամեն մի հոդված, որպեսզի յուրաքանչյուրը հատուցում ստանա ըստ իր ձեռքի գործի արժանիքի՝ համապատասխան Յայաստանյայց օրենքի վճռի ու դատաստանի:

Գրվեց... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:

Մ. ի.

Մ. գ.

Ս. տ.

Վ. տ.

Գ. տ.

### Հարկերի կարգադրության պաշտոնյայի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 75

Տեսնելով Բարձր Հայքի ժողովրդի ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում հանդավելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով պետության հարկերը դյուրացնողի պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Մկրտիչդ Կարինից, իշխանություն ունենաս բոլոր հարկերի ու մաքսերի վրա՝ մեր ժողովրդի հեշտության համար, որպեսզի ոչ ոք՝ հարկապահանջները, մաքսավորները, հաս առնեղներն ու բաժատերերը,<sup>57</sup> նեղելով և խաբեությամբ և կամ վախեցնելով ցորենի մի հատիկ անգամ չկարողանան ավելի վերցնել, քան [նախատեսված է] Հայոց կարգադրությամբ և մեր ժողովրդի կողմից: Քեզ իշխանություն տվեցինք ի պաշտպանություն հասարակ ժողովրդի՝ ջատագովը լինել ընդհանուր հայոց՝ ընդդեմ մաքսապետների ու հարկապահանջների, օգտակար լինել նրանց, որպեսզի իրենց զրկողների դեմ նրանց գանգատը չհասնի [մինչև] մեր դատաստանական պալատ, և թույլ չտալ հարկապահանջներին, որ հարկ, հաս, բաժ և այլն վերցնեն մաքուր ընդեղենից և քիչը թողնեն ժողովրդին, այլ ինչ տուրք որ դաշտում տիրոջ կողմից նրանց տրվի, յուրաքանչյուր կողմի համար համահավասար լինի: Ամեն ուղիով, ինչով հնարավոր է, պետք է օրենքով դյուրություն ստեղծել ժողովրդի համար: Եղի՛ր պաշտպան, և Տերը քեզ օգնական:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:

Մ. ի.

Մ. գ.

Ս. տ.

Վ. տ.

Գ. տ.

### Ռոճկահատույցի պաշտոնի հրամանի օրինակ

ԳԼՈՒԽ 76

Տեսնելով Տայք աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և քո երդման հիման վրա մեր մտքում հանդավելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով պետության ռոճկահատույցի պաշտոնի շնորհման հրաման տվեցինք, որ դու՝ տիար Զաքարիադ Պարտիզացիորից, իշխանություն ունենաս համայն գորքի զինվորականության, ինչպես և բոլոր պաշտոնյաների ռոճկի հատուցման վերաբերմամբ: Յուրաքանչյուր ամիս վճարումը պետք է կատարվի քո ներկայությամբ, և ռոճկի ստացման թղթի վրա պետք է լինի քո ստորագրությունը, ապա վճարն ստացվի գանձարանից: Քեզ պարտավորեցնում ենք, որ զգույշ լինես, որպեսզի շարքային զինվորների ռոճիկը, որ բաց է թողնվում Հայոց տնից, անպակաս մտնի մեր զինվորի ձեռքը՝ յուրաքանչյուր ամսվա առաջին օրը, [անկախ այն բանից՝] նրանք մարմնով առողջ կլինեն թե տկար: Վճարվող դրամը պետք է ընտիր և մաքուր լինի և ոչ թե հին ու մաշված, ոչ մի թերություն չունենա, այնպես որ մեր զինվորը իր հասարակ ռոճկից մի պղնձե լումա իսկ չկորցնի, որովհետև իր ծառայության վարձն է, նա որ գիշեր ու գօր հավատարմորեն տքնում է Հայոց տան համար: Եվ թող Տերն այս աշխարհում բարեկարգությամբ լրացնի նրանց բոլոր պակասությունները, իսկ հանդեծյալ կյանքում՝ հավիտենական փառքով:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին,  
կնքեցին և հանձնեցին:

Մ. ի.

Մ. գ.

Ս. տ.

Վ. տ.

Գ. տ.

### Վաշխապարտի օրինակ<sup>58</sup>

ԳԼՈՒԽ 77

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Բարսեղի որդի Մարտիրոսս Լոռի գյուղաքաղաքից, Սեղբեստրոսի որդի տիար Վրթանեսին Աստապատ քաղաքից բովանդակ տուգանքով հանդերձ լրիվ պարտք եմ երկու հարյուր արծաթ դահեկան: Որ դա լրիվ և հաստատապես վճարելու եմ նույն Վրթանեսին կամ իր կտակակատարին, ժառանգին և կամ իր անունից [երաշխավորված անձին, այդ մասին] անձամբ պարտավորվեցի կտակակատարի, ժառանգի ու իր անունից [երաշխավորված անձի] և հատկապես վկաների ներկայությամբ, որի համար ստորագրեցի

այստեղ և կնքեցի՝ Լոռի քաղաքում, այսինչ օրը, հոկտեմբեր ամսի տասնութին, մեր Տեր Փրկչի մեկ հազար յոթ հարյուր յոթանասուներեկ տարում:

Վերոանվանյալ նույն Մարտիրոսս փոխ են առել և ստացել վերոանվանյալ Վրթանեսից ստուգապես ամբողջը մեկ հարյուր հատ հայկական արծաթ դրամ, որը մեկ տարում ավելանալու է հարյուրին վեց վաշխի հաշվով, ինչ որ հատուցելու են նույն ժամին, երբ պահանջի:

Այժմ այս պայմանագրով իմ պարտականությունն այսպիսին է, որ եթե վերոանվանյալ Մարտիրոսս ինքս կամ իմ կտակակատարի, ժառանգի և կամ իմ անունից [երաշխավորված անձի] միջոցով ամբողջը լրիվ և անթերի վճարեն հիշյալ տիար Վրթանեսին կամ նրա կտակակատարին, ժառանգին և կամ իր անունից [երաշխավորված անձին] մեկ հարյուր հայկական արծաթ դրամը լրիվ՝ դրան ավելացած վաշխով հանդերձ, ապա այնուհետև այդ տուգանքի ու պարտքի [գիրը] կկորցնի իր արժանավորությունն ու ուժը: Իսկ եթե դրան հակառակը կատարվի, ապա [տուգանագիրն] ամենայն առունով կպահպանի իր արժանավորությունն ու ուժը:<sup>59</sup>

Վկայում ենք, որ ստորագրեց,  
կնքեց և հանձնեց:

Մարտիրոս որդի  
Բարսեղի

Մանասե որդի Գրիգորի

Հարություն որդի Մինասի

**Պարտագերծի օրինակ**

ԳԼՈՒԽ 78

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Սիմեոնի որդի Մանասես Սեղրի գյուղից, Աթանեսի որդի պարոն Սամուելին Եղվարդ գյուղից լրիվ պարտք են ամբողջը տուգանքով հանդերձ վեց հարյուր արծաթ դահեկան: Որ դա լրիվ և հաստատապես վճարելու են նույն պարոն Սամուելին կամ իր կտակակատարին, ժառանգին և կամ իր անունից [երաշխավորված անձին, այդ մասին] անձամբ պարտավորվեցի կտակակատարի, ժառանգի ու իր անունից [երաշխավորված անձի] և հատկապես վկաների ներկայությամբ, որի համար ստորագրեցի այստեղ և կնքեցի՝ Սեղրի գյուղում, այսինչ օրը, հուլիս ամսի տասնութին, մեր Տեր Փրկչի մեկ հազար յոթ հարյուր յոթանասուներեք (1773) տարում:

Սիմեոնի որդի վերոանվանյալ նույն Մանասես [փոխ] են առել և ստացել Աթանեսի որդի վերոանվանյալ պարոն Սամուելից ստուգապես ամբողջը լրիվ երեք հարյուր հայկական արծաթ դահեկան, որը հատկացվում է այն հաջողակ կարավանի բեռների համար, որի կարա-

վանապետն է Սարգիս Սեբաստացու որդի պարոն Մաղաքիան, և որը պետք է ճանապարհ ընկնի Գյանջա քաղաքից և հասնի մինչև Արզրում քաղաք, այն է՝ Կարին, կամ ուղիղ ճանապարհով և կամ այլ քաղաքներ ու գյուղեր մտնելով, մինչև որ նշված կարավանն իմ բեռներով անփորձանք հասնի Կարին քաղաք և իմ բեռներն իջեցնի սովորական իջևանելու տեղում: Այդ բեռնատեղափոխման համար շահը կազմելու է հարյուրին տասներկու [տոկոս] հաշվով: Եթե փոխադրումը կատարվի չորս ամսվա ընթացքում, անցած ժամանակի համար շահը կրկնակի ավելի է լինելու: Բայց վերոնշյալ երեք հարյուր դահեկանի ընդհանուր վնասը՝ ճանապարհի, գետերի, անձրևների, թշնամիների, հրդեհների, ավազակների և այլ պատճառներով, ընկնում է Աթանեսի որդի, հիշյալ պարոն Սամուելի կողմի վրա:

Այժմ այս դաշնադրությամբ իմ պարտավորությունն այսպիսին է, որ վերոասացյալ կարավանն իմ բեռով Կարինի, այն է՝ Արզրումի, նշված կարավանահանգիստն անվճառ հասնելուց հետո, քսանմեկ օրվա ընթացքում Սիմեոնի որդի վերոանվանյալ Մանասես ինքս կամ իմ կտակակատարի, ժառանգի և կամ իմ անունից [երաշխավորված անձի] միջոցով Աթանեսի որդի հիշյալ Սամուելին կամ իր կտակակատարին, ժառանգին և կամ իր անունից [երաշխավորված անձին] լրիվ և հաստատապես վճարելու են ամբողջը ստուգապես երեք հարյուր արծաթ դահեկան, որը հիմքն է այս պարտավորության, այն շահով հանդերձ, որ կգումարվի դրան: Եթե հիշյալ կարավանում կորչեն իմ բեռները, ինչպես ընդունված սովորությունն է՝ պարտավոր են վճարել նրա համար, ինչ որ փրկվի, որից հետո սույն տուգանագիրը կկորցնի իր նշանակությունն ու ուժը: Իսկ եթե դրան հակառակը կատարվի, ապա վերոհիշյալ տուգանքն ամենայն առունով կպահպանի իր արժանավորությունն ու ուժը:

Պարտագերծության թուղթը տվեցի միմյանց համապատասխան երեք [օրինակից], որոնցից միայն մեկն ունի արժանավորություն, այն, որով կկատարեն վճարումը. մնացած երկուսն արժանավորությունից զուրկ են:

Վկայում ենք, որ ստորագրեց,  
կնքեց և հանձնեց:

Մանասե որդի  
Սիմեոնի

}

Մարկոս որդի Ղևոնդի

Վրթանես որդի Միքայելի

**Տուն կամ հող գնելու օրինակ**

ԳԼՈՒԽ 79

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Բաղդամի որդի Մարտիրոս Աղծնիք աշխարհից, Պատիկ գավառից, Փերիա<sup>60</sup> գյուղից, վաճառեցի իմ տունը, որը կառուցված է Վարդանենց փողոցում, հարավային կողմից՝ Մնացականի որդի Մարտիրոսի, իսկ հյուսիսային կողմից՝ Ղազարի որդի Փիլիպոսի հարևանությամբ, չափսերով՝ արևելյան ծայրից մինչև արևմտյան ծայրը՝ վաթսուն կանգուն,<sup>61</sup> իսկ հյուսիսից դեպի հարավ՝ քառասուն կանգուն և երկու ըղուկ:<sup>62</sup> Այդ ամբողջ հողատարածությունը, շրջապատված պարսպով և շինությամբ, հիմքից մինչև վերև կառուցվածքով՝ թե քարով, թե փայտով, թե երկաթով և թե նրա մեջ եղած բոլոր ծառերով, բուսականությամբ, ջրհորներով և աղբյուրի ակի ջրերով, բոլորը միասին վաճառեցի Պողոսի որդի տիար Ղանիելին՝ մեր գյուղի բնակիչ վաճառականին չորս հարյուր քառասուն հայկական արծաթ դրամով, ու այդ բոլոր արծաթն առա իմ ձեռքը՝ իբրև իմ վերոհիշյալ տան գին: Այդ վճարման շնորհիվ տիրոջ իմ ողջ իրավունքը, որ ունեի նշված տան նկատմամբ, թողի և ամբողջապես հանձնեցի վերոհիշյալ տիար Ղանիելին ու նրան մինչև հավիտյան դարձրի տեր և ժառանգորդ վերոասացյալ տան: Ի հաստատումն իմ խոսքի՝ մեր նահանգի իշխանի ատյանի առաջ ստորագրեցի և կնքեցի իմ տան վաճառման թուղթը այսինչ օրը, դեկտեմբեր ամսի 15-ին, մեր Տեր Փրկչի 1773 տարում, Փերիա գյուղում:

Վկայում ենք, որ ստորագրեց, կնքեց և հանձնեց:	Մարտիրոս որդի Բաղդամի	} 0
Մարտիրոս քյոխվա Փերիայի	0	
Բաղդամ որդի Մարտիրոսի	0	

**Գլխավոր քաղաքների վրա զինվորական իշխանության հրամանի օրինակ<sup>63</sup>**

ԳԼՈՒԽ 80

Տեսնելով Տուրուբերան աշխարհից ժողովրդի ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Սահակ Բագրատունուդ և հայոց տանուտերերի ատյանի առաջ քո երդմամբ համոզվելով մեր սրտում Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ երեք տարի ժամանակով իշխանության պաշտոնի հրաման տվեցինք Երևան մայ-

րաքաղաքում, որը գտնվում է Արարատյան աշխարհում, որպեսզի դու՝ խոհեմագարդ Սահակ Բագրատունիդ, քո խորհրդակիցներով հաստատուն մնաս որպես Երևան քաղաքի ողջ զորքերի զորագլուխ, հրամայես բոլոր զորքերին, որոնք կան և բնակվում են Երևան քաղաքի տարածքում, այն կարգով և այնպես, ինչպես կիրամայի քեզ ողջ Հայոց աշխարհի երեսին համայն զորության ու զինվորության հայոց պատվարժան նախարարը: Եվ դու՝ Սահակ Բագրատունիդ, քո խորհրդակիցներով ու զորագլուխ-զինվորներով ըստ Հայաստանյայց օրենքի պետք է պահպանես Արարատյան աշխարհը: Քեզ իշխանություն շնորհեցինք Երևանի նահանգի վիճակի վրա՝ կատարել ամենայն բարի գործ, ինչպես մեր օրենքի 62-րդ գլխում է նշված,<sup>64</sup> բայց ոչ մի չար գործ, և պատրաստ լինել պատասխան տալու քո ձեռքի բոլոր գործերի համար: Քեզ իշխանություն շնորհեցինք քո վիճակի բերքի հաշվին Երևան քաղաքի գանձարանից ստանալ և ռոճիկ վճարել Հայոց տան պաշտոնատարներին՝ գանձարանին տալով ստացագիր, իսկ այդ նույն ստացագիրը տանուտերերի ատյանից պիտի ընդունվի որպես դրամին փոխարինող: Քեզ իրավունք տվեցինք, որ ամեն շաբաթ ուղարկես քո համապարփակ զեկուցագիրը քո նահանգի ու վիճակի մասին՝ հայոց տանուտերերի ատյանին տեղեկություն տալով ամեն ինչի մասին՝ Երևանի վիճակի զինվորականության քանակն ու տեղաբաշխումը՝ վախճանվածների թվով հանդերձ, եկամուտների և ծախսերի հաշիվը և այլն, որ կատարյալ ամբողջությամբ քո փոխանորդի ձեռքով պետք է ներկայացնես Հայոց բարձրագահ և բարեկարգ տան պալատ՝ սկսած ամեն տարվա հունվար ամսի մեկից: Քեզ իշխանություն շնորհեցինք, որ ուսուցիչ պահես զինվորության և ամեն տեսակ ուսուցման<sup>65</sup> համար: Քեզ հրամայում ենք միշտ հավատարիմ մնալ հայոց բոլոր օրենքներին, որպեսզի Երևանի նահանգի տարածքում ապրող բոլոր զինվորները կրթվեն և ուսումնավորվեն: Քեզ հրաման տվեցինք թե՛ խաղաղության և թե՛ պատերազմի ժամանակ ամեն շաբաթ քո նահանգի և կառավարության կացության մասին լուր տալ Հայոց տան պալատ: Թող հաստատ մնաս քո վիճակի իշխանի պաշտոնում և հավատարիմ՝ Հայոց տանը:

Գրվեց պալատում... և այլն:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:	Ս. տ.	0	
Մ. ի.	0	Վ. տ.	0
Մ. գ.	0	Գ. տ.	0



**Ուխտադրության օրինակ**

ԳԼՈՒԽ 81

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Մինասի որդի, Գանձակի վաճառական Սողոմոնս, և Միքայելի որդի, ճարաբերդի հովիվ Հայրապետս, միասին ուխտեցինք և մեր մեջ դաշինք հաստատեցինք, որ ես՝ Միքայել հովիվս,՝ անձամբ պարտավորվում եմ և կտակակատար դառնում Միքայելի որդի տիար Հայրապետի ամբողջ ստացվածքը ներքոնշյալ թվականից սկսած վեց ամիս ժամանակվա ընթացքում Գանձակ քաղաքում տիար Միքայելին հանձնել՝ երեք հարյուր գառ, որոնցից հարյուրը՝ խոյ և երկու հարյուրը՝ ոչխար, նաև վեց բեռ անարատ յուղ, ամբողջը՝ տկերի մեջ, տասներկու բեռ ախորժահամ պանիր, երեք բեռ մոմ և չորս բեռ մաքուր մեղր, որոնց գնի համար համաձայնության եկանք և պայմանավորվեցինք այսպես՝

300 գառներից ամեն մի գառը՝ մեկ արծաթ դահեկան, որով ամբողջը կազմում է հայկական արծաթ դահեկան .....	300.
6 բեռ յուղ, մի բեռը՝ 50 արծաթ դահեկան .....	300.
12 բեռ պանիր, մի բեռը՝ 50 դահեկան .....	600.
3 բեռ մոմ, մի բեռը՝ 100 դահեկան .....	300.
4 բեռ մեղր, մի բեռը՝ 50 դահեկան .....	200.
<b>Ամբողջը կազմում է արծաթ դահեկան .....</b>	<b>1700:</b>

Այս դաշնադրության համաձայն ես՝ Հայրապետս, այսօր տիար Սողոմոնի ձեռքից ստացա մեկ մեկ հազար հայկական արծաթ դահեկան, իսկ մնացած դահեկանը կստանամ վերոհիշյալ ապրանքը տիար Սողոմոնին հանձնելուց հետո: Ես էլ՝ Մինասի որդի Սողոմոնս, անձամբ պարտավորվում եմ իբրև կտակակատար, որպեսզի ճարաբերդի Հայրապետ հովիվի ամբողջ ունեցվածքը՝ Գանձակ քաղաքում ժամանակին սահմանված վերոհիշյալ ապրանքը երբ հանձնելուց հետո ստանամ և նրա գինը, որ վերևում հիշատակվեց, ինչքան որ վճարեցի, դրա զուտ մնացորդ յոթ հարյուր հայկական արծաթ դահեկանն առանց այլևայլի այդ օրը վճարեմ Միքայել հովիվին կամ իր տեղակալին: Ու մենք՝ Սողոմոնս և Հայրապետս, կրկին ուխտադիր եղանք, որ ով մեզմից ետ կանգնի վերոհիշյալ ուխտադրությունից, պարտավորված լինի ամբողջ արժանավորությամբ հատուցելու վերևում ներկայացված ապրանքի տոկոսը. յուրաքանչյուր հարյուրին՝ քսանով, և վերադարձնի ներկայումս ստացած դահեկանը:

Այսպես մեր ուխտի դաշնագրի՝ միմյանց համապատասխան երկու [օրինակ] հաստատեցինք. մեկը ես՝ Սողոմոնս, ստորագրեցի Հայրապետի համար, և մեկն էլ ես՝ Հայրապետս ստորագրեցի Սողոմոնի

համար, Գանձակի պալատում, այսինչ օրը, ապրիլ ամսի տասին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեց, կնքեց և հանձնեց:		Սողոմոն որդի Մինասի	}○
Մանգասար որդի Սիմեոնի	○	Հայրապետ որդի Միքայելի	}○
Բաղդասար որդի Գաբրիելի	○		

**Հարսանյաց համար դաշնադրության օրինակ<sup>67</sup>**

ԳԼՈՒԽ 82

Թող հայտնի լինի ամենքին, որ մենք՝ Կարփի գյուղից Ադամի որդի Աբրահամս և Մուղնի գյուղից Եղիազարի դուստր Եղիսաբեթս, ուխտ դրեցինք և մեր մեջ հարսանյաց դաշինք հաստատեցինք, որով ես՝ Աբրահամս, այսօր իմ հարսությունից մեկ հազար հայկական արծաթ դահեկանի տեր և ժառանգ դարձրի Եղիազարի դուստր պատվարժան Եղիսաբեթին, որպեսզի ինչ ծախսորդություն էլ գա իմ ունեցվածքին, կամ էլ եթե իմ կյանքին վախճան հասնի, և կամ իմ կյանքի ընթացքում ինչ հաջողություն որ վրա գա իմ ունեցվածքին, իմ ամբողջ ունեցվածքի զուտ մաքուր բաժնից իբրև առաջին ժառանգորդ մեկ հազար արծաթ դահեկանի տերն է Եղիազարի դուստր պատվարժան Եղիսաբեթը: Թող տեր դառնա և վայելի, ինչպես ինքը կամենա: Նաև ուխտեցի և անձամբ պարտավորվեցի նշված պատվարժան Եղիսաբեթին, որ ներքոհիշյալ ամսաթվից հետո վեց շաբաթ ժամանակամիջոցում ամուսնանամ իր հետ՝ ըստ Հայաստանյայց սուրբ եկեղեցու օրենքի, և իմ կյանքի ամբողջ ընթացքում ես և ինձնից ծնված բոլոր որդիներն ու դուստրերը միշտ հավատարիմ մնանք ամուսնության կարգին՝ Հայաստանյայց սուրբ եկեղեցու օրենքով ի Քրիստոս մկրտելով մեր զավակներին:

Նմանապես ես էլ՝ Եղիսաբեթս Մուղնիից և տիար Եղիազարի դուստրս, համաձայնեցի դաշինքին և այն ամենին, ինչ որ վերևում գրվեց, և ուխտեցի, որ ամուսնանամ Ադամի որդի կարփեցի պարոն Աբրահամի հետ ու իմ կյանքի ողջ ժամանակաընթացքում մշտապես հնազանդ մնամ Հայաստանյայց սուրբ եկեղեցու օրենքին և հավատարիմ՝ իմ ամուսնուն:

Այս ուխտադրության ու դաշինքի առնչությամբ տոկոս նշանակեցինք և մեզ վրա պարտականություն վերցրինք, որ ով որ մեզանից

վերևի ուխտադրությունից հրաժարվի և գլանա այն ի կատար հասցնել, պարտավոր պիտի լինի հայոց ողորմության տանը վճարելու հինգ հազար արծաթ դահեկան:

Այսպես կայացավ մեր դաշինքը և ուխտադրությունը՝ մեր կամքով ու հոժարությամբ և ընդունելի եղավ մեր ծնողների ու ազգականների կողմից: Այս բաղձալի նպատակի համար միաբան հույս տածելով Տիրոջը՝ սպասենք, որ մեզ արժանի դարձնի և սրբությամբ հասցնի սուրբ ամուսնության ժամանակակետին, որպեսզի հայոց սուրբ եկեղեցու քահանայի ձեռքով կարողանանք ընդունել մեր Տեր Արարչի օրհնությունը՝ աճելու, բազմանալու մեր Տեր Արարչի պաշտման համար և օգնական լինելու Հայոց բարձրագահ և բարեկարգ տանը: Ամեն:

Դաշնագիրը՝ միմյանց համապատասխան երկու [օրինակով] ստորագրեցինք. մեկը ես՝ Աբրահամ ստորագրեցի պատվարժան Եղիսաբեթի համար, և մեկն էլ ես՝ Եղիսաբեթ ստորագրեցի տիար Աբրահամի համար, Սուղնի գյուղում, այսինչ օրը, օգոստոս ամսի վեցին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Աբրահամ որդի Ադամի	}○
Սիմեոն որդի Մարկոսի	○	Եղիսաբեթ դուստր Եղիազարի	}○
Աթանաս որդի Կիրակոսի	○		

**Գանգատի օրինակ՝ ուղղված դատաստանի պալատին**

ԳԼՈՒԽ 83

Երևան քաղաքում դատաստանի պատվարժան դատավորներին.

Գանգատվողս ձեր Սարգիս հողագործ Բամբակաձորցի՝ ընդդեմ Վահանի որդի ամբաստանյալ<sup>68</sup> Միքայել ձկնորսի:

Ներողամիտ եղեք:

Ներքո գանգատվողս փրկչական 1770 թվականի սեպտեմբեր ամսին վաշխապարտի թղթով Վահանի որդի, ամբաստանյալ Միքայել ձկնորսին հանձնեցի երկու հարյուր քսան ղուռուշ<sup>69</sup> հռոմեական դրամ, որը համապատասխանում է մեր երկու հարյուր վաթսուներես հայկական արծաթ դրամին, և ամբաստանյալը գանգատվողիս հաստատ խոսք տվեց, որ վերոնշյալ դրամը կվճարի երկու տարի ժամանակամիջոցում՝ յուրաքանչյուր հարյուրին տարեկան 6 ղուռուշ վաշխով հանդերձ: Գանգատվողիս խոսքը հաստատելու համար սրա հետ ներ-

փակ պատվական պալատի ատյան ներկայացրի ամբաստանյալի վաշխապարտության [թղթի] օրինակը՝ Ա նշավորումով: Մեր պայմանադրության ժամկետը լրանալուց հետո գանգատվողս սիրով և բարեկամաբար բազմիցս դիմել եմ ամբաստանյալին իմ դրամի և վաշխի խնդրով, բայց մինչև այսօր ոչ մի հատուցում չեմ ստացել: Այդ պատճառով էլ խնդրում եմ, որ պատվական պալատից կանչ արձակվի ամբաստանյալին և իսկույն պարտավորեցվի նրան՝ երաշխիք տալու իր անձի համար, որ կներկայանա դատաստան: Ձեր արդար դատավարությունից ակնկալում եմ, որ հրաման կտաք գանգատվողիս կողմից ամբաստանյալին, որպեսզի անթերի հատուցի գանգատվողիս դրամը վաշխով և այն ծախսով հանդերձ, որ պահանջվելու է դատաստանի համար: Այդքան բարության դիմաց թող Տերը հանդեծյալ կյանքում վարձահատույց լինի ձեզ:

Գրվեց Երևան մայրաքաղաքի պալատում, այսինչ օրը, հոկտեմբեր ամսի 3-ին, մեր Տեր Փրկչի 1768 թվականին: Իմ՝ Էլիազ ատենաբանիս ձեռքով մուտք արվեց Երևանի պատվական պալատի ատյան:

**Ամբաստանյալի հանդիմանության օրինակ ընդդեմ գանգատվողի**

ԳԼՈՒԽ 84

Երևան քաղաքում դատաստանի պալատի պատվարժան դատավորին.

Ամբաստանյալս ձեր Միքայել ձկնորս որդի Վահանի՝ ընդդեմ գանգատվող Սարգիս Բամբակաձորցու: Ներողամիտ եղեք:

Ներքո ամբաստանյալն ընթերցեց գանգատվողի գանգատն՝ ուղղված իր դեմ, իմացավ այն ամենը, ինչ որ ասված է նրանում, և այժմ խոնարհաբար պատասխանում է ընդդեմ իր գանգատվողի ու վկաներով կարող է հաստատել անարդարացի պահանջը գանգատվողի, նաև ազահությունը նրա, որը կամենում է ձեր ամբաստանյալին գրկել իր իրավունքներից:

Խոստովանում եմ, որ թեպետ վաշխապարտի թուղթը, որը գանգատվողի ձեռքին է և որի մասին խոսում է գանգատվողը, հավաստի ստորագրված է սույն ամբաստանյալիս ձեռքով, բայց մեր կողմից հիշատակված գումարը, այսինքն՝ երկու հարյուր քսան ղուռուշ հռոմեական դրամը, գանգատվողը [լրիվ] չի ածել սույն հանդիմանողիս ձեռքը, այլ միայն՝ հարյուր ութսուն ղուռուշ, իսկ մնացած քառասուն ղուռուշը երդվեց, որ մի ամիս ժամանակամիջոցում սույն ամբաստանողիս կվե-

րադարձնի երկու լիտր քղամիդի<sup>70</sup> հետ միասին, որն անհրաժեշտ է ինձ ձկնորսական ուռնկան պատրաստելու համար: Իսկ սույն ամբաստանյալս, ընդունելով այդ պայմանը և հավատալով գանգատվողի երդմանը, ստորագրեցի երկու հարյուր քսան դուռուշ բովանդակող վաշխապարտության թուղթը և հանձնեցի գանգատվողին՝ հույս ունենալով, որ մեկ ամիս ժամանակամիջոցում ձեռք կբերեմ քղամիդը և կանցնեմ ձուկ որսալու գործին: Այդ անհրավ գանգատվողը ոչ միայն ծուլացավ և իր խոստման ժամանակասահմանը խախտեց, որովհետև չհանձնեց քղամիդը այնքան ժամանակ, մինչև որ անցավ ձուկ որսալու շրջանը, և անչափ վնաս եղավ սույն ամբաստանյալիս, այնպես որ այդ վնասը երեսուն հայկական արծաթ դրամից ավելի պակաս չի լինի, - այլև իր խոստացած քղամիդը վեց ամիս ժամանակ անց ուղարկեց, որ, ինչպես տեսանք ու հաստատեցինք, փտած էր և որևէ բանի պետք չէր: Բազմիցս լուր տվեցինք և Բամբակածոր գնացող մարդկանց միջոցով գրեցինք գանգատվողին ու հայտնեցինք նրան, որ իր քղամիդը փտած է, և սույն ամբաստանյալը հանձն չի առնում և չի ընդունում այն՝ քառասուն դուռուշի դիմաց, սակայն այդ գանգատվողը պատասխան չտվեց ամբաստանյալիս ու ոչ խոսքով և ոչ էլ գործով չհուսադրեց, և այդ քղամիդն ընկած մնում է մինչև այսօր: Վաշխապարտի իմ պայմանի ժամկետը լրանալուց հետո գանգատվողն սկսեց համոզել ամբաստանյալիս՝ ըստ իմ ստորագրած վաշխապարտության թղթի հատուցել իրեն: Սույն ամբաստանյալս խոստացա գանգատվողին փոխհատուցել 180 դուռուշը՝ անցած ժամանակի վաշխի հետ միասին, եթե գանգատվողը 30 արծաթ դահեկանը վերադարձնի հանդիմանողիս, որի պատճառը նրա թերանալն էր և պետք եղած ժամանակ քղամիդը չուղարկելը: Բայց գանգատվողը, չհամաձայնելով ամբաստանյալիս ասածին, իր գանգատը մտցրեց պատվական պալատ՝ ջանալով, եթե կարողանա, վնաս հասցնել սույն ամբաստանյալիս:

Արդ ուրեմն, ամբաստանյալս պատրաստ եմ հատուցել իմ պարտքը՝ հարյուր ութսուն դուռուշը՝ իր վաշխով հանդերձ, որ ավելանում է նրան, եթե գանգատվողը՝ վերադարձնի ամբաստանյալիս վնասը՝ երեսուն հայկական արծաթ դահեկանը՝ իմ վաշխապարտության թղթի հետ միասին: Ամբաստանյալս ակնկալում եմ պատվական պալատի արդարադատությունը, որպեսզի մտովի վերահասու լինեն, որ անարդարության ծնունդ տվողը գանգատվողն է եղել, հրաման արձակեն, որպեսզի դատաստանի ամբողջ ծախսը թե գանգատվողի և թե ամբաստանյալի համար հատուցի միայն գանգատվողը, որովհետև ամբաստանյալը ամեն ժամ խոստացավ վճարել այն, ինչ իր պարտքն է, մինչդեռ գանգատվողը չցանկացավ և ի հավելումն իր անարդարության՝ իրեն զցեց դատաստան:

Վերևում իմ ամբողջ ասածի համար ունեմ վկա, որը հաստատում է իմ խոսքը: Ավելի քան այդ՝ սպասում եմ պատվական պալատի հրամանին և այլն:

Գրվեց Երևան մայրաքաղաքի պալատում, այսինչ օրը, նոյեմբեր ամսի 10-ին, մեր Տեր Փրկչի Քրիստոսի 1768 տարում: Իմ՝ Սարգիս ատենակալիս ձեռքով մուտք արվեց Երևանի պատվական պալատի ատյան:

#### Վճռաթղթի օրինակ, որ արձակվում է դատաստանից<sup>71</sup>

ԳԼՈՒԽ 85

Երևան մայրաքաղաքի դատաստանի պատվական պալատից վճիռ արձակվեց բամբակածորից հողագործ, գանգատվող Սարգսի և Վահանի որդի, ամբաստանյալ Միքայել ձկնորսի վերաբերյալ [այն մասին,] որ ամբաստանյալը պարտավոր է գանգատվողին հատուցել երկու հարյուր երեսունչորս հայկական արծաթ դահեկան անցած ժամանակի՝ մեր Տեր Փրկչի 1770 տարվա սեպտեմբերի վեցից մինչև այսօր՝ մեկ հարյուրին տարին վեցով [ավելացած] վաշխով հանդերձ, նաև վերադարձնել գանգատվողից ստացած երկու լիտր քղամիդն այն վիճակում, ինչպիսին այն կա այսօր, իսկ գանգատվողն էլ պարտավոր է ամբաստանյալին վերադարձնել վաշխապարտի թուղթը և ապահով ու ազատ համարել նրան պարտքից. երկու կողմի համար դատաստանի ծախսը պարտավոր է հատուցել գանգատվողը, իսկ ամբաստանյալը [դրանից] մնալու է ազատ:

Գրվեց Երևան քաղաքի դատաստանի պատվական պալատում,<sup>72</sup> այսինչ օրը, ապրիլի 10-ին, մեր Տեր Փրկչի 1772 տարում:

Երևանի դատաստանի պատվական պալատի կնիքը:  
Վճռի հաշվեհամարի մեջ մտցվեց իմ ձեռքով.

Մանասե գրագիր ○

#### Ստացված իրերի վերաբերյալ թղթի օրինակ

ԳԼՈՒԽ 86

Ես՝ Ջեբեդիայի որդի Բադրամս, Պարույրի որդի տիար Մանասեից ստացա վեց հարյուր հայկական արծաթ դահեկան: Դրա համար խոստացա և սրանով պարտավոր դարձրի ինձ, որ վերոհիշյալ վեց հարյուր դահեկանը պակասեցնեմ տիար Մանասեի պարտքից, որն

ըստ Տիրոջ 1768 տարվա հունիսի 5-ը թվակիր վաշխապարտի մի [թղթի] ինձ պարտք է երեք հազար չորս հարյուր արծաթ դահեկան: Որ խոսքս ճշմարիտ է, այսօր ստորագրեցի Անի քաղաքում, հունիս ամսի 10-ին, մեր Տեր Փրկչի Քրիստոսի 1769 տարում:

Մանասե որդի Պարույրի

**600 արծաթ դրամ**

**[Փոխադարձաբար] պարտքից արձակման թղթի<sup>73</sup> օրինակ**

ՉԼՈՒԽ 87

Թող հայտնի լինի ամենքին, որ մենք՝ ներքոստորագրյալներ Կիրակոսի որդի Աթանաս Մեղրի գյուղից և Մելքիսեդի որդի Կիրակոս Եղվարդ գյուղից, երկար ժամանակով առ ու տուր ենք ունեցել միմյանց հետ՝ թե վաճառականությամբ, թե պարտավորությամբ<sup>74</sup>, թե հող՝ վարձու և թե արոտավայր՝ ոչխարների հոտերն արածեցնելու տալով և այլն: Միմյանց հետ մեր տուրևառության սկզբից մինչև օրս մեր մեջ ստորագրել ենք թե պայմանագրերի, թե պարտքի և թե ստացվածքի վերաբերյալ բազմատեսակ գրություններ: Մեր բոլոր գործերի ավարտն այսօր այն եղավ, որ մեր մեջ կատարված անցյալ գործարքների ամբողջ հաշիվը համեմատեցինք ու փակեցինք, մեր առ ու տուրից ինչ պակասություն որ եղել է՝ միմյանց նկատմամբ լրացրինք, մեր մնացորդ պարտքը միմյանց անթերի հատուցեցինք և երկու կողմից էլ գոհունակությամբ մեկս մյուսիս անպարտական համարեցինք ու հոժարակամ ներում շնորհեցինք միմյանց: Այդ և սկզբից մինչև այսօր ինչ բան ու գործ որ մեր մեջ միմյանց նկատմամբ տեղի է ունեցել՝ ամբողջապես փակեցինք և ընդունեցինք, որ այսուհետև չիլիշվեն՝ մեր երկուսի կողմից ստորագրված ամեն կարգի թղթերով հանդերձ: Դրանք, որ որևէ կողմից տրված են եղել մյուսին, որ ժամանակ էլ և ում ձեռքին էլ որ երևան՝ համարեցեք արժանավորությունից զուրկ: Այս արձակման թուղթը միմյանց համապատասխան երկու [օրինակից] գրեցինք և մենք՝ Աթանաս ու Կիրակոս, վկաների ներկայությամբ ստորագրեցինք ու կնքեցինք, որպեսզի յուրաքանչյուրս [դրանցից] մեկն ունենալով՝ մեզ ապահով զգանք սկզբից մինչև այս օրս մեր մեջ եղած ամեն տեսակ վճարումներից:

Գրվեց այսինչ օրը, Մեղրի գյուղում, ապրիլ ամսի 14-ին, մեր Տեր Փրկչի 1767 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:

Աթանաս որդի Կիրակոսի } 0

Կյուրեղ որդի Աստվածատուրի } 0

Կիրակոս որդի Մելքիսեդի } 0

Սինաքարիմ որդի Ասանեթի } 0

**Աճծերի երաշխավորության թղթի օրինակ**

ՉԼՈՒԽ 88

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Կարապետի որդի Ջեբեդիաս Եղվարդ գյուղից, իմ անձը երաշխավոր դրի Գաբրիելի որդի, նույն Եղվարդի բնակիչ Միքայելի պարտքի դիմաց, Երևան քաղաքի պատվական պալատի ատյանի առաջ խոստացա, որ ինչ ժամանակ էլ պատվական պալատի կողմից Գաբրիելի որդի, վերոհիշյալ Միքայելին կանչի հրաման արձակվի, նա պատրաստ պիտի ներկայանա ատյան: Իսկ եթե նա փախչի, ապա ինքս՝ Կարապետի որդի Ջեբեդիաս, կներկայանամ պատվական պալատի ատյան և հանձն կառնեմ Միքայելի բոլոր պարտքերը, եթե նա կենդանի լինի և փախած: Բայց եթե բնական մահով մեռած լինի, ապա երաշխավորված պարտքն ինձ վրա չի մնալու: Որ իմ խոսքը հաստատուն է, դրա համար ստորագրեցի այսինչ օրը, Երևան մայրաքաղաքում, մարտ ամսի 16-ին, մեր Տեր Փրկչի 1767 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեց, կնքեց և հանձնեց:

Ջեբեդիա որդի Կարապետի } 0

Կյուրեղ որդի Աստվածատուրի } 0

Սինաքարիմ որդի Ասանեթի } 0

**Գույքի վերաբերյալ երաշխավորության թղթի օրինակ**

ՉԼՈՒԽ 89

Թող հայտնի լինի ամենքին, որ ես՝ Յովսեփ Արեմաթացիս, իմ անձն ու ստացվածքը երաշխավոր դրի իմ Մարտիրոս Եղբոր պարտքի դիմաց: Տիրոջ 1767 տարվա սեպտեմբերի 15 թվակիր վաշխապարտի մի թղթով նա բանբակածորդի տիար Կիրակոսին պարտք է ամբողջ երեք

հարյուր արծաթ դահեկան: Եթե վերոհիշյալ իմ եղբայր Մարտիրոսը վախճանվի, ես պարտավոր եմ վճարել նրա վերոհիշյալ պարտքը: Իմ անձով ու ստացվածքով պարտավորվեցի, որ առանց որևէ պատճառ բերելու՝ բանբակածորցի տիար Կիրակոսին ես կհատուցեմ իմ եղբոր պարտքը:

Գրվեց այսինչ օրը, Արեմաթ քաղաքում, հունվար ամսի տասին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1767 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեց,  
կնքեց և հանձնեց:

Հովսեփ Արեմաթացի օ

Մարտիրոս որդի Սարգսի օ

Մովսես որդի Հունանի օ

### Ննջեցյալների կտակի թղթի օրինակ<sup>75</sup>

ԳԼՈՒԽ 90

Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

Կտակը մահվանից հետո է ուժի մեջ, ինչպես կարգադրում է սրբազան Պողոս առաքյալը:<sup>76</sup> Ահավասիկ ես՝ Սիմեոնի որդի, Մանազկերտ գյուղից, ազգությամբ հայ ի Քրիստոս մկրտված և հավատացյալ Ստեփանոս, այժմ իմ կամքով ու իմ հոժարությամբ և բոլոր զգայարաններով առողջ՝ Աստծու և մարդկանց առաջ իմ կտակը կազմեցի, որպեսզի մահվանիցս հետո ուժի մեջ լինի, այսինքն՝

Նախ ինձ համար կտակակատար կարգեցի իմ ավագ որդի Ջաքարիային, իմ եղբայր Նավասարդին և հատկապես իմ բարեկամ Միքայելին՝ Պետրոսի որդուն, որպեսզի սրանք միասին իմ կտակակատարը լինեն, մինչև որ այս կտակիս մեջ ինչ որ հիշված է՝ ի կատար ածեն. երկրորդ՝ երկրի երեսին ինչ ստացվածք որ ունեմ՝ թե իմ աշխատանքով և թե նախնիներիցս ինձ մնացած, բոլորը թող հավաքեն, վաճառելուն վաճառեն, ինչ որ պահելու է՝ գին դնեն. ինչ և ինչքան որ իմ ողջ ունեցվածքը կազմի՝ նրանից նախ և առաջ թող ընդունված կարգով վճարեն իմ թաղման ծախսը, երրորդ՝ հարկը, մաքսը, հասը և բաժը՝ Հայոց տանը, չորրորդ՝ քահանաների ժամապաշտության տուրքը և ապա՝ բոլոր պարտքերս, ինչ որ ցույց է տալիս իմ հաշվեմատյանը:<sup>77</sup> Մնացած զուտ ունեցվածքս [բաժանել] այնպես, ինչպես ստորև [ներկայացվում է]:

Թող իբրև իմ հոգեբաժին՝ քառասուն պատարագուց վճարեն մեղ-

քերիս թողության համար, քսան արծաթ դահեկան՝ էջմիածնի Սուրբ աթոռին, տասը արծաթ դահեկան՝ Սուրբ Կարապետի վանքին և տասը արծաթ դահեկան՝ իմ խոստովանահայր տեր Կիրակոսին, իսկ հիսուն արծաթ դահեկան էլ՝ հայոց ողորմության տանը:

Թող իմ ամբողջ ունեցվածքից, ինչքան որ այն կազմի, յուրաքանչյուր հարյուրին հինգ հաշվով վարձ ստանան իմ կտակակատարները, և իրենց ավելորդ նեղության դիմաց, որ կրում են իմ գործի համար, թող Տերը նրանց վարձահատույց լինի հանդերձյալ կյանքում:

Երկրի երեսին մնացած իմ ամբողջ ունեցվածքը՝ թե տուն, թե այգի, ագարակ, անտառ, ոչխարի հոտ, անասուններ, ոսկի, արծաթ, ակնեղեն և ամեն ինչ, որքան որ կազմի, համահավասար թող տասը բաժին անեն և հանձնեն երեք որդիներիս, երկու դուստրերիս և կնոջս՝ հետևյալ խորհրդով, որ իմ որդիներ Ջաքարիան, Մաղաքիան ու Աթանեսը և իմ տիկինը յուրաքանչյուրն [ստանա] երկուական բաժին, իսկ իմ դուստրերից ամեն մեկը՝ մեկ բաժին: Այսպես բաժանելով՝ թող ամենքի բաժինը հանձնեն իրենց տերերին, և նրանք էլ ստանան իբրև իրենց ժառանգություն, վայելեն՝ ինչպես կամենում են և ինչպես հաճո է իրենց:

Գոհ եմ քեզնից, Տեր, որ այս կյանքում բարին տվեցիր ինձ, որպեսզի մտքիս մեջ հաստատեմ իմ սրտի վերջին ցանկությունը, որը գրեցի վերևում, ինձ արժանի դարձրիր որդիներ ունենալ՝ քեզ՝ միայնիդ պաշտելու համար: Իսկ այժմ աղաչում եմ քեզ, Տեր, քավիր իմ մեղքերն ու հանցանքները, հոգիս և մարմինս անարատ պահիր մինչև իմ մահվան օրը և այստեղից, մարմնից անջատվելուց հետո, ընդունիր իմ հոգին այնտեղ, ուր որ, Արարիչդ իմ, կցանկանաս տեսնել: Ինձ արժանի դարձրու ավետաբեր հրամանիդ՝ մտնելու հավիտենական կյանք: Ամեն:

Գրվեց Եղվարդ գյուղում, այսինչ օրը, սեպտեմբեր ամսի 15-ին, մեր Տեր Փրկիչ Քրիստոսի 1773 տարում:

Վկայում ենք, որ ստորագրեց,  
կնքեց և հանձնեց:

Ստեփան որդի  
Սիմեոնի օ

Մարտիրոս որդի Փիլիպոսի օ

Սարգիս որդի Վրթանեսի օ

## Քաղաքներում շուկա բացելու իրավունքի թղթի օրինակ

ԳԼՈՒԽ 91

Երևան մայրաքաղաքի բարձրագույն իշխան Սահակ Բագրատունու կողմից Վրթանեսի որդի Մկրտչին՝ նույն քաղաքի վաճառականին խոստում տրվեց, որ նա իրավունք ունի քաղաքի հրապարակում բացելու շուկա՝ վաճառելով ամեն տեսակ սննդից, զգեստից, ոսկուց, արծաթից, զանազան հանքանյութերից, ակնեղենից, տարբեր տեսակի ընդդեմից և բանջարեղենից [սկսած] մինչև փայտ, իրեն և իր ապրանքը պահելով Հայոց օրենքի շրջանակում, վճարելով հարկ, մաքս և այլն: Բայց նրան արգելեցինք գնել և վաճառել դեղորայք, որ մահացուցիչ է: Իսկ եթե բժշկության նպատակով որևէ մարդու դարչին վաճառի, ապա պարտավոր է գնորդի համար երաշխավոր լինել, անթերի ու հավասար պահպանել չափն ու կշիռը՝ համաձայն Հայոց օրենքի, առևտրական գործի մեջ՝ թե որևէ բան գնելիս և թե վաճառելիս զգույշ լինել, որ չխաբի միամիտ և ռամիկ մարդկանց, որևէ բան չգնի չափազանց էժան՝ մտքում նպատակ դնելով, որ հաջողեցնի գողանալ, ոչ էլ իբրև թե խաբված լինելով՝ չափազանց թանկ վաճառի, որ այդպիսի դեպքերի հետևանքով հարկադրված լինի ենթարկվելու դատաստանի:

Գրվեց Երևան մայրաքաղաքի պալատում, այսինչ օրը, մարտ ամսի չորսին, մեր Տեր Փրկչի Քրիստոսի 1773 տարում:

Սահակ Բագրատունի ○

## Նախարարի արձակած հրովարտակի օրինակ

ԳԼՈՒԽ 92

Ամենակարող Աստծու կամքով հայոց, թորգոմացիների և ալանների<sup>78</sup> ու այլոց նախարար դարձած Սմբատը հրամայում է քեզ՝ հայոց քաջ սպարապետ տիար Սիմեոնիդ նախապատրաստել խմբեր և երեք զորավոր զորագունդ կազմել՝ անթերի [զինված] զենք ու ասպարով, համահավասար հեծելազորով, հրացաններով<sup>79</sup> և հրածգային զենքերով, երեք զորագլխով, երեսուներեք հազար զինվորով: Ապա զորավոր երեք գնդերից մեկը շարժիր դեպի Տուրուբերան աշխարհ, Բերկրիի դաշտ, թիկունքում՝ Աղթամարի ծովը, որ պատրաստ լինեն ընդդեմ պարսից: Երկրորդ գունդը շարժիր դեպի արևմուտք, Երկրորդ Հայքի աշխարհ, Սեբաստիայի դաշտ, որ պատրաստ լինեն ընդդեմ հույների: Իսկ երրորդ գունդը պատրաստ պահիր Արարատյան դաշտում՝ հարկավոր ժամանակի համար: Հրաման տուր իմ զորագլուխներին՝ ընդ-

դիմանալու և սաստելու պարսից և հունաց ամբողջ զորությանը, որ ոչ մի զինվորական ուժ չկարողանա ոտնձգություն կատարել դեպի մեր աշխարհը, ով որ հանդգնի՝ մեր սրի բերանին ճարակ դառնա: Մեր սահմաններն ամուր պահիր ընդդեմ պարսից և հունաց, որպեսզի մեզ-նից նրանց սնունդ ու զենք չանցնի: Բանն այն է, որ լրտեսները մեզ հաղորդել են պարսից և հունաց՝ պատերազմի համար պատրաստություն տեսնելու մասին: Թեպետ մեր դեսպանները մինչև օգոստոսի 18-ը մեծ սիրով ընդունել են նրանց, բայց անհրաժեշտ է, որ մենք էլ պատվիրենք, ինչպես նրանք, և այլն:

Գրվեց Շուշիի պալատում, գաղտնի խորհրդարանի ատյանում, այսինչ օրը, փետրվար ամսի 5-ին, մեր Տեր Փրկչի 1765 տարում:

Հաստատվեց մեր գաղտնի խորհրդարանի խորհրդակիցներիս կողմից: Հայոց նախարարի կնիքը

Մաղաքիա գրագիր ○

ԳԼՈՒԽ 93

Ինչ-ինչ գավառից [ընտրված] որևէ փոխանորդ, լինի տանուտերության կամ թե իշխանության պաշտոնում, եթե մեռնի կամ իր մեղքերի պատճառով պաշտանանկ լինի, նրա գավառից մեկ ուրիշը պետք է կրկին ընտրվի նրա փոխարեն, ինչպես [ասված է] օրենքի տասնչորսերորդ հոդվածում, և նստի ննջեցյալի տեղը այնքան ժամանակ, որքան մնացել է նախկինում իր նախորդին տրված անցած ժամանակից:

ԳԼՈՒԽ 94

Երեք տարվա ժամանակամիջոցում, եթե մեռնելու և կամ իր մեղքերի պատճառով նախարարը պաշտոնանկ լինի, նրա տեղը պետք է նստի երկրորդ խորհրդակիցը և ըստ օրենքի պաշտոնավարության հրաման ստանա Հայոց տնից, հայոց պաշտոնատար նախարարության մեջ պետք է պատվի արժանանա՝ համաձայն 51-րդ օրենքի: Եթե երկրորդ խորհրդակիցը խորհրդակցի պաշտոնից դուրս է գալիս և անցնում նախարարի պաշտոնի, ու նրա աթոռը դատարկ է մնում, այդ դեպքում բոլոր խորհրդակիցներից յուրաքանչյուրը մեկ աստիճանով վերև է բարձրանալու, և տասներեքերորդ աստիճանի տեղում, որ դատարկ է մնալու, Հայոց տնից պիտի ընտրվի որևէ մարդ և հրամանով նստի տասներեքերորդ աստիճանի խորհրդակցի տեղը, որպեսզի տասներկու խորհրդականները լրիվ լինեն և միշտ անպակաս:



ԳԼՈՒԽ 95

Մահվան կամ մեղավոր ձեռքերի արարքների պատճառով եթե որևէ խորհրդակից պաշտոնագրկվի, ապա աստիճանագրկվածի տեղը պետք է բարձրանա ու գրավի նա, ով աստիճանով ցածր էր և նրանցից ներքև, ու ամենքն էլ, որոնք աստիճանագրկված մարդուց ցածր են գտնվում, իրենց աստիճանից մեկ աստիճան վեր են բարձրանալու: Քանի որ տասներեքերորդ աստիճանը թափուր է մնալու, ապա թափուր աստիճանի տեղում Հայոց տնից պետք է ընտրվի արժանավոր մի մարդ և Հայոց տան հրամանով բազմի տասներեքերորդ աստիճանի խորհրդակցի աթոռին՝ համանմանությամբ 94-րդ օրենքի:

ԳԼՈՒԽ 96

Ժամկետը լրանալու պատճառով նախարարը, հեռանալով նախարարության պաշտոնից, կարող է անցնել տանուտերության պաշտոնի, եթե իր գավառի ժողովուրդը նրան փոխանորդության թուղթ տա: Իսկ նախարարության գահից հեռանալը հայ ազգի մեջ նախատինքն չպիտի համարվի, եթե ոչ պատիվ՝ իր գործը լավագույնս կատարելու համար:

ԳԼՈՒԽ 97

Յուրաքանչյուր պաշտոնյա պետք է իսկույն իր պաշտոնից զրկվի և իր կյանքի ընթացքում երբեք պաշտոնի չանցնի, եթե վկաներով հաստատվում է նրա կաշառակերությունը:

ԳԼՈՒԽ 98

Ամեն պաշտոնյա մինչև իր պաշտոնի հրամանն ստանալը պարտավոր է երդվել Սուրբ Կտակարանի վրա՝ խոստանալով, որ ինքը միշտ հավատարիմ կմնա Հայոց տանը, ինչպես 37-րդ օրենքում է [ասված]:

ԳԼՈՒԽ 99

Ամեն մի իշխան իր վիճակում գտնվող քաղաքների նկատմամբ իրավասություն ունի, ինչպես նախարարը:

ԳԼՈՒԽ 100

Ամեն մի իշխանանիստ քաղաքի համար Հայոց տնից ուղարկվում են երկու զորագլուխ և մի օրենսգետ, մեկը՝ սպարապետության, մյուսը՝ ասպետության և [երրորդը՝] օրենքներին հմուտ դատավոր լինելու համար:

ԳԼՈՒԽ 101

Հայոց հովանավորության տակ գտնվող ողջ երկրում, մեծագույն մայրաքաղաքից սկսած մինչև փոքրագույն գյուղերը, նաև վրանա-

բնակների մեջ, հարկ է, որ ամեն քաղաք, գյուղ, որ ունենա մինչև քսանհինգ ընտանիք, իրենց մեջ պահեն երկու ուսուցիչ, մեկը՝ մանուկներին հայաբառ ու հայատառ ընթերցանություն ուսուցանելու, իսկ մյուսը տղաներին զինվորական արվեստին հմտացնելու և կրթելու համար: Ամեն տղա և աղջիկ պարտավոր է յուրացնել ընթերցանություն, իսկ ամեն տղա՝ ընթերցանության [հետ] և զինվորական արվեստ՝ ամենքն էլ միակերպ, առանց որևէ տարբերության:

ԳԼՈՒԽ 102

Կարգ պետք է հաստատվի մեր ցերեկվա և գիշերվա ժամերը հաշվել գիշերվա կեսից սկսած, երբ արեգակն ընթանում է՝ առավոտյան ծագելու համար: [դա] նշվելու է իբրև առավոտյան ժամը մեկը՝ [շարունակվելով] մենչև կեսօր, երբ արեգակը գտնվում է մեր գլխավերևում, և լիճում է ցերեկվա ժամը տասներկուսը: Իսկ երբ կեսօրից հետո արեգակը դառնում է դեպի արևմուտք, հաշվվում է որպես երեկոյան ժամը մեկը՝ [շարունակվելով] մինչև կեսգիշեր, որը նշվում է որպես գիշերվա ժամը տասներկուսը:

ԳԼՈՒԽ 103

Հայ ազգի կյանքում ընդունված էր, որ տարեմուտն ընկնում է նավասարդ ամսի մեջ, որը չի համապատասխանում տարվա չորս եղանակներին ու ցույց չի տալիս՝ ո՛չ զարման, ո՛չ ամռան, ո՛չ աշնան և ո՛չ էլ ձմռան սկիզբը, այդ պատճառով էլ հայոց ամսանուններն իրենց նշանակությունը պահպանել են հայոց մեջ եղած բազում գրքերի<sup>80</sup> հավաստման համար միայն: Իսկ մեր տարեմուտն սկսվում է հունվարի վեցին՝ մեր Տեր Փրկիչ Քրիստոսի Ծննդյան և Հայտնության տոնի օրը, և հայոց ամսանուններն էլ հիշվում են ըստ [անցյալում ունեցած] գործածության:<sup>81</sup>

ԳԼՈՒԽ 104

Սեկ շաբաթվա օրերի բաշխումը որոշակիորեն այսպես պետք է լինի.

1. Երկուշաբթի օրը նախարարը խորհրդակիցների հետ միասին պետք է գտնվի գաղտնի խորհրդարանի պալատում.
2. Երեքշաբթի օրը դատավորները [պետք է լինեն] դատարանի պալատում:
3. Չորեքշաբթի օրը յուրաքանչյուրը [պետք է զբաղվի] իր գործերով.
4. Հինգշաբթի օրը տանուտերերը պետք է գտնվեն Հայոց տանը.
5. Ուրբաթ օրը ամենքը [պետք է զբաղվեն] իրենց գործերով.

6. Շաբաթ օրը ամեն մի իշխան [պետք է զբաղվի] երկրին վերաբերող մասնավոր խնդիրներով:

7. Կիրակի օրը հանգիստ է, երբ մտքով պետք է լինել Արարիչ Տեր Աստծու հետ:

#### ՉԼՈՒԽ 105

Հայոց աշխարհում ծանրության մեր կշռաչափերն այսպիսին պետք է լինեն:

Ամենափոքրը մեկ ցորենահատի ծանրությունն է:

Ամեն չորս ցորենահատը մեկ դրեթ է, որը ժողովուրդը գիտե իբրև դրաթ.<sup>82</sup>

24 դրեթը մեկ դրամ է, որը արծաթ լինի թե պղինձ՝ պետք է ունենա 24 դրեթի ծանրություն:

60 դրեթը մեկ արծաթ կամ ոսկի դահեկան է:

124 դրեթը մեկ տերունի<sup>83</sup> է՝ արծաթե կամ ոսկե

24,000 դրեթը մեկ կշիռ է:

480,000 դրեթը մեկ բեռ է:

Այդպես պետք է կշռվի բոլոր կշռելի իրերի ծանրությունը:

#### ՉԼՈՒԽ 106

Հողի և<sup>84</sup> ամեն բանի չափեր համարվում են հետևյալները: Ուստի՝ 1 մատնաչափը, որը մեկ միջնամատի լայնությունն է:

2 մատնաչափը կոչվում է մեկ հող:

4 մատնաչափը կոչվում է մեկ ուղուկ:

8 մատնաչափը կոչվում է մեկ քիլ:

16 մատնաչափը կոչվում է մեկ ոտնաչափ:

40 մատնաչափը կոչվում է մեկ քայլ:

80 մատնաչափը կոչվում է մեկ գիրկ:

125 քայլը կոչվում է մեկ ասպարեզ:

1000 քայլը կոչվում է մեկ մղոն:

3000 քայլը կոչվում է մեկ փարսախ:

Այդպես պետք է չափվեն հողը և այն ամենը, ինչ որ չափվելու է:

#### ՉԼՈՒԽ 107

Հայոց ողջ երկիրը պետք է չափվի քլով, քայլով և ասպարեզով: յուրաքանչյուր նահանգի տարածությունը պետք է ըստ նախնայաց սահմանի կարգավորվի՝ բլուրներով, գետերով, աղբյուրներով ու լճակներով, որպեսզի որևէ մեկը չհանդգնի սահմանները մի քլաչափ իսկ ավելացնել կամ պակասեցնել:

#### ՉԼՈՒԽ 108

Այն պաշտոնյան, որն առանց հիվանդության պատճառի, ծուլանալով չի ներկայանա իր ծառայության վայրը, պետք է հինգ արծաթ դահեկան տուգանք վճարի՝ մինչև երեք անգամ: Եթե վճարի, բայց անպատկառորեն կարգի չհրավիրվի, իր անձը 12 օր ժամանակով բանտարկության պետք է դատապարտվի:

#### ՉԼՈՒԽ 109

Հայոց ողջ հողը՝ դաշտավայրեր ու բլուրներ, լեռներ ու անտառներ, լինի տերունի թե սեփական ժառանգություն բոլոր իշխանների, ժողովրդի և եկեղեցականների, ամեն տարի հարմար ժամանակին պետք է վարվի, ցանվի և պարարտացվի՝ հանուն առատության:

#### ՉԼՈՒԽ 110

Ով որ արտը վարելու և այգի տնկելու ժամանակը անուշադրության մատնի՝ անմշակ թողնելով իր հողը, ապա նրա հողը պետք է վարվի տերության կողմից: Եթե արտատերը մինչև երեք տարի չի հետաքրքրվում իր ագարակով, ապա տվյալ ագարակը համարվում է Հայոց տանը:

#### ՉԼՈՒԽ 111

Հայոց աշխարհի յուրաքանչյուր իշխան ամեն դեկտեմբեր ամիս պետք է թե արական, թե իգական մարդկային բնության հաշիվն ու աշխարհագիրը [կատարի] երեք աստիճանով՝ մանուկ, երիտասարդ և ալևոր, ու իր ձեռքով ստորագրված՝ ներկայացնի Հայոց տուն, որպեսզի հունվարի մեկին մատուցվի տանուտերերի ատյանում, և իրենց նահանգի հաշիվը մուտք գործած լինի:

#### ՉԼՈՒԽ 112

Յուրաքանչյուր ոք, որի ունեցվածքը հափշտակվում է ավազակների կողմից կամ գողացվում գողերից, ու ինքը չի կարողանում տեր կանգնել ու փրկել իր իրերը [գուցե առիթ տա, որ ավազակը կամ գողն իրեն վիրավորի], ապա այդ մարդն իր կորցրած ինչքի հաշիվը պետք է ներկայացնի նույն նահանգի իշխանին և երզվի Սուրբ Կտակարանի վրա, որ իր կորցրած ինչքը հավաստի այդքան է, և տվյալ նահանգի իշխանը պարտավոր է նրան հատուցել ըստ կորած իրերի արժեքի ու ինքն էլ որոնելով գտնի գողին կամ ավազակին, նրանից իր փոխհատուցումն ստանա, և նրա անձն էլ դատվի ըստ օրենքի:

#### ՉԼՈՒԽ 113

Յուրաքանչյուր ոք առանց անհրաժեշտության պահանջի երեկոյան

ժամը իննից հետո իր տնից կամ բնակության տեղից չպետք է դուրս գա և գնա մեկ ուրիշի մոտ, իսկ եթե կարիքն ստիպում է նրան դուրս գալ, նա պարտավոր է իր հետ ունենալ ճրագի լույս, ապա թե ոչ գիշերապահը նրան կծեբակալի և բանտ կդնի մինչև առավոտ: Այդ մարդը քննության պետք է ենթարկվի. եթե անմեղ գտնվի, նույն օրը պետք է ազատ արձակվի, իսկ եթե մեղավոր դուրս գա, պիտի պատժվի ըստ օրենքի:

#### ԳԼՈՒԽ 114

Ամեն մի եկեղեցում սուրբ պատարագը մատուցելու համար պետք է կանգնեցված լինի երկու սեղան: Սեղաններից մեկի վրա պատարագը պիտի կատարվի արշալույսի ժամին, երբ օրհնություն են ընդունելու ծերերը, պառավները և ալևորները, իսկ մի սեղանի վրա էլ պատարագ պիտի մատուցվի առավոտյան ժամը յոթին, երբ օրհնություն են ստանալու երիտասարդները, կանայք և աղջիկները: Ոչ մի տիկին և կամ աղախիճները, հասարակ [ծագումով] ժողովրդի դուստրերը և տղաները իրավունք չունեն նախքան արևածագը դուրս գալ իրենց տնից ու բնակարանից, բացի սուրբ տոներին՝ ընտանիքի հետ միասին:

#### ԳԼՈՒԽ 115

Ով որ իր տան մեջ կամ բնակարանում գիշերը, երեկոյան ժամը իննից հետո, հայտնաբերի սուսերով զինված որևէ մեկին, կարող է սպանել նրան, և նրա արյան համար սպանողն անպարտ է:

#### ԳԼՈՒԽ 116

Յուրաքանչյուր ոք, ով կամենում է քաղաքում տան հիմք գցել, տարածություն պետք է ստանա քաղաքի երկրաչափից:<sup>85</sup>

#### ԳԼՈՒԽ 117

Հայոց աշխարհում ամենուրեք թվանք շինողները մեծությամբ, լայնությամբ և ընդհանուր տեսքով պետք է համաչափ [պատրաստեն], որպեսզի կայծահանը, գնդակը և սմբան մեկը մյուսին օժանդակ լինեն:<sup>86</sup>

#### ԳԼՈՒԽ 118

Երբ ամեն տղա հասակով դառնում է տասներկու տարեկան, ծնողների առաջին պարտականությունը պետք է լինի իրենց սեփական վաստակով գնել մի թվանք ու մի սուսեր, նվիրել տղային և նրան պարտադրել, որ զինվորական արվեստ սովորի:

#### ԳԼՈՒԽ 119

Ամեն ոք, ով տանուտերերի ատյանին ի ցույց է դնում իր նորարարությունը, որը Հայոց աշխարհում շահավետ է հասարակաց բարօրու-

թյան համար, պետք է պարզև ստանա ըստ իր գործի արժանավորության:

#### ԳԼՈՒԽ 120

Յուրաքանչյուր ոք, ով տանուտերերի ատյանում կհայտարարի ու կհաստատի որևէ մեկի թաքուն մտադրությունն ու չար գործը, որոնք վնաս կարող են հասցնել ընդհանուր ժողովրդին ու Հայոց տանը, պետք է պարզև արժանանա: Իսկ եթե ստությանը ու նախանձից կմատնի արդար մարդուն, պետք է պատժվի:

#### ԳԼՈՒԽ 121

Ամեն մարդ կարող է վաճառել իր ունեցվածքը, բացի մարդկային բնությունից:

#### ԳԼՈՒԽ 122

Կատարյալ վաճառքի դեպքում գնողը պետք է վաճառողից երկու վկաների ստորագրությամբ թուղթ ստանա, ապա թե ոչ [վաճառքը] կատարյալ համարվել չի կարող:

#### ԳԼՈՒԽ 123

Ամեն մի փաստաթուղթ, թե՛ վաճառքի, թե՛ դաշնադրության և թե՛ այլ գործողությունների վերաբերյալ, ում կողմից էլ որ այն ստորագրված լինի՝ արժեք չի ունենա, եթե հակառակ է Հայոց օրենքին կամ ընդդեմ է մարդու բնական բնությանը:

#### ԳԼՈՒԽ 124

Դրամն անվտանգ շահեցնելու վաշխն ավելին չի կարող լինել, քան թե մեկ հարյուրին տարեկան վեց [տակոս] շահը:

#### ԳԼՈՒԽ 125

Մեկ հարյուր դրամի համար տարեկան վեց տոկոսից ավելի վաշխ ստացողը<sup>87</sup> պետք է այդ շահի կրկնապատիկը վերադարձնի նրան, ումից ստացել է:

#### ԳԼՈՒԽ 126

Դրամը միայն քսանչորս դրեթ ծանրություն պետք է ունենա և կարող է լինել ոսկուց, արծաթից, պղնձից և կամ կապարից, իսկ դահեկանը և տերունին պետք է միայն արծաթից և ոսկուց լինեն: Նրանց վրայի պատկերը սուրբ խաչի տերունական նշանը պետք է լինի՝ տպվելու ժամանակի թվականով, իսկ մյուս երեսին՝ մաղթանքի գիր հայոց բա-

րեհաջողության համար և անվանումն այն տեղի, որտեղ տպվում է:

#### ՉԼՈՒԽ 127

Հայոց տնից օժանդակություն պետք է լինի բոլոր մասնագետների, հատկապես փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության և այլ [բնագավառների ներկայացուցիչների] նկատմամբ:

#### ՉԼՈՒԽ 128

Յուրաքանչյուր օտարական, թե ի Քրիստոս հավատացյալ և թե այլահավատ, ազատորեն կարող է մուտք գործել Հայոց աշխարհի, հաստատվել և բնակվել Հայոց տան հովանու ներքո, ազատորեն պաշտել իր աստծուն՝ ըստ իր սովորության, վճարելով հարկ ու մաքս և ըստ Հայոց օրենքի արժանանալով պատվի կամ դատաստանի՝ իր ծեռքի կատարած գործերի համար: Իսկ եթե կամենա իր ունեցվածքով կրկին դառնալ իր հայրենիքը, երբ որ ինքը ցանկանա՝ պարտավոր է իր ունեցվածքի համար տասանորդ վճարել և մնացածն ազատ է տանելու այնտեղ, ուր որ ինքը կամենա:

#### ՉԼՈՒԽ 129

Թող ոչ ոք չհամարձակվի նախատինքով և հայիոյությամբ բացել իր բերանը որևէ մարդու պատվի ու պաշտոնի դեմ, ով էլ որ սա լինի:

#### ՉԼՈՒԽ 130

Յուրաքանչյուր մարդու՝ անձամբ աշխատած վաստակը նրա մահվանից հետո, ննջեցյալի կտակի առկայության դեպքում, պետք է կատարում ստանա համաձայն նրա ցանկության՝ ըստ գրված կտակի, իսկ չլինելու դեպքում՝ ննջեցյալի ունեցվածքը պետք է բաժանվի նրա հաջորդների վրա: [Այսպես՝]

Նախ՝ պետք է [վճարել] ննջեցյալի թաղման ծախսը.

Երկրորդ՝ բնակված տան վարձը, նաև սպասավորների վարձը.

Երրորդ՝ [եկեղեցու] պաշտոնյայի վարձը՝ ըստ արժանվույն.

Չորրորդ՝ ողջ ունեցվածքի կեսը [պետք է տրվի] կնոջը կամ ամուսնուն, եթե զավակ չունեն.

Հինգերորդ՝ երեք բաժնից մեկը՝ կնոջը կամ ամուսնուն, եթե զավակ ունեն.

Վեցերորդ՝ երեք բաժնից երկուսը [պետք է տրվի] որդուն, իսկ մեկը՝ դստերը, որովհետև որդին երկու է համարվում, իսկ դուստրը՝ մեկ.

Յոթերորդ՝ եթե ոչ որդի ունի և ոչ էլ դուստր, հատկացվում է ննջեցյալի ծնողներին.

Ութերորդ՝ եթե ծնող չունի, հատկացվում է նրա եղբայրներին ու քույրերին.

Իններորդ՝ եթե [կենդանի եղբայրներ ու քույրեր] չունի, ապա [հատկացվում է] եղբայրների սերունդներին:

#### ՉԼՈՒԽ 131

Յուրաքանչյուր երիտասարդ, եթե ամուսնանալու նպատակով նշանվում է աղջկա հետ, պետք է ընդունելի լինի երկու կողմի ծնողների համար: Եթե ծնող չունի, ապա [համաձայնություն պետք է տա] ընտանիքին մերձավոր որևէ մեկը, նաև պետք է լինի այն տեղի իշխանի հրամանի թուղթը, որտեղ բնակվում են ամուսնացողները: Այդ դեպքում միայն ամուսնության համար նրանք քահանայից կարող են ստանալ օրհնություն:

#### ՉԼՈՒԽ 132

Եթե միմյանց հետ ամուսնացած մարդ ու կնոջից մեկնումեկը վախճանվի, և երևան գա նրանց միջև [կնքված] հարսանեկան դաշնագիրը, ապա ննջեցյալի ունեցվածքը պետք է բաժանվի ըստ նրանց դաշնագրի, իսկ եթե չգտնվի, ապա՝ ըստ օրենքի:

#### ՉԼՈՒԽ 133

Մինչև երկու հազար տուն բնակիչ ունեցող ամեն գյուղի կամ գավառի կենտրոնում և կամ գավառի մի կողմում անառիկ մի տեղ պետք է ամուր պարիսպներով շրջապատել՝ ներսում այնքան մեծ շտեմարաններ ու սենյակներ, ուր բնակություն կարողանան հաստատել և ապահով տեղ գտնել երկու հազար ընտանիք՝ անասունների և սննդամթերքի մեկ տարվա պաշարով:

#### ՉԼՈՒԽ 134

Ողջ Հայոց աշխարհի իշխանը պարտավոր է աշնանը և ցորենը հնձելու ժամանակ իր իշխանության բոլոր գավառների բնակիչներին պարտավորեցնել, որ յուրաքանչյուրն իր տնից, իր նոր ցորենից հարյուր կշիռ ցորեն մուծի իր գավառի ամրոցի շտեմարանը, և փոխարենը նրա տանը ցորեն հատկացնեն հին, անցած տարվա ցորենից:

#### ՉԼՈՒԽ 135

Հայոց երկրի ո՞ր մասում կամ ո՞ր գավառում ժանգահարություն, մորեխ, կարկուտ և վնասաբեր ուրիշ ինչ էլ պատպիի, որ ավերի ցանքսերը, և ժողովուրդը զրկված մնա սննդից, այդպիսի յուրաքանչյուր ոք իր գավառի ամրոցի շտեմարանից կարող է ստանալ 25 կշիռ ցորեն՝ իր

սննդի և 25 կշիռ ցորեն էլ՝ իր ցանքսի համար, անվճար և առանց փոխ-  
հատուցման, բայց Հայոց տանը շնորհակալ լինելով:

#### ՉԼՈՒԽ 136

Հայոց աշխարհի յուրաքանչյուր իշխան իր իշխանությանը ենթակա  
բոլոր անրոցներուն Հայոց տան ծախսով պետք է ամբարի բավակա-  
նաչափ վառող, հացահատիկ, փայտ, վառելիք, աղ, տիկ՝ ջուր վերց-  
նելու համար, տրեխացու կաշի, կացին՝ փայտ կոտրելու համար և  
բահ: Տարվա բոլոր չորս եղանակներին չորս անգամ հավատարին  
մարդկանցից վերատեսուչներ պետք է գործուղի, որպեսզի ականա-  
տեսների միջոցով ստուգի և եղածի թերի կամ բավարար լինելու մա-  
սին երդունով բացատրություն տա իշխանի ատյանում՝ պակասը լրաց-  
նելու նպատակով:

#### ՉԼՈՒԽ 137

Հայոց երկրում որևէ վայրում և որևէ ժամանակ, լինի խաղաղ թե  
պատերազմական ժամանակ, եթե ինչ-որ թշնամի հարձակվի մեզ վրա  
և ավար առնի կամ կողոպտի, ու եթե տվյալ գավառը կամ նահանգը  
համարձակորեն պաշտպանվելով ու մինչև յոթ մարդ սրի գոհ տալով՝  
չկարողանա փրկել իրենց ունեցվածքը, թշնամին ավարառության են-  
թարկի, ապա գավառի ունեցվածքի կողոպուտը պետք է փոխհատուցի  
Հայոց տունը՝ որպես թե կորցնողին վճարելով իր պարտքը:

#### ՉԼՈՒԽ 138

Հայոց տան հովանավորությամբ [մեր] երկրի երեսին ապրող յուրա-  
քանչյուր ոք եթե գերի ընկնի թշնամիների ձեռքը, Հայոց տունը պար-  
տավոր է փրկել նրան և վերադարձնել իր տունն ու բնակավայրը:

#### ՉԼՈՒԽ 139

Թուրք պատրաստող յուրաքանչյուր արհեստավոր պարտավոր է  
բոլոր տեսակի թղթերից գերազանց և ավելի մեծարժեք բավականա-  
չափ թուրք արտադրել միայն Հայոց տան համար, թղթի մեջ ջրանշան՝  
դրոշակով մի գառ և տարեթիվ, այնպիսի քանակությամբ, որքան հար-  
կավոր լինի Հայոց տանն ու իշխանությանը, ստանալով իր թղթի գինը:

#### ՉԼՈՒԽ 140

Պարտքի, պայմանագրի, վաճառքի, պաշտոնավարության մասին  
ամեն թուրք, իշխանությունների հրովարտակ և այլն պետք է գրել տե-  
րունի թղթի վրա, որն ունի գառի նշանը:

#### ՉԼՈՒԽ 141

Հայոց երկրում զանգատ ունեցող յուրաքանչյուր ոք պարտավոր է  
որևէ ատենաբանի ձեռքով այն գրել տալ տերունի թղթի վրա և հանձնել  
իր նահանգի դատաստանատուն, իսկ ամբաստանյալը պարտավոր է  
պատասխանել նրան՝ գրելով տերունի թղթի վրա: Այնուհետև երկկողմ-  
յան կրկնակի վիճաբանություններից հետո դատաստանատան կողմից  
պետք է կայացվի նրա վճիռը՝ [գրվելով] տերունի թղթի վրա:

#### ՉԼՈՒԽ 142

Հայոց երկրում Հայոց տան ենթակայությամբ տարբեր տեղերում  
[գործող] դատաստանական իշխանությունների կայացրած ամեն մի  
վճիռ եթե չի բավարարում զանգատվողին և կամ ամբաստանյալին,  
որոնց նկատմամբ վճիռն արձակված է, հարցն ազատորեն կարող է  
դատաստանատնից հանվել, և զանգատի օրինակն ու ամբաստանյալի  
պատասխանը մտցվել հայոց դատավորների պալատ՝ այստեղ արժա-  
նանալով Հայոց աշխարհի իշխանների վճիռն ու դատաստանին: Յու-  
րաքանչյուր դատաստանատուն պարտավոր է ըստ նրանց խնդրանքի՝  
տալ նրանց ազատ իրավունք, և ապա ինչ վճիռ որ պալատից և հայոց  
դատավորներից դուրս գա՝ այն պետք է լինի վերջնական վճիռը, ու  
նրանով պետք է բավարարվեն:

#### ՉԼՈՒԽ 143

Հայոց հովանավորության ներքո բնակվող յուրաքանչյուր ոք ազա-  
տորեն կարող է զանգատվել ընդդեմ ամեն մի մարդու՝ թե նախարարի,  
տանուտերի, խորհրդակցի, դատավորի, իշխանի և թե հասարակ ժո-  
ղովրդի: Ամբաստանյալը պարտավոր է պատասխանել զանգատվողին  
և ընդունել իր նկատմամբ ըստ օրենքի արձակված վճիռը:

#### ՉԼՈՒԽ 144

Ամեն ոք, ով պատասխանում է ընդդեմ զանգատվողի, պետք է երդ-  
վի իր գրածի վրա, այսինքն թե՝ պատասխանը, որ գրեց, ճշմարիտ է:

#### ՉԼՈՒԽ 145

Ամեն մի հանդիմանող, ով իր դեմ զանգատ ունի, պարտավոր է  
երաշխավորության համար ստորագրված թղթով որևէ մարդու, իբրև  
երաշխավորի, ներկայացնել դատաստան այն նկատառումով, որ եթե  
ամբաստանյալը փախչի, ապա երաշխավորը հանդես գա նրա փոխա-  
րեն: Եթե երաշխավոր չներկայացնի, ապա հանդիմանողը բանտ կնետ-  
վի, մինչև որ վճիռ արձակվի նրա գործի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 146

Ամեն մի մեղադրյալ, եթե պարտքի պատճառով բանտ մտնի, ապա գանգատվողը պարտավոր է նրա սննդի և կարիքների համար ամեն օր վճարել մեկ արծաթ դրամ:

ԳԼՈՒԽ 147

Եթե պարտքի պատճառով բանտարկվածի համար յուրաքանչյուր օր մեկ արծաթ դրամ չմուծվի՝ ներառյալ մինչև երրորդ օրը, ապա բանտարկվածն ազատ կհամարվի պարտքից և հրամանից ու վճռից, ազատորեն դուրս կգա բանտից՝ [գնալով] ուր ինքը կամենա, և գանգատվողը կկորցնի իր ինչքը:

ԳԼՈՒԽ 148

Պարտագանգների<sup>88</sup> բանտը պետք է մաքուր կացարան լինի, որպեսզի վնաս չհասցնի բանտարկյալ անծանց առողջությանը:

ԳԼՈՒԽ 149

Քրեական հանցագործների բանտը պետք է պատշաճի մեղավորների գործերին:

ԳԼՈՒԽ 150

Տարվա բոլոր չորս եղանակներին հայոց ողջ իշխանություններում պետք է քրեական հանցագործների դատավարություն տեղի ունենա, և բանտերը մաքրվեն՝ ըստ օրենքի վճռի:

ԳԼՈՒԽ 151

Անպարտ հանդիսացող բոլոր գանգատվողներից ու ամբաստանյալներից և կամ հանիրավի ու նենգությամբ գանգատվողներից ու հանդիմանողներից մեղավորն է պարտավոր հատուցելու դատաստանի պալատում երկու կողմերի համար կատարված ծախսը և արդարի կորցրած ժամանակի վնասը:

ԳԼՈՒԽ 152

Ամեն ոք վաճառքի համար Յայոց աշխարհից օտար աշխարհ կարող է արտահանել ձեռքով պատրաստված արտադրանքից, բայց զենքն ու ձեռքի գործիքները և այն ամենը, ինչ ոսկուց և արծաթից է, նաև պատերազմական մեքենաներն արգելված են:

ԳԼՈՒԽ 153

Ամեն ոք, ով օտար աշխարհից ոսկի և արծաթ ներմուծի Յայոց աշ-

խարի, Յայոց տնից շնորհների պիտի արժանանա և ազատված լինի հարկից ու մաքսից:

ԳԼՈՒԽ 154

Յայոց աշխարհից ոսկի և արծաթ արտահանող յուրաքանչյուր ոք, եթե երաշխիք կտա, որ հայրենիքից մեկ հարյուր դահեկան հանելու դիմաց մինչև երկու տարի ժամկետում նորից կներմուծի մեկ հարյուր և երեսուն դահեկան, ազատություն կստանա արտահանելու որքան ի վիճակի է:

ԳԼՈՒԽ 155

Թող [մեր] երկրի իշխաններից և ժողովրդից ոչ ոք չհանդգնի խառնվելու եկեղեցականների խորհուրդներին ու գործերին, բացի երեցփոխության պաշտոնից:

ԳԼՈՒԽ 156

Թող եկեղեցականներից ոչ ոք չհամարձակվի միջամուխ լինել իշխանության կամ աշխարհականների խորհուրդներին ու գործերին, բացի տանուտերության մեջ եկեղեցական փոխանորդից:

ԳԼՈՒԽ 157

Յայոց երկրի երեսին, բոլոր նահանգներում, Յայոց տան ծախսով պետք է կառուցվի տուն՝ դաստիարակելու համար ապօրինի ծնված մանուկներին մինչև նրանց յոթնամյա հասակը՝ [ապահովելով] կաթով, սննդով և հագուստով:

ԳԼՈՒԽ 158

[Յայոց] երկրի երեսին, բոլոր նահանգներում, Յայոց տան ծախսով պետք է կառուցվեն դպրանոցներ, մեկ նահանգում՝ երկուսը, մեկը՝ տղաների, իսկ մյուսը՝ աղջիկների համար, որոնք ապօրինի են ծնված, որպեսզի սովորեն կարդալ հայոց տառ ու բառով, մինչև կլրանա նրանց տասներկու տարին, որից հետո ազատ պետք է արձակվեն:

ԳԼՈՒԽ 159

Յուրաքանչյուր ոք, եթե տասներկուսից բարձր տարիքի պատանու կամ աղջկա հանդիպի, որը լինի որբ ու անտեր, խենթ ու խելառի պես պարապության հետևից ընկած, պարտավոր է նրան ներկայացնել տվյալ նահանգի իշխանին, իսկ իշխանը նրան պետք է դնի արիեստագործության:

ԳԼՈՒԽ 160

Ամեն ոք, ինչ որ ընդունի կամ խոստանա, պետք է հավատարիմ մնա իր ընդունածին ու խոստմանը և խոստացածը կատարի որպես պարտականություն:

ԳԼՈՒԽ 161

Ամեն մի աղքատ՝ կաղ կամ կույր, ծեր կամ պառավ, որ չունի որդիներ և դուստրեր, խնամքի պիտի արժանանա Հայոց տան կողմից, որը չափավոր կերպով պիտի բավարարի նրա կարիքները:

ԳԼՈՒԽ 162

Բովանդակ Հայաստանում տկարների ու աղքատների բուժման համար Հայոց տան ծախսով պատրաստի գոյություն պետք է ունենան դեղատներ՝ բժշկով հանդերձ, և բոլոր կարիքավորներին ձրի ու անվճար [դեղ] են բաժանելու:

ԳԼՈՒԽ 163

Հայոց երկրում աճող ուտելի բոլոր բարիքներից ու բույսերից արհամարհելի պիտի լինեն միմիայն բակլա կոչված ընդեղենը և սիրելի ու կոտեն անվանվող բույսերը:<sup>89</sup> Թող ոչ ոք դրանք չցանի իր արտում, որովհետև մարդու բնությանը խիստ վնասակար են:

ԳԼՈՒԽ 164

Հայոց երկրի երեսին և համայն իշխանության տանը զինվորական ուժն ըստ օրենքի պետք է մնա ամեն մի նահանգի գորագլխի ձեռքի տակ և հնազանդ տվյալ նահանգի իշխանի հրամանին:

ԳԼՈՒԽ 165

Ամեն մի պարտապան, որը ոսկու և արծաթի կամ գինու և ցորենի պարտքի պատճառով (որ քրեական հանցագործությունն չէ) բանտ ընկած լինի, եթե իր անձի համար ժամանակավոր երաշխավոր գտնի և երաշխավորի ստորագրած թուղթը հանձնի իր բանտապահին, ապա կարող է ամեն շաբաթ երեկոյան, որին [հաջորդում է] լույս կիրակին, դուրս գալ բանտից, ազատորեն մտնել իր տունն ու բնակարանը, ամբողջ կիրակի օրը լինել Տեր Աստծու տանը ու շրջել քաղաքում և նույն օրվա երեկոյան ժամին կրկին վերադառնալ բանտ:<sup>90</sup>

ԳԼՈՒԽ 166

Ոսկու և արծաթի պարտքի պատճառով, բայց ոչ քրեական մեղքով, որևէ բանտարկյալ եթե պատահի այնպես, որ փախչի բանտից, տվյալ

Նահանգի իշխանը պարտավոր է հատուցել նրա պարտքը, որ ուներ բանտարկողին:<sup>91</sup>

ԳԼՈՒԽ 167

Հայոց երկրի տարեկան ամբողջ բերքից՝ թե պտուղներից, թե բույսերից, թե անասուններից, սողուններից ու թռչուններից, պետք է բաժին հանվի Հայոց տանը հարկ, մաքս և բաժ՝ սեպտեմբեր ամսին, կեսը՝ հողի բերքից, իսկ կեսն ըստ տարվա արժողության՝ ոսկով ու արծաթով: Հողի բերքից ամբողջ վճարումը պետք է կատարվի սեպտեմբեր ամսին՝ տվյալ նահանգի տերունական շտեմարանին, իսկ ոսկին և արծաթը՝ երեք անգամով և երեք ժամկետով, մեկ՝ հոկտեմբեր ամսին, մեկ՝ հունվար ամսին և վերջին վճարումը՝ մայիս ամսին:

ԳԼՈՒԽ 168

Հայաստան աշխարհի բերքից Հայոց տան բաժինը պետք է ընդունվի ըստ գավառապետների խոսքի ու հաշվի. չպետք է քննության ենթարկվի և մանրամասնորեն ստուգվի, այլ ամեն մի գավառից պետք է ստացվի նրա գավառապետի հաշվի համեմատ:

ԳԼՈՒԽ 169

Որ նահանգում և գավառում որ հայտնվի դավաճան գավառապետ, որն Հայոց տանը զրկի իր նահանգի բերքից ու պտղից, պետք է գավառապետի իշխանությունից պաշտոնանկ արվի, իսկ նրա ազարակը մանրակրկիտ ստուգմամբ յոթ տարի պետք է բաժին դառնա Հայոց տանը, ու նրան հարդի մի շյուղ անգամ չի ներվելու:

ԳԼՈՒԽ 170

Ամեն մի իշխան, բարձրագույն իշխանավորից սկսած մինչև մասնավոր իշխանավորը, ով էլ որ նա լինի, եթե կաշառակերություն նկատվի, պետք է իր փառքից ու իշխանությունից զրկվի և կաշառքը վճարի այն մարդուն, որից վերցրել է, մի այդքան էլ՝ հայոց ողորմության տանը: Այդպիսի մարդը բոլորի առաջ պետք է նախատվի և ընդմիշտ զրկվի իշխանությունից:

ԳԼՈՒԽ 171

Ամեն մի քրեական մեղավոր, որի նկատմամբ մահվան վճիռ է կայացվում, եթե հայոց նախարարից ներման արժանանա, նրա կյանքն է ներվելու նրան, բայց ոչ պատվի, ոչ պաշտոնի ու պաշտոնավարության չի արժանանալու:



ԳԼՈՒԽ 172

Բոլոր իշխանները, լինեն բարձրագույն թե՛ մասնավոր, թե՛ զինվորության դասից և թե՛ կառավարության, ազատ են ամեն կերպ բարի գործել, իսկ չար՝ ամենևին ոչ: Ըստ այդմ՝ եթե բարեգործությունը մեր կողմից պատվի է արժանանում, ապա նրանք իրենց բարի գործերի հատուցումը, ըստ մեր հավատի, կստանան հանդերձյալ կյանքում, իսկ անօրեն գործեր կատարողները, համաձայն օրենքի, պետք է ենթարկվեն դատաստանի:

ԳԼՈՒԽ 173

Արհեստավոր [աշկերտը], մինչև որ թուղթ-վկայական չունենա՝ հաստատված իր վարպետի կողմից, որը վկայի, թե՛ նա հասուն է, չպիտի հանդգնի ինքնագլուխ անցնելու իր արհեստի գործին:

ԳԼՈՒԽ 174

Յուրաքանչյուր ոք եթե վարձու սպասավոր կամ աղախին է ձեռք բերում, պարտականությունը, վարձը և սպասավորության ժամկետը պետք է պայմանագրով հաստատվեն:

ԳԼՈՒԽ 175

Ոչ մի տեր և կամ տիկին մեղքի պատճառով իր սպասավորին և աղախինին չի կարող դալար ճիպոտի տասներկու հարվածից ավելի ծեծ տալ՝ [այն էլ] փափկամիս տեղին, որ նրա ոսկորը չջարդվի: Իսկ եթե սպասավորը կամ աղախինը տասներկու հարվածով կարգի չգան, ապա պիտի հանձնվեն իրենց բնակավայրի իշխանի ձեռքը, որպեսզի այդ իշխանը մեղքերի համար ըստ պատշաճի պատժի նրանց:

ԳԼՈՒԽ 176

Ամեն սպասավոր և կամ աղախին, եթե այնպես պատահի, որ իր տիրոջ և կամ տիկնոջ տնից մինչև երեք ամիս բավարար սնունդ, հագուստ և ռոճիկ չստանա՝ համաձայն իր պայմանագրի, ազատ է պայմանագրով [նախատեսված] իր ծառայությունից և կարող է մինչև իր խոստացած ժամկետի լրանալը հեռանալ, ուր որ ինքը կամենա:

ԳԼՈՒԽ 177

Հայոց աշխարհում, ողջ երկրի տարածքում, պետք է լինի ողորմության տուն, որպեսզի հովանավորի կաղերին, կույրերին և բոլոր տկարներին:

ԳԼՈՒԽ 178

Ամեն ոք, ով կամենում է ողորմություն տալ աղքատին, որբին և

տկարներին, պետք է հանձնի ողորմության տանը:

ԳԼՈՒԽ 179

Յուրաքանչյուր ողորմության տուն պետք է կառավարվի յոթ հայրերի ձեռքով, որոնք կոչվում են որբոց հայրեր, իսկ տան ստացվածքը պետք է շահեցնեն՝ վարձակալության տալով երաշխավորված մարդկանց: Եվ այդ հայրերի [կազմը] ամեն երեք տարին մեկ թարմացվում է՝ ստացվածքի համեմատություն կատարելով:

ԳԼՈՒԽ 180

Ով որ իր ծախսով և կամ հավաքած դրամով սեղան սարքի և հանդեսի հրավերք կատարի, նա ինքը պետք է բազմի սեղանի գլխին:

ԳԼՈՒԽ 181

Բնությամբ յուրաքանչյուր այրմարդ պետք է պատվի ու փառավորի բնությամբ կին մարդուն և օժանդակի նրա արդարությանը:

ԳԼՈՒԽ 182

Բոլոր կանայք ու աղջիկները կարող են ազատորեն շրջել գլխաբաց և երեսբաց, բայց Տեր Աստծու տանը պետք է լինեն քողածածկ:

ԳԼՈՒԽ 183

Այն տղամարդու տունը, որտեղ բացակայում է կանացի բնությամբ անձ, թե՛ ամուսնացած և թե՛ տվյալ տղամարդու ազգական որևէ կին կամ աղջիկ չպետք է մտնի, բացի այդ տանը բնակվող տղամարդու մորից ու քրոջից, բայց եթե այնտեղ տոնական հանդես է, կարող են բազմության հետ միասին մտնել:

ԳԼՈՒԽ 184

Ոչ մի տղամարդ կամ կին չպետք է հանդգնի ու մտնի ուրիշների տուն՝ առանց այդ տան տիրոջ ընդունելության:

ԳԼՈՒԽ 185

Որևէ իշխանի ենթակա ոչ մի պաշտոնատար չի կարող խորտակել ղռները և մտնել ուրիշների տուն, արդար լինեն նրանք թե՛ մեղավոր, և կալանավորել մեղավորին. բայց եթե դուռը բաց գտնի՝ կարող է մտնել և ձերբակալել մեղավորին՝ համաձայն իր տիրոջ հրամանի:

ԳԼՈՒԽ 186

Իշխանի պաշտոնատարի ձեռքը իր տիրոջ իշխանական հրամանով

ուն որ շոշափի, սա իսկույններ ձերբակալված պիտի համարվի և պարտավոր է հնազանդորեն հետևել պաշտոնատարին, ուր որ պաշտոնատարը հրամայի:

ԳԼՈՒԽ 187

Եթե երկու տղամարդ կամ կին, սովորականի պես բարկանալով, միմյանց վրա են հարձակվել, ոչ ոք մեկի կողմը չպիտի բռնի, բացի քաղցրաբան խոսքով խաղաղեցնելուց:

ԳԼՈՒԽ 188

Հայ բոլոր որդիներն ու դուստրերն իրենց նախնյաց ժառանգությունը կարող են ստանալ իրենց քսանմեկ տարին լրանալուց հետո:

ԳԼՈՒԽ 189<sup>92</sup>

Յուրաքանչյուր երիտասարդ կամ այրի, եթե համոզի որևէ կույս աղջկա, տալով նրան միայն դաստիարակին վայել տասը պղնձի դրամ՝ կենակցի նրա հետ, ըստ օրենքի պարտավոր է ամուսնանալ նրա հետ:

ԳԼՈՒԽ 190

Հայոց աշխարհի ներմուծվող պատերազմական ամեն զենք ու գործիք ազատ է հարկից ու մաքսից:

ԳԼՈՒԽ 191

Եթե որևէ ավագակ իր ավագակությունը կատարելիս հանդիպի դիմադրության և դիմադրողի ձեռքով սպանվի, ապա ավագակի արյան համար դիմադրողն անպարտ է:

ԳԼՈՒԽ 192

Ամեն ոք, ով իր ձեռքը կբարձրացնի, կհամարձակվի և կհարվածի որևէ մեկին կամ էլ կվիրավորի, իր գիշատիչ կամայականության պարտքը պետք է հատուցի հետևյալ կերպ.

Հարվածողը, եթե հսկայամարմին է և տաքարյուն, պետք է բանտ նետվի, մինչև որ մեղմանա ու դառնա հեզահամբույր.

Եթե հարուստ է, պետք է վճարի իր անիրավ գանձի տոկոսը, որպեսզի գորոզությունից խոնարհվի.

Եթե իշխանագուն է և փառատենչ, նրան ծեծ պետք է տրվի հրապարակավ.

Եթե աղքատ է, ու նրա անկարգությունը հետևանք է արյան տարերային բորբոքման, պետք է համաձայնի նույնպիսի ծեծ ստանալ այն մարդու ձեռքով, որին ինքն էր հարվածել:

ԳԼՈՒԽ 193

Կարգալույծ եղած քահանան, որ աշխարհականների կարգ է մտել, աստվածպաշտության շուք ու շնորհի չի արժանանալու:

ԳԼՈՒԽ 194

Ամուսնացած կնոջ կողմից ուրիշին տրված պարտաթուղթն արժանավորությունից զուրկ է:

ԳԼՈՒԽ 195

Ամուսնացած կնոջը, եթե այդ կնոջ ամուսինը վաճառականական գործով գտնվում է օտար աշխարհում, պատշաճ է մեկ տարվա համար տալ երկու հարյուր արծաթ դահեկանի պարտաթուղթ, դրանից ոչ ավելի:

ԳԼՈՒԽ 196

Թե թղթով, թե զառով<sup>93</sup> ու ճանով և թե ուրիշ [խաղերով] տարված ամեն խելապակաս, եթե ցերեկը հայտնաբերվի, պետք է ձերբակալվի, և ինչ որ գտնվի նրա ձեռքին՝ հափշտակվի ու տրվի հայոց ողորմության տանը, իսկ գիշերը խաղացողները, որոնց նպատակն է կարճել գիշերվա երկար ժամանակը, չպիտի շահեն կամ կորցնեն երկու արծաթ դահեկանից ավելի. դրանից ավելին արժանավայել չէ և ենթակա է տուգանքի:

ԳԼՈՒԽ 197

Ամեն ոք, ով նախատինքի խոսքերով կբացի իր բերանն ընդդեմ ում էլ որ լինի՝ թե ունեցվածքի և թե պատվի դեմ, պետք է դատաստանի ենթարկվի ու, եթե իր բերանի խոսքը չի կարող արդարացնել վկաներով և հաստատել ատյանի առաջ, պետք է դատաստանի պատժին արժանանա:

ԳԼՈՒԽ 198

Որևէ մեկի կողմից վաճառված ամեն ապրանք, եթե գնորդը կես գնով գնած լինի, զուցե թե դա գողացված ապրանք լինի, ու հայտնվի այդ ապրանքի տերը, ապա ազատորեն կարող է ստանալ իր ապրանքը՝ առանց հատուցման:

ԳԼՈՒԽ 199

Հայոց աղջիկների ամուսնության հասակը տասնչորս տարին լրանալուց հետո է, իսկ տղաներինը՝ տասնյոթ տարին լրանալուց հետո: Այդ տարիքից ավելի վաղ ժամանակն արգելված է:

ՊԼՈՒԽ 200

Քրեական մեղավորների վերաբերմամբ ամեն պատիժ պետք է ի կատար ածվի մեղավորի իսկ նկատմամբ, եթե մեղավորն իր տարիքով ավելի բարձր է տասնութամյա հասակից. իսկ եթե պակաս է, ծեծ ու խրատով պիտի արձակվի որպես անչափահաս:

ՊԼՈՒԽ 201

Ինչի վերաբերյալ էլ որ լինի ստորագրված թուղթը, արժանավորություն չի ունենա, եթե ստորագրողը լրացրած չլինի իր տասնութ տարին:

ՊԼՈՒԽ 202

Ոչ մի բանի համար երաշխավոր լինել չեն կարող ոչ քահանան և ոչ էլ կինը:

ՊԼՈՒԽ 203

Եկեղեցականը ննջեցյալի կտակակատար չպիտի լինի:

ՊԼՈՒԽ 204

Հայոց տնից այլազգին պաշտոն չի կարող ստանալ, այլ միայն նրանք, որոնք բուն հայոց ազգից են և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ:

ՊԼՈՒԽ 205

Ի Քրիստոս հավատացյալներից այլադանո ոչ մեկը Հայոց տնից պաշտոն չի կարող ստանալ, այլ միայն նրանք, որոնք Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ են:

ՊԼՈՒԽ 206

Ով որ ամուսնացած է մեկ ամուսնությամբ, Տիրոջ շնորհին կարժանանա, քանզի կբազմի իր տան սեղանի շուրջ. մարդ ու կին՝ տասներկու զավակներով, սրանք իրենց կյանքի այդ ցանկալի ժամանակը ամեն օր Հայոց տնից տասներկու հացի կարժանանան:

ՊԼՈՒԽ 207

Ամեն վճիռ, բացի քրեականից, որ դատաստանից, նահանգից ու իշխանությունից էլ որ արձակվի, ոչ ոք իրավասու չէ ետ տալ կամ գանազան փոփոխությունների ենթարկել, բացի հայոց բարձրագույն դատաստանի պալատից, եթե վճիռը [արձակվելուց] տասնհինգ օր չանցած՝ դատաստանին հայտնեն իրենց ցանկությունը, թե կամեցան [գործը] մտցնել պալատ, բայց վճիռ տասնհինգ օր անցնելուց հետո

զանգատվողի և ամբաստանյալի նկատմամբ վճիռը կհամարվի անփոփոխելի ու արդարացի:

ՊԼՈՒԽ 208

Բացառությամբ քրեական հանցանքի՝ ամեն ոք, ով դատաստանի վճռի է ենթարկվում, մասնավոր դատաստանի վճիռն [արձակվելու] օրվանից հաշված մինչև տասնհինգ օր՝ ժամանակ և իրավասություն ունի ըստ իր կամքի թե՛ ընդունել և թե՛ մերժել այն և [գործը] մտցնել բարձրագույն դատաստանի պալատ: Իսկ եթե վճիռն [արձակվելուց] տասնհինգ օր ժամանակ է անցնում, ապա վճիռն անփոփոխ և անխախտ է մնում:

ՊԼՈՒԽ 209

Ամեն մի վճռի դեպքում, բացառությամբ քրեականի, եթե տասնհինգ օր հետո զանգատվողը չի ստանում իր առնելիքը՝ համաձայն վճռի, ապա նա կարող է դիմել դատաստանին՝ կալանքի տակ դնելու պարտապանի անձը կամ ունեցվածքը:

ՊԼՈՒԽ 210

Ամեն զանգատվող եթե կալանավորել է տալիս պարտապանի անձը և բանտ մտցնում, ապա պարտապանի սեփականությունն ազատ է համարվում, իսկ բանտարկյալը շարունակելու է բանտում մնալ, քանի դեռ չի հատուցել իր պարտքի վերջին լուման:

ՊԼՈՒԽ 211

Ամեն զանգատվող եթե կալանքի տակ է դնել տալիս իր պարտապանի ունեցվածքը, ապա պարտապանի անձն ազատ պիտի լինի, մինչև որ հավաքեն պարտապանի ամբողջ ունեցվածքը, և եթե այն չբավականացնի նրա պարտքը [հատուցելու], ապա կարող են կալանավորել պարտապանի անձը, բանտ մտցնել և ըստ օրենքի մինչև մեկ տարի խնամք տանել նրա նկատմամբ: Մեկ տարուց հետո, եթե պարտապանը հանձն առնի նրան նոր փաստաթուղթ տալ, որ երեք տարվա ընթացքում կվճարի, ապա դուրս կգա բանտից, իսկ եթե ոչ՝ բանտում կմնա մինչև երեք տարի: Երեք տարի անց ազատ կհամարվի և դուրս կգա, եթե պարտքը կազմի մինչև հարյուր դահեկան, իսկ եթե ավելի լինի, պիտի մնա բանտում, մինչև որ վճարի:

ՊԼՈՒԽ 212

Ամեն մի պարտապան, եթե մինչև իր պարտատերերի զանգատվելը կազմի իր ամբողջ ունեցվածքի ու պարտքերի հաշվեցանկը և ներ-

կայացնի այն նահանգի դատաստանատուն, որտեղ ինքը բնակվում է, և դատավորի առաջ երդվի, որ իր կազմած հաշվեցանկը ճշմարտացի է, նույն ժամին իսկ պարտքերից ազատման թուղթ կստանա՝ իր ողջ ունեցվածքը հանձնելով դատաստանի տնօրինությանը, որպեսզի դատաստանը, ընտրելով որևէ մեկին, պարտապանի ունեցվածքը հանձնի իր ընտրած մարդու ձեռքը՝ հրամանով, որ վաճառի պարտապանի ունեցվածքը և, իբրև վաստակի վարձ, յուրաքանչյուր հարյուրի հինգ [մասը] վճարի [իրեն՝] ընտրված մարդուն, հարյուրի մեկ [մասը՝] պարտապանին՝ սննդի համար, մնացածը՝ հարյուրի իննսուներորս [մասը] բաժանի պարտատերերին, իսկ պարտապանն ազատ է համարվելու իր մնացած պարտքերից:

#### ԳԼՈՒԽ 213

Ամեն մի պարտապան, որն իր պարտատիրոջից կթաքցնի իր ինչքը և դատաստանի առաջ իր մասին սուտ հաշիվներ կհորինի, ու եթե հաստատվի նրա ունեցվածքի թաքցված լինելը, ապա տվյալ պարտապանը պարտքից ազատ չի համարվի, պետք է հանձնի թաքցված գույքը և ինքն էլ մտցվի բանտ, մինչև որ վճարի իր պարտքը:

#### ԳԼՈՒԽ 214

Քրեական մեղքի պարտքը հատուցելու է ոչ այլ ոք, եթե ոչ միայն այն մեղավոր անձը, որի ձեռքի արարքով է կատարվել քրեական մեղքը:

#### ԳԼՈՒԽ 215

Ամեն պարտապան, որ ոսկու, արծաթի, ձեթի, գինու և աշխարհուն եղած ամենայն բանի պարտք ունի, պարտավոր է վճարել իր ստացվածքից և իր կնոջ ստացվածքից, և միմիայն պարտապանի անձը պիտի մտցվի բանտ. կինը, որդիները, դուստրերը՝ բոլոր ժառանգներով ու ազգականները՝ անձով ու ստացվածքով ազատ են, բացի կնոջ և պարտապանի ստացվածքից:

#### ԳԼՈՒԽ 216

Ամեն ամուսնացած կին, որի ամուսինը բանտարկված է, ազատ կերպով կարող է մտնել ու բանտում լինել, դուրս գալ կամ մնալ իր ամուսնու հետ, եթե ինքը կամենա:

#### ԳԼՈՒԽ 217

Ամեն երաշխավոր, եթե դատաստանի ձեռքը չհանձնի այն պարտապանին, որին ինքը երաշխավոր է կարգվել, ինքը պետք է անձամբ հա-

տուցի պարտապանի պարտքը՝ մինևույն կարգով, ինչպես փախած պարտապանն էր [հատուցելու]:

#### ԳԼՈՒԽ 218

Որևէ քրեական հանցագործ չի կարող առաջարկել երաշխավոր, եթե իր անձը մինչև դատվելը չի գտնվել բանտում: Եթե նրա մեղքի վերաբերմամբ գանգատը երկբայելի լինի, դատաստանը կարող է ընդունել երաշխավոր, բայց այդ երաշխավորը պետք է լինի արժանավոր մարդ, ավելի քան տասը բյուր<sup>94</sup> արծաթ դահեկան ստացվածքի տեր: Եթե մեղավորը մահվան դատապարտվի և փախչի, և երաշխավորը մինչև վեց ամիս մեղավորին չկարողանա հանձնել դատաստանի ձեռքը, ապա երաշխավորը պարտավոր է հայոց ողորմության տանը վճարել հինգ բյուր արծաթ դահեկան և վեց ամսով ինքը մտնել բանտ, որից հետո ազատ կլինի, բայց ոչ մի դատաստան նրա երաշխավորությունը վերստին չի ընդունելու:

#### ԳԼՈՒԽ 219

Մահվան դատապարտված ամեն մի քրեական հանցագործ եթե փախչի, ապա նրա ծուլածո խրտվիլակը պետք է կախ տրվի կախադանից, իսկ ինքն իր կյանքի ողջ ընթացքում երկրի որ կողմում էլ բռնվի ու մատնվի դատաստանին՝ պետք է տեղնուտեղը մահապատժի ենթարկվի:

#### ԳԼՈՒԽ 220

Մահվան դատապարտված քրեական հանցագործների ամենայն ինչք և ստացվածք միանգամայն պետք է անձեռնմխելի լինեն իրենց ընտանիքների ժառանգության համար:

#### ԳԼՈՒԽ 221

Դահիճը<sup>95</sup>, որը որևէ մեկին կախում է կախադանից և մահապարտների գլուխն անջատում մարմնից, պատվազուրկ է համարվում և չի կարող մտնել այլ գործի, իսկ նրա ապրուստը հատուցվում է Հայոց տան կողմից:

#### ԳԼՈՒԽ 222

Քրեական հանցանքների վերաբերմամբ մեկ տարվա մեջ դատավարություն պետք է կատարվի չորս անգամ, տարվա չորս եղանակներին, ամեն անգամ ինչքան օր որ անհրաժեշտ լինի՝ դատաստանում դատելու համար.

մարտի 21-ին,  
հունիսի 21-ին,

սեպտեմբերի 21-ին,  
դեկտեմբերի 21-ին:

ԳԼՈՒԽ 223

Ամեն մի քրեական [հանցագործ], եթե ինքը կամենա, կարող է բանտում երեք ամիս շղթայակապ մնալ, և նրա մեղքի գործն ու մահվան վճիռը մտցվելու են բարձրագույն դատաստանի պալատ, իսկ այնտեղից՝ նախարարի ատյան: Եթե նրա մեղքի ներումը հնարավոր լինի՝ պետք է կատարվի ավելի առաջ, քան երեք ամիսը [լրանալը]: Եթե նախարարը չի բաշխի նրա կյանքը, ապա Հայոց տան համաձայնությամբ պետք է մահապատժի ենթարկվի:

ԳԼՈՒԽ 224

Ոչ մեկը, որ մահվան է դատապարտված, չի կարող նախարարի բաշխած կյանքին արժանանալ, բացի նրանից, որին Հայոց տունը որոշում է տալ կյանք. իսկ նա, որ ըստ դատաստանի վճռահատության չէ, պետք է մահապատժի ենթարկվի:

ԳԼՈՒԽ 225

Որևէ դատավոր հանցագործության համար մեղավորին բարկությանը չպիտի դատապարտի մահվան, այլ՝ գթությամբ, և մեղավորի մահը պետք է օրինակ լինի ողջերի համար, որպեսզի ողջերն իրենց վարքով հեռու մնան չարագործությունից:

ԳԼՈՒԽ 226

Այն ատենաբան դպիրը<sup>66</sup>, որը հնար կգտնի ըստ օրենքի մահվան վճռից փրկելու մեղավորին, սիրված կլինի ամենքի կողմից:

ԳԼՈՒԽ 227

Յուրաքանչյուր մանկաբարձ, որ վտանգավոր ծննդաբերությունից երեխա կծնեցնի, և ծնողն ու ծնվողը կմնան կենդանի, Հայոց տնից կստանա մեկ արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 228

Յուրաքանչյուր բժիշկ, որ կփարատի հիվանդների մահառիթմը ցավերը և կառողջացնի, Հայոց տնից կարժանանա մեկ արծաթ դահեկանի:

ԳԼՈՒԽ 229

Յուրաքանչյուր մանկաբարձ կամ բժիշկ, որի խնամակալության ներքո կմեռնի հիվանդը՝ ծնողը կամ երեխան, ամեն մեռնողի համար

մանկաբարձը կամ բժիշկը չի կարող ստանալ իր աշխատանքի վարձը և դեղորայքի գինը:

ԳԼՈՒԽ 230

Յուրաքանչյուր բժիշկ կամ մանկաբարձ պարտավոր է իսկույններ օգնության հասնել հիվանդին կամ ծնողին, երբ իմանա հրավերքի մասին:

ԳԼՈՒԽ 231

Ամեն տարի և ամեն ժամանակ, եթե ըստ հանգամանքների փոփոխության անհրաժեշտ լինեն օրենքի հոդված կամ հոդվածներ, որոնք ընդունելի լինեն համայն հայերի համար, ազատորեն կարող են հաստատել ու հռչակել համայն ժողովրդին և մտցնել մեր օրենքի մեջ:

ԳԼՈՒԽ 232

12,000 տան յուրաքանչյուր տանուտեր-փոխանորդ արժանի է իրեն լիազորողներից ստանալու տարին 3000 արծաթ դահեկան, որպեսզի ապահով լինի այն ամենով, ինչ անհրաժեշտ է, իրեն զգա ազատ և պաշտոնյա ոչ թե ինչ-որ մեկի, այլ իր գավառի կողմից և օրենքին հավատարիմ ջատագով լինի ընդդեմ ամենայն անօրինություն գործողների:

ԳԼՈՒԽ 233

Ամենայն Հայոց Հայրապետության սուրբ աթոռից պետք է ընտրվի մի արքեպիսկոպոս, որ մտնի Հայոց տուն՝ իբրև համայն եկեղեցականների փոխանորդ: Այդ եպիսկոպոսն ամեն կարգի խորհրդակցություններում պետք է համարվի որպես երկու տանուտեր, մեկ՝ հոգևոր և մեկ էլ՝ մարմնավոր: Եվ նա բազմելու է Հայոց տան աջ թևի առաջին աստիճանի երկրորդ աթոռին:<sup>97</sup> Իր ծախսի համար նա հայոց Հայրապետից ստանալու է տարին 3000 արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 234

Հայոց տունը պետք է կառուցվի ապահով գավառի մեջ, մայրաքաղաքում, ուր պետք է գտնվի նախարարի պալատը՝ պարսաված և պահակների պաշտպանությամբ, նրա մեջ՝ մի մեծ դահլիճ՝ արևելքից արևմուտք դիրքով, արևելյան կողմում՝ երկու աստիճան: Առաջին աստիճանի վրա պետք է լինի միայն մի աթոռ՝ նախարարի համար, իսկ նրա աջ կողմում, երկրորդ աստիճանի վրա, [պետք է բազմի] եպիսկոպոս տանուտերը, նրանից ցած՝ երրորդը, չորրորդը և հաջորդաբար մինչև հայոց տանուտերերի կեսը՝ ըստ համապատասխան աթոռի, մե-

կից մինչև վերջինը համարակալմամբ: Չախ կողմից, երկրորդ աստիճանի վրա, [պիտի բազմի] տանուտերերի մյուս կեսը՝ նախարարի ծախ կողմում, [հաջորդաբար] մինչև վերջինը: Բոլորն էլ, [վերինից] մինչև վերջինը, պիտի ունենան աթոռ՝ տանուտերերի համարով, որպեսզի ամենքն էլ իմանան, թե տվյալ մարդը որ գավառի փոխանորդն է, որ աթոռին է բազմում կամ որ համարով աթոռն է իր տեղը:

համար 1 { Նախարարն է՝ առաջին աստիճանի աթոռին միայնակ բազմողը, և նրա աթոռի դիմաց մի սեղան է, իսկ սեղանի վրա, նախարարի առաջ՝ մի թագ և մի սուսեր:

համար 2 { Արքեպիսկոպոսն է՝ երկրորդ աստիճանի վրա, նախարարի աջակողմը, առջև՝ մի փոքրիկ սուրբ սեղան, սեղանի վրա՝ մի Ավետարան և մի խաչ:

համար 3  
4  
5  
6  
7 { Երկրորդ աստիճանի վրա, եպիսկոպոսի աջակողմը, երկրի տանուտերերն են՝ մինչև վերջինը:

համար 8  
9  
10  
11  
12  
13  
14 { Երկրորդ աստիճանի վրա, նախարարի ձախակողմը, յուրաքանչյուրը մինչև վերջինը պետք է բազմի իր աթոռին:

### ԳԼՈՒԽ 235

Դահլիճը, որտեղ բազմում են տանուտերերը, նա է Հայոց տան կարգադրության օրենքը, նա պետք է լինի հայոց թագավոր, նրանով պետք է բովանդակ հայոց ազգը համախոհ թագավոր հանդես գա Հայաստան աշխարհում՝ միշտ հաստատուն մնալով իրավունքին ու արդարությանը՝ ըստ օրենքի կերպի ու համեմատության, որով և հույս ունեն, որ այդ թագավորությունը թերություն չի ունենա:

### ԳԼՈՒԽ 236

Յուրաքանչյուրին, ով որևէ աստիճանի պաշտոն է ստացել, ոչ ոք չի կարող ազատել կամ իջեցնել պաշտոնից, բացի նրա ծեռքի մեղսագործությունից, կյանքի կորուստից և նրա պաշտոնի ժամանակն ավարտվելուց:

### ԳԼՈՒԽ 237

Պաշտոնի աստիճանից իջեցված և կամ պաշտոնանկ արված որևէ մեկին, ով էլ որ նա լինի, ոչ ոք չի կարող վերականգնել [իր տեղում], բացի Հայոց տնից՝ իր տանուտերերով հանդերձ:

### ԳԼՈՒԽ 238

Ընդունելության, երդման, պաշտոնի և նման կարգի ամեն մի թուղթ գրված պետք է լինի ըստ այն օրինակի, ուր բացատրություն կա տվյալ խնդրի վերաբերյալ, և այդ թուղթը պետք է անցկացվի Հայոց տան մատյանի մեջ, դատավորի պալատում և այն քաղաքի նախարարի գաղտնի խորհրդարանում, որտեղ հաստատվել է:

### ԳԼՈՒԽ 239

Տասնապետից ավելի վեր որևէ աստիճանի կամ պաշտոնի նշանակված յուրաքանչյուր պաշտոնյա որ ժամանակ և որտեղ էլ կամենա՝ կարող է վերադարձնել իր պաշտոնը և ինքն ազատ մնալ: Բայց եթե նա կրկին ցանկություն ունենա որևէ պաշտոնի, ապա կարող է այն ձեռք բերել իր պաշտոնատեղում, սակայն երեք աստիճանով ցածր պաշտոնում:

### ԳԼՈՒԽ 240

Տասնապետից որևէ աստիճանով ավելի վեր գտնվող յուրաքանչյուրի պաշտոնը լինում է երեք տարի ժամկետով:

### ԳԼՈՒԽ 241

Իր պաշտոնավարության ընթացքում հավատարմորեն ծառայած յուրաքանչյուր պաշտոնատար, եթե երեք տարին անցնելուց հետո հաճո լինի տանուտերերին, որ նա մնա պաշտոնյա, պիտի շարունակի մնալ իր տեղում և հրամանաթղթով կրկին հաստատվի, եթե ինքը և իրեն առաքող[ներ]ը նույնպես կամենան:

### ԳԼՈՒԽ 242

Դատավորության, իշխանության, զինվորության, խորհրդակցության, ներառյալ մինչև նախարարության պաշտոնների դեպքում ոչ ոք իրավասու չէ բարձրանալ իր աստիճանից ավելի վեր, քան թե կարգն է՝ հարաժամ և ամենուրեք. թե վախճանվածներից, թե հանցավոր գործերի համար և թե պաշտոնի ժամկետը լրանալու պատճառով աստիճանագրկվածներից ինչ իշխանավոր էլ լինի՝ նրա տեղը պետք է մտնի նա, որը նրանից ցածր էր, և նրանից ներքև գտնվողները բոլորը միայն մեկ աստիճանով պետք է բարձրանան, այնպես որ հետին դատարկ

մնացած աստիճանի տեղը մտնի մեկ այլ ոք՝ ընտրված Հայոց տնից: Իսկ պաշտոնաթող տանուտերի տեղն ըստ օրենքի պետք է լրացվի նրա բուն տեղակալի՝ ծածուկ խորհրդակցի միջոցով:<sup>98</sup>

ԳԼՈՒԽ 243

Ամեն [հոգևոր] առաջնորդ այնտեղ, որտեղ դատավարություն է ընթանում, ինքն է միայն իրավասու վճիռ արձակելու՝ այն նույն հրամանը, որը հաճո է իր խորհրդակիցների կամքին և գրի է առնված գրագրի կողմից:

ԳԼՈՒԽ 244

Հայոց նախարարը համարվում է երկու մարդ և երկու կամք:

ԳԼՈՒԽ 245

Ամեն [հոգևոր] առաջնորդ բոլոր գործերում համարվում է երկու մարդ և երկու կամք:

ԳԼՈՒԽ 246

Որևէ տեղից կամ ատյանից երբ հրաման ու վճիռ է արձակվում, եթե լինեն մոտ քսանչորս դատավորներ, ապա վճիռն ընդունելու ժամանակ [սովորաբար] նրանց ցանկությունները տարբեր են լինում: Ի մի բերելով նրանց բոլորի կամքը, եթե տասներեքը՝ մի և տասնմեկը մի այլ կամք են դրսևորում, որ կողմը որ մեկ կամքով ավելի է՝ ապա վճիռը պետք է արձակվի նրա կամքով. մնացածները պարտավոր են հնազանդվել [թվով] ավել մարդկանց կարծիքին:

ԳԼՈՒԽ 247

Յուրաքանչյուր պաշտոնատար պարտավոր է իր մոտ պահել պաշտոնի [նշանակման] հին և նոր հրամանները՝ իբրև վկայություն կրկին պաշտոնում հաստատվելու իր արժանավորության:

ԳԼՈՒԽ 248

Ամեն մի պաշտոնատարի ռոճիկ, բացի գավառների փոխանորդներից, յուրաքանչյուր ամիս պետք է վճարվի այնտեղի իշխանի կողմից, որտեղ բնակվում է պաշտոնատարը՝ վերջինից առնելով ստացագիր:

ԳԼՈՒԽ 249

Ով որ տուն կառուցի, հարկ է, որ թույլտվություն ստանա երկրի ճարտարապետից և հրահանգ՝ նրա խորության, հիմքի հաստատության, փողոցի շարքի հետ համահավասարության և ամրոցից պատ-

շած հեռավորություն ունենալու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 250

Ամեն տուն պարտավոր է թույլ տալ, որ հարավային կողմից իր դրացին ջուրը թափի իրենից հյուսիսակողմ, նաև տան ձյունը լցնի հյուսիսակողմը:

ԳԼՈՒԽ 251

Ամեն տուն ազատ է իր տան ձյունը լցնել իր տան փողոցի սահմանը, նմանապես և թափել անձրևի ջուրը:

ԳԼՈՒԽ 252

Բոլոր մարդիկ, որոնք տներով հարևան լինելով՝ կամենում են իրենց տները կանգնեցնել մինչև յոթնաստիճան բարձրությամբ սանդուղքով, պարտավոր են իրենց հողից հարավակողմի դրացուն տալ մեկ քայլ տարածություն՝ ջուրը թափելու և այլ նպատակներով: Իսկ եթե դրացին չի կամենում, որ նա բարձրից տեսնի իր տան ներսը, կարող է պարիսպ կառուցել այնքան բարձր, որ խափանի բարձրաբերձ տան տեսարանը:

ԳԼՈՒԽ 253

Եթե առաջուց բարձր աստիճանով տուն կառուցված լինի, ապա հետագայում նրա հյուսիսակողմը տուն կառուցողը կարող է իր հողի վրա պարիսպ կանգնեցնել այնպիսի բարձրությամբ, որպիսին ինքն է կամենում, որպեսզի անտեսանելի լինի իր տան ներսը, իսկ ջուրն ու ձյունը կարող է թափել իր տան մոտ և փողոցը:

ԳԼՈՒԽ 254

Ոչ մի փողոց չպետք է լինի քսան քայլից պակաս լայնությամբ:

ԳԼՈՒԽ 255

Բոլոր կտուրներին, շուրջանակի պատի վրա, երկու կանգուն բարձրությամբ պարիսպ պետք է շարվի՝ տանը բնակվող մարդկանց ապահովության համար, որպեսզի ցած չընկնեն:

ԳԼՈՒԽ 256

Ոչ ոք<sup>99</sup> արտոնություն չունի փողոց թափել աղտեղի ամեն բան՝ ո՛չ տնից, ոչ գոմից և ոչ էլ բաղնիքից: Ամեն ինչ, որ աղտեղի է, պետք է խորթաղել երկրի ընդերքում:



ԳԼՈՒԽ 257

Ոչ մի մարդ աղտեղի բան չի կարող այրել գետնի երեսին, բացի անասունների և թռչունների աղբից, հոտած ձկներից, սատկած անասուններից, մոխրից<sup>100</sup> և խաղողի չեչից: Դրանից ավելին արգելված է:

ԳԼՈՒԽ 258

Որևէ մարդ, լինի քրիստոնյա թե հեթանոս, եթե ինչ-որ մեկի ձեռքով ամործատվի և դառնա սեռագուրկ, ամործատողը պետք է մահվան դատապարտվի:

ԳԼՈՒԽ 259

Եթե որևիցե դայակ, որ ռամկորեն դեղա<sup>101</sup> է կոչվում, խառնակվի իր արու սանի հետ, վեց շաբաթ բանտ պետք է մտնի, և ամեն հինգշաբթի օր նրան պետք է մերկացնեն, փողոցներում շրջեցնելով՝ մտրակի վաթսուն հարված ուտեցնեն, իսկ վեց շաբաթ հետո նրա գլխի մազերը պետք է թրաչեն և խայտառակելով բաց թողնեն:

ԳԼՈՒԽ 260

Ամենքն էլ, թե վաճառական, թե գինվոր, թե արհեստավոր, հովիվ ու հողագործ, ինչ աստիճանի իշխանավոր կամ ինչ արհեստի արհեստավոր էլ որ լինեն, ինչ որ գնեն՝ հավանություն տալով ապրանքին և գնվող ապրանքի գնին, իբրև գնորդ ու վաճառող՝ պարտավոր են միմյանց ձեռք տալով՝ հաստատել միջնորդի առաջ՝ որպես վկայություն առք ու ծախքի: Միմյանց՝ ամեն այդպիսի ձեռք տալու դեպքում վաճառողը վաճառել է, և գնորդը՝ գնել: Նորից ետ կանգնել չեն կարող:

ԳԼՈՒԽ 261

Ում ձեռքին որ հայտնաբերվի կեղծ տպված դրամ, թե ոսկե, թե արծաթե և կամ պղնձե ու կապարե, ապա նա պարտավոր է մատնացույց անել, թե ունից է ստացել կամ ինչ առիթով է իր ձեռքն անցել:

ԳԼՈՒԽ 262

Բոլոր քաղաքներում ինչքան ճանապարհներ որ կան և ինչքան փողոցներ՝ բոլորը պետք է կոչվեն հատուկ անուններով, փողոցներ և ճանապարհներ, որոնք նրա համար են, որ թե հեծյալ և թե հետիոտն մեկը մտնի, մյուսը դուրս գա, որ միշտ մեկն ընթանա մյուսի ետևից և ոչ իրար հակընդդեմ: Եվ քաղաքի ճանապարհներին, երկրի երեսին՝ դաշտում լինի թե որևէ այլ տեղ, ամեն անցնող ու դարձող, հեծյալ կամ հետիոտն միմյանց հանդիպելիս՝ երկու կողմն էլ պարտավոր են դեպի աջ կողմը բռնել, որպեսզի ձախ կողմում ճանապարհ բացվի միմյանց անցնելու

համար: Բայց եթե որևէ մեկն իր ընթացքի ժամանակ վարվի վերևում իմ ասածին հակառակ, ում հանդգնության հետևանքով որ առաջանա վնասը, նա էլ պետք է հատուցի տուժած մարդու վնասը:

ԳԼՈՒԽ 263

Բացի իր տիրոջից ոչ ոք չի կարող ուրիշի ծառերից կտորել, պոկել մի ճյուղ, միրգ կամ թուփ:

ԳԼՈՒԽ 264

Ոչ ոք չի կարող ուրիշի անտառից ծառ հատել, այլ [միայն՝] իր գնած կամ Հայոց տան կողմից հրամանով իրեն տրված և կամ իր համար իր իսկ տնկած անտառից:

ԳԼՈՒԽ 265

Ամեն ոք, ով որ իր անտառից ծառ կտրի, չպետք է ծառն արմատախիլ անի, եթե միգուցե արմատն իր տեղից հարկավոր լինի հանել որոշակի օգուտի համար: [Ծառահատման դեպքում տեղում] կամ պետք է տնկել այլ ծառ, կամ ցորեն ցանել, կամ այգի տնկել և կամ տուր շինել, որպեսզի հողն ամայի չմնա:

ԳԼՈՒԽ 266

Ամեն մի աղքատ կարող է մտնել ամենայն անտառ՝ թե՛ տերունի և թե՛ ժողովրդին պատկանող, իր կարիքների համար հավաքել թուփ, միրգ, մեղր և թռչունի ձու՝ երբեք ոչ ոքի ոչինչ չվճարելով:

ԳԼՈՒԽ 267

Ով որ արջ և գայլ սպանի, ինչքան գայլի և արջի գլուխ ու պոչ հանձնի տվյալ գավառի իշխանի պալատը, նույնքան էլ նրան Հայոց տնից պիտի շնորհեն՝ յուրաքանչյուր գլխի համար մեկ արծաթ դահեկան: Իսկ գլուխը պետք է թաղեն հողի մեջ, որը երեք օր պետք է մնա պահակի հսկողության տակ:

ԳԼՈՒԽ 268

Ողջ Հայոց աշխարհում՝ թե՛ դաշտավայրերում և թե՛ քաղաքներում ու գյուղերում, ամեն հողի անհրաժեշտ ջուրը պետք է սահմանով բաժանվի, ու համաձայնություն կնքվի, որ յուրաքանչյուր ոք [ջուր] ստանա առանց աղմուկի, և ոչ ոք հանդգնություն չունենա անկարգությամբ խլելու դրացու բաժինը:

ՉԼՈՒԽ 269

Ամեն մարդ պարտավոր է իր նշանով նշան դնել [ունեցած] տավարին,<sup>102</sup> ձիերին, ոչխարներին ու բոլոր անասուններին, ոսկե, արծաթե և պղնձե այն ամեն անոթներին ու բոլոր զարդերին, որ կան իր տանը, որպեսզի ճանաչի իրենն ու օտարինը:

ՉԼՈՒԽ 270

Եթե որևէ պարտաթղթի ժամանակն անցել է մինչև տասը տարի, և անցած տարիների ընթացքում պարտապանը և պարտատերը միմյանց չեն հիշեցրել առնելիքն ու իրար տալիքը, մինչև տասը տարի այն մնացել է իբրև մեռած, ապա տասը տարին լրանալուց հետո այդ պարտքը չպիտի հիշվի, և պարտաթուղթն էլ համարվի արժեքը կորցրած:

ՉԼՈՒԽ 271

Ամեն մի խնդրի շուրջ առաջացած յուրաքանչյուր հակառակություն, որ քաղաքում որ տեղի ունենա, պետք է դատել նույն քաղաքի դատաստանում, և եթե գանգատվողը և կամ ամբաստանյալը տվյալ վճռով չբավարարվեցին, ապա իրենց վճիռը կայանալուց հետո, մինչև 15 օր ժամանակ [լրանալուց] առաջ, կարող են [գործը] մտցնել բարձր դատարան: Բայց եթե իրենց քաղաքի դատաստանի վճռով բավարարվեն, և կամ 15 օր ժամանակն անցնի, և կամ 15 օրը [լրանալուց] առաջ մտցնեն բարձր դատաստան և բարձր դատաստանից արժանանան վճռի, ապա դա պիտի լինի արդարությունը, այնպես որ [խնդիրը] երբեք չի կարող վերստին հիշեցվել, և ոչ մի դատաստան էլ վճռված խնդրին կրկին ուշադրություն չի դարձնելու:

ՉԼՈՒԽ 272

Երբ հարկ լինի վկայություն վերցնել որևէ մեկից՝ տղամարդուց կամ թե կնոջից, վկան և վկայություն հարցափորձողը պետք է մտնեն առանձին սենյակ և փակեն դռները: Նախ վկային անհրաժեշտ է երդվեցնել սուրբ Ավետարանի վրա, որ ինչ հարցում էլ նրան ուղղվի, վկան պետք է վկայություն տա առանց չարանախանձության, և ինչ վկայություն որ ելնի երդում տված վկայի բերանից, նույն վկայությունը պետք է գրանցվի թղթի վրա, ու վկան ստորագրի, իսկ վկայություն վերցնողը հաստատի իր ձեռքով, այսինքն՝ գրելով. «Բաղրամի որդի Մարտիրոսը Շիրական գյուղից Տիրոջ 1771 տարվա սեպտեմբեր ամսի 14-ին իմ առաջ երդվեց և վկայեց՝ ինչ որ վերևում գրված է, և ստորագրեց»: Այդ վկայության թուղթը պետք է ամրափակել ու կնքել վկայությունը վերցնողի կնիքով և երեսին գրել. «Այս է վկայությունը Բաղրամի որդի Մարտիրոսի՝ ի հաստատումն Չաքարիայի որդի, գանգատվող Մաղաքիայի [հա-

րուցած] գործի, որ մտցրեց Երևան մայրաքաղաքի դատաստանական ատյան»: Եվ այդ թուղթը, ամուր կնքված, պետք է հանձնել դատաստանական ատյան, որպեսզի ոչ ոք կանխապես չիմանա վկայի վկայության խոսքը, մինչև որ այն վճռահատության ժամանակ բաց արվի դատավորների ատյանի առաջ, և այլև:

ՉԼՈՒԽ 273

Որ տանը և կամ փողոցում որևէ մեկը եթե հանկարծակի մեռնի, ով որ այդ մարդու մահվան ժամին նրա մոտ գտնվի, լինի ընտանի թե օտար մարդ, պարտավոր է տեղում անշարժ մնալ և ահազանգել քաղաքի դատավորի դատաստանատուն, իսկ դատաստանից պարտավոր են ուղարկել դատավորներից մեկին ու մի բժշկի, որ գնան պարզեն մահվան պատճառը և վկայություն վերցնեն մեջեցյալի դիակի մոտ եղած մարդկանցից (այդ վկայությունը կարող է հրապարակավ լինել), ապա հրաման տան դիակը թաղելու:

ՉԼՈՒԽ 274

Որևէ տղամարդ և կամ կին եթե խաբեությամբ և զաղտնի ամուսնանա երկու կնոջ հետ և կամ թե երկու տղամարդու հետ, տղամարդու հետ առաջինն ամուսնացած կինը պետք է մնա նրան ամուսնության կին: Իսկ եթե երկու կանանց հետ ամուսնացած տղամարդը երկրորդ կնոջից զավակներ ունի, պետք է թողնել երկրորդ կնոջ կամքին, որը եթե կամենա՝ զավակներին կարող է պահել իրեն, եթե ոչ՝ պիտի հանձնի ամուսնուն, որ պարտավոր է ընդունել, սնուցել ու մեծացնել նույն զավակներին՝ իբրև իր ապօրինի զավակների:<sup>103</sup>

ՉԼՈՒԽ 275

Ամեն հրահալելի,<sup>104</sup> որ անխառն է և անարատ և կամ զտված է քուրայում, ճանաչում են որպես հարյուր աստիճանի,<sup>105</sup> այսինքն՝ մաքուր և կատարյալ, իսկ այն, որ նրանից աստիճանով ավելի ցածր է, նրա արժանավորությունը ևս պետք է որոշվի աստիճանի համեմատ:

ՉԼՈՒԽ 276

Ոսկուց, արծաթից, կապարից և պղնձից հատված հայոց դահեկանը [լինում է] ըստ յուրաքանչյուր աստիճանի և կշռի ծանրության, այսինքն՝ ինչպես ստորև է.

- Դրամն արծաթե, աստիճանով՝ 80, կշռով՝ 24 դրեթ.<sup>106</sup>
- Դահեկանն արծաթե, աստիճանով՝ 80, կշռով՝ 60 դրեթ.
- Տերունին ոսկե, աստիճանով՝ 80, կշռով՝ 140 դրեթ.
- Դրամը պղնձե, աստիճանով՝ 80, կշռով՝ 24 դրեթ.

Լուծման կապարե, աստիճանով՝ 80, կշռով՝ 24 դրեք:

ԳԼՈՒԽ 277

Հայոց տունը ռոճիկով պետք է պահի իննսուն հազարանոց բանակ, յուրաքանչյուր զինվոր՝ յոթ տարվա ժամանակով, որպեսզի հավատարմորեն ծառայեն իրենց ազգին՝ ըստ օրենքի ստանալով իրենց ծառայության վարձը:

21,000-ը նրանցից պետք է լինեն հեծյալ,

69,000-ը պետք է լինեն հետևակ:

Սրանք, երեքի բաժանվելով, պետք է կազմեն երեք խումբ, ամեն մի խմբում լինելու են 7,000 հեծյալ և 23,000 հետևակ:

ԳԼՈՒԽ 278

Ընդունված կարգ պետք է լինի Հայոց տնից զինվորականության ռոճիկը [վճարել] ըստ յուրաքանչյուր զինվորական աստիճանի ու պաշտոնի, այն է՝

1 նախարարին մեկ ամսվա համար ամեն մի ամսամուտի՝	
6000 արծաթ դահեկան . . . . .	6000
9 սպարապետներից ամեն մի սպարապետին՝ մեկ հազար	
դահեկան . . . . .	9000
9 ասպետներից յուրաքանչյուրին մեկ ամսվա համար՝	
500 դահեկան . . . . .	4500
9 թոփխանայի <sup>107</sup> հրաձգային զորագլուխներից յուրա-	
քանչյուրին մեկ ամսվա համար՝ 250 դահեկան . . . . .	2250
3 լրտեսապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 զինապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 վառողապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 կառապաններից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 վրանապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 կերակրապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 գանձապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 երկրաչափապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
3 տկարաց պետերից յուրաքանչյուրին 200 դահեկան	600
90 հազարապետներից յուրաքանչյուրին 200 դահեկան	18 000
900 հարյուրապետներից յուրաքանչյուրին 100 դահեկան	90 000
9000 տասնապետներից յուրաքանչյուրին 15 դահեկան	15 000
27000 հեծյալները յուրաքանչյուրին 10 դահեկան	270 000
52055 վերջնահետևակներից յուրաքանչյուրին 7 դահեկան	370 685
90000 զինվորների մեկ ամսվա ռոճիկը արծաթ դահեկանով	
կազմում է . . . . .	910 835

Ըստ այդմ տարեկան ռոճիկը արծաթ դահեկանով	
կազմում է . . . . .	10 930 020
Ամրոցների շինության տարեկան ծախսը՝	200 000
Վրանների պատրաստման տարեկան ծախսը՝	100 000
Տարվա գեների տարեկան ծախսը՝	200 000
Ավել սննդի տարեկան ծախսը՝	300 000
Հողի ընդերքից կտրվող 2400 բյուր կշռով աղի գինը՝	
իր վարձով հանդերձ . . . . .	240 000
Տկարաց տան ծախսը . . . . .	100 000
Դեղորայքի ծախսը և բժիշկների վարձը . . . . .	100 000
Աղքատաց և տնանկաց տների ծախսը . . . . .	100 000
Որք մանուկների ուսման ծախսը . . . . .	100 000
Տարեկան ամբողջ ծախսը կազմում է լաք ռուփի <sup>108</sup> . . . . .	12 370 020

1237 բյուր և 20 հայոց արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 279

Ըստ Հայաստանյայց օրենքի նախարարի հրամանով երեք զորա-  
խմբերը հանձնվում են երեք գույնի սպարապետներին, որպեսզի հեծե-  
լազորի ասպետները, հետևակը և հեծելազորը առաջնորդվեն համա-  
խոհ սպարապետներով՝ կարգադրությամբ և գլխավորությամբ նախա-  
րարի, հնազանդ Հայոց տան տանուտերերի հրամանին:

ԳԼՈՒԽ 280

Բոլոր զինվորական գնդերը պատերազմի ժամանակներն իրենց զո-  
րագլխին պետք է ճանաչեն որպես նախարար, նաև նրա բոլոր կուսա-  
կալներին ըստ իրենց աստիճանակարգի՝ երկրորդից մինչև քանի-  
երորդ որ լինի, եթե առաջինն ընկավ՝ նրա տեղն ամենքը պետք է ճա-  
նաչեն երկրորդին, ըստ այդ կարգի՝ ինչքան որ սպանվեն, ընկածի տե-  
ղը պետք է լրացնի նրա երկրորդը:

ԳԼՈՒԽ 281

Ամեն մի զինվոր կարող է հարձակվել նրա վրա, ում որ իր զորա-  
գլուխը հրամայի, բայց ոչ բոլոր տանուտերերի, Հայոց տան վրա և հա-  
կառակ լինել այն ամենին, ինչ հրամայված է Հայոց տան կողմից:

ԳԼՈՒԽ 282

Ամուսնացած զինվորն իր ռոճիկի կեսը պետք է հանձնի իր կնոջը:

ԳԼՈՒԽ 283

Ամեն հաղթած զորագլուխ իր գերեզմանի վրա կարող է ունենալ մա-

տուտ՝ կառուցված իր ծախսով:

#### ՉԼՈՒԽ 284

Նախարարը պետք է փառազարդվի իր պաշտոնին ու կարգին արժանի կերպով, այսպես՝  
սև ուրար՝ պարանոցից մինչև թիկնամեջ,  
ուրարի վրա՝ ոսկետիպ մի առյուծ,  
փայլփլուռ ադամանդներով մի ճաճանչ՝ կրծքի ծախ կողմում,  
և ճաճանչի մեջ՝ խաչվառով գառն Աստուծո,  
և պարանոցին՝ ոսկյա մի շղթա, իսկ շղթայի ծայրին՝ ոսկյա մի ձիավոր,  
և վերարկուն՝ սև, երկար մի փիլոն, փիլոնի ներսը՝ մկան սպիտակ մորթի,<sup>109</sup> սուրը մեջքին կապած, իշխանական գավազանը ձեռքին, թագ ու պսակը գլխին, որի գագաթին՝ խաչ:

#### ՉԼՈՒԽ 285

Կարմիր դրոշակի սպարապետն իր գնդապետներով, սպարապետներով, հազարապետներով, հարյուրապետներով և բոլոր զինվորներով պետք է ունենա՝  
կարմիր գդակ՝ երեսը մորթուց,  
կարմիր կապա:

#### ՉԼՈՒԽ 286

Կապույտ դրոշակի սպարապետը՝ զորքով հանդերձ՝  
մորթե կապույտ գդակ,  
կապույտ կապա:

#### ՉԼՈՒԽ 287

Դեղին դրոշակի սպարապետը՝  
գդակը դեղին,  
կապան դեղին:

#### ՉԼՈՒԽ 288

Կարմիր սպարապետի խմբից ամեն պաշտոնատար իր զորքով կրելու է նշան, այն է՝  
1. Սպարապետը՝ պարանոցից դեպի թիկնամեջ կապույտ ուրար.  
2. Գնդապետը՝ գդակի վրա կապույտ փունջ.  
3. Ասպետը՝ իր երկու ուսերին կապույտ փունջ.  
4. Հազարապետը՝ ուսին իր իշխանության կապույտ համարը՝ թվաշանով.  
5. Հարյուրապետը՝ ուսից կախ մեկ կանգունաչափ երկարությամբ

կապույտ գույնի երեք մետաքսյա առասան.

6. Տասնապետը՝ մեկ կանգունաչափ կապույտ առասանն ուսից կախ, նիզակը ձեռքին,<sup>110</sup> սուրը մեջքին.

7. Կարմիր սպարապետի խմբի մեջ մտնող ամեն մի զինվոր պետք է կրի իր հազարապետի համարը՝ կապույտ թելով նախշված իր թիկունքի կապին, որպեսզի ճանաչվի, թե ուր հազարապետին է նա ենթակա:

#### ՉԼՈՒԽ 289

Կապույտ սպարապետը [պետք է լինի] ըստ վերևում գրվածի, [բայց] ուրարը, փունջը, առասանն ու համարը՝ կարմիր, և զինվորները թիկունքին [պետք է ունենան] իրենց հազարապետի համարը՝ նախշագրված կարմիր թելով:<sup>111</sup>

#### ՉԼՈՒԽ 290

Դեղին սպարապետը՝ ըստ վերևում գրվածի, [բայց] սպիտակ ուրարով, փնջով ու առասանով, և զինվորները թիկունքին [պետք է ունենան] իրենց հազարապետի համարը՝ նախշագրված սպիտակ թելով:

#### ՉԼՈՒԽ 291

Բոլոր տանուտերերը պարանոցից խաչ [պետք է ունենան] կախված:

#### ՉԼՈՒԽ 292

Բոլոր իշխանները [պետք է ունենան] խաչ՝ ծախ կրծքից կախված:

#### ՉԼՈՒԽ 293

Գերագույն դատավորը [պետք է ունենա] կշեռքի [նշան]՝ ծախ կրծքից կախված:

#### ՉԼՈՒԽ 294

Բոլոր դատավորներն իրենց վրա օգված սև վերարկու [պետք է ունենան]:

#### ՉԼՈՒԽ 295

Բոլոր խորհրդակիցները ծախ կրծքի վրա [պետք է ունենան] ոսկեթել բանվածքով նախշված սուր:

#### ՉԼՈՒԽ 296

Ամեն դպիր վզին ոսկեպատ հայելի [պետք է ունենա]:

ԳԼՈՒԽ 297

Ամեն գրագիր գրիչ վզին մի ոսկի [է ունենալու]:

ԳԼՈՒԽ 298

Ամեն գանձապետ վզից շղթայով կախված մի ոսկի տերունի [է ունենալու]:

ԳԼՈՒԽ 299

Ամեն գավառապետ վզին մի արծաթե տերունի [է ունենալու]:

ԳԼՈՒԽ 300

Քանի որ բարձրագույն իշխանությունը մեր մեջ մտել է մեր սրբազանների շառավիղից՝ արքեպիսկոպոսի և մեր յոթ իշխանների ձեռքով, որոնց կողմից կարգվում է գերագույն դատավորը՝ իշխանական աստիճանի իրավասություն տալու զինվորությունից նրանց, որոնք ընտրված կլինեն Հայոց տնից և տանուտերերից, ուրեմն ամեն գերագույն դատավոր պարտավոր է իր իշխանության առաջին օրը իշխանական աստիճանի իրավասություն տալու երկրորդ դատավորին, որպեսզի եթե գերագույն դատավորը, ով էլ որ նա լինի, մեռնի և կամ իր մեղքերի համար կարգից ու աստիճանից զրկվի, նույն օրն իսկ երկրորդ դատավորը պատրաստ գտնվի և իշխանություն տա իր երրորդին, քանզի դատավոր մնացողն իրավասու է իշխանական աստիճան տալու, որպեսզի իշխանության հաջորդականությունը չընդհատվի:

ԳԼՈՒԽ 301

Բոլոր գորապետները պարտավոր են պատրաստ լինել իրենց դիրքերում՝ ամեն շաբաթ երեկոյան բանակի մեջ ի լուր իրենց զինվորների ընթերցել տալու զինվորական հրահանգները:

ԳԼՈՒԽ 302

Ամեն մի գորագույն պարտավոր է յուրաքանչյուր ամիս իր բանակի զինվորների անակնկալ հաշվառում կատարել. եթե թվով պակաս լինեն, թղթի վրա գրելով պակասի մասին՝ պատճառներով հանդերձ, պետք է ներկայացնի սպարապետի ծառայությանը:

ԳԼՈՒԽ 303

Ամեն գորագույն պարտավոր է ամենուրեք երկրում երեկոյան ժամին հետևել բոլոր գորքերի պատրաստ լինելուն, աչքով տեսնել և ձեռքով շոշափել զինվորների զենքերն ու զգեստները և պակասության մասին կարգադրություն անել:

ԳԼՈՒԽ 304

Ամեն մի զինվոր պարտավոր է իր զգեստները պահել մաքուր և իր մազերը՝ յուղած:

ԳԼՈՒԽ 305

Ամեն մի զինվոր պարտավոր է մաքուր զենք ունենալ՝ յուղով օծված և պատրաստի:

ԳԼՈՒԽ 306

Ամեն մի զինվոր իր պայուսակում պարտավոր է ունենալ՝  
12 կառտուշ վառող՝ իր փամփուշտներով,<sup>112</sup>  
4 կայծիան քար.  
1 կայծիան բացող.  
1 շիշ նոսր յուղ՝ զենքերն օծելու համար:

ԳԼՈՒԽ 307

Երկրի բոլոր կողմերի յուրաքանչյուր գորագույն պարտավոր է իր գորքի վիճակի մասին տարին չորս անգամ, տարվա ամեն մի եղանակի, թղթով տեղեկություն տալ իր պետին՝ հետևյալ կարգով՝ տասնապետը ծանուցում է իր հարյուրապետին, հարյուրապետը ծանուցում է իր հազարապետին, հազարապետը ծանուցում է իր գորագլխին, գորագլուխը ծանուցում է իր նախարարին, նախարարը ծանուցում է Հայոց տան պալատին:

ԳԼՈՒԽ 308

Ամեն մի ձերբակալված և պարսավանքի ենթարկված, ինչ զինվորական իշխանավորի կողմից էլ լինի՝ սպարապետից մինչև հարյուրապետ պաշտոնյայի կամ գավառի իշխանի, հրամանով ձերբակալվելով՝ պետք է ենթարկվի նրան, ոչ ոք չի կարող արծակել, բացի դատաստանի վճռից՝ [արծակված] ըստ ձերբակալողների և ձերբակալվածների ձեռքի գործերի արժանավորության ու վարձի:

ԳԼՈՒԽ 309

Հայոց նախարարն իրավասու է պարսավանքի ենթարկել և կալանավորել զինվորական կարգի ամեն մի պաշտոնատարի, բայց կալանավորին իր պաշտոնից հանելը պետք է լինի դատաստանի վճռով՝ ըստ նրա ձեռքի մեղսագործության:

ԳԼՈՒԽ 310

Թե՛ նախարարից, թե՛ Հայոց տան կողմից և թե՛ որևէ բարձրագույն

իշխանավորից պարսավանքի ենթարկված յուրաքանչյուր պաշտոնատար պետք է շարունակի մնալ պարսաված, և նրա տեղը պետք է գրավի նրա տեղակալը, մինչև որ պարսավանքի ենթարկվածը դատվի դատաստանում. եթե ատյանի առաջ անպարտ դուրս գա, կարող են վերականգնել նրան և նստեցնել իր ծառայության աթոռին:

ՉԼՈՒԽ 311

Պատերազմում թշնամիներից գրավված ավարը պետք է հարմար ժամանակ զինվորականության միջև բաժանվի այս կերպ՝

Նախարարի բաժինը՝	մեկ հարյուրից	5
սպարապետների բաժինը՝	մեկ հարյուրից	10
ասպետների բաժինը՝	մեկ հարյուրից	8
հրաձգային զորապետների <sup>113</sup> բաժինը՝	մեկ հարյուրից	8
լրտեսապետների բաժինը՝	մեկ հարյուրից	2
կերակրապետների բաժինը՝	մեկ հարյուրից	2
երկրաչափապետների բաժինը՝	մեկ հարյուրից	5
հազարապետների բաժինը՝	մեկ հարյուրից	5
հարյուրապետների բաժինը՝	մեկ հարյուրից	3
տասնապետների բաժինը՝	մեկ հարյուրից	1
հեծելազորի բաժինը՝	մեկ հարյուրից	16
հետևակազորի բաժինը՝	մեկ հարյուրից	34

Այդպես պետք է բաժանվի յուրաքանչյուր 100-ը:<sup>114</sup>

Վերևում նշված բոլոր իշխանավորներից յուրաքանչյուրն իր համար ստանալու է ոչ թե [այնքան, որքան] վերոհիշյալ բաժիններն են, այլ ինչ արժանի է համարվել սպարապետին, պետք է լինի բոլոր սպարապետներին՝ քանի հոգի որ լինեն: Նմանապես և մյուս իշխանավորները. որի համար [նշված է] հարյուրից 5, որ արժանի է հազարապետին, անհրաժեշտ է բաժանել բոլոր հազարապետների վրա՝ քանի հոգի որ լինեն: Նման բաժանումից հետո հարյուրից 16-ը, որ արժանի է համարվել հեծյալ զինվորականներին, անհրաժեշտ է համահավասար բաժանել բոլոր հեծելազորայիններին՝ լինեն հասարակ զինվոր թե ասպետ, հազարապետ, տասնապետ թե շարքային հեծյալներ: Նույն կերպ էլ հարյուրից 34-ը, որ արժանի է համարվել հետևակ զինվորականներին, անհրաժեշտ է հավասարապես բաժանել սպարապետների, հազարապետների, հարյուրապետների և շարքային հետևակ զինվորների վրա:<sup>115</sup> Ոչ ոք ոչ մեկին չի կարող զրկել նրա բաժին ռազմավարից. եթե որևէ զրկող լինի, պետք է դատաստանի ենթարկվի:

ՉԼՈՒԽ 312

Ամեն մի հիվանդ կամ տվյալ պատերազմում մարտիրոսված զինվոր

բաժին պետք է ստանա այդ պատերազմի ողջ ընթացքում ձեռք բերված ավարից այնպես, ինչպես ողջ մնացածներն ու առողջները:

ՉԼՈՒԽ 313

Ամեն կին, որ ամուսնացած է զինվորական մարդու հետ, որը շարքային է և ոչ աստիճանավոր կամ իշխանավոր, եթե նրա մարդը մարտիրոսվի պատերազմում, ու նրա կինը եթե այլ մարդ չգտնի, որ ամուսնանա, Հայոց տունը պետք է մարդու ռոճիկի չորս բաժնից մեկը տա նահատակվածի կնոջը՝ նրա կյանքի ողջ ընթացքում, իսկ եթե կինն ուրիշ մարդ գտնի և ամուսնանա, Հայոց տունն ազատ պետք է լինի նշված ծախսից:

ՉԼՈՒԽ 314

Նահատակի բաժին ավարը պետք է ստանա նահատակի առաջին ժառանգը, իսկ եթե ժառանգ չգտնվի, պետք է վճարել նրա մերձավոր ազգականին՝ համաձայն օրենքի:

ՉԼՈՒԽ 315

Ոչ մի պատերազմական գերի, քրիստոնյա լինի թե հեթանոս, չպիտի վաճառվի, այլ սուսուփուս պահվի մինչև խաղաղության ժամանակը: Եթե մեզանից գերի գտնվի թշնամիների ձեռքին, պետք է փոխանակվի, իսկ եթե ոչ՝ խաղաղություն կնքելու ժամանակ ըստ գերյալի արժանավորության թշնամուն պետք է հարկադրել հատուցելու մեր գերի վերցրածների դիմաց՝ ինչքան որ արժենան: Խաղաղություն հաստատելուց հետո ամեն մի գերյալ ազատ է մնալ կամ հեռանալ՝ ըստ հաշտության դաշնագրի հետևության:

ՉԼՈՒԽ 316

Ամեն գերի աստիճանավոր կամ իշխանավոր, եթե երդումով և ստորագրված թղթով խոստանա, որ այն պատերազմի ամբողջ ժամանակ, երբ ինքը գերվեց, մինչև խաղաղության հաստատումը ձեռք չի բարձրացնի հայոց զորքի դեմ, որ ժամին էլ որ իրեն կանչի գերողը՝ իսկույն հնազանդ կներկայանա և կընդունի գերու իր վիճակը՝ նրան ազատության հրաման պետք է տրվի՝ շրջելու երկրի երեսին այնտեղ, ուր որ խոստանա նրան գերի առնողը: Եվ նա պիտի սպասի, թե երբ կլինի խաղաղություն: Խաղաղություն հաստատվելուց հետո շարժվելու է խաղաղության դաշինքի համաձայն:

ՉԼՈՒԽ 317

Գերվածների սննդի, զգեստի, խնամքի և այլ ծախսերն ամեն ամիս

պարտավոր է հոգալ թշնամի տերությունը, որի զինվորներին գերել են: Եթե ժլատություն հանդես բերի, ուրեմն կհարկադրի իր գերիներին հայոց մոտ անցնելու ծառայության՝ ինչ գործի համար որ անհրաժեշտ լինեն հայերին:

#### ՉԼՈՒԽ 318

Թշնամիներից որևէ զինվոր կամ զորագլուխ, եթե հանդիպի հայոց զինվորի կամ աստիճանավորի, զենքը գետին գցելով՝ հանձն առնի իրեն գերության մատնել, ենթակա չէ սպանության:

#### ՉԼՈՒԽ 319

Պատերազմի ժամանակ մեզ հատկապես անհրաժեշտ է պաշտպանության տակ առնել թշնամիների կանանց և դուստրերին, մի բան, որ անչափ ծանր է գալիս բարբարոսների սովորությանը: Դրանով է, որ հայոց ազգը սիրո և պատվի է արժանանում մեր թշնամիներից, դրանով է, որ նրանք հավատարմորեն հնազանդվում են մեզ:

#### ՉԼՈՒԽ 320

Ինչ գավառ, քաղաք ու բերդեր որ դաշնագրով գրավենք, ինչ դաշինք որ հաստատվի, մենք պարտավոր ենք դաշինքին միշտ անսասան մնալ:

#### ՉԼՈՒԽ 321

Պատերազմի ժամանակ համաձայնեցումներ կատարել թուլատրվում է միայն զորապետներին, և պատգամաբերը պետք է դուրս գա սպիտակ դրոշակը ձեռքին: Այս դրոշակը նշան պետք է լինի ընդունելու պատգամաբերին, որին տանելու են ազատ: Նա ինքը պատգամ [պարունակող] իր թղթով պետք է մուտք գործի բանակի մեջ: Բոլոր զիշերապահներն ու պահակները, հանդիպելով նրան, պետք է հասցնեն իրենց բանակը, դեմքին քող կապած՝ տանեն զորագլխի վրանը: Իր նամակի պատասխանն ստանալով՝ մանապես քողավորված աչքերով պետք է դուրս գա բանակից և մտնի թշնամու բանակ:

#### ՉԼՈՒԽ 322

Պատերազմի ժամանակ մեզանից որևէ մեկը, լինի զինվոր թե հասարակ ժողովրդից, եթե կարիք ունենա [նամակ] գրելու իր բարեկամին կամ ընտանիքին, որը բնակվելիս լինի թշնամու տերության մեջ, իր գրածը բաց վիճակում պետք է ներկայացնի մեր զորագլխին, որպեսզի սա իր թղթատարով ուղարկի թշնամական քաղաքը կամ բերդը: Նաև պատասխանն ստացվելիս բաց վիճակում պետք է հանձնվի իր տիրո-

ջը, եթե այն գերծ լինի և մաքուր ամեն տեսակ պատերազմական տեղեկություններից:

#### ՉԼՈՒԽ 323

Պաշարված քաղաքի կամ ամրոցի ամեն մի բնակիչ՝ թե զինվոր և թե հասարակ ժողովուրդ, մեր կողմից շրջափակման մեջ առնվելուց հետո մինչև տասնհինգ օր ժամկետում ազատ է իր ընտանիքով և ունեցվածքով դուրս ելնելու մեր թշնամու քաղաքից կամ ամրոցից, եթե մեզ վճարի սոսկ տասանորդ՝ իր դուրս բերած ունեցվածքի համար, ինքն էլ մեզ մոտ իբրև տարագնաց մնալով՝ կարող է ազատորեն հեռանալ կամ ազատ մնալ մեր երկրի երեսին՝ ուր էլ կամենա: Նույն պատերազմի հաշտությունից հետո դարձյալ ազատ է, եթե կամենա՝ հեռանալ իրենց սեփական երկիրը: Բայց եթե [շրջափակումից դուրս եկողը] ավելի քան տասնհինգ օր հետո [է դուրս գալիս], պարտավոր է պաշարող կողմի զորագլխից կարգադրություն ստանալ և ապա դուրս գալ: Այդ դեպքում զորագլուխն ազատ է կարգադրել կամ հրաժարվել: Եթե կարգադրի, ապա դուրս եկողը հարկադրված կլինի դուրս բերած ամբողջ ունեցվածքի համար վճարել տասից երկու կամ երեք մասը՝ ըստ ժամանակի հետ կապված խոստման, ինչպես որ վերևում տասնհինգ օր ժամկետում դուրս եկողների դեպքում էր:

#### ՉԼՈՒԽ 324

Մարդկային բնությանը իզական սեռին պատկանող ո՛չ քրիստոնյան և ո՛չ էլ հեթանոսը երբեք գերի չեն վերցվելու, և ամեն ժամանակ, լինի պատերազմի թե խաղաղության ժամանակ, մարդկային բնությանը իզական սեռին պատկանող ամեն [անձ] ազատ պետք է լինի, բացի այն դեպքից, երբ նրա ձեռքերը մեղսագործություն են կատարել:

#### ՉԼՈՒԽ 325

Պատերազմի ժամանակ, ինչ ազգից էլ որ լինի՝ կամ թշնամի ազգից և կամ թե այն ազգից, որը պատերազմ է հայտարարել, եթե գտնվի այնպիսի վաճառական, որ խաղաղ ժամանակ ելել է մեր երկիրը կամ թե իբրև տարագիր բնակվել մեր երկրում և կամ իր դրամը փոխ է տվել մեր ազգին, իր ունեցվածքով պետք է միշտ ազատ լինի: Եթե կամենա հեռանալ իր երկիրն ու իր ազգի մոտ, ինքը միայն պիտի ձեռք բերի թուղթ՝ պատերազմ հայտարարվելու ամսաթվից մինչև 45 օր ժամանակամիջոցում ազատ կերպով հեռանալու, պիտի հեռանա և մեր հսկողությամբ ներկայանա իր ազգին: Իսկ նրա ողջ ունեցվածքը, որ կմնա նրա փոխանորդի ձեռքին, մինչև որ խաղաղություն հաստատվի, այնուհետև կարող են դուրս հանել մեր երկրից:



Բայց պատերազմ հայտարարվելուց քառասունհինգ օր անցնելուց հետո ոչ ոք չի կարող հեռանալ, այլ պարտավոր է շարունակել մնալ և բնակվել մեր երկրում՝ ազատ ամեն կարգի կողմնակալ գործերից և երկու կողմին, այսինքն՝ իր ազգին կամ մեր թշնամու կողմին և մեր կողմին վերաբերող պատերազմական տեղեկությունից՝ մինչև խաղաղության հաստատումը:

#### ԳԼՈՒԽ 326

Պատերազմի և կամ խաղաղության ժամանակ թե՛ մեր թշնամիների և թե՛ բարեկամների միջից ով որ քրեական մեղք կատարած՝ փախչի և ընկնի մեր երկիրը, Հայոց տան հովանավորությամբ նրա անձը պետք է փրկվի մահապարտությունից, արժանանա պաշտպանության, և ոչ ոք չի կարող իրավասություն ունենալ նրան հեռացնելու Հայոց տնից: Բայց եթե Տերը կյանքում նրա մեղքերին թողություն տա, և այնուհետև եթե այդ մարդը կամենա հեռանալ մեզանից, ազատորեն կարող է հեռանալ՝ ուր որ ինքը կամենա:

#### ԳԼՈՒԽ 327

Ամեն ազգի միջից յուրաքանչյուր փախստական եթե այնպես պատահի, որ մուտք գործի մեր երկիր՝ օրենքի համաձայն մեր կողմից պաշտպանություն պետք է գտնի: Բայց եթե ոսկու, արծաթի, գինու, ձեթի և այլ բաների պարտք ունի, հարաժամ պարտավոր է հատուցել իր պարտքերը՝ ըստ օրենքի, իսկ քրեական հանցապարտությունից ազատ պիտի լինի: Եթե ամեն ինչ, որ գողացել ու հափշտակել է ուրիշներից, ըստ մեր օրենքի վերադարձնի իր տերերին, նրա անձը միայն պետք է փրկվի դատաստանի պատժից, բայց ինքը մնա անարգված:

#### ԳԼՈՒԽ 328

Մեր բանակի համար դաշտային պայմաններում [յուրաքանչյուր վրան հիմնելիս] պետք է խոր տեղ փորել ոտաց ճանապարհի համար՝ մոտավորապես մեկ գիրկ կամ քսանչորս ուղուկ խորությամբ, ապա տասնհինգ օր ժամանակամիջոցից հետո պետք է լցնել հողով և վրանի մեկ այլ կողմում բացել մեկ ուրիշ հոր, որպեսզի աղտեղանքի զարհուրությունը վնաս չտա զորքին: Նաև տասնհինգ օրը մեկ ամեն մի վրան պետք է հավաքի իր անասունների աղբը և կրակով այրի:

#### ԳԼՈՒԽ 329

Երկրի երեսին դաշտավայրերով շարժվող մեր բանակը ոչ մի դաշտում քառասուն օրից ավելի կայան չպիտի առնի, եթե դա անհրաժեշտ չլինի մեր թշնամիների տեղանքն ու ամրոցները պաշարելու համար,

այլ պիտի շարժվի տեղից տեղ, որպեսզի օդն ու հողը մաքուր լինեն մեր բանակի մարդկանց առողջության համար:

#### ԳԼՈՒԽ 330

Պատերազմի ժամանակ ո՞ր դաշտում որ իջևան առնի մեր բանակը՝ աղբյուրներից կամ ջրհորների ջրերից ջուր խմելու համար, նախ պետք է փորձվի ջուրը՝ շներին և էշերին խմել տալով. եթե մաքուր լինի, ապա բանակը պետք է իջևանի ջրի մոտ: Ամբողջ ժամանակ, երբ նրանց անհրաժեշտ կլինի խմել նույն ջուրը, պետք է ջրի վրա օր ու գիշեր պահակ կանգնի, որպեսզի թշնամիների կողմից ջուրն աղտոտման չենթարկվի:

#### ԳԼՈՒԽ 331

Մեր թշնամիների բանակի ամեն իջևանատեղում մեր բանակն անփորձ կերպով չպետք է իջևանի, որովհետև թշնամիները երբեմն կարող են նենգության դիմել. թաղված վառողով մեծ վնաս տալ մեզ:

#### ԳԼՈՒԽ 332

Դաշտում տեղակայված մեր բանակում որտեղ որ զորագլխի վրանն է՝ այնտեղ կանգնեցված պետք է լինեն երկու դրոշ՝ ամեն օր և ամեն ժամ, որպեսզի, երբ երկու դրոշներից մեկն իջեցված լինի, դա նշան համարվի, որ այդ գիշեր կամ վաղն առավոտյան բանակը պետք է շարժվի այլ տեղ, իսկ իջեցված դրոշն առաջուց պետք է տարվի և կանգնեցվի այն տեղում, ուր սահմանված է, որ հաջորդ օրն իջևան է առնելու բանակը. այդտեղ պետք է հաստատվի դրոշը, և այդտեղ էլ կանգնեցվի զորագլխի վրանը, ինչպես նախկինում էր: Նմանապես և բանակից ամենքը պետք է նախընթացիկներ առաքեն և երկրորդ վրան՝ սպասավորներով հանդերձ, որպեսզի իրենց բնակության տեղ պատրաստեն՝ յուրաքանչյուրին համապատասխան, և հաջորդ օրը բանակը հեծելազորով ու հետևակով նոր իջևանատեղ շարժվելով՝ յուրաքանչյուր ոք պատրաստ գտնի իր վրանն ու տեղը նույն տեսքով, ինչպես նախկինում:

#### ԳԼՈՒԽ 333

Բանակը տեղից տեղ շարժվելիս անհրաժեշտ է, որ ամեն մի հազարապետ իր գնդով կարգ ու կանոնով ընթանա, մի գնդի զորքը մյուս գնդի զորքին չխառնվի:

#### ԳԼՈՒԽ 334

Ամեն մի հազարապետ թե՛ իջևանելիս և թե՛ ընթանալիս պարտավոր է իր գնդով լինել միախումբ՝ թնդանոթով, վառողով և բոլոր անհրա-

ժեշտ բաներով պատրաստ, ինչպես ճակատամարտելիս:

#### ԳԼՈՒԽ 335

Բանակի երկրաչափը պարտավոր է մինչև բանակի շարժվելը գնալ մեկ այլ դաշտ, մի օր առաջ լինել [այդ] դաշտում, բաժանել հողն ու ջուրը, որպեսզի բանակը կարգուկանոնով իջևան առնի, փորձել ջուրը, թե արդյոք մաքուր է մարդկանց և անասունների խմելու համար:

#### ԳԼՈՒԽ 336

Ամեն տեղ, որտեղ իջևանում է բանակը, նրա շուրջը, բանակից մեկ մղոն հեռավորությամբ, պետք է լինեն երեք տասնապետներ՝ երեսնական զինվորով, որոնցից տասը՝ հեծյալ, իսկ քսանը՝ հետևակ, և բոլորը՝ բանակի շուրջը, միմյանցից մեկ մղոն հեռու, երեսուն հոգուց բաղկացած քանի գունդ որ կարող է քողարկել ամբողջ բանակը: Այդպես միշտ զգույշ պետք է լինեն, որ ուրիշ տեղից ոչ ոք չկարողանա մտնել բանակի մեջ՝ առանց նրան շրջապատող պահակների գիտության: Իսկ ովքեր էլ որ մոտենալով հասնեն սրանց մոտ՝ սրանք պետք է նախօրոք տեղեկացնեն բանակի զորապետին, և վերջինիս հրամանով է, որ մտնողը պիտի մուտք գործի մեր բանակ՝ լինի պատերազմի թե խաղաղ ժամանակ: Եվ եթե որևէ թշնամի անակնկալ հարձակմամբ դուրս գա մեր բանակի դեմ, սրանք՝ շրջակա պահակները, շտապ կարգով լուր պետք է տան մեծ բանակին: Իսկ եթե այնպես լինի, որ գիշեր ժամանակ հանդիպի հարձակունը բանակի որևէ կողմի վրա, ապա նույն կողմում, հարթ տեղում, պետք է բարձր [խարույկ] վառեն և թնդանոթից մեկ անգամ կրակեն, որը նշան պետք է լինի բանակին ազդարարելու, որ թշնամին մոտ է այդ կողմին: Բանակի շրջակա այդ պահակները պետք է փոխվեն ամեն երեք օրը մեկ անգամ, իսկ պատերազմի ժամանակ՝ յուրաքանչյուր օր մեկ անգամ:

#### ԳԼՈՒԽ 337

Ոչ մի մարդ, ինչ կոչունքի էլ հրավիրված լինի, ոչ զենք, ոչ սնունդ, ոչ գանձ, ոչ անասուն և ոչ մի այլ բան չի կարող դուրս բերել բանակից՝ առանց բանակի սպարապետի թուղթ ու հրամանի: Եվ ինչ որ առանց հրամանի է, պետք է արգելվի շրջակա պահակներից, մինչև որ դուրս բերելու հրաման հայթայթվի:

#### ԳԼՈՒԽ 338

Բանակի մեջ մտնող ամեն գրություն հարկ է, որ ներկայացվի ատյան և ի տնօրինություն սպարապետի, ու բանակից ուղարկվող ամեն գրություն անհրաժեշտ է, որ ուղարկվի սպարապետի հրամանով: Ամեն

գրված բան, թե դրսից մտած բանակ և թե՛ բանակից ուղարկված այլ երկիր, սպարապետն իշխանություն ունի բացելու և կարգալու: Եթե որևէ կասկած ունի գրվածի նկատմամբ. եթե այն իր կասկածի վերաբերմամբ անբիծ գտնվի, իր կնիքով կնքելով՝ պիտի ուղարկի գրության տիրոջ հանձնարարած տեղը, ուր էլ այն լինի:

#### ԳԼՈՒԽ 339

Ամեն զորագլուխ պարտավոր է մոտը պահել իր սպարապետից տրված բոլոր հրամանները, իսկ որևէ զորագլխի վախճանվելու դեպքում ինչ նամակ, հրովարտակ, պատվեր և հրաման որ լինի՝ պետք է ստանա մնջեցյալի տեղակալը. որ կարողանա տեղեկություն ունենալ իր տիրոջը [տրված] պատվիրանների և իր զորքի անելիքի վերաբերյալ և այլն:

#### ԳԼՈՒԽ 340

Ամենայն իշխանավոր, բարձրագույն թե ստորին, եթե բացակայի կամ մահվան և կամ թե հանցանքի պատճառով, նույն ժամին նրա երկրորդը պետք է գրավի նրա տեղը, և ամենքն էլ ըստ կարգի պարտավոր են ենթարկվել նրան, ինչպես առաջինին, մինչև որ նա վերստին հրամանով հաստատվի Չայոց տան կողմից:

#### ԳԼՈՒԽ 341

Չայաստանում<sup>16</sup> ոչ ոք չի կարող գրավել ոչ տանուտերության և ոչ էլ իշխանության պաշտոն, բացի նրանցից, որոնք փոխանորդ ընտրված կլինեն իրենց գավառից՝ ըստ Չայաստանյայց օրենքի:

#### ԳԼՈՒԽ 342

Անարգողի և անարգվողի միջև ամեն վրեժխնդրություն պետք է կատարվի միայն իրենց՝ երկու անձերի գիտությամբ ու երկուսի համաձայնությամբ և ոչ թե գաղտնի ու նենգորեն: Եվ եթե անարգողը զղջա և մեղայի գա, անարգվողը պարտավոր է ներել նրան: Եթե նման վրեժխնդրության պատճառով մեկը մեռնի մյուսի ձեռքով, նա, որ կենդանի է մնացել, ըստ օրենքի պետք է դատաստանի հրամանով մահվան դատապարտվի:

#### ԳԼՈՒԽ 343

Թե՛ գիշերային և թե՛ ցերեկապահ զորքի համար սովորություն պետք է լինի, որ ո՛ր զորագունդը որ բաղկացած լինի շուրջ երկու հազար և մեկ հարյուր զինվորից, նրանցից մեկ հազար և չորս հարյուրը՝ հետևակ և յոթ հարյուրը՝ հեծյալ, պետք է նրանց երեք բաժին

անել, ամեն մեկն՝ իր զորագլխով: Երեք բաժնից մեկը, որ հաշվվում է շուրջ յոթ հարյուր զինվոր, որոնցից չորս հարյուր վաթսունվեցը՝ հետևակ, և երկու հարյուր երեսունչորսը՝ հեծյալ, սրանք երեք օրը մեկ անգամ պետք է լինեն պահակ՝ բաշխված անհրաժեշտ տեղերում, իսկ մյուս մեկ բաժին յոթ հարյուր զինվորներն իրենց կացարաններում նախապատրաստական վիճակում պետք է լինեն՝ գեներով պատրաստ, մնացած յոթ հարյուր զինվորներն էլ իրենց գործով ու անհոգ հանգստով պիտի տարվեն, - այսպես շարժվելով, որպեսզի ամեն մի մասը երեք օրվա մեջ մեկ անգամ անքուն մնա պահակությամբ, մի օրը պատրաստ լինի նախապատրաստության տեղում, իսկ մյուս օրն էլ անհոգ հանգստանա:

#### ՉԼՈՒԽ 344

Հանկարծակի անհրաժեշտության նշանն այս պետք է լինի. որ օրը որ գնդի դրոշը ի ցույց դրվի պատռված,<sup>17</sup> մի փայտից կախված, և մի թնդանոթ՝ կրակ բացելիս, այդ գնդից ու դրոշից ամեն մի զինվոր պարտավոր է գոտեպնդված ու զինված՝ պատրաստ ոտքի կանգնել և սպասել իր գնդապետի հրամանին: Իսկ եթե գիշեր է, պետք է հարթ տեղում, որտեղ դրոշն է, կրակ վառել և թնդանոթով երեք անգամ կրակել, որպեսզի հասկանան նույնը, ինչ որ ասացի ցերեկվա համար:

#### ՉԼՈՒԽ 345

Ամեն մարդկային բնություն,<sup>18</sup> ինչ պաշտոն և իշխանություն էլ վարի, լինի մինչև իսկ տան և հասարակ ընտանիքի տեր, անձանց կարիքների համար որևէ ծախս [կատարելիս], սպասավորներին և աղախիններին ռոճիկ հատուցելիս (բացառությամբ հարկերի և մաքսերի), ոսկե, արծաթե, պղնձե ինչ դրամ կամ լումա էլ իր ծեռքով վճարի, պարտավոր է նրանց անհրաժեշտ բաների համար ծախսած և գնված իրերի գինը հատուցել, իր կատարած ծախսի դիմաց որևէ պաշտոնյայի և կամ սպասավորի ռոճիկից իրավունք ունի տասանորդ հանել և միայն մնացածը վճարել<sup>19</sup> նրան, ում որ պարտավոր լինի:

#### ՉԼՈՒԽ 346

Բոլոր պաշտոնատարները՝ թե՛ իշխանավոր և թե՛ սպասավոր, թե՛ վարձկան, թե՛ վաճառական և թե՛ ինչ վաճառող էլ լինի, իրենց մտքում այն համոզմունքը պետք է ունենան, որ ռոճիկը կամ իրենց վաճառված իրերի գինն առնելիս տասի փոխարեն ստանալու են միայն ինը, այսինքն՝ իրենց վաստակի և ունեցվածքի ընդունելի եղած գինը որքան որ լինի՝ վճարողը պետք է դուրս գա տասանորդը և վճարի միայն մնացածը:

#### ՉԼՈՒԽ 347

Օրենքի 346-րդ գլխի հիմնավորումով տասանորդից ստացվածքը պետք է լինի կամ ոսկի և կամ արծաթ, իսկ այդ հրահալելիները Հայաստան աշխարհում բնակվող ամեն մարդկային բնության համար ծախելու կամ վայելելու նպատակով պիղծ են: Յուրաքանչյուր ոք պարտավոր է դրանք անշարժ պահել ամուր, ապահով և թաքուն տեղում՝ հանկարծահաս պատուհասի և հարկավոր ժամանակի համար, որպեսզի եթե որևէ հնարքով փրկվել ու ազատվել չկարողանան, դրանք ծախսվեն յուրաքանչյուր պահողի փրկության համար:

#### ՉԼՈՒԽ 348

Հայաստան աշխարհի երեսին ապօրինաբար ծնված ամեն մի երեխա՝ թե՛ տղա և թե՛ աղջիկ, անվանակոչությամբ և հիշելու համար նրա անունը, թե ում որդին է կամ ում դուստրը՝ ոչ ոք հայրական կողմից այլ անվամբ չպիտի կոչվի, եթե ոչ այն սրբի անունով, որի տոնի օրը այդ երեխան մկրտվում է. նույն սրբի անունը պիտի դառնա նրա հայրանունը: Թեպետ նրա մայրն ապօրինի է հղացել և բնականորեն ծնել, սակայն սուրբ Ավետարանի մկրտության շնորհով մկրտվողը շնորհի կարժանանա իր վրա կրելու որդիությունն այն սրբի, որի տոնի օրը որ մկրտվի:

#### ՉԼՈՒԽ 349

Ոչ մի ապօրինի ծնունդ՝ թե՛ տղա և թե՛ աղջիկ, թող չհամարձակվի հոր ժառանգ և ժառանգորդ լինել, քանզի ոչ ոք չի կարող հավատալ, թե ումից է ծնվել, բացի իր մոր վկայությունից: Իսկ վկայությունն այն մոր, որ այնքան լրբանա, մինչև որ իր սուրբ ամուսնության անկողինը պղծելով՝ ապօրինաբար զավակ ծնի, արժեք չունի: Ահա թե ինչու բոլոր ապօրինի ծնունդների ժառանգությունը հաշվից դուրս է, բացի նրանից, որ նրա պիղծ հայրն ու մայրն իրենց մահվան կտակներով կշնորհեն նրան, այդ էլ չհայտարարելով իբրև իրենց ունեցվածքից մաս ու ժառանգություն իրենցից անօրինական ծնվածներին, եթե ոչ տալով սոսկ պարզ՝ որպես օտարների: Իսկ եթե լրբացածն իր կտակում հիշատակի՝ անօրինական ծնվածին հայտարարելով իբրև իր ժառանգորդ, ապա ինչ որ նրան տված լինի՝ անարժան պարզա պետք է համարվի, և եթե նույնիսկ օրինական ժառանգ էլ չգտնվի՝ կարող են արհամարհել և նրան զրկել այդ պարզակից:

#### ՉԼՈՒԽ 350

Թե՛ քաղաքներում և թե՛ երկրի երեսին, դաշտավայրերում, հող վաճառելու համար իբրև ընդունված միավորի անուն հիշվում է մեկ ազա-

րակը, որը երկարությամբ իրենից ներկայացնում է 240 ուղուկ, իսկ լայնությամբ՝ 160 ուղուկ, որին համապատասխանում է երկարությամբ 60 ոտնաչափը և լայնությամբ 40 ոտնաչափը: Սա մեր մեջ ընդունված է իբրև մեկ ագարակ, և ամեն գնող ու վաճառող ըստ հողի արժանավորության համաձայնության գալով մեկ ագարակի գնի շուրջ և գնողի ու վաճառողի կամքի և հաճության համաձայն հաստատելով մեկ ագարակի գինը, այնուհետև պետք է չափվի հողը. որքան ագարակ որ կազմի, գնողը պետք է վճարի յուրաքանչյուր ագարակի գինը: Նրա չափը պետք է լինի այնպես, որ ամեն 384000<sup>20</sup> բազմապատկված ուղուկ համարվի մեկ ագարակ, այսինքն՝

երկարությունը մեկ ագարակի հավասար է 240 ուղուկ,  
լայնությունը մեկ ագարակի հավասար է 160 ուղուկ.  
000  
1440  
240

բազմապատկումով բովանդակում է 38400 բազմապատկված ուղուկ:

Եվ եթե ավել կամ պակաս լինի մի ագարակում, պետք է հաշվվի միևնույն կերպ, ինչպես վերևում. այսպես՝

հողը երկարությամբ հավասար է 12400 ուղուկ,  
և լայնությամբ հավասար է 685 ուղուկ.  
62000  
99200  
74400  
8494000

Ըստ այդմ ուղուկների բազմապատկումով ստացվեց 84 բյուր 9 հազար և քառասուն ուղուկ. ամբողջ 38400 ուղուկը մեկ ագարակ հաշվելով՝ կկազմեն 273 ագարակ և 28 տուկրա<sup>21</sup>, իսկ ամեն 100 տուկրան հաշվվում է մեկ ագարակ:

#### ԳԼՈՒԽ 351

Քանզի որևէ քաղաքի տարածքում ինչ հող էլ լինի՝ թե՛ Հայոց տան և թե՛ ամեն մի վաճառողի կողմից թղթով պետք է տրվի կամ վաճառվի որևէ մեկին, ուրեմն տվյալ թուղթը պետք է ունենա համար և օրինակվի քաղաքի դատաստանատանը նույնությամբ և համարով, որպեսզի եթե հողը գնողը կամ վաճառողը թուղթը կորցնի, կրկին կարողանա համարանիշով գտնել իր քաղաքի դատաստանատանը:

#### ԳԼՈՒԽ 352

Ով որ իր հողի թուղթը կորցնի կերիչ որդերի, կրակի այրելու և ցրի

թրջելուց փտելու և այլ պատճառներով, եթե նա իր քաղաքի դատաստանի ատյանի առաջ իր դրացիներից ու գյուղից կանգնեցնի երեք վկա, որպեսզի նրանք երդվելով իրենց վկայությունը տան, որ այդ մարդը իսկապես այն տան տերն է, որ գտնվում է Մեղրի գյուղում (կամ որևէ գյուղում), Քասպարենց փողոցում, հարավային կողմից հարևան է Մարտիրոսին, հյուսիսային կողմից՝ Բաղրամին, արևելյան կողմից դրացի է Մաղաքիային, և նրա տունն արևելյան կողմից դեպի արևմուտք երկարությամբ 240 ուղուկ է, իսկ լայնությամբ՝ 160 ուղուկ, ու տան թղթի համարն էր 2814 և այլն, - ապա քաղաքի դատավորը, համարի հետ համեմատելով մատյանի օրինակը, նրան կտա նրա տան թուղթը՝ նույն համարով ու չափով, և տիրոջն արժանի է ունենալ այդ թուղթը՝ ուն անունով էլ որ լինի, եթե ոչ ոք չհայտնվի ու վերոհիշյալ տան հին վաճառքի թուղթ չուներնա իր ձեռքին:

#### ԳԼՈՒԽ 353

Յուրաքանչյուր 100 տղայից զինվորության համար հինգ տղա ընտրելու վիճակահանության կարգն [այս է]. վերցրու երկու հարյուր կտոր թուղթ և գրիր 100 տղաների անունները, յուրաքանչյուր անունը՝ մեկ թղթի վրա: Առանձին-առանձին ամրափակիր: Այս 100 թուղթը զցիր մի պարկի մեջ: Ապա վերցրու մյուս 100 սպիտակ թուղթը, 5 թղթի վրա գրիր «Զինվոր»: «Զինվոր» անվամբ այս հինգ թուղթը 95 սպիտակ թղթերի հետ, բոլորը միասին 100 [թուղթ], նույնպես ամրափակիր և զցիր մյուս պարկի մեջ: Այնուհետև բոլոր [տղաներին] նստեցրու մի խաղաղ տեղ և նրանց միջից ոտքի կանգնեցրու երկու պատանու, տուր նրանց վերը նշված երկու պարկերը, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է հարյուր թուղթ: Հրամայիր նրանց խառնել և ապա նախ՝ բերան բերել Աստծու անունը, հետո երկու տղաներից յուրաքանչյուրի աչքերը փակել սրբիչով: Յուրաքանչյուր տղային հրաման տուր իր պարկից հանել միմիայն մեկ թուղթ. ուն անունով որ մյուս պարկից հանվի «Զինվոր» անունը, ուրեմն նրան է ելել զինվորության վիճակը, և որ տղայի անունով, որ մյուս պարկից սպիտակ թուղթ ելնի, նա ազատ պիտի լինի և գնա խաղաղությամբ:

#### ԳԼՈՒԽ 354

Ամեն քաղաքի դատաստանատան դատավորների միջից յուրաքանչյուր ամիս պետք է ընտրել մի մարդ և մեկ ամիս ժամանակով իշխանություն տալ օր ու գիշեր իրավարար լինելու անսպասելի գանգատների վերաբերմամբ, օժանդակելու զանգատվողին և կալանքի առնելու փախչողին, մինչև որ դատաստանի օրը նրան ներկայացնեն դատաստան:

ԳԼՈՒԽ 355

Ամսվա իշխանն իրավասություն ունի դատելու հետևյալ կարգի [գործերը], այն է՝ գանգատը կամ հայցը, եթե գումարը չի անցնում մինչև քսան արծաթ դահեկանը, հարբեցող մարդկանցից փոքր հարված տվողներին և ինքնաբերաբար տղայական բարկությամբ պոռթպոռացողներին, եթե երկու կողմից կամենում են հաշտվել՝ ըստ հարվածողի ներողության խնդրանքի, կամ միմյանց հայիոյելու պատճառով, կամ մեկի անասունը մյուսի արտն արածելու, կամ թե հարևանի հավը կամ աղավնին դրացու տանը գտնվելու, կամ ուրիշի բաժին գողացված ջրով իր արտը ոռոգելու, կամ ուրիշի անասունին շան խածատելու, կամ ուրիշի շանը որևէ մեկի սպանելու և նման վնասների [դեպքերը]: Այս դատավորի դատելով պետք է բավարար համարվի և կրկին դատաստան չմտցվի: Այս դատավորը դրանք պետք է դատի ըստ օրենքի, իսկ եթե անօրինաբար՝ գանգատվողը կամ թե ամբաստանյալն ազատ են այդ դատավորից գանգատվելու դատաստանատանը, և ամսվա դատավորի անօրինականությունը պետք է դատապարտության արժանանա:

ԳԼՈՒԽ 356

Հանքից կամ ջրից ստացված աղը, լինի քարաղ թե փշուր աղ, միշտ պետք է մնա որպես Հայոց տան ժառանգություն, և թող ոչ ոք չհամարձակվի ձեռքը խոթել այդ գործի մեջ:

ԳԼՈՒԽ 357

Ամեն վաճառելիքի միջնորդ, այսինքն՝ դալալ, պարտավոր է պահել վաճառված իրերի ու գնված իրերի հաշիվը, մնալ վկան այն գնի, որ հաստատվել է վաճառված ապրանքի վրա, և վարձ ստանալ վաճառողից՝ հարյուրին մեկ ու գնողից՝ հարյուրին մեկ, ոչ ավելի:

ԳԼՈՒԽ 358

Ամեն տուն, թե Աստծու, թե իշխանի և թե ռամիկ ժողովրդի, պետք է կառավարվի իր տան տիրոջ հրամանով. ով էլ որ լինի նրա բնակիչը, պետք է հնազանդվի տան տիրոջ հրամանին, բացառությամբ այն հրամանի, որ հակառակ է Հայոց տան օրենքին: Ոչ մի մարդ որևէ տան մեջ չպիտի հնազանդվի ինչ-որ հրամանի, եթե այն ընդդեմ է Հայոց տան օրենքին:

ԳԼՈՒԽ 359

Աստծու տանը ծառայողները [պետք է առաջնորդվեն] եկեղեցական

սահմանադրությամբ, իսկ Աստծուն պաշտելու նպատակով Տիրոջ տուն մտնող ամեն ոք, իրեն պահելով հեզ ու խոնարհ, պետք է զբաղեցնի իր տեղը՝ ըստ յուրաքանչյուրի աստիճանի, այսինքն՝  
նախարարը՝ 1 (առաջին) աստիճանի վրա,  
իշխանավորները՝ 2 (երկրորդ) աստիճանի վրա,  
գորագլուխները՝ 3 (երրորդ) աստիճանի վրա,  
գինվորները՝ 4 (չորրորդ) աստիճանի վրա,  
վաճառականները՝ 5 (հինգերորդ) աստիճանի վրա,  
հողագործները՝ 6 (վեցերորդ) աստիճանի վրա,  
արհեստավորները՝ 7 (յոթերորդ) աստիճանի վրա:

ԳԼՈՒԽ 360

Ով որ աղմկի և բարձրաձայն կռվի սուրբ եկեղեցու մեջ, ավագերեցը և երեցփոխն իշխանություն ունեն դուրս հանել նրան սուրբ սեղանի մոտից. ոչ ոք չպիտի հակառակվի նրանց: Ժամն արձակելուց հետո, եթե աղմկող մարդը եկեղեցական է, պետք է հանձնեն տվյալ գավառի եպիսկոպոսին, որ դատի, իսկ եթե աշխարհական՝ քաղաքի իշխանին, որ նման մեղավորի նկատմամբ վճիռ կայացնի, որպեսզի իր իսկ ծախսով քսանմեկ օրով բանտ մտնի և ապա դուրս գա: Բայց եթե այդ մեղավոր մարդը լրբությամբ կրկին մեղք գործի, պետք է բանտ նետվի և աղքատաց տանը տասը դահեկան վճարի: Եթե դեռ էլի չզսպի իր վարքը, պետք է բանտ նետվի, ու հրապարակավ քսանչորս մտրակ ծեծ պետք է տան:

ԳԼՈՒԽ 361

Տիրոջ տանը կանայք [պետք է տեղ գրավեն] կարգով՝ յուրաքանչյուրն ըստ աստիճանի, այսինքն՝  
տիրուհին՝ 1 (առաջին) աստիճանի վրա,  
իշխանուհիները՝ 2 (երկրորդ) աստիճանի վրա,  
գորագլուխների տիկինները՝ 3 (երրորդ) աստիճանի վրա,  
գինվորների, վաճառականների, հողագործների, արհեստավորների տիկինները՝ 4 (չորրորդ) աստիճանի վրա:

ԳԼՈՒԽ 362

Որևէ բարկացած [մարդ] եթե անձամբ վրեժխնդիր լինի իրեն բարկացնողից, ու բարկացնողը նրան մեղմորեն հրավիրի դատարան, բարկացածն այլևս իրավասու չէ վրեժխնդիր լինել, այլ պիտի գանգատվի դատաստանատանը և հասնի արդար դատավճռի:

ՉԼՈՒԽ 363

Եթե որևէ բարկացած և անծամբ վրեժխնդրության ձգտող [մարդ] բարկացնողին երեք անգամ հրավիրի, որ դուրս գա իրեն դեմառդեն և իր սրտի բարկությանն ու վրեժին անծամբ հատուցում տա, բայց բարկացնողը երեք անգամն էլ ընդդիմանա՝ խնայելով [նրան] և վկաների առաջ խոստանալով, որ հոժար է հատուցելու իր բոլոր պարտք ու մեղքերի համար, եթե բարկացողի գանգատի համաձայն դատաստանից հրաման արձակվի, սակայն դրանից հետո եթե բարկացածն անհաշտ կերպով հարձակվի իրեն ընդդիմացողի վրա, և իր՝ բարկությամբ հարձակվելու և ընդդիմացողի՝ իր անձը փրկելու ջանքերի պատճառով բարկացածը գուցե ընկնի ու մեռնի, ընդդիմացողն էլ դատաստանի ատյանի առաջ վկայով հաստատի, որ ինքը երեք անգամ հրաժարվել ու խույս է տվել ելնելու բարկացած մարդու դեմ և նրան խոստացել է հատուցել իր բոլոր պարտք ու մեղքերի համար, եթե դատաստանի ատյանի առաջ պարտավորված համարվի, բայց բարկացողը չի անսացել և ինքնակամ ցանկությամբ հարձակվել է ընդդիմացողի վրա, ընդդիմացողն էլ իր անձը փրկելու համար դիմադրելով՝ պատահել է այնպես, որ բարկացածն ընկել ու մեռել է, - ապա նրա արյան համար բարկացնողից հատուցում չպետք է պահանջել:

ՉԼՈՒԽ 364

Հայրապետը, նախարարը, եպիսկոպոսը, տանուտերը, քահանաները, երկրի իշխանավորները՝ ոչ ոք ոչ մեկին իրենց դիրքին չվերաբերող հրաման չպետք է արձակեն և կամ ոչ ավելի, քան այն, որ ըստ յուրաքանչյուրի կարգի տրվել է նրանց թե՛ եկեղեցու և թե՛ Հայոց տան կողմից:

ՉԼՈՒԽ 365

Հայրապետը, նախարարը, եպիսկոպոսը, տանուտերը, քահանաները և երկրի բոլոր կարգի [մյուս] իշխանավորները, անկախ իրենց աստիճանից, իրենց կյանքի ողջ ընթացքում թեպետ մարդու բնական բնության պահանջով են շարժվում ու գործում, յուրաքանչյուրն՝ ըստ իր բնական և բանական բնության, ամենքն՝ ըստ իրենց կամքի ու հաճության, բայց նրանք պարտավոր են ընդունել ու հանձն առնել Հայոց օրենքով հասնող վարձատրությունը՝ իրենցից յուրաքանչյուրի ձեռքի<sup>122</sup> գործերի դիմաց:

ՉԼՈՒԽ 366

Ոչ մի քահանա իր ձեռքը չպետք է դնի որևէ երիտասարդի և կույսի, տղամարդու և կնոջ վրա՝ անուսնության համար օրհնելու, եթե իր եկե-

ղեցու ծխից չեն, և հատկապես չկա իրենց գավառի եպիսկոպոսի հրամանը և անուսնացողների գավառի իշխանի համաձայնությունը:

ՉԼՈՒԽ 367

Հայոց աշխարհի ամեն մի բնակիչ, բուն հայ ազգից լինի թե Հայաստանում ապրող այլազգի պանդուխտ, խաղաղ ժամանակ կարող է իր գավառի իշխանից թույլտվություն ձեռք բերել ունեցվածքով և ընտանիքով հեռանալու ուրիշ երկիր, ուր որ ինքը կամենա: Բայց եթե թաքուն և առանց թույլտվության հեռանա, նրա ունեցվածքից ինչ էլ բռնվի, պետք է համարվի աղքատաց տան սեփականություն, ժառանգությունը դառնա հայոց աղքատաց տան, իսկ նրա հողը գավառի դատավորը կարող է վաճառել և գնողին տալ վաճառման թուղթ. այդ վաճառման թուղթը պետք է համարվի իբրև փախստական մարդու՝ տիրոջ սեփական վաճառք: Բացառություն է կազմում այն մարդը, որը փախել է մարդասպանության կամ որևէ քրեական հանցանքի և կամ ունեցվածքի պարտքի պատճառով. նրա ունեցվածքը ժառանգություն պետք է մնա իր ընտանիքին և պարտատերերին:

ՉԼՈՒԽ 368

Համայն Հայոց աշխարհի բոլոր իշխանները չպետք է զլանան խնդրողներին ազատության թուղթ տալ՝ իրենք իրենց ընտանիքներով և ողջ ունեցվածքով հեռանալու ուրիշ գավառ և կամ օտար երկիր, բայց պատերազմի ժամանակ չեն կարող հեռանալ և տանել իրենց ունեցվածքը հայոց թշնամիների երկիր, եթե ոչ՝ միայն օրենքով:

ՉԼՈՒԽ 369

Հայաստանի բոլոր բնակիչների միջև որևէ գործի առնչվող ինչ ձեռնարկում էլ լինի, անհրաժեշտ է նրա նպատակի ու դաշինքի մասին թուղթ հաստատել և նրա մեջ նշել ուխտագանց ու դաշնաբեկ մարդկանց [հասնող] տուգանքն ու տոկոսը՝ ըստ գործի արժանավորության, որպեսզի, ով գիտե, եթե մեկնումեկն ուխտագանց գտնվի, նա ինքն իրեն դատապարտած լինի վճարելու իր ուխտագանցության տոկոսը:

ՉԼՈՒԽ 370

Հայաստան աշխարհում բնակվող թե՛ հեթանոս, թե՛ մահմեդական, թե՛ եբրայեցի և թե՛ մյուս օտարազգի այլադավաններն ազատ են ամեն կերպ պահպանելու իրենց ավանդական ու վաղեմի ծեսերը: Իրենց մեջ եթե որևէ տարածայնություն ծագի, անհրաժեշտ է, որ ըստ իրենց սովորույթի՝ իրենց միջից իրենք ընտրեն դատավոր, տոկոսի թուղթ հաստատեն, որպեսզի հնազանդվեն իրենց դատավորների վճռին (բացի

մահվան դատավճռից): Եվ այդպիսով ոչ մի դատավոր և դատաստանատուն իշխանություն չունեն նրանց նկատմամբ: Բայց եթե նրանք կամովին ներկայանան և զանգատվեն դատաստանատանը, ապա դատավորը պետք է ընդառաջ գնա հանդիմանողի դեմ նրա զանգատվողի ցանկությանը, եթե հանդիմանողն ինքն էլ կամենա ներկայանալ դատաստան: Այնուհետև ըստ Հայոց օրենքի պետք է դատեն նրանց: Իսկ հակառակ դեպքում նրանց պետք է պարտավորեցնեն, որ իրենց միջից դատավոր ընտրեն, իրենց դատավորների վճիռն ընդունեն՝ ըստ իրենց ազգի սովորության, բացառությամբ քրեական հանցանքի, երբ ամենքն էլ պարտավոր են ընդունել հայոց այն գավառի դատաստանի վճիռը, որտեղ իրենք բնակվում են:

#### ՉԼՈՒԽ 371

Ոչ մի ծառայող, ինչ իշխանի կամ իշխանության հրամանով էլ լինի և ինչ պարտականություն էլ կատարելիս լինի, չպետք է մտնի կանանց սենյակը, հատկապես ամուսնացած կանանց, որովհետև մաքուր են և դալար, ոչ մի աղմուկ, դղրդում և հոգս չենք ցանկանում մեզ ծնող կանանց և մեզ համար ապագայում որդի ծնող մայրերին, բացի այն դեպքից, երբ [մտնելը] քրեական կամ մահապարտ մարդուն ձերբակալելու առիթով է:

#### ՉԼՈՒԽ 372

Ամեն բարձրագույն իշխան երկրի իր գավառում իշխանագոր է իր խորհրդակիցներով հանդերձ հրաման արձակել՝ համաձայն Հայոց օրենքի, և երկրի նույն գավառի ամեն զորագլուխ ու մասնավոր իշխանները պարտավոր են ընդունել նրա ուժը՝ իբրև Հայոց տան ուժ, եթե անթերի ու անսխալ լինի ըստ Հայաստանյայց օրենքի և Հայոց տան դեմ մեկ մազի չափ իսկ չխախտի չափավորությունն ու արժանավորությունը:

#### ՉԼՈՒԽ 373

Ով որ իր բարեկամներին հրավիրի իր տուն՝ ճաշին կամ ընթրիքին նրանց պատվելու համար, լինեն նրանք իշխաններ թե դշխոներ, հասարակ ժողովրդից թե տիկիներ, պարտավոր է հաշվի առնել իշխանների և դշխոների աստիճանակարգը, ապա հրավերքն արտահայտել թղթի վրա՝ ծանոթություն տալով իր սեղանի մասին, թե բազմելու համար այսքան աթոռ ունի, ապա և համարով նշվեն հրավիրվածների անունները, այսինքն՝

1. Մարտիրոս՝ աջ թևի առաջին համար
2. Բաղրամ՝ աջ թևի երկրորդ համար
3. Հարություն՝ աջ թևի երրորդ համար

4. Մաղաքիա՝ աջ թևի չորրորդ համար
  5. Չաքարիա՝ աջ թևի հինգերորդ համար
  6. Մանասե՝ աջ թևի վեցերորդ համար
- Այդպես նաև ձախ թևը:

Եվ այդպես պիտի հաշվվեն՝ ինչքան մարդ որ լինի, որպեսզի հրավիրված անձինք կանխապես իմանան սեղանի մոտ յուրաքանչյուրի բազմելու կարգը, չմոլորվեն, ոչ ոք չհանդգնի իրավունք վերապահել իրեն նստելու ուրիշի տեղը: Այդպես, յուրաքանչյուրը, մինչև որ խոստանա մտնել հրավիրված տուն, պետք է հեռատես լինի. եթե հաճո է իր ցանկությանը՝ սեղան նստելու նախատեսված կարգով, թող գնա, իսկ եթե գտնի, որ որևէ անպատվություն կա իր աստիճանի նկատմամբ, ներողություն խնդրելով՝ հրաժարվի: Այդպես պիտի լինի կարգը և դշխոների ու տիկնանց համար թե՛ սեղան նստելիս և թե՛ պարելու նպատակով ոտքի կանգնելիս: Ոչ մի իշխան կամ շարքային մարդ, դշխո և սովորական տիկին, որոնք տուն են հրավիրված, չպետք է հարբեն, անպատշաճ շարժում գործեն և անզգամորեն բացեն իրենց բերանը: Եվ անպատշաճ վարվեցողությամբ այդպիսի մարդ հայտնվելու դեպքում, տղամարդ թե՛ կին՝ ով էլ որ լինի, ոչ ոք նրան կրկին հանդեսի չպիտի հրավիրի: Իսկ եթե հրավիրողի ընտանեկցության պատճառով հարկադրված լինեն [այդպիսի] որևէ մեկին հրավիրել, ապա մյուս բոլոր հրավիրվածները պետք է խույս տան, ներողություն խնդրեն, և ոչ ոք չպիտի ներկայանա այն հանդեսին, որին աղմկարարը հրավիրված կլինի:

#### ՉԼՈՒԽ 374

Յուրաքանչյուր քաղաքի իշխան ամեն տարի չորս անգամ պետք է հանդես կազմակերպի և նշանավոր մարդկանց ճաշի հրավիրի, տղամարդկանց ու կանանց՝ ընթրիքի և պարելու, մեկ՝ հունվարի 6-ին, սուրբ Հայտնության տոնին, ծնունդը, մեկ՝ սուրբ Հարության տոնին, գարնանը, մեկ՝ Վարդավառի տոնին, ամռանը, մեկ՝ Սուրբ Խաչի տոնին, աշնանը:<sup>123</sup> Մինչդեռ բազմած են ճաշի սեղանին՝ ամեն մեկն ուտելու և ըմպելու այնքան, որքան ներում է նրա բնությունը, կշտանալուց հետո անհրաժեշտ է, որ քաղաքի իշխանը գինու բաժակն իր ձեռքը վերցնի և այցելի իր աջ և ձախ կողմերում իր հետ բազմողներին՝ բարձրաձայն հնչմամբ ասելով, այն է՝

Առաջին անգամը՝ բարի կյանք համայն հայությանը, ու այդ կապակցությամբ պետք է կրակեն պարսպի շուրջը գտնված թնդանոթները. երկրորդ անգամը՝ երկար կյանք հայոց նախարարին,



և այդ առիթով կրակ պետք է արծակեն . . . . . 21 թնդանթ.  
 Երրորդ անգամը՝ երկար կյանք հայոց Ջաքարիա  
 հայրապետին և բոլոր եպիսկոպոսներին . . . . . 19 թնդանթ.  
 Չորրորդ անգամը՝ առատ պտղաբերություն  
 Զայաստանի տնկիներին . . . . . 17 թնդանթ.  
 Զինգերորդ անգամը՝ հայերի հետ մեր դրացիների կողմից  
 հաստատուն սեր . . . . . 15 թնդանթ.  
 Վերջում՝ բարի հանգստություն հրավիրված եղբայրներին. 13թնդանթ:  
 Ապա գոհունակությամբ ոտքի պիտի կանգնեն և բոլորը գնան իրենց  
 տուն:

Երեկոյան ընթրիքը ևս պետք է լինի հանդարտ ու խաղաղ, առանց  
 ավելորդ խմելու, առանց որևէ սանձարձակ խրախճանքի և ինչ-որ մեկի  
 կենաց առիթով հարբելու, ոչ էլ թնդանթով կրակելու, այլ հեզ ու խո-  
 նարի և մեղմ շարժումով յուրաքանչյուր տղամարդ պետք է ջանա ծա-  
 ռայել կանանց, օգնական լինել նրանց, սրբությամբ ուտեցնել և խմեց-  
 նել նրանց փոքր-ինչ գինի՝ ջրով խառնած, հնարավորություն տալ  
 նրանց լսելու երգերի, տավիղների ու նվագարանների ձայնը, հեզու-  
 թյամբ ու անոթխածությամբ պարելու և ամբողջ գիշերն իրենց առաքի-  
 նի վարքով միասին ուրախանալու, եթե կամենան: Յուրաքանչյուր ոք  
 որ ժամին էլ ցանկանա՝ կարող է ազատորեն գնալ իր տուն:

ԳԼՈՒԽ 375

Որ տան մեջ որ հղի կին լինի, նրա ծննդաբերման ժամին անհրա-  
 ժեշտ է հրավիրել որևէ քահանայի, որպեսզի իր հետ ծննդաբերող կնոջ  
 տուն բերի մկրտության, դրոշմի և հաղորդության սրբազան անոթները՝  
 սուրբ Ավետարանով, խաչով և հարկավոր այլ զգեստներով հանդերձ և  
 պատրաստ լինի, մինչև որ կինը ծննդաբերի. գուցե ծնվածը տկար լինի  
 կամ որևէ այլ պատճառով կասկածանքի տեղիք տա՝ պահե՞լ նրան  
 մինչև եկեղեցուց սահմանված ժամանակը, այսինքն՝ յոթ օր, և ապա  
 մկրտել: (Այդ դեպքում) իսկույն պետք է մկրտի, դրոշմ դնի, վերջին  
 օծումը տա և հաղորդի երեխային ավելի վաղ, քան երեխայի կյանքին  
 որևէ վնաս գա: Իսկ եթե երեխան առողջ լինի, նրան թույլ պետք է տալ  
 մկրտվելու սահմանված օրը:

ԳԼՈՒԽ 376<sup>124</sup>

Որևէ մեկն առանց հրավերի չպետք է մտնի ոչ նորածին մանուկների  
 և ոչ էլ ամուսնացած տղամարդկանց ու կանանց տները՝ շնորհա-  
 վորելու համար նորածին մանկան ծնունդը կամ ամուսնացածների  
 հարսանիքը: Ամեն մի ընտանիքում և Տիրոջ տանը,<sup>125</sup> ուր տեղի է ունե-  
 նալու ծնունդը կամ ամուսնությունը, պետք է հրավիրել նրանց, ում

իրենք սիրում են և ցանկանում տեսնել իրենց խրախճանքի մեջ: Զրա-  
 վերքն այսպես պետք է լինի՝ շարադրված մի թղթի երեսին, այսինքն՝  
 «Եղիսաբեթ տիկինը՝ պարոն Մաղաքիայի ամուսինը, դեկտեմբեր ամսի  
 14-ին, պատկեր ավուրը՝<sup>126</sup> երեքշաբթի, առավոտյան ժամը 6-ին  
 ծննդաբերեց մի արու մանուկ՝ սպասավորը ձեր և մխիթարությունն իր  
 ծնողների: Աստծու շնորհով ծնվածը և ծնողը ողջ ընտանյոք հանդերձ  
 առողջ են և ցնծությամբ սպասում են ընդունելու ձեր սերն իրենց հան-  
 դեպ դեկտեմբերի 17-ին, պատկեր ավուրը՝ շաբաթ, առավոտյան ժամը  
 յոթից մինչև ժամը տասը, նույն օրվա երեկոյան ժամը հինգից մինչև  
 ժամը ութը: Ով որ կամենում է մեզ փառավորել՝ պատվելով մեզ նույն  
 սահմանված ժամանակի մեջ, շնորհակալությամբ պատրաստ կգտնի  
 մեզ»:

Այդպես պետք է լինի և հարսանյաց [հրավերը]:

Եվ դա գործին մեծ բարիք կբերի: Նախ որ՝ մի անգամ միայն պատ-  
 րաստություն տեսնելով և մեկ օր ժամանակամիջոցում [հրավիրողը]  
 կազատվի զանազան ծախսերից ու նեղությունից, և [ապա՝] նույն օրը  
 նրա տունը գեղեցիկ փայլմամբ կնմանվի հանդիսության տան, և այլև:

ԳԼՈՒԽ 377

Ոչ ոք առանց հրավիրման չպետք է մտնի ննջեցյալի տուն՝ ոչ ուղեկ-  
 ցելով դիակին դեպի գերեզման և ոչ էլ հարազատներին մխիթարելով,  
 բացի նրանցից, որոնք հրավիրված կլինեն: Նաև հրավիրյալներն էլ՝ թե՛  
 քահանաների դասը և թե՛ ընդհանուր ժողովուրդը, չպետք է բազմեն ոչ  
 ճաշի և ոչ էլ ընթրիքի, այլ միայն հարգանք մատուցելով ննջեցյալի հա-  
 րազատներին՝ պետք է ելնեն տնից՝ հուղարկավորելով դիակը մինչև  
 եկեղեցի, շարունակեն մնալ, մինչև որ կատարվի դիակի թաղումը,  
 ապա ննջեցյալի հարազատների ուղեկցությամբ վերադառնան տուն,  
 մխիթարական խոսքով բոլորը գրկեն ու համբուրեն ննջեցյալի հարա-  
 զատներին, և ամեն մեկը գնա իր տունը: Ննջեցյալի տունը նույն օրը,  
 բացի տան բնակիչներից, չպետք է սեղան պատրաստի ուրիշների՝ ոչ  
 քահանաների, ոչ աղքատների և ոչ էլ ընդհանուր ժողովրդի համար:  
 Յոթերորդ օրը ննջեցյալի հարազատները պետք է իրենց բարեկամնե-  
 րին և քահանաներին ճաշի հրավիրեն՝ ում և քանի հոգու որ իրենք կա-  
 մենան: Եթե թաղման յոթերորդ օրը որևէ մեկը չցանկանա հրավերք  
 կազմակերպել և կամ անտեսի, դա նրա համար ամոթ չպիտի համար-  
 վի: Եթե ննջեցյալը տղամարդ լինի, անհրաժեշտ է, որ հրավիրված  
 մասնակիցները լինեն միայն տղամարդ, իսկ եթե ննջեցյալը կին լինի,  
 ապա հրավիրվածները կարող են լինել տղամարդիկ և կանայք: Ընդ-  
 հանրապես ննջեցյալների համար ծախսը՝ թե՛ թաղման, թե՛ արարո-  
 ղության և թե՛ բարեկամների բաժինը, այսպես պետք է լինի:

Եպիսկոպոսներից յուրաքանչյուր անձին՝ արծաթ դահեկան . . . . . 4  
 Վարդապետներից յուրաքանչյուր անձին՝ արծաթ դահեկան . . . . . 1  
 Քահանաներից յուրաքանչյուր անձին՝ արծաթ դահեկան . . . . կես(1/2)  
 Սարկավագներից յուրաքանչյուր անձին՝ արծաթ դահեկան . . . . . 1/4  
 Գերեզմանափորներից յուրաքանչյուր անձին՝ արծաթ դահեկան . . . 2  
 Դիակը դագաղով գերեզման տանողներից յուրաքանչյուր  
 անձին՝ արծաթ դահեկան . . . . . 2

Հրավիրված ընդհանուր ժողովրդի մարդկանցից յուրաքանչյուրին [պետք է բաշխել] վեց կանգուն սպիտակ կտավ:

Աղքատները կարող են հրավիրվել մասնակցելու, և հրավիրվածները պարտավոր են առանց իրենց խնայելու գնալ և չակնկալել ոչինչ՝ վերը հիշատակված ընդունված հատուցումից: Բայց նրանց չարչարանքի վարձը հանդերձյալ կյանքում նրանց կհատուցի Տերը, իսկ ննջեցյալի մերձավորները կարող են իրենց ննջեցյալներին ավելի փառավորել՝ ննջեցյալների ունեցվածքը պահելով նրանց որդիների ու դուստրերի համար, քան թե բաշխել ուրիշներին: Եվ ննջեցյալների մերձավորներից յուրաքանչյուրը պետք է անցնի իր գործին. նրանց սուզը բավական է միայն երեք ամիս սև զգեստ հագնելով:

**ՉԼՈՒԽ 378**

Թող եկեղեցականները, տնանկներն ու աղքատները չբարկանան մեր Կարգադրության սահմանի 377-րդ գլխի օրենքի կապակցությամբ, քանզի հայ ազգը չի խնայում ողորմության, պատարագի մատուցման և տնանկներին ու աղքատներին մխիթարելու համար, ընդհակառակն, միշտ իր մտքում ունի ապահով պահել նրանց ամեն մի անհրաժեշտ բանով՝ ի հաշիվ ապրող հարուստ մարդկանց աշխատանքի ու վաստակի, ուշադրությամբ Հայոց տան:

**ՉԼՈՒԽ 379**

Ամսականի շրջանում գտնվող ոչ մի կին չպետք է թույլ տա, որ իր ամուսինն իրեն մերձենա, իսկ եթե որևէ ամուսին ամսականի շրջանում բռնությամբ մերձենա իր կնոջը, պիտի պատժվի, որպեսզի բորոտ որդի չծնվի՝ ապականելու համար Հայոց աշխարհը:

**ՉԼՈՒԽ 380**

Յուրաքանչյուր ոք, ով տեր է սպասավորի, աղախնի կամ ծառայի, շաբաթը վեց օր պետք է քաղի նրանց աշխատանքի արդյունքը, իսկ յոթ օրվա մեջ մեկ օր, կամ կիրակի օրը, կամ որևէ օր, որ անվճար կհամարի իր գործին, պետք է աշխատանքից ազատ արձակի: Ու ամեն սպասավոր կամ աղախին և կամ ծառա յոթ օրվա մեջ մեկ օրվա ազատու-

թյուն ունի՝ հանգստանալու, գնալու աղոթքի տուն և դաշտ՝ զբոսանքի համար, կամ լեռներ՝ որսորդության համար, եթե օրը կիրակի չլինի, կամ աղբյուրներ ու գետեր՝ լողալու համար, բայց միայն մի ցերեկ, այսինքն՝ տասներկու ժամ ժամանակով, դուրս գա մոտավորապես առավոտյան ժամը հինգին և վերադառնա երեկոյան ժամը հինգին:

**ՉԼՈՒԽ 381**

Ոչ ոք իրավունք չունի հարվածել կանանց, բացի իշխաններից՝ նրանց ձեռքի արարքների ու մեղքերի համար, համաձայն դատաստանի վճռի, նաև ամուսնացած կնոջ մարդը՝ փափկամիս տեղին, մինչև տասներկու մտրակի հարված, բայց զգուշությամբ, որպեսզի չվիրավորի և կամ չջարդի իր կնոջ ոսկորները:

**ՉԼՈՒԽ 382**

Աղջիկների բոլոր ուսուցիչները նախ և առաջ պետք է ջանան իրենց աշակերտներին ուսուցանել ամոթխածություն [զգացումով], և նրանց [տված] պատիժը պետք է լինի արգելել շարժվելու (այսքան) ժամ՝ ըստ իրենց մեղքի ծանրության: Իսկ եթե լինի բնավորությամբ գոռոզ որևէ աղջիկ, որին հարկ լինի սաստել գանահարությամբ, ապա նրա ուսուցիչը կարող է կանանց ձեռքով մինչև մտրակի ինը հարված ծեծ տալ նրան՝ ըստ մեղքի ծանրության և ըստ մեղավորի մարմնի դիմացկունության, զգույշ լինելով, որ չխեղվի հատկապես նրա տեսքը, չփշրվեն ոսկորները, և անփարատելի երկյուղ չմտնի նրա սիրտը, որ նա գրկվի ծննդաբերելուց:

**ՉԼՈՒԽ 383**

Ամեն օրիորդ, անարատ պահելով իր կուսական մաքրությունը և ընծայելով իր հետ ամուսնացած մարդուն, արժանապատվություն ունի դուրս գալ դաշտ զբոսանքի, մասնակցել հանդեսի, սեղան նստել և պարել հայոց բոլոր մեծավորների պատվելի տիրուհիների հետ: Բայց նախքան ամուսնանալ իր սուրբ կուսությունն ապականած օրիորդը, լինի դա այն մարդու հետ, որի հետ հետո ամուսնացել է, թե մեկ ուրիշ մարդու հետ, նախատված պետք է լինի հայոց պատվելի կանանց մեջ, և ոչ ոք չպիտի թույլ տա, որ նա մուտք գործի իրենց շրջանակը:

**ՉԼՈՒԽ 384**

Ոչ մի մարդ իրեն չպետք է թույլ տա ընդունելության գնալ որևէ եպիսկոպոսի մոտ՝ իրենց եկեղեցու ծառայության համար քահանա ձեռնադրելու ինչ-որ մեկին, եթե սարկավազը տարիքով երեսնամյա չլինի, իսկ եթե երեսուն տարեկանից բարձր լինի՝ ավելի լավ:

ՉԼՈՒԽ 385

Ոչ մի իշխան չպետք է ընդունի հասակով հիսունհինգ տարուց պակաս<sup>127</sup> կրոնավորին՝ շրջելու երկրում, քաղաքներում ու բնակավայրերում թե նվիրակության<sup>128</sup> և թե քարոզչության գործով, որովհետև ժողովրդի մեջ մտնող ամեն նվիրակ և քարոզիչ կրոնավոր տարիքով պետք է լինի հիսունհինգամյա, իսկ եթե ավելի մեծ լինի՝ ավելի լավ, բայց ոչ պակաս, քան 55 տարեկան: Եվ երկրում ամենուրեք, որտեղ շրջող երիտասարդ կրոնավոր հայտնվի, հարկավոր է նրան ձեռքակալել և հանձնել իր եպիսկոպոսին, որպեսզի մտցնի նրան մենակեցության վանքը, որտեղ նա խոստում էր տվել միշտ մնալ միայնակյաց և կրոնավոր:

ՉԼՈՒԽ 386

Ամեն երեք տարին մեկ անգամ, միևնույն տարեմուտին, հայոց մեջ սովորություն պետք է լինի, որ նորոգվի հայոց նախարարը: Նոր նախարարի կողմից խոհեն, հեզ, հեռատես և լիալիր հասակով տասներկու մարդիկ, ինչպես ալևորներ, պետք է ուղարկվեն կրոնավորների և ապաշխարողների վանքերը, իրավունք խնդրեն վանքի առաջնորդից և ապաշխարողների մայրապետից՝ մտնելու վանք և առանձին լսելու կրոնավորների և ապաշխարողների սրտի փափագը: Ու եթե նրանց մեջ գտնվի որևէ կրոնավոր կամ ապաշխարող, որ հատկապես ցանկություն ունենա և կամենա հեռանալ վանքից և աշխարհ մտնել ու օրինական կարգով ամուսնանալ, ապա շարադրեն նրա պաղատանքի թուղթը՝ ուղղված հայոց հայրապետին, հեռացողն ստորագրի, և նախարարից ուղարկված լսողի վկայությամբ հաստատված պաղատանքի թուղթը ներկայացնեն նախարարին: Իսկ նախարարը ինչքան թղթեր որ կան՝ պետք է օրինակներ հանի ու գաղտնի հանձնի հայրապետի ծառայությանը՝ խնդրելով արդար դատաստան և շնորհման հրաման, որ արձակի նրանց, և նրանք հեռանան ամուսնանալու համար ու լինեն իբրև աշխարհական:

ՉԼՈՒԽ 387

Ինչպես օրենք է մեզ համար, մեր որևէ թշնամու դեմ պատերազմի ժամանակ ինչ ամբողջ, շեն և ռազմակայան<sup>129</sup> էլ կռվով նվաճվի, նրանցում գտնված ողջ հարստությունն ավար պետք է դառնա մեր զորքին: Բայց, հակառակ դրան, թշնամիների ինչ գավառ, գյուղեր ու շեներ էլ պատերազմի ժամանակ առանց դիմադրության հնազանդվեն մեր զորքերին, պետք է մեր պահպանությունը լինի նրանց վրա, նաև նրանց ունեցվածքի վրա: Քանզի պետք է պահպանել նրանց՝ ինչպես մեր ժողովրդին, և թույլ տալ նրանց միշտ մնալ իրենց տեղում, ազատորեն

վայելել իրենց ունեցվածքը, միայն թե հարկը, մաքսը, հասը և բաժը, որ տալու էին իրենց տերերին, վճարեն մեզ և ամբողջ ժամանակ մնան մեզ իբրև ժողովուրդ, քանի դեռ մեր բանակն ու իշխանությունը կան ու կմնան այնտեղ: Իսկ երբ այնտեղից մեր բանակը հեռանա, մեզանից ոչ ոք իշխանություն չունի գերելու նրանց և շարժելու տեղից տեղ կամ ավարառության ենթարկելու նրանց ունեցվածքը: Նրանք պիտի շարունակեն մնալ իրենց տեղում՝ հնազանդվելով իրենց սեփական տերերին:

ՉԼՈՒԽ 388

Եթե այնպես պատահի, որ պատերազմի ժամանակ թշնամին գերեվարի մեր հասարակ ժողովրդից, որոնք ոչ զինվոր են եղել, ոչ զենք վերցրել և ոչ էլ ընդդիմացել թշնամուն, ուրիշ տեղ հեռացնի իրենց տնից ու բնակությունից, մենք պարտավոր ենք հաշվել մեզանից գերված այդպիսի մարդկանց թիվը, նաև ավարի արժեքը, որքան որ այն կազմի, և հանգիստ չտալ մեր թշնամուն, մինչև չվերադարձնի մեր գերյալներին՝ իրենց ունեցվածքով և նույնիսկ ավելիով, նաև միևնույն քանակությամբ անծանցով՝ իր ժողովրդից և իր ունեցվածքից էլ մի որոշ բան ավելացնելով՝ իբրև տոկոս իր անկարգ արարմունքի համար, որ տեղաշարժեց խաղաղ մնացած մեր ժողովրդին իր սեփական բնակավայրից, որը ոչ ձեռքը սուր էր վերցրել և ոչ էլ ընդդիմացել նրան ու հանձն էր առել նրան վճարել հարկ, մաքս, հաս և բաժ, ինչպես մեզ էր վճարում:

ՉԼՈՒԽ 389

Թշնամուց մեր գրաված վայրերում չպետք է ավերել հասարակ ժողովրդին պատկանող տուն, բնակարան ու շեն, բացի նրանցից, որ ապահովության համար հարկավոր լինի հարթեցնել աճրոցների ու բերդերի շուրջը: Ինչ ամբողջ որ թշնամուց կռվով գրավվի, եթե մեզ անհրաժեշտ լինի պատերազմում մեր հաջողության համար, պետք է ավերել ու քանդել միայն ամբոցների ու բերդերի պարիսպ ու աշտարակ, վառողի տունը, զինանոցը և զինվորների բնակության տեղը:

ՉԼՈՒԽ 390

Մեր դրացիներին կամ օտարներին պատկանող բոլոր զավառները, ագարակները, գյուղերը, այգեստանները, անտառները, մայրիների պուրակները և ամեն տեսակ անասունները, թռչունները, զանազան կահկարասին մեզ հետ թշնամանալու և պատերազմի մեջ մտնելու ժամանակ պիտի համարվեն մեր պահպանության ներքո՝ ինչպես մեր սեփական ժառանգությունը, [նրանք] նմանվելու են մեզ հնազանդվող-

ների և մեզ սովորական հարկ, մաքս, հաս և բաժ վճարողների: Մեր պահպանությունը նրանց նկատմամբ նույնը պետք է լինի, ինչ Հայաստանում բնակվող մեր սեփական ազգի վերաբերմամբ:

#### ՊԼՈՒԽ 391

Թշնամու երկրից այն գավառները, քաղաքները, գյուղերը և մարդիկ,<sup>130</sup> որոնք պատերազմի ժամանակ հնազանդվելով մեզ՝ պաշտպանություն են գտել մեր կողմից, եթե դավաճանեն, այդպիսի հանցագործը և հանցագործները արժանի է, որ ենթարկվեն դատաստանի [պատժին]՝ իրենց դավաճանության հետևանք վնասի համեմատ, մինչև իսկ [դատապարտվեն] մահվան, գերության, իսկ նրանց ինչքը՝ ավարառության: Հանցանքի վերաբերյալ վճիռը, ըստ դավաճանության վնասի արժեքի, կարող է արձակվել նույն զորագնդին հրամայող մեր սպարապետի կողմից, որի ենթակաների շնորհիվ է հայտնաբերվել դավաճանը:

#### ՊԼՈՒԽ 392

Ամեն մի բանի համար կատարված յուրաքանչյուր ծախս, որի համար վճարումը վերապահված է Հայոց տանը, դրանը ծախսողը պարտավոր է կատարված ծախսի հաշիվը արդարությամբ շարադրել և որևիցե դատավորի առաջ երդվել սուրբ Կտակարանի վրա՝ խոստովանելով, որ իր գրած հաշիվը իրավացի ու արդար է, և նույն դատավորի ատյանում պետք է ստորագրի իր հաշիվը, ապա Հայոց տան կողմից պետք է լինի հատուցումը:

#### ՊԼՈՒԽ 393

Ոչ ոք իր տանը, այգում կամ հանդում չպետք է թաքցնի ու պահի քրեական կամ պատժի արժանի մեղավորին, պարտապանին և կամ նրան, որ գողացած իրեր է պահում իր մոտ, բանտից կամ գանգատվողի ձեռքից փախածին և կամ սեփականություն գողացողին: Այդ թաքցնողն ու պահողը պարտավոր է իր ծախսով մտնել բանտ, շարունակի մնալ բանտում, մինչև որ վճիռ արձակվի գողի և սպանվողի վերաբերյալ: Այդ թաքցնողը պետք է ընկերակցի մահապարտին մինչև կախադանի վայր: Քրեական մեղավորը պիտի մահապարտի ենթարկվի, ապա թաքցնողն ազատվի մահվանից, նախատինքով հեռանա իր տուն և թաքնված ու գողացված բոլոր իրերը վերադարձնի դատաստանատուն՝ իբրև [իրենց] տիրոջ սեփական ինչքը:

#### ՊԼՈՒԽ 394

Հայոց օրենքն ամենայն մարդկային բնության ազատություն է տվել,

որ ամեն մարդ ազատորեն կարող է գործել բարի կամ չար՝ ըստ Հայոց օրենքի կամովին հանձն առնելով իր ձեռքի գործի վարձատրությունը: Սակայն հարկավոր է, որ ամենայն մարդկային բնություն բնականորեն ունենա իր անոթի զգացումը, իր բոլոր գործերում չափավոր լինի ու ըստ կարգի պահի իր շարժումը, որ չլրբանա, որովհետև անամոթ մարդու լրբությունը հարուցում է եղբոր բարկությունը, և բարկացած մարդը չի կարող գործել բարի: Դրա համար էլ լրբությունն ու անզգամությունը ամեն դատաստանական ատյանում դիտվում են որպես պատժի արժանի մեղք. եթե [այդպիսի մարդը] հարուստ է, պետք է տուգանք վճարի աղքատների տանը, եթե աղքատ՝ մտնի բանտ, իսկ եթե աղքատ է ու երիտասարդ ծեծի ենթարկվի:

#### ՊԼՈՒԽ 395

Հայոց օրենքը հրամայում է իր քրիստոնյա ժողովրդին, որ կիրակի օրը ներկայանա Տիրոջ տուն և ընդունի սուրբ պատարագի շնորհը: Սակայն հայոց զինվորականները, լինեն քաղաքներում թե դաշտավայրերում՝ վրանների տակ բնակվելիս, ամեն գունդ որտեղ և որ սպարապետի հրամանին որ ենթակա լինի, կիրակի օրը նրանց զորագլուխը պարտավոր է իր ողջ զորքը երեք բաժնի բաժանել և երեք անգամով ներկայացնել Տիրոջ տուն աղոթելու.

1 բաժինն առավոտյան ժամը 7-ին,

1 բաժինն առավոտյան ժամը 9-ին,

1 բաժինն առավոտյան ժամը 11-ին:

Քանզի ամեն ժամ գորքի երեք բաժնից երկուսը պետք է իրենց տեղում մնան պատրաստ, իսկ եթե բաժնից մեկը, որ ներկայանում է աղոթքի, պետք է սուսերով գոտի ունենա մեջքին կապած, յուրաքանչյուր գենքով պատրաստ լինի մինչև սուրբ եկեղեցու դուռը, և այստեղ գետնին տեղավորելով իրենց գենքերը, հաշվելով ու հարմար պահակ կարգելով այդտեղ թողած գենքերի վրա՝ իրենք պիտի մտնեն Տիրոջ տուն և աղոթք անեն: Սուրբ պատարագի ավարտից հետո կարգով պետք է դուրս գան, յուրաքանչյուրը ձեռքը վերցնի իր գենքերը, և գնան իրենց տեղերը: Այնուհետև իր տեղից մյուս գունդը պետք է ներկայանա սուրբ եկեղեցու դուռ:

#### ՊԼՈՒԽ 396

Հայոց աշխարհում ոչ մի մարդ ակնկալություն չպետք է ունենա, թե պատվի է արժանանալու որևէ մեկից, բացի իր ձեռքի բարի գործերի համար: Իսկ եթե այնպես լինի, որ պատվի արժանանա որևէ մեկից կամ խորհրդով և կամ բան ու գործով, ապա նա պարտավոր է անչափ քաղցր դեմքով, հեզությամբ ու խոնարհությամբ շնորհակալ<sup>131</sup> լինել

նրանից, քանզի երախտագիտության շնորհիվ նա արժանի է շնորհակալության, որովհետև ճանաչեց պատվարժան մարդու բարոյակա- նությունը:

ԳԼՈՒԽ 397

Մեզ համար օրենք է չթաթախվել եկեղեցական գործերի մեջ և թույլ չտալ, որ եկեղեցականներն էլ թաթախվեն մեր աշխարհականների գործերի մեջ, բայց Կարգադրության որևէ սահման, եթե եկեղեցական- ները կամենում են նորովի ձևակերպել ժողովրդի կառավարման մա- սին, պետք է կայանա Հայոց տան հավանությամբ:

ԳԼՈՒԽ 398

Օրենքի ամեն հողված պարունակում է բազմաթիվ մանրամաս- ներ,<sup>132</sup> որոնք կարող են բացատրվել իմաստուն մարդկանց կողմից: Օրենքի մասին բոլոր բացատրությունները, եթե օգտակար նպատակ ունեն և հաճո են Հայոց տան ցանկությանը, պետք է պատվի արժանա- նան, բայց ոչ [այն բացատրությունները], որոնք դեմ են մարդու բնու- թյանը:

ԳԼՈՒԽ 399

Հայոց երկրի երեսին բնակվող ամեն մի մարդկային բնություն ազա- տորեն կարող է հազնել իր զգեստները, որոնք պատրաստված են Հայոց աշխարհում: Իսկ նրանք, ովքեր չբավարարվելով՝ հազնում են օտար աշխարհի ձեռքի գործվածքը, լինեն տղամարդ թե կին, ամեն մեկն իր սին պարծանքի համար մեկ տարվա մեջ քսան արծաթ դահե- կան պիտի վճարի Հայոց տանը, որովհետև այդ մարդու խելքին փչեց ավելի փայլել հասարակության մեջ:

ԳԼՈՒԽ 400

Ամեն ոք, ով իր ոսկին կամ արծաթը Հայոց աշխարհից դուրս է հա- նում օտար աշխարհ, Հայոց տանը պարտավոր է հատուցել երեք բաժ- նից մեկը՝ դուրս հանելով երկու բաժինը և տանելով՝ ուր որ ինքը կա- մենա:

ԳԼՈՒԽ 401

Ամեն ոք, ով ինչ-ինչ ընծաներով, զանձով կամ պատվական իրերով կհամոզի ամուսնացած կանանց և կխառնակվի նրանց հետ, պետք է վճարի իր զանձերի տոկոսը, որպեսզի խոնարհվի իր հպարտությունից ու հարստությունից:

ԳԼՈՒԽ 402

Ամեն ննջեցյալ, եթե մինչև յոթ պորտ մերձավոր ժառանգ և ազգա- կան չունի, նրա ունեցվածքը պետք է համարվի հայոց աղքատաց տան ժառանգություն:

ԳԼՈՒԽ 403

Ամեն մարդ կարող է իր տան սահմանում փողոցի երկարությամբ ծառ տնկել: Ինչ պտուղ ու եկամուտ որ բերեն ծառերը՝ ամբողջն ստա- նալու է տնկողը՝ Հայոց տանը վճարելով տասանորդը:

ԳԼՈՒԽ 404

Ամեն մարդ դաշտում, ճանապարհների եզրին, տերունի հողատա- րածքում կարող է ծառ տնկել: Ծառերն ինչ պտուղ և եկամուտ որ բե- րեն՝ ամբողջն ստանալու է տնկողը՝ հայոց տանը վճարելով տասա- նորդը:

ԳԼՈՒԽ 405

Ամեն մարդ ազատ է իր ծախսով կամուրջ կանգնեցնել գետերի վրա և աղուտ ու տղմուտ տեղերում: Նրան Հայոց տունը պետք է տա հարկապահանջության հրամանագիր՝ տասներկու տարի ժամանա- կով, որպեսզի հարկ հավաքի կամուրջով անցնողներից, այն է՝

- ծիավոր մարդը . . . . . 2 լումա
- հետիոտն մարդ ու կին . . . . . 1 լումա
- ծիու, ջորու, էշի, եզան և ուղտի բեռը . . . . . 1 լումա
- կառքը . . . . . 4 լումա
- մարդ թե կին՝ իրենց շալակած բեռներով հանդերձ<sup>133</sup> . . . . . 1 լումա

Տասներկու տարի ժամանակամիջոցում կամուրջ կառուցողն իր ծախսով պետք է հոգա նրա վերանորոգումը: Տասներկու տարին լրանալուց հետո կամուրջը պետք է մնա ազատ: Նորոգման ծախսը պետք է ընկնի Հայոց տան վրա, և անցորդների հարկն էլ պետք է մտնի Հայոց տուն:

ԳԼՈՒԽ 406

Նա, ով որ լեռների կիրճերում հողատարածք ունի, որտեղից կարող է առու հանել՝ ջուր անցկացնելով երկրի տարածքով, ազատ է, եթե կամենա իր ծախսով առու բացել ու ջուր հանել և այդ ջուրը վաճառել ուրիշին՝ ջրի իր տարեկան եկամտի այդ արդյունքից տասանորդ վճա- րելով Հայոց տանը:

ՉԼՈՒԽ 407

Ամեն մարդ կարող է իր ծախսով սեփական հողատարածքում գետերի ափին ջրաղաց կառուցել և կամ հողմաղաց՝ իր բլրի վրա՝ ինչքան որ կամենա, Հայոց տանը տասանորդ վճարելով իր տարեկան եկամտից:

ՉԼՈՒԽ 408

Ամեն հողի տեր թե դաշտավայրում և թե քաղաքներում ու գյուղերում, թե կառուցված տան [տարածքում] և թե այգեստաններում կամ ամայի դաշտերում և այլն, որ գնել է վաճառող մարդուց և կամ թե հրամանով ստացել Հայոց տնից, եթե պատահի այնպես, որ իր հողի ընդերքում կամ ջրհորի մեջ և կամ տների հիմքերի ստորոտում և կամ էլ իր գնած հողի սահմանում որևէ տեղ ոսկի, արծաթ և ինչ-որ այլ հրահալելի գտնի կամ թանկագին ակնեղեն և այլն, ամբողջապես իր, այսինքն՝ գնողի և Հայոց տնից ստացողի, ժառանգությունը պետք է լինի, ով էլ որ նա լինի. ոչ Հայոց տունը և ոչ էլ վաճառողն իշխանագոր չեն ոչ մի մաս ստանալու: Այդպիսի գտածոյի դեպքում [գտնողը] պարտավոր է գտնված իրի համար միայն մեկ անգամ տասանորդ վճարել Հայոց տանը, մնացածը ժառանգություն պետք է մնա իրեն:

ՉԼՈՒԽ 409

Եթե ուրիշների տանը վարձու բնակվող կամ ուրիշների ագարակը վարձու մշակող և վարձով այգի տնկող և կամ ուրիշների հողում որևէ [աշխատանք կատարող] հողում որևէ բան գտնի, գտնողի վարձը պետք է լինի գտնված իրի տասանորդը, մի տասանորդ էլ պետք է շնորհվի Հայոց տանը, իսկ մնացածը պետք է ժառանգություն մնա հողի տիրոջը:

ՉԼՈՒԽ 410

Քանի որ Հայոց տունը զինվորներով պահպանում է երկիրը, ազատություն պարգևում Հայոց ազգին և պարիսպներով ամուր փակում՝<sup>134</sup> հացով կերակրելով, սերմացուով օժանդակելով իր ազգին, փոխհատուցելով թշնամուց կողոպտվածներին, վերադարձնելով գերյալներին, կերակրելով անձարներին, դարմանելով տկարներին, խնամելով թաքուն ծնվածներին, ողջ Հայոց աշխարհն ու ազգը փրկելով օտարազգիների ծառայության լծից, հովանավորության տակ առնելով և բազմապիսի այլ բարություններ [անելով], ինչը որ հաստատվում է մեր օրենքով, ուրեմն երկրի և բնակիչների պարտականությունն է ըստ ազատ [մարդու] բնական բնության՝ հանձն չառնել ոչ պարտքի տակ մնալը և ոչ էլ նախատինք: Նույն կերպ ամբողջ սրտով հանձն առանք

Հայոց տանն ու մեր պահպանիչին վճարել հարկ, մաքս, հաս և բաժ, մարդկային բնության ծննդից իսկ զավակներով մեր պատիվն ու հնազանդությունը [բերել] մեր օրենքներին, մեր երկրի բույս ու պտղի բերքից, մեր երկրում եղած անասունների ու գազանների ծնունդից, սողուններից, ծովից, գետերից ու թռչուններից՝ գնելու և վաճառելու արդյունքից ու աճից ամենայն տուրք ու բարիք և պարգև կատարելով, ինչ որ Տիրոջ կամեցողությամբ բխում է մեր երկրից՝ տարեկան ողջ ստացվածքից ամենքս պարտական ենք անձանծույթ տասանորդ վճարել Հայոց տանը, քանզի հատուցում ենք ոչ թե ինչ-որ մեկին, եթե ոչ մեզ, և ոչ էլ որևէ պատճառով, եթե ոչ իրավ ու արդար մեր պարտքը:

ՉԼՈՒԽ 411

Եթե հայոց երիտասարդներն ու պատանիները կամավոր մտնեն զինվորական ծառայության, մինչև իննսուս հազարը բավական է, իսկ եթե ոչ՝ Հայոց տունը Հայոց աշխարհի բոլոր գավառների ու բնակավայրերի միջից վիճակահանությամբ պատանիներ և երիտասարդներ պետք է ընտրի ամեն հարյուրի միջից՝ հինգին՝ յոթ տարի ժամկետով զինվորական ծառայության համար, Հայոց տան ռոճիկով՝ ղեկավարվելով ըստ օրենքի, իսկ յոթ տարի անց [զինվորն] ազատ պիտի համարվի, վերադառնա իր տունն ու բնակավայրը:

ՉԼՈՒԽ 412

Կենդանիների ու անբան անասունների՝ ամեն տարի բերած ծնունդներից ինչքան որ կազմի ամբողջ երկրի եկամուտը՝ այդքանի համար էլ պիտի վճարեն տասանորդ:

ՉԼՈՒԽ 413

Բոլոր սողունների և թռչունների ձագերի համար պետք է վճարել տասանորդ:

ՉԼՈՒԽ 414

Բոլոր ծառերի, տունկերի և բույսերի եկամտից [պետք է վճարել] տասանորդ:

ՉԼՈՒԽ 415

Մետաքսի որդերի եկամտից [պետք է վճարել] տասանորդ:

ՉԼՈՒԽ 416

Անտառում կամ որևէ տեղում հատված ծառից քաղած<sup>135</sup> և մեղրից ու մոմից [պետք է վճարել] տասանորդ:

ԳԼՈՒԽ 417

Ամեն ձեռագործ առարկա վաճառելու նպատակով մի նահանգից մյուսն անցկացնելիս՝ որ նահանգը մտնի՝ պետք է վճարել հարյուրին հինգ [տոկոս]:

ԳԼՈՒԽ 418

Հայաստան երկրի երեսին բնակվող ամեն մարդկային բնություն, լինի բուն հայ ազգից թե գաղթական այլազգի, արական թե իգական սեռի, պարտուպատշաճ է, որ Հայոց տնից աղ ստանա՝ բոլոր անձերից յուրաքանչյուրը մեկ անձի հաշվով՝ մեկ կշիռ, և նրա գինը վճարի Հայոց տանը՝ մեկ արծաթ հայոց դահեկան:

ԳԼՈՒԽ 419

Գինու վաճառքից [վճարել] տասանորդ:

ԳԼՈՒԽ 420

Հիւը, մեխակը, ջավզը, կորիզը, բիբարը, շաքարը, մանանեխը<sup>136</sup> որ նահանգը տարվեն՝ [պետք է վճարել] հարյուրին հինգ [տոկոս]:

ԳԼՈՒԽ 421

Տասը կշիռ ծանրությամբ թամբաքուի<sup>137</sup> համար հայոց գանձարանին պետք է վճարել տասը արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 422

Մահուդի, սամույրի ու նապաստակի<sup>138</sup> [մորթու] և մյուս ողջ մորթեղենի համար ամեն նահանգում պետք է վճարել հարյուրին հինգ [տոկոս]:

ԳԼՈՒԽ 423

Ձեռքով գործված ամեն [ապրանք] օտար երկրից հայոց որ նահանգն էլ մտնի՝ պետք է վճարել հարյուրին հինգ [տոկոս]:

ԳԼՈՒԽ 424

Ողջ թանկագին ակնեղենի ու մարգարտի համար, որ նահանգն էլ մտնեն, [պետք է վճարել] հարյուրին երկու [տոկոս]:

ԳԼՈՒԽ 425

Կլայեկի, արճիճի, պղնձի, երկաթի, անագի<sup>139</sup> համար [պետք է վճարել] հարյուրին հինգ [տոկոս]:

ԳԼՈՒԽ 426

Սաղրի<sup>140</sup> կոշիկ հազնողը տարին պետք է վճարի երկու արծաթ դրամ: Կանայք ազատ են:

ԳԼՈՒԽ 427

Ջառ<sup>141</sup> գոտի և զառ մանյակ<sup>142</sup> կրողը տարին [պետք է վճարի] տասը դահեկան: Կանայք ազատ են:

ԳԼՈՒԽ 428

Սամույրի հազնողը [պետք է վճարի] տարին տասը դահեկան: Կանայք ազատ են:

ԳԼՈՒԽ 429

Արծաթապատ սարքով<sup>143</sup> ձի հեծնողը տարին [պետք է վճարի] տասը դահեկան:

ԳԼՈՒԽ 430

Ոսկեպատը՝ քսան դահեկան:

ԳԼՈՒԽ 431

Ակնագարողը՝ հարյուր դահեկան:

ԳԼՈՒԽ 432

Տան մեջ մարմարե ջրավազան շինողը՝ տարին քսան դահեկան:

ԳԼՈՒԽ 433

Սև քարից ջրավազան շինողը՝ տարին հինգ դահեկան:

ԳԼՈՒԽ 434

Ապակիով պատուհան<sup>144</sup> ունեցողը՝ տարին տասը դահեկան:

ԳԼՈՒԽ 435

Նախշազարդ սենյակ ունեցողը և նրա մեջ բնակվողը՝ տարին հինգ դահեկան:

ԳԼՈՒԽ 436

Մեկ կանգունից ավելի մեծ հայելի պահողը՝ տարին երկու դահեկան:

ԳԼՈՒԽ 437

Մետաքսե խալու վրա նստողը՝ տարին հինգ դահեկան:

ԳԼՈՒԽ 438

Երկու շաբիր ջլաբում<sup>145</sup> տանողը՝ տարին հինգ դահեկան:

ԳԼՈՒԽ 439

Երեք, չորս (և կամ մեկով ինչքան էլ ավելանա ) շաբիր<sup>146</sup> տանողն ամեն մի շաբիրի համար՝ հինգ արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 440

Ամեն մարդ ազատորեն կարող է նստել միաձի կառք, իսկ եթե ավել [ծիերով] պետք է հարկ վճարի, ինչպես [ներկայացվում է] ստորև.

- 2 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 10 արծաթ դահեկան,
- 4 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 20 արծաթ դահեկան,
- 6 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 40 արծաթ դահեկան,
- 8 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 80 արծաթ դահեկան,
- 10 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 160 արծաթ դահեկան,
- (գլխավոր դատավորները և իշխանները)
- 12 ձիով կառքն աստողի տարեկան հարկը 320 արծաթ դահեկան:
- (ոչ ոք նստել չի կարող, բացի նախարարից)

ԳԼՈՒԽ 441

Ամեն տերունի թուղթ որ գավառում էլ հաստատվի՝ Հայոց տանը պետք է վճարվի ըստ յուրաքանչյուր աստիճանի, ինչպես [տրվում է] ստորև.

- թուղթ նախարարության՝ ..... 5000 դահեկան,
- թուղթ խորհրդականության՝ ..... 1000 դահեկան
- թուղթ գլխավոր դատավորության՝ ..... 500 դահեկան,
- թուղթ դատավորության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ ատենաբանության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ դպրության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ ծերակուտական տանուտերության՝ ..... 10 դահեկան,
- թուղթ իշխանության՝ ..... 1000 դահեկան,
- թուղթ սպարապետության՝ ..... 3000 դահեկան,
- թուղթ ասպետության՝ ..... 2000 դահեկան,
- թուղթ հազարապետության՝ ..... 500 դահեկան,
- թուղթ հարյուրապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ տասնապետության՝ ..... 5 դահեկան,
- թուղթ վարժապետության՝ ..... 10 դահեկան,
- թուղթ գավառապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ գյուղապետության (քոխվա)՝ ..... 10 դահեկան,
- թուղթ լրտեսապետության՝ ..... 100 դահեկան,

- թուղթ զինապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ վառողապետության՝ ..... 50 դահեկան,
- թուղթ կառապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ վրանապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ կերակրապետության՝ ..... 1000 դահեկան,
- թուղթ հրածգային զինապետության՝ ..... 100 դահեկան,
- թուղթ գանձապետության՝ ..... 3000 դահեկան,
- թուղթ զնդապետության՝ ..... 1000 դահեկան,
- թուղթ երկրաչափության՝ ..... 1000 դահեկան,
- թուղթ դրոշակակրության՝ ..... 10 դահեկան,
- թուղթ պարտավորության, ամեն մի հազարին՝ ..... 1 դահեկան,
- թուղթ վնասի պարտավորության, ամեն մի հազարին՝ .. 1 դահեկան,
- թուղթ վաճառված հողի կամ տան դաբալայի,<sup>147</sup>
- ամեն մի հազարին՝ ..... 5 դահեկան,
- թուղթ դաշնադրության՝ ..... 5 դահեկան,
- թուղթ հարսանյաց՝ ..... 3 դահեկան,
- թուղթ հրամանի. ում անունով որ լինի՝ պետք է վճարի՝ .. 5 դահեկան,
- թուղթ կտակի՝ ..... 1 դահեկան,
- թուղթ վճռի՝ ..... 10 դահեկան,
- թուղթ գանձատի և պատասխանի՝ ..... 5 դահեկան,
- թուղթ ստացման՝ ..... 1 դահեկան,
- թուղթ ազատ արձակման՝ ..... 2 դահեկան,
- թուղթ երաշխավորության՝ ..... 2 դահեկան,
- թուղթ տեղակալության՝ ..... 1 դահեկան,
- թուղթ շուկայակալության՝ ..... 2 դահեկան:

ԳԼՈՒԽ 442

Արծաթապատ սեղան բազմողը տարին պետք է վճարի հարյուր արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 443

Ոսկեպատ սեղան բազմողը տարին պետք է վճարի հազար արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 444

Ճենապակե սպասքով սեղան բազմողը [տարին պետք է վճարի] տասը արծաթ դահեկան:

ԳԼՈՒԽ 445

Շուկայից դուրս, ամբողջ երկրի տարածքում, վաճառված ամեն մի



բանի համար պետք է վճարել հարյուրին հինգ [տոկոս], որից երկուսուկեսը՝ վաճառողը, երկուսուկեսը՝ գնողը:

#### ՉԼՈՒԽ 446

Ամեն խանութ, քարվանսարա և ճաշարան տարեկան ինչ որ շահի՝ պետք է տա տասանորդ:

#### ՉԼՈՒԽ 447

Մեղրից ու մոմից [պետք է վճարել] տասանորդ:

#### ՉԼՈՒԽ 448

Գավառից գավառ բեռներ փոխադրողները պետք է վճարեն 10 պղնձի դրամ՝ սննդի, բեռների թե ձիու, ուղտի, ջորու, եզան կամ էջի համար, ամեն տեսակ ապրանքի բեռների համար՝ մեկ արծաթ դահեկան:

#### ՉԼՈՒԽ 449

Ամեն հանք, ոսկու թե արծաթի, երկաթի, պղնձի, կապարի և այլն, բայց ոչ աղի, ամեն ոք կարող է հանել՝ վճարելով ստացված հրահալելու<sup>148</sup> տասանորդը. ծախսը հանողի հաշվին պիտի լինի:

#### ՉԼՈՒԽ 450

Ամեն ոք իր ոսկին և արծաթը ազատորեն կարող է ներկայացնել դրամահատանոց՝ դրամ կտրելու համար, վճարելով նրա ծախսը՝ հազարին<sup>149</sup> երկուսուկես [տոկոսով]:

#### ՉԼՈՒԽ 451

Ամեն տան և բնակարանի տարեկան եկամուտը պետք է հաշվվի ըստ նրա գնի ու արժողության, և ըստ տարեկան ինչ եկամտի էլ որ նրանից վճարեն, պետք է ամեն մի տարին հարյուրին մեկ [տոկոս] լինի:

#### ՉԼՈՒԽ 452

Ծանրություն չափելու բոլոր կշռաքարերն ու չափերը պետք է կնքվեն իշխանության կնիքով՝ ամեն տարի ըստ օրենքի համապատասխանեցնելով, վերացնելով նրանց ավելն ու պակասը, իսկ կնքելու ծախս վերցնելով տասը պղնձե դրամ:

#### ՉԼՈՒԽ 453

Դահեկան հատելու համար ամեն ոսկի, արծաթ, պղինձ և կապար ներկայացնողը հատելու ծախս և վճար պետք է հատուցի մեկ հազա-

րին երկուսուկես [տոկոս]:

#### ՉԼՈՒԽ 454

Ամեն ապրանք վաճառելիս վաճառողների և գնողների միջև համաձայնություն կայացնող յուրաքանչյուր մարդ իբրև համաձայնեցնող ինչքան վճար որ ձեռք բերի՝ նրանից տասանորդ պետք է հատուցի հայոց գանձարանին:

#### ՉԼՈՒԽ 455

Ամեն քարհատ, աղյուսագործ, կիր և գաջ պատրաստող, ինչքան որ հողից և լեռներից արդյունահանի, պետք է տասանորդ վճարի:

#### ՉԼՈՒԽ 456

Յուրաքանչյուր ձիթահանք, թե ձիթեմու, թե կտավատի և թե՛ ձիթատու ինչ հունդի էլ լինի, ամեն տեսակ ձեթի համար պետք է վճարի<sup>150</sup> տասանորդ:

#### ՉԼՈՒԽ 457

Շիրի, գխտորի, լեղակի, հինայի<sup>151</sup> կամ խինայի և բասմայի համար [պետք է վճարել] տասանորդ:

#### ՉԼՈՒԽ 458

Որևէ քաղաքից ինչ էլ մտնի Հայոց աշխարհ, եթե վաճառվի, պարտավոր են գնից վճարել հարյուրին հինգ [տոկոս], ակնեղենի համար՝ հարյուրին երկու: Ներմուծվող ոսկին և արծաթն ազատ են:

#### ՉԼՈՒԽ 459

Ամեն ձեռքի գործվածք, եթե մեր երկրից կամ թե օտար երկրից ներմուծվի մեզ մոտ, լինի բեհեզ թե բամբակ, կտավատե թե բրդե և կամ ոսկեթել և արծաթաթել հորինված (բացի հրահալելից ձեռագործից), պետք է Հայոց տան կնիքով ապրանքի ծայրը կնքել այն քաղաքում, որտեղ գտնվում է ապրանքը, և նրանից հանել հարկ՝ հարյուրին հինգ [տոկոս]: Եվ ձեռքի ինչ գործվածք էլ լինի, եթե չունենա կնիքի նշան, լվացողը և հակ կազմողը չպետք է լվանան և կազմեն: Եվ եթե որևէ մեկի մոտ առանց կնիքի ձեռքի գործվածք հայտնաբերվի, պետք է հարկ վճարի և գործվածքի վրա կնիք դնել տա:

#### ՉԼՈՒԽ 460

Ամեն տղամարդ, ով էլ որ նա լինի, եթե պատահի, որ հանդգնի ձեռք օգնել և շոշափել կամ ամոթահար անել կանանց, պետք է պատժվի:

ԳԼՈՒԽ 461

Ով որ աղմկարարության և անձնական վրեժխնդրության նպատակով անանոթաբար կմտնի ուրիշի տուն, տան բնակիչներն ազատորեն կարող են ծեծել ու դուրս գցել, մինչև իսկ վիրավորել, բայց ոչ սպանել:

ԳԼՈՒԽ 462

Չրով պետք է այրել այն մարդու ձեռքը, ով ստությամբ թուղթ կստորագրի ուրիշների անունով, իսկ եթե պատերազմի ժամանակ հրովարտակ և կամ հրաման [ստորագրի], մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 463

Ամեն ոք, ով նենգությամբ գյուղ այրի և կամ ուրիշի տունը, ու նրա պատճառով որևէ մեկը վառվի ու մեռնի, ինքը ևս մահվան պիտի դատապարտվի, իսկ եթե հրդեհից ոչ ոք չմեռնի, նա պետք է հատուցի միայն այրված գույքի<sup>152</sup> արժեքը:

ԳԼՈՒԽ 464

Ամեն ոք, ով սպանի տղամարդ կամ կին, պատանի և կամ երեխա՝ ինչքան չափահաս կամ ուր հասակում էլ լինի մարդկային բնությունը, պետք է մահվան դատապարտվի:

ԳԼՈՒԽ 465

Ամեն ոք, ով որ բռնությամբ լլկի ու խայտառակի ամուսնացած կնոջը կամ կույս աղջկան, մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 466

Ամեն ոք, ով որ գողանա մոտ հարյուր արծաթ դրամի արժեքի ինչ-որ բան, մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 467

Պատերազմի ժամանակ բռնված թշնամական ամեն մի լրտես անմիջապես մահապատժի պետք է ենթարկվի:

ԳԼՈՒԽ 468

Նա, ով որևէ մեկին թունավորում և դրանով նրան զրկում է կյանքից՝ գաղտնի թե խաբեությամբ, մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 469

Եթե ավազակը բռնվի, և նրա վրա հաստատվի ավազակության գործ, գողացած լինի մոտ 100 արծաթ դահեկանի արժեքի բան, մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 470

Ով որ հանդգնի և հարվածի օծյալ Տիրոջ քահանային, պետք է շիկացած երկաթով այրել նրա ձեռքը, իսկ եթե որևէ քահանա բարկանալով հարվածի որևէ իշխանավորի և կամ հասարակ ժողովրդին, պետք է ծեծ ուտի նրանից, որին ինքը հարվածել է, և այնքան, որքան դիմացինի բարկությունը պահանջում է, բացի սպանությունից:

ԳԼՈՒԽ 471

Ամեն մի հարբեցող եթե հարբած ժամանակ սպանի որևէ մեկին, հարբեցողն ինքը ևս պետք է մեռցվի:

ԳԼՈՒԽ 472

Եթե հարբածը որևէ մեկին վիրավորի, սա ևս պետք է պատժի հարբածին:

ԳԼՈՒԽ 473

Ով առանց իշխանության հրամանի դրամ հատի՝ արծաթի կամ պղնձի և այլն, մահվան պետք է դատապարտվի:

ԳԼՈՒԽ 474

Ամեն ոք, ով կշռի քաշից գողանա, շիկացած երկաթով պետք է նրա փափուկ միսն այրել: Մինչև երեք անգամ այդ մարդը կարող է բռնվել, չորրորդ անգամին պետք է մահվան դատապարտվի:

ԳԼՈՒԽ 475

Մարդկային բնությամբ արական սեռից ամեն ոք արուի, զազանի և անասունի հետ խառնակվելու դեպքում խառնակվողն էլ, խառնակվածն էլ կրակի մեջ պետք է այրվեն:

ԳԼՈՒԽ 476

Որևէ մեկն իր տանը կատաղի շուն<sup>153</sup> չպետք է պահի, որպեսզի չկծի մարդկանց և անասուններին. եթե պատահի, որ կծի՝ շան տերը կամ իր շունը պետք է տա կծվածին, կամ հատուցում կատարի կծվածին: Իսկ եթե կծվածին հատուցում կատարի, բայց անտարբերություն հանդես բերի, որ այդ շունը դարձյալ կծի, շունը պետք է սպանվի, և նրա տերն իր ծախսով երեսուն օրով բանտ մտնի:

ԳԼՈՒԽ 477

Նա, ում ոչխարը, տավարը կամ ինչքան անասուն էլ լինի՝ պատահի, որ արածեն ուրիշի արտերում, հանդերում կամ դաշտերում,

պետք է տիրոջը վճարի արածած խոտի ու ողջ բուսականության գինը:

ԳԼՈՒԽ 478

Ով որ երդունով կեղծ վկայություն տա, ինչքան վնաս որ լինի նրա սուտ վկայության պատճառով՝ պիտի հատուցի վնաս կրողին և ինքը վեց ամիս ժամանակով բանտ նստի, իսկ հայոց դատաստանական ատյանից հայտարարության թուղթ պետք է գրվի և ամրացվի երևելի տեղերում՝ ի տես անցորդների, որ ամենքն իմանան նրա մասին՝ իբրև ստախոսի և երդմնազանցի: Եթե կեղծ վկայությունը վերաբերի քրեական հանցանքի, այնպես որ նրա վկայության պատճառով վերջ տրվի մեղադրյալի կյանքին, և ապա հայտնի դառնա վկայի ստությունը, այդ սուտ վկան պետք է մահապատժի դատապարտվի:

ԳԼՈՒԽ 479

Ով որ ոչ չափավոր է վարում իր կյանքը՝ թե պճնվելով ու հանդես կազմակերպելով, դատարկաբանությամբ ու ամեն բանով վատ օրինակ տալով ժողովրդին, հարուցելով բարի մարդկանց նախանձը, առաջին և երկրորդ անգամ քաղցրությամբ պետք է խրատվի գավառի գլխավոր դատավորից. եթե նա չչափավորի իր վարքը, պետք է բանտ նստի, մինչև որ հոժարի պարկեշտ մնալ իր կյանքի բոլոր օրերին:

ԳԼՈՒԽ 480

Որ զորագլուխը և կամ զինվորը, որ պատերազմի ժամանակ և ճակատամարտի ժամին ընդդիմանա իր տիրոջ<sup>154</sup> հրամանին, պետք է բանտ նետվի, իսկ եթե իր ձեռքը բարձրացնի տիրոջ դեմ և հարվածի, պետք է իսկույն սպանվի:

ԳԼՈՒԽ 481

Որ զորագլուխը և կամ զինվորը խաղաղ ժամանակ ընդդիմանա իր տիրոջը, պետք է իսկույն բանտ նետվի, որպեսզի դատվի:

ԳԼՈՒԽ 482

Պատերազմի ժամանակ իր գնդից հայոց թշնամիների մոտ փախած ամեն զինվորական պաշտոնյա (և կամ զինվորական պաշտոնյաներ), եթե բռնվի, ու եթե բռնվածը մեռնակ մեկ հոգի լինի՝ պետք է սպանվի, իսկ եթե շատ լինեն, և քննեն ու հաստատեն՝ մատնիչներն ու առաջնորդները պետք է սպանվեն, մնացածները գան ու միանան և ապա արժանանան ազատության:

ԳԼՈՒԽ 483

Պատերազմի և կամ խաղաղ ժամանակ ամեն ոք՝ զինվոր թե աշխարհական,<sup>155</sup> եթե կողոպտի մեկ իսկ ծու և կամ ամեն բան. ինչ էլ լինի, կամ թե արածեցնել տա որևէ մեկի արտը, պետք է ծեծ ուտի և պարտավոր է ունեցվածքի տիրոջը հատուցել տվյալ իրը կամ նրա կրկնապատիկը:

ԳԼՈՒԽ 484

Յուրաքանչյուր իշխանավոր, ինչ աստիճան էլ ունենա, եթե աստամբի ընդդեմ Հայոց տան և օրենքի, ինքն իր համակիրների հետ պետք է մահվան դատապարտվի, և նրա որդիներից ոչ ոք, մինչև յոթ սերունդ ու ճյուղ, իշխանության պաշտոնի չպիտի մտնի:

ԳԼՈՒԽ 485

Յուրաքանչյուր իշխանավոր, ինչ աստիճան էլ ունենա, եթե որևէ մեկին դատի քմահաճ կամոք՝ ընդդեմ օրենքի, պետք է զրկվի իշխանությունից և ըստ օրենքի հանձն առնի ենթարկվել դատաստանի:

ԳԼՈՒԽ 486

Յուրաքանչյուր իշխանավոր, լինի թե զինվորական կարգից և թե՛ երկրի կառավարիչ, եթե հանդգնի դուրս գալ ընդդեմ Հայոց տան տանուտերերի հրամանի, իսկույն պետք է զրկվի իշխանական պատվից և կալանավորվի կուսակալի կամ իր երկրորդի կողմից, շղթայակապ բանտ նետվի և ըստ օրենքի ենթարկվի դատաստանի՝ իր հանդգնության վնասը հատուցելով մինչև մահ:

ԳԼՈՒԽ 487

Գիշերապահ զինվորը պետք է պատժվի, եթե ծառայության ժամին քնի:

ԳԼՈՒԽ 488

Թշնամու որևէ զինվոր և կամ զորագլուխ, գերի հանձնվելով հայերին, մինչև մեր գերիների հետ նրան փոխանակվելը և կամ ավելի առաջ, քան այդ պատերազմում խաղաղություն [հաստատվելը], եթե սուր առնի և կամ հարձակվի հայերի դեմ, կամ ձեռքը վեր բարձրացնի հարվածելու համար և կամ հարվածի, կամ էլ փախչի, պետք է սպանվի:

ԳԼՈՒԽ 489

Որևէ զինվոր կամ զորագլուխ. եթե անտարբեր ու անսիրտ կերպով սպանի իր անմեղ գերուն, պետք է մահվան դատապարտվի:

ԳԼՈՒԽ 490

Պատերազմի և խաղաղ ժամանակ մարդկային բնությամբ յուրաքանչյուր իզական արարած, լինի քրիստոնյա թե հեթանոս, ազատ պետք է լինի գերությունից: Եթե տղամարդու հետ անուսնացած թշնամական կողմի կինը կամ աղջիկը պատերազմի ժամանակ ինքնական մինչև մեկ արծաթ դահեկան վարձ ընդունի, կանխիկ ստանա մեր զինվորի ծեռքից ու խառնակվի նրա հետ, մեր օրենքն ի զորու չէ նրանց նկատմամբ: Բայց այն զինվորը և կամ պաշտոնյան, որ բռնությամբ կխառնակվի թշնամու կողմի կնոջ կամ աղջկա հետ, պատերազմի թե խաղաղ ժամանակ լինի, ըստ Հայոց օրենքի դատաստանի պետք է ենթարկվի:

ԳԼՈՒԽ 491

Ինչ քաղաք և բերդեր, որ մեր կողմից պաշարված լինեն, որոնց քաղաքի իշխանը կամ բերդապետը դաշնախոսությամբ խոստանա հանձնել, բայց իր պարտավորության մեջ դավաճան դուրս գա, ու այդ դավաճանության պատճառով մեր զինվորներից մինչև 24 տղա զոհվի, որով և մեր զորքը հարկադրված լինի սուսերը ձեռքին մտնել բերդ, - թշնամուց ոչ մի զինվոր ու զորագլուխ մեր սրի բերանից կենդանի չպիտի մնա: Իսկ եթե այնպես լինի, որ այդ քաղաքի իշխանը կամ բերդապետը ողջ-ողջ բռնվի, անմիջապես քաղաքի կամ բերդի մուտքի գլխին նախատինքով փայտից կախաղան պետք է հանվի: Ու ամեն բան, ինչ գտնվի քաղաքում կամ բերդում, ավար է դառնալու մեր զինվորներին: Եվ ներողության բամբիռը հնչելուց ավելի առաջ ամեն խայտառակություն, ինչ այնտեղ բնակվող թշնամիների նկատմամբ [կատարվել է] մեր զինվորների կողմից, դատաստանի ենթակա չպետք է լինի:

ԳԼՈՒԽ 492

Պաշարված որևէ քաղաքի կամ բերդի մեջ առանց պաշարողների հրամանատարի հրամանի մտնողը, եթե նա գող լինի կամ ավազակ, նրա՝ պաշարման մեջ մտնելու բոլոր պատճառները հետաքննելուց հետո ըստ օրենքի պետք է ենթարկվի դատաստանի:

ԳԼՈՒԽ 493

Պատերազմի ժամանակ սնունդը, ոսկին, արծաթը, պատերազմական զենքերը Հայոց տնից ու երկրից թշնամու տուն ու երկիր և կամ բանակ տանելն արգելված է, և ով որ գաղտնի տանի, եթե բռնվի՝ տարվածը պետք է առգրավվի, իսկ այդ մարդը բանտ նետվի և դատաստանի արժանանա՝ համապատասխան իր արարքի:

ԳԼՈՒԽ 494

Զինվորության կարգից ինչ զինվորական էլ լինի, տասնապետի աստիճանից սկսած մինչև նախարար, բացի այն մարդուց, որ խելագար է, եթե որևէ մեկից նախատինքի արժանանա և մնա առանց վրեժխնդրության, իսկույն պետք է զրկվի իր կարգից, քանզի չի կարողացել պահպանել իր պատիվն ու իշխանական աստիճանակարգը:

ԳԼՈՒԽ 495

Բնականաբար ծնվել ենք մարդկային բնությամբ, իսկ ամեն մի մարդկային բնություն բարկացող է: Երբ յուրաքանչյուր անձ բարկանում է իր հակառակորդի վրա, արական թե իգական սեռին պատկանի, ոչ ոք նրանց միջամուխ չպետք է լինի: Եթե երկու բարկացածներ իրար հետ համաձայնվեն, կարող են սրով կամ փայտով հարձակվել միմյանց վրա և մինչև մերձիմահ վրեժխնդիր լինել: Այս անձերից նա, որ վիրավորվել է, ոսկորները՝ փշրվել, կամ աչքն ու ատամը՝ փչացել, պատճառ չպիտի ունենա զանգատվելու դատաստանում, և ոչ մի դատավոր էլ վրեժխնդիր չպետք է լինի, որովհետև նա ինքնական ու հոժարությամբ հանձն առավ [մենամարտել]: Բայց եթե մեռած լինի, նրան սպանողը մահապատժի պիտի ենթարկվի:

ԳԼՈՒԽ 496

Եթե մահապարտը եկեղեցական աստիճանավոր լինի, [ներառյալ] մինչև վարդապետ՝ պետք է հանձնեն իրենց եպիսկոպոսին, իսկ եթե եպիսկոպոս՝ պետք է հանձնվի Հայոց տան Հայրապետին՝ նրանց մահվան դատավճռով, և նրանք, ըստ եկեղեցականների ավանդության, պետք է անհայտության մեջ պահեն մահապարտին: Այդպիսի վերաբերմունք ցույց տալուց հետո, եթե այդ մահապարտը կրկին երևա երկրի վրա՝ որևէ մարդու աչքին,<sup>156</sup> պետք է նրան բռնել և մտցնել դատավորի ատյան: Հաստատելով այդ մարդու մահապարտ լինելը և այն, որ հանձնված է եղել իր տիրոջը՝ մեռցնելու համար ու ապրում է՝ իսկույն պետք է մահապատժի ենթարկվի:

ԳԼՈՒԽ 497

Եթե այնպես պատահի, որ նահանգներից [ընտրված] փոխանորդների երեք տարիների հաշիվը լրանալուց հետո ինչ-որ պատճառով սահմանված ժամկետում որևէ նահանգ կամ որևէ գավառ ներկայացնող փոխանորդը չմտնի, տվյալ փոխանորդին առաքողները պարտավոր են իրենց փոխանորդության տեղում կրկին երեք տարի փոխանորդ ընդունել իրենց [նախկին] փոխանորդին և ողորմության տանը

տուգանք հատուցել մեկ հազար արծաթ դահեկան<sup>157</sup> օրենքի դեմ հանդգնելու համար:

#### ԳԼՈՒԽ 498

Ժամանակի փոփոխականության պատճառով թե քաղաքներում և թե բանակի մեջ կարելի է ներել կամ համաձայնեցնել, ավելացնել կամ պակասեցնել սննդեղենի մաքսը, ինչպես հարմար է ըստ ժամանակի հնարավորությունների:

#### ԳԼՈՒԽ 499

Մեր բանակատեղում ամեն վրան պետք է կանգնեցնել ըստ մեր երկրաչափ իշխանի կարգադրության, և մի տեղից մյուսը շարժվելիս նույնը պետք է հորինել: Բանակատեղի յուրաքանչյուր փողոցի պետք է տրվի իր անվանումն ու նշանը, որպեսզի ելումուտը և բնակարանը ճանաչելը դյուրին լինի:

#### ԳԼՈՒԽ 500

Յուրաքանչյուր մարդ ըստ իր կամքի ու հաճության ազատորեն կարող է խորհել, խոսել ու կատարել ամեն բարի և չար բան՝ իր վրա կրելով թե իր բարի և թե չար խորհրդի ու բերանի խոսքերի և ձեռքի գործերի վարձքը: Մեր դատաստանի կողմից ամեն հատուցում՝ պատիվ կամ պատիժ, պետք է լինի ըստ բարի և չար գործերի կատարման արդյունքի, ըստ յուրաքանչյուր անձի բարի կամ չար արժանավորության:

#### ԳԼՈՒԽ 501

Քանի որ մեր երկրի իշխաններն ընտրված պետք է լինեն մեր երկրի գավառների ժողովրդից, ինչպես [ասված է] օրենքների 14-րդ գլխում, և նրանցից յուրաքանչյուրն իրեն ուղարկողներից տարին 3000 դահեկան ռոճիկ ունի, որի մասին է 278-րդ գլխում մեր պաշտոնատարների համար նշված ռոճիկը, ուրեմն ով որ արժանի լինի ավելիին, քան 3000 դահեկանն է, այդ ավելին Յայոց տնից պետք է վճարվի, իսկ որևէ մեկի պաշտոնի արժանավորությունն էլ կարող է ավելի ցածր ռոճիկ կազմել, քան 3000 դահեկանն է, [ուրեմն] ամբողջ ավելի ստացածը պետք է վերադարձնի իրեն ուղարկողներին:

#### ԳԼՈՒԽ 502

Ով որ շնորհք ունենա մեր Յայաստան երկրում վերականգնել կարմիր որդանը՝ ներկ պատրաստելու համար և աճեցնել լեղակ, գործել բեզաս,<sup>158</sup> մահուդ՝ ըստ եվրոպական կերպի ու նմանության, գտնել անտառի արմատ, այսինքն՝ ջնսան<sup>159</sup> կոչվածը, մեկ անգամ միայն Յա-

յոց տան կողմից պետք է շնորհի արժանանա, այսինքն՝

ջանսան գտնողը՝	10,000 արծաթ դահեկան,
կարմիր որդան գտնողը՝	10,000 արծաթ դահեկան,
լեղակ աճեցնողը և պատրաստողը՝	10,000 արծաթ դահեկան,
մահուդ պատրաստողը՝	10,000 արծաթ դահեկան:

#### ԳԼՈՒԽ 503

Ով որ անսվա դատավորի դուռը որևէ քրեական մեղադրյալի վերաբերյալ գանգատ ներկայացնի, լինի նա սպանող, վիրավորող թե հարվածող և կամ անարգող, դատավորը պետք է հրավիրի մեղադրյալին և տեղյակ պահի գանգատվողի գանգատին: Եթե մեղադրյալն սպանել է որևէ մեկին, իսկույն բանտ պետք է դնի, եթե վիրավորել կամ հարվածել է և կամ անարգել, ըստ օրենքի մեղադրյալից նրա անձի համար երաշխավոր պետք է վերցնի, որպեսզի քրեական հանցանքների դատավարության ժամանակ պատրաստ լինի դատավորների ատյանում, և բաց պիտի թողնի նրան: Գանգատվողն օրինական կարգով պետք է պատրաստի իր գանգատը, նախապատրաստի և իր վկաներին, որպեսզի դատավորների ատյանի առաջ հաստատի իր գանգատը: Իսկ եթե մեղադրյալն իր անձի համար երաշխավոր չներկայացնի, գանգատվողի ծախսով պետք է բանտ մտնի մինչև նրա գանգատի վերաբերյալ դատաստանի վճիռն արձակվելու օրը:

#### ԳԼՈՒԽ 504

Քրեական մեղադրյալը ոչ մի այլ տեղ չպիտի դատվի, բացի այն քաղաքից, որտեղ լինեն իշխան և դատավոր՝ խորհրդակիցներով և ատենաբան-դպիրներով:

#### ԳԼՈՒԽ 505

Տասնհինգ օր ավելի վաղ, քան քրեական հանցագործի դատավարությունը, եթե մեղադրյալն սպանող է, պետք է նրան հարցնել, թե իր ազգից ում կցանկանա, որ դատի իրեն, և մեղադրյալն ազատ է ընտրելու տասներկու մարդ՝ իր ազգից կամ այլ ազգությանը որևէ մեկին, բայց ոչ մերձավոր ազգականի, ու դատաստանատան կողմից կանչ պետք է արձակվի նույն տասներկու անձանց, որպեսզի պատրաստ լինեն այն օրը, որ նշանակված է դատավարության համար:

#### ԳԼՈՒԽ 506

Դատաստանատան կողմից պետք է ընտրվեն առաքինի և երևելի իննսունչորս մարդիկ, նրանցից յոթանասունը՝ բացահայտելու համար մեղադրյալի մաքուր լինելը և կամ անմաքրությունը,<sup>160</sup> իսկ նրանցից

քսանչորսը՝ դատելու համար, բայց քսանչորս մարդուց տասներկուսը պետք է լինեն մեղադրյալի ընտրությամբ, որի դեմ է ուղղված գանգատը:

#### ԳԼՈՒԽ 507

Քրեական հանցագործի դատավարության օրը իշխանը՝ խորհրդակիցներով հանդերձ, մի զորագնդով և երկու դրոշակով պետք է դուրս գա և մտնի դատաստանի պալատ ու բազմի վերին աստիճանին, ներքևի աստիճանին պետք է նստի քաղաքի դատավորն իր խորհրդակիցներով, իսկ ավելի ցածր աստիճանին՝ դպիրներն ու ատենաբանները: Եվ սրանց ատյանում պետք է լինեն 94 նշանավոր անձինք՝ թե որոնողներ և թե դատողներ:<sup>161</sup> Նախ՝ սուրբ Ավետարանի վրա պետք է երդվեցնեն որոնող 70 մարդկանց և ապա՝ դատող 24 մարդկանց, որպեսզի նրանք իշխանի և դատավորների ատյանի առաջ խոստովանեն, որ ըստ Հայոց օրենքի և մարդու բնական բնությամբ ու հոգու բանական զորությամբ՝ մեղադրյալի նկատմամբ աննախանձաբար և անկողմնակալ կերպով են հանդես բերելու իրենց կամքը, խորհուրդն ու վճիռը:

Երդվեցնելուց հետո 70 որոնողները 2 ատենաբանի հետ պետք է մեղադրյալի գրառված հանցանքները տանեն մի սենյակ, փակեն դռները և դռան վրա պահակ կարգեն, որպեսզի որևէ մեկը դուրս չելնի և ներս չմտնի, բայց [միայն] ջուր տան խմելու և բնական պահանջի համար թույլատրեն դուրս ելնել: Իսկ դուրս ելնողի հետ պետք է լինի երկու հսկիչ, որպեսզի ելնողը չխոսի որևէ մեկի հետ, մինչև կատարի իր պահանջը և կրկին մտնի սենյակ, որտեղ փակված 70 որոնողները պիտի շարունակեն մնալ փակ դռան ետևում, մինչև որ յոթանասուներկիճաբանությամբ համաձայն ու համակամ դառնան: Այդպիսով, երկու տեսակետ կարող է լինել՝ կամ մեղադրյալը մաքուր է և կամ անմաքուր և արժանի է դատվելու: Երկու տեսակետներից մեկը, որը որ հաստատվի ըստ որոնողների դատողության, պետք է արձանագրեն թղթի վրա, և բոլոր 70 որոնողները ստորագրեն ու դուրս գան սենյակից: Նրանց առաջնորդը, ստորագրված թղթով հանդերձ, պետք է հանդես գա իշխանի և դատավորների ատյանի առաջ ու բարձրաձայն ասի՝ մաքուր է, թե անմաքուր...<sup>162</sup> Եթե ըստ որոնողների վճռի մաքուր է, մեղադրյալն իսկույն պետք է բանտից ազատ արձակվի՝ առանց որևէ մեկի առարկության, իսկ եթե ըստ որոնողների վճռի անմաքուր է, մեղադրյալին իսկույն պետք է բերեն իշխանի<sup>163</sup> և դատավորների ատյան, մեղադրյալի առաջ ընթերցեն գանգատվողի գանգատը և վկաների վկայությունները, ատենաբանն ամենայն մանրամասնությամբ հարցուփորձ անի մեղադրյալին հանցագործության կերպի ու պատճառի շուրջ, և 24 դատավորները միասին պետք է լսեն ամեն բան՝ թե ատենաբանի և թե

մեղադրյալի բերանից:

Բոլոր խոսքերն ավարտվելուց հետո ատենաբանը երեք անգամ պետք է հարցնի մեղադրյալին, թե էլի ասելու բան ունի: Եթե մեղադրյալն ասի՝ ոչ, այնժամ բոլոր գրությունները՝ թե գանգատվողինը, թե վկաների վկայությունները, մեղադրյալի պատասխաններով հանդերձ, 24 դատողները պետք է տանեն մի սենյակ, փակեն դռներն ու պահակ դնեն, ինչպես որ վերևում ասացի որոնողների մասին, որպեսզի դատողները սենյակում մնան այնքան, մինչև որ համակամ դառնան, վճիռ արձակեն՝ կամ մահվան, կամ պատժելու, կամ տուգանքի, կամ փրկության, և գրանցեն մեղադրյալի դատավճիռը, 24 դատողները ստորագրեն, իրենց առաջնորդի ձեռքով դուրս բերեն սենյակից և ընծայեն ի սպաս իշխանի և դատավորների: Ապա ատենաբանը պետք է բարձրաձայն ընթերցի:

Այդ դատավճիռն ընթերցելուց հետո իշխանը պետք է ոտքի կանգնի և իր բերանով հրամայի, այսինքն՝

Եթե արդարացված է՝ «Թույլ տվեք զրպարտվածին գնալ խաղաղությամբ»,

Եթե մահապարտ է՝ «Վերացրեք աղտը աշխարհի միջից»,

Կամ՝ «Շիկացած երկաթով այրեցեք դրա ձեռքը»,

Կամ՝ «Երեք հարյուր մտրակ ծեծ տվեք՝ արձակեցեք դրան»,

Կամ՝ «Երեք հարյուր արծաթ դահեկան առեք դրանից և հանձնեցեք աղքատաց տանը»,

Կամ՝ «Իր կյանքի բոլոր օրերին, մինչ ի մահ, թող մնա բանտում»:

Այդպես կատարվելուց և դատավճիռ արձակվելուց հետո այնժամ մեղադրյալը կապանքներով պետք է հանձնվի զորագլխի և դահճի ձեռքը, որպեսզի դատավճռից տասնհինգ օր անց մեղադրյալի վճիռն ի կատար ածվի:

#### 94 մարդկանց երդումի օրինակ

#### ԳԼՈՒԽ 508

Երդվողը, դատավորների ատյանի առաջ դնելով այ ձեռքը սուրբ Ավետարանի վրա, ձախ ձեռքը՝ կրծքին, պետք է խոստովանի, այն է՝ «Խոստովանում եմ Աստծու և մարդկանց առաջ և (այս անուն) իշխանի ատյանում, որ իմ սիրտը, միտքն ու կարծիքը պետք է պահեմ անարատ ու աննախանձ և որոնեմ անկողմնակալ կերպով»: Եթե երդվողը դատավոր է, դատողները պետք է ասեն՝ «... պետք է դատեմ առանց կողմնակալության»: Իսկ եթե տասներկու դատողները, որ ընտրված են մեղադրյալի կողմից, լինեն ջիուղ կամ մահմեդական և կամ հեթանոս,

ջիւղը պետք է երդվի Յին կտակարանի, մահմեդականը՝ Ղուրանի և հեթանոսն՝ իր կուռքի վրա:

#### ՉԼՈՒԽ 509

Ինչպես որ քրեական հանցագործը յուրաքանչյուր տարում կարող է դատվել չորս ժամկետում,<sup>164</sup> այդպես էլ, եթե քրեական հանցագործը բռնվի իրեն դատելուց 15 օր առաջ, պետք է երեք ամիս մնա բանտում՝ մինչև մյուս ժամկետը, որպեսզի գանգատվողը տասնհինգ օրից ավելի ժամանակ ունենա պատրաստելու իր գանգատը և վկաներին:

#### ՉԼՈՒԽ 510

Երկար ժամանակ Յայոց աշխարհը զրկված է եղել սեփական բարձրագույն իշխանությունից, հայոց ազգային ավանդներից, բայց թե նախարարության, թե իշխանության և հատկապես զորապետության պաշտոնում անհրաժեշտ է, որ լինի կառավարելու արվեստում ուշիմ ու գիտուն մարդ: Ահա թե ինչու եթե երկրից ընտրված փոխանորդների մեջ չգտնվեն հայազգի և Յայաստանյայց սուրբ եկեղեցու ավանդությանը բավական արժանավոր անձեր, որոնք զորապետության պաշտոնի համար արժանավորություն ունենան, ապա հայ աղզը հարկադրված պետք է լինի համաձայնել ունենալու զորագլուխ, ճարտարապետ, երկրաչափ, թոփխանայի գլխավոր՝ վրաց ազգից, եթե չգտնվի՝ ռուսաց ազգից, եթե չգտնվի՝ նենցաների, այսինքն՝ ավման<sup>165</sup> ազգից, երեք տարի ժամանակով, հայոց տանուտերերի հրամանով ու երդումով, ինչպես Յայոց օրենքն [է պահանջում]:

### Քաղաքապետության հրամանի օրինակ<sup>166</sup>

#### ՉԼՈՒԽ 511

Տեսնելով Փայտակարան աշխարհի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ Վրթանես Գետաշենցուդ և հայոց տանուտերերի ատյանի առաջ քո երդվելը՝ մենք սրտանց հանովեցինք, որ դու հավատարիմ ես Յայոց տանը, որի համար և քեզ քաղաքապետության իշխանի պաշտոնի հրաման տվեցինք, որ դու՝ պատվական Վրթանեսդ, երեք տարի ժամանակով իշխես Արարատյան աշխարհի Երևան մայրաքաղաքում:

Քեզ իշխանություն շնորհեցինք Արարատյան աշխարհից ընտրել երեք օրենսգետ մարդկանց և երեք տարի ժամանակով նրանց տալ քո խորհրդակցի պաշտոնը, որպեսզի քեզ հետ նստեն կառավարության աթոռին: Քեզ իշխանություն շնորհեցինք, որպեսզի Երևանի ողջ վիճա-

կուն գավառապետության, քյոխվայության իշխանություն տաս: Քեզ պատվիրում ենք, որ քաղցրությամբ քաղես պտուղն Արարատյան աշխարհի՝ ըստ Յայոց օրենքի՝ թե հարկը, թե մաքսը, թե հասը և թե բաժը, և մութես Յայոց տան գանձարանն ու շտեմարանը՝ Երևանի վիճակում: Պատվիրում ենք քեզ, որ Երևանի վիճակի գանձարանից ամսեամիս վճարես զորագլուխ իշխանին, որն իշխում է Երևանում տեղակայված զորքին, ռոճիկը մեր զինվորների ու զորագլուխների՝ Երևանի բերդին անհրաժեշտ ամեն ինչով հանդերձ, և մեր զորագլխից ու բերդապետից ստանաս ստացագիր, իսկ ստացագիրը տանուտերերի ատյանում պետք է ընդունվի ինչպես մաքուր դրամ:

Քեզ իշխանություն շնորհեցինք, որպեսզի Երևանի տարածքի բոլոր գավառներում ուսուցիչներ պահես՝ տղաներին և աղջիկներին հայ տառով ու բառով ուսուցանելու ընթերցանություն ու գիր, նաև հրահանգիչներ, որպեսզի տղաներին ուսուցանեն զինվորական արվեստը: Պատվիրում ենք քեզ, որ առանց հապաղելու մեր ամրոցներում շտեմարանը երկու տարվա հացով լեցուն պահես՝ Երևանի տարածքի բոլոր բնակիչների համար: Պատրաստ եղիր քո կառավարությամբ: Քեզ հրամայեցինք, որ հնազանդվես ու հանձն առնես և ամենքին հակառակ՝ մտնես դատաստան, աննախանձ կերպով ենթարկվես օրենքի վճիռներին:

Քեզ իշխանություն շնորհեցինք ստանձնելու Երևանի վիճակում գտնվող մեր զորքի պաշտպանությունը: Քեզ պատվիրում ենք, որ տարվա չորս եղանակներին Յայոց բարեկարգ տան պալատ ներկայացնես եկամտի ու ծախսի, մարդկային բնությամբ ծնվածների ու ննջեցյալների հաշիվը, մեկ անգամ՝ նաև ամբողջ տարվա հաշիվը:

Քեզ իշխանություն շնորհեցինք Երևանի վիճակից արտաքսելու վատթարներին, աղմկարարներին, չար խայտառակիչներին, որպեսզի մեր ժողովուրդը միշտ զարդարված մնա ամենայն առաքինությամբ:

Քեզ իշխանություն շնորհեցինք խորհրդակցիցների համաձայնությամբ հող վաճառել սեփական ազգին՝ շինարարության, բնակության, այգու և թե վարելու համար՝ հաստատուն թուղթ տալով նրանց այն բովանդակությամբ, որ յուրաքանչյուր գնող ըստ օրենքի պարտավոր է Յայոց տանը վճարել հարկ, մաքս, հաս և բաժ: Պատվիրում ենք քեզ, որ քո ողջ կառավարությունը պահես նման ու համեմատ Յայոց օրենքին:

Գրվեց բարձրագահ ու բարեկարգ Յայոց տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայուն ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	}○
Միքայել իշխան	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	}○
Մանուել գրագիր	○	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	}○

**Բերդապետի իշխանության հրամանի օրինակ**

**ԳԼՈՒԽ 512**

Տեսնելով՝ Գուգարաց գավառի ժողովրդից ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ՝ տիար Բաղրամ Մարաշկերտցուդ և հայոց տանուտերերի ատյանի առաջ քո երդվելը՝ մենք սրտանց համոզվեցինք, որ դու հավատարիմ ես Հայոց տանը, որի համար և քեզ՝ տիար Բաղրամիդ՝ երեք տարի ժամանակով բերդապետի պաշտոնի հրաման տվեցինք, որ դու՝ Բաղրամ Մարաշկերտցիդ, բնակվես Երևանի ամրոցում և կառավարես թե ամրոցը և թե նրա մեջ տեղակայված զինվորներին, միանգամայն և զենքը, թե սննդի, թե վառողի և թե ամենայն անհրաժեշտության պահեստները՝ հնազանդ [լինելով] Հայոց տանը և մեր կողմից հրամանով կարգված Երևանի քաղաքապետին: Նաև պատվիրում ենք քեզ, որ ամեն ինչ, ինչ հարկավոր է թե բերդի ամրափակության, թե անհրաժեշտ պաշարի և թե զինվորների ռոճիկի համար, ստանաս Երևանի քաղաքապետից և դրա դիմաց ստորագրես, և քո ստորագրությունը Հայոց տանը պետք է համարվի որպես մաքուր դրամ:

Գրվեց բարձրագահ ու բարեկարգ Հայոց տան պալատում, այսինչ օրը, հունվար ամսի մեկին, մեր Տեր Փրկչի 1773 տարում:

Վկայուն ենք, որ ստորագրեցին, կնքեցին և հանձնեցին:		Սեղբեստրոս արքեպիսկոպոս, երկրորդ տանուտեր	}○
Միքայել իշխան	○	Վրթանես Կաղնեցի, երրորդ տանուտեր	}○
Մանուել գրագիր	○	Գալստան Կաղզվանցի, չորրորդ տանուտեր	}○

**ԳԼՈՒԽ 513**

Յուրաքանչյուր ամրոց ու բերդ ամեն մի մուտքի մոտ հարաժամ պետք է ունենա երկու զինավառ պահակ, իսկ ամրոցների դարպասների մոտ, ներսում՝ պատրաստի մեկ զորագլուխ և 24 զինվոր: Սրանք թե գիշերը և թե ցերեկը ամեն երկու ժամը մեկ պետք է փոխվեն:

**ԳԼՈՒԽ 514**

Ոչ մի օտարական չպիտի դուրս գա կամ մտնի ամրոց ու բերդ, մինչև որ թե ամրոցի և թե բերդի իշխաններից հրաման չունենա:

**ԳԼՈՒԽ 515**

Երեկոյան ժամը 9-ին ամրոցների և բերդերի դարպասները պետք է փակվեն. բաց պիտի մնա միայն դռնակը, որով հետևակը կարող է իր ելումուտն ունենալ մինչև գիշերվա ժամը տասնմեկը: Տասնմեկ ժամը հնչելուց հետո դռնակը ևս պետք է փակվի, և երկու պահակները պետք է բարձրանան դարպասի գլխին՝ զգուշորեն անջուն մնալով մինչև առավոտյան ժամը հինգը: Հինգ ժամը հնչելուց հետո հարյուրապետներից մեկը բերդապետից պետք է ստանա դարպասի բանալիները և բացի դարպասը, որպեսզի դարձյալ միշտ բաց մնա մինչև երեկոյան ժամը 9-ը:

**ԳԼՈՒԽ 516**

Ամրոցների դարպասի փակումը պետք է կատարվի որևէ հարյուրապետի ձեռքով, բանալիները ևս նրա ձեռքով պետք է հանձնվեն բերդապետին, նմանապես և առավոտյան բացումը [նրա ձեռքով պետք է լինի]:

**ԳԼՈՒԽ 517**

Ամեն պահակ՝ թե ամրոցների մուտքերի, թե վառողի, թե իշխանավորների դռների, թե գանձ ու պաշարեղենի դռների, թե բանտարկյալների դռների և թե ինչ տեղի էլ որ լինի, երկու ժամ ժամանակից ավելի անքուն չպետք է մնա, որովհետև ամեն մի պահակ յուրաքանչյուր երկու ժամը մեկ պետք է փոխարինվի, նախորդին հանելով՝ պետք է մտցնել նորին, քանզի մեր զինվորի անքնությունը 24 ժամ ժամանակամիջոցում ավելի չպետք է լինի, քան ութ ժամ, այսինքն՝ չորս անգամ, ամեն անգամը՝ երկու ժամ ժամանակով: Մնացած ժամանակը թեպետ հանգստի համար է, բայց նա պատրաստ պետք է լինի իր զորագլխի հետ պայմանավորված տեղում:



ՉԼՈՒԽ 518

Ամեն գլխավոր քաղաքի անհրաժեշտ է ունենալ չորս գերագույն իշխան: Նրանցից մեկը քաղաքապետն է՝ իր երեք խորհրդակիցներով՝ կառավարելու համար քաղաքը և նրա հետ՝ գավառներն ու գյուղերը, ստանալու ամբողջ եկամուտը և մատուցելու բոլոր ծախսերը՝ թե՛ զինվորական և թե՛ ծառայողական, թե՛ շինության և թե՛ պաշարների պատրաստության և այլն: [խորհրդակիցներից] մեկը պետք է լինի բերդապետ, նրանցից մյուսը՝ գորագույն և կառավարիչ գործերի, որոնք տեղակայված են նույն քաղաքում: Նրանցից մեկն էլ [պետք է լինի] գերագույն դատավոր, որպեսզի իր խորհրդակիցների հետ դատի յուրաքանչյուր մարդկային բնություն, որ բնակվում է նույն քաղաքի վիճակում, և որոշի ամեն մի ձեռքի գործի վարձը՝ ըստ Հայոց տան օրենքի, ըստ նմանության ամեն մի օրինակի:

**Փորձառություն<sup>167</sup>**

**Հայոց տան տարեկան եկամուտների ու ծախսի**

ՉԼՈՒԽ 519

Բուսականությունից, տնկիներից, սողուններից, թռչուններից և անասուններից ստացված ամբողջ պտուղը այն սնունդն է, որ կերակրում ու հագեցում է տալիս Հայոց երկրի երեսին [ապրող] ամեն մարդկային բնության: Ընդունենք, թե կերակրվող անձինք (միայն անձինք), արական թե՛ իգական սեռին պատկանող, ծերերից մինչև մանուկները, կազմում են 24 միլիոն, որին համապատասխանում է 2400 բյուր անձը: Սրանց սնունդը, թե՛ հաճախակի ու ճոխ և թե՛ նվազ ու աղքատ, մեկը մյուսի վրա [հաշված՝] յուրաքանչյուր անձի համար մեկ տարվա սննդի գին հաշվենք [միջինը] 40 արծաթ դահեկան, որով 24 միլ. անձանց սնունդը կարժենա և կկազմի 960 մլն. արծաթ դահեկան, որը համապատասխանում է 960.000.000 արծաթ լաք դահեկանի: Դրանից, ամեն տեսակ սննդից, տասանորդ է մուծվելու հայոց գանձարան, որ կազմում է տարեկան եկամուտ՝

Միայն սննդից եկամուտը արծաթ դահեկանով . . . . . 960.000.000  
Նույն կերպ 24 միլիոն անձանց զգեստի ծախսը՝ թե՛ հարուստ և թե՛ աղքատ անձերից յուրաքանչյուրի համար հաշվենք 10 արծաթ դահեկան, որով կկազմի 240 միլիոն կամ 24000 բյուր մաքս և հարկ. դրա հարյուրի հինգ տոկոսը մուծվելու է գանձարան, որ կազմում է . . . . . 12.000.000  
Նույն կերպ յուրաքանչյուր անձի աղի գինը մի

տարվա համար մեկ դահեկան է, 24 միլիոն անձանց համար արծաթ դահեկանով . . . . . 24.000.000

Տարեկան եկամուտը կազմում է արծաթ դահեկանով . . . . . 132.000.000<sup>168</sup>

(մեկ հազար երեք հարյուր և քսան լաք կամ տասներեք քորր քսան լաք), թողնենք մասնավոր այլ եկամուտները, որ այստեղ չենք հիշատակում:

Վերոհիշյալ 13 քորր 20 լաք դահեկանը համապատասխանում է պարսից 66 հարյուր հազար թումանին, հնդկաց լեզվով՝ 13 քորր և 20 լաք ռուփիին, եվրոպացիների 62 միլիոն իսպանական մարչիլին՝ քիչ ավել կամ պակաս, օսմանցիների 260 հազար քիսային և ըստ հայոց՝ 13 հազար 300 բյուր արծաթ դահեկանին<sup>169</sup>:

Թեպետ հիշյալ գումարը Հայոց աշխարհի բնակիչներից քաղելը խիստ ծանր է թվում, բայց ամեն բան, ինչ անգիտությամբ անհնարին [է երևում], գործով դառնում է դյուրին ու հնարավոր: Այդ բոլորը յուրաքանչյուր վճարողի ինչ-որ նոր ծանրություն չեն բերում. վաղեմի սովորության պատճառով միշտ վճարած լինելով՝ այժմ ևս կվճարեն: Ամեն մարդ բնական բնությամբ ուտում է, խմում, հագնում, բայց անցյալում կերակուրն ու ըմպելիքն ազատ չէրան տասանորդ հարկ վճարելուց, իսկ զգեստի համար մաքս վճարելուց՝ հարյուրին հինգ [հաշվով], թողնենք ներկա ժամանակը, երբ գրեթե ողջ Հայոց աշխարհը, այլազգիների լծի տակ, հատուցում է բույսերի, տնկիների, այսինքն՝ սննդի հարկ՝ տասից երեք [տոկոս], և մնացածն էլ տիրոջ իրավունքով չեն կարողանում պահպանել, որ ժառանգություն մնա աշխատանք թափողներին, հակառակը՝ մնացածն էլ հափշտակում են գողերն ու ավագակները: Բայց մենք հարկապահանջություն չենք դնում ավելի, քան տասանորդը, և տիրոջ պաշտպանությամբ բոլոր տարակուսանքներից ապահով ենք դարձնում, նաև երաշխավորում ենք փոխհատուցել կողոպտվածներին, գերյալներին և այլն:

Այստեղ է գտնվում միայն աղի գինը՝ որպես հարկ ժողովրդի վրա: Դա ևս, բնականաբար, ունի իր պատճառը: Նախ՝ ժողովուրդը համեղանում է Տիրոջ և իրենց տան աղով: Քանզի վերանում է հարկապահանջության նախատիները, որովհետև ոչ ոք չի լինելու զուր հատուցող<sup>170</sup> և ոչ ոք՝ պահանջող: Նաև 24 միլիոն մարդ, արժանանալով անձի ազատության, հաստատուն կերպով ազատ լինելով ամեն գործի մեջ, ինչպես թագավոր՝ յուրաքանչյուր անձ իրենց Տճից ու պաշտոնատարներից ընդունելով այդքան բարություն, ամեն ոք տարեկան վճարելով միայն մեկ արծաթ դահեկան՝ իբրև շնորհակալության մի ժաղիկ, իրեն վաճառված աղի գինը ծանր չպիտի գա, որովհետև յուրաքանչյուր ան-

ծի համար ամեն չորս օրը պիտի հաշվվի մեկ պղնձի դահեկան, ինչ որ կարելի է պարտադրել թե հարուստներին և թե աղքատներին, որոնք ըստ կարողության կարող են վճարել:

**Ավանդակ Հայոց տան տարեկան եկամուտների ու ծախքի վրա**

**ԳԼՈՒԽ 520**

Մեր 519-րդ օրենքում Հայոց տան եկամուտը կազմում է արծաթ դահեկան . . . . . 132.000.000  
 278-րդ օրենքում Հայոց տան տարեկան ծախսի գումարը կազմում է արծաթ . . . . . 12.370.020,  
 որը հանելով եկամուտից՝ մնացած տասնմեկ քրոր իննսունվեց լաք քսանինը հազար ինը հարյուր ութսուն արծաթ դահեկանը մնալու է Հայոց տան գանձարանում՝ հետագա ժամանակներում ինչ-ինչ հարկավորության համար. . . . . 119.629.980

**ԳԼՈՒԽ 521**

Վերևում շարադրված թե քարոզը<sup>171</sup> և թե՛ Օրինաց կարգադրության 520 գլուխները,<sup>172</sup> իբրև օրինակ, միայն տեղեկացնելու համար են: Բայց եթե վերևում բոլոր գրվածները և ապա մեկ ուրիշից շարադրված բոլոր հոդվածներն արժանավորություն չունենան, բացի այն հոդվածներից, որոնք հայոց բոլոր տանուտերերի, Հայրապետի ու նախարարի, իշխանների ու գավառապետների հաճությամբ ու կամքով կլինեն, [թող սրա նք] հաստատվեն նրանց կողմից և այնուհետև արժանավորության չնորի գտնեն:

**ՎԵՐՋ**

**ՑԱՆԿ՝**

Ա  
 Անկեղծ դատողություն հայոց իշխանների մասին . . . . . էջ 12-13  
 Ամեն թագավորություն շնորհվել է Տիրոջից . . . . . 14  
 Ամեն մի թագավորություն ստանալու կարգը. . . . . 14  
 Աղամի թագավորությունը. . . . . 16-17  
 Անօրինությունը խոնարհեցրեց մեր թագավորությունը. . . . . 17-18  
 Անզգամությունը մարդու բնական բնությունն է. . . . . 30  
 Անօրինության վնասը. . . . . 31  
 Արարչագործությունն ըստ օրենքի կատարվեց. . . . . 33-34  
 Անասունների հնազանդությունը. . . . . 36  
 Արծաթը, ոսկին մեղքի պատճառ են. . . . . 39  
 Արարատյան աշխարհի պատվականությունը. . . . . 54  
 Ազատության քաղցրությունը. . . . . 55-56  
 Աղոթք՝ ուղղված Տեր Աստծուն. . . . . 58-59  
 Ամուսնացածների պատիվը. . . . . 67  
 Աֆղանների քաջությունը. . . . . 72  
 Ամերիկացիների ցանկությունը. . . . . 72  
 Աստվածպաշտության կարգը պետք է մնա այնպես, ինչպես այժմ կա . . . . . գլուխ 5  
 Ամբողջ երկիրը պետք է չափվի. . . . . 7  
 Ամեն մարդ տերը պիտի լինի իր ինչքի. . . . . 10  
 Ամբաստանյալը. . . . . 84  
 Ամծերի երաշխավորությունը. . . . . 88  
 Ամտեր մնացած հողը պետք է համարվի տերունի. . . . . 110  
 Աշխարհագիր անելու հաշիվ. . . . . 111  
 Ապագա վնասի մասին հայտարարողը. . . . . 120  
 Ամուսնությունը ծնողների համաձայնությամբ. . . . . 131  
 Ամուսնացածների ժառանգությունը. . . . . 132  
 Ամրոց գյուղերի մեջ . . . . . 133  
 Ավարառության պատճառով վնասի փոխհատուցումը . . . . . 137  
 Ամբաստանյալը պետք է երդվի . . . . . 144  
 Ամբաստանյալը պետք է ներկայացնի երաշխավոր . . . . . 145  
 Անիրավացի գանգատվողի ծախսը . . . . . 151  
 Արծաթը երկրից չպետք է արտահանվի . . . . . 152  
 Աշխարհականը չպիտի խառնվի եկեղեցականների գործին . . . . . 155  
 Արիեստավորի կացությունը . . . . . 173  
 Ավազակին սպանողը . . . . . 191  
 Ամուսնացած կնոջը տրվող պարտաթուղթը . . . . . 195  
 Այլազգին պաշտոն չպիտի ստանա . . . . . 204

Արքեպիսկոպոսի ռոճիկը . . . . .	Գլուխ 233
Ամեն առաջնորդ պետք է համարվի երկու ձայն . . . . .	245
Աղտեղությունը փողոց չպիտի թափվի . . . . .	256
Ամորձատողը պետք է մահվան դատապարտվի . . . . .	258
Անտառից ծառ կտրողը . . . . .	265
Աղքատները կարող են քաղել անտառի թուփը . . . . .	266
Ավարի բաժանումը . . . . .	311
Ամրոցները քանդելը . . . . .	329
Ամբողջ ծախսից տասանորդ պահելը . . . . .	345
Ապօրինի ծնվածի անվանակոչությունը . . . . .	348
Ապօրինի ծնվածը հոր ժառանգ չի կարող լինել . . . . .	349
Ամսեկան դատավորը . . . . .	354
Ամսեկան իշխանի գորությունը . . . . .	355
Աստիճանի կարգով կանանց տեղ գրավելը Տիրոջ տանը . . . . .	361
Ազատության հրաման օտար աշխարհի հեռացողների համար . . . . .	368
Ամսականի շրջանում գտնվող կնոջ վարմունքը . . . . .	379
Աղջիկների ուսուցիչը . . . . .	382
Ամուսնացած կանանց հետ խառնակվողի տոկոսը . . . . .	401
Անտեր ունեցվածը պետք է մտնի ողորմության տուն . . . . .	402
Առու հանողի վարձը . . . . .	406
Աղը պետք է ստացվի միայն Հայոց տնից . . . . .	418
Արժթապատ սարքով ձի հեծնողի տոկոսը . . . . .	429 <sup>2</sup>
Ակնագարդ սարքով ձի հեծնողի տոկոսը . . . . .	431
Ապակե պատուհանով [տան մեջ] բնակվողի տոկոսը . . . . .	434
Արժթապատ սեղան նստողի տոկոսը . . . . .	442
Ապրանքը պետք է մաքսավորի կողմից կնքվի . . . . .	459
Այլոց անունով թուղթ ստորագրողը . . . . .	462
Ավազակը պետք է մահապատժի ենթարկվի . . . . .	469
Առանց հրամանի դահեկան հատողը . . . . .	473
Ազատ [գործողը] պետք է ընդունի իր ձեռքի գործերի վարձը . . . . .	500
Այլազգու՝ պաշտոնի անցնելու պատճառը . . . . .	510
Ամրոց մուտք գործողը պետք է հրաման ունենա . . . . .	514
Ամրոցների դարպասների բացումը . . . . .	515
Ամրոցների դարպասների փակումը . . . . .	515
Ամրոցների դարպասների բանալիները . . . . .	516
Ակնարկ Հայոց աշխարհի տարեկան եկամտի ու ծախսի վրա . . . . .	520

Բ	
Բնության փոփոխականությունը . . . . .	էջ 19
Բանական հոգու պատիվը . . . . .	19-20

Բարի օրենքը պետք է լինի հայոց թագավոր . . . . .	էջ 28
Բնությանը կանայք փառասեր են . . . . .	43-44
Բնության (մարդկային) փոփոխականությունը . . . . .	49-50
Բնությանը հակառակ գործն ապականում է աշխարհը . . . . .	62
Բացատրություն օրենքների մասին . . . . .	Գլուխ 43
Բարձրագույն պաշտոնն ուն կողմից է տրվում . . . . .	47
Բանտարկյալը պետք է կերակրվի . . . . .	146
Բանտարկվածը կարող է դուրս գալ . . . . .	165
Բանտարկվածը եթե փախչի . . . . .	166
Բաժինը պետք է պատշաճորեն հատկացնել . . . . .	168
Բաժին դավաճանից . . . . .	169
Բարի գործերի հատուցումը . . . . .	172
Բարկացած անձինք . . . . .	187
Բանտարկյալի կինը . . . . .	216
Բույսերն այրելը <sup>3</sup> . . . . .	257
Բժշկի վարձը . . . . .	228
Բժշկի օգնության հասնելը . . . . .	230
Բազմաց ձայնը պետք է իշխի . . . . .	246
Բոլոր իրերի վրա նշան պետք է դնել . . . . .	269
Բանակը պետք է մաքուր պահել . . . . .	318
Բանակը երկար ժամանակ [մի տեղում] կայան չպետք է առնի . . . . .	319
Բանակի շարժման կարգը . . . . .	333
Բանակից զենք չպետք է դուրս գա . . . . .	337
Բոլոր իրերի գինը տասի փոխարեն պետք է հատուցվի իննով . . . . .	346
Բույսերի տասանորդը . . . . .	414
Բոլոր պաշտոնատարներին ուղղված թղթերի տոկոսը . . . . .	441
Բոլոր հրահայելիների տասանորդը . . . . .	449
Բացատրություն դրամի որքանության մասին . . . . .	515

Գ	
Գանձապետը . . . . .	Գլուխ 27
Գանգատագիր . . . . .	83
Գույքի երաշխավորություն . . . . .	89
Գիշերվա և ցերեկվա ժամերը . . . . .	102
Գերվածին պետք է փրկել . . . . .	138
Գանգատ ընդդեմ ամենքի . . . . .	143
Գերագույն դատավորի նշանը . . . . .	293
Գրագիրների նշանը . . . . .	297
Գանձապետների նշանը . . . . .	298
Գավառապետների նշանը . . . . .	299

Գերագույն դատավորն իրեն փոխարինող պետք է պատրաստի . . . . .	Գլուխ 300
Գերին չպետք է վաճառվի . . . . .	315
Գերի աստիճանավորի հետ ինչպես պետք է վարվեն . . . . .	316
Գերյալների ծախսն ունից պետք է վերցվի <sup>5</sup> . . . . .	317
Գերին պետք է փրկվի սպանությունից . . . . .	318
Գործերի վարձատրությունն ընդունելը . . . . .	365
Գողացված բան թաքցնողը . . . . .	393
Գինու տասանորդը . . . . .	419
Գողը պետք է մահապատժի ենթարկվի . . . . .	466
Գերիներին սպանողը . . . . .	489
Գլխավոր քաղաքների իշխանները . . . . .	518

Դ	էջ 68
Դիտապետի օգնությունը . . . . .	էջ 68
Դատավորներ երկրի համար . . . . .	Գլուխ 22
Դատաստանի դպիրները . . . . .	23
Դատաստանի վճիռը . . . . .	85
Դրամի վաշխը . . . . .	124
Դրամի որպիսությունը . . . . .	126
Դաստիարակել մանուկներին . . . . .	157
Դպրանոց մանուկների համար . . . . .	158
Դեղատուն հիվանդների համար . . . . .	162
Դատաստանի վճիռը կարելի է մտցնել վերին [ատյան] . . . . .	207
Դահճի պատվազրկությունը . . . . .	221
Դատավորի բարկությունը . . . . .	225
Դրացու տեսարանի արգելումը . . . . .	253
Դատաստանի վճիռը կարող է մտցվել բարձր դատաստան . . . . .	271
Դահեկան ոսկուց, արծաթից և այլն . . . . .	276
Դեղին սպարապետի զարդարվելը . . . . .	287
Դեղին սպարապետի նշանը . . . . .	290
Դատավորների նշանը . . . . .	294
Դպիրների նշանը . . . . .	296
Դաշնագանցության տոկոսը . . . . .	369
Դատեր մաքրության պատիվը . . . . .	383
Դաշտում [աճեցված] ծառերի տասանորդը . . . . .	404
Դրամ հատելու վարձը . . . . .	450
Դահեկան հատելու տոկոսը . . . . .	453

Ե	էջ 13
Երկրի իշխանները հանդես չեկան ի խնդիր մեր հայրենիքի . . . . .	էջ 13

Երկուսը լավ է, քան մեկը . . . . .	էջ 65
Եկեղեցականներից պետք է տանուտեր ընտրվի . . . . .	Գլուխ 12
Եկեղեցականների փոխանորդությունը . . . . .	13
Երկրաչափը . . . . .	27
Երկրի իշխանները բուն հայ ազգից պետք է լինեն . . . . .	33
Երդվելու կարգը . . . . .	37
Եկեղեցականների երդումը . . . . .	38
Եթե վիճակն ընկնի տանուտերի . . . . .	50
Երեկոյան որևէ մեկը տնից դուրս չպիտի գա . . . . .	113
[Եթե] զինված մարդ գտնի տան մեջ . . . . .	115
Երկրից արծաթ արտահանողը . . . . .	154
Եկեղեցականները չպետք է խառնվեն աշխարհականի գործին . . . . .	156
Երաշխավորի պարտքը . . . . .	217
Երդման թուղթը պետք է մտցվի հաշվառման . . . . .	238
Երկրորդն է հաջորդում առաջինի տեղում . . . . .	242
Ելքի ճանապարհներ . . . . .	262
Երկու կնոջ հետ ամուսնացածը . . . . .	274
Եկեղեցական տանուտեր պետք է համարվի երկու ծայն . . . . .	333
Երկրաչափի շարժվելու կարգը . . . . .	335
Երկրորդը պիտի հաջորդի առաջինին . . . . .	340
Երկրից գաղտնի հեռացողը . . . . .	367
Եկեղեցականների կողմից նորովի շարադրված սահմանը պետք է Հայոց տան ընդունելով լինի . . . . .	397
Եկամտի տասանորդը . . . . .	412
Երկու շաթիր ջլավում տանողի տոկոսը . . . . .	438
Երեք և ավել շաթիր տանողի տոկոսը . . . . .	439
Եթե հարվածողը քահանա լինի . . . . .	470
Եթե մեզնից գերվածը սուր վերցնի . . . . .	488
Երկրաչափն է որոշում բանակի վրանների շարքը . . . . .	499
Ե՞րբ կամ ո՞ր դեպքում է այս գիրքն արժանանալու գնահատության . . . . .	521

Զ	էջ 9-10
Չարմանքը, որ եղավ Հայաստան աշխարհում . . . . .	էջ 9-10
Չղջալով գնանք դեպի Տիրոջ դուռը <sup>6</sup> . . . . .	58
Չղջում մեր չար գործերի համար . . . . .	58
Չանազան իրերի անունները . . . . .	60-61
Չինապետը . . . . .	Գլուխ 27
Չինվորների զորությունը . . . . .	164
Չենքն ազատ պետք է լինի մաքսից . . . . .	190
Չորքի քանակը . . . . .	277

Չորքի ռոճիկը . . . . .	գլուխ 278
Չորագլուխների գորությունը . . . . .	280
Չինվորի հնազանդությունը . . . . .	281
Չինվորի ռոճիկի կեսը՝ կնոջը . . . . .	282
Չինվորների նշանը . . . . .	288
Չինվորների շրջանում օրենքներ ընթերցելը . . . . .	301
Չորքի հաշվառումը . . . . .	302
Չինվորն զգեստով պատրաստ պետք է լինի . . . . .	303
Չինվորը պետք է ունենա մաքուր զգեստներ . . . . .	304
Չինվորը պետք է զենքը մաքուր պահի . . . . .	305
Չինվորը պետք է որոշ չափով վառող ունենա . . . . .	306
Չորքն իր կացությամբ պետք է ազատ լինի՞ . . . . .	307
Չորագունդը պետք է պահել երեք մասի բաժանված . . . . .	343
Չորքն ինչպես պետք է մտնի Տիրոջ տուն . . . . .	395
Չորագլխի դաշնախախտությունը . . . . .	491
Չինվորականը չպետք է հանդուրժի նախատինքը . . . . .	494

Շ  
Շնդունելության թուղթը պետք է մտցվի հաշվառման մեջ . . . . . գլուխ 238

Ձ	
Ձագավորությունը Հայկի ցեղից . . . . .	էջ 11
Ձագավորությունը Արշակի ցեղից . . . . .	11
Ձագավորությունը Բագրատի ցեղից . . . . .	11-12
Ձագավորությունը Բագրատունի Ռուբենի ցեղից . . . . .	12
Ձվանք շինողը . . . . .	գլուխ 177
Ձուղթ պատրաստողը . . . . .	139
Ձրևողին պետք է բռնել . . . . .	159
Ձագավորության պալատը . . . . .	235
Ձշնամու կողմի ժողովուրդը, որ պատերազմի ժամանակ մեզ հետ է բնակվում . . . . .	325
Ձշնամու բանակի տեղում մեր բանակը չպետք է իջևանի . . . . .	331
Ձամբաքուի տոկոսը . . . . .	421
Ձունավորողը մահվան պետք է դատապարտվի . . . . .	468
Ձշնամուն սնունդ տանողը . . . . .	493

Ժ	
Ժամանակը մեր զոջալու համար . . . . .	էջ 18-19
Ժառանգավոր պետություն . . . . .	գլուխ 52
Ժառանգավոր պետություն . . . . .	53

Ի	
Ինքնակալ իշխանության վնասը . . . . .	էջ 13
Ինքնակալ իշխանության վնասը . . . . .	21-22
Ինչպիսի՞ կացության մեջ մարդը կարող է օրենքներ կարգել . . . . .	33-35
Ինչպե՞ս կարող է հավաքվել մի ամբողջ ազգ . . . . .	35
Իրավամբ մտնել դժոխք . . . . .	37
Իշխանի անցնելը հողագործության աշխատանքի . . . . .	45-46
Ի բնե մարդու ինքնակամ լինելը . . . . .	63
Իշխանների նշանը . . . . .	գլուխ 292
Իշխանների գորությունը . . . . .	372
Իշխանների հանդեսը . . . . .	374

Լ	
Լրտեսապետը . . . . .	գլուխ 27
Լիրը պետք է պատժվի . . . . .	394
Լկողը պետք է մահապատժի ենթարկվի . . . . .	465
Լրտեսն իսկույն մահապատժի պետք է ենթարկվի . . . . .	467

Խ	
Խոստովանեցինք մեր մեղքերը, որ [երանի թե] չծնվեինք . . . . .	էջ 53
Խորհրդակից ընտրելը . . . . .	գլուխ 49
Խոստացողը պետք է կատարի . . . . .	160
Խաղամուլին կողոպտելը . . . . .	196
Խառնակվող մանուկների հետ . . . . .	259
Խորհրդակիցների նշանը . . . . .	295
Խանութի, քարվանսարայի, սեղանատան շահածից տասանորդ . . . . .	446
Խառնակվող արուի հետ . . . . .	475
Խաղաղ ժամանակ ընդդիմացող զինվորը . . . . .	481

Օ	
Օւլությունը մեզ նախատինք դարձրեց մարդկանց համար . . . . .	էջ 53-54
Օնողների պատիվը . . . . .	67
Օեծ տալու կարգը . . . . .	գլուխ 175
Օռներն արմատախիլ չպետք է արվեն . . . . .	265
Օախսի հաշիվը կազմողը պետք է երդվի . . . . .	392
Օռների տասանորդը . . . . .	403
Օռուի մեղրի ու մոմի տասանորդը . . . . .	416

Կ	
Կյանքի վախճանի հրավիրվեցինք մենք . . . . .	էջ 32

Կամապաշտ հրամայողն իրեն փորձության է ենթարկում . . . . .	էջ 40
Կողմնակալության վնասը . . . . .	47
Կայսեր՝ մոր որովայնը պատռելը . . . . .	47
Կրոնավորների վիճակը . . . . .	գլուխ 11
Կռապետը . . . . .	27
Կերակրապետը . . . . .	27
Կտակագիր . . . . .	90
Կաշառակերությունը . . . . .	97
Կշռաչափերի ծանրությունը . . . . .	105
Կոտեմ, բակլա չպետք է ցանել . . . . .	163
Կաշառակերի տոկոսը . . . . .	170
Կանանց ազատությունը . . . . .	182
Կինը չպետք է մտնի միայնակ մարդու տուն . . . . .	183
Կալանքի ենթական ինչպե՞ս պետք է ձերբակալվի . . . . .	186
Կիսագին գնով գնողը . . . . .	198
Կտակակատարը եկեղեցական չպետք է լինի . . . . .	203
Կտուրը պահպանիչ պատ պետք է ունենա . . . . .	255
Կեղծ տպված դրամ ունեցողը . . . . .	261
Կինը, որ ամուսնացած է երկու տղամարդու հետ . . . . .	274
Կարմիր սպարապետի զարդարվելը . . . . .	285
Կապույտ սպարապետի զարդարվելը . . . . .	286
Կարմիր սպարապետի նշանը . . . . .	288
Կապույտ սպարապետի նշանը . . . . .	289
Կանայք չպետք է գերի վերցվեն . . . . .	324
Կորած փաստաթղթի փոխարեն վկաներով պետք է ստանալ թուղթ՝ վաճառված իրերի մասին . . . . .	353
Կանանց հարվածելը . . . . .	381
Կրոնավորների ցանկությունը լսելը . . . . .	386
Կամովին հանձնված թշնամական ամրոցը պետք է պահպանվի . . . . .	388°
Կամուրջ կանգնեցնողի շահստացությունը . . . . .	407
Կրակ գցողը . . . . .	463
Կշռի քաշից գողացողը . . . . .	474
Կինը գերի չպետք է լինի . . . . .	490
Կինը, որին համոզել է խառնակվողը . . . . .	490
Կամովին [միսյանցից] վրեժխնդրությունը . . . . .	495
Հ	
Հայոց հյուրընկալությունը . . . . .	էջ 11
Հայոց թագավորների քանակը . . . . .	12
Հայոց ազգի մեջ թող չլինի ինքնակալ իշխան . . . . .	13

Հանդուզն որդին չար է . . . . .	էջ 18
Հայոց ազգը ենթարկված է ծառայության . . . . .	20
Հայոց ուրացողներին . . . . .	33
Հռոմեական օրենքների երջանկությունը . . . . .	41-42
Հռոմեացի մանուկների ուսումնառությունը . . . . .	44
Հռոմեացիների հնազանդվելն օրենքներից . . . . .	44-45
Հռոմեացիների Կամփիդոլ խորհրդարանը . . . . .	44
Հնազանդվել օրենքին . . . . .	51-52
Հայոց ազգը հանգստի տեղ չգտավ . . . . .	52-53
Հնազանդվել միայն մեր թագավոր Աստծուն . . . . .	56-57
Հայերի հպատակությունը դարձել է սովորույթ . . . . .	64
Հայոց լեզվի փոփոխությունը . . . . .	64-65
Հայոց ազգի տկարությունը, որը, [սակայն], մերձիմահ չէ . . . . .	66
Հիվանդների դարմանումն անհրաժեշտ է մեռնելուց առաջ . . . . .	66
Հայերի կազմության պնդությունը . . . . .	66
Հայերի օգնությունը . . . . .	67-68
Հայոց ազատությունը կարող է լինել արդարությունը . . . . .	72-73
Հեյդարալի խանի քաջությունը . . . . .	72
Հայաստան աշխարհի որչափությունը . . . . .	գլուխ 1
Հայերն ովքե՞ր են . . . . .	2
Հայերը [Նրանք են], որոնք ազատ են . . . . .	3
Հայոց աստվածաշտությունը . . . . .	4
Հավատուրացը պետք է մահվան դատապարտվի . . . . .	6
Հայերը կարող են հող գնել . . . . .	8
Հայոց փոխանորդությունը . . . . .	14
Հայոց տեղակալների <sup>9</sup> ռոճիկը . . . . .	14
Հայոց աշխարհի տեղակալությունը <sup>10</sup> . . . . .	14
Հակառակորդների միաբան դառնալը . . . . .	17
Հայոց սպարապետները . . . . .	24
Հայոց ասպետները . . . . .	25
Հրածգության զորագլուխները . . . . .	26
Հայոց իշխանները . . . . .	28
Հայոց դատավորը . . . . .	29
Հազարապետները . . . . .	30
Հայոց ազգի ջատագովները . . . . .	31
Հայաստանյայց հայրը . . . . .	35
Հրաման եկեղեցական տանուտերի պաշտոնի . . . . .	40
Հրաման տանուտերի պաշտոնի . . . . .	41
Հրաման տանուտերի պաշտոնի . . . . .	45
Հայոց տան կնիքը . . . . .	48

Հրաման նախարարի պաշտոնի . . . . .	գլուխ 51
Հրաման խորհրդակցի պաշտոնի . . . . .	58
Հրաման դատավորապետի պաշտոնի . . . . .	59
Հրաման դպիրի պաշտոնի . . . . .	60
Հրաման քաղաքների դատավորի պաշտոնի . . . . .	61
Հրաման սպարապետի պաշտոնի . . . . .	62
Հրաման ասպետի պաշտոնի . . . . .	63
Հրաման հրաձգապետի պաշտոնի . . . . .	64
Հրաման լրտեսի պաշտոնի . . . . .	65
Հրաման զինապետի պաշտոնի . . . . .	66
Հրաման վառողապետի պաշտոնի . . . . .	67
Հրաման կառապետի պաշտոնի . . . . .	68
Հրաման վրանապետի պաշտոնի . . . . .	69
Հրաման կերակրապետի պաշտոնի . . . . .	70
Հրաման գանձապետի պաշտոնի . . . . .	71
Հրաման երկրաչափի պաշտոնի . . . . .	72
Հրաման տկարաց պետի պաշտոնի . . . . .	73
Հրաման հազարապետի պաշտոնի . . . . .	74
Հրաման հարկերի կարգադրության [պետի] պաշտոնի . . . . .	75
Հրաման ռոճկահատույցի պաշտոնի . . . . .	76
Հրաման գորագլխի պաշտոնի . . . . .	80
Հարսանիքի դաշնադրություն . . . . .	82
Հրովարտակ՝ ուղղված գորագլխին . . . . .	92
Հայոց տարեմուտը . . . . .	103
Հողի չափը . . . . .	106 <sup>12</sup>
Հափշտակվածը պետք է փոխհատուցվի Հայոց տնից . . . . .	112
Հիմք զցողը . . . . .	116
Հայոց օրենքին հակառակ փաստաթուղթն արժանավորություն չունի . . . . .	123
Հատուցումն այն մարդկանց, որոնք ժանգ ու սորելիսի վնաս են կրել . . . . .	135
Հայոց աշխարհի ոսկի ներմուծողը . . . . .	153
Հողն անմշակ չպետք է մնա . . . . .	161
Հարկապահանջության ժամանակը . . . . .	167
Հյուրընկալության սեղան . . . . .	180
Հարվածողի պատիժը . . . . .	192
Հայոց տունը որտեղ պետք է կառուցվի . . . . .	234
Հայոց պալատը . . . . .	234
Հանկարծակի մեռնողի քննությունը . . . . .	273
Հայոց աշխարհի փոխանորդների ռոճիկը . . . . .	301

Հաստատ մնալ դաշինքին . . . . .	գլուխ 320
Համաձայնություն պատերազմի ժամանակ . . . . .	321
Հազարապետների շարժվելու կարգը . . . . .	334
Հայոց բանակի պահակը . . . . .	336 <sup>13</sup>
Հող վաճառելու կարգը . . . . .	350
Հրամանն ավելին չպետք է լինի, քան իշխանավորին տրված իրավունքը . . . . .	364
Հրավիրված մարդկանց աստիճանակարգը . . . . .	375
Հանգանակող կրոնավորը հասակով չպետք է լինի պակաս, քան 55 տարեկան . . . . .	385
Հնազանդվածների դավաճանությունը . . . . .	391
Հարստություն՝ գտնված հողի ընդերքում . . . . .	408 <sup>14</sup>
Հարստություն գտնողը եթե վարձու բնակվող է . . . . .	409
Հավասարապես վճարել տասանորդ . . . . .	410
Հանդգնողը պետք է պատժվի . . . . .	460
Հարբած սպանողը պետք է մահապատժի ենթարկվի . . . . .	471
Հարբած վիրավորողը պետք է պատժվի . . . . .	472
Հայոց տան դեմ ապստամբը . . . . .	484
Հրաման քաղաքապետի պաշտոնի . . . . .	511
Հրաման բերդապետի պաշտոնի . . . . .	512
Հայոց աշխարհի եկամուտը . . . . .	519

Ձ

Ձյունը տնից ուր պետք է զցվի . . . . .	գլուխ 251
Ձուլածո մետաղների (հրահալելիների) որակը . . . . .	275
Ձերբակալվածն ազատ է արձակվում ըստ դատաստանի վճռի . . . . .	308
Ձերբակալվածը պետք է արձակվի դատաստանի վճռով . . . . .	309
Ձիթահանքի տասանորդը . . . . .	456

Ծ

Ծարտարապետը նախագիծ պետք է տա՝ հիմք զցելու համար . . . . .	գլուխ 249
Ծենապակե սպասքով սեղան նստողի տոկոսը . . . . .	444
Ծանապարհի պահակների հարկը . . . . .	448

Մ

Մեր նախնի Հայկը՝ Հաբեթի ցեղից . . . . .	էջ 12
Միասնության քաղցրությունը . . . . .	23-24
Մարդու բանական բնության նկատմամբ ոչ ոք ի զորու չէ, բացի Արարիչ Աստծուց . . . . .	25
Մեղավորն օրենք չի սիրում . . . . .	

Մարդու բնության վիճակը . . . . .	էջ 50-51
Մեղավորն օրենքներ չի սիրում . . . . .	39
Մարդկային բնությունները համահավասար են ծնվում . . . . .	56-57
Մայրերի օգնությունը . . . . .	68
Մշտապես խորհրդակից մնալու ժամկետի վերացումը <sup>15</sup> . . . . .	գլուխ 54
Մեռած փոխանորդին հաջորդողը . . . . .	93
Մանուկների ժառանգությունը . . . . .	118
Մարդկային բնությունը չպետք է վաճառվի . . . . .	121
Մխիթարություն Հայոց տնից . . . . .	161
Մահից փրկվածը . . . . .	171
Մանուկների հայրը շնորհի պետք է արժանանա . . . . .	206
Մահապարտների փրկվելը . . . . .	224
Մահապարտին փրկողը . . . . .	226
Մանկաբարձի վարձը . . . . .	227 <sup>16</sup>
Մանկաբարձի օգնության հասնելը . . . . .	230
Մուտքի ճանապարհներ . . . . .	262
Մատուռ գերեզմանի վրա . . . . .	283
Մարտիրոսված զինվորների բաժինը . . . . .	312
Միջնորդի վարձը վաճառված ապրանքից . . . . .	357
Մխիթարություն աղքատներին . . . . .	378
Մեզ հնազանդված թշնամիների ինչքը պետք է պահպանվի . . . . .	390
Մետաքսի տասանորդը . . . . .	415
Մաքս ձեռագործ առարկաների համար . . . . .	417
Մաքսը հիլի, մեխակի, բիբարի, շաքարի, մանանեխի համար . . . . .	420
Մաքս մահուդի, սամույրի և այլ [մազեղենի ու մորթեղենի] համար . . . . .	422
Մաքս ձեռքով գործված ապրանքի համար . . . . .	423
Մաքս թանկագին ակնեղենի համար . . . . .	424
Մաքս կլայեկի, արծճի, պղնձի, երկաթի, անագի համար . . . . .	425
Մարմար քարից ջրավազան ունեցողի տոկոսը . . . . .	432
Մեծ հայելի վայելողի տոկոսը . . . . .	436
Մետաքսե խալի գործածողի տոկոսը . . . . .	437
Մեկից ավելի ձիով կառք նստողի տոկոսը . . . . .	440
Մաքս շուկայից դուրս վաճառված ապրանքի համար . . . . .	445
Մեղրի և մոմի տասանորդը . . . . .	447
Մաքս քաղաք մտած ողջ ապրանքի համար . . . . .	458
Մահապարտ եկեղեցեկանը . . . . .	496

Ն	
Նախերգանք . . . . .	էջ 6-8

Նզովք՝ զրպարտությամբ . . . . .	էջ 31-32
Նախիջևան քաղաքն է մարդկային բնության ծնողը . . . . .	67
Նադրշահի քաջությունը . . . . .	72
Նախարարի խորհրդակիցները . . . . .	գլուխ 21
Նախարար ընտրելը . . . . .	49
Նախարարի տեղակալը . . . . .	55
Նախարարի որդիների պատիվը . . . . .	56
Նախարարի որդիների պաշտոն[ները] . . . . .	57
Նախարարի ժամանակը լրանալը . . . . .	96
Նորագյուտ արհեստ . . . . .	119
Նախատիքը երբեք չպիտի լինի . . . . .	129
Նախատողը պետք է ենթարկվի դատաստանի . . . . .	197
Նոր օրենքներ հրապարակելը . . . . .	231
Նախարարը համարվում է երկու ծայն . . . . .	244
Նախարարի զարդարվելը . . . . .	284
Նախարարի զորությունը . . . . .	309
Նահատակների բաժինն ուն պետք է տրվի . . . . .	314
Նշան, որ բանակը գնալու է . . . . .	332
Նամակը պետք է ներկայացվի բանակին . . . . .	338
Նշան դրոշման՝ զգուշանալու թշնամիներից . . . . .	344
Ննջեցյալների տունն ու թաղման ժամանակը . . . . .	377

Շ	
Շարադրանքիս թերությունը . . . . .	էջ 59
Շուկա ունեցողը . . . . .	գլուխ 91
Շնորհակալություն պատվի արժանացածներից . . . . .	396
Շիբի, գխտորի. լեղակի, հինայի տասանորդը . . . . .	457

Ո	
Ողջ հայ ազգը պետք է լինի թագավոր . . . . .	էջ 13-14
Ոչ որ չի կարող տալ անվախճան կյանք, բացի Աստծուց . . . . .	32
Որդին պարտավոր է մամնություն բերել հորը . . . . .	38
Ով գիտե և չի կատարում՝ բազում ծեծ կուտի . . . . .	52
Ոչ մի գործ չպիտի կատարվի հակառակ մարդկային բնության . . . . .	56-57
Ով կարող է լինել իշխան . . . . .	գլուխ 19
Ով կարող է լինել նախարար . . . . .	20
Ողջ հայոց իշխանությունը . . . . .	36
Ողորմության տունը . . . . .	177
Ողորմություն տալու կարգը . . . . .	178
Ողորմության տուն կառավարելը . . . . .	179



Ոչ ոք չպիտի մտնի ուրիշների տուն . . . . .	գլուխ 184
Ոչ ոք չպիտի խորտակի ուրիշների դռները . . . . .	185
Ոչ ոք չպիտի հանդգնի ընդդեմ Հայոց տան . . . . .	281
Ոսկեթել գործվածք հագնողի տոկոսը . . . . .	427
Ոսկեպատ սարքով ծի հեծնողի տոկոսը . . . . .	430
Ոսկեպատ սեղան մատողի տոկոսը . . . . .	443
Ոչ ոք բարկացած մարդկանց միջամուխ չպիտի լինի . . . . .	495
Որդան կարմիր վերականգնողը, լեղակ [աճեցնողը], ջանսան [գտնողը], մահուդ պատրաստողը . . . . .	502
Ողջ Հայոց աշխարհի մարդկանց քանակը . . . . .	519

Չ	
Չի կարող լինել արդարություն, քանի դեռ չկա օրենք . . . . .	էջ 48
Չափելու չափերը . . . . .	գլուխ 105 <sup>17</sup>
Չափերը կնքելու տոկոս . . . . .	452

Պ	
Պառավ կնոջ տրտմությունը . . . . .	էջ 48
Պաշտոնն ունից է ստացվում . . . . .	գլուխ 18
Պաշտոն ստացողը պետք է երգվի . . . . .	34
Պաշտոնը վերադարձնելու կարգը . . . . .	43
Պաշտոնն ուն կողմից է տրվում . . . . .	46
Պարտագերծը . . . . .	78
Պարտքից [փոխադարձաբար] արձակումը . . . . .	87
Պաշտոնն առանց երդման չպիտի տրվի . . . . .	98 <sup>18</sup>
Պաշտոնյայի ուշանալը . . . . .	108
Պատարագի օրհնություն ընդունողները . . . . .	114
Պաշարների նախապատրաստություն . . . . .	136
Պարտապանը կփրկվի պարտքից . . . . .	147
Պարտագանցի բանտը պետք է մաքուր լինի . . . . .	148
Պատանեկան ժամանակը լրանալը . . . . .	188
Պռնկավարձով խայտառակողը . . . . .	189
Պատանիների հասունության տարիքը . . . . .	199
Պատանու պարտաթուղթը . . . . .	201
Պաշտոնատարը պետք է ունենա Հայաստանյայց [եկե- ղեցու] դավանություն . . . . .	205
Պարտապանին ձերբակալելը . . . . .	209
Պարտապանի սեփականությունը . . . . .	210
Պարտապանի ազատ մնալը . . . . .	211
Պարտատիրոջից թաքցված ունեցվածքը . . . . .	213

Պարտապանը միայն իր և կնոջ ունեցվածքից պետք է վճարի . . . . .	գլուխ 215
Պարզև մանկաբարձին . . . . .	227
Պարզև բժշկին . . . . .	228
Պաշտոնից ոչ ոք հանել չի կարող . . . . .	236
Պաշտոնից զրկվածին ով կարող է վերականգնել . . . . .	237
Պաշտոնի հրամանը պետք է մտցվի հաշվառման մեջ . . . . .	238
Պաշտոնյան կարող է հրաժարվել իր պաշտոնից . . . . .	239
Պաշտոնյան, որ հրաժարվել է իր պաշտոնից . . . . .	239
Պաշտոնի ժամկետը . . . . .	240
Պաշտոնի ժամկետը լրանալը . . . . .	241
Պաշտոնատարն իր մոտ պետք է պահի [պաշտոնի նշա- նակման] իր հրամանը . . . . .	247
Պաշտոնատարի ռոճիկն ով է վճարելու . . . . .	248
Պարզև արջ և գայլ սպանողի համար . . . . .	267
Պարտաթուղթը որ դեպքում է համարվում արժեքը կորցրած . . . . .	270
Պարսավանքի ենթարկվածը պետք է պաշտոնանկ արվի, և նրա տեղը գրավի նրա երկրորդը . . . . .	310
Պարզև զինվորի կնոջը . . . . .	313
Պաշտպանել թշնամական կողմի կանանց . . . . .	319
Պատերազմի ժամանակ տարբեր մարդկանց կողմից զրկված նամակները . . . . .	322
Պաշարման մեջ գտնվող ամրոցից ելնողը . . . . .	323
Պարտապանը, որ օտար երկրից փախել է Հայաստան . . . . .	327
Պատրաստի ունենալ տերերի պատվերը . . . . .	339
Պաշտոնատարները պետք է լինեն փոխանորդներից . . . . .	341
Պսակողը պետք է լինի ծխի քահանան . . . . .	366
Պատրաստություն հղի կանանց համար . . . . .	375
Պատերազմի ժամանակ ընդդիմացող զինվորը . . . . .	480
Պահակը, որին գտել են քնած վիճակում . . . . .	487
Պատերազմի ժամանակ բռնաբարողը . . . . .	490
Պաշարված քաղաքների մեջ ոչ ոք առանց հրամանի չպի- տի մտնի . . . . .	492
Պատերազմի ժամանակ սնունդը մեր երկրից դուրս չպիտի գա . . . . .	493
Պարզև որդան կարմիրը [վերականգնողի], լեղակ [աճեցնողի], ջանսան [գտնողի], մահուդ [գործողի] համար . . . . .	502
Պահակ բերդ ու քաղաքների համար . . . . .	513
Պահակը քանի ժամ պետք է անքուն մնա . . . . .	517

Ջ	
Ջուր լցնելը տնից դեպի [մյուս] տան [կողմը]	գլուխ 250
Ջրերի բաժանումը	268
Ջուրը պետք է փորձվի	330
Ջրադացների տասանորդը	407

Ռ	
Ռոճկապետը	գլուխ 33

Ս	
Ստացագիր՝ իբրև ստացված	գլուխ 86
Սպասավորների դաշնադրությունը	174
Սպասավորների ազատվելը	176
Սնանկ պարտապանը	212
Սպարապետների իրավունքը	279
Սպասավորների զբոսնելու ժամանակը	380
Սողունների, թռչունների տասանորդը	413
Սաղրի կոշիկի տոկոսը	426
Սամույրի հագնողի տոկոսը	428
Սև քարից ջրավազան ունեցողի տոկոսը	433
Սանձարձակ տղամարդկանց պատիժը	460
Սպանողը պետք է մահվան դատապարտվի	464
Սուտ վկայություն տվողը	478
Սննդեղենի մաքսը կարելի է դնել կամ վերացնել	498
Սույն գրքի վերջաբանը	էջ 238-239

Վ	
Վրաց քաջությունը	էջ 71-72
Վառողապետը	գլուխ 27
Վրանապետը	27
Վիճակահանություն նախարարության համար	49
Վաշխապարտը	77
Վարժապետ- ուսուցանողը	101
Վաճառելն ստորագրությամբ պետք է կայանա	122
Վաշխապահանջի տոկոսը	125
Վճիռը հանձն չառնողը	142
Վճիռը վերին [ատյան] մտցնողի ժամկետը	208
Վճիռը պետք է արձակվի առաջնորդի քերանով	243
Վաճառքը հաստատելը	260
Վկայության կարգը	272

Վրեժխնդրությունը պետք է կատարվի հրապարակավ, ոչ թե գաղտնի	342
Վաճառված իրերի թուղթը	351
Վիճակահանությամբ պետք է ընտրել զինվորներ	353
Վրեժխնդրության կարգը	362
Վրիժառուի ընկնելը	363
Վիճակահանությամբ պետք է ընտրել զինվորներ	411 <sup>19</sup>
Վաճառքի միջնորդի տոկոսը	454
Վատ օրինակ տվողը	479

Տ	
Տիրոջ օրենքը մարդու բնության վրա	էջ 16-18
Տների կառավարումը	70
Տկարաց պետք <sup>20</sup>	գլուխ 27
Տանուտերերի երդումը	39
Տերունի թուղթը	140
Տերունի թղթով գրվածը	141
Տանուտերերի վարձատրումը	232
Տանուտերերի բազմելը	234
Տների բարձրությունը	252
Տան [միջից հարևան] տան ներսը տեսնելու խափանումը	252
Տան ջուրը թափել հյուսիսակողմը <sup>21</sup>	252
Տանուտերերի նշանը	291
Տիրոջ տան զորությունը	358
Տիրոջ տանը պետք է տեղ գրավել ըստ աստիճանակարգի	359
Տիրոջ տանն աղմկողը	360
Տիկնանց սենյակը ոչ ոք չպետք է մտնի	371
Տերունի թղթի գինը	441
Տան մեջ կծող շուն պահողը	476
Տանուտերերի հրամանի դեմ հանդգնողը	486

Ց	
Ցանկալի է այն, ինչից որ զուրկ ենք	էջ 55
Ցորենի փոխարինումը	գլուխ 134

Ու	
Ում կողմից է ընդունվում օրենքը	գլուխ 16
Ուխտադրության օրինակ	81
Ունեցվածքի բաժանումը	130

Ուրիշի ծառերի նկատմամբ ոչ ոք իրավունք չունի . . . . .	գլուխ 263
Ուրիշների տունը ոչ ոք չպետք է մտնի, բացի տանտիրոջ կողմից հրավիրվածներից . . . . .	376
Ուրիշների տունն անամոթաբար մտնողը . . . . .	461
Ուրիշների արտերն արածեցնողը . . . . .	477

<b>Փ</b>	
Փիլիսոփայի վճիռը . . . . .	էջ 48-49
Փրկել մեր որդիներին և դուստրերին . . . . .	
Փողոցները պետք է լինեն լայնատարած . . . . .	գլուխ 254
Փողոցները պետք է կոչվեն անվանումներով . . . . .	262
Փողոցներ՝ ելնելու և մտնելու համար . . . . .	262
Փայտ ուրիշի անտառից . . . . .	264
Փախստական զինվորականների պատիժը . . . . .	482 <sup>22</sup>
Փոխանորդը, եթե չնորոգվի իր համար սահմանված ժամանակի մեջ . . . . .	497

<b>Ք</b>	
Քեզ առաջնորդ կարգեցի ժողովրդի վրա . . . . .	էջ 67
Քերիմխան զանդի <sup>23</sup> քաջությունը . . . . .	72
Քաղաքի իշխանը համանման է լինում նախարարի . . . . .	գլուխ 100
Քրեական հանցագործների բանտը . . . . .	149
Քրեական հանցագործների դատաստանը . . . . .	150
Քահանան, որ կարգալույծ է արված . . . . .	193
Քրեական հանցագործի հասակի չափը . . . . .	200
Քահանան և կինը երեշխավոր լինել չեն կարող . . . . .	202
Քրեական հանցագործության պարտքը հատուցողը . . . . .	214
Քրեական հանցագործը չի կարող գտնել երաշխավոր . . . . .	218
Քրեականի դատավճիռը, եթե փախչի բանտից . . . . .	219
Քրեական հանցագործի սեփականությունը . . . . .	220
Քրեական հանցանքների դատաստանը . . . . .	222
Քրեական հանցագործը կարող է ժամանակ գտնել . . . . .	223
Քահանայագործելու հասակը . . . . .	384
Քրեական հանցագործին գաղտնի պահողը . . . . .	393
Քարերի տասանորդը . . . . .	455
Քահանային հարվածողը պետք է պատժվի . . . . .	470
Քմահաճ դատողը . . . . .	485
Քաղաքապետի դավաճանությունը . . . . .	491
Քրեական հանցանքների տեսակները . . . . .	503
Քրեական հանցանքների դատաստանը պետք է լինի գլխա-	

վոր քաղաքներում . . . . .	գլուխ 504
Քրեական մեղադրյալն իրեն դատելու համար կարող է ընտրել 12 դատավոր . . . . .	505
Քրեական հանցանքներ բացահայտողները . . . . .	506
Քրեական հանցագործին դատելու կարգը . . . . .	507
Քրեական հանցագործին հետաքննողների երդումը . . . . .	508
Քրեական հանցագործին դատողների երդումը . . . . .	508
Քրեական հանցագործին դատելու ժամանակը . . . . .	509

<b>Օ</b>	
Օրենքի գործը վարողը . . . . .	էջ 35-36
Օրենքը կենդանություն է տալիս շարժմանը . . . . .	36
Օրենքների բարությունը . . . . .	41
Օրենքի հակառակորդներն արդարություն չեն սիրում . . . . .	55
Օտարականը միայն վարձու հող կարող է ունենալ . . . . .	գլուխ 9
Օրերի բաժանումը . . . . .	104
Օժանդակություն Հայոց տնից . . . . .	127
Օտարականները Հայաստանում կարող են բնակվել . . . . .	128 <sup>24</sup>
Օժանդակ լինել կանանց արդարությանը . . . . .	181
Օտար երկրից Հայաստան մտած մահապարտը . . . . .	326
Օտար երկիր գնացողը . . . . .	367
Օտարադավան ժողովուրդներին դատելը . . . . .	370
Օրենքների բացատրությունը պետք է Հայոց տանն ընդունելի լինի . . . . .	398 <sup>25</sup>
Օտար երկրի ձեռքի գործվածք հագնողի տոկոսը . . . . .	399
Օտար երկիր ոսկի և արծաթ արտահանողի տոկոսը . . . . .	400

## ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՎԵՐՋԱՐԱՆԸ՝

**Ո**րպես այս գրքի շարադրող, գործով վաճառական, անծանոթ շարադրության արվեստին և բոլորովին աղքատ հավաստի բառերից, խոսքերից ու հայեցի սովորությամբ տառեր շարահարելուց, [հեղինակը] չկարողացավ լույս աշխարհ բերել ավելին, քան այս, որպեսզի սրանով ի զորու լինի արթնացնելու շարադրողների արվեստը և դպիր-աշակերտներին՝ ծուլության քնի թմրությունից<sup>2</sup>, նաև նրանց ցույց տալու հնարը, որ շատերի կարծիքով իբր անիրագործելի է: Քանզի այս գրքի հեղինակը ոչ ոքից օժանդակություն չգտավ, բացի իր հոր տան հավատարիմ սպասավորներից՝ թե տառերը շարելու, թե անջատելու, թե ընտրելու և թե տպելու գործում: Նրանք սիամ ազգից<sup>3</sup> էին և ի ծնե տիրապետում էին իրենց ազգի լեզվին ու բարբառին: Քանի որ եթե ուրիշ ազգի և ուրիշ լեզվի պատկանողը կարող է այսքանը լույս ընծայել, ուրեմն չարժի, որ մեր մեջ որևէ մեկն ասի, թե այս բանն իբր մեզ համար անկարելի է: Ուրեմն ամեն բան ամենքին հնարավոր է, եթե ծուլությունը նրանց չհաղթի, և մարդը սեր ու ջանադրություն հանդես բերի: Ահա թե ինչու արժանի համարեցի հիշատակել իմ ջանասեր աշխատողներին ու այս գործում ինձ օժանդակողներին, այսինքն՝ Սիոնի որդի Ջերիանին և Մարկոսի որդի Ջաքեսին<sup>4</sup>:

Երկուսն էլ ծնվել են Սիամ աշխարհում և տարուբեր ժամանակի հետևանքով իրենց մանուկ հասակում ընկել են մեզ մոտ: Դաստիարակվել են մեր մեջ, աճել, սնվել ու սիրով հանձն ամել սուրբ մկրտությունը՝ հանուն ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Օրինական կերպով ամուսնացել են իմ հոր տան աղախիճների հետ, դարձել որդիների ու դուստրերի հայր և հավատարիմ եղել իրենց տիրոջը: Ահա թե ինչու աղաչում եմ համայն հայ ազգիդ, որ եթե սրանք կամ սրանց սերնդից հանդիպեն Հայոց աշխարհում, կամ որևէ մեկը օտար աշխարհում հայ ազգի մեջ ընկնի, սիրով ընդունեք սրանց՝ իբրև երախտագետ իրենց արժանիքների ու վաստակի համար, քանզի սրանց դրացիներից այժմ ևս գտնվում են Հայաստան աշխարհում, որոնց ցե-

ղը կոչում են Մամիկոնյաններ<sup>5</sup>:

Այս [գրքից] մեր ծախսով տպագրվեց մեկ հարյուր և տասը հատ: Դրանցից տասը մնալու է որպես վարձ մեր ծախսի, մնացած մեկ հարյուր հատը ով որ ձեռք բերի, իշխանավորներ լինեն թե հասարակ անձինք, թող ուրախ վայելու լինի նրանց: Յուրաքանչյուր գրքի համար նրա գինը տասը ոսկի է, որին համապատասխանում է քառասուն ռուբլին, որ պետք է հատուցվի տնանկներին և աղքատներին՝ հանուն հայոց ազգի սիրո և փրկության բարբարոսների լծից: Այս հատուցումը չենք հարկադրում, եթե ոչ աղաչանքով խնդրում ենք:

Ավելի քան այդ՝ պաղատում եմ քեզ, Տեր և Արարիչ իմ, որ եթե հայոց ազգին արժանի չես համարում այլազգիների լծից ու ծառայությունից փրկության, ուրեմն խնայի ճ նրանց, որ հակառակ քրիստոնեական հավատի՝ իրենց սրտում նախանձ չպահեն հանդես այլ ազգերի, որոնք երկրի երեսին ազատություն ունեն, ոչ էլ մտքներում մեծ վարանում՝ քո ամիսն ողորմածության նկատմամբ: Թեպետ մեր հայրենիքը Արջ կենդանակերպի տակ է, և մենք էլ ազգովի այնքան հեռու չենք նրա բնության կարծրությունից, երկար ժամանակ մեզանից ոչ ոք չկարողացավ իմաստությամբ խորհելով բացատրել մեզ անտերունչ մնալու պատճառը: Եվ որովհետև մեր իմաստությունը բավարար չէ մեզ օգնական լինելու, իսկ դու, Տեր և Արարիչ մեր, որ ծագեցնում ես քո արեգակն անխտիր բոլոր իմաստունների և տգետների համար և քո անձրևն ես ցողում բարի և չար արարածների վրա, ուրեմն մենք ումի՞ց կարող ենք ակնկալել, որ փրկի մեզ հպատակությունից, բացի քեզնից, Տեր: Ուրեմն կամ մեզ ազատություն տուր, ինչպես երկրի երեսին բոլոր երջանիկ ազգերին, կամ ների ճ մեր ամեն մեղքերն ու հանցանքները, քանզի որևէ ծառա չի կարող գործել ոչ բարի և ոչ չար:

Արդ, գոհ եմ քեզնից, Տեր, որ մասամբ կատարեցիր իմ սրտի տենչանքները՝ ավարտի հասցնելով այս գրքույկը, և քեզնից ակնկալում եմ, Տեր, ինչպես որ երկնքում և երկրի վրա քո ձեռքին ունես բոլոր սահմանները, դալարեցրու մեր կենդանակերպի կարծրությունը, որ փոքրիկ իմաստություն հնչեցնի աշխարհացրիվ հայ ազգի էության մեջ, նախանձախնդի դարձրու մեր դպիրներին, որ ընդառաջ ելնեն մեր բնական առաջադիմությանը և իմաստությամբ շարադրեն ազատության հորդորներ, սուրբ սիրտ և զվարթ հոգի տուր հայոց ազգին, որ սի-

րով հնազանդվի օրենքներին և փրկություն գտնի այլազգիների ծառայությունից, որպեսզի ընդհանուր ազգով կարողանանք ազատորեն պաշտել ամենասուրբ անունը քո, որին ծնրադրում և երկրպագում ենք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԹԱՐԳՄԱՆԶԻ ԿՈՂՄԻՑ

«Որոգայթ փառաց»-ը մինչև այժմ ունեցել է ընդամենը երկու հրատարակություն: Առաջին անգամ տպագրվել է Մադրասում, ինչպես անվանաթերթում է ծանուցված՝ Հակոբ Շահամիրյանի տպարանում, իսկ հաջորդ հրատարակությունը, որ կատարված է Թիֆլիսում, 1913թ., «Ղուկասյան մատենադարան» շարքով (գիրք Թ), վերատպված է նույնությամբ՝ Մադրասում հրատարակված օրինակից: Բայց, այնուամենայնիվ, վերահրատարակության մեջ տեղ են գտել ինչ-ինչ վրիպակներ, երբեմն էլ նկատելի են առանձին բառերի բացթողումներ: Չնայած թարգմանությունը կատարել ենք անմիջականորեն երկրորդ տպագրից՝ հաշվի առնելով նրա դյուրընթեռնելիությունը, սակայն և միշտ մեր ձեռքին ունեցել ենք մադրասյան տպագիրը և երկրորդ տպագրում հազվադեպ հանդիպող վրիպակներն ուղղել ու բացթողումները վերականգնել ենք ըստ առաջին տպագրի: Կարելի է ասել, որ թարգմանությունը կատարված է երկու տպագիրների համեմատությամբ: Ծանոթագրություններում նրանք ներկայացված են «Ա տպ.», «Բ տպ.» համառոտ նշումներով: Եթե ծանոթագրություններում վկայակոչվող բառը, արտահայտությունը, նախադասությունը կամ հատվածը վերաբերում են առհասարակ բնագրին՝ թե մեկ և թե մյուս տպագրին, ապա իբրև ընթերցողին ավելի մատչելի օրինակ՝ մատնացույց է արվում միայն Բ տպագրի էջը, սակայն այն հաշվով, որ վկայակոչումն ընկալվի նաև Ա տպագրի համար:

Ա տպագիրը բաղկացած է փոքրադիր 339 էջից, էջը՝ 39 տողից և տողը՝ 43-44 միջից: Տառատեսակը այն նույն ուղղահայաց տառերն են, որոնք օգտագործված են Հակոբ Շահամիրյանի անունով մադրասյան տպարանում լույս տեսած գրքերում, մասնավորապես «Նոր տետրակում» (1772-73 թթ.) և «Տետրակ, որ կոչի Նշաւակ» (1783-84 թթ.) գրքույկում: Գրքի սկզբում, անվանաթերթից առաջ, կա մի պատկեր (տես այս հրատարակության անվանաթերթը). բնանկարի խորքի վրա հովիվն է՝ վարոցը ձեռքին, ոչխարների հոտի հետ, հեռապատկերում երևում են տներ և երկնքում ճախրող թռչուններ: Հովվի տարազի ոչ

<sup>1</sup> Եթե գծանկարն անմիջականորեն «Որոգայթ փառաց»-ի համար է արված, ապա նկարիչը հավանաբար գարկ է ստացել Ներածության հետևյալ նախադասությունից. «Երբեմն հովի մի քաջ, որում ընդդիմանայ գայլոց և անձն իր դե է վերայ ոչխարաց, բարեգոյն ազատ և պատուելի մարդ կար է լինել, բան թե իշխան մի երկչոտ, յոռի և ծուլ, զի տաց է տեղի ցրուելոյ ժողովորդս

հայկական, ավելի եվրոպական կերպը հիմք է տալիս ենթադրելու, որ նկարն արևմտյան փորագրիչի հորինվածք է, գուցե արված ոչ անմիջապես «Որոգայթ փառաց»-ի համար, թերևս ընդօրինակված-փոխառված մեկ այլ տպագիր գրքից: Գիրքն ունի նաև զարդեր. միջնագարդ՝ անվանաթերթում, որ հանդես է գալիս նաև Ներածության վերջում՝ իբրև վերջագարդ (էջ 104), ոճավոր խաչ և արծվի (թե՞ բուխ) պատկերով գարդ (էջ 2), որոնցից վերջինը կա նաև գրքի վերջին էջում՝ որպես վերջագարդ (էջ 339): Նախերգանքի վերջում պատկերված է Շահամիր Շահամիրյանի արիեստանիչը՝ կշռաքարերով կշեռք, մկրատ, գազ, թանաքաման, փետուրե գրիչ և այլ առարկաներ (էջ 6): Մեկական գլխագարդ էլ իրենց սկզբում ունեն Ներածությունը (էջ 7) և երկրորդ հատորը (էջ 105): Նշենք նաև, որ գրքի բոլոր էջերն առնված են քառանկյունի կազմող գծերի մեջ, ինչպես Շահամիրյանների՝ վերևում հիշատակված մյուս գրքերը: Էջերի համարակալումը ոչ թե հայկական տառերի թվային արժեքով է, այլ արաբական թվանշաններով: Շահամիրյանները թիվ նշելու նպատակով, աննշան բացառությամբ, առհասարակ հայկական տառերը չեն կիրառել:

«Որոգայթ փառաց»-ը Հակոբ Շահամիրյանի տպարանում լույս տեսած աշխատություններից միակն է, որ մեզ հասել է նաև ձեռագրերով: Դրանք թվով հինգն են, որոնց համեմատական ուսումնասիրությունը կատարել է անվանի պատմաբան Աբգար Հովհաննիսյանը (A.P. Иоаннисян, К истории возникновения "Западни честолюбия", տես «Տեղեկագիր ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի», հասարակ. գիտություններ, 1948, թ. 3, էջ 11-25): Ձեռագրերի վերաբերյալ որոշ լրացումներ է արել նաև վաստակաշատ միջնադարագետ Աս. Մնացականյանը («18-րդ դ. գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ», տես «Բանբեր Մատենադարանի» թ. 4, 1958, էջ 139-160): Բոլոր ձեռագրերն էլ պահվում են Մաշտոցի անվ. Մատենադարանի հավաքածուում և կրում են 1477, 3101, 3102, 4471 և 7886 թվահամարները: Քանի որ թարգմանության ընթացքում անհրաժեշտություն է զգացվել դիմելու նաև ձեռագրերին, հարկ ենք համարում ընդհանուր կարգով անդրադառնալ նրանց:

Թ. 1477 ձեռագիրն ընդօրինակված է 1805թ., Ա.-Պետերբուրգում: Գրիչն է հայտնի թարգմանիչ Մարգար Չաքարիայի հոճենց Երևանցին, իսկ պատվիրատուն՝ Ռուսիայի հայոց հոգևոր առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը: Ի տարբերություն մյուս չորս ձեռագրերի, որոնք կամ միայն Ներածության և կամ երկրորդ հատորի ընդօրինակությունն են, այս գրչագիրն ընդգրկում է ամբողջ գիրքը՝ իր երկու հատորներով: Ընդօրինակությունը կատարված է Մադրասի տպագրից՝ նորից հրա-

տարակելու նպատակով, բայց չի տպագրվել: Այդ հանգամանքը կարծես թե արժեզրկում է հոռճենցի աշխատանքը: Սակայն նրա ձեռագիրը հետաքրքիր մտահղացման արդյունք է. նա ամբողջ ներածական բաժնի շարադրանքը բաժանել է առանձին պրակների, այն է՝ ենթագուլխների, համարակալել ու վերնագրել պրակները՝ ըստ նրանցում շոշափված գլխավոր հարցերի (համարակալված չեն միայն 19-20-րդ պրակները): Յուրահատուկ մոտեցում է ունեցել և գրքի երկրորդ հատորին. նրանում տեղ գտած բոլոր 521 գլուխները (հոդվածները) հոռճենցը խմբավորել է և կյանքի յուրաքանչյուր ոլորտի ու բնագավառի վերաբերող օրենքներն ու հոդվածները ներկայացրել առանձին խմբերով, ինչպես ինքն է ասում՝ «ժողովեցի ի մի շար գայնս կանոնս, որք վերաբերին առ իշխանական կարգադրության և ի կառավարութեան գործս և ապա զմիս կանոնս, որք պատկանին առ դատաստանական իրաւունս կամ ի քաղաքական վարս» (ձեռ. 1477, էջ 2ա): Բայց հոռճենցն, ինչպես ինքն է խոստովանում, իրեն իրավունք չի վերապահել փոխել կամ վերանայել հեղինակի լեզուն՝ «ոչ ինչ կերպիս փոխարկելով զոճ նորին» (նույն տեղում), թեև միշտ չէ, որ հավատարիմ է մնացել իր այդ սկզբունքին՝ տեղ-տեղ վերաշարադրել է բնագիրը, էլ չենք ասում, որ հետևողականորեն սրբագրել է նրանում տեղ գտած սխալները, որոնք կամ ուղղագրական բնույթի են և կամ քերականական (անվանական խոսքի մասերի և բայերի խոնարհման ու հոլովառության խոտելի ձևեր), նաև ռուսահայ և արևելահայ ընթերցողի համար անհասկանալի բառերի կողքին, իբրև բացատրություն, ավելացրել է այնպիսի համանշանակ բառեր, որոնք նպաստում են բնագիրը ճիշտ ընկալելուն: Մարգար հոռճենցի այդ բացատրությունները և ավելացրած հոմանիշ բառերն իրենց օժանդակությունն են բերել մեր թարգմանությանը:

Թ. 4471 ձեռագիրը միայն նախերգանքի և գրքի առաջին հատորի՝ Ներածության ընդօրինակությունն է, բայց չունի Ներածության այն վերջին պարբերությունները, որոնք հետագայում, 1780-ական թթ. են ավելացված՝ գիրքը տպագրելուց առաջ (տես Ներածության 128-րդ ծանոթագրությունը): Ինչ վերաբերում է այս ձեռագրի գրչության ժամանակին, ապա Ա.Յովհաննիսյանի հիմնավոր բացատրությամբ՝ այն պատճենված չէ «Որոգայթ փառաց»-ի Ա տպագրից, այլ ընդօրինակված է գրքի հեղինակային ձեռագիր տարբերակից՝ մինչև 1780-ական թթ., ավելի որոշակի՝ 1775 թ. մայիսից անմիջապես հետո: Բանն այն է, որ կաթողիկոս Սիմեոն Երևանցին, լսելով, որ Շահամիր Շահամիրյանը տպարան է հիմնել (1771 թ.) և գրքեր է տպագրում, անհանգստացած, որ անգզույշ կարող են գտնվել և պարսից պետության կողմից էջմիածնի նկատմամբ խստությունների ու դաժանության հարուցման պատճառ դառնալ, 1775 թ. մայիսին գրած նամակով վճռականորեն

խնդրում է, որ Շահամիրյանը նախապես իրեն ուղարկի այն գործերի ձեռագրերը, որոնք մտադիր է հրատարակել իր տպարանում, որպեսզի ստանա իր համաձայնությունը: Եվ Շահամիրյանը նրան է ուղարկել արդեն տպագրված «Նոր տետրակն» ու «Որոգայթ փառաց»-ի Ներածության բաժնի ձեռագիր ընդօրինակությունը: Այս վերջինը, ահա, Մաշտոցյան մատենադարանի թ. 4471 ձեռագիրն է՝ Յովհաննիսյանից ուղարկված էջմիածին (տես Ա.Յովհաննիսյանի նշված հոդվածը, էջ 14-17): Թ. 4471 ձեռագիրը ևս թարգմանության ընթացքում մշտապես մեր ուշադրության կենտրոնում է եղել: Այն հավատարմորեն ներկայացնում է տպագիրների պատկերը՝ չնչին շեղումներով և, մանավանդ, առանց Ներածության վերջին պարբերությունների:

Մնացած երեք ձեռագրերը (թթ. 3101, 3102 և 7886) «Որոգայթ փառաց»-ի միայն երկրորդ հատորի ընդօրինակություններն են: Թթ. 3101 և 3102 գրչագրերը համարվում են «Չայոց կարգադրության» (Սահմանադրության) այն օրինակները, որոնք, ինչպես նշված է վրաց Չերակլ արքային 1787թ. հոկտեմբերին Շահամիր Շահամիրյանի հասցեագրած նամակից, վերջինս ուղարկել էր վրաց արքային և Յովսեփ Արղությանց արքեպիսկոպոսին (մի օրինակ էլ նորատիպ «Որոգայթ փառաց»-ից 1789 թ. նոյեմբերի 1-ին Շահամիրն ուղարկել է կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն): Արղությանցը ստացված օրինակներից մեկը պետք է ուղարկեր արքային, սակայն անմիջապես չի ուղարկում. նրանցից մեկից՝ այժմյան թ. 3102 ձեռագրից 1789 թ. Աստրախանում նոր ընդօրինակություն է կատարել տալիս Չարություն Դիլանով Մնացականյանցին (այդ մասին տես Արղությանցի հիշատակագրությունը թ. 3101 ձեռագրի կազմի ետևի թևի ներսում. «Մէկ հատն սորին ետու պրն. Յարութին Դիլանովին Մնացականեանց, որ նոր օրինակեսցէ ուղղութեամբ...»), և այդ նոր օրինակը՝ այժմյան թ. 7886 ձեռագիրը, ուղարկում Չերակլին (տես Ա.Մնացականյանի նշված հոդվածը, էջ 187, տողատակի 2-րդ ծանոթագր.): Թթ. 3102 և 7886 ձեռագրերի կապը մատնող հանգամանք է այն, որ միայն նրանցում է շփոթաբար «Կարգադրություն հայոց»-ը ներկայացված որպես «Որոգայթ փառաց»-ի առաջին հատոր, մինչդեռ այն գրքի երկրորդ հատորն է:

Այդպիսով, թթ. 3101 և 3102 գրչագրերն օրինակված են Յովհաննիսյանում՝ աշխատության ձեռագիր բնագրից, իսկ թ. 7886 ձեռագիրը՝ նրանցից երկրորդից: Այնուամենայնիվ, թ. 7886 ձեռագիրը բազմաթիվ շեղումներ ունի իր բնօրինակից՝ թ. 3102 գրչագրից, որովհետև արտա-

<sup>1</sup> Շահամիրյանի նամակի վերահրատարակությունը տես Ա.Տեր-Ավետիսյան, Նյութեր Յովհաննիսյանի հայ գաղութի պատմության համար (Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 13, 1940, էջ 90-99):

գրողը՝ Հարություն Դիլանովը, ըստ Արդությանցի պահանջի, օրինակել է «ուղղութեամբ», այսինքն՝ ուղղագրական-քերականական ճշտումներ է կատարել, առանձին դեպքերում նաև բացատրել-պարզել այս կամ այն անծանոթ բառի ու դարձվածքի միտքը, որով և այդ ձեռագիրը նույնպես իր օժանդակությունն է բերել թարգմանությանը: Քանի որ թթ. 3101 և 3102 ձեռագրերը նույնական են միմյանց, մենք անհրաժեշտ դեպքերում հաշվի ենք առել նրանցից միայն առաջինը:

«Որոգայթ փառաց»-ը թարգմանչի առաջ բավական դժվարություններ է հարուցում գլխավորապես իր լեզվի պատճառով: Բազմաթիվ շեղումներով հանդերձ՝ նրա լեզուն գրաբարն է, բայց այն կաղապարի մեջ, որ 18-րդ դ. վերջին երեսնամյակում ձևավորվել էր հնդկահայ մտավոր շրջաններում, հատկապես Շահամիր Շահամիրյանի հայրենասիրական խմբակի շրջանակում: Դա վերջին հաշվով արդյունք էր հայ լուսավորական շարժման պահանջի: Իր բոլոր թերություններով իսկ, որոնց մասին անկեղծորեն խոստովանում է «Որոգայթ փառաց»-ի հեղինակն ինքը («Տխուր է ինձ տեսանել անկարութիւնն իմ, որ ոչ գիտեմ կատարելապէս ոչ բառ և ոչ բայ հայերէն լեզուի և ոչ շնորհ արիեստին գրելոյ և խօսելոյ...» և կամ՝ «Շնորհի ի ընթերցողէ խնդրելով՝ ակն ունիմ ներել իմոյս ռամկօրէն շարադրութեան...», Բ տպ., էջ 111), այն կոչված էր դառնալու նոր ժամանակների գաղափարների արտահայտիչ: Շահամիրյանները տեսականորեն իրենց նպատակը չեն հիմնավորել, բայց հրատարակած երեք գրքերով գործնականորեն այդ նպատակի ապացույցներն են տալիս: Եթե նրանց կատարածը դիտենք իբրև գրաբարի նորացման քայլ, պետք է զարմանանք նրանց համարձակության վրա, իսկ եթե ընկալենք իբրև արտահայտություն գրաբարին եպես չտիրապետելու, բայց գրաբար գրելու ցանկություն, ապա նրանց լեզուն պետք է համարենք անկատար ու սխալաշատ գրաբար: Գնահատման այդ երկու հիմքերն էլ տալիս է այն: Հիշենք, որ նշանավոր հայագետ Թադևոս Ավդալբեգյանը «Որոգայթ փառաց»-ի լեզուն բնութագրում է որպես «մի անգրագետ, մախառնիկ լեզու՝ գրաբարի լոկ կերպարանքով» (Թ.Ավդալբեգյան, «Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայ համայնական ինքնավարությունը 18-րդ դարում», տես «Հայագիտական հետազոտություններ», Ե., 1969, էջ 259), այն անվանում է «խուժադուժ լեզու» (նույն տեղում, էջ 261)՝ «Որոգայթ փառաց»-ը և «Տետրակ, որ կոչի նշաւակ» գրքուկը լեզվական առումով հակադրելով «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքին այն հետևությամբ, թե «Հորդորակի լեզուն տանելի գրաբարն է» (նույն տեղում, էջ 259): Կարծում ենք, որ այդ բոլոր աշխատություններում բանեցված է քերականական և շարահյուսական-կառուցվածքային միևնույն նկարագիրն ունեցող լեզու՝ Շահամիրյանների գրական

հայերենը, մեկում ավելի, մյուսներում պակաս մշակված: Այնպես որ սահմանազատիչ անջրպետի խնդիր չկա: Շահամիրյանների լեզուն ընթերցողին պարտադրում է իր անկանոնությունները՝ բայերի խոնարհման և անվանական խոսքի մասերի թեքման յուրօրինակ ձևեր՝ թերևս պայմանավորված հնդկահայոց մայրենի խոսվածքի ազդեցությամբ. նախադասության անդամների կապակցության շեղումներ, բարդ նախադասության շարահյուսական միավորների անսովոր շարադասություն և այլն: Շատ են օտար բառերը (**աղզոթ, ըոսիտ, թոփ, լիպր, կառտուշ, սմբա, փալասխա, փշտով, փստով** և այլն): Գործածված են նաև բարբառային բառեր ու բառաձևեր (**դեղկ, կլու, հաղիկա, ճշգոյոդ, քալամ, քինթ** և այլն): Թարգմանության մեջ անհրաժեշտության դեպքում թե օտար և թե՛ բարբառային բառերը կամ պահպանել ենք՝ ծանոթագրություններում տալով նրանց իմաստների բացատրությունը, կամ էլ փոխարինել հայերեն նույնիմաստ բառերով:

Բնագրում, հատկապես Ներածության բաժնում, հաճախ պարբերությունները ծավալվում են բազմաթիվ էջերով, բռնում են 8, 9, 10, 13, նույնիսկ 18 էջ (տես Բ տպ., 41-49, 50-62, 64-71, 77-86 և 86-104 էջերի պարբերությունները և այլն): Պարբերությունների մեջ նախադասությունները միմյանց շարունակում են մեծ մասամբ առանց վերջակետերի: Թարգմանության մեջ, էլնելով երկարաշունչ հատվածների բովանդակությունից և նրանցում շոշափված հարցերից, մեծածավալ պարբերությունները բաժանել ենք ավելի փոքր պարբերությունների, որպեսզի ընթերցողի համար շարադրանքն ավելի ընկալելի դառնա, իսկ դրանք էլ իրենց հերթին տրոհել ենք առանձին նախադասությունների ու սրանց ավարտը նշել վերջակետով: Հարկավոր դեպքերում մեր կողմից ավելացված օժանդակ բառերը վերցված են անկյունավոր փակագծերի մեջ:

Գրքի առաջին տպագրում, նաև եղած ձեռագրերում երկրորդ հատորի գլուխները (հոդվածները) համարակալված են արաբական թվանշաններով: 1913 թ. վերահրատարակության մեջ դրանք փոխարինված են հայերեն տառերով՝ ըստ նրանց թվային արժեքի: Թարգմանության մեջ հետևել ենք առաջին տպագրին՝

<sup>1</sup> Մեր թարգմանությունից որոշ հատվածներ (ոչ վերջնական տեսքով) իբրև հավելված տեղ են գտել պատմաբան Ռ.Համբարձումյանի՝ «Որոգայթ փառաց»-ին նվիրված գրքուկում (Ռ.Համբարձումյան, «Որոգայթ փառաց», Ե., 1999, էջ 40-63):

Մեր թարգմանությունն արդեն ավարտված էր, երբ «Голос Армении» լրագրում կարդացինք, որ Մոսկվայում պրոֆ. Ա.Խաչատրյանի ռուսերեն թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով 1999 թ. լույս է տեսել «Որոգայթ փառաց»-ի երկրորդ հատորը (տես Գ.Վաթյանի



## ԽՈՐԱԳԻՐ

Գրքի համար հեղինակը՝ Յակոբ Շահամիրյանը, և նրա հեղինակակիցներն ընտրել են չափազանց բնութագրական և հիշողության մեջ տպավորվող խորագիր՝ «Գիրք, որ կոչի Որոգայթ փառաց»։ Գրքում, մանավանդ Նախերգանքում և Ներածության բաժնում, մի քանի անգամ բացատրվում է աշխատության նպատակը, ըստ այդմ՝ նաև խորագրի իմաստը։ Այն կյանքի է կոչվել «վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան» (անվանաթերթ), «կալանաւոր առնէ այնոցիկ, որք... կան ի գործ անկարգութեան, մաքրելով տացէ նոցա կեանս առողջարարս...», զսպելով վարքս անձին իւրոյ, յուսալով, զի տացէ կեանս յաւիտենականս» (Նախերգանք, Բ տպ., էջ Ա-Բ)։ Սարգկային ոչ մի անհատ իրավագոր չէ իշխելու ի վերուստ բանական բնությամբ օժտված մարդկանց, բացի Արարչից. «...մի ոք ձգտեսցէ [ի] միտս իւր, զի թագաւորեսցէ ի վերայ բանական բնութեան մարդոյ, որ մեղք մեծ է» (Բ տպ., էջ 43)։ Արդարացի և ապահով կյանքի երաշխիքը միայն և միայն օրենքն է և ոչ թե կամայականության և բռնության մարմնացում հանդիսացող տիրակալը՝ թագավորը կամ մյուս իշխողները։ «Որոգայթ փառաց»-ը ջատագովություն է օրենքին, օրենք, որի առաջ ազգի բոլոր զավակները, հասարակության բոլոր անդամները հավասար են, ենթակա նրան, քանզի իրենք են ընդունել այն։ Աշխատության ձեռագրերից մեկի գրիչը՝ Սարգար Խոճենցը, նույնպես այդ խորհուրդն է տեսել գրքի խորագրում. «Որոգայթ, այսինքն՝ ծուղակ կամ թակարդ կոչեաց զսա, զի սովիմք, իբրև ի թակարդի, կալանաւորեալ, այսինքն՝ կապեալ և արգելեալ լիցին ամենայն անկարգութիւնք գործոց...» (ծեռ. 1477, էջ 1բ)։ «Որոգայթ փառաց»-ը պետք է ըմբռնել և որպես փառասիրության կամ փառատենչության թակարդ, կամայական ու բռնակալ մարդկանց՝ ուրիշների վրա իշխելու ցանկությունները սանձահարող օրենսգիրք ու սահմանադրություն։

Շատ կարևոր է անվանաթերթում հիշատակությունը հեղինակի մասին՝ «շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց Նորջուղայեցւոյ»։ Գրքում նման բովանդակությամբ կա ևս երկու նշում. Ներածության վերջընթեր մասում, առանց իր անունը տալու, հեղինակը տեղեկացնում է, որ աշխատության շարադրման ժամանակը փրկչական 1773 թվականն է, և ինքը գտնվում է Մադրասում (Բ տպ., էջ 136), իսկ գրքի վերջաբանության մեջ, դարձյալ առանց իր անվան հիշատակության,

հեղինակը խոսում է գիրքը տպագրելու հանգամանքների և սիանցի իր երկու գրաշարների՝ Ջերհանի և Չաքեսուի մասին, որոնք մանկությունից ապրել են իր հոր (Շահամիրի) տանը, քրիստոնեություն ընդունել՝ հայ եկեղեցու դավանաբանությամբ և Շահամիրյանների խնամակալությամբ ընտանիք կազմել։ Ինչպես պարզված է, երբ 1787 թ. հոկտեմբերի 15-ից հետո և 1789 թ. նոյեմբերի 1-ից առաջ «Որոգայթ փառաց»-ը տպագրվեց, Յակոբ Շահամիրյանը վաղուց մահացած էր (1774թ. հուլիսին), հետևապես վերջաբանության հեղինակն ինքը չէ, մեկ ուրիշն է, որն այն շարադրել է Յակոբի անունից։

Հարց է ծագում՝ ո՞վ է գրքի հեղինակը՝ Յակոբ Շահամիրյանը, որը գրքի անվանաթերթում հիշատակվում է որպես աշխատության շարադրող՝ իր գործն ավարտած 1773 թ.։ Փաստորեն անվանաթերթում և Ներածության վերջընթեր մասում ոչ թե գրքի տպագրության, այլ գրության ավարտման տարին է նշված։ Բայց այն հանգամանքը, որ գիրքը տպագրվել է 1780-ական թթ. երկրորդ կեսում, նաև իր վաղամեռիկ տաղանդավոր որդու հիշատակն անմահացնելու հայր Շահամիրյանի շատ բնական ցանկությունը նկատի առնելով՝ բանասիրության մեջ առաջ է քաշվել այն վարկածը, որ ամբողջ գրքի հեղինակը ինքը՝ Շահամիր Շահամիրյանն է (տես **Թ.Ավդալբեգյան**, Հայագիտական հետազոտություններ, էջ 258-261)։ Պատմաբան Ա.Յովհաննիսյանը, խնդիրը քննելով փաստական նոր տվյալների հիման վրա, հանգել է այն հետևության, որ գրքի առաջին մասը՝ պատմական-տեսական Ներածությունը, Յակոբ Շահամիրյանի գործն է՝ առանց նրա վերջին վեց պարբերությունների, իսկ երկրորդ հատորի նախնական շարադրանքը կամ ուրվագիծը հեղինակել է դարձյալ Յակոբը, բայց նրա ամբողջացմանը, վերջնական տեսքին բերելուն մասնակցել են Յովսեփի Էմինը, Մովսես Բաղրամյանը և հատկապես Շահամիր Շահամիրյանը՝ առանց իրենց անունը նշելու (A.P.Иоаннисян, նշված հոդվածը, էջ 21-24)։ Այս եզրակացությունը բավական հիմնավորված է և առայժմ կարելի է ընդունելի համարել՝ միաժամանակ այն համոզմունքն ունենալով, որ խնդիրը, այնուամենայնիվ, կարոտ է ավելի համակողմանի քննության։

Յովսեփի Էմինի, Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի հետ միասին, մեր կարծիքով, աշխատության հետագա լրացման ու ամբողջացման մեջ անտարակույս իր լուծման է ունեցել և Շահամիրի կրտսեր որդի Եղիազարը, հայոց լուսավորությամբ խանդավառված մտացի մի երիտասարդ, որի անունը Յակոբին հավասար գնահատանքով ու հարգանքով են տալիս նրա գործն ու վաստակը ճանաչող ժամանակակիցները։ Նկատի ունենք, հատկապես ֆրանսիացի գրող Ֆրանսուա Ֆենելոնի (1651-1715) վեպի հայերեն թարգմանության

տպագրության հիշատակարանի հեղինակի խանդավառ կարծիքը վաղամեռիկ երկու ազգանվեր եղբայրների՝ Հակոբի ու Եղիազարի մասին: Այդ վեպի («Պատմութիւն Թէլամաքի որդւոյ Յուլիսի») գրաբար թարգմանությունը (ֆրանսերենից և իտալերենից) կատարել է Մարգար Խոճենց Երևանցին (Մարգար Ջաքարիայի Գեղամյան), և հրատարակվել է երկու անգամ, Նոր Նախիջևանում Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի հիմնադրած տպարանում, առաջին անգամ՝ մեկ գրքով, 1793 թ., իսկ երկրորդ անգամ թարգմանչի ձեռագրի համեմատությամբ ու ճշգրտումներով՝ երկու գրքով, 1794-1795 թթ.: Առաջին հրատարակության հիշատակարանում պանծացվում են Շահամիրյանները, հարգանք մատուցվում Հակոբի ու Եղիազարի հիշատակին. «Ունիս վայելել... Մեծին Աղեքսանդր Մակեդոնացւոյ զլիակատար պատմութիւնն քաղցրալուր՝ տպեալ՝ ի յալիտենական յիշատակ ի Մադրաս բնակեալ Տուղայեցի պայծառ իշխան Շահամիր Սուլթանուն Շահամիրեանի վաղաբառան երկուց որդուցն՝ Յակոբոսին և Եղիազարին, որք զընթացս ըղծալի կենաց իւրեանց ի դեռափոթ ծաղկեալ ժամանակի արագ վճարեցին աշակերտութեամբ գրոց սոփեստից, սիրահար ծառայեալ ի լուսաորութիւն ազգին՝ թողլով գերկս աշխատանաց իւրեանց ի բազմազան շահաւետ գրեանս ի գարթուցումն սրտից բնապէս արի ասքանագեան սերնդոց...» (տես **Ն.Ոսկանյան, Ք.Կորկոտյան, Ա.Սավալյան**, Հայ գիրքը 1512-1800 թթ., մատենագիտություն, Ե., 1988, էջ 687բ):

«Որոգայթ փառաց»-ի երկու տպագիրներում էլ, անվանաթերթի հաջորդող էջում, տեղ է գտել հետևյալ ծանուցումը, որով հեղինակը հայցում է ընթերցողի ներողամտությունն այն բանի համար, որ գրքում առկա են բառերի սխալ գրություններ և տառերի շփոթություններ, համեստաբար տպարանային վրիպակների մեղքը վերցնում է իր վրա: Հարմար գտանք այդ ծանուցումը բերել այստեղ՝ փակագծերում տալով նրա թարգմանությունը. «Սխալանք բոլոր գրքիս տառի և բառի ընթերցողը ի ձայնէ բառից ճանաչիր ի պատճառն անծանօթութեան արիեստին շարադրողիս, զի ոչ գիտաց զանագանութիւն տառից, այսինքն՝ **դ, թ, ծ, հ, ձ, յ, վ, տ, ց, ւ**: Սոքայ գտնիս մինն ի տեղի միուսի: Դու ինքդ ի միտս քո փոխարկէ՛ որն որ արժան է» («Դու՛ ընթերցողդ, բառերի հնչյունից ճանաչիր սույն գրքի տառերի ու բառերի բոլոր սխալները, որոնց պատճառը շարադրողի անհմուտ լինելն է իր արիեստին, որովհետև չիմացավ տառերի, այն է՝ **դ, թ, ծ, հ, ձ, յ, վ, տ, ց, ւ** -ի տարբերությունները: Դրանք [գործածված] կգտնես մեկը մյուսի փոխարեն: Դու ինքդ մտովի փոխարինիր՝ ինչպես որ պատշաճ է»):

<sup>1</sup> Աղեքսանդր Մակեդոնացու պատմության այնպիսի հրատարակություն, որն իրականացված լինի 1787 թ. հետո (Եղիազարի մահվան տարին է) և 1793 թ. առաջ (Ֆենելոնի վեպի թարգմանության տպագրության տարին է), հայ տպագիր գրքի մատենագիտության մեջ արձանագրված չէ: Գրքից որևէ օրինակ պահպանված չէ, և այն անհասկալի է մնացել մատենագետներին, թե՛ առիասարակ լույս չի տեսել՝ դժվար է ասել:

## ՆԱԽԵՐԳԱՆՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՏՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՂԻԴ

1. Տես Սաղմ., ԾԺԸ, 122:

2. Օրենքը համեմատվում է խնձորի հետ, որի բնութագրումը թեպետ չի նույնանում, բայց հիշեցնում է Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատության հետևյալ հատվածը. «...խնձորն տեսակազաչսն [զուարճացուցանել], հոտով՝ զքիմսն և ապա զօրութիւն կերակրոյ գայ» («Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 289): «Որոգայթ փառաց»-ի հեղինակը մեկնությանը կարող էր ծանոթ լինել ձեռագրով:

3. **Բալղամ (պղամ, ֆլեգմա.** արաբ.)- միջնադարյան բժշկարաններում ընդունված անվանումը օրգանիզմի չորս հեղուկներից մեկի՝ ավիչի: Այդ չորս հեղուկներով են պայմանավորել ու բացատրել մարդու բնախոսական երևույթները:

4. Հեղինակի խոստովանությունն այն մասին, որ գրքում ամփոփված օրենքները սոսկ իր ցանկության ու մտքի ծնունդ չեն և ոչ էլ իր այգու պտղից են, այլ «այն այգիների իրավունքի ու արդարության ծառի պտղաբերումից, որոնք հին ժամանակից սկսած համբերությամբ տնկել են քրիստոնյա տիեզերական և արդար թագավորությունների բարեպաշտ թագավորները», ուղղակի ակնարկ է այն մասին, որ աշխատությունը պատրաստելիս ինքն օգտվել է իրավագիտական ինչ-ինչ հուշարձաններից, հավանաբար եվրոպական լեզուներով (մասնավորապես անգլերեն) հրատարակություններից: Այդ առումով, «Որոգայթ փառացն» սպասում է իր ուսումնասիրողին՝ երևան հանելու համար նրա աղբյուրները: Նաև կարելի է ենթադրել, որ աշխատության երկրորդ հատորը՝ բուն օրենքները, գրված-պատրաստ են եղել, մինչև որ կգրեր Ներածությունը:

5. Հմմտ. Թուրք Ա Պետր., Բ, 3. «...եթ ճաշակեցեք, զի քաղցր է Տեր»: Հեղինակը Պետրոս առաքյալի խոսքը փոքր-ինչ փոփոխված է վկայակոչել:

6. Տես Մատթ., Ե, 37. Թուրք Յակ., Ե, 12. Բ Կորնթ., Ա, 17:

7. Բ տպագիրն այդտեղ Նոյ անունից հետո բաց է թողել շաղկապը. վերականգնում ենք ըստ Ա տպագրի:

8. Համաձայն հայ հին մատենագրության մեջ պահպանված ավանդության (Մովսես Խորենացի և ուրիշներ)՝ Արշամի որդի Աբգարը (առաջին դար)՝ եղել է հայոց թագավոր՝ մայրաքաղաք ունենալով նախ՝ Մծբին քաղաքը, ապա՝ Եդեսիան Միջագետքում: Լսելով Քրիստոսի հրաշագործությունների մասին՝ Աբգարը հավատում է, որ նա Աստված է: Որովհետև անբուժելի հիվանդ էր, ապաքինվելու համար նամակագրության մեջ է մտնում Քրիստոսի հետ: Աբգարը բուժվում է: Տիրոջ մահվանից հետո նրա աշակերտ Թադեոս առաքյալը, գալով Հայաստան, մկրտում է Աբգարին: Ասորական և հայ մատենագրական ավանդույթը Աբգարին ճանաչում է իբրև աշխարհում առաջին քրիստոնյա թագավորի: Աբգարի գրույցը տեղ է գտել Խորենացու պատմության երկրորդ գրքում՝ ասորի Լաբուբնայի (Ղերուբնա, Ղերուբնա) պատմության («Թուղթ Աբգարու», հայերեն թարգմանված 5-րդ դ. առաջին կեսում) և ժողովրդական բանավոր գրուցապատումի օգտագործմամբ:

9. **Չանցառուների** - այդպես թարգմանեցինք բնագրի «տկարացելոց» բառը, որը հեղինակը գործածել է օրինախախտների, հանցավոր արարք կատարողների, օրինապահությունից թուլացողների համար՝ իբրև պարտականություններից շեղվողներ, ընդունված օրենքը թուրողներ, իրենց պարտականությունները կատարելու խնդրում թերացողներ: Ի դեպ, նախորդ նախադասության մեջ «ի տկարութենէ չարեաց» կապակցությունը թարգմանել ենք «չարության ախտից»՝ այդ դեպքում «տկարութիւն»-ը (թուլությունը) ընկալելով իբրև ախտ:

10. Ինչպես բնագրի տարբեր մասերում, այնպես էլ այս նախադասության մեջ ի հայտ է գալիս հեղինակի անհետևողականությունը. մինևույն նախադասության մեջ ասելիքը ներկայացնելով իր անունից՝ այն արտահայտում է մերթ անձնական դերանվան և ստորոգյալի եզակի թվով, մերթ էլ հոգնակի թվով («ուրեմն տայ տեղի **զիս**, զի յոյս առ Արարիչն **իմ** պահելով **խոստանամք...** **աղաչեմ** զձեզ» և այլն), նաև հաճախ եզակի ենթակայի հետ ստորոգյալը դնում է հոգնակի թվով կամ ընդհակառակն՝ դրանով իսկ խախտելով շարահյուսական կանոնավոր համաձայնության պահանջը: Թարգմանության մեջ չենք պահպանել այդ անհետևողականությունը, նայած հարմարության՝ կամ եզակի թիվն ենք կիրառել և կամ հոգնակին՝ այլևս ավելորդ համարելով ամեն անգամ այդ մասին նշում կատարել:

11. Բ տպագիրն այդ բառի փոխարեն ունի «հոգևոր»: Հետևում ենք Ա տպագրի «հոգւոց» ընթերցվածին, միայն թե ըստ հարմարության թարգմանելով եզակի թվով:

12. «Որոգայթ փառաց»-ում հեղինակի ազգանունը հիշատակվում է երկու տեղում՝ գրքի անվանաթերթում և Լախերգանքի վերջում: Տպագիրներն այն ներկայացնում են «Շահամիրեանց» գրությամբ, իսկ ձե-

ռագրերում հանդիպում են նաև «Շահմրեանց» (ծեռ. 4471) և «Շահմիրեանց» (ծեռ. 4477) ձևերը: 1818 թ. Վոլտերի ողբերգության հայերեն թարգմանության տպագրում նրանց ազգանունը հիշվում է «Շամրեան» գրությամբ:

## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Տպագիրները չունեն ոչ «Հատոր առաջին» նշումը և ոչ էլ «Ներածություն» անվանումը: «Հատոր առաջին» համարակալումն ունի Ներածության միակ գրչագիր օրինակը՝ Մաշտոցյան մատենադարանի թ. 4471 ձեռագիրը (էջ 9), որն, ինչպես նշվեց, արտագրված է «Որոգայթ փառաց»-ի տպագրվելուց շատ տարիներ առաջ, հավանաբար հեղինակային ինքնագրից: Ներածական մասն իբրև առաջին հատոր է դիտել նաև Մարգար Խոճենց Երևանցին՝ Ներածության սկզբում նշելով «Հատոր առաջներորդ» (ծեռ. 1477, էջ 3բ), իսկ Ներածության ավարտից հետո՝ «Վերջ առաջին հատորի» (նույն տեղում, էջ 29ա): Աշխատության այդ տեսական-պատմական բաժնի համար մենք պահպանել ենք ոչ միայն «Հատոր առաջին» ձեռագրական վկայությունը, այլև հարմար ենք գտել «Ներածություն» անվանումը, որն ընդունված է «Որոգայթ փառաց»-ին նվիրված ուսումնասիրություններում: Սեր մոտեցումն արդարացվում է մանավանդ այն հանգամանքով, որ երկու տպագիրներում էլ, ինչպես նաև Մատենադարանի թթ. 3101 և 1477 ձեռագրերում գրքի երկրորդ բաժինը ներկայացված է որպես «Հատոր երկրորդ»: Այդ հարաբերությամբ ևս, բնականաբար, Ներածությունը պետք է դիտել որպես առաջին հատոր:

2. Բնագիրն ունի «հօղ ընդ հօղոյ» (Բ տպ., էջ 9), այսինքն՝ օդ օդի հետ: Անտարակույս, հեղինակը նկատի ունի կլիման: Հարմար գտանք գործածել «օղեղանակ» բառը՝ իբրև օդի և կլիմայի նշանակ:

3. Նոյի ե տիեզերական ջրհեղեղի մասին ավանդությունը, ինչպես «Նոր տետրակում», այստեղ ևս հիշատակվում է որպես Արարչի հետ հաշտությամբ՝ մարդկության և աշխարհի երկրորդ ծնունդ՝ կապված արդար Նոյի, Արարատ լեռան, Լախիջևան գավառի ու Արարատյան աշխարհի հետ. «Եվ այստեղից առաջ եկավ աշխարհի երկրորդ ծնունդը, ու ինչպես որ սկզբում Ադամը եղավ արարածների նախահայրը և ծնողը ողջ աշխարհի, նույնպես էլ այս երանելի Նոյ նահապետն իր սերունդներով դարձավ երկրորդ նախահայր և ծնող երկրորդ աշխարհի», - ասված է «Նոր տետրակում»՝ հար և նման «Որոգայթ փառաց»-ին (տես «Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ», թարգմանությունը

գրաբար բնագրից և ծանոթագրությունները Պ.Խաչատրյանի, Ե., 1991, էջ 56-57: Այսուհետև՝ «Նոր տետրակ»):

4. Տես Նախերգանքի 8-րդ ծանոթագրությունը:

5. Անակի դավաճանության, Խոսրով արքայի սպանության, հայոց առաջին հայրապետ Գրիգոր Պարթևի տանջանքների ու Հայաստանում քրիստոնեության հաղթանակի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը «Ազաթանգեղա պատմությունը» և Խորենացու «Հայոց պատմությունն» են: Տասնհինգ տարվա խոշտանգումներ ասելով հեղինակը նկատի ունի Լուսավորչի տանջանքների ենթարկվելու և ապա Խոր վիրապի բանտում մնալու ժամանակամիջոցը:

6. **Օվկիանոս** - նկատի ունի Պարսից ծոցը:

7. «...մինչև այսօր մոտ չորս հարյուր տարվա մի ժամանակամիջոց է, ինչ Հայոց երկրից ու ազգից վերացել է թագավորությունը» - այս հաշվումով հիշատակությունն մի քանի անգամ հանդիպում է նաև Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակում» այսպես՝

«Մինչդեռ արդեն մոտ չորս հարյուր տարի է, ինչ որ գերության դատապարտված՝

Սենք դեգերում ենք միշտ տարտամ ու անորոշ» (էջ 9),

կամ՝

«Ու չորս հարյուր տարի է մոտ...» (էջ 49) և այլն (տես նաև «Նոր տետրակի» առաջին գլխի 7-րդ, չորրորդ գլխի 3-րդ և հինգերորդ գլխի 205-րդ ծանոթագրությունները):

Հակոբ Շահամիրյանը «Նոր տետրակում» Կիլիկյան Հայոց թագավորության վերացումը դնում է 1373 թ.: Այդ հաշվով մինչև 1773 թվականը, որը նշված է «Որոգայթ փառաց»-ի անվանաթերթի վրա, կազմում է 399 տարի, այսինքն՝ մոտ 400 տարի, ինչ վերացել էր հայոց թագավորությունը: Ինչպես իմացանք, «Որոգայթ փառաց»-ը լույս է տեսել 1787-1789 թթ. մեջ, հետևապես նրա անվանաթերթում նշված 1773 թվականն այն տարին է, երբ արդեն իսկ նախնական տեսքով գրվածավարտված էր գիրքը, և այն ավելի ուշ տպագրելով՝ ձեռագրի անվանաթերթը, սակայն, պահպանել են անփոփոխ, իր նախնական տեսքով: Միայն այդ հանգամանքով կարելի է արդարացնել «Որոգայթ փառաց»-ում ևս ասվածը՝ «մոտ չորս հարյուր տարվա» ժամանակամիջոցը՝ հայկական պետականությունից այս կողմ: Հակառակ դեպքում, եթե գիրքը, մասնավորապես՝ Ներածությունը, շարադրված լիներ 1773-ից ավելի ուշ, ապա Հակոբ Շահամիրյանի անվան տակ թաքնված հեղինակը կասեր՝ «ավելի քան չորս հարյուր տարվա մի ժամանակամիջոց է»:

8. Բ Կորնթ., ԺԳ, 1: Հմմտ. Բ օրենք, ԺԹ, 15. Եբր., Ժ, 28. Ա Տիմոթ., Ե, 19:

9. Նկատի ունի Ներածության նախորդ հինգ պարբերություններում ներկայացված առանձնաշնորհումները, որոնք հեղինակի ընկալմամբ՝ Աստուծոց են տրվել Հայաստանին և հայ ժողովրդին՝ իբրև բացառիկության պատիվ:

10. Տես Սաղմ., ԾԻԶ, 1: Սաղմոսում այսպես է ասված. «Եթե ոչ Տեր չի՞ն՝ գտուն, ի նանիր վաստակին չի՞ն՝ օղջ նորա»:

11. Նոյի և Հաբեթի սերունդների մեջ Արմեն չի հիշվում: Հավանաբար նկատի ունի Հայկի որդի Արամայակին, որը, ըստ Խորենացու, վեցերորդն է մեր նախնիների մեջ:

12. Բնագրի «որդեգրություն» բառը (Բ տպ., էջ 13), որը նույնությամբ պահպանեցինք, նախադասության մտքին այնքան էլ չի հարմարվում: Ս. Գրքից բերված վկայությունը ևս հուշում է, որ այդտեղ խոսքը հյուրասիրության մասին է, և, թերևս, սպասելի էր «հիւրընկալութիւն» կամ սրան հոմանիշ որևէ բառի կիրառությունը:

13. Յովհ., Զ, 37:

14. Բնագրում «Վահես», ապա և «Վահես» գրությամբ է: Երկու դեպքում էլ պետք է լինի Վահե (հմմտ. «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 86):

15. Հաբեթի ու նրա հաջորդներ Հայկյանների, ապա և Արշակունիների ու Բագրատունիների գահակալության տարիների քանակը հեղինակը ներկայացնում է ըստ «Նոր տետրակի» (կան աննշան տարբերություններ). տես վերջինիս էջ 67 (ասվում է, որ Հայկից մինչև Արշակունիներ կազմում է 2010 տարի), էջ 88 (ասվում է. «Արշակունյաց թագավորության սկզբից մինչև նրա վերացումը կազմում է 525 տարի») և էջ 92 (նշվում է, որ «վերացավ Բագրատունյաց թագավորությունը, որը տևեց 358 տարի: Սակայն այդ տարիներից 7 տարին մեր Հայոց երկիրն անիշխան է մնացել»):

16. Ի տարբերություն «Նոր տետրակի», որտեղ Կիլիկյան թագավորության վերացումը, ինչպես տեսանք, դրվում է 1773 թ. (ծիշը՝ 1375թ. ապրիլ), այստեղ նշվում է 1381 թվականը, որը հակասության մեջ է մինչ այդ ասվածի հետ, թե հայկական թագավորության անկումից անցել է մոտ 400 տարի (տես Ներածության 9-րդ ծանոթագրությունը): Ընդունելի չէ նաև այն տեղեկությունը, թե Կիլիկիայում Ռուբինյանները և նրանց հաջորդները թագավորել են 220 տարի: Եթե հաշվի ենք առնում, որ այնտեղ հայոց առաջին արքան Լևոն Երկրորդն էր, ապա նրա թագավորության առաջին տարուց (1198 թ.) մինչև Լևոն Վեցերորդի գահից զրկվելն ու գերվելը կազմում է 177 տարի (և կամ իր տվյալներով՝ 183 տարի):

17. Հայկից սկսած մինչև Լևոն Վերջին Լուսինյան Հայաստանում իշխած հայոց թագավորների, նախարարների ու մարզպանների քանակը

հեղինակը ներկայացնում է ըստ «Նոր տետրակի» հինգերորդ գլխի, որտեղ նրանք հաջորդաբար համարակալված են ճիշտ այդքան՝ ԱճԻԴ (1-124):

18. Անշուշտ, Խորենացու պատմության մեջ Օրբելյանների վերաբերյալ խոսք չկա: Թերևս ճշմարտությունից հեռու չէ այն կարծիքը, որ Օրբելյանների թե հայկական և թե վրացական ճյուղերը ծագում են Մամիկոնյաններից: Հայ Օրբելյանները պատմության անդաստանում հանդես եկան և ակնառու դեր խաղացին 12-րդ դարից սկսած, և Խորենացին չէր կարող գրել նրանց մասին:

19. Հմմտ. Առակք, Թ, 1:

20. Հեղինակն արդեն երկրորդ անգամ (առաջինի վերաբերյալ տես Նախերգանքի 4-րդ ծանոթագրությունը) հուշում է, որ իր աշխատությունը ոչ թե մտացածին մի բան է, կյանքի կոչված ինքնածին ցանկությամբ՝ սոսկ իր մտքի գիտությունից, այլ արդյունք է իր կյանքի ընթացքում զանազան ազգերի մեջ տեսածի: Այդ նշանակում է, որ հեղինակն աշխարհ տեսած մարդ է, հնարավորություն է ունեցել շրջագայելու (Եվրոպայում լինելու) և լուսավոր ազգերի կյանքից ու «բարի գործելակերպ ունեցող» նրանց կառավարություններից շատ բան սովորելու: Տիրապետել է և լեզուների, անկասկած քաջածանոթ է եղել անգլերենին, ընթերցել է օտարալեզու գրականություն, և եթե իր կրթության պակասի մասին է խոսում, դա վերաբերում է հայալեզու ուսումնառությանը:

21. **Անոթն ընտրության** (ընտիր անոթ) - քրիստոնեական գրականության մեջ այդպես են կոչել Պողոս առաքյալին՝ նրան դիտելով որպես աստվածային գաղափարների ծայնափող: Առաքյալից բերված վկայությունը նրա Ա Կորնթացվոց թղթից է (Ա, 6):

22. Բ Կորնթ., ԺԳ, 1. Եբր., Ժ, 28. Ա Տիմոթ., Ե, 19:

23. Ծննդ., Բ, 17. «Յորում աւուր ուտիցեք ի նմանէ՝ մահու մեռանիցիք»:

24. Ծննդ., Ա, 22, 28. Ը, 17. Թ, 1, 7:

25. Ծննդ., Բ, 17:

26. Սաղմ., ԳԲ, 10:

27. **Քանքար** - տաղանդ. հին աշխարհում, մասնավորապես եբրայեցիների մոտ, դրամական միավոր և կշռաչափ: Տարբեր ժամանակներում արժեքը տատանվել է: Եբրայական քանքարը հավասար է եղել 20 կգ 400 գրամի:

28. Սաղմ., ԽԸ, 13, 21:

29. Տես Սաղմ., ԶԹ, 10:

30. Ղուկ., ԺԲ, 33: Հմմտ. Մատթ., Զ, 20:

31. Ղուկ., ԺԶ, 10:

32. Ղուկ., ԺԶ, 8:

33. Ժող., Ա, 2: Ժողովող կոչվում է ինչպես Սողոմոն Իմաստունը, այնպես էլ նրա հեղինակությունը համարվող «Բանք ժողովողին» գիրքը Հին կտակարանում:

34. Հմմտ. Գաղատ., Զ, 10:

35. Տես ծանոթ. 11:

36. Հմմտ. Սաղմոսի հետևյալ նախադասության հետ. «Ի սանձս և ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա» (ԼԱ, 9):

37. Այստեղից մինչև «փորձառությամբ» բառը ներառյալ, 5-6 տողի չափ, բնագիրը հստակ չի ձևակերպված, որոշ կապակցություններ եթե չասենք՝ չեն հասկացվում, ապա թարգմանական համարժեքների չեն վերածվում (տես Բ տպ., էջ 38. «...և զանազան փորձառութիւն... փորձառութեամբ»), այնպես որ այդ հատվածի թարգմանությունը տրվում է խիստ մոտավոր:

38. Հեղինակի այդ բուռն ցանկությունը՝ անմնացորդ ծառայել ազգին, իր կարելիությունները նվիրաբերել նրա բարօրությանը, համահունչ է Մալակյա թերակղզու համանուն քաղաքի իր կալվածքում թաղված Հակոբ Շահամիրյանի տապանագրի հետևյալ տողերին.

«Ողջոյն ընդ քեզ, դամբարանիս տառն ընթերցող,

Տուր ինձ լուրն ազատութեան ազգին իմոյ, որ եմ տենչօղ,

Եթե յարեաւ ի մեջ ոմն մեզ փրկիչ և կառավարող,

Ընդ որ յաշխարհի յաւետ էի յոյժ ցանկացող»

(տես **Թեոդիկ**, Ամենուն տարեցույց, քսաներորդ տարի, Վենետիկ, 1926, էջ 630):

39. Հմմտ. Ա Կորնթ., Ա, 6:

40. Հմմտ. Մատթ., է, 24. Ղուկ., Զ, 48:

41. Առակք, Թ, 1:

42. Բնագիրն ունի այդպես՝ «դատախազ սպասաւոր» (Բ տպ., էջ 40): Այստեղ «դատախազ» բառն օգտագործված է իր սովորական իմաստով, այն է՝ ամբաստանող, մեղադրող նշանակությամբ (տես «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 234, «դատախազ» բառի բացատրությունը) և ընկալելի է որպես իրավական-դատական ասպարեզի պաշտոնյա, համապատասխան այդ եզրի ժամանակակից իմաստին (տես և 74-րդ ծանոթությունը): Սակայն հատկապես գրքի երկրորդ հատորում այն կիրառված է այլ նշանակությամբ՝ իբրև ամբաստանյալ, մեղադրյալ, նաև՝ հանդիմանող, և կապ չունի դատախարակական ոլորտի հետ, չի նշանակում այդ ասպարեզի պաշտոնյա:

Շարունակության մեջ «ձեր տան ու որդիների վրա, ինչպես և ձեր տան կարիքների համար ծախսարարին» (բնագրում՝ «ծախող ի վերայ

տան և որդուց և ի վերայ հարկաւորութեան տան ձերոյ», Բ տպ., էջ 40-41) կապակցության իրավական արտահայտությունը տես երկրորդ հատորի 345-րդ գլխում:

43. Մատթ., Ե, 36:

44. **Դարիոս** - այս անունը «Որոգայթ փառաց»-ի տպագիրներում հանդես է գալիս «Դրիոս» ձևով (Բ տպ., էջ 47), որ աղավաղում է, ինչպես դա հաստատվում է Մաշտոցյան մատենադարանի թ. 4471 ձեռագրով (էջ 59): Հեղինակը նկատի ունի Իրանում Աքեմենյան դինաստիայի նշանավոր գահակալ Դարեհ Ա-ին (իշխել է մ.թ.ա. 522-486 թթ.):

45. Հմմտ. Սաղմ., ԼԶ, 36:

46. Բ տպագրում բառը սխալագրությամբ է՝ «սաքսս» (էջ 49), որ, անշուշտ, պետք է լիներ «մաքսս», ինչպես և թարգմանել ենք՝ հետևելով Ա մկագրին: Թ. 4471 ձեռագրում ևս բառն աղճատված է, հանդես է գալիս «մարքս» գրությամբ (էջ 61): Խնդրո առարկա բառը պարունակող կապակցությունը կրկնվում է գրքի մի այլ էջում ևս, որտեղ «մաքսս» գրությամբ է (տես Բ տպ., էջ 63): Մաքսի և հարկային այլ եզրերի մասին տես երկրորդ հատորի 6-րդ ծանոթագրությունը:

47. Հմմտ. Մատթ., ԻԳ, 11:

48. Նկատի ունի հայկական թագավորական դինաստիաները՝ Վաղարշակով սկսվող Արշակունիներից մինչև Ռուբինյան իշխաններն ու թագավորները Կիլիկիայում:

49. Բնագիրն ունի «ծի ի տան չափառի պատրաստի» (Բ տպ., էջ 55): Նկատի ունի փոստակայանի ձիերին: Այդպես է հասկացել նաև Մարգար Խոճենցը, որը նշված կապակցության փոխարեն տվել է նրա թարգմանությունը՝ «ի տան սուրհանդակաց» (ծեռ. 1477, էջ 12բ):

50. Թե տպագիրները (Բ տպ., էջ 57) և թե թ. 4471 ձեռագիրը (էջ 72) ունեն այդպես՝ «դեղկ»: Ենթադրելի է, որ հեղինակը, «դեղկ մի փոքրիկ» ասելով, նկատի է ունեցել թույնի (դեղկ) չնչին քանակությունը, և բառի ճիշտ գրության ձևն էլ հեղինակային նախնական օրինակում եղած պետք է լիներ «դեղիկ» կամ «դեղուկ», բայց մենք ձեռնպահ մնացինք ուղղելուց: Մարգար Խոճենցի ձեռագիրը «դեղկ մի փոքրիկ» արտահայտության փոխարեն ունի այնպես, ինչպես մենք ենք ընկալել՝ «թոյն մի սակաւ» (ծեռ. 1477, էջ 13ա):

51. Տպագիրներում (Բ տպ., էջ 60) և թ. 4471 ձեռագրում (էջ 75) բառը սխալագրությամբ է՝ «երևանցութիւն» որ, հավանաբար, պետք է լիներ «իրերանցութիւն» (այսինքն՝ իրարանցում), չնայած «երևանցութիւն ընդ միմեանց» կապակցության փոխարեն Մարգար Խոճենցի ձեռագիրն ունի հետևյալը՝ «նախանձ ընդ միմեանս» (ծեռ. 1477, էջ 13բ), որը կարծես թե շեղում է «Որոգայթ փառաց»-ի բնագրից:

52. Տպագիրներում՝ «հատանելով վճիռ» (Բ տպ., էջ 62): Թ. 4471 ձեռագիրը դրա փոխարեն ունի «յայտնելով վճիռ» (էջ 78): Հետևել ենք տպագիրներին:

53. Այդ բառի դիմաց տպագիրները (Բ տպ., էջ 62) և թ. 4471 ձեռագիրն (էջ 78) ունեն «ճշգոյողաց», որը որևէ բառարանում չի հանդիպում: Մարգար Խոճենցի ձեռագիրը «պարփակեսցի բերանս ճշգոյողաց» կապակցության փոխարեն ունի՝ «փակեսցի գբերանս դժմէից» (ծեռ. 1477, էջ 14ա): Կարծում ենք, որ «ճշգոյողաց» ընթերցվածը եթե «դժգոհողաց» բառածևի աղավաղ գրությունը չէ, ապա կարելի է ենթադրել, որ մեզ անծանոթ բառ է, և հավանաբար գալիս է Նոր Ջուղայի և հնդկահայոց բարբառից: Մենք ընկալեցինք բամբասելու, բարբաջելու, զրաբանելու, շաղփաղփելու իմաստով: Ճշգոյողներ ասելով հեղինակը նկատի է ունեցել հայ ժողովրդին բամբասող օտարներին:

Ինչպե՞ս կարող է հայ ժողովուրդը փրկվել նվաստությունից. հեղինակի պատասխանը շատ որոշակի է՝ ապավինելով ճշմարիտ օրենքներին, ենթարկվելով ազգովին ընդունված Հայոց կարգադրությանը, արթնացնելով ու կյանքի կոչելով հայ ժողովրդի նիրհած կարողությունները և ընթանալով լուսավոր ու առաջադեմ ազգերի ուղիով: Հայ ժողովրդին խեղ հայացքով նայող և նրան ամեն կերպ նվաստացնող օտարներն այդ դեպքում «խցեն բերանս իւրեանց ի ծաղրաբանութեն վասն մեր և մի գտանիցեն ճանապարհս ուղիղս՝ մուծանել նենգաւոր և վրդովիչք անծինք իւրեանց ըստ նմանութեան գայլոյ արաբացւոյ ի մէջ անմեղ խաշանց և գառանց Հայոց, որպէս ի ժամանակս անցեալ, և այժմոյս» (Բ տպ., էջ 50): «Որոգայթ փառաց»-ի օրինակ հեղինակը ավելի քան երկու հարյուր տարվա իր հեռվից կարծես կանխատեսել և զգուշացնում է նաև մեզ, մեր օրերի համար, երբ Հայաստանի Հանրապետությունում վիտում են օտարամուտ աղանդներն ու հերծվածները:

Ազգային արժանապատվության ոգով «Որոգայթ փառաց»-ը հարազատ է Խ.Արուսյանի «Վերք Հայաստանի»-ին: Արուսյան հայրենասերի ցավը գալիս էր նաև հայ ժողովրդին խորապես չճանաչողներից ու նրա մասին անտեղի բամբասողներից:

54. Ասույթի արժեք ունեցող գրաբարյան այդ երկու խոսքի աղբյուրն էլ Ս.Գիրքն է (Ելք, ԻԱ, 21. Ղևտ., ԻԴ, 20. Մատթ., Ե, 38): Նշանակում են աչքի դիմաց աչքը հանել և ատամի դիմաց՝ ատամը, այսինքն՝ վրիժառու լինել կատարված հանցանքի համար:

55. **Քիլա** (պարսկ.) - ցորենի կամ գարու չափ, որը հավասար է մեկ փոփ:

56. Գրքի երկրորդ հատորում, բուն Հայոց կարգադրության մեջ, սահմանվում է երկու փոխանորդ ընտրել ոչ թե 10 հազար, այլ 12 հազար տնից (տես 14-րդ գլուխը):

57. Մատթ., ԻԳ, 11: Հմմտ. Ղուկ., ԻԲ, 27:

58. «Սահմանով» բառի փոխարեն Բ տպագիրն ունի «հասմանաւ» վրիպակ ընթերցվածք:

59. Մատթ., ԺԶ, 8:

60. Յովհ., Ա, 12:

61. Բերված վկայությունը՝ «պատիւ ըստ արժանեաց» (Բ տպ., էջ 70) մեզ չհաջողվեց գտնել Պողոս առաքյալի թղթերում: Թերևս մեջբերումը կատարված է փոփոխումով: Հավանաբար նկատի ունի «Առ Տիմոթեոս Ա» թղթի հետևյալ արտահայտությունը՝ «պատուի արժանի համարեսցին» (Ա, 1):

62. Հմմտ. Սաղմ., ԶԹ, 10. «Եւ թիւ աւուրց ամաց մերոց ի նոսա եօթանասուն ամ»:

63. Բնագրում հաճախակի «ի» նախդիրով և «մէջ» հայցականով տեղի պարագան հանդես է գալիս «ի մէջ» սխալ գրությամբ, որը «մէջ» դերանվան բացառական հոլովածն չպետք է ընկալել: Այսուհետև ևս հանդիպող այդ սխալագրությունը թարգմանում ենք «մէջ» բառով՝ ավելորդ համարելով այդ մասին ծանոթագրել:

64. Հմմտ. Սաղմ., ԵԽ, 4: Տպագիրներում մեջբերումը սխալով է, ունի «ըստ պատճառ մեղաց» (Բ տպ., էջ 73) փոխանակ «զպատճառ մեղաց», ինչպես Ս.Գրքում է: Թ. 4471 ձեռագիրը տալիս է ճիշտ ընթերցվածք (էջ 92): Նաև սաղմոսում նախադասության շարունակությունը հոգնակի է («ընդ մարդս, որ գործեն զանօրէնութիւն»), իսկ «Որոգայթ փառաց»-ում, թե տպագիրներում և թե ձեռագրում, փոխված է եզակի թվով:

65. «Խողխողվելով» բառի դիմաց թե տպագիրները (Բ տպ., էջ 74) և թե թ. 4471 ձեռագիրն (էջ 93) ունեն «խորովեալ», որ իմաստով չի հարմարվում նախադասությանը: Դա նկատել է նաև նշված ձեռագրի գրիչը (թե՞ մեկ ուրիշը), որն այդ բառի դիմաց, ստորին լուսանցքում, գրել է «խողխողեալ» (այսինքն՝ «խողխողեալ»), որին և հետևել ենք:

66. Բ տպ. ունի «և դաւաճանութեանէ», իսկ Ա տպագիրը՝ «ի դաւաճանութեանէ»: Հետևել ենք վերջինին:

67. Ըստ հռոմեական ավանդության Հռոմուլոսը եղել է Հռոմի հիմնադիրը և առաջին թագավորը (մ.թ.ա. 754/753 - 717/716 թթ.): Հռոմուլոսն ու իր երկվորյակ եղբայր Ռեմուսը (Հռեմոս), համաձայն հռոմեացիների պատկերացման, զավակներն են եղել քրմուհի Հեռա Սիլվիայի և Մարս աստծու: Բռնակալ արքա Ամուլիոսը հրամայել է Տիբեր գետում խեղդել գահի օրինական ժառանգորդներ երկվորյակ եղբայրներին, սակայն նրանք փրկվել են, սնվել գայլի կաթով և դաստիարակվել մի հովվի մոտ: Չափահաս դառնալով՝ նրանք վրեժ են լուծել Ամուլիոսից, ապա հիմնել Հռոմ քաղաքը, որը կոչել են Հռոմուլոսի անունով: Հռոմու-

լոսին են վերագրվում հռոմեական ծերակույտի և բանակի ստեղծումը, քաղաքացիների՝ պատրիկների ու պլեբեյների բաժանումը:

68. Անծի ազատության և սեփականության անձեռնմխելիության, ունեցվածքի նկատմամբ տեր լինելու մեծբրիտանական ժողովրդի իրավունքի մասին հիշատակումը վկայում է, որ հեղինակը ծանոթ է եղել բրիտանական օրենքներին, ի թիվս որոնց և՛ հավանորեն Մեծ Խարտիային:

69. Այստեղ, ինչպես տեսնում ենք, Հռոմի հիմնադիր եղբայրների անունները հիշատակվում են ոչ այնպես, ինչպես առաջին դեպքում (տես 67-րդ ծանոթագրությունը):

70. Հնում հրամենք է կոչվել նախերեկոյան ճաշիկը, հատկապես այն կերակուրը, որ տրվել է արևի մայր մտնելուց առաջ: Հմմտ. առյուծի, գայլի և աղվեսի մասին հայ միջնադարյան առակի հետ, ուր ասված է. «...խոյր քեզ՝ ճաշու, մաքիդ՝ հրամենք և գառդ՝ ընթրիս» (տես Ն.Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս.Պետերբուրգ, 1894, էջ 54), որտեղ հրամենքը հաջորդում է կեսօրյա ճաշին և նախորդում ընթրիքին: Սակայն «Որոգայթ փառաց»-ում նկատի ունի առավոտյան նախաճաշը:

71. **Կամպիթուլ** - նկատի ունի Կապիտոլիումը: Բլուր հին Հռոմում և պաշտամունքային վայր՝ Կապիտոլիական անվանված տաճարով՝ որտեղ հաճախ գումարվել են սենատի նիստերը, իսկ նրա առջևի հրապարակում՝ ժողովրդական հավաքներ: Հռոմեական Կապիտոլիումը մինչև օրս կիսավեր վիճակում պահպանվում է:

72. Թե՛ տպագիրները և թե՛ թ. 4471 ձեռագիրն այդ բառի դիմաց ունեն «զմբռել»: Այս բառը որևէ բառարանում մեզ չհաջողվեց գտնել: Հավանորեն գալիս է Նոր Զուղայի հայոց բարբառից: Թարգմանել ենք նեթադրաբար:

73. Այդ նախադասության վերջին մասը «բացին» բառից սկսած, բնագրում այսպես է. «... բացին փականս օրինաց, որում փակիալ կայր ի հիմանէ, և արգելէր բնական ցանկութիւն իւրաքանչիւր սրտից, յատկապէս անձանց, և թոյլ ետուն, զի բնութիւն կայսեր ջանացէ ի կամս իւր» (Բ տպ., էջ 88): Միտքը հասկանալի է, բայց թարգմանությունը չստացվեց այնպես, որ բառային-շարահյուսական առումով ևս հավատարմորեն համապատասխան դառնար բնագրին:

74. Բնագրում՝ «դատախազ» (Բ տպ., էջ 89), որն օգտագործված է ամբաստանյալի, մեղադրյալի իմաստով (տես Ներածության 42-րդ ծանոթագրությունը):

75. Այդտեղ «վարպետ» բառը պետք է ընկալել վարդապետի, գիտնականի, իմաստուն ուսուցչի առումով:

76. Բ Կորնթ., ԺԳ, 1. Եբր., Ժ, 28. Ա Տիմոթ., Ե, 19:

77. Հմտ. **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ.Արեղեան, Ս.Յարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք երկրորդ, Լ-ԼԴ գլուխներ:

78. Տես Եւսեբիոսի 3-րդ ծանոթագրութիւնը:

79. Մատթ., ժԵ. 14. հմտ. Ղուկ., 2, 39:

80. Ծուլութիւնն իբրև պատճառ հայ կյանքի հետամնացության և ազգային անկախության կորստի՝ նախ և առաջ քննության խնդիր է դարձել «Նոր տետրակում», որի գլուխներից հատկապես առաջինը նվիրված է ծուլութիւնից ազգի երիտասարդ սերնդի արթնացմանը:

81. Արդեն երկրորդ անգամ հեղինակը սրտի ցավով ու հայի արժանապատւության բարձր զգացումով ընթերցողին հիշեցնում է, թե ի՞նչ ստորացուցիչ անունով էին օտարները կանչում հայ մարդուն՝ վայրագորեն ոտնահարելով նրա մարդկային, ազգային ու քաղաքացիական իրավունքը: Ինքը խուսափում է հիշեցնել այդ վիրավորական մակա-նունը. բայց հավանաբար նկատի ունի «գյավուր» (անհավատ) բառը, որով մահնեղականներն անվանում ու վիրավորանք էին հասցնում հային: Հակոբ Շահամիրյանի տպարանում լույս տեսած Հանուեի «Պատմագրութիւն վարուց և գործոց Նաղըր շահ թագաւորին Պարսից» գրքի թարգմանության վերջում կցված հիշատակարանի հեղինակը (ամենայն հավանականութամբ՝ Եղիազար Շահամիրյանը), կարծես նպատակ է ունեցել մեզ հաղորդելու «Որոգայթ փառաց»-ի՝ խնդրո առարկա հատվածում չասված բառերը: Նա գրել է. «...փոխանակ քաղցր և արժանաւոր պատվուն առ ի լսելոյ զանուն մեր՝ անդրադարձն լսենք ի տիրապետողացէ մերմէ (**դինսուզ, գաւուռ**), որ զայս անուամբ արժանի համարեցան զմեզ կոչել այսօր» (տես **Ն.Ոսկանյան** և այլք, նշված Մատենագիտութիւնը, էջ 526բ):

82. Հմտ. Մատթ., Ե, 34. «Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ»:

83. Բ տպագիրը «ոսկին քոյ» բառերից հետո բաց է թողել «որ» հարբերականը (էջ 102): Թարգմանության մեջ հաշվի ենք առել՝ հետևելով Ա տպագրին (էջ 76) և թ. 4471 ձեռագրին (էջ 131):

84. Բնագրի «ուսանի **արվեստս** ընդ վարպետ իմաստնոյ» կապակցութիւնը, ինչպես և այլ դեպքերում (տես Ներածության 75-րդ ծանոթագրութիւնը), թարգմանեցինք «իմաստուն վարպետից արվեստներ և գիտութիւններ է սովորում»՝ հաշվի առնելով, որ «արիեստս» բառը տվյալ դեպքում ոչ միայն արվեստներ (նաև՝ արիեստներ) է նշանակում, այլև գիտութիւններ, մանավանդ որ սովորեցնողն ուսուցիչ-գիտնականն է (վարպետ-վարդապետը):

85. Տպագիրներում «թաղեալ մէջ» բառերից հետո անգգուշաբար բաց է թողնված «երկրի» ընթերցվածը (տես Ա տպ., էջ 77, Բ տպ., էջ 102): Հետևել ենք թ. 4471 ձեռագրին (էջ 134)՝ ըստ նրա վերականգնե-

լով «երկրի» բառը և թարգմանելով «թաղելով հողի մէջ»:

86. Թերևս համեմատելի է Մատթ., Է, 12 համարի հետ. «Չամենայն, զոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպես և դուք արարէք նոցա»:

87. Բ տպագիրն ունի «ամրացաւ» (էջ 104). Ա տպագրում (էջ 78) և թ. 4471 ձեռագրում (էջ 134) բառը ճիշտ գրութեամբ է՝ «ամրոցաւ»:

88. Անշուշտ, «իշխան» բառը, ինչպես բազմիցս այլ դեպքերում, այդտեղ գործածված է պետության իշխանավորի՝ պաշտոնյայի նշանակութեամբ: Հաշվի առնելով բառի կիրառական այդ նշանակութիւնը՝ նպատակահարմար գտանք հաճախ այն թարգմանել «իշխանավոր» հոմանիշով:

89. Տպագիրներն «իմն է» բառերի փոխարեն ունեն «իմմէ» (Բ տպ., էջ 106), որը չի կարելի շփոթել «իմ» ստացական դերանվան բացառական հոլովածնի («իմմէ») հետ, պետք է ընկալել որպես «իմ է» կապակցութիւն, ինչպես ունի թ. 4471 ձեռագիրը (էջ 136):

90. Անհասկանալի է, թե հեղինակն իմաստային ինչ տարբերակումով է իրար կողքի թվարկումով գործածել «գործ» և «աշխատանք» հոմանիշները: Թերևս առաջինը պաշտոնի իմաստ ունի:

91. Հմտ. Յովհ., 2, 37:

92. Առ Եբր., ԺԲ, 6. Յայտ., Գ, 19:

93. Նկատի ունի Նոր կտակարանում անառակ որդու առակը. տես Ղուկ., ժԵ, 11-32:

94. Ղուկ., ԺԶ, 8:

95. Տպագիրներն այդ բառն ունեն «կապել» գրութեամբ (Բ տպ., էջ 110), թ. 4471 ձեռագրում բայի անցյալ դերբայն է՝ «կապեալ» (էջ 142) որին և հետևել ենք:

96. Բնագիրն ունի՝ «իբր գործոյ սարդի» (Բ. տպ., էջ 112): Մարգար խոճենցը, որին հետևել ենք. հասկացել է այսպես. «իբրև ոստայն սարդի» (ձեռ. 1477, էջ 24ա):

97. Տպագիրներում բառանջատումը սխալ է՝ «որում անդամիցէ» (Ա տպ., էջ 85), «որում անդամից է» (Բ տպ., էջ 113): Թարգմանում ենք ըստ թ. 4471 ձեռագրի, որտեղ կապակցութիւնը ճիշտ է տրոհված՝ «որում անդամ իցէ» (էջ 146)

98. «Ստրատելատ» բառը փոխառութիւն է հունարենից (ստրատելատես) և նշանակում է զորավար, զորագլուխ, սպարապետ: Վարդան ստրատելատը 5-րդ դ. հայ առաջին ազատագրական շարժման առաջնորդ Վարդան Մամիկոնյանն է: Նրան ստրատելատ կոչումով է հիշատակում Մովսես Խորենացին («Պատմութիւն Հայոց», գիրք երրորդ, գլ. Ծ է և այլն):

99. Այդտեղից սկսած մինչև «օրերսների հողվածների գործառնու-



թյունը» (Բ տպագրում՝ «գործ բանիս օրինաց», էջ 115), բավական ծավալուն մի հատված, բնագրում ճապաղ շարադրանք ունի, որոշ դեպքերում հնարավորություն չտալով, որ ստույգ ընկալվի առանձին բառերի ու արտահայտությունների նշանակությունը: Մեր թարգմանությունն էլ, հատվածի բովանդակային կողմին հնարավորին չափ հարազատ լինելով հանդերձ, գուցե մանրամասների մեջ ունենա անճշտություններ:

100. Տպագիրներում այսպես է. «... անուանք զինուց և **գործիք** զինուորաց» (Բ տպ., էջ 114): Ընդգծված բառը քերականորեն չի համաձայնում կապակցությանը: Հետևում ենք թ. 4471 ձեռագրին, որը նրա փոխարեն ունի «գործին» (էջ 147), ինչպես պահանջում է շարահյուսական համաձայնությունը:

101. Տպագիրներն ունեն «հարկաւոր տեղին» (Բ տպ., էջ 115): Կապակցության սկզբում բաց է թողնված «ի» նախդիրը: Թ. 4471 ձեռագիրն ունի ճիշտ՝ «ի հարկաւոր տեղին» (էջ 148), որին և հետևում ենք:

102. «Արտաքին գիրք» ասելով հեղինակը նկատի ունի ոչ քրիստոնյա, հեթանոս հեղինակների գործերը, մասնավորապես հույն և լատին լեզուներով հեթանոսական գրականությունը:

103. Այդ բառի փոխարեն բնագիրն ունի «ի մի հողուն» (Բ տպ., էջ 115), որ հավանաբար աղճատումն է գրաբարյան «միահաղոյն» բառի: Այլ իմաստների հետ՝ «միահաղոյն» մակբայն ունի նաև բոլորը մեկտեղ, միասնաբար նշանակությունը, ինչպես և թարգմանել ենք:

104. Տպագիրները «միևնույն առարկային» բառակապակցության փոխարեն ունեն «ի իրի» (Բ տպ., էջ 115), մինչդեռ պետք է լիներ «ի մի իրի». ինչպես տալիս է թ. 4471 ձեռագիրը:

105. **Մելիք, ցրվոր, ռեխս** (կամ **ռես**), **քոխվա** (կամ **քեռֆիա**), **քալանթար**-բոլորն էլ նշանակում են գյուղապետ և գործածական են եղել միջնադարյան (հատկապես ուշմիջնադարյան), մասամբ՝ մոր շրջանի հայ իրականության մեջ, տարբեր գավառներում: «Ցրուոր» բառը բուն հայերեն է՝ «ցիր» արմատից և ըստ երևույթին նշանակել է հրամանները տեղ հասցնող, ինչպիսիք էին գյուղապետ-տանուտերը և, մանավանդ, գզիրը: Վերջին բառը ևս որոշ դեպքերում ունեցել է նաև գյուղապետի, տանուտերի երկրորդի նշանակություն (տես **Յ. Աճառյան**, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 226-227, «Գզիր» բառահոդվածը): Որքան էլ տարօրինակ է, «ցրվոր» բառը հայերեն բառարաններում չի հանդիպում:

106. **Քիլա, գիրի, թաղար, թիլանի** - ինչպես քիլան (տես Ներածության 55-րդ ծանոթ.), այնպես էլ թաղարը, հավանաբար նաև գիրին ու թիլանին, եղել են ընդդեմի համար ընդունված չափեր: Թաղար պարսկերեն նշանակում է հակ, բեռնապարկ, գրաստաբեռ և եղել է տարբեր

մեծության, 4-ից մինչև 30 փութ՝ նայած հացահատիկի տեսակին (տես В. Хинц, Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, Մոսկվա, 1970, էջ 60): Գիրիի և թիլանիի նշանակությունը մեզ չհաջողվեց բառարաններով պարզել:

107. **Իստիլ, լիտր, խարվար** - քաշի միավորներ: Իստիլը Ղուկաս Վանանդեցին բացատրում է այսպես. «Մին ըստիլն 33 մսղալ է և 2 դանկ է, որ լինի 50 դրհան» («Գանձ չափոց, կշռոց, թուօց և դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699, էջ 19): Եթե մեկ դրահմը (դրահման) հավասար է համարվել 4 գրամի, ապա 1 իստիլը կկազմի 200 գրամ: Լիտրը հավասար է եղել 180 դրահմայի (ըստ հայկական աղբյուրների՝ 12 ունկիի, այն է՝ 320,4 գրամի): Խարվար պարսկ. նշանակում է իշաբեռ և Իրանում ուշ միջնադարում հավասար է եղել 154 կգ:

108. **Ֆարսախ, մանգիլ, ասպարեզ, աղաջ** - երկարության չափեր: Ֆարսախը (հրասախ, փարսախ) հավասար է 6 կմ (տես В. Хинц, նշված աշխատությունը, էջ 72): Մանգիլի երկարությունը որոշակի չէ. այն գործածվել է որպես ճանապարհի երկարություն՝ իջևանից մինչև իջևան (տես **Ստ. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հատ. Գ, «Մանգիլ» բառահոդվածը): Ըստ «Որոգայթ փառաց»-ի հեղինակի իսկ բացատրության՝ փարսախը հավասար է 3000 քայլի (տես երկրորդ հատորի 106-րդ գլուխը): Ասպարեզը այն տարածությունն է (շուրջ երկու հազար սովորական քայլ), որ ձին անցնում է մեկ վազքով (հունարեն՝ ստադիոն, որը հավասար է 600 ոտնաչափի): Աղաջի նշանակությունը չհաջողվեց պարզել:

109. Հեղինակի այդ խոստովանությունը դարձյալ հարազատություն է բերում Աբովյանի երազանքին. «Երանի են սիսթին, որ մեկ ագնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անպիտան գրությունը դեմ գցի ու ինքը նորեն ենպես գրի մեր քաջ հայերի պատմությունը, որ լսող-կարդացող վառվի, բորբոքվի, զարմանա, հիանա...» (**Խ. Աբովյան**, Վերք Հայաստանի, Ե., 1981, էջ 310):

110. Բնագիրը թե՛ տպագիրներում (Բ տպ., էջ 120) և թե՛ թ. 4471 ձեռագրում (էջ 155) «մարդ» բառի փոխարեն ունի «ի մենջ», բայց խոսքը մոր արգանդում սաղմնավորված մարդու մասին է: Որպեսզի նախադասության շարունակության մեջ միտքը հստակ երևա, և երկիցս գործածված «նորա» բառի իմաստն էլ ընկալվի, «ի մենջ»-ը փոխարինեցինք «մարդ» բառի համապատասխան ձևով («մարդուն»):

111. Բնագրի «ինքնակալութիւն» բառը (Բ տպ., էջ 120) թարգմանեցինք «ինքնական ոգին»: Ի դեպ, նախադասության մեջ երկու անգամ գործածված «ինքնակալութիւն» բառի փոխարեն թ. 4471 ձեռագիրն ունի «ինքնականութիւն» (էջ 155):



թարյան հայր Սարգիս Թեոդորյանը հանդիպել է Մադրասի բանտում, «... որ յեօթն ամաց հետև կայր ի բանտի վան պարտուց», ինչպես գրում է Թեոդորյանը (**Ա.Թեոդորեան**, Պատմութիւն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց և Մխիթարեան աբբայից, հատ. Ա, Փարիզ, 1866. էջ299):

125. Այստեղ ասվածից դարձյալ այն եզրակացությանն ենք գալիս, որ հեղինակը երկրորդ հատորի շարադրմանը նոր է անցնելու (տես նախորդ 123-րդ ծանոթագրությունը): Բայց դա անպայման ուղղակիորեն ժամանակային իմաստով չպետք է ընկալել. քանի որ Ներածությունն աշխատության առաջին բաժինն է կազմում, հեղինակը կարող էր պատրաստի ունենալ երկրորդ հատորը, սակայն Ներածությունից նրա շարունակությունը հանդիսացող երկրորդ հատորին անցնելը ներկայացնել այնպես, թե այդ բաժինը նոր է շարադրելու, իբրև հրավերը ընթերցողին՝ կարդալու և ծանոթանալու նաև երկրորդ հատորին:

126. **Նախիջևան գավառից, որ աշխարհի հյուսիսային կողմից 42-րդ աստիճանի** վրա է - ոչ ճիշտ տեղեկություն: Նախիջևան գավառն ընկած է հյուսիսային կողմից 40 և 39-րդ աստիճանների միջև, ինչպես ներկայացված է նաև 1778թ. Վենետիկում Շահամիր Շահամիրյանի հրատարակած «Աշխարհացոյց Հայաստանեայց» քարտեզում (տես «Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ» գրքի քարտեզ-ներդիրը):

127. **Կորմանդել օվկիանոսի ափին, նավահանգիստ Մադրաս մայրաքաղաքում** - «Կորմանդել» անվանումը մեզ չհաջողվեց գտնել որևէ աղբյուրում: Հավանաբար նկատի ունի Հնդկական օվկիանոսը, ինչպես և թարգմանել ենք: «Ի դրանն» մենք ընկալեցինք նավահանգստի իմաստով, իսկ «մայրաքաղաք» բառը, որ թողեցինք անփոփոխ, պետք է ընկալել մեծ կամ գլխավոր քաղաքի առումով:

128. Այստեղից սկսած մինչև Ներածության վերջը՝ վեց պարբերություն կազմող ամբողջ հատվածը, թ. 4471 ձեռագիրը չունի: Վերջինիս գրիչը հայտնի չէ, ոչ էլ գրչության ստույգ ժամանակը: Ա.Հովհաննիսյանի համոզիչ բացատրությամբ ձեռագիրն ընդօրինակված պետք է լինի մինչև «Որոգայթ փառաց»-ի տպագրվելը, 1780-ական թթ. առաջ, ըստ երևույթին աշխատության բուն հեղինակային ինքնագրից, որտեղ բացակայել են՝ միայն գրքի Ա տպագրում և նրա արտատպության մեջ առկա նշված պարբերությունները: Ներածության ավարտի այդ հատվածը, որի բովանդակությունը մեծ մասամբ վերաբերում է 1770-ական թթ. վերջերի և 1780-ական թթ. պատմական իրողություններին, բնականաբար, գրել է ոչ թե Ներածության հեղինակ Հակոբ Շահամիրյանը (որը 1774թ. հուլիսին վախճանվել էր), այլ մեկ ուրիշը, հավանական է՝ հայր Շահամիր Շահամիրյանը, գուցեև Հակոբի կրտսեր եղբայր Եղիազարը, որն օժտված է եղել մտավոր կարողություններով և իր մահկա-

նացուն կնքել է նույնպես երիտասարդ տարիքում, 1787թ. (տես **Ա.Ք.Կոստանյան**, նշված հոդվածը, էջ 11-25):

129. Վրաստանին և վրաց ժողովրդին վերաբերող այս պարբերությունը համահունչ է այն համակրական ու հիացական վերաբերմունքին, որ արտահայտված է Հ.Շահամիրյանի «Նոր տետրակում»: Այստեղ կարդում ենք. «Թեև այն ժամանակ Բագրատունյաց տոհմից մեր թագավորությունը դադարեց, բայց ոչ իսպառ, ինչպես կարծում են ուրիշները: Չէ որ, ինչպես ոմանք հաստատում են, նույն տոհմից է և վրաց թագավորությունը, մանավանդ որ իրենք էլ պնդում են այդ: Եվ չէ որ մինչև այսօր նույն անվանակոչությունն է կրում նրանց արքան՝ քաջ Հերակլիոսը, որն արդարև արժանի է գովեստի ու վիպասանության: Աստուծոց խիստ երկյուղած և բարեպաշտ մի մարդ է Քրիստոսի խիզախ ու քաջ հաղթամարտիկ այս Հերակլիոս արքան, տաղանդավոր և իմաստուն, առաքինի և չափազանց հեզ, մանավանդ երախտավոր է հայ ազգի նկատմամբ: Միայն նրա համբավը վախեցնում ու սարսափ է ազդում թշնամիներին...» և այլն («Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ», էջ 94-95):

1780-1790-ական թթ. Շահամիր Շահամիրյանն աշխույժ կապի մեջ է եղել Հերակլ թագավորի (1720-1798) հետ, որը 1744 թվականից Կախեթիայի, իսկ 1762 թվականից Քարթլի-Կախեթիայի (Արևելյան Վրաստան) թագավորն էր: Հերակլի հետ ավելի վաղ ծանոթ է եղել Շահամիր Շահամիրյանի հայր Սուլթանունը, որը երիտասարդ Հերակլի բանակում մասնակցել է Նադիր շահի հնդկական արշավանքին: Չգտելով Վրաստանի միավորմանը՝ Հերակլը սերտ կապի մեջ էր էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոս Դուկաս Կարնեցու, Արցախի հայ մելիքների, Ռուսաստանում հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի և Շահամիր Շահամիրյանի հետ, որը նրան հսկայական դրամական օգնություն էր ցույց տալիս և մեծարժեք նվերներ ուղարկում: Ի պատասխան այդ օգնության՝ Հերակլը Շահամիրին 1786թ. շնորհել էր վրաց թավադի իշխանական տիտղոս, իսկ 1790թ. սեպտեմբերին հաստատուն թղթով Լոռի գավառն իր սահմաններով, Գիորգի արքայազնից վերցնելով, նվիրել էր Շահամիրին: Պատմական արժեքավոր վավերագիր է 1787թ. հոկտեմբերի 15-ին Շահամիրյանի գրած նամակը Հերակլին, որով նա իր ցանկություններն է արտահայտում վրաց արքային, խորհուրդներ տալիս հետևելու եվրոպական լուսավոր երկրների օրինակին, մասնավորապես իսպանական Գետրո Հինգերտրո թագավորին, որը հրաժարվել էր միապետի իր բարձր իշխանությունից և սահմանել օրենքներ, որոնց անխտիր ենթարկվելու էին բոլորը: Շահամիրյանը Հերակլին առաջարկում էր մարդուն ազատել ծառայական-ծորտական լծից և դարձնել օրենքի ծառա: Միաս-

նական ժողովրդից ընդունված օրենքներով՝ սահմանադրությամբ միայն կանոնահանա թագավորի անձը, բոլորը հավասար կլինեն օրենքի առաջ, կապահովվեն սեփականության իրավունքը և անձի ազատությունը, վերջ կդրվի կամայականությանն ու անօրինականությանը: Նամակում Շահամիրյանը խոսում է նաև «Որոգայթ փառաց»-ի մասին՝ նշելով, որ իր այդ աշխատությունը դեռևս չի համարձակվում տպագրել, քանի որ նրա մեջ առկա են լեզվական-ուղղագրական կարգի սխալներ, բայց, ինչպես նշվեց (տես Ներածության 124-րդ ծանոթագրությունը), ձեռագիր ընդօրինակությամբ մեկական օրինակ է ուղարկում Հերակլին և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցին (նամակի բնագիրը տես **Ս.Տեր-Ավետիսյան**, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 13, 1940, էջ 90-99):

Ինչ վերաբերում է Լոռի գավառին, Շահամիրյանը ցանկացել է, որ Ղարաբաղից իր ժողովրդով այնտեղ տեղափոխվի և ապրի Գյուլըստանի տերը՝ Մելիք Հովսեփի որդի Մելիք Աբովը, բայց Պավել Առաջին կայսեր հրամանով Լոռու տարածքը 1800 թ. անցնում է Վարանդայի տեր Մելիք Ջումշուդին: 1820-ական թթ. Շահամիրի միջնեկ որդի Հովհաննեսը և Հակոբ Շահամիրյանի որդի Նազարը դատի են տալիս՝ Լոռին իրենց վերադարձնելու, սակայն ցարական ատյանը կաշառվելով հարցը լուծում է հօգուտ Մելիք Ջումշուդի (տես նշված հոդվածը):

130. **Ղանդահարի Միրվեիս իշխանը** - հեղինակն իրականում նկատի ունի ոչ թե Միրվեիսին, այլ նրա որդի Մահմուդ զորագլխին, որը 1722թ. Աֆղանստանի Ղանդահար քաղաքից իր զորքով գալիս պաշարում է Իրանի մայրաքաղաքը՝ Սպահանը, շրջակա շատ գյուղերի բնակիչներին սրի քաշում, թալանում ու հրի ճարակ դարձնում շատ բնակավայրեր, սովի մատնում մայրաքաղաքի բնակչությանը, ապա գրավելով Սպահանը՝ դնում է ծանր հարկեր: Հաղթանակի հասած Միրվեիս Մահմուդի զորքը քանակով անհամեմատ ավելի փոքրաթիվ է եղել և վատ զինված, քան մայրաքաղաքում շրջափակման մեջ առնված պարսից ութսուն հազարանոց բանակը: Այդ արշավանքին Հակոբ Շահամիրյանն անդրադարձել է իր «Նոր տետրակում» (տես «Նոր տետրակ», էջ 153-154):

131. Բնագրում՝ «արտախուրայգործն» (Բ տպ., էջ 137): Մարգար Խոճենց Երևանցին այդ բառը բացատրում է այսպես՝ «այսինքն՝ խալփախճին» (ձեռ. 1477, էջ 28բ): Թուրքերեն «խալփախչի» բառը նշանակում է «խալփախ կոչված գլխարկը շինող կամ ծախող» (**Հր. Աճառյան**, Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ, տես «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Գ, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 159): «Արտախուր» և «արտախուրակ» բառերն ունեցել են նաև թագի դրսի

կապի, ժապավենի, խույրի, փաթթոցի իմաստ: Մենք հարմար գտանք թարգմանել «գոպկագործ», չնայած կարելի է նաև այն ենթադրությունն անել, որ «արտախուրայգործն» բառով հեղինակը գուցե նկատի ունի «ղվբաշ» (կարմիր գլուխ) անվանումը (Նադիր շահը եղել է զղվբաշ Աֆշար ցեղից):

132. Նադիր շահը (1689-1747) 1726 թ. սկսած որպես զորահրամանատար ծառայության է անցել պարսից շահ Թահմազ Երկրորդի (1722-1732) մոտ՝ իրեն վերանվանելով Թահմազուլի խան: Այդ թվականից սկսած հաղթական պատերազմներ է մղել Պարսկաստանը նվաճած աֆղանների դեմ՝ օգտվելով ժողովրդական լայն խավերի աջակցությունից: Աֆղաններին հաղթելուց և երկրի սահմաններից դուրս մղելուց հետո հաջողությամբ մարտական գործողություններ է ծավալել Թուրքիայի դեմ, Իրանին վերադարձրել թուրքերի գրաված տարածքները (1730-1736 թթ.), այդ ընթացքում, 1732 թ., գահընկեց արել Թահմազ Երկրորդ շահին և Իրանի գահին բազմեցրել նրա որդուն՝ Աբբաս Երրորդին: 1736 թ. նա իրեն հռչակել է Պարսկաստանի շահ՝ Նադիր շահ անունով և իշխել մինչև իր մահը (1747 թ.):

133. **Բակտրիացիների ազգից Քարիմխանը** - խոսքը Արևմտյան և Հարավային Իրանում զենդ իրանալեզու ցեղի առաջնորդ Քերիմ խան Մոհամմեդի (1704/5-1779) մասին է, որը կարողացել է միավորել Իրանը (բացի Խորասանից) և իշխել որպես միահեծան վեբիլ (1760-1779 թթ.): Նշանավոր է իր շինարարական գործունեությամբ՝ Շիրազ քաղաքի կառույցներով, գյուղացիների օգտին վարած քաղաքականությամբ (հարկերի նվազեցում) և արհեստների ու առևտրի զարգացմանը նպաստելով: Բակտրիան պատմության մեջ հայտնի է դեռևս Ք. ծ. ա. առաջին հազարամյակից, հատկապես Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների շրջանից, երբ օգտվելով վերջիններիս թուլացումից՝ այդ հազարամյակի երրորդ դ. կեսերին հասավ անկախության՝ վերածվելով ինքնուրույն պետության: Տարածքով բռնել է Ամուդարիայի միջին և վերին հոսանքները:

134. Հեյդրալի (Հայդար Ալի) եղել է 18-րդ դ. երկրորդ կեսում անգլիական ագրեսիայի դեմ ծավալված հնդկական ազատագրական շարժման նշանավոր առաջնորդը: Որոշ ժամանակ հաջողությունների է հասել՝ անկախություն ձեռք բերելով Հարավային Հնդկաստանի մի ընդարձակ տարածության մեջ՝ Մանսուրում (Մայսուր, Մայսոր): Հեղինակն ըստ երևույթին նկատի ունի 1780-ական թթ. իրադարձությունները, երբ Հայդար Ալին հասել էր իր հզորության գագաթնակետին և նոր պատերազմ էր վերսկսել անգլիացիների դեմ: Այդ ժամանակ նրա զորքերը հասել էին ընդհուպ Մադրասի արվարձաններին:

Հայդար Ալու և նրա որդու և հաջորդի՝ Թիփու Սուլթանի վարած

պատերազմների մասին նույն ոգով պատմվում է նաև Հանուեի «Պատմագրութիւն վարուցն և գործոց Նաղըր շահ թագաւորին Պարսից» գրքի վերջաբանութեան (հիշատակարանի) մեջ, որ, ինչպես նշվեց, հավանորեն շարադրել է Եղիազար Շահամիրյանը, որն իր եղբոր մահվանից հետո վարում էր Հակոբի անունով հայտնի տպարանի աշխատանքները: Նշված գիրքը լույս է տեսել այդ տպարանում, 1780-1783 թթ., Պողոս Միրզայան Ամդեցու՝ անգլերենից կատարած թարգմանութեամբ: Նրա հիշատակարանում կարդում ենք. «...Մինչ մեր կայսր ի յայսպիսի տարակարծութեան յափշ[ե]լալ, եկն և եհաս ի վերայ աշխարհին Կոնսթանդուպոլիս (որոյ քաղաքաց մինն մեր բնակեալ ենք (խոսքը Մադրասի մասին է Պ. Խ.) գրաջամարտ զօրագլուխն անուանեալն Յեղարալի խան իշխանն Մանսուրայ բազում զօրօք և հեծելօք. թէ սկիսպ, թէ մեջ և թէ զամենայն արարս նորա՝ համանման քաջին շահ Նատիրի, արծակելով բազմաթիւ զօրօք և հեծելօք ի վերայ երկրին Կոնսթանդուպոլիս (հանգոյն քաջն շահ Նատիրին ի Հնդկս), ցիր և ցան առնելով զամենայն բնակիչք յաշխարհիս և փակելով զամենայն դրունս քաղաքաց ընդդէմ ազատութեանն բնակչաց՝ մերձ երիս ամ ժամանակաւ մինչև ցայսօր. և զի թպէտ զայս Յեղարալի խանս գտաւ զմահն իւր բնական ի եօթներորդ յաւուրն ամսոյ դեկտեմբերի յամի Տեառն 1782 ի գաւառն Չէթուր, բայց սակայն յաջորդէ գերեց որդին նորա Թիփու Սուլթան քաջ սպարապետն ի վերայ բանակի ի տեղի իւր իւրոյ, և ի սմանէ զոր ինչ արարս ելանիցէ առ յապայն՝ Տեառն Յասուուճոյ միայն է գիտելի» (տես **Ն. Ոսկանյան** և այլք, նշված Մատենագիտությունը, էջ 525 ք):

135. **Վաշինգտոն Ջորջ** (1732-1799) - ամերիկյան պետական և ռազմական գործիչ: ԱՄՆ-ի առաջին պրեզիդենտը (1789-1797): Եղել է խոշոր ստրկատիրոջ որդի, հորից ժառանգել ընդարձակ կալվածքներ: Դարձել է Օհայոյի ընկերության հողերի առք ու վաճառքի փայտեր: Յոթնամյա պատերազմի շրջանում (1756-1763 թթ.) գլխավորել է Վիրջինիայի զորքերը, ապա պաշտոնաթող եղել: 1776 թ. ընտրվել է Ֆիլադելֆիայի կոնգրեսի պատգամավոր, իսկ հաջորդ տարին նշանակվել Անգլիայի դեմ մարտնչող հյուսիսամերիկյան զաղութների բանակի գլխավոր հրամանատար՝ այդ պաշտոնում մնալով մինչև 1783 թ. և իր զորավարական տաղանդով նպաստելով ազատագրական բանակի հաղթանակին: 1787 թ. Վաշինգտոնի նախագահությամբ մշակվել է ԱՄՆ-ի սահմանադրությունը: «Որոգայթ փառաց»-ը նկատի ունի Վաշինգտոնի գործունեությունն անկախության պատերազմում հաղթանակին անմիջականորեն նախորդած շրջանում, մինչև 1783 թ.:

136. **Կարգադրության առաջին հոդվածը հիշեցնում է** (բնագրում՝ «կարգադրութեանն առաջին հատուրն մեր յիշեցեալ», Բ տպ., էջ 139)- այս հիշատակությունը թեև Ներածության վերջում 1780-

ական թթ. ավելացված մասում է, բայց, այնուամենայնիվ, իր հերթին խոսում է ի նպաստ այն բանի, որ «Որոգայթ փառաց»-ի երկրորդ հատորը եթե ոչ ամբողջապես, զոնե որոշ մասով գրված է եղել Ներածությունից ավելի վաղ, ապա թե ոչ հեղինակն ինչպես պետք է նախապես իմանար, թե բուն հայկական տարածքի՝ իբրև հայոց հայրենիքի մասին հոդվածը դեռևս չգրված հատորում նրա ո՛րեորդ հոդվածը կամ գլուխն էր կազմելու, մինչդեռ ինքը գիտե, որ դա երկրորդ հատորի առաջին հոդվածն է:

## **ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ**

### **ՆՇԱՎԱԿ**

#### **Կարգադրություն հայոց՝ Հայաստանյայց աշխարհի կառավարման համար**

1. **Նշավակ. Կարգադրություն հայոց** - «Նշավակ» բառը Շահամիրյանների նախասիրած բառերից է դեռ «Նոր տետրակից» սկսած: Նրանք այդ բառը գործածում են տարբեր իմաստներով՝ օրինակ, նախօրինակ, ավանդ, նպատակ, նշանակետ, օրենք, սահման, կարգ և օրենք և այլն: Գրքի երկրորդ հատորի համար իբրև խորագիր՝ այն կիրառված է կարգադրություն, սահմանադրություն իմաստով և հոմանիշ է «Կարգադրություն հայոց» անվանմանը: Այդպիսով, Նշավակը կամ Կարգադրություն հայոցը այն օրենքների համակարգն է, որոնք անբեկանելի որոգաթ են, թակարդ՝ կալանավորելու և դատելու հանցագործներին, որոնք պարտավոր կդառնան հատուցելու իրենց կատարած չար գործերի համար և կբժշկվեն իրենց տկարությունից ու չարությունից, իսկ նրանց ձեռքերն ու զգայարաններն անշարժ կդառնան նոր հանցանքներ գործելուց: Կարգադրության օրենքները պիտի խրախուսեն ու փոխհատուցում տան մարդկանց լավ գործերի համար: Հեղինակը «Նշաւակ» և «Կարգադրութիւն Հայոց» անվանումների նշանակությամբ գործածում է նաև «Հայաստանեայց օրենք», «Օրենք կարգադրութեան Հայոց», «Օրենք Հայոց» և պարզապես «Կարգադրութիւն» եզրերը: Ինչպես վերևում նշեցինք, գլուխները (հոդվածները) թե՛ Ա տպագրում և թե՛ երկրորդ հատորի բոլոր ձեռագրերում (թթ. 3101, 3102, 7868, 1477) համարակալված են արաբական թվանշաններով, իսկ Բ տպագրում դրանք փոխարինված են հայերեն տառերով՝ ըստ նրանց թվային նշանակության: Մենք հետևել ենք Ա տպագրին և ձեռագրերին: Թ. 1477 ձեռագրի գրիչ Մարգար Խոճենցը «գլուխ» բառի փոխարեն գործածել

է «կանոն» եզրը:

2. **Ալանաց դուռ** - հնուն հայկական աղբյուրներում այդպես էր կոչվում Դարիալի կիրճը:

3. **Կործկահայք աշխարհ** - Կործայք: Մեծ Հայքի վեցերորդ նահանգը (աշխարհ) և չորս բղեշխություններից մեկը Հայաստանի հարավում:

4. **Մամեստիա** (բնագրում՝ Մամաստիա) - քաղաք Դաշտային Կիլիկիայում, Ադանայից հյուսիս-արևելք, Ջահան գետի ափին: Անվանվում է նաև Մոպսուեստիա, Մսիս և այլն:

5. **Լենուպոնտոս** - հնուն գավառ Սև ծովի հարավային ափին, Պոնտոսում:

6. **Հարկ, մաքս, հաս, բաժ** - տնտեսական-հարկային եզրեր, որոնք հեղինակը հիշատակում է նաև Ներածության մեջ, ընդ որում նրանցից վերջինը՝ միշտ «բաժին» ձևով, ինչպես հանդիպում է և Ս. Գրքի հայերեն ընկալյալ բնագրում (Ծննդ. ԺԴ, 24 և այլն), բայց մենք հարմար գտանք թարգմանության մեջ «բաժ» ձևը գործածել: Այդ անվանումներին նվիրված արժեքավոր ուսումնասիրություն ունի Թ. Ավդալբեգյանը («Հաս, սակ ու բաժ», տես «Հայագիտական հետազոտություններ», Ե., 1969, էջ 362-413): Ըստ նրա դրանք բոլորն էլ մաքս ու հարկ են նշանակում, և անհնարին է միշտ որոշարկել ու միմյանցից տարբերել. օրինակ՝ ըստ պատմական-մատենագրական վկայությունների բաժ նշանակում է արքունի տուրք, հարկ, մաքս, որևէ բանի դիմաց տրվող վճար, գումար՝ իբրև գին: Հասը ևս նշանակում է տուրք, հարկ, բաժին, նաև ուղղակի հարկ, գլխահարկ, եկամտահարկ, բայց ոչ բնավ հողահարկ: Սակը ևս նշանակել է տուրք, հարկ, մաքս: Այդ եզրերի իմաստային-գործառական տարբերակման փորձ անողները (Ն.Ադոնց, Յ.Մանանդյան, Թ.Ավդալբեգյան) իրենց եզրակացություններով միմյանց համաձայն չեն:

7. Բնագիրն այդտեղ (նաև ուրիշ դեպքերում) «անհավատ» բառի փոխարեն ունի «անօրէն» (Բ տպ., էջ 144), որ նշանակում է ոչ միայն և ոչ այնքան առհասարակ անհավատ, որքան ոչ քրիստոնյա: Թարգմանության մեջ այդպես էլ պետք է «անհավատ» բառն ընկալել:

8. Բնագրի «ապաշխարողաց» բառը (Բ տպ., էջ 145), ինչպես այդ երևում է 386-րդ գլխից, վերաբերում է ոչ թե առհասարակ ապաշխարող կրոնավորների՝ վանականների դասին, այլ կրոնաստաններում ճգնական կյանքով ապրող միանձնուհիներին, այսինքն՝ կույսերին:

9. Այդ կապակցության դիմաց բնագիրն ունի «տացի պաշտօն» (Բ տպ., էջ 146): Ելնելով վերջինիս գրաբարյան իմաստից՝ պիտի թարգմանեինք «պաշտոնավարի», բայց ինչպես այս, այնպես էլ այլ գլուխներից (օրինակ՝ 15, 42, 45-րդ գլուխներ) երևում է, որ հեղինակն այդ

կապակցության յուրաքանչյուր բառ կիրառել է նրանց ուղղակի նշանակությամբ, ինչպես աշխարհաբարում է: Ուրեմն պաշտոն տալու մասին է խոսքը կամ այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակվելու վերաբերյալ հրաման տալու մասին:

10. Այստեղ և այսուհետև բոլոր «օրինակ»-ներում կլոր շրջանակները փոխարինում են համապատասխան ստորագրություններին: Դրանք պահպանել ենք այնպես, ինչպես գրքի տպագիրներում են:

11. Ներածության մեջ տասներկու հազար տան փոխարեն նշված է տասը հազար տուն («ամենայն բիւր տանէ», Բ տպ., էջ 64): Տես և Ներածության 56-րդ ծանոթագրությունը:

12. Բնագիրն այդ բառի փոխարեն ունի «կարեղութիւն» (այսինքն՝ «կարողութիւն»), որ նշանակում է զորություն, հնարավորություն, կարողություն, անշուշտ նաև՝ իշխանություն, իրավասություն: Ինչպես տեսանք, 13-րդ գլխում նույն իմաստն արտահայտելու համար գործածված է «իշխանութիւն» բառը: Ներկա դեպքում «կարողութեան» փոխարեն նպատակահարմար գտանք կիրառել «իրավասություն» բառը:

13. Տես Ներածության 2-րդ ծանոթագրությունը:

14. Բնագրում սխալագրությամբ է՝ «բծունեաց»:

15. Հեղինակը հրամանի կամ հրամանագրի իմաստով մերթ գործածում է «թուղթ», մերթ էլ «նամակ» բառերը: «Թուղթ պաշտօնի», «նամակ պաշտօնի», «նամակ պաշտօնատարութեան» անվանումներում նպատակահարմար գտանք «թուղթ» և «նամակ» բառերը թարգմանել «հրաման»:

16. «Նախարարի պաշտոնի համար» կապակցության դիմաց բնագիրն ունի «վասն նախարարութեան»:

17. Նախարարի պաշտոնի նշանակման հրամանի օրինակը 51-րդ գլուխն է:

18. «Նախարարի խորհրդակիցներ լինելու համար» - այդպես թարգմանեցինք բնագրի «վասն խորհրդակցութեան նախարարին» կապակցությունը:

19. Այդ պաշտոնավարության հրամանի օրինակը 59-րդ գլուխն է:

20. Բնագրի «ծայրագոյն դատաւորութիւն» անվանումը, որ վերաբերում է Հայաստանի գերագույն (բարձրագույն, կենտրոնական) դատարանին և ավելի բարձր է երկրի գլխավոր քաղաքներում («ի մէջ մայրաքաղաքաց») ստեղծվելիք թվով 60 դատարանների դատավորներից, հարմար գտանք թարգմանել «բարձրագույն դատավորություն» անվանումով:

21. Այդպես թարգմանեցինք «մայր դատաւոր» կոչումը, որ բնագրում հավասարապես գործածվում է ինչպես Հայաստանի բարձրա-

գույն դատարանի գլխավոր դատավորի, այնպես էլ գլխավոր քաղաքների 60 դատարանների գլխավոր դատավորների համար: Գլխավոր դատավորի նշանակությամբ գրքում կան նաև «պետ դատաւորի» և «պետ դատաւորութեան» անվանումները (տես 59 և 61-րդ գլուխները):

22. Նկատի ունի 59 և 61-րդ գլուխները:

23. Անշուշտ, նկատի ունի 60-րդ գլուխը («Օրինակ նամակի դպրութեան ատենաբանից»), որտեղ նույնպես նշված են Հայոց տունը, դատաստանի պալատը («ապարանք») և գաղտնի («ծածուկ») խորհրդարանը, որոնցում ի պաշտպանություն Հայոց օրենքի անսխալ ու արդար գործադրման՝ հանդես են գալու դպրությանը քաջածանոթ, լայն իմացության տեր և օրենքին հնուտ ատենաբանները:

24. Հիշվող երեք գույները՝ կարմիր, կապույտ և դեղին, նախնական ձևով խորհրդանշում են Հայաստանի Անկախ Հանրապետության (1918-1921 թթ.) և այժմյան Հայաստանի Հանրապետության պետական դրոշի գույները՝ կարմիրը, կապույտը և նարնջագույն-ծիրանեգույնը:

25. Օրինակ ասելով՝ այս դեպքում հեղինակը նկատի ունի 62-րդ գլուխը:

26. Նկատի ունի 63-րդ գլուխը:

27. Նկատի ունի 64-րդ գլուխը:

28. Նկատի ունի 65-73-րդ (թվով 9) գլուխները, որոնք թվարկվող 9 տարբեր պաշտոններում երեքական հոգով նշանակվելիք 27 փոխանորդների պաշտոնավարության հրամանների օրինակներ են: Այս դեպքում բնագրի «որպես օրինակ» եզակի ձևը թարգմանեցինք հոգնակիով՝ «համաձայն օրինակների»:

29. Գրքում քաղաքներում կառավարելու համար նշանակում կատարելու վերաբերյալ հրամանի օրինակ չկա: Կան մոռացության տրվելով՝ հրամանի այդպիսի օրինակ տեղ չի գտել աշխատության մեջ, և կան հեղինակի ասածը՝ «ըստ նմանութեան օրինակին» պարզապես պետք է հասկանալ ինչպես պատշաճ է, հարմար է նշանակությամբ:

30. Ինչպես 22-րդ գլխի համար, այստեղ ևս նկատի ունի 61-րդ գլուխը՝ իբրև քաղաքներում գլխավոր դատավորի և դատավորների նշանակման հրամանի օրինակ:

31. Նկատի ունի 74-րդ գլուխը:

32. Տես այս հատորի 6-րդ ծանոթագրությունը:

33. Ակնարկում է 75-րդ գլուխը: Ինչպես նկատելի է, 31-րդ գլխում թվով երեք պաշտոնյա ընտրելու մասին խոսելով՝ հեղինակը նրանց պաշտոնի բուն անվանումը չի տալիս, բայց 75-րդ գլխում հիշատակում է դա՝ «պաշտոն հարկաց կարգադրութեանց» (Բ տպ., էջ 208-209) և միաժամանակ ներկայացնում համապատասխան պաշտոնյայի

պարտականությունը՝ Հայոց տան ատյանում փոխանորդների առաջ հանդես գալ հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությամբ՝ ընդդեմ մաքսապետների և հարկապահանջների, առհասարակ ընդդեմ զրկողների, օրենքի սահմաններում ջատագով լինել «առ ի դիւրութիւն կողմն ժողովրդեան» (Բ տպ., էջ 209):

34. Նկատի ունի 76-րդ գլուխը:

35. «Որոգայթ փառաց»-ի տպագիրներն ունեն «տուրք քեզ նամակ շնորհաց և պաշտօն ի տանուտէրութեան» (Բ տպ., էջ 165): Այդ կապակցությունը նույնությամբ հանդես է գալիս նաև 42-րդ, ինչպես և 45 և 51-րդ գլուխներում, բայց ընդգծված արտահայտությունն ուղղված «պաշտօնի տանուտէրութեան»: Մենք բոլոր չորս դեպքերում էլ հետևել ենք վերջին՝ ճշգրտված արտահայտությանը, իսկ «նամակ շնորհաց և պաշտօնի» անվանումը թարգմանել պարզապես «պաշտոնի շնորհման հրաման»:

36. 45 և 41-րդ գլուխները, իբրև նույն կարգի պաշտոնների վերաբերյալ հոդվածներ, ունեն միանման ձևակերպում, բայց 41-րդ գլխում «եղբայրակից մեր և հաւատարիմ» կապակցության մեջ «և»-ը բացակայում է:

37. Բ տպագիրն այդ բառի փոխարեն ունի «յիշեսցես»: Հետևեցինք Ա տպագրին, որտեղ բառը ճիշտ է, թեև սխալագրությամբ՝ «յիշեսցես»<sup>1</sup>:

38. Հավանաբար նկատի ունի Քրիստոսի հետևյալ խոսքը. «Քեզ տաց գայս ամենայն իշխանութիւն...» (Ղուկ., Դ, 6):

39. Հմմտ. Երեմ., ԻԸ, 14. Գործք, ԺԵ, 10:

40. Այդ բառի փոխարեն երկու տպագիրն էլ ունեն «մօրուք», որ, անշուշտ, կապ չունի «մորուք» բառի հետ: Մենք այն դիտել ենք որպես «մորոս» (հիմար, բթամիտ, ապուշ, անմիտ) բառի սխալագրություն և ըստ այդմ թարգմանել:

41. Երկու տպագիրն էլ ունեն այսպես. «... և ոչ ունիլ իշխանութիւն քոյ ի վերայ հերոյ առն միոյ բառնալ ի գլխոյ յունեքէ ընդդէմ օրինաց հայոց»: Այդպես ունեն նաև 3101 և 3102 ձեռագրերը: Այդ տեսքով բնագիրը տվյալ տեղում աղավաղված է: Թ. 7886 ձեռագիրը տալիս է ճիշտ ընթերցումը՝ «... և ոչ ունիլ իշխանութիւն բառնալ զհեր ի գլխոյ յունեքէ ընդդէմ օրինացն Հայոց»: «Ի վերայ հերոյ առն միոյ» կապակ-

<sup>1</sup> Այսուհետև ավելորդ ենք համարում տպագիրների և ձեռագրերի էջերը նշել, քանի որ նրանց վերաբերող հղումների համար պետք է նկատի ունենալ խնդրո առարկա գլուխը: Միայն թ. 1477 ձեռագրի դեպքում հղում ենք համապատասխան էջը, որովհետև նրանում, ինչպես գիտենք, գլուխներն իրար են հաջորդում ոչ բնագրի կարգով, ըստ այդմ տարբեր է նաև նրանց համարակալումը:

ցությունը, աղճատում լիելով, խանգարում է մտքի հստակ ընկալմանը: Ի դեպ, այդ միտքը փոքր-ի՛նչ այլ ձևակերպումով հանդիպում է նաև Ներածության բաժնում, այսպես. «... ոչ ունի կարողութիւն մագ մի ի գլխոյ ոչ ոք յումեքէ ըստ կամաւ իւրոյ բառնալ թէ ոչ ըստ օրինօք» (Բ տպ., էջ 65): Վիճելի հատվածը թարգմանել ենք ըստ թ. 7886 ձեռագրի:

42. Թե տպագիրները և թե թ. 7886 ձեռագիրն այդտեղ ունեն շփոթեցնող կետադրական սխալ, այսպես՝ «ի պաշտօնս տեղակալութեան հօր, այսինքն նախարարութեան» երկրորդ...»: Թ.3101 ձեռագիրը «նախարարութեան» բառից հետո ունի ստորակետով տրոհում, որ պարտադիր է և որով այդ բառը կապվում է կապակցության առաջին մասի հետ: Թարգմանության մեջ հետևել ենք այդ ձեռագրին:

43. Այդպես թարգմանեցինք բնագրի «հրաձանի պետութիւն» անվանումը, որը նույնն է հեղինակի «հրաց գօրագլխութիւն» (գլ. 26), «հրաձայնպետութիւն» (գլ. 56), «հրաձի գօրագլխութիւն» (գլ. 64) անվանումների հետ:

44. Բնագիրն «ամեն մի» որոշյալ դերանվան փոխարեն ունի «մի ֆի մի» (կարծես թե առաջին «մի»-ն ավելորդ է), այլ դեպքերում՝ «ֆի մի» (գլ. 278-րդ և այլն): «Ֆի» արաբերեն բառացի նշանակում է գին և գործածվում ամեն մի հատի գնի միավորի իմաստով (տես «Յովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանը», աշխատասիրությանը Լ.Խաչիկյանի և Յ.Փափազյանի, Ե., 1984, էջ 418: «Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը», աշխատասիրությանը Շ.Խաչիկյանի, Ե., 1994, էջ 183): «Որոգայթ փառաց»-ում «ֆի մի» պարզապես նշանակում է յուրաքանչյուր, ամեն մի: Այդ իմաստով հանդիպում է նաև «Տետրակ, որ կոչի Նշաւակ» գրքույկում (տես էջ 76՝ «ֆի մին տետրակ»):

45. Այդ բառի փոխարեն բնագիրն ունի «դատախագս», որը, ինչպես նշել ենք, արդարադատության բնագավառի պաշտոնյա չէ, այլ այն մեղադրյալը կամ ամբաստանյալը, որի նկատմամբ գործ է հարուցված (տես Ներածության 42 և 74-րդ ծանոթագրությունները):

46. Այս, ինչպես նաև 66-րդ գլխում օտար բառերով հիշատակվում են ծանր և թեթև հրազենային տեսակներ և նրանց գործածության ու պահպանման համար անհրաժեշտ պիտույքների ու մասերի անուններ՝ **թօփ** (թնդանոթ), **կլօլ** (թնդանոթի գունդ, ռունք, նաև՝ գնդակ, փամփուլշտ, գյուլլա), **սմբա** (հրացանը լիցքավորող այն գործիքը, որը նման է շամփուրի կամ ակիչի), **չախմախ** (գայլախագ, հրահան, կայծհան), **թֆանգ** (թվանք, հրացան), **փստօլ** (ատրճանակ), **փալասխա** (վառողի պահարան), **բագնեթ** (հրացանի փակադակում մետաղյա մաս, կայծհան, որը կայծքարին հարվածելով՝ առաջացնում է կայծ), **թափանչա** (դաբանչա, հին տեսակի ատրճանակ): Որոշ

բացառությամբ՝ այդ բառերը թողել ենք անփոփոխ:

47. Չնայած այս գլուխն ընդամենը հրամանագրի պատճենման օրինակ է, և անծանոններն ու տեղանունները նրանում ստույգ լինելու պահանջին կարող է և չհամապատասխանեն, պայմանականորեն են բերվում, սակայն, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Արտաշատը ոչ թե Բարձր Հայքի, այլ Այրարատ նահանգի մեջ է մտել:

48. Այս գլխում հիշատակվող զինատեսակների և նրանց առնչվող պարագաների մասին տես 46-րդ ծանոթագրությունը:

49. Տպագիրներն ունեն «բաղնեթաւ»: Հետևելով թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերին՝ ուղղում ենք «բագնեթաւ»: Այստեղ հաջորդաբար թվարկվող «քարամբ, փալասխայիւ, բագնեթաւ, չախմախաւ» բառերը Մարգար Խոճենցը չի պահպանել, փոխարենը գործածել է «ամենայնիւ հանգամանօք» արտահայտությունը:

50. Այդպես թարգմանեցինք բնագրի «ըռսիտ» բառը, որ նշանակում է նաև հաշիվ, անդորրագիր, բացատրագիր: Մարգար Խոճենցն «ըռսիտ»-ի փոխարեն գործածել է «գիր բացայայտութեան» անվանումը (ձեռ. 1477, էջ 39բ և այլն):

51. «Զորեղ» բառի փոխարեն բնագիրն ունի «զուռին», որ ոչ մի բառարանում չի հանդիպում: Արտահայտում է «մեղմ» բառին հակառակ իմաստ՝ ուժեղ, զորեղ: Մարգար Խոճենցն իր ընդօրինակության մեջ վերջին բառն է գործածել (ձեռ. 1477, էջ 39բ):

52. Բնագիրն ունի՝ «մի մանր վասն աղօթօքի», որ Մարգար Խոճենցը վերարտադրել է այսպես՝ «և միւսն մանր՝ վասն հուր տալոյ» (ձեռ. 1477, էջ 39բ), որին և հետևել ենք:

53. Բնագրում՝ «փիլթայն», որ ըստ Խոճենցի բացատրության՝ նշանակում է պատրույգ (ձեռ. 1477, էջ 39բ):

54. Մարգար Խոճենցը «լիպր»-ը նույնացրել է լիտրի (լիդր, լիտրա) հետ և նրա փոխարեն գործածել վերջին բառը (ձեռ. 1477, էջ 39բ): Լիտրի մասին տես այս հատորի 70-րդ ծանոթագրությունը: Մենք թարգմանության մեջ «լիպր» բառը պահպանում ենք:

55. «... բակերի [ու տների] շարքից դուրս լինի» - դրա փոխարեն տպագիրներն ունեն «ի դրունս շարից», իսկ թ.7886 ձեռագիրը՝ «ի դուրունս շարից» (ընդգծված բառը թերևս աղավաղում է): Թվում է, թե ուղեցել է ասել՝ եթե տունը կառուցվի բակերի ու տների շարքին հակառակ դիրքով, այսինքն՝ իր դիրքով խանգարի նրանց: Մարգար Խոճենցը մոտավորապես այդպես է ընկալել ասվածը և իր ընդօրինակության մեջ փորձել այն ավելի պարզ արտահայտել՝ «ելանել ի շարից շարց դրանց և տանց» (ձեռ. 1477, էջ 41ա): Ուրեմն «դրունս» կամ «դուրունս» նա փոխարինել է «դուռն» բառի հոգնակի սեռականով՝



«դրանց» և ավելացրել «տանց» բառը, այսինքն՝ հասկացել այսպես՝ բակերի ու տների շարքերի կարգից («դուռն» բառը նաև նշանակում է բակ): Մենք հավատարիմ ենք մնացել թե տպագրին և թե հոռեմնցի ընկալմանը՝ նրա նման ըստ հարկի ավելացնելով «տների» բառածևը:

56. Բնագրում՝ «խոցելոց»: Այդ բառը, թերևս սխալ չի լինի հասկանալ նաև վիրավորվելու հետևանքով հաշմանդամ դարձածների համար:

57. Տես երկրորդ հատորի 6-րդ ժանոթագրությունը:

58. Այս գլուխն աննշան փոփոխություններով (տվյալների հարմարեցումով) «Որոգայթ փառաց»-ից ներառված է Շահամիր Շահամիրյանինը համարվող «Տետրակ, որ կոչի Նշաւակ» գրքի մեջ՝ «Օրինակ վաշխապարտի» վերնագրով, (էջ 24): Հաջորդ՝ 78-րդ գլուխը ևս տեղ է գտել այնտեղ՝ «Օրինակ վնասոյ պարտի» վերնագրով, ավելի նկատելի փոփոխությունների ենթարկված. մինչ «Որոգայթ փառաց»-ում հողվածի բովանդակությունն առնչվում է կարավանով ցամաքային առևտրական ճանապարհորդության հետ, «Նշաւակում» նկատի է առնված ծովային առևտրական ճանապարհորդությունը (տես նրա 25-26 էջերը): Չէ որ Մադրասը նշանավոր ծովային նավահանգիստ է:

59. Այս նախադասությունը, որ համընկնում է հաջորդ՝ 78-րդ գլխի նախավերջին նախադասությանը, բնագրում կցկտուր շարադրանք ունի՝ պակասող բառերով: Թարգմանության մեջ օգտվում և այն լրացում ենք ըստ հիշյալ գլխի:

60. Փերիա գյուղի անունը գրքում մի քանի անգամ կրկնվում է: Տպագիրներն ունեն **Փերիու, Փերիս, Փերիա և Փերիու** ձևերով, իսկ թթ. 3101 և 7886 ձեռագրերը՝ միշտ **Փերիու** գրությամբ: Թարգմանության մեջ նախընտրել ենք վերջին ձևը՝ ուղղականը ներկայացնելով **Փերիա** գրությամբ:

61. Կանգունը համապատասխանել է ռուսական արշինին. հավասար է 71 սմ:

62. «Ըղուկ» չափը 106-րդ գլխում, որ երկարության չափերին է վերաբերում, ներկայացված է «ուղուկ» գրությամբ: Երկու ձևն էլ նույնությամբ պահպանում ենք՝ ընդունելով, սակայն, որ նրանց ճիշտ գրությունը «ըղունգ»-ն է («եղունգ» բառից. տես **Յ.Մանանդյան**, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Ե., 1930, էջ 117, 120 և 128):

63. Թթ.3101, 3102 և 7886 ձեռագրերում 80 և 81-րդ գլուխները, տպագիրների համեմատությամբ, հակառակ դասավորություն ունեն, հետևապես փոխված է և նրանց համարակալումը. նախ՝ գալիս է 81-րդ գլուխը՝ 80 համարով, ապա՝ 80-րդ գլուխը՝ 81 համարով: Նշենք նաև, որ 80-րդ գլուխն այդ ձեռագրերում ընդօրինակված է երկուական

անգամ, երկրորդ անգամը՝ առանց վերնագրի ու գլխահամարի: Թե ինչու են գրիչները կրկնել՝ դժվար է ասել: Երևի պատճառն այն է եղել, որ կրկնության մեջ առկա են տպագիրներից ոչ շատ էական տարբերություններ՝ առանձին բացթողումներ, հավելումներ:

64. 62-րդ գլուխը վերաբերում է սպարապետի պաշտոնին ու պարտականություններին, սակայն այնտեղ չի խոսվում ամենայն բարի գործեր կատարելու և ոչ մի չար գործ չկատարելու մասին: Հղումը սխալ է. պետք է վկայակոչվեր 51-րդ գլուխը: Համեմատիր նաև 172-րդ գլխի հետ:

65. Բնագիրն ունի՝ «ամենայն կարգադրութեան»: «Կարգադիր» բառը գրաբարում նշանակում է վարժապետ, ուսուցիչ, հետևապես «կարգադրութեան» ոչ միայն կարգավորության իմաստ ունի, այլև նշանակում է ուսուցում, ինչպես և թարգմանել ենք: 101-րդ գլխից ևս պարզ է դառնում, որ խնդրո առարկա տեղում խոսքը փաստորեն երկու վարժապետի (ուսուցչի, վարդապետի, հրահանգիչ-վարպետի) մասին է, որոնցից մեկն ուսուցանելու է հայոց լեզու և ընթերցանություն, իսկ մյուսը տղաներին հմուտ է դարձնելու զինվորական արվեստին:

66. Դաշնադրության այս հատվածը ոչ թե Սողոմոնի և Հայրապետի, այլ վերջինիս հոր՝ Միքայելի անունից է շարադրված: Այնուհետև գործարքից հետևում է, որ Հայրապետի ապրանքը պետք է հանձնվեր Սողոմոնին, մինչդեռ հանձնվում է Միքայելին: Կարծես թե անունների շփոթություն կա:

Ճարաբերդ (բնագրում՝ **ճարաբերթ**) անվան տակ հեղինակն անշուշտ նկատի ունի Արցախի Ջրաբերդ գավառը: Մենք հավատարիմ մնացինք հեղինակի գրությանը՝ մասնակի ողղումով:

67. Այս գլխին որոշ նմանություններ և ոճական-արտահայտչական համընկնումներ ունի «Տետրակ, որ կոչի Նշաւակ» գրքույկի «Օրինակ դաշնադրութեան մէջ ամուսնացելոց» հոդվածը (տես նրա 63-64 էջերը): Օգտվողը «Նշաւակի» հեղինակն է:

68. Բնագրում «դատախագ»: Ինչպես նշել ենք (տես Ներածության 42, 74-րդ և երկրորդ հատորի 25-րդ ժանոթագրությունները), նախորդ մի քանի դեպքերում, նաև այստեղ այդ բառը գործածված է ամբաստանյալի, մեղադրյալի իմաստով:

69. Դուռուշը ոչ թե հռոմեական, այլ թուրքական դրամ է: Մեկ դուռուշը հավասար է 40 փարայի կամ 0,227 ոսկի ֆրանկի (տես **Ստ. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հատ. Գ, էջ 188):

70. **Լիտրը** (հուն. **լիտրա**) ծանրության չափ է, հավասար 320,4 գրամի կամ հռոմեական 12 ունկիի (ունցիա): **Քղամիղը** (բնագրում՝ **քղամիտ**) այս դեպքում ոչ թե արքայական ծիրանի է նշանակում, այլ, ըստ երևույթին, ամուր, բայց նոսր գործվածք, որ օգտագործել են

ծկնորսական ուռկան (թռռ, ցանց) պատրաստելու նպատակով:

71. Թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերում, տպագիրների համեմատությամբ, 85-91-րդ գլուխներն այլ դասավորություն ունեն, հետևաբար և՛ տարբեր համարակալում. նրանցում 85-րդ գլուխը տեղափոխված է ետ և համարակալված իբրև 91-րդ գլուխ, իսկ 86-91-րդ գլուխները նախորդում են նրան՝ 85-90 հաջորդական գլխահամարներով:

72. «Դուռն» և «ապարան[ք]» բառերն ընկալել ենք պալատի իմաստով և այդպես էլ թարգմանել, մանավանդ որ նրանցից երկրորդը «պալատ» բառի հոմանիշն է: Այստեղ, սակայն, նրանք հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ, կողք կողքի՝ «ի դրուսս պատուելի յապարանի»: Թարգմանության մեջ, բնականաբար, երկու բառերից թողել ենք մեկը՝ «պալատում»:

73. Բնագիրն ունի՝ «արծակման տարապարտուց»: «ի տարապարտուց» կամ «տարապարտուց» նշանակում է զուր տեղը, անտեղի, անհիմն կերպով, իսկ այստեղ խոսքն իրար հետ համագործակցած, երկար ժամանակ դրամական և այլ գործարքներով փոխադարձաբար կապված գործընկերների մասին է, որոնք միմյանց նկատմամբ պարտականությունները կատարելուց և պարտք ու պահանջ հոգալուց հետո իրար անպարտ են ճանաչում: Ըստ այդմ էլ գլխի վերնագիրը թարգմանել ենք՝ սկզբից ավելացնելով «փոխադարձաբար» բառը:

74. Բնագրի «պարտատուութեամբ» բառն Ա տպագրում համառոտագրությամբ է, Բ տպագրում վերականգնված է սխալ գրությամբ՝ «պարտայտութեամբ»: Բառի ավելի ճիշտ գրությունը տալիս են թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերը՝ «պարտայտութեամբ» (այսինքն՝ «պարտատուութեամբ»):

75. Այս գլուխն ամբողջությամբ «Որոգայթ փառաց»-ից առանց որևէ փոփոխության քաղված-ներառված է «Նշաւակ» գրքույկի մեջ՝ հետևյալ վերնագրով՝ «Օրինակ կտակագրի Մադրասի Հայոց» (տես «Տետրակ, որ կոչի Նշաւակ», էջ 17-19):

76. Առ երբ., Թ, 17:

77. Բնագրում՝ «դաֆտար» (դավթար), որը վաճառականի հաշվեգիրքն է, հաշվեմատյանը:

78. Թորգոմացիների (բնագրում՝ **թորգոմանց**) անվան տակ հայ միջնադարյան մատենագրության մեջ նկատի են առնված թյուրքական ծագում ունեցող ցեղերը (թուրք, թաթար և այլն: Հմմտ. Ֆրիկի «Գանգատի» հետևյալ տողի հետ. «Մինն է Թաթար Թորգոմացի»): Ըստ երևույթին թուրք նշանակությամբ էլ «Որոգայթ փառաց»-ում գործածված է: Չպետք է շփոթել «ազգ տանն Թորգոմայ», «որդիք Թորգոմայ» և նման անվանումների հետ, ինչպես մեր հին հեղինակները (Փավստոս Բուզանդ, Սովսես Խորենացի և ուրիշներ) անվանում են

հայ ժողովրդին՝ նկատի ունենալով այն, որ նախահայր Հայկը համարվում է Հաբեթից սերած Թորգոմի որդին:

**Ալաններն** օսերն են: Հարմար էր, որ նրանց փոխարեն հիշվեին աղվանները՝ Անդրկովկասում Քոչից հյուսիս ապրող ցեղերը:

79. Այդ բառի փոխարեն բնագիրն ունի «իրացիւք», որ չի հանդիպում հատկապես հրազենին և հրաձգային ուժերին վերաբերող 64-րդ գլխում: Այդպես թարգմանեցինք՝ ոչ այնքան վստահ լինելով ճշտությանը:

80. Տպագիրները և թթ. 3101, 3102 ձեռագրերն ունեն «բազում գրեանց մէջ Հայոց», թ.7886 ձեռագիրը՝ «բազում գրեանց ի մէջ Հայոց եղելոց»: Հետևել ենք վերջինիս:

81. Բնագիրն ունի «յիշեսցի ընդ գործս»: Դժվար է կռահել, թե որոշակի ինչ միտք է արտահայտում այդ կապակցությունը: Մենք, այնուամենայնիվ, վիճելի կապակցությունը հարմար գտանք ենթադրաբար թարգմանել այսպես՝ «հիշվում են ըստ [անցյալում ունեցած] գործածության»: Ավելորդ չենք համարում նշել, որ Մարգար Խոճենցի ձեռագիրն այս գլխի «բազում գրեանց մէջ Հայոց» կապակցության փոխարեն ունի «ոմանց գրեանց և պատմութեանց հնագունից Հայոց» (ծեռ. 1477, էջ 47բ), իսկ ավարտի «և անուանք ամսոց Հայոց յիշեսցի ընդ գործս» նախադասությունն ընկալել և վերարտադրել է այսպես. «և անուանք ամսոց յիշեսցին ըստ նարդենիս գործածութեան» (նույն տեղում), որ ակնհայտորեն շեղում է բնագրից: «Նարդենիս» նշանակում է այժմյան, արդի, ներկայիս:

82. **Ղրեթ (ղրաթ, ղիրեթ)**, այսինքն՝ կարատ - Իրանում և այլուր գործածված կշռաչափ, որը հավասար է եղել 1/24 (նաև՝ 1/10) մսխալի: Ոսկյա մեկ ղրեթը հավասար է եղել 0,212 գրամի (տես **В.Хинц, Мусульманские меры и веса...**, էջ 12, 24): Այժմ կարատը հավասար է համարվում 0,2 գրամի:

83. **Տերունի** - նկատի ունի դրամի և կշռի միավոր-տեսակ: Արծաթ կամ ոսկի մեկ տերունին հեղինակը հավասար է համարում 124 ղրեթին:

84. Տպագիրներն այդտեղ «և» շաղկապն անգզուշորեն բաց են թողել: Վերականգնում ենք ըստ թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերի:

Այս գլուխը երկարության չափերին է վերաբերում: Տրված է չափական մի համակարգ, որը կազմելիս հեղինակն անկասկած օգտվել է հայկական հին աղբյուրներից, հատկապես մղոնաչափերի ցանկից, որի մի օրինակը տեղ է գտել հետևյալ հրատարակության մեջ՝ «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք» (Մարսել, 1683, էջ 61-64: Հմմտ. **Հ.Մանանդյան**, Կշիռները և չափերը

հնագույն հայ աղբյուրներում, էջ 111-119):

85. Երկրաչափ (տես նաև 27 և 72-րդ գլուխները) ասելով այս դեպքում նկատի ունի քաղաքի ճարտարապետ-երկրաչափին, որի իրավասության մեջ է մտել նաև քաղաքի սահմաններում շինարարության համար տարածություն հատկացնելը:

86. **Գնդակ** - բնագիրն ունի «գուլի», որը «գյուլլա» բառն է, այսինքն՝ գնդակը, փամփուշտը, գյուլլեն: Մարգար Խոճենցը «գուլի» բառի փոխարեն գործածել է «ռումբ» բառի հոգնակին՝ «ռումբք» (ծեռ. 1477, էջ 58ա): «Սմբա» բառն էլ բացատրել է ակիրք (նույն տեղում), որ հավանաբար «ակիշք» բառի սխալագրությունն է: Բնագրի «չախմախ, գուլի և սմբեն մինն միսին օգնական լինի» կապակցությունը պետք է ընկալել այն առումով, թե տարբեր տեղերում պատրաստված հրացանների համար կայծիանը, գյուլլեն և սմբան (հրացանը լիցքավորող գործիք՝ շամփուրի կամ ակիշի ձևով) օգտագործելի և օժանդակ կլինեն, եթե նրանք և հրացաններն ամեն ինչով համապատասխանեն միմյանց:

87. Տպագիրներն այդ բառի փոխարեն ունեն «գտացողն», թթ. 3101 և 3102 ձեռագրերը՝ «գտցողն», թ. 7886 ձեռագիրը՝ «ստացողն»: Հետևել ենք վերջինին՝ համոզված լինելով, որ «գտացող» բառը ևս տվյալ դեպքում ունի ստացողի իմաստ:

88. «Պարտագանցներ» բառի փոխարեն տպագիրներն ունեն «պարտուց»: Թ. 7886 ձեռագիրը, կարծես թե բառի իմաստն ավելի որոշակի դարձնելու համար, տալիս է «պարտականաց» ընթերցվածք: Համենայն դեպս խոսքը պարտքը չվճարած մեղադրյալի՝ պարտագանցի մասին է, ինչպես և թարգմանել ենք:

89. Թե ինչով են պայմանավորված նախապաշարումն ու արիամարհանքը սիրելի և կոտենի նկատմամբ, դժվարացանք այդ մասին որևէ բացատրություն գտնել, բայց բակլայի՝ իբրև թե օգտակար և թե ոչ օգտակար ընդդեմի մասին կարծիքներն իրենց արտահայտությունն են գտել հին բժշկարաններում և բուսաշխարհի վերաբերյալ ձեռագրերում: «Եւ գիտելի է, զի չէ պարտ գառաջնոց իմաստուն և փորձական արանց խրատքն զանց առնել և հակառակիլ բանից նոցա. քանզի գրեալ են, թէ բակլայն գմարդն մոռացկոտ և անմիտ առնէ. և աստի է յայտ, որ երբ զինքն... շատ ուտէ ոք՝ նա զբոլոր գիշերն մինչ ի լոյս յերագանայ» - հիշատակում է Ալիշանը հնոց խրատը («Հայբուսակ կամ Հայկական բուսաբառութիւն», Վենետիկ 1895, էջ 77):

Հայտնի է նաև, որ պյութագորականները խորշել են բակլա ուտելուց: Առասպելի հավաստմամբ՝ մեռյալների հոգիները մտել են բակլայի մեջ: Գոշի Խ-ԽԲ առակները բակլայի մասին են: Ըստ դրանցից առաջինի մեծամարմին բակլան ու սիսեռը պարծենում են կտավատի

ու քնջութի (կնճիթն) մոտ, և վերջիններս պատասխանում են նրանց, թե իրենք փոքր են, բայց արդյունաշատ են, քանզի մարդիկ հավաքում ու աղում են, որով իրենք դառնում են կերակուր և լույսի համար նյութ, մինչդեռ բակլան և սիսեռը թեպետև կերակուր են, բայց ոչ օգտակար, ոչ էլ լույսի աղբյուր են:

90. Այս գլխի, ինչպես և հաջորդի սկիզբը թարգմանելիս հետևել ենք թ. 7886 ձեռագրին, որտեղ այդ հատվածներում շարադրանքն ավելի պարզ է: «Ի պարտոյ» (գլ. 165) կամ աննախդիր «պարտու» ձևերի փոխարեն այդ ձեռագիրը տալիս է «վասն պարտուց», որ թարգմանել ենք «պարտքի պատճառով»:

91. Թվում է, թե «բանտարկողին» (բնագրում՝ «ի բանտ արկանողին») բառի փոխարեն այդտեղ ավելի հարմար է գալիս «պարտատերին» բառը, ինչպես ունի թ. 7886 ձեռագիրը՝ «որ ունէր բանտարկեալն պարտատերին»:

92. Թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերում 189 և 190-րդ գլուխները տպագիրներին հակառակ դասավորություն ունեն:

93. Բնագրում՝ «ջօնկով» (ուղղական ճիշտ ձևը՝ «ջունկ»), որ նշանակում է զառով, նարդու քարով:

94. Բյուրը տասը հազարն է, հետևապես տասը բյուրը հավասար է հարյուր հազարի:

95. Այդ բառի փոխարեն բնագիրն ունի «արիեստաւորն»: Անշուշտ նկատի ունի դահճին, թեև «արիեստաւոր» բառը հայ մատենագրության մեջ նման իմաստով վկայված չէ: Թ. 7886 ձեռագիրն ունի այսպես՝ «Արիեստաւոր կամ դահիճն»:

96. Բնագրում՝ «դպիր ատենաբան»: Անկասկած նկատի ունի դատապաշտպանին:

97. Այդտեղ եպիսկոպոս տանուտերի տեղը սխալ է նշված՝ «ի վերայ երկրորդ աթոռոյն ի վերայ առաջի աստիճանի աջ թևին տանն Հայոց»: Ընդգծվածը պետք է լիներ «ի վերայ երկրորդ աստիճանի», ինչպես եպիսկոպոսի համար նշված է հաջորդ՝ 234-րդ գլխում՝ «ի վերայ երկրորդ աստիճանի», իսկ առաջին աստիճանի միակ աթոռը նախատեսված է նախարարի համար («ի վերայ առաջին աստիճանի՝ միմիայն աթոռ մի նախարարին», գլ. 234-րդ):

98. Վերջին նախադասությունը բնագրում այնքան էլ հստակ ձևակերպված չէ, և թարգմանությունն էլ կատարել ենք որոշ վարանումով: Անորոշությունը չի փարատում և թ. 7886 ձեռագիրը, որտեղ խնդրո առարկա նախադասությունը հետևյալ տեսքն ունի. «Բայց տանուտերն, որ հարկաւոր է լցցէ տեղի անկելոյն ի բնիկ առաքօղէ իւրմէ ի նոյն աշխարհէ ի գաւառէ իւրմէ»:

99. Բ տպագիրը «Ոչ ոք»-ի փոխարեն ունի սխալ՝ «Ով ոք»: Ուղղում

ենք ըստ Ա տպագրի և ձեռագրերի:

100. «Մոխրից» բառի փոխարեն բնագիրն ունի «կտրմոխրտ»: Նոր Ջուղայի և հնդկահայոց բարբառում այդպես են անվանել մոխիրը (տես **Յր. Աճառյան**, **Յայերեն**, արմատական բառարան, հատ. 9, Ե., 1977, էջ 341):

101. **Դեղա** (բնագրում՝ **դէտայ**) - վրացերեն նշանակում է մայր: Այստեղ դայակ, տատմայր իմաստով է գործածված:

102. Բնագիրն ունի «մատակս»: Այդ բառը նշանակում է խոշոր եղջերավոր էգ անասուն, ի մասնավորի՝ էգ գոմեշ: Ելնելով գլխի բովանդակությունից՝ թարգմանեցինք, «տավար» բառով, որը լայն առունով նշանակում է գոմեշ, կով, եգ, երինջ, հորթ, մոզի, բայց մանավանդ՝ կով և կթու գոմեշ:

103. Բնագրում անորոշություն կա. չի հասկացվում՝ ընդունողը, սնուցողը և մեծացնողն ո՞վ է՝ ամուսինը թե երկրորդ կինը: Մենք նախընտրեցինք առաջինը:

104. **Յրահալելի** - ինչ որ կրակով փափկում- հալվում է, մետաղ, ծուլածո մետաղ:

105. Աստիճանը թանկարժեք մետաղների համար ընդունված որականիշն է, հարզը (պրոբա):

106. Տես այս հատորի 82-րդ ծանոթագրությունը:

107. **Թօփխանա** (բնագրում՝ **թօփխան[այ]**)-պարսկ. բառ է, նշանակում է թնդանոթների կայան, նաև թնդանոթածիզ զորամասերի կայազոր:

108. Տես այս հատորի 169-րդ ծանոթագրությունը:

109. Բնագիրն ունի «մորթ մկան դաղոմե»: Ղաղոմը (պարսկ. **դաղում**) սամույրի, աքիսի կամ մկան փորի սպիտակ մորթին է, որից մուշտակ են կարում:

110. Բնագրում՝ «**նիզեն** ի ձեռն իւր»: Ընդգծված բառն ընկալեցինք և թարգմանեցինք «նիզակ», մանավանդ որ թ. 7886 ձեռագիրը կապակցությունն ունի այսպես՝ «նիզակ ի ձեռն»:

111. Բնագրում այդտեղ նկատելի է թերասացություն. բացակայում են «թելի գրով» բառերը, որոնք լրացրեցինք՝ հետևելով հաջորդ՝ 290-րդ գլխում «դեղին սպարապետի» զինվորների մասին ասվածին:

112. **Կատուշ** (**կարտուշ**)-ֆրանսերեն cartouche բառն է, որ նշանակում է ատրճանակի, հրացանի և ընդհանրապես հրազենի լիցքավորման համար անհրաժեշտ փամփուշտով, գնդակով, վառոդով և այլ պարագաներով լցված տուփ, մետաղե կամ, նույնիսկ, թղթե ծրար (հմմտ. **Նորայր Ն. Քիզանդացի**, Բառգիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն, Կ. Պոլիս, 1884, էջ 204): **Փամփուշտներով**-այդպես հոգնակի թարգմանեցինք բնագրի «գուլովն» գոյականը (գյուլլա, գնդակ,

փամփուշտ):

113. Բնագրում՝ «թօֆչի բաշունց», որը համապատասխանում է «հրաձգային զորագլուխներին» («հրացի զօրագլխութան») անվանմանը: Յմնտ. 64-րդ գլխի վերնագրի հետ:

114. Յաշվումը սխալ է կատարված. գումարն անում է ոչ թե 100, այլ 99:

115. Այդ բացատրությամբ ստացվում է այնպես, որ բանակի հրամկազմն ստանալու է ոչ միայն հանվանե իրեն հատկացվածը, այլև հեծելագորին և հետևակագորին հատկացված բաժիններից՝ այս դեպքում յուրաքանչյուր շարքային զինվորին հավասար:

116. Տպագիրները փոխանակ «ի Յայս» ընթերցվածի ունեն սխալ՝ «ի յայս»: Ճշտումը կատարում ենք ըստ թ. 7886 ձեռագրի:

117. Բնագիրը «պատռված» բառի դիմաց ունի «յեղծուցեալ» (ճիշտ գրությունը՝ «հեղծուցեալ»): Այդ բառի իմաստը (խեղդված) բոլորովին չի ներդաշնակվում նախադասության մտքին: Կարծում ենք, որ պետք է լիներ «հերծուցեալ» (պատռված, հերծված), ինչպես և թարգմանել ենք: Մարզար հոճենցի ձեռագիրը (թ. 1477) վիճելի բառի փոխարեն ունի «պատատեալ», այսինքն՝ փաթաթված, բայց դա ըստ երևույթին գրչի կամայական ուղղումն է:

118. Թ. 7886 ձեռագիրը տպագիրների «Ամենայն բնութին մարդոյ» կապակցության փոխարեն պարզապես ունի «Ամենայն մարդիկ»:

119. Մարզար հոճենցի ձեռագիրը բնագրի «մնացորդն միայն հատուցանել» («միայն մնացածը վճարել») կապակցության փոխարեն ունի «զմնացեալ իններորդն միայն վճարել կամ հատուցանել» (ձեռ. 1477, էջ 78ա):

120. Այդ թվի փոխարեն թ. 7886 ձեռագիրն ունի 3800:

121. **Տուկրա** - տարածության չափ: Յեղինակն ինքը բառի իմաստը փաստորեն բացատրել է՝ նշելով, որ 100 տուկրան հաշվվում է մեկ ագարակ՝ տալով նաև ագարակի չափերը: Ագարակը մեկ օրավար հողն է, վարելահողի այն չափը, որ գութանը վարել է մեկ օրվա ընթացքում, և համապատասխանում է լատինական ager-ին (հող, տարածք, ագարակ):

122. Թ. 7886 ձեռագիրը «ձեռաց» բառից հետո «գործոց» գոյականի համար ունի «եթ բարեաց, եթ չարեաց», լրացումները:

123. Քանի որ սուրբ Յարության, Վարդավառի և Սուրբ Խաչի տոները չարժական են, ամեն տարի նրանց տոնի օրը փոխվում է, դրա համար էլ այդ տոների օրերը նշված չեն, տեղ է թողնված:

124. «Նշաւակ» գրքույկի հեղինակը հետևել է այս գլխին և, որոշ փոփոխություններ կատարելով, ներմուծել իր աշխատության մեջ՝ իբրև իսկ հողված (տես «Տետրակ, որ կոչի Նշաւակ», էջ 42-43):

125. Ինչպես այլ դեպքերում, այստեղ ևս Տիրոջ տուն (քնագրում՝ «Տեառն տան») նշանակում է եկեղեցի, ուր կատարվում են մանկան մկրտությունը և ամուսնացողների պսակադրումը:

126. «Պատկեր աուր»-ը շաբաթվա յոթ օրերից յուրաքանչյուրի անվանումն է (երկուշաբթի, երեքշաբթի և այլն): Այս հատորի բազմաթիվ հոդվածների (գլուխների) եզրափակիչ մասում այդ արտահայտության փոխարեն հեղինակը շաբաթվա տվյալ օրվա համար նշում է այսպես՝ «յայսմ աուր» կամ «այսմ աուր», որ մենք թարգմանել ենք «այսինչ օրը» (տես 13, 15, 45, 58 և այլ գլուխներ): Այդպես է վարվել, որպեսզի տրված օրինակի նմանությամբ հետագայում փաստաթուղթ պատրաստելիս այդ նշումը փոխարինեն շաբաթվա որոշակի օրվա անվանումով:

127. Տպագիրներում այսպես է՝ «պակասակեան քան թէ յիսուն և հինգ ամաց»: Ընդգծված անժամոթ բառի փոխարեն թ. 7886 ձեռագիրն ունի՝ «պակաս», թթ. 3101 և 3102 ձեռագրերը՝ «պակասակեանս» գրությամբ: Այդ նորակազմ բառը, անշուշտ, ձևավորվել է պակաս-ա-կեանս բաղադրիչներից: Հետևել ենք թ. 7886 ձեռագրին՝ ընտրելով «պակաս» ընթերցվածը և կապակցության սկզբում ավելացնելով «հասակով» բառը:

128. Տպագիրներն այդ բառն ունեն «նուիրանաց» գրությամբ, իսկ թ. 7886 ձեռագիրը՝ «նուիրակութեան»: Թարգմանության մեջ պահպանեցինք վերջինը:

129. Բնագրում՝ «բանակ»: Անտարակույս, հեղինակը նկատի ունի բանակատեղը (բանակետը), գինվորական ճամբարը, ռազմակայանը, ինչպես և թարգմանել ենք:

130. Տպագիրներն ունեն «բնութիւն մարդոյ»: Հետևում ենք թ. 7886 ձեռագրին, որն ունի պարզապես «մարդիկ»:

131. Այդ բառի փոխարեն տպագիրներն ունեն սխալ ընթերցված՝ «Հնորի ընկալ»: Թ. 7786 ձեռագիրը տալիս է ճիշտ բառը՝ «Հնորհակալ», որին և հետևում ենք:

132. Թ. 7886 ձեռագիրը «մասունս» (մանրամասներ) բառի մոտ ունի «կան պարագայս» բացատրությունը:

133. Ի տարբերություն տպագիրների ոչ հստակ «ի վերայ իւրեանց բեռնան» ձևակերպման՝ թ. 7886 ձեռագիրը տալիս է՝ «ի վերայ ինքեանց բարձեալ բեռնան»:

134. Վերջին կապակցությունը տպագիրներում այսպես է. «և պարսպօք փակեսցի ամուրս»: Այնպես է ստացվում, որ խոսքն ամրոցներն ամուր պարսպապատելու մասին է, մինչդեռ ակնհայտ է, որ հարցը վերաբերում է հայ ժողովրդի պահպանությանը, ինչպես ունի թ. 7886 ձեռագիրը՝ «և պարսպօք փակէ ամրապես», որին և հետևում ենք: Ըստ

երևույթին հիմք ձեռագրում համառոտագրված «ամրապես» բառը տպագիրներում շփոթվել-ընկալվել է իբրև «ամրոցս»:

135. Այդ բառի փոխարեն տպագիրներն ունեն «կրթեալ», որ սխալագրություն է. պետք է լիներ «կթեալ»: Թ. 7886 ձեռագիրը տալիս է ճիշտ ընթերցվածը, թեև փոքր-ինչ այլ ձևակերպումով՝ «ուր կթիցեն գմեղր»:

136. Այստեղ հիշատակված են արևելյան մի քանի ապրանքատեսակներ, հատկապես համեմունքներ. **հիլը** համեմի տեսակ է և օգտագործվել է որպես կերակրի համեմունք. **ջավզը** հավանաբար նույնն է ինչ ջավզին, որ նշանակում է ընկույզի գույն. բնագրի **կոճ** բառը թարգմանեցինք կորիզ (ծիրանի և այլն), իսկ **հալդի** բառը, որի իմաստը բացատրված է թ. 7886 ձեռագրում այսպես՝ «մանանեխ կամ հալդի», ըստ այդմ թարգմանեցինք «մանանեխ»:

137. **Թամբաբու** - ծխախոտի թունդ տեսակ, որ ծխել են դեյլանով կամ նարգիլետով:

138. Մահուդ բառի փոխարեն բնագիրն ունի նրա միջնադարյան անվանումը՝ **լօնդրա** (Լոնդոն քաղաքի անունից), իսկ նապաստակի փոխարեն՝ **գօջան**:

139. **Անագ** բառի փոխարեն բնագիրն ունի **ջաստ**:

140. **Սաղդի**-ընտիր գունավոր կաշի՝ պատրաստված կենդանու մեջքի մասից:

141. **Չառ** նշանակում է ոսկեթել, ոսկեհյուս:

142. **Մանյակ** բառի փոխարեն բնագիրն ունի նույնիմաստ օտար **հաշիայ** բառը:

143. Տպագիրներում «արծաթապատ սարքով» բառակապակցությունն արտահայտված է այսպես՝ «արծաթապատ զգեստօք», որի նշանակությունը թ. 7886 ձեռագիրը մանրամասնում-բացատրում է հետևյալ կերպ՝ «արծաթապատ սանձ և դանդանանդի» (ավելի ճիշտ կլիներ՝ «դանդանալանդի», այսինքն՝ սանձ ու լկամով):

144. **Ապակիով պատուհան** - բնագրում՝ «շիշով ռուսի»: **Ռուսին** պարսկերեն օռոսի բառն է, որ նշանակում է բարձրացվող կամ բացվող շրջանակով պատուհան. **շիշով ռուսի** - ապակիով պատուհան, որ բարձրացվում, բացվում է:

145. **Շաթիր** (կամ **շաթր**) **ջլաբում** - հետիոտն առաջընթացիկ, ծիու կամ քարավանի առջևից քայլող, վարձու ուղեկցորդ, նաև՝ սուրհանդակ, քաջընթացիկ: Այդ բառերի իմաստն այդպես է հասկացել ու խնդրո առարկա գլուխն ընդօրինակել Մարգար Խոճենց Երևանցին. «Ով ոք երկու հետևակ նախընթաց, այսինքն՝ շաթր, ընթացուցէ առջի ծիոյ իւրոյ՝ ի տարին 5 դահեկան» (ձեռ. 1477, էջ 54ա): Ավանդաբար շաթիր կամ շաթր են կոչվում ս. էջմիածնում հայրապետական թափորի

առջևից ընթացող և ճանապարհի բացող այն սպասավորները, որոնք կատարում են նաև թիկնապահի պարտականությունը:

146. Տես նախորդ ծանոթագրությունը:

147. **Ղաբալա** (կապալ. արաբերեն՝ երաշխավորություն, ապահովություն) - նշանակում է՝ 1. պայմանագիր, որով մեկը պայմանավորվում է որոշ աշխատանք կատարել՝ որոշակի վարձատրությամբ: 2. որևէ շինություն կամ կալվածք վարձակալելու վերաբերյալ պայմանագիր: 3. գործ, որ պետք է կատարվի սահմանված ժամանակի ընթացքում (տես **Ստ. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հատ. Բ, «կապալ» բառի տակ):

148. Այդ բառի փոխարեն տպագիրներն ունեն վրիպակ՝ «հրահանգին»: Պետք է լինի «հրահալելեացն», ինչպես տալիս է թ. 7886 ձեռագիրը: Տես և այս հատորի 104-րդ ծանոթագրությունը:

149. Թ. 7886 ձեռագրում տոկոս վճարելու հաշիվը հազարի փոխարեն կատարված է ըստ հարյուրի: Նույնպիսի տարբերություն առկա է նաև 453-րդ գլխում:

150. Տպագիրները, ի տարբերություն թ. 7886 ձեռագրի, «հատուցանել» (վճարել) բայից առաջ ունեն «հատ» բառը, որ տվյալ դեպքում ավելորդ է:

151. Թ. 7886 ձեռագիրն այդ բառից առաջ ունի՝ «ներկք անուանեալք»: Նախադասության առաջին բառը՝ շիբը, պաղլեղն է, որ բնագրում արտահայտված է «լուղ» բառով:

152. Թ. 7886 ձեռագիրը «այրեցեալ իրին» կապակցության փոխարեն ունի «այրեցեալ իրաց և տանց»:

153. Տպագիրներն այդտեղ ունեն «Մի՛ ոք պահեսցի ընդ տանն իւր շուն»: Այնպես է ստացվում, որ առհասարակ տանը շուն չի կարելի պահել: Հետևում ենք թ. 7886 ձեռագրին, որն ունի «զշուն կատաղի», որով իմաստավորվում է հողվածը և պարզ դառնում, թե խոսքն ինչ շան մասին է: «Կատաղի» բառը տպագիրներից վրիպակաբար դուրս է մնացել:

154. «Տեր» ասելով հեղինակն, անշուշտ, նկատի ունի վերադասին, գլխավորին, այն պետին, որին անմիջականորեն ենթակա են զորագլուխը կամ զինվորը:

155. Թ. 7886 ձեռագիրը «զինվոր թե աշխարհական» («եթ զինուոր, եթ աշխարհական») կապակցության փոխարեն ունի «եթ զինուոր, եթ քաղաքական կամ զիւղական»:

156. Տպագիրներում այսպես է՝ «ի տեսակս որ ոք առն», ըստ որի էլ թարգմանել ենք: Թ. 7886 ձեռագիրն այդ կապակցությունն ունի բավական տարբեր՝ «ի տես այլոց կամ պարտատիրին», այսինքն՝ ուրիշների և պարտատիրոջ աչքին:

157. Թ. 7886 ձեռագրում տուգանքի այլ չափ է նշված՝ «հինգ հազար դահեկան արծաթ»:

158. **Բեզոաս** (պարսկ. **բազրաս**)- բրդյա բարակ գործվածք, որից պատրաստել են անձրևային (անջրանցիկ) գլխարկներ:

159. **Ջնսան** (հանդիպում է նաև «ջանսան» գրությամբ՝ այստեղ և ցանկում) «Պ» տառի տակ)-ժենշեն կոչված արմատն է: Տպագիրներում կապակցությունն այսպես է. «... գտանել անտառ, այսինքն՝ արմատ անուանեալն ջնսան»: Թարգմանության մեջ հաշվի առանք և թ. 7886 ձեռագիրը, որտեղ ձևակերպումն ավելի հստակ է. «... գտանել զանտառի զարմատն՝ անուանեալ ջնսան»:

160. **Մաքուր լինելը և կամ անմաքրությունը** (բնագրում՝ «մաքրութիւն և կամ աղտեղութիւն», նույնը տես և հաջորդ՝ 507-րդ գլխում)- այսինքն՝ անմեղ կամ մեղավոր լինելը:

161. «Որոնող» և «դատող» («որոնողք և դատողք») անվանումները և նրանց իրավական ծառայությունը կատարող պաշտոնյաներ արդի դատարանակազմության մեջ բացակայում են: Նրանց իրենց ունեցած դերով անհնարին է նույնացնել ժամանակակից դատավարության ատյանի պաշտոնյաների ու մասնակիցների հետ: Հարմար համարեցինք «որոնող» և «դատող» եզրերը նույնությամբ թողնել: Որոնողը մեղադրյալին քննողը, նրա հանցավոր լինելը կամ անմեղությունը բացահայտողն է, իսկ դատողը՝ ըստ քննության արդյունքի դատավճիռ ընդունողը, որին հեղինակն անվանում է նաև դատավոր (հմտ. 508-րդ գլխի հետ, ուր ասված է. «... եթ երդմնողն դատաւոր՝ և դատողքն ասեն...»: Թ. 7886 ձեռագիրն ունի այսպես. «... այլ եթ երդուօղքն դատաւորք իցեն՝ և դատողքն ասիցեն»):

162. Բնագրում՝ թե՛ տպագիրներում և թե՛ ձեռագրերում, կախման կետերից հետո, թվում է՝ ավելորդ գործածությամբ, կա «աղտեղի» բառը, որը չենք պահպանել:

163. Հողվածում խոսքը մեկ իշխանի մասին է, ինչպես և նշված է նրա սկզբում, բայց տպագիրներն ունեն «իշխանաց»՝ փոխանակ «իշխանին» եզակի ձևի, ինչպես թ. 7886 ձեռագրում է: Մենք թարգմանել ենք եզակի:

164. Այդ մասին տես 150-րդ գլուխը:

165. Նեմցաները կամ ավանաները գերմանացիներն են:

166. Թթ. 3101, 3102 և 7886 ձեռագրերում 511-րդ գլխից մինչև վերջին՝ 521-րդ գլուխը ներառյալ, տպագիրների համեմատությամբ, ետևառաջություն կա, հետևապես և նրանց համարակալումը տպագիրներից տարբեր է: Խախտումը հետևանք է այն բանի, որ տպագիրներում 519, 520 և 521 համարները կրող գլուխները այդ ձեռագրերում բերված են առաջ, հաջորդում են 510-րդ գլխին և կրում են 511-513

գլխահամարները, իսկ տպագիրներում 511-518 գլխահամարները կրող գլուխները այդ ձեռագրերում տեղաշարժված են ետ ու կրում են 514-521 գլխահամարները: 510-րդին հաջորդող բոլոր 11 գլուխների գրիչը թթ. 3101 և 3102 ձեռագրերում միևնույն անձն է:

167. **Փորձառություն** - բնագրի բառն է, որ հարմար համարեցինք և պահպանեցինք թարգմանության մեջ: Մարգար խոճենցն այն փոխարինել է «ապացոյց» բառով:

168. Արդյունքը չի համապատասխանում գումարելիների գումարին, որովհետև  $960+12+24=996$  միլիոնի և ոչ թե 132 միլիոնի:

169. Այս և հաջորդ՝ 520-րդ գլխում պայմանականորեն ներկայացված հայկական արժաթ դահեկանի և լաք դահեկանի հետ միասին հիշատակվում են հնդկական (քրոր, ռուփի, լաք, լաք ռուփի), պարսկական (թուման), օսմանյան (քիսե կամ քիսա) և եվրոպական (խապանական մարչիլ) դրամական միավորներ ու գումարներ՝ հավանորեն 18-րդ դ. վերջին տասնամյակում միմյանց համեմատ ունեցած արժեքով: Ըստ այդմ

1 ռուփին հավասար է համարվել 1 մարչիլին կամ ոսկեդրամի քառորդ մասին,

1 թումանը՝ 20 ռուփիին կամ 20 մարչիլին,

1 քիսեն՝ 30 թումանին կամ 500 դուրուշին,

1 մարչիլը՝ 1 ռուփիին կամ 100 ստակին,

62 միլիոն եվրոպական մարչիլը՝ օսմանյան 260 հազար քիսային, հնդկական 13 քրոր և 20 լաք ռուփին՝ պարսից 660 հազար թումանին և այլն:

Լաքը և քրորը այսպես կոչված անգլո-հնդկերեն բառերն են: Երկուսն էլ արտահայտում են դրամի քանակություն, գումար: Հնդկերենից անգլերենի մեջ են մտել 17-րդ դ. սկզբներին: Լաք (անգլ. lakh կամ lac) նշանակում է 100 հազար, փոխաբերաբար՝ անթիվ-անհամար, անվերջ թիվ՝ դրամի համար, իսկ քրոր (անգլ. crore)՝ 10 միլիոն, որ հավասար է 100 լաքի:

170. Բնագիրն ունի «գրաւ հատուցանող»: Ընդգծված բառը («գուր») մակբայական կիրառություն է ստացել՝ հանդես գալով գործիական հոլովի վերջավորությամբ: Բառը նույն կերպ է ընկալել և ներկայացրել նաև Մարգար խոճենցը՝ արտահայտելով «ի գուր հատուցանող» կապակցությամբ (ձեռ. թ. 1477, էջ 80ա):

171. Քարոզ ասելով հեղինակը նկատի ունի գրքի առաջին հատորը՝ Ներածության բաժինը:

172. Թ. 7886 ձեռագիրը 520-ի փոխարեն գլուխների քանակի մասին ունի հետևյալ նշումը՝ «512 գլուխ» (էջ 144ա):

## ՑԱՆԿ

1. Գրքի ցանկը, որը կարելի է դիտել որպես առարկայական ցանկ, առկա է միայն տպագիրներում, ընդ որում Նախերգանքի և Ներածության համար՝ էջերի, իսկ երկրորդ հատորի համար՝ գլխահամարների նշումով՝ Ա տպագրում: Բ տպագրում պահպանված են միայն երկրորդ հատորի գլխահամարները, բայց քանի որ այդ հրատարակչության էջերն իրենց չափսերով, հետևապես և՛ պարունակությամբ, չեն նույնանում Ա տպագրի հետ, հրատարակիչներն անհրաժեշտ չեն համարել վերանայել-ճշտել Նախերգանքի ու Ներածության էջահամարներն ըստ իրենց տպագրի և այդ բաժիններին վերաբերող կետերի դիմաց էջանշումները բաց են թողել:

Ցանկը կազմված է այբբենական կարգով, սակայն յուրաքանչյուր տառի տակ կետերն իրար են հաջորդում ոչ թե դարձյալ այբբենական սկզբունքով, այլ փոքրից ավելի մեծը նախ՝ էջերի և ապա՝ գլխահամարների նշումով: Թարգմանության մեջ հետևել ենք այդ կարգին, բայց կետերը տպագիրների հաջորդականությամբ չենք պահպանել, այլ ըստ նրանց սկզբնատառերի՝ տեղափոխություն ենք կատարել, այնպես որ ցանկում բոլոր կետերը պահպանված են, բայց համաձայն նրանց նոր սկզբնատառերի՝ շատ անգամ տարվել են ետ կամ առաջ:

2. Այս և հաջորդ կետում, ինչպես և «Ո» տառի տակ՝ «Ոսկեպատ սեղան ստողի տոկոսը» կետում, հեղինակը գործածել է «ռախտ» բառը՝ ձիու սարքի իմաստով (հմմտ. Ֆրիկի տողի հետ՝ «Մէկին ըռախտ և զրեհնի, ճոխով նստի ի պետաւ ձի», **Ֆրիկ**, Դիւան, էջ 536), իսկ բուն հոդվածներում (429-431 գլուխներ) կիրառել է հայերեն համապատասխան «զգեստօք» բառը: Թե՛ «ռախտ» և թե՛ «զգեստօք» բառերը թարգմանել ենք «սարքով»:

3. Համապատասխան հոդվածում՝ 257-րդ գլխում բույսերն այրելու մասին խոսք չկա: Հարցը վերաբերում է այն բանին, թե գետնի երեսին

միայն ինչ կարելի է այրել (աղբ, հոտած ծուկ և այլն):

4. Տպագիրներում սխալմամբ նշված է 229-րդ գլուխը:

5. Այս կետի համար տպագիրներում սխալմամբ մատնացույց է արված 316-րդ գլուխը:

6. Ա տպագրում սխալմամբ նշված է նրա 8-րդ էջը, մինչդեռ պետք է լիներ 81-րդ էջը:

7. Ա տպագրում ձևակերպումն այսպես է. «Կացութիւն զօրաց ազատ լինիցի»: Այս կետը տպագիրներում նշված 307-րդ գլխին բովանդակությամբ չի համապատասխանում:

8. Այս կետը բովանդակությամբ մասամբ է համապատասխանում նշված 388-րդ գլխին: Թերևս պետք է նկատի ունենալ նաև 389-րդ գլուխը:

9. Նկատի ունի փոխանորդներին:

10. Տեղակալություն ասելով նկատի ունի փոխանորդությունը, այլ կերպ՝ փոխանորդ ընտրվածներին:

11. Տպագիրներում սխալմամբ մատնացույց է արված 28-րդ գլուխը:

12. Տպագիրներում սխալմամբ նշված է 107-րդ գլուխը:

13. Երկու տպագիրներում էլ համապատասխան գլուխը ճիշտ չի նշված: Ա տպագրում մատնացույց է արված 338-րդ, իսկ Բ տպագրում՝ 333-րդ գլուխը, մինչդեռ ճիշտը 336-րդ գլուխն է:

14. Բ տպագրում սխալմամբ նշված է 403-րդ գլուխը:

15. Հետևելով վկայակոչված գլխի բովանդակությանը՝ այդպես վերանայեցինք-թարգմանեցինք տպագիրների հետևյալ կետը՝ «Ժամանակաւոր պետութիւն բառնալն» (Ա տպագիր՝ էջ 318, Բ տպագիր՝ էջ 423, Ժ տառի տակ):

16. Տպագիրներում սխալմամբ նշված է 229-րդ գլուխը:

17. Տպագիրներում 105-րդի փոխարեն մատնացույց է արված 106-րդը:

18. Տպագիրներում նշված է 99-րդ գլուխը:

19. Տպագիրներն ունեն գլխահամարի սխալ նշում՝ 417 փոխանակ 411-ի:

20. Ցանկը կազմողը երկբառ այդ անվանման փոխարեն գործածել է «տկարապետն» բառը, որը գրքում այլևս չի հանդիպում: Մենք երկու բառով արտահայտեցինք անվանումը՝ հետևելով 27-րդ գլխին («պետ տկարաց»):

21. Տպագիրներն ունեն «առ հարաֆկոյս», որ ակներև սխալ է և հակասում է 250 և 252-րդ գլուխներին. պետք է լիներ «առ հիւսիսկոյս», ինչպես և թարգմանել ենք:

22. Տպագիրներում սխալմամբ նշված է 483-րդ գլուխը:

23. Չանդերը (կամ զենդեր) Պարսկաստանի արևմուտքում և հարավում ապրող իրանալեզու ցեղ են: Չանդ կամ զանդիկ են կոչվել նաև զրադաշտական հավատի, ինչպես և Մանի մոզի ուսմունքի հետևորդները (մանիքեցիներ): Չանդիկ լեզուն կամ զենդերենը հին պարսկերենն է, որով գրված են զրադաշտական հավատի գրքերը (հմմտ. **Ստ. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հատ. Բ, էջ 8):

Տես նաև Ներածության 123-րդ ծանոթագրությունը:

24. Տպագիրներում սխալմամբ նշված է 127-րդ գլուխը:

25. Տպագիրներում սխալմամբ մատնացույց է արված 318-րդ գլուխը:

## ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՎԵՐՋՆԱԲԱՆԷ՝

1. Վերջաբան - հիշատակարանը «Որոգայթ փառաց»-ի բոլոր ձեռագրերում բացակայում է: Այն հանդես է գալիս միայն տպագիրներում և, թեպետ շարադրված է Հակոբ Շահամիրյանի անունից, բայց հաստատապես նրա գրածը չէ: Հիշատակարանն ավելացված է աշխատության տպագրության առիթով, ուրեմն՝ 1787-1789թթ. մեջ, երբ Հակոբը վաղուց մահացած էր: Կարելի է ենթադրել, որ Վերջաբանը հոր՝ Շահամիր Շահամիրյանի գրչի արգասիքն է, սակայն հորինված վաղամեռիկ որդու փայփայած գաղափարներով ու տենչերով:

2. Ազգի զավակներին անտարբերության ու ծուլության թմրությունից վեր հանելու և մեծ նպատակների համար ոգեկոչելու ցանկությունը Շահամիրյանների, մասնավորապես Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակի» կենտրոնական թեմաներից է (տես նրա սկզբի չափածո չորս գլուխները), առհասարակ հայության արթնացման կոչ է՝ լուսավորվելու և համընթաց քայլելու արևմուտքի առաջադիմող ժողովուրդներին:

3. Սիան ազգը Թաիլանդի հիմնական բնակչությունն է, որի լեզուն պատկանում է չին-տիբեթական լեզվաընտանիքին: Սիանները կոչվում են նաև թաի, իսկ սիամերենը՝ թաի լեզու:

4. Նկատված է, որ «Շահամիրյանների տպարանը, իր 10-11 տարիների գոյության ընթացքում (տարիների քանակը ճիշտ չէ, պետք է ասվեր 18-19 տարիների ընթացքում - Պ.Խ.) արդեն քիչ-չատ պատրաստել էր տպարանական գործավորների որոշ քանակ... Նրանց գործավորներից ոմանց մենք հանդիպում ենք Շնավոնյան քահանայի տպարանում» (տես **Յ.Իրազեկ [Հակոբ Տեր-Հակոբյան]**,



Պատմությունը հնդկահայ տպագրության, Անթիլիաս, 1986, էջ 99): Այդ գործավորներից են եղել սիամեցի Ջերիանը և Ջաքեոսը: Ավելորդ չենք համարում նշել, որ Հարություն Շնավոնյանի տպարանի առաջնել «Պատմություն Մարիանե կուսին» գրքի (1789թ.) հիշատակարանում սիամեցի երկու գրաշարներից հիշման է արժանացել առաջինը՝ Ջերիանը. «Ջերան Յակոբ Սի[ա]մեցի» (տես **Ն.Ոսկանյան** և այլք, նշված Մատենագիտությունը, էջ 636ա. հմմտ. **Հ.Իրազեկ, նշված գիրքը, էջ 104**):

5. Ակնարկում է հայ հին ավանդությունը Մամիկոնյան նախարարական տան ծագման մասին (տես **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Բ գիրք, ՁԱ և ՁԴ գլուխներ. «Պատմություն Սեբեոսի», Ե., 1979, գլ. Դ), ըստ որի այդ իշխանական տան հիմնադիրներ Մամգունը (ըստ Խորենացու) կամ Մամիկը և Կոնակը (ըստ Սեբեոսի) Հայաստան են եկել ճենաց աշխարհից (Չինաստանից):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԵՐԿՈՒ ԽՈՍՔ . . . . .	էջ 3
ՆԱԽԵՐԳԱՆՔ՝ ՈՒՂԴԱԾ ՊԱՏՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՂԻԴ . . .	էջ 6
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . .	էջ 9
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ	
ՆՇԱՎԱԿ. <i>Կարգադրություն հայոց՝ Հայաստանյայց</i>	
<i>աշխարհի կառավարման համար . . . . .</i>	
	էջ 74
ՑԱՆԿ . . . . .	էջ 219
ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ . . . . .	էջ 238
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	էջ 241

## ՈՐՈՓԱՅԹ ՓԱՌԱՑ

Գլխ. խմբագիր	Վ.ՍԱՐԳՍՅԱՆ
խմբագիր	Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Սրբագրիչ	Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ
Համակարգչային կատարումը	Ն.ՍԱՄՎԵԼՅԱՆԻ

Հանձնված է շարվածքի 01.12.2001թ.:  
Ստորագրված է տպագրության 25.12.2001թ.: Տպաքանակ՝ 500:

Գինը պայմանագրային